LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԻՔ

"HARATCH"

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ալ.	10 ալ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ
1
ՄԱՐՏ
1927

1er MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 273

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

"ՄԵՆՔ ՉԵՆՔ ՎԱԽՆԱՐ,,

Լոնտոնի սպառնագիրը խորհրդային իշխանութեան՝ յաջակցութեան գլխաւոր նիւթն է, քաղաքական աշխարհին համար:

Անգլիոյ պահպանողական դահլիճը ուզեց փամփուշտ մը արձակել, ճիշտ այն պահուն երբ բրիտանական զօրքեր դիրք գրաւած են Շանկայի առջեւ, եւ ահռելի ճակատամարտ մը կը պատրաստուի հիւսիսի եւ հարաւի միջեւ:

Այս հիւսիսն ու հարաւը միայն չինական երկու բանակները չեն, այլ եւ անոնց ետին կանգնած արտաքին ուժերը, ռուսականն ու անգլիականը: Անգլիա ուժ կուտայ հիւսիսին, այսպէս կոչուած կեդրոնի կառավարութեան բանակին, իսկ Մոսկուա՝ կ'ոգեւորէ ու կը սպառազինէ հարաւի ճակատը, ազգայնական կառավարութիւնը, որ ծնունդ առաւ Քանթոնէն:

Ծանր էր բրիտանական ծանուցագիրը, սակայն բաց դուռ ձգած էր նորէն, անշուշտ այն պատճառով որ դահլիճը միակամ չէ, անմիջական խզում յայտարարելու համար: Եւ պոլշեւիկները, որոնք ամէն բանէ առաջ հնարամիտ պոլիտիկոններ են, լիովին օգտուած են այդ ճեղքերէն, վարպետ պատասխան մը շարադրելու համար:

Ակներեւ է որ երկու կողմերն ալ չեն ուզեր արտասանել վերջին խօսքը: Փոխադարձ կշտամբանքներուն մէջ, նորէն դրուած է որոշ վերապահում: Խորհրդային իշխանութեան պատասխանը ստորագրեր է դիւանագէտ մը, որ ծանօթ է իր չափաւորութեամբ: Եւ ոճն ալ, թէեւ «մենք չենք վախնար»ներով կը սկսի, բայց կը վերջանայ փոխադարձ հասկացողութեան մաղթանքներով:

Հակնայլի է այս փոխադարձ զգուշաւորութիւնը. որովհետեւ պահպանողական Անգլիան, որքան ալ ատէ պոլշեւիկները, չի կրնար թեթեւ սրտով լքել հսկայ շահաստան մը, գոնէ անոր հետանկարը: Այսօր բոլոր քաղքենի օրկանները կը դատափետեն նոյն ձօրճը, որ 1921ին հիմը դրաւ խորհրդային իշխանութեան պաշտօնական ճանաչման, եւ իր ետեւէն քաշեց միւս պետութիւնները: Անգլիոյ նախկին վարչապետը կը պատճառաբանէր, թէ որքան պաշարուին ու ճնշուին պոլշեւիկները, այնքան պիտի մզուին համաշխարհային յեղափոխութեան կրակը արձակելու. մինչդեռ բնականոն յարաբերութիւններ մշակուելով, առեւտրական կապեր հաստատուելով, կրնան հետզհետէ բարելաւուիլ: Եւ անգլիացի առեւտրականներ օգտուեցան կնքուած դաշնագրէն, թէեւ ոչ իրենց ակնկալութեան չափ: Պահպանողականները կ'առարկեն թէ, անշնորհ օգուտի մը փոխարէն, Անգլիան ստիպուեցաւ դուռները բանալ եւ պոլշեւիկները լայն ասպարէզ գտան իրենց յեղափոխական գործունէութեան համար: Պոլտունի դահլիճին մէջ կան տարբեր որոնք առանց այլեւ այլի կը պահանջեն խզել յարաբերութիւնները եւ արտաքսել բոլոր կարմիր գործակալները. բայց մեծամասնութիւնը ժամը հնչած չի նկատեր, տակաւին, եւ կարելի է ըսել թէ կառավարութեան ճնշումին հետեւանքով էր որ հաւանեցաւ վերջին խիստ ազդարարութիւնը ուղղելու:

Ինչ կը վերաբերի խորհրդային իշխանութեան, անոնք եւս աւելի փափաքող են ներկայ վիճակին պահպանման: Անգլիոյ խզումը՝ խորապէս պիտի ազդէ ոչ միայն իրենց վարկին, այլ եւ միւս պետութիւններուն, մանաւանդ Գերմանիայի եւ Ամերիկայի վրայ, որոնց առաջինը երկու տարիէ վեր կը քաշքշէ բանակցութիւնները, իսկ միւսը միշտ «ոչ պարեմք» կ'արտասանէ, հակառակ բոլոր ձեռնարկներուն: Ռուսիոյ տնտեսական վերանորոգման դուռները, այլեւ, նորէն ղեկի «ռազմական կոմունիզմ» պիտի մղէ Մոսկուայի վարիչները, որոնք առանց ատոր ալ արդէն վտանգի ազդակներ կ'արձակեն եւ փամփուշտ կ'ամբարեն: Անոնց համար, ամբողջ աշխարհ դարանի կեցած է իրենց դէմ. Անգլիոյ առաջնորդութեամբ: Միւս կողմէ, կը վախնան որ, Անգլիա ամէն յարաբերութիւն խզելով, կրնայ չպէտք քայլերն ալ արագացնել: Օրինակ՝ նեղը դնել Թուրքիան, խորհրդային իշխանութենէն բաժնուելու, կամ խրատել զայն՝ Կովկասը անջատելու:

Այնպէս որ, «չենք վախնար»ը քիչ մը ճարտասանական է, ըսելու ձեւ մը, որ շատ-շատ կարմիր շարքերուն վրայ կրնայ ազդել:

Այդ ճարտասանական փորձը կը կատարեն նաեւ Պոլսոյ Թուրք թերթերը:

Անցեալ շաբթու, ժրձնեւէն հեռագիր մը կը ծանուցանէր թէ Անգլիա հաւանած է որ Իտալիա իր ուզածին պէս գործէ Թուրքիոյ դէմ, Զմիւռնիոյ մէջ իրեն գործակցելու պայմանով: Այս լուրը շատոնց կը շրջէր հրապարակին վրայ, բայց առաջին անգամ էր որ Թուրքիոյ պաշտօնական աղբիւրը, Ադոլուի հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէր զայն:

Եւ ահա նոր իրարանցում՝ Թուրքիոյ մէջ, խորհրդակցութիւններ, ժողովներ, տեսակցութիւններ եւ խմբագրականներ: Ամենապաշտօնական «Միլլիյէթ» եօթը սիւնակի վրայ հեռագիրը խմբագրական մը կը հրատարակէր Էնկիւրիէն, իր խմբագրատեղին ստորագրութեամբ (Սղերդի երեսփոխան Մահմուտ պէյ): Ըմմաստ՝ Թուրքիա խնդիր չունի Իտալիոյ հետ. բայց եթէ բան կը պատահի, «որ եւ է պետութեան յարձակումներուն պատասխանելու չափ ուժեղ է»:

Մահմուտ պէյ կը ճգնի շինծու համարել գործակցութեան լուրերը. իսկ Ընտուս Նատի պէյ, որ աւելի մօտ էր Մ. Քեմալի, իր «Ճիւմհուրիյէթ»ով կ'ընդունի թէ «Իտալիա կը գործակցի Անգլիոյ. Արեւելքի վերաբերող շատ մը խնդիրներու մէջ:» Եւ նորէն պաղարիւնութեան յորդորներ. «Եթէ լուրը ճիշտ ըլայ, Թուրք ազգը միշտ պատրաստ է»:

Բայց ինչո՞ւ այս իրարանցումը, պիտի հարցնէք.— ճիշտ նոր համաբ որ, Թուրքիա բռնութեամբ նատած ուրիշներու դրամին վրայ, ահ ու սարսափով տիրած՝ անոնց բոլոր իրաւունքներուն եւ ժառանգութիւններուն, միշտ կը մնայ ենթադրելու համար թէ, անոնց օգուտի մը փոխարէն, Անգլիա կրնայ ձեռք ձգել Մոսուլի նաւթային գործակալութիւնը: Ասոր համար է որ Անգլիա կը ջանայ Թուրքիան հանդարտեցնել, ինչպէս ըրաւ Իտալիոյ հետ, եւ ինչպէս կ'ընէ Ֆրանսայի հետ, որ Սուրիոյ մէջ ամէն տեսակ զիջումներ կ'ընէ Անգլիոյ, Մոսուլի նաւթին համար:

Ամէն պարագայի տակ, Անգլիա կը ցանկանայ որ Թուրքիա չեզոք մնայ, եւ ոչ մէկ կերպով ձեռնարկէ Անգլիոյ դէմ: Ասոր համար է որ Անգլիա կը ջանայ Թուրքիան հանդարտեցնել, ինչպէս ըրաւ Իտալիոյ հետ, եւ ինչպէս կ'ընէ Ֆրանսայի հետ, որ Սուրիոյ մէջ ամէն տեսակ զիջումներ կ'ընէ Անգլիոյ, Մոսուլի նաւթին համար:

ՄԱՄՈՒԼ

ՋՂՋՈՒՄԻ ԽՕՍՔԵՐ

Հետեւեալ տողերը կը քաղենք փարիզի հինգ ակեան շաբաթաթերթին՝ «Նոր երկիր»ի վերջին թիւէն, 27 փետրուար, խմբագրական սիւնակ, եւ կը յանձնենք պուլկարիոյ, յունաստանի, սուրիոյ մեծ ու պզտիկ հինգակեաններուն մասնաւոր ուշադրութեան.—

«Ճակատագրական սխալ արուեց մեր կողմից Հայաստանի խորհրդային դառնալուց յետոյ: Ինչո՞ւ համարում եմ մեր սխալը ճակատագրական: Որովհետեւ Դաշնակցութիւնը՝ ծանր վիրաւոր ընկած էր: Կոմմունիստները՝ դեռ շատ ուժեղ՝ հարւածում էին նրան: Պայքարը մղւում էր այդ երկու կուսակցութեանց մէջ: Սահմանադիր Ռամկավարները, որպէս անկզբունքներ, չդիտէին ի՞նչ անել. երբեմն մօտենում էին կոմմունիստներին, երբեմն հայհոյում նրանց, բայց ինչ էլ անէին կամ անում էին, սրանք էլ Դաշնակցութեան դէմ էին կռւում: Մնում էր, որ մենք, հնչակեաններս, բոպէի նշանակութիւնը ըմբռնէինք եւ հայկական զգացումներն ու իտէալները կեդրոնացնէինք մեզ վրայ, իսկ դրա համար անհրաժեշտ էր միայն մի բան անել,— չփչել կոմմունիստների բօթազան, այլ մեր տարիների երգը երգել, չը յայտարարել աշխարհին, թէ հնչակեան կուսակցութիւնը հասել է իր մօտ եւ հեռու նպատակներին, այլ ասել, որ հայ ազգը դեռ շատ պահանջներ ունի թէ խորհրդային երկիրներից եւ թէ դաշնակիցներից, այլ խօսքով՝ ի նպաստ հայ ժողովրդի խէտէների եւ ցանկութիւնների իրագործման մեր ոգւոյ երգը միայն հնչեցնելու էինք, որով աւելի եւս պիտի ուժեղանայինք եւ մեր կամքը թելադրէինք թէ Հայաստանում և թէ արտասահմանում:

...Կոմմունիստների փառաբանողները դառնալով՝ փոխանակ Դաշնակցութիւնը հարւածելու, մեզ հարւածեցինք, փոխանակ ինքներս ուժեղանալու՝ ուժեղացրինք Դաշնակցութիւնը:

«...Բայց մենք փոխանակ ժողովրդի ցանկութեանց եւ իտէալների կեդրոնը հանդիսանալու, դարձանք օտար երգերի երգեհոնը: Եւ, որովհետեւ ժողովուրդը իր այդ իտէալները կեդրոնացնող տեղ չգտաւ, կրկին, գնաց դէպի Դաշնակցութիւնը, որ իր մամուլով, իր ժողովներով իր հին երգը վերսկսեց հնչեցնել եւ օրից օր աւելի ուժեղ: Մի քալաղնունի հեռանալը մենք համարեցինք Դաշնակցութեան անկում, իսկ մեր նախկին Թիֆլիսի կեդրոնի անդամների մեր կուսակցութիւնը լքելը, մեր Կովկասի եւ Ռուսաստանի մասնաճիւղերի լուծիլը, արտասահմանում մեր ընկերների միանալը կոմմունիստների հետ եւ պայքարիլը մեզ դէմ՝ մեր կուսակցութեան անկում չէինք համարում: Մեր այդ սխալ տակտիկան առաջ բերաւ մեր կուսակցութեան յետադիմութիւնը եւ Դաշնակցութեան ուժեղանալը, որուն հաշւի է առնում նոյն իսկ սովէտական կառավարութիւնը, իսկ մենք «դիակ» ենք այդ մարդկանց համար, որոնց փառաբանել էինք, իսկ «արհամարհելի քանակութիւն» ենք այն մարդկանց համար, որոնց դէմ կռւում ենք:

«Հնչակեանութիւնը Դաշնակցութիւնից յետոյ միակ կուսակցութիւնն էր, որ պիտի կարողանար հայ ազգային իտէալների իրականացման գաղափարի պրօպականտը պահել եւ իրականացնել»:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊՈԼՇԵՒԻԿՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՆԳԼԻՈՅ

Խորհրդային Միութեան արտաքին փոխ-նախարար Լիթվինոֆ պատասխանեց Անգլիոյ ծանօթ ազդարարագրին: Պատասխանը շաբաթ առաւօտ յանձնուեցաւ Մոսկուայի անգլ. դեսպանատան գործակատար Փիլբըսի եւ Լոնտոն հասաւ կիրակի առաւօտ:

Պոլշեւիկեան ծանուցագրին մէջ կ'ըսուի թէ 1923էն ի վեր, երբ ստորագրուեցաւ անգլեւխորհրդային առեւտրական համաձայնագիրը, անգլ. կառավարութիւնը շարունակ ամբաստանութիւններ կ'ընէ խորհրդային կառավարութեան դէմ թէ բրիտանական կայսրութեան հանդէպ թշնամական վերաբերում ցոյց կուտայ: Մինչդեռ անգլ. կառավարութիւնը միշտ մերժած է բացորոշ մանրամասնութիւններ տալ խնդրոյ առարկայ թշնամական արարքներու մասին: Միակ բացառութիւնը այս խնդրին մէջ, Զինովիէվի կարծեցեալ նամակն էր 1924ին, որուն յերիւրածոյ ըլլալուն վրայ պնդեցին սովետները, եւ Անգլիացիները մերժելով ձեռագիրը փորձագէտներու քննութեան ենթարկել, լռելեայն ընդունեցին անոր կեղծ ըլլալը:

Գալով խորհրդային պետական մարդոց ճառերուն եւ թերթերու մէջ հրատարակուած յօդուածներուն, որոնց կ'ակնարկէ անգլ. ծանուցագիրը, անոնք ա՛յնքան բուռն են եղած, որքան Անգլիոյ պահպանողական պետական մարդոց եւ պահպանողական մամուլին հակապոլշեւիկ շարունակական յարձակումները:

Լիթվինոֆ կը յիշեցնէ Անգլիացիներուն թէ 1921ի եւ 1923ի անգլեւխորհրդային համաձայնագիրներուն մէջ ո՛չ մէկ ակնարկութիւն կայ թէ երկու երկիրներու մէջ ազատ խօսքն ու ազատ մամուլը սեղմումներու պիտի ենթարկուին: Ու կը թուէ բազմաթիւ օրինակներ Անգլիոյ նախարարներուն՝ մասնաւորապէս լորտ Փիրքընհէտի, Զըրչիլի, Էմբրիի, սըր Սամուէլ Հօրի եւ Սըր Իվընսի հակախորհրդային ճառերէն: Ո՛չ սովետական մամուլին մէջ, կ'ըսէ, ո՛չ առհասարակ անգլ. ծանուցագրին ակնարկած յօդուածներուն եւ ճառերուն մէջ կարելի չէ հանդիպիլ այն բիրտ յարձակումներուն, զորս անգլիական պահպանողական մամուլը կ'ընէ խորհրդային կառավարութեան դէմ: Հակաբրիտանական քարոզութիւն կարելի չէ նկատել անգլիական քաղաքականութեան եւ Խորհրդ. Միութեան հանդէպ իր դիրքին վերլուծումն ու քննադատութիւնը, ոչ ալ համաշխարհային կացութեան մասին համաչնաւոր կուսակցութեան վարիչներուն սկզբունքային վիճաբանութիւնները:

Բողոքելէ վերջ անգլիական ծանուցագրին մէջ Զինովիէվի անձին դէմ գործածուած անպատշաճ լեզուին մասին, պոլշեւիկեան ծանուցագիրը կ'ըսէ.

«Սըր Օսթըն Չեմպըլէյն կը սպառնայ բոլորովին խզել առեւտրական եւ դիւանագիտական յարաբերութիւնները այն պարագային, ուր խորհրդային կառավարութիւնը չհամակերպի իր նոր պահանջներուն, որոնք չեն բխիր ոչ անգլեւռուս համաձայնագրէն եւ ոչ ալ փոխադարձ յանձնառութիւններէ: Յայտարարելով որ մեր կառավարութեան դէմ եղած սպառնալիքները ոչ մէկ վախ պիտի պատճառեն խորհրդային միութեան հողամասին մէջ ապրող ո եւ է մէկուն, մեր կառավարութիւնը յամոզուած է թէ 1921ին առեւտրական համաձայնագրի կնքումը եւ անկէ վերջ դիւանագիտական յարաբերութեանց վերահաստատումը կը համապատասխանէին ինչպէս խորհրդային միութեան նոյնպէս բրիտանական կայսրութեան ժողովուրդներու շահերուն: Եթէ Անգլ. ներկայ կառավարութիւնը կը կարծէ թէ անգլեւխորհրդային առեւտրական եւ այլ յարաբերութեանց խզումը անհրաժեշտ եւ օգտակար է անգլ. ժողովուրդին, ինչպէս նաեւ ընդհանուր խաղաղութեան համար, կասկած չկայ որ ըստ այնմ պիտի շարժի, ստանձնելով իր արարքին ամբողջ պատասխանատուութիւնը:»

Պատասխանը կը վերջանայ, հաստատելով հանգուցեալ Քրասինի այն յայտարարութիւնը թէ փափաքելի է վերջ տալ բոլոր թիւրիմացութեանց եւ բնականոն յարաբերութիւններ ստեղծել երկուստեք:

ՅՈՅՑԵՐ ԱՆԳԼԻՈՅ ԴԷՄ

Երբ այս պատասխանին պատճէնը հրատարակուեցաւ, մեծ ցոյցեր կատարուեցան Ռուսիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, հարիւր հազարաւոր մարդիկ բողոքի թափօրներ կազմեցին եւ կրակուրց ճառեր արտասանեցին Անգլիոյ դէմ: Ամէն տեղ բանաձեւեր քուէարկուեցան, պահանջելով որ աւելի խիստ եւ վճռական պատասխան տրուի Անգլիոյ: Ամէնէն կարեւոր միթինկները գումարուեցան Մոսկուայի, Լենինկրատի, Խարքովի, Քիեվի եւ Նովկորոտի մէջ: Մոսկուայի բանաձեւին մէջ կ'ըսուի. «Անգլիական ծանուցագրին մեր պատասխանն է Աշխատաւորները բոլոր երկիրներու, միացէք»:

750,000 զինուորներ Քանթոնցիներու դէմ

Շանթունկի կառավարիչ Շանկ-Յունկ-Շանկ կը յայտարարէ թէ Շանկայ եկած է իր կեանքի ամէնէն մեծ ճակատամարտը մղելու հաստատ մտադրութեամբ: Շուտով իր տրամադրութեան տակ պիտի ըլլան 250,000 զինուորներ, որոնք առաջին գիծը պիտի բռնեն: Յետոյ 250,000 զինուոր իրր պահեստ պիտի մնան Յունկ-Քիանկի եւ Շանկայի միջեւ: Շանկ-Յօ-Լին ալ իր տրամադրութեան տակ պիտի դնէ Մուքտէնի 250,000նոց

(Լուրերու չարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՀԱՅ ԴՊՐՈՑ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Տիարպէքիրի առաջնորդարանէն առնուած տեղեկութիւններու համաձայն, քաղաքին Հայերը կ'աշխատին բանալ նախակրթարան մը, պզտիկներուն համար: Սակայն, տեղական միջոցները անբաւական գալով, նիւթական աջակցութիւն խնդրուած է պատրիարքարանէն:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԴԷՊՔ ՄԸ ՍԵՒԱՆԻԿԻ ՄԷՋ

Սեւանիկի հարցաքննիչ դատաւորը ձերբակալման հրամանագրեր հանած է կարգ մը հայ մայրապետ զինակաւորներու դէմ: Առնուազն Արվանիթաքիսի ձերբակալութեան առթիւ, նոր միջադէպ մը պատահած է համայնավարներու եւ ոստիկաններու միջեւ:

Փետր. 18ին, «Սփռնտիա» սինէմային մէջ համայնավարները հաւաքոյթ մը ունէին: Երբ Արվանիթաքիս դուրս կ'ելլէր սրահէն, երեք ոստիկաններ կը մօտենան ու կը յայտարարեն թէ, զինքը ձերբակալելու հրամանագիր մը ունին: Այս ըսելով, կը բռնեն զայն, բայց Արվանիթաքիս կը Լանայ խոյս տալ ոստիկաններու ձեռքէն եւ կը սկսի օգնութիւն աղաղակել: Այնատեն, 200ի մօտ համայնավարներ հայհոյելով ու սպառնալով կը յարձակին ոստիկաններուն վրայ եւ կը ստիպեն զանոնք ազատ ձգել Արվանիթաքիսը:

Այս վերջինը, ազատելէ վերջ կը խառնուի համայնավարներուն եւ բոլորը մէկ կը վազեն Մանասթըր փողոցը: Մինչ, միւս կողմէն, բազմաթիւ համայնավարներ կը պաշարեն ոստիկանները, արգիլելով հետապնդել Արվանիթաքիսը: Քանի մը վայրկեան յետոյ, երբ Արվանիթաքիսի հետքը կորսուած էր, ոստիկանները ազատ ձգուեցան: Անոնք, անմիջապէս զացին Ընդհանուր Ապահովութեան տնօրէնութիւնը եւ հաղորդեցին պատահած միջադէպը:

ԽԵՆԹԻ ՄԸ ՆՈՐԱՎԷՊԸ

Նիւ-Եորքէն կը հեռագրեն.— երկու օր առաջ պաշտօնեայ մը կը ներկայանայ դատարան, ուր իր կինը ամուսնալուծում կը պահանջէր: Դատարանէն ելած պահուն ատրճանակը կը պարպէ իր կնոջ եւ ընկերացող ոստիկանին վրայ: Ոստիկանը կը մեռնի վայրկենապէս, եւ երկրորդ գնդակով մը կինն ալ կ'իյնայ գետին: երկու գնդակ ալ կ'ուղղէ իր անձին, բայց կը վրիպի: կը ցատկէ աներոջ ինքնաշարժը եւ կը կորսուի: Նշանաւոր ծովեզերեայ քաղաքի մը մէջ, նոր անունով մը, կը վարձէ սենեակ մը: կը կանչէ հեռաձայնով օրաթերթի մը լրաբերը: եւ անոր կը խոստովանի թէ ի՛նք է հերոսը այն ոճիրներուն, որոնց արձագանգ կուտան թերթերը: Ցետոյ, յանկարծ կը կենայ եւ ատրճանակը կ'ուղղէ ձեղունին եւ երկու անգամ կը կրակէ: Լրաբերը, սարսափած, կ'ուզէ կծիկը դնել: Մեր մարդը, սակայն, կը հանդարտի եւ կ'ըսէ լրաբերին. «Այս ամէնը եղան անոր համար, որ աներս Թոյլ չտուաւ հանգիստ զաւակս եւ կինս: Ես կը սիրէի Տորիսը, չէի ուզեր սպանել, յանցանքը իր հօրն է: Ցետոյ, ես չէի վախնար ելեկտրական աթոռէն (մահի), բայց չէի ուզեր ապրիլ զրկուած՝ զաւակէս»: Այսպէս ըսաւ եւ անմիջապէս դարձեալ հանեց ատրճանակը եւ երկու անգամ պարպեց իր կուրծքին: Ինկաւ գետին, փչեց հոգին:

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԵՂՈՍԻ ԱՓԵՐԷՆ

ՆՈՐ ԽԱՂԵՐ ԱԻԱՐԻՆ ԾՈՒՐՋԸ

(Մեր սեփական Թղթակցէն)

ԳԱՀԻՐԷ, 16 փետրուար

Արդէն Փարիզ հասած ըլլալու են Գահիրէէն յատկապէս Փարիզ ղրկուած երկու պատգամաւորները, Պ. Պ. Վահան Թէքէեան եւ Հայկ Ինճիկեան։ Մէկը՝ Գահիրէի Բաղաք. Ժողովի առենապետ եւ բանաստեղծ, միւսը Բարեգործականի վարչական անդամներէն եւ առեւտրական։

Անշուշտ պատահական չէ Գահիրէէն Փարիզ սաւառնումը այս խորհրդաւոր պատուիրակութեան, որուն մեկնումը գաղտնի պահուեցաւ հոս եւ վերջին պահուն միայն, հարկադրանքի տակ, հրատարակուեցաւ ամբողջովին օրկանին մէջ։

Լուծենք սակայն գաղտնիքը, որուն մութ ծալքերը շատ են և բազմազան։

Պատմութիւնը ծանօթ է. Մելքոնեան նուէրը, ոսկեզօծ դիակ մը՝ աւելի քան 800,000 ազերիին վերաառութեամբ, որուն շուրջը թառած է գիշատիչներու խմբակ մը։

Վերջին արարը այս կատակողերգութեան այն եղաւ, որ երկու-երեք ամիս առաջ Փարիզէն յատկապէս Եգիպտոս ու Կիպրոս ղրկուած պատուիրակներու (Գ. Սինապեան եւ Փիլիպոսեան) ջանքերով, Կ. Մելքոնեան, վերջապէս, դատարանի առջեւ հրաժարեցաւ որ եւ է իրաւասութենէ եւ Մելքոնեան բովանդակ հարստութիւնը նուիրուեցաւ Բարեգործականի։

Այս փոխանցումը, անշուշտ, մեծ պայքարներէ եւ յուզնապներէ ետք է որ կատարուեցաւ։ Հարկ եղաւ ճակատ ճակատի կռիւ մղել ուրիշ բախտախնդիրի մը՝ Մուշեղ Սերոբեանի դէմ, անոր եւ անոր խմբակին «ճանկ»երէն ազատելու համար «ազգին փարան»։ Եւ այս փերկարար մեծ ճակատամարտին համար, Կ. Մելքոնեան, Բարեգործական, Գահիրէի Առաջնորդարան, Մելքոնեան գործարանի անօրէն, ոսկեզօծ կուսակցութիւն ու օրկան, եւ Զաւէն պատրիարք ձեռք ձեռքի ու մեծ աղմուկով հրապարակ նետուեցան, յանուն ազգին, եւ վերջապէ՛ս, յաղթանակ։ Ազգին հաստութիւնը ազատեցին ճանկերէն։

Բայց, ինչպէս կը նախատեսուէր, յետագայ դէպքերը եկան ցոյց տալու թէ՝ Մելքոնեան կտակը, «ազգին փարան», ճանկերէն անցած է այժմ մազիլներու եւ ժանիքներու մէջ։

Ու դիակը այսօր կը ըզկտուի նոր ոռգմավարութեամբ, խայտառակելով կտակն ալ, կտակատարն ալ, ազգն ալ, հանրային բարոյականն ալ։

Մարդիկ հաշուով ճամբայ եւլած են։ Բարեգործական եւ «Ազգ» մէ՛կ են. գիտենք աս։ Բայց արտասահմանը չի գիտեր ուրիշ բաներ։ Բարեգործականի Գահիրէի Ջոջ վարչական Մարմինը եւ Մելքոնեան նուիրատուութեան «Խնամակալութիւնը» նոյնն են կամ իրարմէ բխած։ Անոր անդամ է Մելքոնեան գործարանի տնօրէնը. Տիգրան Հաճընեան, որ միեւնոյն ատեն Բարեգործականի գանձապահն է եւ տիրական ձայն ունի, (կեցցէ՛ Մելքոնեան գործարանը) ոչ միայն Բարեգործականի ու Խնամակալութեան մէջ, այլեւ ազգ. առաջնորդանի մէջ չմիջելովամակավար «կուսակցութիւնն» ու մամուլը (Ալեւ), որոնք իր մատուրէն կը ուտեն։

Արդ, ասկէ ապահով տե՞ղ։

Ալ ինչո՞ւ ծախել Մելքոնեան գործարանը, ինչպէս կը սրամտէր նուիրատուութեան պայմանագիրը։ Գործարանը կը գործէ։ Հաճընեան կը սիրայ տնօրէնը, եւ ազգային հարստութիւնը կը բարգաւաճի՛... Բարեգործականի հովանիին տակ, այս անգամ։

Բայց կեանքը իր խաղերն ունի, յաճախ։

Մելքոնեան հարստութեան «փրկիչ»ները, այդ խաղերուն առջեւ զտան իրենք զիրենք, այն պահուն, երբ մազիլները խրած, հանգիստ կը յօշոտէին դիակը։

Պատահեցաւ որ, վերջին քանի մը ամիսներու ընթացքին, իրարու ետեւէ ծախուին ծախուած հայ գործարանները՝ Իփէքեան եւ Կամսարական, անգլիական համաշխարհային ընկերութեան մը, Մասիէրօի, որ տարիներէ ի վեր այս ձեռնարկը կը հետապնդէր, հարիւր հազարաւորներ ծախսելով։

Տարիներու բուռն պայքարներէ ետք, տիրելու համար Եգիպտոսի եւ Սուտանի ծխախոտի հրապարակին, Մասիէրօ յաջողեցաւ օգտուիլ հայ գործարանատէրերու խայտառակ պառակտումէն, եւ, անջատաբար, գնեց զանոնք։ Գնեց եւ դուրս նետեց հայ բազմաթիւ պաշտօնեաներ, որոնցմէ շատերը 25—30 տարուան կեանք մաշեցուցած են նոյն գործարաններուն մէջ եւ ուրիշներ՝ որոնք երիտասարդ մտած են ու ծերացած, հրապարակ կը նետուին այսօր։ Հայ գործարանատէրերու անխիղճ ու գարշելի չարաշահութեան սեւ էջը պիտի կազմէ պաշտօնէութեան գլխուն իջած այն աղէտալի հարուածը, որմէ կարելի էր խուսափիլ սակայն, եթէ քիչ մը մարդկային հոգի ունենային սակարկութեան մտնող գործարանատէրերը։ Բայց փակենք այս ողբերգութիւնը։

Արդ, նոյն ընկերութիւնը, Մասիէրօ, բանակցութեան մէջ է հայ մեծատուն գործարանին՝ Մաթոսեանին հետ, որ չուզեր ծախուիլ, բայց կը հաւանի կէս-առ-կէս բաժնել Մասիէրօի հետ Եգիպտոսի բովանդակ գործը։ Բայց պայման դրուած է որ Մաթոսեանը իր հետ տանի նաև Մելքոնեանը, գնելով։

Եւ Մելքոնեան գործարանը, որ «ազգին»ն է ըսինք, խեղդակապի մէջ ինկած է։ Չի կրնար ծախուիլ, որովհետեւ չի կրնար մրցիլ Մասիէրօ Մաթոսեան հակայական ընկերութեան դէմ, որ, այս պահուս, 3-400 հազար ոսկի կ'առաջարկէ միայն...

Այս գումարը, սակայն, ճարպիւ կէսն է այն գումարին, զոր մէկ տարի առաջ Մասիէրօ առաջարկած էր Մելքոնեանի, երբ միւս հայ գործարանները չէին ծախուած դեռ։ Ազգին շահը պաշտպանողները չեն տուած այն ատեն, կազմակերպուած ու առատ աղբիւրէ մը չզրկուելու եւ չզրկելո՛ւ համար Հայն ու Հայաստանը, որոնց անունով երդում պատառ կ'ըլլան։

Ու ահա պայքարը, խուլ ու հետզհետէ արդէն հրապարակով, միշտ հայութեան անունով,— պէտք չէ ծախել, պէտք է սպասել աւելի յարմար առիթէն։

Բայց, կը թուի թէ փաշայէն եկած հրահանգը կտրուկ է եւ վերջնական.— պէտք է ծախել, եւ որքան շուտ այնքան լաւ։

Պէտք է ծախել, որովհետեւ վաղը, քանի մը ամիսէն հարկ ըլլայ կէսին կէսն ալ վրայ տալ եւ ով գիտէ, գուցէ, մրցումի հետեւանքով, քայքայուի ամբողջ գործը։

Բայց այս «պէտք է ծախել»ը ճակատագրական է, աղէտալի եւ կործանարար, ոչ միայն տնօրէն Հաճընեանին համար, որ կրնայ ինքզինքը փողոցը գտնել, այլ եւ Գահիրէի Ազգային-Բարեգործական-Ոռմկավար մթնոլորտին համար։

Ոչ միայն անհրաժեշտ է պահել Մելքոնեան գործարանը անձնական մշտահոս աղբիւրներ չչորցնելու համար, այլ պէտք է պահել Գահիրէի ազգ. կեանքի շնչերակը ձեռքի մէջ ունենալու համար։

Ա՛յս է պատճառը, որ ամէն ճիգ կը թափուի, ամէն տաղանդ, մինչեւ իսկ բանաստեղծականը հրապարակ կը քաշուի, փրկելու համար հաստատութիւնը, զոնէ յետաձգելու անոր վաճառումը, շողշողուն հեռանկարներ մատնանշելով։

Քանի մը շաբաթ առաջ Հաճընեանն էր, որ եկաւ Փարիզ կ. Մելքոնեանի աղերսագրովը՝ Պ. Պ. Նուպարի ուղղուած, խնդրելով անկէ որ գործարանը զոնէ իր ողջութեանը չծախուի։ Զախող եւ գլխիկոր վերադարձաւ եւ ահա վերջապէս Թէքէեան-Ինճիկեան պատուիրակութիւնը, նոյն առաքելութեամբ, մէկը Բարեգործականի կողմէ, միւսը՝ Թէքէեան, Ազգ. Առաջնորդարանի կողմէ։

Ձենք գիտեր թէ ինչ պիտի ըսէ Պ. Պ. Նուպար. բայց գիտենք թէ քանի ուշանայ վաճառումը, ա՛նքան աւելի գահավէժին կը մօտենայ գործարանը, և, հետեւաբար Մելքոնեան նուիրատուութիւնը։ Վաճառումով մէկ մը մէջտեղէն կը վերնայ ոսկեզօծ դիակը, որ տարիներէ ի վեր վէճերու եւ պառակտումի աղբիւր եղաւ։ Միւս կողմէ, կը չքանայ նոյն գործարանին եւ անոր վարիչներուն ստեղծած անբարոյական մթնոլորտը, կաշառքի ու ալլասերման այն օճախը, որ ոչ միայն կ'անբարոյացնէ եւ գետնաքարշ վիճակի մէջ կը պահէ եւ ռամկավար մամուլն ու կուսակցութիւնը եգիպտոսի մէջ, այլեւ կը թունաւորէ ազգային ընդհանուր կեանքը, ընտրութիւններէն սկսած, որոնք ամենաստոր շահագործման առարկայ եղան անցեալ տարի։

Շահակիցները գիտեն այս բոլորը եւ այդ է պատճառը, որ լարած են այժմ իրենց գերադոյն ճիգերը։

Գ. ԲՈՒՐԳԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ ՄԱՀԵՐԸ

Դեկտեմբեր ամսուան վիճակագրութեան համաձայն,

Երեւանի գաւառին մէջ. ծնած են 911 հոգի, որոնց 467ը մանչ։ Մեռած են 196 հոգի, որոնց 109ը այր։ Ամուսնութիւն՝ 290, ամուսնալուծում՝ 90։

Ալեքսանդրապոլի գաւառին մէջ.— Ծնած են 864 հոգի, որոնց 436ը մանչ։ Մեռած են 369 հոգի, որոնց 175ը այր։ Ամուսնութիւն՝ 163, ամուսնալուծում՝ 8։

Էջմիածինի գաւառին մէջ.— Ծնած են 648 հոգի, որոնց 334ը մանչ։ Մեռած են 169 հոգի, որոնց 85ը այր։ Ամուսնութիւն՝ 224, ամուսնալուծում՝ 1։

Դիլիջանի գաւառին մէջ.— Ծնած են 294 հոգի, որոնց 152ը մանչ։ Մեռած են 69 հոգի, որոնց 27ը այր։ Ամուսնութիւն՝ 393։

Լոռի-փամբակի գաւառին մէջ.— Ծնած են 625 հոգի, որոնց 315ը մանչ։ Մեռած են 135 հոգի, որոնց 86ը այր։ Ամուսնութիւն՝ 120, ամուսնալուծում՝ 12։

Նոր-Բայազիտի գաւառին մէջ.— Ծնած են 459 հոգի, որոնց 232ը մանչ։ Մեռած են 101 հոգի, որոնց 37ը այր։ Ամուսնութիւն՝ 170, ամուսնալուծում՝ 1։

Դարալագեազի գաւառին մէջ.— Ծնած են 162 հոգի, որոնց 75ը մանչ։ Մեռած են 47 հոգի, որոնց 28ը այր։ Ամուսնութիւն՝ 56, ամուսնալուծում՝ 7։

Ջանգեզուրի գաւառին մէջ.— Ծնած են 344 հոգի, որոնց 181ը մանչ։ Մեռած են 72 հոգի, որոնց 36ը այր։ Ամուսնութիւն՝ 112, ամուսնալուծում՝ 38։

Մեղրիի գաւառին մէջ.— Ծնած են 28 հոգի, որոնց 17ը մանչ։ Մեռած են 13 հոգի, որոնց 7ը այր։ Ամուսնութիւն՝ 6։

Ամբողջ Հայաստանի մէջ.— Ընդհ. թիւով ծնած են 4335 հոգի, 2209ը մանչ, 2126ը աղջիկ։ Մեռած են 1181 հոգի, 590ը այր, 591ը կին։ Ամուսնութիւն՝ 1534, ամուսնալուծում՝ 157։

ԱԿՆԱՐԿ ՄԸ ՅՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՎՐԱՅ

ԱԹԻՆՔ, 22 փետրուար

(Երկրորդ եւ վերջին մաս)

Անշուշտ ընթերցողները գարմանալի պիտի գտնեն, որ Հայաստանագործութեան արհեստը, հոս աւելի շատ զարգացած է, քան ուրիշ գաղութներու մէջ, որոնցմէ ամենք, աւելի ծանր պայմաններու մէջ եղած են, ինչպէս Սուրբիան։

Ասոր գաղտնիքը պէտք է փնտռել նոյն վաճառքի փերեզակ Պ. Շահվերդեանի եւ Աթէնքի առաջնորդին թաքուն համաձայնութեան մէջ։

Այս խարդախ վեզարաւորը իր դիրքը պահելու համար, սատանային անգամ կը փաթթուի, ևթէ այնտեղէն ոեւէ օգուտ տեսնէ։ Փոխադարձաբար Շահվերդեանն ալ ևթէ կը տեսնէ թէ մէկը կայ որ միջոց կը գտնայ իր տէրերու գաղտնի հրամանները կատարելու, ձիուն գլուխը շատ յաճախ այդ ուղղութեամբ կը դարձնէ, հոգ չէ թէ այդ մարդը իրենց համար սատանայէն տարբերութիւն չունենայ։ Այս տեսակէտէն գիրար լաւ գտած են։

Որպէսզի յունահայ գաղութը կապուած մնայ Մայր Մայրմեանի առաջնորդութեան, Պ. Շահվերդեան պէտք էր անոր աջակցէր։ Այդ պատճառով, քանի մը ամիսը անգամ մը ներգաղթի շուկան կը բանայ, զգուելի աճուրդ մը կազմակերպելով։

Միւս կողմէ եպիսկոպոսը լիովին կը կատարէ իր պարտքը։ Ան առաջնորդարանը դարձուցած է օջախ մը, ուր բոյն դրած են բոլոր կասկածելի տիպարները, գոյդգոյն մարզանքներ կատարելու համար։

Ինքը՝ առաջնորդը կ'երթայ գաղթակայաններու եկեղեցին եր եւ սա ոճով քարոզներ կուտայ. «Մեր քոմմունիստ առաջնորդները լաւ մարդիկ են, անոնք բանուորին ու գիւղացիին շահերը կը պաշտպանեն, հարուստներուն դէմ կը կռուին, չէ՞ որ մեր քրիստոնեայ հարուստներուն դէմ կը կռուէր։ Դուք, ժողովուրդ, մի հաւատաք հակառակորդներու ստութիւններուն . . .»

Սեւագլուխը բերել կուտայ Երեւանի «Ազատ Եկեղեցի»ն եւ կը ցրուէ թեմի քահանաներուն՝ աջակցելու համար Հայաստանի եկեղեցին պառակտողներու մթին գաւերուն. քահանաներու մեծամասնութիւնը յանդգնութիւնը կ'ունենայ ետ ուղարկելու եւ բողոքելու այդ արարքին դէմ։ Սեւագլուխը կը սպառնայ փիլոնազրկութեամբ։

Մաղլըմեան եպիսկ. արտասահմանի մէջ միակ վեզարաւորն է, որ այնքան թեթեւսոլիկն իր պաշտօնը եւ անձը տրամագրած է խորհրդային գործակալներու ենթագործունէութեան։

Նոր Ցունաստանի թեմը եւ անոր վարչական կազմակերպութիւնները արգելք մըն են այս գործունէութեան։ Այդ պատճառով ալ սեւագլուխը եւ իր արբանեակները օրն ի բուն գործի վրայ են, գանազան ծուռ միջոցներով, ու խարդախութիւններով վերջ ի վերջոյ այն կապելու իր առաջնորդութեան։ Թերեւս յաջողէր այս առաջադրութեան մէջ, եթէ հասարակութիւնը ճանչցած չըլլար ապրանքին խարդախուած ըլլալը։

Նոր Ցունաստանի առաջնորդարանին դէմ եւ անոր շուրջ կատարեցին անորակելի խայտառակութիւններ ու յարձակումներ։ Այն կազմալուծելու համար միջոցներու մէջ խտրութիւն չէին դներ։ Ամօթալով ու բամբասանքով սկսան զրպարտութիւններու եւ կեղտոտութիւններու շարք մը։ Տան անձնական յարկէն ներս ու ինդրոյ առարկայ դարձուցին անոնց պարկեշտութիւնը, մինչեւ որ վարչութեան բոլոր անդամները (անկուսակցական) հարկադրեցին Թողուլ իրենց պաշտօնը, այն յոյսով թէ այս կազմալուծումին մէջէն կրնան քալեցնել իրենց յետին նպատակները։

Այս ամբաստանութեանց հետեւանքով, Նոր Ցունաստանի կուսակալը արգիլեց ընտրութիւնները, Տաստատ գիտնալով որ խռովութիւններ պիտի ծագին։ Ստարկեցաւ թէ Հայերը հոս հիւրեր են եւ քաղաքացիներ ըլլալով իրաւունք չունին ընտրութիւններ կատարելու, հրահանգեց առաջնորդական փոխանորդին պաշտօնի հրաւիրել յարմար դատած մարդիկ եւ վարել գործերը գնոր տնօրէնութիւն։

Առաջնորդական փոխանորդը կատարեց այս հրահանգը, պաշտօնի կանչեց այնպիսիները, որոնք արժէք չեն տար խռովարարներու ամբոխներուն եւ անոնց յարձակումներուն։

Անշուշտ այս ձեւը լաւագոյն չէ, բայց չարիքներու փոքրագոյնն է։

Բարեբախտաբար գաւառներու մեծագոյն մասը, ունին կամակերպութիւն եւ կանոնաւորութեամբ կը վարեն իրենց գործերը։ Անոնց մասին ասկէ առաջ գրած եմ եւ կրկնելու պէտք չունիմ։ Ստա այն միակ մխիթարական պատգան՝ ներկայ շփոթ կացութեան մէջ։

Շահվերդեան — վեզարաւոր Համաձայնութեան եւ գործակցութեան արտաքին երեւոյթները բաւական անախորժութիւն կը պատճառեն անոնց վինակից դարձած «պառաւ»ներուն ռամկավարներուն, որոնք կ'ուզեն իրենք զիրենք ապահարզանի ենթարկել հակառակ փարիզի իրենց կեդրոնի անգամներուն։ Կ'ուզեն ազատիլ այս անախորժ կացութենէն, որովհետեւ վերջ ի վերջոյ անձնապէս տուժելու դատապարտուած պիտի ըլլան։ Կարմիրները սխալ մը կը գործեն, կառավարութիւնը թաթը անոնց վրայ դնելու ժամանակ, կ'երկարի նաեւ գործակից ռամկավարին։

Ժողովուրդի տրամադրութիւնը այն է, որ Աթէնքի վարչութիւնը կազմուի անկուսակցական անկողմնակալ մարդոցմէ։ Դաշնակցութիւնը համաձայն է ռամկավարներն ալ կը սիրեն այդ ձեւը, սակայն կը թուի թէ փարիզի իրենց կեդրոնը կը զայրանայ։

Եթէ իրականանայ այս ծրագիրը, այդ պարագային նշան ձեւը պիտի հաստատուի նաեւ Նոր Ցունաստանի մէջ, ինչ որ մեծ վտանգ մը կը սպառնայ վեզարաւորի դիրքին։ Բայց կը թուի թէ այս գրոհէն չպիտի կրնայ խուսափիլ։

Ց. ԱՄԱՏՈՒՆԻ

ԱՄԱՌՈՒԱՆ ԺԱՄԸ.— Ինչպէս գրեցինք, բրիտանական, պելժիական, հոլանտական եւ ֆրանսական կառավարութիւններուն միջեւ կը կատարուէին խոսակցութիւններ որոշելու համար ամառուան ժամը։ Համաձայնութիւն գոյացած ըլլալով, ամառուան ժամը պիտի սկսի 9 Ապրիլ շաբաթէն կիրակի լուսնալիք գիշերը։ Ձմեռուան ժամը պիտի սկսի Հոկտեմբեր 1-ի գիշերը։

"ԱՆԿԻՒՆՆԵՐՈՒՆ ՓՈՓՈՒԻ

Պոլշեւիկեան «Կօմսոմոլսկայա Պրաւդա»ն խօսելով պատերազմի մասին, կը գրէ. «Աշխարհի դարձըրատուներուն մութ անկիւններուն մէջ կը սպրի եւ կը վսեման պատերազմին։ Մենք ամէն կերպ պիտի աշխատինք ասոր առջեւը առնել»։

Եթէ այդ վսեմութիւնները քան անախորժ են կապիտալիստներուն, կը նշանակէ որ բաւական մը մասին է որ վսեման... Այդ մասին կը պատմեն, Ռուսաստանէն եկողները։

Հակառակ անցեալ տարուան վճռութեան, այս տարի ընդհանուր հաւատքի տարին Բոլորը կը սպասեն պոլշեւիզմին մօտալուտ անկումին։ Ոմանք նոյն իսկ զանոնք օրինակ դարձնել վազը. բայց այդ դարձեալ կը մնան մէկ չնչին խմբակներ, որոնք արժէք ունին, քանի որ պաշտօնական հակայեղափոխական վարձկաններն են ու ոչ դրամով կ'ապրին։

Այս բոլորէն պարզ է ամբողջ Խորհրդային Միութեան մէջ ժողովուրդը յոգնած նամեայ բռնապետական կառավարութենէն, հոգեբանօրէն կը պատրաստէ ապագայ փոփոխութիւններուն համար։

Ճիշտ նոյն պատկերը տեղի ունեցաւ 1804էն առաջ Ֆրանսայի մէջ, ուր յոգնած ժողովուրդը կարօտը կը զգար ուժեղ իշխանութեան մը։ «Բանն ասելի է լինի», կ'ըսէ հայ ժողովրդական առածը։ Եթէ 143 միլիոն ֆրանսականութիւնը հաւատաց հաստատէ որ պոլշեւիկեան վերջը պիտի տեսնէ, կը նէ . . .։

Ասոր համար է որ փոփոխները այնքան կը շտապեն դիկտատուրային վարիչները

ԱՐԱ ԱՐՆԻ

Ղարաբաղի ֆանքային երերը.— Ղարաբաղի քարշանի բնական հարստութիւններու ուսումնասիրութեան համար հանուած են 25 կէտեր հանքային-բուժական երու։ Հոչակաւոր է Քոլերայի աղբիւրը, որ կը կոչուի «Ղոխուր սու» (քոսի ջուր)։ Այս բիւրը օրական կուտայ 40 դոյլ ջուր։ Հոս բժշկուելու են թան անոնք որ ենթակայ են մորթային հիւանդութիւններու։ Նշանաւոր է նաեւ շրջանին աղբիւրը, որ կը կոչուի «Ղոխուր սու» (քոսի ջուր)։ Այս բիւրը բժշկուելու կ'երթան անոնք որ ենթակայ են քոսի։ Այս կուտայ օրական 30,000 դոյլ ջուր։ Այս աղբիւրներուն երը կը պարունակեն ածխաթթու երկաթ-կրային բաղադրիչներ։

Աղաւնեւոտն գաւառակի դարշապատի գաւառակային ժողովներէն Սամադար գիւղի խարհագրական տեսակէտով բեւի չէր վարչական կեդրոն դունելի։ Այս պատճառով, ուած է վարչական կեդրոնը խադրել Աղաւնեւոտն գիւղը եւ կեդրոն գաւառակի։

ԴԱՏԱ

ՓԱՍՏԱԲԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԿՈՒ ԿՈՎԵՑԻ ԵՐԿԱՐ ՀԱՐՑ

Հայտնի է, որ ամուսնալուծության գործերով ամենաշատ դիմողները կանայք են լինում։ Ամուսնալուծության պատճառները տարբեր են լինում։ Ամենից հաճախ ամուսնալուծության պատճառ է դառնում ամուսնու անհավատարմությունը։ Ամուսնալուծության գործերով դատարանը ամենից առաջ ձգտում է հաշտեցնել ամուսինները։ Դատարանը ամուսնալուծության գործերով ամենից հաճախ ամուսնալուծությունը մերժում է։ Ամուսնալուծության գործերով դատարանը

բանակը։ Շանկայի նոր հրամանատարը բացարձակապէս վստահ է թէ պիտի յաղթէ ազգայնական բանակին։ Անգլիական ճակատը 30 քիլոմէթրնոց գիծի մը վրայ փշաթելով պաշտպանուած է։

Միւս կողմէ, Քանթոնցիները շարժման մէջ դրած են 100,000 զինուորներ՝ Չէ-Քիանկի բանակէն եւ կը պատրաստուին քալել Շանկայի վրայ։ Անգլիական նոր զինուորներ կը հասնին։ Ամերիկեան եւ իտալական երկու Թորփիլահալածներ դէպի Շանկայ մեկնեցան։

Ճափոնական աղբիւրէ կը հաւաստեն թէ խորհրդային կառավարութիւնը 7 միլիոն տոլար խոստացած է Քանթոնի ազգայնական վարիչներուն, իրենց հականգլիական դրգռութիւնները շարունակելու համար։ Հանքէուի համաձայնագիրը կնքուելէն ի վեր դրգռութիւնը վրդովիչ համեմատութիւններ առած է միջին եանկ-Ցէի հովիտին մէջ։

Ընտրակ. դրութիւնը եւ ընկերվարականները

Ֆրանսայի ընկերվարական կուսակցութիւնը կիրակի օր Ազգային ժողով գումարեց՝ զբաղելու համար ընտրական դրութեան փոփոխութիւնով։ Ինչպէս յայտնի է, 1928ին երեսփոխանական նոր ընտրութիւններ պիտի կատարուին եւ բոլոր կուսակցութիւնները հիմակուընէ կ'ուզեն իրենց դիրքը ճշտել նոր ընտրութեանց համար ընդունուելիք դրութեան մասին։ Ներքին նախարարութիւնը մօտ օրէն օրինագիծ մը պիտի ներկայացնէ խորհրդարանին այս մասին։ Ընկերվարական կուսակցութեան մէջ երեք հոսանք կար — տարբեր դրութիւններու համար։ Կրընոպլի համագումարը համեմատական ներկայացուցչութիւնը ընդունած էր իբրեւ միակ դրութիւնը, որուն քուէ պիտի տային բոլոր ընկերվարական երեսփոխանները։ Սակայն նկատելով որ այս դրութեան հակառակ են միւս կուսակցութիւններէն շատեր, մանաւանդ Ծերակոյտը, ընկերվարականները ուզեցին յիշեալ համագումարին որոշումը փոխել եւ անոր մօտ դրութիւն մը ընդունիլ։

Այս կերպով կը խախտուէր կուսակցութեան հինէն ի վեր պաշտպանած սկզբունքը՝ համեմատական ներկայացուցչութիւնը, որ լաւագոյն ժողովրդավար դրութիւնն է, սակայն իրականութեան առջեւ ստիպուեցան տեղի տալ։ Երեք տարբեր բանաձեւերու մէջէն մեծամասնութիւնը ընդունեց Լէոն Պլումի բանաձեւը, որուն համաձայն ընկերվարական երեսփոխաններն ու ծերակուտականները պարտաւոր պիտի ըլլան Խորհրդարանին մէջ քուէ տալ ի նպաստ «գաւառակային քուէարկութիւն» կոչուած դրութեան (Scrutin d'Arrondissement)։

Բռնական շարժումին հաշուեյարդարը

Արեւելեան Անկախութեան դատարանը վերջացուց դատավարութիւնը 65 հոգիի, որոնք կ'ամբաստանուէին իբրեւ մեղսակից Շէյխ Սայիտի ըմբոստութեան։ Մէկը մահուան դատապարտուեցաւ, բայց իր տարիքին պատճառաւ պատիժը վերածուեցաւ 24 տարուան բանտարկութեան։ Հինգ հոգի 15 տարուան եւ 16 ամբաստանեալ 16ական տարուան ու 22 հոգի արեւելեան Անատոլուի զանազան վայրերը բնակելու դատապարտուեցան։ 23 հոգի անպարտ արձակուեցան։

∴ Էնկիւրիի անկախութեան ատեանը սկսաւ դատել Գօզանի միւֆթիին եւ չորս թուրքեր, որոնք կ'ամբաստանուին թէ յայտարարութիւնները փակցուցած են պատերու վրայ, ժողովուրդը յեղափոխութեան մղելու համար։

Իտալական մղձաւանջը Թուրքիոյ վրէ

Անատոլուի գործակալութիւնը ծրնեւէն Պոլսոյ թերթերուն հաղորդած է լուր մը, որուն համաձայն «Անգլիա հաւանած է Իտալիան ազատ թողուլ Թուրքիոյ դէմ, իբրեւ փոխարինութիւն Զինաստանի մէջ անոր բերած գործակցութեան»։

Այս լուրը ահուսարսափ պատճառած է Էնկիւրիի եւ Պոլսոյ մէջ, ուր մամուլը իրար անցած է, եւ հանրային կարծիքին մէջ ընդհանուր ջղագրգռութիւն առաջ եկած է։

Առջի օր հրատարակեցինք իտալ. կիսապաշտօն «Սթէֆանի» գործակալութեան հերքումը։ Պոլսոյ իտալական դեսպանն ալ փութացեր է պաշտօնապէս հերքելու այս լուրը։ Վերջին թղթաբերով ստացուած թուրքերէն թերթերը մեծաշուխդ խորագիրներով եւ սիւնակներով բան կը գրեն դարձեալ այս մղձաւանջային հարցին մասին, որ քանի մը ամիսը անգամ մը կը փոթորկէ թուրք ժողովուրդը։

«Ագշամ» կը գրէ.— «կասկած չկայ որ իտալական պաշտօնական շրջանակներու պաշտօնն է հերքել նման լուրերը, եթէ նոյնիսկ իրականութիւն ըլլան անոնք։ Գալով Թուրքիոյ, ան իր կասկածներն ու մտահոգութիւնները փարատելու համար դեսպաններու բերանացի յայտարարութիւններով բաւականացող պետութիւն մը չէ։»

«Միլլիյէթ» իր առաջին էջին մէջ և եօթը սիւնակի վրայ կը հրատարակէ իր խմբագրապետին՝ Սղերդի երեսփոխան Մահմուտ պէյի էնկիւրիէն ղրկած մէկ հեռագիրը, որուն մէջ կ'ըսէ. «Ո եւ է պետութիւն կրնայ ուրիշ պետութեան մը հողերուն հանդէպ գէշ եւ յարձակողական նպատակներ սնուցանել. ասիկա նշանակութիւն չունի։ Թուրքիոյ եւ Իտալիոյ միջեւ տարակարծութեան քաղաքական ո եւ է պատճառ չկայ։ Շահերու հակադրութիւն ալ չկայ։ Թուրքիա իր ներկայ վիճակով ո եւ է պետութեան յարձակումներուն դիմադարձելու չափ ուժեղ է, որովհետեւ մեր պաշտպանողական միջոցները կազմակերպուած են ամէն հաւանականութիւն նկատի առնելով»։

Ամէն ազգ ուժէն զատ ուրիշ իրական յենակէտ չունի։ Թուրք հանրապետութիւնը կը տեսնէ այս իրականութիւնը և առաւելագոյն ուշադրութեամբ կը հետեւի անոր պարտադրութիւններուն։ Մեր ազգային պաշտպանութեան մէջ ուրիշներէն աւելի կ'աշխատինք։ Պէտք չկայ աւելցնելու թէ մեր պաշտպանողական միջոցները միայն Իտալիոյ յատուկ չեն, մենք այս պետնին վրայ պատասխան կուտանք ընդհանուր կացութեան պահանջներուն։

«Ճիւմհուրիյէթ» ալ կը գրէ թէ «Թուրք ազգը միշտ պատրաստ է փոխադարձելու ո եւ է կողմէ գալիք յարձակումներուն»։

Տուգանքի ենթարկուելու թուղթերու համար

Ինչպէս քանիցս գրեցինք, հին ինքնութեան թուղթերը պէտք է նորոգել մինչեւ Մարտ 31։ Հետեւաբար ներկայ ամսուան ընթացքին պէտք է պատկանեալ պաշտօնատուները դիմեն բոլոր անոնք, որոնք դեռ չեն նորոգած իրենց ինքնութեան թուղթերը։

Ցիշեալ թուականէն վերջ, ծրագրուած է տուգանքի ենթարկել բոլոր անոնք որոնք չեն նորոգած։ Մէկ ամսուան համար 50 ֆրանք տուգանք պիտի տան անոնք, որ 375 ֆրանքի սակին եւ 10 ֆրանք՝ անոնք որ 40 ֆրանքի սակին ենթակայ են։ Ծերակոյտը դեռ չէ վաւերացուցած այս ծրագիրը։

Խոզի ճոր առաւ-փախաւներ

Քանի մը ամսուան ընթացքին, վեցերորդը ըլլալով, երեւան հանուեցաւ խոզի առաւ-փախաւական նոր ընկերութիւն մըն ալ։

Պ. ժան Քոնթէս, 42 տարեկան, 1923 Հոկտեմբերին երկու միլիոն ֆրանք դրամագլուխով ընկերութիւն մը կազմած էր, «Պանք տը լ'Ինդիօն Ֆրանսէզ» անունով։ Այս ընկերութիւնը բոլորովին կեղծ էր եւ յիշուած դրամագլուխը բնաւ գոյութիւն չունէր։ 1925ին, ընկերութեան անունը կը փոխուէր եւ կը դառնար «Ազգային արջառի ընկերութիւն», նպատակ ունենալով խոզապահութիւնը։ Մաս մը խոզեր գնուեցան ու դրուեցան Տաքսի մօտ ագարակ մը, բայց շուտով գանգատներ սկսան տեղալ։ Քննութիւնը երեւան հանեց թէ փոխանակ 5500ի, հազիւ 1500 խոզեր կային ագարակին մէջ։

Հակառակ անոր որ ընկերութիւնը վնասի մէջ էր, Պ. Քոնթէս կը շարունակէր շրջաբերականներ ղրկել եւ նոր դրամներ քաշել յաճախորդներէ, մասնաւորաբար գաւառներու մէջ։

Ոստիկանութիւնը խուզարկեց Շան'զ Էլիզէի իր գրասենեակը, ուր գտնուեցաւ 30,000 ֆրանք միայն։ Գրաւուեցան թուղթերը, որոնք անկանոն են։ Բացի է 2 միլիոն ֆրանք։ Ժան Քոնթէս կապ ունէր Փէքինեօի հետ, որ ասկէ առաջ ձերբակալուած էր իբրեւ խոզի ուրիշ գող ընկերութեան մը տնօրէն։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԷՆ-ՇԱՄՕՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

4 մարտ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին վարիէթէ սինեմային մէջ

կը ներկայացուի "ՕԹԷԼԼՕ,,

"ՅԱՐԴԳՈՂ"

ՀԱՆԴԷՍ ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐՈՒ

12 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ ԻԻՆԵՐ, ԺԱՄԸ 8.30ԻՆ

ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖիի ՄԷՋ, 184, Boulevard St-Germain

Յայտագիրը ունի՝ ա) Տեսողական բաժին, բ) Անուշահոտութեանց բաժին, գ) Ձայնական բաժին, դ) Ունկնդրութիւն ցարդգողներու, ե) Մարմնական երաժշտութիւն։

Ցուցաղրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերը։

Կը մասնակցին՝ Շահիսաթունի, երգիչ Նաւասարդեան, Մարութեան, *դաշնակահար* Ալիքսանեան, *պարող* Իկար։

ՏՈՄՍԵՐՈՒ ԴԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.։

ՇԱՆՕԹ.— Նկարչական յիշատակի ճանդէսը, որ յաւտարարուած էր նախապէս, յետաձգուած է։

ՖԱՔԻՐ ԶԻՒԼՖԻՔԵԱՐ ԷՖԷՆՏԻ

Միջազգային մեծ երեկոյթ ՖԱՖԻՐԻՍՄԻ Ամերիկա մեկնումի առթիւ

Այսօր՝ Երեքշաբթի ժամը ճիշդ 21ին

SALLE COMOEDIA 51, R. St-Georges*ի մէջ պիտի ապացուցանէ*

թէ ի՞նչ է ԻՐԱԿԱՆ ՖԱՖԻՐԻՍՄԸ։

Խիստ հետաքրքրական փորձեր, Հայ եւ օտար բժիշկներու հսկողութեամբ։ Եւրոպական Orchestre։ *Տոմսերու համար դիմել* Salle Comoedia*ի Տնօրէնութեան։*

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԵՒ ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ

"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՑԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։

Դիմել *Յառաջի* խմբագրատունը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. ԼիՈՆի «կայծակ» խումբի ժողովը՝ վաղը Չորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին, խումբի սրահին մէջ։ Ներկայանալ անդամատետրներով։

ՅԱՐԴԳՈՂի առաջիկայ գրական երեկոն, (3 մարտ, Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա) նուիրուած է Պ. Վ. Թէքէեանի գրականութեան։ Հեղինակը ներկայ պիտի գտնուի երեկոյին։ կը խօսի Հրանտ Բալուեան, կ'արտասանեն Մարութեան, Քոչարեան, Սարեան, Սինէմեան, Դաշնակ Օր. Ն. Գալփաքճանէ։

կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

ՓԱՐԻԶԻ ԲԺՇԿ. ՄԻՈՒԹԻՒՆԸ *կազմակերպած է հրապարակային բանախօսութիւն մը, վաղը Շաբթի երեկոյ, ժամը 9ին, Սօսիէթէ Սավանթի սրահին մէջ։ պիտի խօսի Փրօֆ. Ալշար (Ֆրանս. Բժշկ. Ակադեմիայէն) Նիւթ՝ Տպաւորութիւններ Հնդկաչինէն։ Մուտքը ազատ է։*

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիլի մասնաճիւղի ժողովը ուրբաթ 4 մարտ ժամը 8.30ին 40 Rue de Belleville։

ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Մեղի կը յաղորդեն.—

Անի Հայ Արուեստագէտներու խմբակցութեան ընդհանուր ժողովը գումարուեցաւ փետրուար 24ին եւ ընտրեց նոր վարչութիւն մը.— Նախագահ՝ Էտկար Շահին, փոխ-նախագահ՝ Գէվրիկեան, քարտուղար՝ Թաչատրեան, գանձապահ՝ Գազանճեան, հրապարակագրական քննադատ՝ Շիշմանեան։

Աշնան պիտի կազմակերպէ մեծ նկարահանդէս մը, Galeries Georges Petitի մէջ, որուն պիտի մասնակցին իր բոլոր անդամները, եւ ուր մասնաւոր տեղ պիտի տրուի մեր անզուգական վարպետներուն՝ Այվազովսքիի եւ Զարթարեանի։

*** «Գուսան» երգչախումբը իր անցեալ կիրակի գիշերուան նուագահանդէսը պիտի կրկնէ աւելի ճոխ յայտագրով մը Salle Gaveauի մէջ, ի նպաստ նորաստեղծ «Հայ գրողներու եւ Արուեստագէտներու ընկ.»եան, երեկոյթը դրուած է ծանօթ արուեստագէտներու հովանաւորութեան տակ։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՒՆՆԵՐ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՏՏՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շաբաթ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Ատամնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՊԻՅԵԱՆՔՈՒՒՈՒ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ

ՁԱՇԵՑՔ Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՁԱՇԱՐԱՆԸ

ՆԱԽԿԻՆ ՄՈՍԿՈՒԱ—ԿՈՎԿԱՍ

41 Rue de St. Cloud *կամ* 30 Rue Nationale

3.75 *Ֆրանքի Համեղ եւ մաքուր ճաշ Զրի առատ Հայ*

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՓՐԱՆՍԱՀԱՅԵՐՈՒՆ

Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ։ Թարգմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով։ Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ։

ԱՐԱԴ ՋԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

VAHAN YARJANIAN

CONTENTIEUX

5 Rue Cardinal Mercier Paris, (9e)

Tél. CENTRAL 96-70 կամ 97.39 Métro: CLICHY

» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITE

Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9.12 և 2.7 բացի Կիրակի

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Իզմիթցի Ազնիւ, վաղնակ եւ Հայկասէր Եղիազան, հօր անուն Կարապետ, մօր անուն Զարուհի, որոնցմէ վերջինս անգամ Ռաքքայէն (Մէսքէնէ) լուր առնուած էր։ Փնտռողն է իրենց քոյրը՝ Թնար Ազնաւորեան, հասցէն՝ 3 Rue Champollion Paris (5e.)։

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԵՐԿԵՐ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Arakélian, Contes et Nouvelles, 12 frs.։

Aharonian, Vers la Liberté, 12.

Aslan K., L'Arménie et les Arméniens 20.

Baronian, Maître Balthazar 12.

Barsamian, L'Homme et la Femme 6.

Barsamian, Elle et Moi 7.50.

Basmadjian, Histoire Moderne des Arméniens 12.

Chirvanzadé, La Possédée 12.

Djivani, Les plus belles chansons, 5.

Macler F., Ancienne Eglise d'Arménie 12.

Macler F., Contes et Légendes de l'Arménie 12.

Macler F., La Version Arménienne 12.

Macler F., Contes Arméniens 12.

Mesrob K. L'Arménie au point de vue... 12.

Minasse Mme Iskouhi, Nouvelles et Contes 15.

Minasse Mme Iskouhi, Flore Attique, poème 6.

Minasse Mme Iskouhi, Voix dans la Nuit, poème 7.50.

Morgan J. de, Histoire du Peuple Arménien 40.

Papazian V., Santho 12.

Raffi, Samouel, 2 volumes 25.

Sandaldjian, Père J., Histoire documentaire de l'Arménie des âges du Paganisme, 2 grands volumes 100.

Tcheraz M., Nouvelles Orientales 12.

Tchobanian A., La Femme Arménienne 6.

Tchobanian A., La Roseraie d'Arménie, 2 grands volumes, illustré 150.

Zartarian R., Clarté Nocturne 12 francs.

Պատարագամատոյց հայ-անգլերէն 1926 փարիզ 35 ֆր.։

Ֆրանսայի եւ գաղթավայրերու փոսթի ծախք չկայ։

Նոր Հայաստանի գունաւոր քարտէսը։ Պատրաստեց Կ. Բասմաջեան (քիչ օրէն լոյս կը տեսնէ)։

Դիմել՝ Librairie BALENTZ 233 Fbg. St. Martin, Paris 10.

ՆԱՐԵԿ Հայ մատենագրութեան գլուխ-գործոցը աշխարհիաբար լեզուով, գիրք՝ թերցումի եւ աղօթքի։ Դին 40 ֆր. կը ծախուի «Ցառաջ»ի խմբագրատունը, պալենց գրատունը եւ Լուսաբերի մօտ (5, Ave. Quinet St-Mandé)։

ՎԱՐԱՆ ԵՒ 2 սենեակի դիւրամատչելի պայմաններով 2 կամ 3 անձի համար։ Դիմել՝ տիկ. Շահպազի, Gay-Lussac. Paris, լիւքսէնպուրկի պարտէզի դիմաց։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի մէկ օր առնել եւ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել հարկ պատասխան օրուան։

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մատենագրապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենագրական գիրքերու։

Դիմել, — Librairie Hagachène, 9 Agopian Hantchakmakdjilar, Constantinople.

ԱՍԿԱՐԱՆ

28 Փետրուար 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր
Սթերլին,	L. St.	124
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի) 100 Mark		605
Թրքական Ոսկ.	L. Trq.	12
Թրք. ոսկի	» or	115
Մէճիտիէ	Médjidié	9
Լէվա 100 հատ	Léva	18
Ֆրանկ	» Franc	22
Դրահմի	» Drachme	111
Լիր	» » Lire	71
Պելճ. Ֆրանք	» Frc. Belge	101
Ֆրանկ	» Frc. Suisse	101
Լէյ 100 հատ	Ley	99
Ձերվոնց	(10 Roubles or)	

ԱՐԺԵԹՈՒՂԹ		
եգ. Ֆր. Ֆոնտէ	I Cr. Fonc. Eg.	3010
»	II »	1900
»	III »	1690
Ռումելի երկաղ.	Lots turcs	158

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITEUR

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ
2
ՄԱՐՏ
1927

2 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 274 — ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԻՆՉՊԷ՞Ս ԿԸ ԾԱԳԻՆ ԿՌԻԻՆԵՐԸ

Այս ժողովուրդին մէջ դասակարգ մը կայ որ իրեն մենաշնորհ կը համարէ լրջութիւնը, կամ, իրենց բառով, ողջմտութիւնը:

Ընդհանրապէս ջոջեր, վերջէն տեսածներ, նախկին ամիրաներու ծնացորդներ եւ անոնց առջեւ բարեւի կեցած «ազգասէր»-ներ են ասոնք: Շարունակ համերաշխութենէ, խաղաղութենէ կը ճառեն անոնք, եւ դող կ'ելլեն, ամէն անգամ որ դիտողութիւն մը, բողոք մը, ձեռնարկ մը կատարուի, իրենց գործերուն դէմ:— «Եղբայր, ամէնքս ալ նոյն ազգին զաւակներն ենք, կը վայլէ՞ որ Հայը Հայուն դէմ ելլէ»:

Այսպէս էր Թուրքիոյ մէջ: Այսպէս է, նորէն, գաղութներու մէջ, փարիզէն մինչեւ Գահիրէ:

Շատ հեռուները չերթալու համար, առնենք Մարսիլիոյ պարագան, ամէնէն թարմը եւ ամէնէն պերճախօսը:

Ամբողջ Ֆրանսայի մէջ, առաջին անգամ այդ գաղութն էր որ կազմակերպուեցաւ: Հաստատեց Ազգ. Միութիւն, դպրոց եկն.: եւ դէշ-աղէկ աշխատանքներ թափեց: Զգիտենք, նորերուն անփորձութե՞ն թէ հիներուն խարդախութեան հեաեւանքով, անցեալ տարուան սկիզբը իշխանութիւնը ամբողջովին անցաւ պարոններուն ձեռքը, մինչեւ ցնոր անօրինութիւն: Այդ «ցնոր»ը կը շարունակուի մինչեւ այսօր, ամուլ մթնոլորտ մը ստեղծելով այս կենսունակ միջավայրին մէջ: Բոլորն ալ կը սպասէին նոր ընտրութեանց, ելք մը գտնելու համար: Ընտրութիւնները պիտի կատարուէին անցեալ Նոյեմբերին, բայց ձգձգուեցան, Թեմական Խորհուրդին չափազանց զգուշաւորութեան եւ փաթիզի ջրջերուն ապերասան ընթացքին հեաեւանքով: Իսկ հիմա որ Թեմական Խորհուրդը հրաժարած է, կարելի է մինչեւ ծոցատիկ սպասել:

Երեւի այս կացութենէն մղուած, Մարսիլիոյ աշխատաւորները փետր. 13ին միթինկ մը կը գումարեն գործադրկութեան տագնապին առթիւ, եւ այնտեղ կը դնեն նաեւ ազգային կազմակերպութեան խնդիրը: Գործազուրկներու կոմիտէին պաշտօն յանձնուած է յաջողցնել Ընդհ. ժողովի գումարումը, օրուան վարիչներուն հաշիւները առնելու եւ նոր Ազգ. Միութիւն կազմելու համար:

Զեւերէն դատելով, պիտի առարկեն թէ օրինական չէ այս որոշումը, քանի որ տարբեր բաներ են գործազուրկներու տագնապը եւ ազգային իշխանութեան վերակազմութիւնը: Բայց եթէ ճիշդ է որ բացառիկ պարագաները բացառիկ միջոցներ կը պահանջեն, ինչո՞ւ տառին կառչիլ, փոխանակ ոգին հասկնալու եւ դարմանը գտնելու: Փետր. 13ի միթինկին բազմութիւնը կրնար շաբաթ մը վերջը հաւաքուիլ յատկապէս ազգային վերակազմութեան համար, եւ քուէարկել նոյն բանաձեւը: Մնաց որ, գործազուրկներու ժողովին առաջին օրակարգն էր 80—75 կամ 71,000 ֆր.ի գումարը, որ յանձնուած է Մարսիլիոյ վարչական խորհուրդին: Այդ գումարը պահանջուած առեն, ինքնին մէջտեղ կուգար նաեւ ազգային իշխանութեան խնդիրը:

Այս մանրամասնութիւնը չէ որ ըմբոստութեան մղած է «օրինապաշտ»ները, —օրուան իշխանաւորները. այլ՝ իրենց իսկ ողջմտութեան, լրջութեան եւ եթէ կ'ուզէք՝ պարկեշտութեան պակասը:

Գործազրկութեան Կոմիտէն հագիւ ընտրուած եւ վաւերացուած, Մարսիլիոյ հոգեւոր հովիւն ու ջոջերը ափչափոյ Աղքատախնամ մը կը կազմեն, տասը հազար ֆրանք կը դնեն անոր տրամադրութեան տակ (պահանջուած 80,000էն) եւ կը սկսին արձանագրել ու նպաստ բաշխել: Եւ դեռ աւելին: Մարսիլիայէն թղթակից մը կը գրէ թէ՝ Առաջնորդարանը, որ մերժած էր անկիւն մը տալ 1500 հոգի ներկայացնող կոմիտէի մը քարտուղարին, արձանագրութիւններ կատարելու, իր լայն հովանաւորութիւնը շնորհած է 30—50 հոգինոց ժողովի մը ներկայացուցիչներուն եւ դրամ կը բաժնէ:

Զմոռնանք որ՝ այս վերջինները հատընտիր հաւաքածոյ մը կազմեն ռամկավարներու, Հօկի անդամներու եւ ուրիշ նորընծաներու:

Ուրեմն, օրինապա՛շտ եւ ողջամի՛տ ազանները յեղափոխական դրօշ պարզած են, եւ ասպարէզ կը կարդան միւսներուն, հոգեւոր հովիւին խաչով եւ խաչվառով...

Ուրեմն, որոմ կը ցանեն, իրարու դէմ հանելու համար ժողովուրդին զանազան հատուածները, շահագործելով տիրող թշուառութիւնը, եւ շփացած՝ իրենց դիրքէն եւ տիտղոսէն:

Ամէնէն բարեացակամ դիտողն ալ, ուրիշ կերպ չպիտի մեկնէր, իրենց այս ընթացքը: Մէկզի թողունք անցեալը, արդարն ու մեղաւորը, «մենք»ն ու «դուք»ը: Ի՞նչ է միտքը այս մէկ հատիկ իրողութեան, այս նենգամիտ ձեռնարկին:

Կրնա՞ն պատասխանել հրապարակաւ: Կրնա՞ն, իբրեւ պարկեշտ մարդ, ասպարէզ իջնել եւ լուսաբանել: Եւ կը գտա՞ն թէ վերջը վերջը ո՛ւր կրնայ յանգիլ այս յիմարութիւնը:

Մենք նորէն կ'ուզենք հաւատալ թէ գոնէ երկու խելօք մարդ պիտի գտնուի Մարսիլիոյ իշխանաւորներուն մէջ կամ անոնց շուրջը, գործը ծայրայեղութեան չտանելու եւ կիրքերը մեղմացնելու համար:

Ամօթ է սմսեղուկ եւ գրգռիչ խաղեր փորձել չորս պատի մէջ, ի հեճուկս, տեղի չտալու համար, ամիրա՛յբար:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԿՐՆԱ՞Ց ԼՈՒԾԵԼ ՀԱՆԵԼՈՒԿԸ

«Պայքար», Ամերիկայի ռամկավարներուն պաշտօնաթերթը, «Զմոռնանք մեր դասը» խորագրով խմբագրականի մը մէջ (16 փետր.) խելօք խրատներ կուտայ հայ ժողովուրդին, որպէս զի գործիք չդառնան մեծ պետութեանց խաղերուն, հիմա որ Թուրքիոյ դէմ գործելու խօսքեր կան:

Արժան եւ իրաւ:

Բայց, կարդացէք խմբագրականին եզրակացութիւնը եւ բաղդատեցէք անոր յաւաջաբանը՝ վերջաբանին հետ.

«Եթէ Իտալացիք դրաւեն հարաւային Անատոլուն, — կ'ըլլայ մինչեւ Իզմիր,— ամենեւին երես ու պատեհութիւն չեն տար բնիկ տարրերու, եւ մէկ կամ երկու տարի չանցած հարիւր հազարաւոր Իտալացիներ կը տեղաւորուին այդ երկիրներու մէջ: Ով որ վարժուած չէ բաց աչքով երազելու, եթէ իր աչքերը փակէ իսկ, կրնայ տեսնել այս իրողութիւնը եւ հաշուել այս հետեւանքները:

«Ասիկա չի նշանակեր անշուշտ, որ, եթէ Իտալիոյ կողմէ ձեռնարկ մը ըլլայ Թուրքիոյ դէմ, ատիկա անտարբեր կամ դժգոհ կը թողու մեզ: Թուրք կառավարութեան դէմ ամէն հարուած բնականաբար նպաստաւոր է մեզ ու զոհունակութիւն կը պատճառէ անհրաւեալ Հայութեան: Մենք նոյն իսկ կրնանք օգտուիլ, եթէ խնայենք մեր ուժերը, արթուն ըլլանք, ու պիտանանք արժեցնել մեր իրաւունքները: Իսկ ասոր համար պէտք չունինք մեր աչքերը յառելու արեւմտեան Եւրոպայի: Շիտակ ճամբան բաց է մեր առջեւ»

կրնա՞ք լուծել այս հանելուկը:

ՈՒԶՈՂԸ ԹՈՂ ՀԱՒԱՏԱՅ

Պոլսոյ «Ժամանակ»ը, որ խայտառակուեցաւ արտասահմանի Հայերու վերադարձի սուտ աւետիսը հաղորդելով, այս անգամ դիմեր է Գ. զօրաբանակի հրամանատարի օգնականին, եւ տեղեկութիւններ ուզեր է զինուորական տարիք ունեցողներու վերադարձի մասին: Օգնականը պատասխաներ է.

«Այդ տեսակներուն, եթէ նոյն իսկ փախստական (ֆիւրարի) են եւ 314, 15, 16, 17, 18ի ծնունդներ, ներում շնորհուած է: Անոնք միայն զինուորական ծառայութիւնը պիտի կատարեն: Մնաց որ այդ տեսակները հրաւիրուած են ցարդ ռազմափորձ ընելու համար, որով կրնան վերադառնալ առանց զինուորական պատիժի: Միայն թէ հոն՝ մեր հիւպատոսներուն եւ կամ փոխ-հիւպատոսներուն դիմելով իրենց ինքնութիւնը պէտք է հաստատել տան:

«Իսկ 319ի եւ 20ի ծնունդները որպէսզի պատիժէ զերծ ըլլան, պէտք է ղարձնել մեր պաշտօնական անձերուն դիմեն և հաստատեն թէ ո եւ է օրինական պատճառով չեն կրցած վերադառնալ իրենց հայրենիքը՝ կատարելու համար իրենց զինուորական ծառայութիւնը»:

ԿԱՊՈՒՏ ՀԱՋ.— Իջեւանի շրջանին մէջ Սեւ-բար գիւղի դպրոցի աշակերտները վարակուած են կապոյտ հազով: Դպրոցը փակուած է երկու շաբաթուան համար:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՏԱԼԻԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

Անցած շաբաթ հրատարակեցինք անգլիերէն «Րիֆըրի» շաբաթաթերթին գրածները՝ Իտալիոյ զինուորական պատրաստութեանց մասին: Յիշեալ թերթը իր այս կիրակի օրուան թիւին մէջ նոր մանրամասնութիւններ կուտայ, կը բացատրէ իտալեւգերմանական մերձեցման պատճառները, Ալպեաններու երկայնքը, Ֆրանսայի հարաւ-արեւելեան սահմանապահութեան դիմաց Իտալիոյ ձեռք առած զինուորական միջոցները եւ Նիսի դէմ յանկարծակի յարձակման մը առթիւ գործադրելիք յատակագիծը: Ու կ'աւելցնէ.

«Իտալիոյ եւ Գերմանիոյ համար անհանդուրժելի է Անգլիոյ բարեկամ զօրաւոր Ֆրանսա մը»: Ահա թէ ինչո՛ւ ստորագրուեցաւ վերջին գերմանեւիտալական համաձայնագիրը: «Րիֆըրի»ի թղթակցին համաձայն, Ֆրանսա այսպէս անգամ մը եւս մուրճին եւ սալին մէջտեղ կը գտնուի, ինչպէս յաճախ գտնուած է դարերու ընթացքին՝ Գերմաններուն դէմ Միջերկրական հակումին եւ այդ ծովուն վրայ իր տիրապետութիւնը ապահովելու համար Իտալիոյ հիւսիսի բարբարոսներուն հետ համաձայնութեան երեսէն:

Մուսոլինի մերժեց Փուլիճի զինաթափութեան առաջարկը, ինչպէս կը սպասէր ամերիկեան կառավարութիւնը, որ կատարելապէս տեղեակ է Իտալիոյ պատերազմական պատրաստութիւններուն:

Թղթակիցը կը բացատրէ թէ ինչպէս անցած տարի Իտալացիները ծրագրած էին նաւային ցոյցեր կատարել Քորսիքայի եւ Թունուզի դէմ, յուսալով որ յիշեալ երկիրները հաստատուած Իտալացիներէն մեծ աջակցութիւն պիտի գտնեն: Այս կերպով Իտալիա պիտի բաժնէր Ֆրանսայի ուժերը եւ զբաղեցնէր զանոնք, մինչ իտալական բանակը ցամաք պիտի ելլէր Ալպիպ, Նիսը պիտի մեկուսացուէր եւ Ալպեան սահմանները պահող սակաւաթիւ Ֆրանսացիները կընակէն պիտի հարուածէր: Հաշիւ կ'ըլլար որ Նիսի գրաւումը, ուր ծնած է Կարիպալտի, Իտալիոյ մէջ ոգեւորութիւնը պիտի զրգռէր:

Ֆրանսա այն ատեն երեւան հանեց այս ծրագիրը եւ տեսաւ որ Զուիցերիոյ եւ Միջերկրականի միջեւ 300 քիլոմէթրնոց իր սահմաններուն վրայ տեղաւորուած ֆաշիստ պահակներու թիւը մեծապէս աւելցած էր, թոյլ չտալու համար որ հակաֆաշիստներ դուրս ելլեն Իտալիայէն:

Թղթակիցը յետոյ մանրակրկիտ հաշիւը կուտայ սահմանին վրայ սպասող 300,000 իտալացի քաղաքապահներու եւ անոնց սպառազինութեանց: Գալ շաբաթ պիտի շարունակէ իր յայտնութիւնները:

Բոլոր պաշտօնաթուղթերը թուրքերէն

Պոլսոյ կրթական տնօրէնութեան նոր որոշման համաձայն, ոչ-իսլամ վարժարաններու կնիքներուն եւ պաշտօնական բոլոր թուղթերուն վրայ միայն թուրքերէն պիտի գրուի, առանց ուրիշ ոեւէ լեզուով բան աւելցնելու: Ի մէջ այլոց վկայականներն ալ միայն թուրքերէն պիտի ըլլան:

Այս մասին պատրաստուած հրահանգը 9 յօդուածներէ բաղկացած է: Հրահանգը տակաւին հաղորդուած չէ վարժարաններու տնօրէնութեանց:

Անկախութեան դասարաններ պիտի բացուին

Պոլիսէն կը հեռագրեն 28 փետր. Թուականով թէ Էնկիւրիի կառավարութիւնը որոշած է Մարտ ամսուան ընթացքին ջնջել անկախութեան դատարանները: Այս որոշումը շուտով պիտի ներկայացուի ազգային ժողովին: Միւս կողմէ՝ կարգապահութեան եւ ապահովութեան բացառիկ օրէնքը մէկ տարի եւս պիտի երկարաձգուի, ինչ որ կը նշանակէ թէ ահուսարասփի վարչաձեւը դեռ պիտի շարունակուի:

Մեծ ձախատարտի ևախօրեակին

Զինադադարէն առնուած վերջին տեղեկութիւններու համաձայն, երկու հակառակորդ բանակները փութով առաջ կը տանին իրենց պատրաստութիւնները, այդ պատճառով քանի մը օրէ ի վեր ճակատին վրայ կացութիւնը հանդարտ է: Կը կարծուի թէ երկուստեք համաձայնութիւն գոյացած է ռազմաճակատը փոխադրել Թայհօ լիճին արեւմտեան եզերքը, Շանկայէն 150 մղոն արեւմուտք, գլխաւոր նպատակ ունենալով կտրել հաղորդակցութեան միջոցները:

Քանթոնցիներուն յատակագիծն է յանկարծական յարձակումով գրաւել Նանքինը, Շանկայի հիւսիսը, Հիւսիսցիներու կապը կտրելու համար իրենց պարենաւորման գլխաւոր խարիսխին՝ Շանթունկի նահանգին հետ, մինչ զօր. Շանկ-Ցուն-Շանկի ուժերը կը ծրագրեն Նանքինէն յարձակում մը փորձել, ստիպելու համար ազգայնականները պարպել Հանկքէուն:

Այս գործողութեանց արդիւնքը պիտի ըլլայ Շանկայը ժամանակաւորապէս վտանգէ ազատել, սակայն չի կարծուիր թէ կարելի ըլլայ դիւրաւ յաղթել Քանթոնցիներուն, որոնց գլխաւոր խորհրդականներն են ոուս յայտնի ռազմագէտներ: Շանկայի անգլ. զինուորները կը շարունակեն ամրացնել իրենց դիրքերը:

Մոսկուայէն Քանթոն հասած են փրոփականտայի դպրոցէն շրջանաւարտ 40 Զինուցիներ եւ հրապարակային ժողով-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԵՐԵՒԱՆ ԳԱՒԱՌԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Երեւանի գաւառին մէջ, անցեալ տարուան ընթացքին, նախակրթարաններու ընդհ. Թիւն էր 116: Երեւանի մէջ՝ 8, Ղամարլուի գաւառակին մէջ՝ 22, Վ.Էդի-Բասարի գաւառակին մէջ՝ 15, Շրազդանի գաւառակին մէջ՝ 14, Բաշ-Գեաւնիի գաւառակին մէջ՝ 10, Կոտայքի գաւառակին մէջ՝ 22, Ախտայի գաւառակին մէջ՝ 25: Ամբողջ գաւառին մէջ եօթնամեայ դպրոցներուն Թիւն էր 10, որոնց 7ը՝ քաղաքին մէջ, միւսները՝ Շրազդանի, Կոտայքի եւ Ղամարլուի մէջ: Ամբողջ գաւառին մէջ կայ մէկ գիւղատնտեսական դպրոց, որ Դուինէն փոխադրուեցաւ Ղամարլու: Դպրոցին համար անհրաժեշտ են շէնք եւ հողամաս:

Ամբողջ գաւառին մէջ կան 10 մանկապարտէզներ, եւ երեք դպրոցներ՝ երկրորդ աստիճանի:

Թուրքերը ունին 21 դպրոց, Ռուսերը՝ 5, Ասորիները՝ 4, Յոյները՝ 1, Եգիպտիները՝ 1, եւ երեք՝ խառն:

Նախակրթարաններու աշակերտութեան ամբողջ Թիւն է 12,121, որոնց 8783ը մանչ, 3,338ը աղջիկ:

Եօթնամեաներուն աշակերտներուն Թիւն է 1308 հոգի, 738ը մանչ, 570ը աղջիկ:

Երկրորդական վարժարաններու աշակերտութեան Թիւն է 587 հոգի, 324ը մանչ, 263ը աղջիկ:

Մանկապարտէզներուն աշակերտութեան Թիւն է 3737 հոգի, 2216ը մանչ, 1521ը աղջիկ:

Գաւառին ամբողջ աշակերտութեան մէջ օտարներու Թիւն է 2005, որոնց 1559ը մանչ, 446ը աղջիկ:

Ամբողջ գաւառին ուսուցիչներուն Թիւն է 589, որոնց 540ը Հայ, 34ը Թուրք, 4ը Ասորի, 1ը եգիպտի, 1ը Յոյն, 9ը Ռուս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԾՈՒՄՆԵՐԸ.— Պետական Հրատարակչականը արտօնուած է արտաճել արտասահման, մանաւանդ Ամերիկա, մեծ քանակութեամբ... «խորհրդային գրականութիւն»: Սակայն երբեք չի ներածեր:

ԿԻԼԻՊԻՆԿԵԱՆԻ ԽԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԱԾ.— Պոլսոյ Քաղ. Ք. Ատեանը որոշած է վերադարձնել Պ. Գ. Կիւլպէնկեանի «Սելամէթ» խանը, որ կը գտնուի Պահեստ Գափու, եւ իբր լքեալ գոյք նախապէս ծախուած էր 164,000 ոսկիի: Խանին ներկայ արժէքն է 200,000 ոսկի:

ՁՄԵՌ.— Երեւանի օդերեւութաբանական կայանին հրատարակած տեղեկութեանց համաձայն, փոթորիկի հոսանքը իտալական ափերէն արշաւելով, փետրուարի սկիզբը հասած է Հայաստան: Այս պատճառով, ամբողջ մեր հայրենիքին վրայ Թիւն տեղաց առատօրէն: Լեռնային գաւառներուն մէջ Թիւնը նստաւ մէկէն մկուկէս մեթր հաստութեամբ:

Փետրուարի կէսին, եղանակը դարձաւ: Բարեխառնութիւնը հետզհետէ կը հակի դէպի ջերմութիւն: Օդերը արդէն կը պայծառանան: Վերջին տարիներուն, նման ցուրտ եւ սառ չէր պատահած:

*** Գարալագեազ գաւառին մէջ շարունակ Թիւն կը տեղայ: Լեռնային շրջաններուն մէջ Թիւնը նստած է սկկուկէս մեթր: Ցասը տարիէ ի վեր նման առատութեամբ Թիւն չէին տեսած այս շրջանի գիւղացիները:

ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Փարիզի քաղաքական գիտութեանց բարձրագոյն վարժարանին փրոֆէսէօր եւ «Ընկերային բարեշրջում» ընկերութեան ընդհ. քարտուղար Պ. փօլ Տէքան (Prof. Paul Descamps) որ, ինչպէս կը յիշեն մեր ընթերցողները, անցած տարի հրատարակած է «*Հայերու ընկերային կազմութիւնը*» անուն գիրք մը, կը շարունակէ զբաղիլ Հայերու վերաբերեալ խնդիրներով եւ մեզի դրկած է իր մէկ ուսումնասիրութիւնը, «*Ֆէմինիզմը Հայաստանի մէջ*» խորագրով: Հաճոյքով կը թարգմանենք այս գրութիւնը, որ միեւնոյն ատեն հրատարակուած է Ֆրանսայի Ֆէմինիստներու օրկանին՝ «Ֆրօնտ»ի մէջ.—

Ֆէմինիստ շարժումը, որ կը ձգտի Հասնիլ միեւնոյն նպատակին, երկիրէ երկիր կը տարբերի՝ ոչ միայն իր ընտրած մեթոտներով, այլ եւ իր ուղղութեամբ: Ատոր շուտով կը համոզուինք, երբ բաղդատենք երկու երկիրներ, որոնք իրարմէ բաւական հեռու են, օրինակ՝ Ֆրանսա եւ Հայաստան: Ընդհանուր երեւոյթով, Եւրոպայի մէջ ֆէմինիստ շարժումը ծագած է ինքնաբերաբար, արդիւնք՝ ընկերային եւ մտաւոր պատճառներու, եւ կը ձգտի խաղալ քաղաքական դեր: Հայաստանի մէջ, ընդհակառակն, պետութիւնը, ինքն է, որ կ'աշխատի կազմակերպել ազգային հիմնարկութիւնները, միշտ նկատի ունենալով ֆէմինիսմի իտէալը, թէեւ չկայ պահանջ, չկայ բարեշրջումի փափաք ժողովուրդին մէջ:

Ես չեմ անգիտանար, սակայն, թէ իրողութիւնը տարբեր է այն հայկական գաղութներուն մէջ, որոնք կը գտնուին Եւրոպայի, կամ եւրոպական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ պահուած երկիրներու մէջ: Դիւրին է ըմբռնել պատճառը: Հայոց մեծ բողջ Հարուստ եւ զարգացած ընտրանին գտնուած է արտասահմանի մէջ, կ. Պոլիս, Իզմիր, Գահիրէ, Փարիզ եւայլն: Հայաստան աղքատ երկիր մըն է, եւ կը գըտնուի վաճառականական մեծ ճամբաներէն դուրս: Հայաստանի գիւղացիներն ու լեռնցիները կը կազմեն բնակչութեան Հարիւրին 85ը. քաղաքները՝ աղքատ եւ անկարեւոր: Ընդհակառակն, արտասահմանի մէջ, Հայերը գրեթէ միշտ քաղաքաբնակ են եւ կը Հարստանան վաճառականութեամբ կամ փոքրիկ արհեստներով: Արտասահմանի Հայերը աւելի շատ կարեւորութիւն կուտան մտաւոր զարգացման, քան անոնք որ կը գըտնուին Հայրենիքին մէջ: Այս պատճառով, Հայ գաղութներու մէջ ինքնաբերաբար ծագեցան մտաւորական ֆէմինիսմի շարժուձեւեր: 1876ին արդէն Սրբուհի Տիւսաբ սկսած է պայքարը՝ ի նպաստ սեռերու Հաւասարութեան: Դարուն վերջը, կազմուեցան ընկերութիւններ, հիմնելու Համար Հայուհեաց վարժարաններ կ. Պոլսոյ, Իզմիրի մէջ, եւ այլ տեղեր: Բուն Հայաստանի մէջ կացութիւնը բոլորովին տարբեր է: Հողագործները, մանաւանդ լեռներու մէջ, կազմած են նահապետական գերդաստաններ, խմբելով մէկ յարկի տակ 10–15 ընտանիքներ:

Անհատական իրաւունքները Հոն զոհուած են Համերաշխութեան գաղափարին: Ամուսնութիւնը Հրամայական է, (բացի վանքերէն), եւ ընտանիքին Հայրը կը պարտադրէ կայն: Իւրաքանչիւր անդամի վաստակը ամբողջապէս կը յանձնուի անոր: Հասկատակայարգամասուն կեանքին, այրերն ու կիները իրարու Հետ կը խօսին միայն այն պարագաներուն, որոնք Համաձայն են աւանդութիւններուն: Ամուսինը կը գերիշխէ: Սակայն, ճշմարէն գնահատելու Համար կնոջ կացութիւնը, անհրաժեշտ է խոստովանիլ որ, կինը կ'ենթակայէ Հանապազորդ տանջիրուհիին, ընդհանրապէս՝ կողակիցը ընտանիքի պետին: Ցանկիրուհին է որ օրուան աշխատութիւնները կը բաժնէ յարկին մէջ գտնուած բոլոր կիներուն: Այսպէս, Հարսը աւելի կը ծառայէ իր կեսրոջը քան էրկանը: Ցանկիրուհին մեծ առանձնաշնորհներ ունի, ազատօրէն կը խօսի ամէնուն, սակայն առաջին տեղը կը գրաւէ ընտանիքին մէջ, պետը միայն:

Մեր տուած պատկերէն դիւրին է Հասկնալ, որ կինը աւելի շատ ձնշուած է ընտանիքէն քան ամուսինին իշխանութենէն, եւ իր ստորադասութիւնը կը բխէր աւելի շատ կեանքի պայմաններէն, քան օրինական սեղմումներէն: Կարելի է նոյնիսկ որոշ չափով ըսել, որ Համակրութիւնը գոյութիւն ունի, որովհետեւ եղբօր զաւակները միասին կը մեծնան մինչեւ իրենց ամուսնութիւնը: Ճիշտ է որ կինը, ամուսնանալէ յետոյ, քող կը կրէ, որուն նպատակն է չարձնցնել ցանկութիւններ, որոնք կրնային առաջ գալ իր տագրոջ մօտ, մէկ յարկի տակ իրենց բնակութեան պատճառով: Վերջապէս, եթէ էրիկ մարդիկն են միայն որ, քաղաքական իրաւունքներ կը վայելեն, այդ կարելի է բացատրել անով, որ այր եւ կնոջ գործատեղիները իրարմէ բաժնուած են, առաջիններ կ'աշխատին դուրսը, եւ երկրորդները՝ ներսը:

Օսմանեան կայսրութեան օրով, տեղական ինքնավարութիւնները բաւական լայն էին: Իւրաքանչիւր վայրի մէջ, իւրաքանչիւր կրօնքի Հաւատացեալները կը կազմէին խումբ մը, որ կը վարէր իր եկեղեցին, դպրոցը, եւայլն: Այլազան կրօնական օրէնքները կ'որոշէին բնոյթը քաղաքական օրէնքներու: Եթէ ֆեմինիստական շարժում մը կրնար տեղի ունենալ, աւելի շատ պիտի ազդէր կրօն.ժողովին եւ կաթողիկոսին, բայց ոչ սուլթանին վրայ: Այսպէս, պատերազմէն առաջ, տեսնուած է կաթողիկոս մը, որ, ազդուած՝ ֆեմինիստական գաղափարներէն, քուէարկութեան իրաւունք տուած է այրի կիներու:

Քաղաքներու մէջ, նահապետական գերդաստանը աւելի դժուարութեամբ կը պահէր իր գոյութիւնը եւ 3—4 ընտանիքէ Հազիւ կը բազկանար: Կնոջ կացութիւնը թերեւս կարգ մը տեսակներով աւելի տանելի տան մէջ, տաժանելի էր դուրսը. կին մը կրնար դուրս ելլել միայն մէկու մը ընկերակցութեամբ, եւ խնամքով քօղարկուած. ատոր պատճառը ոչ թէ ամուսինին իշխանութեան չարաչար գործածութիւնն էր, այլ՝ ձգտումը աշխատիկ կիներու հետ չշփոթուելու:

ՓՕԼ ՏԷՔԱՆ

«ՆՈՐ ԱԼԻՔ» ՓԱԿՈՒԱԾ

Սելանիկի ամէնկաւար օրկանը, «Նոր Ալիք» դադրեցուցած է իր հրատարակութիւնը ծանր պարտքերու տակ մնալով: Զրոյցի մը համաձայն, ամէնկաւար խմբակը եւ համայնավարները կը խորհին միացեալ ուժերով Հանել նոր թերթ մը, քանի որ կարմիրներու «Աշխատանք»ն ալ դադրեցաւ:

ԴԵՂԱՐՈՒԵՍՏ

"ԳՈՒՍԱՆ"Ի ՀԱՄԵՐԳԻՆ ԱՌԹԻԻ

Նորակազմ Գուսան երգչախումբի Ա. համերգը, որու մասին գրած էր «Յառաջ»ի մէկ աշխատակիցը ունէր խճողուած, ձանձրացուցիչ յայտագիր:

Փարիզի մէջ, առաջին անգամ է որ նուագահանդէսէ մը դուրս կուգայի այդքան աննպաստ տրամադրութեամբ: Ոչ իսկ պզտիկ խանդավառութիւն մը: Եւ ատիկա կարելի է վերագրել ամդողջութեամբ զեկավարին զեղազիտական տհաս ճաշակին եւ անփորձութեան, որոնց մասին կ'ուզէր ամփոփ արտայայտուիլ:

Պարզ իրողութիւն է որ երաժշտահանդէսի մը գեղարուեստական նկարագիրը նախ կը նշմարուի արուեստագէտին հեղինակներէ առած նիւթերուն ընտրութեան ու յայտագրին կազմութեան մէջ: Ուրկէ մօտաւորապէս կարելի է հետեւցնել հանդէսին ներկայացնելիք ճաշակի եւ զգայութեան ամբողջական թափը: Ու միեւնոյն ատեն երաժշտութիւնը ըլլալով արուեստներուն մէջէն ամէնէն աւելի դժուար ըմբռնուողը, հասկրդի մը ընթացքին մեծագոյն աշխատանքը կը պահանջէ նախ ներկայացնել զայն իբրեւ կատարներու ներքնապէս թաւալող տարր՝ միաոգի, յստակ ներդաշնակութեամբ:

«Գուսան»ի յայտագրին մէջ կ'երեւէին նիւթեր Վէբրտիէն, Վէպէրէ, Քրիչանինոֆէ, Մուսորկսքիէ, Ռեսպիղիէ, Կոմիտաս վրդ.է, Ռախմանինոֆէ, Եկմալեանէ ու մանաւանդ Գ. Սիւնիէ («Արի'ք Հայկազունք»): Ու ասոնց մօտիկ ահագին թիւ մըն ալ Պ. Պատմագրեանի Orchestreի Համար վերարտադրած ժողովրդային եւ եկեղեցական երգերէ:

Ներկայացուած իւրաքանչիւր հեղինակի երաժշտական արժանիքի դիմաստուերը դծելու, ասոնց միջեւ ձգուած չունչին իրարմէ ունեցած տարբերութիւնը յստակ կերպով զանազանելու համար, շատ ամփոփ կուտանք 19րդ դարու երաժշտական դասաւորումներու պալքարը մինչեւ նորագոյն արուեստ:

Թրուպատուրներու եւ դասականութեան յաջորդ կը ներկայանայ իտալական օփէրան իր mélodieներով, որոնց երաժշտութիւնը բնագրի խօսքերուն հետ սերտ կապակցուած չերեւիր, այլ պարզապէս որոշ եղանակ մը յարմարցուած բառերուն: Անիկա ամբողջութեամբ զգացումներու կապուած ձեւ կ'առնէ: Շքաւորողները թէ հոն եւ թէ ֆրանս. զրոյցին մէջ `Ռեսպիղիի, Վէբրտի, Օպէր, Կունօ ու մանաւանդ երազող Թեթեւ Մասընէն:

Այս զրոյցի հակընդդէմ՝ Գերմանիոյ մէջ Վակներեան տրամայի մէջ եկան թափիլ Գերմանիոյ միջնադարեան խորհրդապաշտութիւնը, հէքեաթները, Շօփէնհաուէրեան իմաստասիրութիւնը: Այս ուղղութիւնն ալ մտածումներու կապուած ձեւ կ'առնէ: Առաջինը հաճելի, երազուն, դիւրաւ ըմբռնելի, իսկ վերջինը անդունդի մը վրայ բացուող ստուերի մը խորութեամբ:

Իտալական եւ գերմանականի քովիկ միաժամանակ երեւան կուգան երկու նոր ուղղութիւններ, մէկը արեւելքի՝ Ռուսիոյ, իսկ միւսն ալ՝ Ֆրանսայի մէջ: Առանք բոլորովին հակատնտեսական հին technique ձեւերու՝ կը հիմնեն նոր երաժշտութիւնը ապահովուած զուտ ազգային արժէքներու, սովորութեանց, ժողովրդային արտայայտիչ հոգեբանութեան: Ֆրանսայի մէջ հիմնադիրը կ'ըլլայ Քլոտ Տէպիւսի, Վ. Տինտի, Ռավէլ ևլն.: Իսկ Ռուսիոյ մէջ Մուսորկսքի, Ռիմսքի-Քօրսաքոֆ, Պալագիրէֆ ևլն.:

Իսկ արդի երաժշտութեան մէջ կայ բոլորովին նոր ուղղութիւն մը, որ սկսելով Մէթրավինսքիով, այսօր կը ներկայացուի Փրոքոֆիեւի միջոցաւ: Անդրադառնալով Պ. Պատմագրեանի յայտագրին, կը տեսնենք որ նմոյշներ զետեղուած են հոն վերոյիշեալ զպրոցներու ներկայացուցիչներէն.—

Իտալական մակերեսային արուեստէն Վէրտի, Ռոսսինի, Կունօ, զերմանական ոգեւորող շունչէն Զայքովսկի, Նորերէն Ռախմանինոֆ, հայկական ինքնուրոյն զեղջուկ երաժշտութենէն Կոմիտաս վրդ. եւայլն:

Որպէս զգայական ապրում այս խառնակութեան մասին խօսելէ առաջ, տեսնենք թէ երաժշտութիւնը ո՛ր աստիճան դիւրին ըմբռնելի ու պատկերաւորուող արուեստ մըն է:

Գեղարուեստի մէջ նկարչութիւնը, քանդակագործութիւնը, ճարտարապետութիւնը ամէնէն նպաստաւորուղները կը մնան, որովհետեւ ունին իրենց համապատասխան նիւթ՝ — գիծ եւ գոյն — արտայայտիչ դառնալու: Մինչդեռ երաժշտութիւնը տրուած շրջապատ մը ներկայացնելու համար կարող է հնչիւններու միայն ապաւինիլ, որուն վրայ կառուցուած շէնքը այլափոխուող է ու շարժական: Այսպէս, երաժշտութիւնը կարող է ոմանց հոգին փոթորկել, լափշտակութեան մէջ դամուած պահել, իսկ ոմանց առիթ միայն լողական խաղտանք:

Երբ մարդ երաժշտութիւն կը լսէ, տրամադրութիւնը չանք կը գործադրէ մտնել հնչիւններուն խորքը, իր երեւակայութեանը օգնութեամբ պրպտել հոն տարբեր՝ որոնք իր ներքնաշխարհը պիտի կերտեն: Տրուած ըլլալով անհատներու զանազանուող խառնուածքը, հնչիւններու մեկնութեան ժամանակ ալ արդիւնքը կ'ըլլայ այլազան:

Շատ անգամնուագուած նիւթի մը անձնաւորութիւնը ունկնդրողներէ ոմանց կուտայ վիշտի զգայութիւն եւ ոմանց ալ խրախճանքի:

Արդ, նուագահանդէսի մը միջոցին ներքնաշխարհի մը կառուցման պրպտող երեւակայութիւնը որպէս զի կարողանայ յստակ եւ կանոնաւոր կուտակել ապրումները, ղեկավարին կը մնայ ամբողջ պարտականութիւնը հեշտացնել եւ փրկել ունկնդրողները այլազան թափառումներէ, տալով այնպիսի յայտագիր մը որուն նիւթերու ոգին, բարձրութիւնը, զգացումը օղակաւորուած, համահաւասար աստիճանի մօտենան:

Պ. Պատմագրեանի յայտագրին մէջ ոգիի ensembleը կը պակսէր. անոր հեղինակները իրար կը խաչաձեւէին եւ այդ էր պատճառներէն մին որ ունկնդիրը չկարողացաւ ապրումներ կուտակել, խանդավառուիլ:

Կարեւոր կէտ մըն ալ. — պէտք է յայտագիրը այնպէս դասաւորուած ըլլայ որ դանդաղ, ճնշող նիւթերը առաջին բաժնին մէջ իյնան, իսկ կեանք ոգեւորողները վերջին, այսպէսով պահելու համար աստիճանական վերելք մը դէպի խանդավառութիւն: Մինչ Պ. Պատմագրեան աւոր հակառակ կօրկանեանի Fantaisie Caucasienneը, Կոմիտասի «Գարունը» գետեղած էր Ա. բաժնին, իսկ եկեղեցական տխրալատ մեղեդիները վերջի բաժնին մէջ: Ու ահա թոյլ տրամադրութիւն մը թէ դեկավարին մօտ, թէ երգիչներուն եւ թէ հասարակութեան:

***

Զատելով երգչախումբը նուագախումբէն, առաջինին համար պիտի ըսենք որ ամէնէն աւելի կեանք տուողը եղաւ հասմերգին: Ուշագիր բծախնդրութիւն դէպի կատարուող աշխատանքը, չափաւորութիւն ձայներու մէջ ու մանաւանդ ներդաշնակութիւն. միայն թէ զգալի էր պակասը պասսներուն:

Իսկ նուագախումբը ցոյց տուաւ ձայներու տաղտկալի պողոտուք. ամէնքն ալ իրենց դլուխը առած մէկ մէկ կողմ կը վազէին. իրարու կամար նետելու ոչ մէկ աշխատանք ու ընդհակառակն զբաղած ժպիտնեբով, կարծես երգահանդէսին ոչ-գեղարուեստականութիւնը ծաղրելու համար:

Իրրեւ երգիչ կը մասնակցէին Տիկիններ՝ Պատմագրեան, Կազարեան եւ Պարոններ՝ Ղուկասօֆ եւ Կօլուպէֆ:

Արժէքաւոր յայտնութիւն մըն էր Տիկին Պատմագրեանը իր հաճելի եւ տիրապետող ձայնով՝ որպէս երեւոյթ լաւագոյն ապագայի մը համար: Տիկին Կազարեան ունի երանգ ու մարզուած եւլեւէջներ, ինչ որ թիւրալեան երգերուն շատ լաւ կը պատշաճի: Միայն թէ ձայնի տարածութեան պզտիկութիւնը պէտք է զինք զգոյշ պահէ նուագախումբի հետ երեւալէ, պահելով իր հմայքը միայն Musique de chambreի:

Իսկ Պ. Ղուկասօֆ այլ եւս իր վերջնական ձեւը առած, մշակուած արուեստագէտ մըն է:

***

Այս բոլորէն վերջ, ի՞նչ կ'արժէ արուեստը առանց կենդանութեան:

Հանճարներ իրենց անհետացումէն վերջ ձգեր են շունչ մը որ մինչեւ մեզի կ'երկարի: Անոր մէջ կայ ստեղծագործութեան ամբողջական թափը իր տարբերով: Մենք ատիկա կը զգանք, կը շօշափենք մեր մատներուն տակ բայց եթէ ընդունակ ենք զգալու:

Երաժշտական գործ մըն ալ կրնանք բիւրեղացնել, կեանքի կանչել, եթէ զայն գունաւորել, մեր հոգիէն անցընել գիտենք:

Պ. Պատմագրեան կրնայ տաղանդ եւ պատրաստութիւն ունեցող երաժիշտ մը եղած ըլլալ: Մասնաւորաբար յարգանքի արժանի գործ է որ ծրագրած է կատարել Փարիզի մէջ, կազմակերպելով «Գուսան» երգչախումբը: Սակայն այս առաջին համերգով ան ցոյց չտուաւ, իրրեւ ղեկավար՝ տիրող, ինքզինքը պարտադրող անհատականութիւն:

Ղեկավարէ մը կը պահանջուի նուագելի ամէն մէկ կտորին մէջ իր սեփական արիւնէն կաթիլներ ցնել, ապրիլ անոր հետ ու անէանալ, անէացնելով թէ նուագողները եւ թէ ունկնդրողները:

ՀՐ. ԲԱԼՈՒԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԸ

Ընդհալ 1926 թուի Դեկտեմբերի 12ին, Ուրմիոյ մէջ վախճանեցաւ Հոգեւոր Հովիւ Արսէն Աւագ քահանայ Թադէոսեանը:

Ծնած էր Մակուի մէջ 1880ին, Համեստ ընտանիքէ մը: Նախնական ուսումը ստացած է Մակուի մէջ: Քեւտյ անցած կովկաս, ուրկէ ալ 1900ական թուականներուն սկիզբը վերադառնալով Մակու, կը տեղաւորուի նշանաւոր Ս. Թադէի վանքը եւ կը նուիրուի յեղափոխական գործունէութեան, վանի սահմանագլխին մօտիկ:

Կուսակցական գործիչներու Հրահանգով 1908ին կը ձեռնադրուի քահանայ եւ կը նուիրուի Մակու, միշտ ձնշուած ու Հարատահարուած Հայերու պաշտպանութեան գործին, ինչ որ կը կատարէ բարեխղճութեամբ:

Վանի 1914ի վերջերս եւ 1915 թուի սկզբներու կռիւներու ընթացքին սահմաններէն Մակուի վանքը ապաստանած Հայ գաղթականութեան լայն ալեկոծութիւն ցոյց կուտայ: Մակուի տիրահռչակ Սարտարի եւ Խանեբու մօտ յաճախ միջնորդութիւններ կ'ընէ Հայերու պաշտպանութեան Համար եւ միշտ ալ կը յաջողի:

1918ի սկիզբին Մակուի տարին կողմէ իբր պատգամաւոր ուղարկուեցաւ Երեւան եւ ներկայացաւ Ազգային Ժողովին, ազգամիջեան կոչերը տարածելու Համար: Բայց Մակու չվերադարձաւ, թուրքերը կոտորեցին Մակուի Հայութիւնը. որուն մէջ Արսէն քահանայի ընտանիքէն Մահն աչք առած քսան 1918ի ամառը եկած Մակուի կոտորածէն ազատած 150 կուգի Հայերը տարաւ Հայաստան եւ բնակեցուց Վեդիի սարի շրջանները:

1921ի փետրուարեան տամբութենէն յետոյ, Հայ ուրներու Հետ Արսէն քահանայ նաեւ ան անցաւ Պարսկաստան, ապա Թաւրիզ, ծայրագեղ քաղաքին մէջ, մինչեւ որ 1925 թուականի Գարնան Ատրպատականի Առաջնորդի Հրահանգով մեկնեցաւ Ուրմիա: Մօտ չորս տարի անհիրութեամբ գործեց ու մեր Հայերու, այլեւ Ասորիներուն: Պարսիկներն եւ օտարները մեծ Համակրանք կը տածէին Թաղումը կատարուած է շուքով ներկայ եղած են պաշտօնեաներ եւ օտարներ, ինչպէս նաեւ եւ ասորի խուռներամ բազմութիւն: Մահէն յետոյ Հասկացաւ թէ սանթիմ մը ունի չէ: Հասարակութիւնը Հոգացաւ Թաղման ծախքը եւ անոր ընտանիքին Համար Հանգանակեց 100 տոլար:

Հանգուցեալը Հ. Ց. Դաշնակցութեան Հաւատարիմ եւ անուէր անդամներէն մէկն էր:

Թաւրիզ ՄԱՒ

ԿԵԱՆՔԸ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

ԳՐԳՈՒԶ ԽԱՂԵՐ

Փետր. 13ի միթինկին ընտրուած Գործադուրկներու Նուիրեան Կոմիտէն, իր ընթեան յաջորդ օրն իսկ նարկեց գործի, եւ ինչպէս յիշեն ընթերցողները, պատրակութեան մը միջոցաւ դորդեց հոգեւոր հովիւին եւ նոր միջոցաւ՝ վարչական մնին, միթինկին մէջ քուած բանաձեւերը:

Հոգեւոր հովիւը եւ աղան փոխանակ ընդառաջ երթալ այս ձեռնարկին, իրենց կարսկան գործի, խափանելու մար շարժումը: 1.— Անմիջապէս ընտրեցին ապօրէն աղքատամ մարմին մը ու անոր պատրուեան տակ դրին ֆինանսական կառավարութենէն ուած դումարէն 10,000 ֆրանկ:

2.— Այս մարմինը լարութեան մէջ դրին փետր. գիշերը Հօճմիներու եւ կարնորափետուրներու 30 հոգի ժողովէն ընտրուած «Գործադուրկներու Օգնութեան Կոմիտէ»ին հետ, որ դրամական բանակում կատարէ անգործներուն մէջ:

3.— Մեծ միթինկէն երուած մարմինն առջեւ փակեց առաջնորդարանի դռները, լայն բացին ապօրէն եւ նակոչ մարմիններու նախագահութեամբ հոգեւոր հովիւին:

Հոգեւոր ըլլալու պէտք հասկնալու այս խաղին համար որ դրամը իրենց քսակն ու իրենց ձեռքով պիտի բաշխուի, ուրեմն պիտի կրնան ցանել եւ միամիտները խաղբայր եղբօր դէմ հանել կազմալուծել:

Իսկ ի՞նչ կ'ընէ Գործադուրկներու Օգնութեան բուն Կոմիտէն ու մունչ կ'աշխատի իր նպատակակէտը, դէպի մակերեսութիւն:

Ջոկերը դրամ չտուին ծազուրկներու Օգնութեան միտքին, այն մտածումով ան առանց դրամի ոչինչ ընել: Սակայն Կոմիտէն

ԴԱՏԱ

ՎԱՍԻԼԻՍԱ ՊՈՓՈՎԱ

Երբ Ալեքսանդրը ծնվեց, նրա մայրը՝ Ելենա Ալեքսանդրովնան, ընդամենը տասնվեց տարեկան աղջիկ էր։ Ինչպես ասում են, ինքն էլ դեռ երեխա էր։ Ամուսինն էլ՝ Ալեքսանդրը, ընդամենը քսան տարեկան էր։ Ամուսնացել էին ընդամենը մի տարի առաջ։ Ալեքսանդրը ուսանող էր, Ելենան՝ դեռ դպրոցական։ Ալեքսանդրի ծնողները, որոնք ապրում էին Ռյազանում, ընդունել էին իրենց որդու ընտրությունը, բայց ոչ մի կերպ չէին կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ իրենց հարսը դեռ դպրոցական է։ Ելենան ամեն առավոտ գնում էր դպրոց, իսկ Ալեքսանդրը՝ համալսարան։ Ելենան ավարտեց դպրոցը, Ալեքսանդրը՝ համալսարանը։ Ելենան ընդունվեց բժշկական ինստիտուտ, Ալեքսանդրը՝ ասպիրանտուրա։ Ելենան ավարտեց ինստիտուտը, Ալեքսանդրը՝ ասպիրանտուրան։ Ելենան ստացավ մասնագիտություն, Ալեքսանդրը՝ գիտական աստիճան։ Ելենան ստացավ աշխատանք, Ալեքսանդրը՝ պրոֆեսորական պաշտոն։ Ելենան ստացավ բնակարան, Ալեքսանդրը՝ մեքենա։ Ելենան ստացավ երեխա, Ալեքսանդրը՝ դուստր։

Ելենան ամուսնացել էր ոչ թե Ալեքսանդրի, այլ նրա ընտանիքի հետ

ներ տեղի կ'ունենան, մասնակցութեամբ Գ. Միջազգայինի պատուիրակութեան, որուն մէջ են Ֆրանսացի Տօրիօ, Անգլիացի Թօմ Մէն եւն.։

Նիմարակուա եւ Միացեալ Նահանգները

Նիքարակուայի մէջ յեղափոխական շարժումը կը շարունակուի։ Յեղափոխականները առջի օր կրակ բացին ամերիկացի ծովային զինուորներուն վրայ, որոնք երկաթուղիով քաղաքէ մը ուրիշ քաղաք կ'երթային։ Ամերիկացիները չվոխադարձեցին։ Կ'լսուի թէ Անգլիացիները եւս պիտի ճանչնան Տիազի յետադիմական կառավարութիւնը։

Միացեալ Նահանգներու եւ Նիքարակուայի կառավարութեան միջեւ կնքուելիք դաշնագրին համաձայն 1.— Ամերիկեան ելմտական խորհրդական մը եւ հարկային գրասենեակի պետ մը պիտի հսկեն Նիքարակուայի ելմտական եւ տնտեսական վերականգնումին։ 2.— Ամերիկեան նաւային եւ զինուորական ուժերը 10 տարի Նիքարակուայի մէջ խաղաղութիւնը պիտի պահպանեն։ 3.— Ամերիկա 20 միլիոն տոլարի փոխառութիւն պիտի ընէ Նիքարակուայի։ Խաղաղականէն Ատլանտեան երկաթուղի մը շինելու եւ ներկայ յեղափոխութեան առթիւ ըրած պարտքերը վճարելու համար։ Ասոնց փոխարէն նախագահ Տիազ շատ մը մենաշնորհներ կուտայ Միացեալ Նահանգներուն։

Անգլիա չի պատասխաներ Ռուսիոյ

Լիթվինոֆի պատասխանին վրայ Անգլիոյ պահպանողականները երեսփոխանները խստիւ կը պահանջեն կառավարութենէն անմիջապէս դիւանագիտական յարաբերութիւնները խզել պոլշեւիկներուն հետ։ Սակայն կառավարութիւնը աւելի շրջահայեաց կը վերաբերի եւ Սըր Զէմպըրլէյն կը յայտարարէ թէ Անգլիա պատասխան չպիտի տայ պոլշեւիկեան ծանուցագրին։

Մոսկուայէն առնուած վերջին լուրերու նայելով, Անգլիոյ դեսպանատան գործակատարը շուտով Լոնտոն պիտի դառնայ, տեղեկագիր ներկայացնելու համար իր կառավարութեան։ Մոսկուայի դեսպանը արդէն ամիսներէ ի վեր Լոնտոն կը գտնուի, ու երբ գործակատարն ալ դառնայ, այլեւս Անգլիա ներկայացուցիչ չպիտի ունենայ խորհրդային մայրաքաղաքին մէջ։

Կարգ մը շրջանակներու մէջ կ'լսուի թէ այս ձեւով Անգլիա լռելեայն պիտի խզէ իր դիւանագիտական յարաբերութիւնները պոլշեւիկներուն հետ։

*** Իրկայէն 1 Մարտ Թուականով կը հեռագրեն թէ բուռն տարակարծութիւններ կան Լիթվինոֆի եւ Զիչէրինի միջեւ։ Լիթվինոֆ, որուն ուժ կուտան Սթալին եւ հայազգի Միկոյեան, կողմնակից է Անգլիոյ հետ հաշտարար քաղաքականութեան եւ կը պաշտպանէ այն տեսակէտը թէ Չինաստանի մէջ ամէնէն փայլուն յաղթանակն իսկ ի զուր է, եթէ ատոր պատճառով Խորհրդային Միութիւնը կորուստներ պիտի կրէ Եւրոպայի մէջ։ Ընդհակառակն Զիչէրին կողմնակից է Անգլիան բոլորովին կղզիացնելու քաղաքականութեան, նոյն իսկ եթէ հարկ ըլլայ լուրջ զիջումներ ընել Ֆրանսայի, Իտալիոյ եւ Գերմանիոյ։

Տարտանէլի մէջ ընկղմած ընդծովեան

Թուրք կառավարութիւնը որոշած է ջուրին տակէն հանել Ֆրանս. «Մարիօթ» ընդծովեան, որ մեծ պատերազմին ատեն Տարտանէլի մէջ ընկղմած էր։ Մասնաւոր միջոցներ ձեռք առնուած են ընդծովեային մէջ գտնուած Ֆրանսացի նաւաղներու աճիւնները անխախտ հանելու համար։

Ամերիկա եւ Քրեւնասական պարտքը

Ինչպէս գրեցինք, վարչապետ Փուանքարէ առաջարկած էր Ֆրանսայի պարտքին հաշուոյն 1926—1927ի համար Միացեալ Նահանգներուն վճարել 30 միլիոն տոլար, որուն 20 միլիոնը արդէն վճարուած է, մնացեալ 10 միլիոնն ալ վճարելի է յառաջիկայ Յունիս 15ին։ Հակառակ Խորհրդարանին մէջ այս առթիւ եղած քննադատութեանց, Փուանքարէ յաջողած էր մեծամասնութեամբ ընդունիլ տալ այս կարգադրութիւնը։

Ուաշինկթընէն հեռագիր մը կ'լսէ թէ Միացեալ Նահանգներու ելմտական նախարարը Պ. Մէլլըն ընդունած է այս կարգադրութիւնը եւ զայն պաշտօնապէս հաղորդած Ֆրանս. կառավարութեան։

Կախաղանը կը գործէ

Փետր. 12ին Էնկիւրիի մէջ կախաղան հանուեցաւ Ալթունտիշ Սիւլէյման, որ գիւղեր կոխած եւ զանազան ոճիրներ գործած էր։ Իրեն հետ ամբաստանուած էր նաեւ Պոլսէն Մէհմէտ Նազիֆ, որ «պետական վարիչները անարգելու եւ տարբերու միջեւ որոմ ցանելու մտքով նամակներ գրած է»։ Այս մարդը Էնկիւրիի անկախութեան դատարանը զրկուած էր, բայց «հիւանդանալով», մեռած է, հետեւաբար դատը չեղեալ համարուեցաւ։

Սրախիւ խաղկեղէ կը տառապի

«Շիքակօ Թրիպիւնի թղթակիցը կը հեռագրէ 28 փետր. Թուականով.—

Խորհրդային միութեան դիկտատոր Սթալինի հիւանդութիւնը դարմանելու համար Մոսկուա կանչուած գերման բժիշկներու տեղեկագրին համաձայն, յիշեալը քաղցկեղէ կը տառապի եւ թէ իր մահը շաբաթներու խնդիր է միայն։ Մասնագէտները մերժած են գործողութիւն կատարել, ըսելով որ դիկտատորին վիճակը բոլորովին անյոյս է։

Ամբողջ Մոսկուայի մէջ խօսակցութեան առարկայ դարձած է Սթալինի հիւանդութիւնը։ Կոմկուսի մէջ խաղեր կը դառնան իր յաջորդը որոշելու համար։ Մոսկուայի թերթերը օրը օրին կը տեղեկագրեն Սթալինի առողջական վիճակին մասին, սակայն հիւանդութեան անունը չեն տար։

Անգլիա եւ Զինաբախութիւնը

Անգլիա հաստատական պատասխան տուաւ Թուլիճի զինաթափութեան առաջարկին, կարգ մը վերապահումներով։

Անգլիա կը պահանջէ որ նկատի առնուի իր բացառիկ կացութիւնը, գաղթապետութեանց հեռաւորութիւնը եւ անոնց հետ հաղորդակցելու անհրաժեշտութիւնը, հետեւաբար եւ կ'ուզէ պահել յածանաւերու մեծ քանակ մը այս նպատակին համար։

Մաք-Տոնալտի հարցումին վրայ, Սըր Զէմպըրլէյն երեսփոխանները տեղեկացուց թէ ժողովին մէջ կարդաց պատասխան-ծանուցագրին պատճէնը։

Հինգշաբթի ազատականները վիճաբանութեան համար օրակարգի դնել պիտի առաջարկեն այս խնդիրը։

Մակեդոնիոյ իմպիրիալիստները կը շարժին

Պելկրատի «Փոլիթիքա» թերթը կը գրէ Մակեդոնիոյ յեղափոխական կազմակերպութեան պետ զօրավար Փրոթոկէրօֆ վերջերս Ալպանիայէն մեկնելով ցամաք ելած է Պարի եւ անկէ անցած է Հռոմ։ Ալպանիա գտնուածատեն Փրոթոկէրօֆ յաջողած է Քօսովայի կոմիտէին հետ կազմել տասը զինեալ գունդերու համաձայնութիւն, որոնք մեծաքանակ զրամ ունէին իրենց տրամադրութեան տակ։ Ասոնք յարմար առիթին յարձակում պիտի գործեն հարաւային Սերպիոյ վրայ, ուր գտնուող Ալպանացիներու հետ միացած՝ ապստամբութիւն մը պիտի յարուցանեն։

Ուսանողական ցոյց

Երէկ Մեծ Պահքի առաջին երեքշաբթին (Մարտի-կոա) տօնուեցաւ Փարիզի մէջ, սովորական հանդիսաւորութեամբ։ Համալսարանական ուսանողները մեծ թափոր մը կազմեցին՝ Սէն-Միշէլէն դէպի մեծ պուլվարները եւ Մօնմարթրը, բողոքելու համար զպրոցական տուրքերու յաւելման դէմ։

Պոլշեւիկեան դաւեր Հունգարիոյ մէջ

Պուտափէշթէն հեռագիր մը կ'լսէ թէ ոստիկանութիւնը երեւան հանեց համայնավարական դաւադրութիւն մը Պուտափէշթի եւ Հունգարիոյ գաւառական մեծ քաղաքներուն մէջ։ Շարժման պետն է Զոլթա Ցանթօ, Հունգարիոյ սովետական դիկտատուրայի պատերազմական գործավարին եղբայրը եւ 1919ի մաճառ Զեկայի պետ Ցամուէլիի մտերիմ աշխատակիցը։

Զոլթա Ցանթօ ձերբակալուեցաւ սահմանին վրայ, այն պահուն երբ կը փախչէր։ Ձերբակալուեցան նաեւ 70 պոլշեւիկ գործակալներ, որոնք խոստովանութիւններ ըրին։ Դաւադիրները ծրագրած էին խռովութիւններ հանել Մարտի վերջը մեծ քաղաքներուն մէջ։ Մոսկուա առատ զրամ կը ղրկէր անոնց։

Շրէզեւման կը գործէ

Գերմանիոյ արտաքին նախարարը, որ քանի մը շաբաթէ ի վեր կը ձմեռէ Սան-Ռէմոյի մէջ, դիւանագիտական տենդոտ գործունէութեան մէջ է։ Իր տրամադրութեան տակ ունի բազմաթիւ քարտուղարներ, սղագիրներ եւ հեռաձայնի գործիքներ։ Գիշերի մը անգամ տեսակցեցաւ Անգլիոյ նախկ. դեսպան լորտ Քանի մը անգամ տեսակցեցաւ Անգլիոյ նախկ. դեսպան լորտ Տ'Ապէրնօնի հետ. երէկ առաւօտ ալ տեսաւ Պարոն Ֆօն Նոյրաթը։ Փարիզի դեսպան Ֆօն Հէօշի եւ արտաքին փոխ-նախարար Ֆօն Շուպէրթի հետ իր տեսակցութեանց մեծ կարեւորութիւն կը տրուի։ Ֆօն Հէօշ ներկայացաւ նաեւ արտաքին նախարար Պ. Պռիանի։ Կը հաստատուի թէ Ֆօն Շուպէրթ եւ Շթրէզէմանի ժընեւի մէջ պիտի պահանջեն Հռենոսեան շրջաններու պարպումը։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԷՆ-ՇԱՄՕՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

4 Մարտ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին Վարիէթէ սինեմային մէջ

կը ներկայացուի "ՕԹԷԼԼՕ,,

Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՕՒՄԲԸ

կիր. Մարտ 6ի գիշեր, 64, R. Rocher, Métro: St-Lazare Ալպէր Ա. սեծ Թատրոնին մէջ կուտայ իր Դ. եւ վերջին ներկայացումը

ԻԲԻՒԻՆ ՍՈՒՄԲԱՑՈՎԻ յայտնի՝

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ Տիկ. Վիրժինէ Մամուլեանի. Տիկ. Ալէքսանեանի, Եւրոպահայ թատերախումբի եւ տեղւոյս դերասանները։ Օր. Ասիա Կոստանեանը Ա. արարին կը պարէ հարէմական պար, պարսկական յայտնի Չարկեահը։ Տոմսերու գինը 3—20ֆր.։ Կը ծախուի բոլոր հայկական ճաշարանները։ Կը սկսի 8.15ին, կը վերջանայ ժամը 12ին։

ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

4 Մարտ Ուր. գիշեր ժամը 8.30ին, 57 բիս փէրիէ, սալօն Միշէլի մէջ կովկ. պետ. Թատր. յայտնի դերասանուհի Տիկ. ԴՈՒՐԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆ

կը ներկայացնէ ԱՆՅԱՅՏ ԿԻՆԸ (*տասմ 4 արար*)

կը մասնակցին դերասան Ց. Ղազարեան եւ տեղական լաւագոյն ուժեր։ Թաքլինայի դերը կը կատարէ Տիկ. Դուրեան-Արմէնեան

Մուտք՝ 15, 10 եւ 5 ֆրանք։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԵՒ ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՑԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 Ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։

Դիմել *Յառաջի* խմբագրատունը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Նոագործ» խումբին ընկ. ժողովը, յառաջիկայ Ուրբաթ, 4 Մարտ, երեկոյեան ժամը հինգ 8ին, 80 Rue Charles Chefsons, Bois Colombes.

Հ. Յ. Դ. Մարսէյլի Ռոստոմ խումբի անդամական ժողովը՝ կիրակի Մարտ 6, ցորեկէն վերջ ժամը 2ին։ Կը խնդրուի բոլոր ընկերներէն որ առանց բացառութեան ներկայ գտնուի անդամատոմարներով միասին։

ՅԱՐԴՈՂԻ առաջնակարգ գլխական երեկոն, վաղը 3 Մարտ, Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա նուիրուած է Պ. Վ. Թէքէեանի գրականութեան։ Հեղինակը ներկայ պիտի գտնուի երեկոյին։ Կը խօսի Հրանտ Բալուեան, կ'արտասանեն Մարուքեան, Փոչարեան, Պարեան, Սինէմեան, Դաշնակ Օր. Ն. Գալփաքեանէ։

Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

Հ. Մ. Ը. Մ.ի Պելվիլի մասնաճիւղի ժողովը Ուրբաթ 4 Մարտ ժամը 8.30ին 40 Rue de Belleville։

Լիոնի Տարօն-Տուրու-Բերանի հայրենակցական միութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները՝ մասնակցութեամբ Տեսչի մասնաճիւղին, Կիրակի Մարտ 6ին կէսօրէն յետոյ ժամը 1.30ին Հ.Յ.Դ. նախկին գրադարանը։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՆԱՆԱԴԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

126, Rue du Faubourg St. Denis

Metro: Gare de l'Est Téléphone: N-rd 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30— կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

տէր եւ տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՊԵԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Յովնկրաքի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՎԱՂԱՆՍԻ ՄԷՋ

Հ. Յ. Դաշնակցութեան Վաղանսի նոր ակումբ ընթերցարանի հասցէն է. 26 Bld. Vauban, *բաց է շաբթուան երկուշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը երեկոյեան ժամը 8էն մինչեւ 10ը, իսկ կիրակի օր առաւօտեան ժամը 10էն մինչեւ 12։ Հայ հասարակութիւնը կրնայ օգտուիլ սոյն պատեհութենէն, ակումբին մէջ կը գտնուին ամէն տեսակ թերթեր եւ գրքեր ընթերցման համար։*

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ

Թաքիր Թահրա պէյ 5, *Բիւգիքէն փրցուած էջեր* 12.50, *Նահայ տարեգիրք* 25, *Ռաքիպ* 15, *Նամուս* 10, *Ջար ոգի* 10, *Պատմական համար* 10, *Լուսինը* 8, *Երազներ* 6, *ինչպէս նաեւ աւելի քան հարիւր տեսակ այլեւայլ գրքեր։*

ԳՐԱՅՈՒԹԱԿԸ ՋՐԻ

Առաջին տպագրութիւնը ամբողջովին սպառած ըլլալով, հրապարակ հանեցինք երկրորդ տպագրութիւնը։

կարդացէ՛ք եւ կարդացնել տուէ՛ք

ԿՈՅՍԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

(Թարգ. վ. Սեւունի) Գինն է 5ֆր.

Հրատարակութիւն՝ «Լուսաբեր մատենաշարի» որ թարգմանական գործերու հետ միասին պիտի հրատարակէ նաեւ յաջորդաբար հայ երեսփոխանական գրողներուն անտիպները։ Գրասենեակներու եւ թերթերու գործակիցներուն մասնաւոր զեղչ։ Ձրիառ եւ գաղութներուն համար, փոխադրավճարը չհաշուած։

Դիմել, — Librairie Hagachène, 9 Agopian Hantz Tchakmakdjilar, Constantinople.

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԴՈՒՐՍ

7000 ՖՐԱՆԿՈՎ

Կը ծախուի պոլսական ամբողջ գոյքը, թուրքում պահուրտ ճերմակ պահուրտ գործիքներ շինելու արհեստն ալ սորվեցնելն եւ եւլած ապրանքը տեղաւորելու դիւրութիւններ ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք զուտ շահ։ Դիմել «Յառաջ»ի վարչութեան։

ՏՕՔԹ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

48, rue Montmartre

(Բ. յարկ. աջ կողմը առաջին դուռը)

Ֆրանսացի կարող մասնագէտներու ընկերակցութեամբ կը դարմանէ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՎԷՆԵՐԱԿԱՆ եւ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ՓԻՒՃԻ, ԱԿԱՆՋԻ եւ ԿՈԿՈՐԴԻ ՅԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Téléph. CENTRAL 73-38

Métro: SENTIER կամ HALLES

Ընդունելութեան ժամեր՝ ամէն օր 8ԷՕ՝—10եւ. 1,30 — 8

DOCTEUR PROY

Ex - Interne des Hopitaux

Médaille d'argent

Տօքթ. Յ. ԽՈՒՄՊԷՍԷՐԵԱՆԻ

Աշխատակցութեամբ

Կը խնամէ ներքին, կանանց, մոլթային, վէներական հիւանդութիւնները։ Ընթակալայնութիւններու (varices) հիմնական դարմանում առանց գործողութեան։

Ամէն օր ժամը 10-12, եւ 2-8, Կիրակի եւ տօն օրեր 9—12։

142 R. DU FB. St. DENIS

Կառ. ը՛Էսթի մօտ,

Հեռաձայն՝ Nord 31—49։

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

123 Bld. Sébastopol, 123

(Métro: St. Denis և Réaumur)

ՄԱՆԱՆԱԴԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

Ջերմամիզութեան, Ֆրանկատի, արիւնի եւ մոլթային հիւանդութեանց։

Բժշկական տարրալուծումներ

Ամէն օր ժամը 9—12 և 2—8, Կիրակի՝ 9—12։

Ժոլով բդեական գիներ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ

ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆ

որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մատենադարան մը ունի մատենադարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Hagachène, 9 Agopian Hantz Tchakmakdjilar, Constantinople.

ՍԱԿԱՐԱՆ

1 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		
Սթերլին,	L. St.	121
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի) 100 Mark		605
Թրքական ոսկի	L. Trq.	11
Թրք. ոսկի	» or	9
Մէճիտիէ	Médjidié	1
Լէվա 100 հատ	Léva	3
Տրախմի	» Drachme	1
Լիր	» » Lire	7
Պելճ. Ֆրանք	» Frc. Belge	5
Ջուից.	» Frc. Suisse	1
Լէյ 100 հատ	Ley	9
Ջերվոնեց	(10 Roubles or)	

ԱՐԺԵՔՈՒՆԴ	
Եգ. Ֆր. Ֆոնսիէ I Cr. Fonc. Eg.	30
» II »	19
» III »	17
Ռումելի երկաթ. Lots turcs	10

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITEUR

208bis, Rue Lafayette Paris

Le Gérant: H. TEURNIER

ՀԱՐԱՉ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ 3 ՄԱՐՏ 1927

3 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 275

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՈՒ՞Ր Է ՎՏԱՆԳԸ

Ամերիկայի հայ պոլշեւիկներուն շաբաթաթերթը յօդուած մը հրատարակեց վերջերս (փետր. 19), ապացուցանելու համար թէ «համաթուրանական շարժումը ցնորք մըն է»։

Առիթը՝ այն ահազանգն է զոր երկար առենէ ի վեր կը հնչեցնեն դաշնակցական թերթերը, և որուն սուր այժմէութիւն մը տուաւ ընկեր Զարեւանդի փաստաւիւղ հատորը, «Միացեալ Անկախ Թուրանիա կամ Ի՞նչ կը ծրագրեն Թուրքերը»։ (Այս հրատարակութեան եւ անոր նախընթաց գրքոյկին բովանդակութիւնը լայնօրէն ամփոփուեցաւ «Ցառաջ»ի փետր. 13, 16 եւ 19 թիւերուն մէջ)։

Մէկդի դնելով պոլշեւիկ խմբագրին կարգ մը պատճառաբանութիւնները, որոնց մասին գաղափար պիտի տանք յառաջիկային, կ'առնենք միայն եզրակացութիւնը.

— «Լուսավաճառ-դաշնակ փտած ուղեղները կը մեղնին եւ իրենց հետ կը տանին նաեւ այս մտացածին վտանգը։ Այս թրքախօս մահմետականներու ձակատագիրը անքակտելիօրէն կապուած է ռուսական ընդհանուր քաղաքականութեան հետ։

«... Հայաստանը իր քաղաքական միջոցները ամենալուր կերպով ապահոված է եւ Արեւելքի ժողովուրդներուն հետ միասնաբար կը ջախջախէ ո՛ր եւ է այդպիսի յետադիմական համաթուրանական շարժում»։

Աւելի սրտառուչ միամտութեամբ եւ վճռականութեամբ չպիտի արտայայտուէր լուսնկայէն ինկած երանելի մը։

Եւ այս՝ ճիշտ այն պահուն երբ թուրքական պատրաստուած խորհրդային իմաստութիւնը կռնակի վրայ բաց թողեր է փորձութեան բոլոր դուռները, անոնց բանալիներն անգամ վրան ձգելով։

Ահա թէ ո՛ւր է բուն վտանգը, թուրանական գրոհէն առաջ։

Երնա՛յ ըլլալ որ թուրանական առաջնորդները ոչ միջոց, ոչ ալ ժամանակ ունենան իրագործելու իրենց «մէղալօ իտէա»ն, որուն փարած են տարիներէ ի վեր եւ զոր կը հետապնդեն զարմանալի հետեւողականութեամբ։ Կրնա՛յ դեռ երկար հնչել «է՛յ Թուրանը»ը, առանց դղրդալին արշաւներու կամ նոր գեղին շահելու ։

Բայց, խաբուսիկ երեւոյթներու առջեւ կանգ առնել եւ վճիռ արձակել, վտանգը ուրանալ եւ օրօր կարդալ — կը նշանակէ գլխիվայր գլորիլ փոսին մէջ։

Եւ այստեղ է, ընենք նորէն, բուն վտանգը։ Եւ այստեղ ալ՝ Հայաստանի այսօրուան վարիչներուն եւ անոնց մանկլաւիկներուն բթամտութեան պատկերազարդ հաւաքածոն։

Մարդիկը այնքան կուրացած են կուսակցական կիրքով, որ լսել անգամ չեն ուզեր թէ իրենց «ապահով» երկիրը այսօր ձգուած է մուրճին եւ սալին մէջտեղը, շնորհիւ նոյն լինքն խորհրդային իշխանութեան գիտակից կամ անգիտակից խաղերուն։ Յոգնութիւն չեն կրեր գոնէ մէկ ժամ քննութեան ենթարկելու խորհրդային Հայաստանի քարտէսը, ոչ թէ յարձակողական, այլ պարզ ինքնապաշտպանութեան տեսակէտով։

Եթէ այդպիսի փորձ մը կատարէին, տասն անգամ պիտի մտածէին, «միամտաբար կը ջախջախենք»ը արտասանելէ առաջ։ Որովհետեւ, քարտէսը ցոյց կուտայ որ, արեւմուտքէն՝ Թուրքիան սիրաբար կ'իշխէ Հայաստան տանող բոլոր ճամբաներուն։ Կ'իշխէ նաեւ Հայաստանէն Բագու առաջնորդող արահետներուն, շնորհիւ Նախիջեւանի «հանրապետութեան», որ բանալին է Հայաստանի, թէ արեւելքէն եւ թէ արեւմուտքէն. շնորհիւ Ղարաբաղ - Զանգեզուրի խարդախ սահմանագծման, որ դարձեալ բաց կը թողու դուռները, ի նպաստ Ադրբէջանի։

Վաղը կը հրատարակենք Հայաստանէն նոր հասած հայրենակցի մը չոր փաստերը, եւ թող ամէն մարդ իր աչքով դատէ պատկերը ։

Դժբախտութիւնը այն է որ, շատ մը հայ պոլշեւիկներ զիտեն այդ իրողութիւնը. չեն ծածկեր Թուրք - Թաթար գործակալներու երթեւեկը Հայաստանի հողերուն վրայ, անոնց զաղտնի պատրաստութիւնները, Թուրք տարրին զօրացումն ու ամրացումը մեր հայրենիքին մէջ. բայց... չեն համարձակիր ձայն հանել։ Եւ աւելին.— փոխանակ ա՛յդ վտանգին վրայ կեդրոնացնելու իրենց ուժն ու ուշադրութիւնը, անամէջ փամփուշտներ կ'արձակեն անգոյ դաւադիրներու դէմ, կ'ուզեն հաւատալ Հայաստանի Թշուառ ժողովուրդը, Թէ «լորտ» Զէմպըրլէնը դրամ տուեր է «Դաշնակ»ներուն ու հնչակներուն, խորհրդային Հայաստանը տապալելու համար...։

Բուն դաւադիրն ու Թշնամին նե՛րսն է, իրենց կողքին, իրենց սրտին վրայ։ Ան կը զօրանայ ու կ'ամրանայ շնորհիւ իրենց մեծերուն նենգամտութեան եւ իրենց գետնաքարշ սրտկտութեան։ Ի՞նչ փոյթ։ Իրենց համար վտանգը՝ Թուրք-Թաթարական խաղաղ Թափանցումը չէ, ոչ ալ բուն իսկ Հայաստանի ժողովուրդին ցիրուցան եւ ուժասպառ վիճակը, այլ... Դաշնակութիւնը, որ ուշադրութիւն կը հրաւիրէ կացութեան վրայ։

Այսպիսի ծանծաղամտութիւն՝ ոչ իսկ յետամնաց Տաղստանի կամ Աճարիայի մէջ կը նշմարուի։

Էնկիւրէնն եւ Մուսավվաթը երախտապարտ ըլլալու են այս «մարքսիստ» սորուկներուն, որ այնքան յօժարութեամբ եւ հաւատարմօրէն կը ծառայեն իրենց դատին։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՈՒԺԱՍՊԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ինչպէս գրեցինք ատենին, Հայաստանի բնակչութիւնը առնուազն ինարիւր հազար հոգի պակսած է մէկ-երկու տարուան մէջ, համաձայն վերջին մարդահամարին։

«Հայրենիք» ալ իր կարգին շեշտելով այս իրողութիւնը, դիտել կուտայ.

— «Հետ է, թէ վերջին տարիներու ընթացքին, այսինքն՝ խորհրդային իշխանութեան օրով, արտագաղթը Հայաստանէն շատ աւելի մեծ է եղած քան ներգաղթն ու բնակչութեան աճումը միասին։

«Խորհրդային գործակալները արտասահմանի մէջ ամէն կերպով կը ծածկէին արտագաղթի փաստը եւ կը կերակրէին գաղութահայութիւնը Հայաստանի բնակչութեան աճման ու ներգաղթի թիւերով, ջանալով հաւատացնել՝ թէ շատ կարճ ժամանակի մէջ Հայաստանի բնակչութեան թիւը պիտի կրկնապատկուի։ Պոլշեւիկեան այդ օրօրէն չափազանց կ'ազդուէին մանաւորապէս ռամկավարները, որոնք թոյն կը թափէին ամէն անգամ, երբ դաշնակցական մամուլը ահազանգ կը հնչեցնէր Հայաստանէն մտահոգիչ չափերով տեղի ունեցող արտագաղթի առթիւ դէպի Հիւսիսային Կովկաս, Անդրկասպեան երկիր եւ Ռուսիոյ այլեւայլ կողմերը։

«Անհերքելի պաշտօնական թիւերը, դժբախտաբար, կուգան այժմ հաստատելու, թէ մեր հնչեցուցած ահազանգը միանգամայն հիմնաւոր է եղած։

«Հայաստանի աննկատելի ու աստիճանական պարպում— այս էր, երեւի, խորհրդային այն մեծ «շինարարութիւնը», որու մասին այնքան թմբուկ զարկին թէ՛ պոլշեւիկները եւ թէ ռամկավարները։

«Սակայն, ինչպէս յայտնի է, խորհրդային կառավարութիւնը իր հայազգի քաղաքականութեամբ ոչ միայն կը քաջալերէ հայկական արտագաղթը Հայաստանէն, այլ եւ Թուրք գաղթականներով կը լեցնէ մեր մայր հայրենիքը, մինչ Հայաստանի դռները պինդ կը գոցէ ներգաղթել ուզող հայ գաղթականներուն առջեւ։

«Խորհրդային իշխանաւորները ցարդ ինքզինքին կ'արդարացնէին ըսելով, թէ Հայաստանի մէջ տեղ չկայ ներգաղթողներու համար։ Բայց մի՞թէ դէթ արտագաղթողներու ձգած ազատ տեղն ալ կարելի չէր յատկացնել ներգաղթողներուն։ Մի՞թէ չէր կարելի Թուրք գաղթականներու փոխարէն (որոնք կրնան Թուրքիա ալ, Ասրպէյճան ալ իրենց համար շատ տեղ գտնել) ընդունիլ հայ գաղթականներ, որոնք Հայաստանէն գաղ ուրիշ տեղ չունին իրենց զլուխը վար դնելու համար։»

ԷՏԻՐՆԷԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

«Էտիրնէ Փոսթասը» թերթը կը գրէ թէ Էտիրնէ քաղաքին և 30 գիւղերուն բնակիչներու թիւն է 98,360, որոնց 81,369ը իսլամ, 16,347ը հրեայ, 109ը յոյն, 308ը հայ, 224ը պուլկար, 3ը գերման։ Ուզունքէօփրիի բնակիչներուն թիւն է 31 հազար 798, Քէշանինը՝ 37 հազար 332, Քավաքլըինը՝ 12 հազար 014, որով ամբողջ Էտիրնէի նահանգին բնակիչները 179 հազար 504 հոգի են։

ՕՐԸ ՕՐԻՆ

Թուրքերը կ'ամրացնեն Անատոլուի եզերքները

Պոլիսէն «Պրիթիշ Եունայթըտ Փրէս»ի թղթակիցը կը հեռագրէ թէ Էնկիւրիի կառավարութիւնը հետզհետէ կը մտատանջուի Իտալիոյ բռնած դիրքէն եւ կը կասկածի որ Անգլիոյ մասնակցութեամբ պատերազմ մը կը պատրաստէ Անատոլուն գրաւելու համար։ Հետեւաբար Թուրք կառավարութիւնը ամրութիւններ կը շինէ Անատոլուի եզերքներուն վրայ։

ԶԱՐՄԱՆԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական «Նիւ Լիտըր» թերթը կը գրէ.— Իտալիոյ եւ Անգլիոյ միջեւ յարձակողական եւ պաշտպանողական ծովային համաձայնութիւն մը ստորագրուած է։ Իտալիա որոշած է նաւատորմ ղրկել Զին։ Ասոր փոխարէն Անգլիա ալ Իտալիոյ Հիւս. Ափրիկէի մէջ ունեցած բաղձանքներուն գոհացում պիտի տայ։ Անգլիա եւ Իտալիա պիտի գործակցին Պալքաններու մէջ։ Իտալիա եւ Անգլիա Հունգարիան պիտի պաշտպանեն Սերպիոյ եւ Ֆրանսայի դէմ։ Անգլիա ելմտական մեծ օժանդակութիւն կ'ընծայէ Հունգարիոյ, այնպէս որ Հունգարիա պարզապէս անգլ. գաղթավայրի մը վիճակը առած է։ Իտալիայէն Աւստրիոյ ճամբով Հունգարիա եւ Ռումանիա զէնք կը ղրկուի։

Ամերիկեան թերթ մըն ալ կը գրէ թէ Անգլիոյ, Իտալիոյ եւ Յունաստանի միջեւ ձեռք բերուած համաձայնութեանց շնորհիւ Յունաստան պիտի ապահով է.

1) Յունաստանի հողային ամբողջութիւնը եւ Սելանիկի վրայ ունեցած տիրապետութիւնը։ 2) Այժմեան Թուրքիոյ ասիական սուլթանութեան մը վերածուելու պարագային՝ Յունաստանի մինչեւ Պոլիս երկարումը։ 3) Կիպրոսի եւ Երկոտասան կղզիներուն Յունաստանի վերադարձումը։ Այդ պարագային Անգլիա եւ Իտալիա այս կղզիներուն մէջ պիտի կրնան նաւային կայաններ հաստատել։

«Ռէյնթմինիսթր Կազէթ» կը հաստատէ թէ Զրչիլի, Ամէնքի եւ Հոոմի մէջ ունեցած տեսակցութեանց ընթացքին որոշուած է Թուրքիան վերածել փոքրասիական Թագաւորութեան մը։

«Փոքրասիական խնդիրը վերջնականապէս կարգադրուած է Հոոմի մէջ։ Իտալիա, Անգլիայէն ուզեց 50 միլիոն սղերլինի փոխառութիւն մը, կարենալ գլուխ հանելու համար իր զինուորական պատրաստութիւնները եւ յաջողապէս ճակատելու քէմալական վտանգին դէմ։ Այս մասին կատարեալ համաձայնութիւն մը գոյացաւ Զրչիլի եւ Մուսոլինիի միջեւ եւ Իտալիա, Անգլիայէն պիտի ստանայ 50 միլիոն սղերլին եւ ոչ թէ 10 միլիոն։»

Մուսոլինի եւ պատերազմի գոյցեներ

Միլանոյէն կը հեռագրեն «Էնֆօրմասիօն»ի 1 Մարտ թուականով.—

Յառաջիկայ նախարարական խորհուրդին մէջ Մուսոլինի պիտի պարզէ արտաքին քաղաքականութիւնը։ Իր յայտարարութիւններուն կը սպասուի մասնաւոր հետաքրքրութեամբ, որովհետեւ վերջին օրերս մամուլին մէջ երեւցած բազմաթիւ յօդուածներ կը բողոքեն «այն չարամիտ զրոյցներուն դէմ, որոնք կը տարածուին արտասահմանի մէջ, Իտալիոյ կարծեցեալ յարձակողական մտադրութիւններուն մասին»։

Մեծ յուզում առաջ բերած է մասնաւորապէս Զուիցերիոյ զինուորական կեդր. վարժարանին տնօրէն գնդապետ Ուիլի ճառը՝ Իտալիոյ հաւանական յարձակման մասին։

Արեւել. Անկախութեան Դատարանը ջնջուած

Գրած էինք թէ Էնկիւրիի կառավարութիւնը որոշած է ջնջել Անկախութեան Դատարանները։ «Թայմզ»ի Էնկիւրիի թղթակիցը Փետրուար 28 Թուականով հետեւեալ մանրամասնութիւնները կը հեռագրէ այս մասին.—

Թուրքիոյ ներքին ապահովութիւնը այնքան գոհացուցիչ է, որ Թուրք կառավարութիւնը այլեւս պէտք չի տեսներ երկու Անկախութեան Դատարաններ պահելու։ Այս տեսակէտին համաձայն են նաեւ Դատարաններու անդամները իրենք ալ։ Արեւելեան Անկախութեան Դատարանը, որ Մարբերդ կը նստի, պիտի լուծուի վաղը։ Գալով Արեւմտեան Դատարանին, որ հիմա Էնկիւրի կը նստի եւ կարգ մը դատեր կը քննէ, պիտի ջնջուի Մարտի առաջին շաբթուն։ Կառավարութիւնը պիտի խնդրէ Ազգային Մեծ Ժողովէն վաւերացնել այս որոշումը, բայց ասիկա պարզ ձեւակերպութիւն մը պիտի ըլլայ։ Խիստ կարեւոր է կառավարութեան որոշումը՝ ջնջելու այս դատարանները, որոնք բացառիկ շրջանի մը համար ստեղծուած էին, եւ շատ լաւ պիտի ընդունուի թէ Թուրքիոյ եւ թէ արտասահմանի մէջ։

**** Յիշենք թէ Անկախութեան կրկնակ դատարանները կազմուեցան 1925 Մարտին, քրտական ապստամբութեան առեն, մահապատիժ եւ այլ պատիժներ տալու լայն իրաւասութիւններով։ Արեւելեան Անկախութեան Դատարանի վճիռները վերաքննելի չէին. սակայն Արեւմտեան Դատարանին վճիռները պէտք է վաւերացուէին Ազգային Մեծ Ժողովէն։*

Խօսքի եւ կրօնքի ազատութիւնը Թուրքիոյ մէջ

Բամպանի տօները մօտեցած ըլլալով, Թրքական իշխանութիւնները մասնաւոր կարգադրութիւններ ձեռք առած են

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

Ի՞ՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԻՈՐ Կ'ԱՒՈՒՆԵՆ

Փետրուար 27ին Պուա-Քոլոմպի մէջ զրոյց կը պատէր թէ Սիթրօէնի գործարանը 10.000 գործաւոր պիտի առնէ մինչեւ մէկ շաբաթ, իր բոլոր ճիւղերուն մէջ։ Տեղական թերթերն ալ հաստատեցին այս լուրը։

Քանի մը ընկերներով գացինք Լըվալուայի մասնաճիւղը։ Ցասը ոստիկան ու մէկ յինսպէտ կը հսկէին կարգապահութեան։ Ընդէնն 600 հոգիի մօտ բազմութիւն մը խռնուած էր։ Մինչեւ ժամը 9 բազմութիւնը հասաւ 1000 հոգիի, թէ տեղացի եւ թէ օտարական, բայց մեծամասնութիւնը Այժերիացի եւ սեւեկալցի։ փոխ-տնօրէնը երբ տեսաւ բազմութիւնը, չհոյլատրեց որ սկսին արձանագրութիւնները, անկարգութեան տեղի չտալու համար։

Խորհրդակցութենէ մը յետոյ, յինսպէտը հրամայեց որ Այժերիացիները եւ օտարները դուրս ելլեն կարգէն ու դիմացի կողմը անցնին, քանի որ անոնց գործ չկայ։ Իսկոյն կարգէն զատուեցան օաարականները եւ Այժերիացիները։ Այս վերջիններն յինսպետին մօտենալով բացատրութիւն ուզեցին այս խտրութեան համար։ Քանի մը հոգի իրենց վերքերը ցոյց տուին, իբրեւ պատերազմի յիշատակ։ Յինսպետը իրաւունք տուաւ Այժերիացիներուն, բայց յարեց. «Ես ի՞նչ կրնամ ընել, քանի որ տնօրէնը այնպէս կը հրամայէ»։ Խեղճերուն գայրոյթը դեռ չէր հանդարտած, երբ փոխ-տնօրէնը երեւցաւ։ Այս անգամ ալ անկէ բացատրութիւն պահանջեցին, նորէն ցուցնելով իրենց վէրքերը։ Տնօրէնը, ճարահատ, համոզեց որ քանի մը օր յետոյ գան։ Նոյն միջոցին եկան ոստիկանները եւ ցրուեցին բազմութիւնը։ 300 հոգի սուլելով, երգելով գացին բողոքելու։

Մինչեւ ժամը 11, հազիւ 100 բանուոր արձանագրեցին, բայց տեսնելով որ կարելի չպիտի ըլլայ պահել կարգ-կանոնը, մասնաւոր տեղ մը պատրաստեցին, որպէս զի մէկ կողմէն մտնեն եւ միւսէն դուրս ելլեն։ Կէսօրէն վերջ փոխ-տնօրէնը յայտարարեց թէ վաղը ամէն մարդ կրնայ գալ արձանագրուիլ։ Ներկայացաւ ծանօթ դուս մը ու իր արհեստին թուղթը ցոյց տուաւ։ Տնօրէնը հաւանեցաւ եւ աւելցուց թէ երկու օր յետոյ օտարական ալ պիտի առնենք, բայց միայն անոնք որ նորոգած են իրենց ինքնութեան թուղթերը։

Ուրեմն մեր հայրենակիցները կրնան իրենց ինքնութեան թուղթերը փոխելով, դիմում կատարել գործի համար։ Ց. Ա.

ՄԷԿ ՇԱԲԹՈՒԱՆ ՄԷՋ

Մէկ շաբթուան ընթացքին, Պոլսոյ մէջ 28 երախայ մեռած ծնած են, 18 երախայ ծնելէն անմիջապէս վերջ մեռած են, 51 մանուկներ ալ, դեռ ինչ տարիքը չաւարտած, զոհ գացած են թոքատապի։

«Ագշամ» այս վիճակագրութիւնը հրատարակելով կ'աւելցնէ.— «Մէկ շաբաթուան մէջ 90 մանրիկ դագաղներ... ի՜նչ դառն պատկեր...։ Այս ընթացքով, անիմաստ բան է բնակչութեան աճումի սպասել։»

ԷՆԿԻՒՐԻԻ ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԸ. — *Վերջին մարդահամարին համաձայն, Էնկիւրիի մէջ կը բնակին 2339 օտարականներ, որոնք են՝ 679 Հունգարացի, 140 Պուլկար, 105 Գերման, 83 Իտալացի, 79 Աւստրիացի, 76 Այպանացի, 63 Չեխոսլովաք, 49 Ռուս, 52 Ֆրանսացի, 17 Սերպ, 13 Հելլէն եւ 10 Անգլիացի։*

Խ. ԻԹԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

(«Պրոմեթէ»ի հրատարակութեան առիթիւ)

1917ին, երբ ռուսական յեղափոխութեան բռնկումով եւ ճակատներու լքումով իրենց բախտին ձեռքին կովկասի երեք գլխաւոր ժողովուրդները, օրուան հրատապ հարցը կը դառնար ուրոյն քաղաքական ուղղութիւն որոշելու անհրաժեշտութիւնը։

Գործին մէջ հաւասարապէս շահագրգռուած էին թէ՛ վրացիները, թէ՛ հայերը եւ թէ Ազըրպէյճանցիները։ Բայց իրաքանչիւրը իր շահերն ու հաշիւները ունէր, որոնք ո՛չ մէկ ընդհանուր յայտարարով էին ներդաշնակուելի իրարու հետ։

Վրացիները որ գերիշխող դեր մը կը խաղային այդ շրջանի անցուդարձերուն վրայ, մէկ հարուածով իրենց կապերը խզեցին Ռուսերէն եւ դարձան դէպի Գերմաններն ու Թուրքերը։

Նոյն հակումը ունէին — եւ աւելի շեշտուած ու բացայայտ, — Ազրպէյճանի Թաթարները, որոնց համար հասած էր գերագոյն ժամը՝ իրենց մեծ իդէալին, Թուրանական գազափարի յաղթանակին։

Մեկուսացած մէնշեւիկեան մը տակ կը մնային հայերը, առանձին, չուզելով զրկուիլ դասալիք Ռուսերու բարեկամութենէն եւ «օրհնութեան խաչի հովանիէն»։ Որովհետեւ, Անդրկովկաս արշաւելու պատրաստ Թուրքերը, իրենց ճամբուն վրայ միայն հայերը կը գտնէին արգելք։

Այս խոթի եւ իրերամերժ պայմաններուն տակ, անկեղծութեան ու անխարդախ դրացնութեան զգացումները չէին որ կատվարեցին վրացական եւ Թաթարական երկու տիրող կուսակցութիւնները՝ Մենշեւիկներն ու Մուսաւաթականները, անդրկովկասեան դէպքերու ձեւաւորման առեն։

Կարճ խօսքով, Վրացիներն ու Թաթարները մտածեցին միայն իրե՛նց մասին, եղան չափէն աւելի ընչաքաղց ու եսասէր, կոխոտելով իրենց երրորդ հարեւանին բոլոր իրաւունքներն ու արդար պահանջները։

Կովկասեան «Ակտ»ը կամ դաշնակցային պետութիւնը չծնած մեռաւ, որովհետեւ անոր հեղինակներն էին բուն գաւադիրներն ու ներքին թշնամին։ Իսկ արտաքին վտանգը, ոճրագործ Թուրքիան, բաժան-բաժան կովկասեան ժողովուրդներու հետ վարուեցաւ ուզած եղանակով։

Վրացիները, Հայերը, Թաթարները իրենց անկախութիւնը հռչակեցին՝ իրերու բնական ընթացքով։

Ստրածին պետութիւնները զիւրաբար չէզոքացնող ուժեր եղան, մինչեւ որ Ցեղափոխութեան հաշիւով կովկասը լքող Ռուսերը դարձեալ երեւան բագուի, Երեւանի եւ Թիֆլիզի դուռներուն առջեւ,— այս անգամ կարմիր նշանաբաններով եւ կարմիր զօրաբանակներով,— ու վերջ տուին երեք ժողովուրդներուն անկախութեան։

Դառն էին կորուստները Վրացիներուն, Հայերուն եւ Թաթարներուն համար։

Աւելի դառն եղան մենշեւիկներուն եւ մուսաւաթականներուն զղջումի եւ զգաստութեան յանկերգները, զորս լսեցինք ճառերու մէջ թէ սահմանափակ հաւատքոյթներու տակին, անոնց պարագլուխներէն կամ կուսակցական ղեկավարներէն։

Բայց կը թուի թէ հարազատ երկրի եւ ժողովուրդներու սեւ բախտը, եօթը տարուան տարագրութիւնն ու մօտաւոր ապագայի անստուգութիւնները դեռ չեն սթափեցուցած վրացական եւ թաթարական քաղաքական գործիչները, որպէսզի լրջութեամբ եւ սառն դատողութեամբ նայէին Անդրկովկասը յատկանշող բոլո՛ր ներքուստ վրայ, անոր համեմատ վերագնահատելու անցեալի խոշոր դէպքերը եւ մանաւանդ պատշաճօրէն պատրաստելու իրենց նոր հեռանկարներն ու ուղեգիծը։

Մարդ տարբեր եզրակացութեան չի կրնար յանգիլ, երբ կը տեղեկանայ «Պրոմեթէ»ի բովանդակութեան։

Ասիկա այն ամսագիրն է, որ վերջերս սկսած է հրատարակուիլ Փարիզի մէջ, իբր «օրկան կովկասի եւ Ուկրանիայի ժողովուրդներու ազգային պաշտպանութեան», ուր իրենց ձայնը լսելի կ'ընեն վրացի եւ թաթար զանազան կուսակցութիւններու յայտնի դէմքերը, Նոյ Ռամիշվիլի, Կվազաւա, Ռասուլ Զատէ, Խոսրով պէկ Սուլթանով եւն. եւն.։

Ի՞նչ է վրացի եւ թաթար տարագիրներու քաղաքական դաւանանքը, որոնց հետ են նաեւ Ցաղստանցիները։

— Ստեղծել կովկասեան ֆետերատիւ-անկախ պետութիւն։

Ուրկէ՞ կը սկսին եւ ո՞ւր կը վերջանան այդ համադաշնակցային պետութեան սահմանները։

Ի՞նչ է հայ ժողովուրդի դիրքն ու կացութիւնը քաղաքական այս նոր ծրագրին մէջ։

Կարելի չէ համադաշնակցային անկախ պետութեան մը մասին խօսիլ, առանց ցոյց տալու անոր հողային կառուցուածքը լրիւ եւ առանց գծելու անոր սահմանային պատկերը, արտաքին եւ ներքին բաժանումներով։

Ներկայ պարագային, «կովկասեան պարանոյի չէզոքացումը», զոր կը շեշտէ «Պրոմեթէ» ամսագիրը, թերի, կեղծ եւ աննպատակ բանաձեւ մըն է։ Ալ ըսպէս, անոր հեղինակները, մասնաւորաբար վրացիներն ու թաթարները, պարտաւոր էին ուրիշ լեզուով հրապարակ գալու, եւ մանաւանդ չանտեսելու՝ թէ մէկ կողմ կը մնայ հայ ժողովուրդը, որուն իրաւունքներուն մեծագոյն մասը խլած եւ իւրացուցած է պոլշեւիկեան իշխանութեան հարաւային դաշնակիցը՝ քէմալական Թուրքիան, եւ որով «կովկասեան անկախ պետութեան» գաղափարը չի՛ կրնար դրուիլ այնպէս, ինչպէս կը թելադրեն տակաւին Թուրանական երազներով օրօրուող Ռասուլ Զատէներու եւ Մուսաւաթական քէմալի պոլիտիկոններուն քաղաքական մերձաւոր եւ հեռաւոր ծրագիրները։

«Պրոմեթէ»ն, ուրեմն առայժմ սխալ ճամբու մէջ է եւ կը ծառայէ մանաւանդ նպատակներու, բայց ո՛չ կովկասեան ժողովուրդներու ընդհանուր եւ իրական շահերուն։

ՆՈՐՔԵՐ

ԱՆԿՈՂԻՆԻՆ ՄԷՋ ՍՊԱՆՆՈՒԱԾ. — Անկուլէմի մէջ գիշեր ատեն անծանօթ մը կը մտնէ մայեարի տունէն ներս։ Ննջասենեակին մէջ կը քնանար խեղճ մարդը, զոր սպաննեց փորին ուդդուած գընդակով մը։ Ու անմիջապէս փախաւ։

ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

(Երկրորդ եւ վերջին մաս)

1921ի վերջերը, նախկին ռուսական Հայաստանը դարձած է խորհրդային հանրապետութիւն մը, որ յաջորդ տարուան սկիզբը մտաւ Խորհրդային Հանրապետութիւններու Միութեան մէջ։ Ելեւէջներ չեն սթափեցուցած վրացական եւ թաթարական քաղաքական գործիչները, որպէսզի լրջութեամբ եւ սառն դատողութեամբ նայէին Անդրկովկասը յատկանշող բոլո՛ր ներքուստ վրայ, անոր համեմատ վերագնահատելու անցեալի խոշոր դէպքերը եւ մանաւանդ պատշաճօրէն պատրաստելու իրենց նոր հեռանկարներն ու ուղեգիծը։

Մարդ տարբեր եզրակացութեան չի կրնար յանգիլ, երբ կը տեղեկանայ «Պրոմեթէ»ի բովանդակութեան։

Ասիկա այն ամսագիրն է, որ վերջերս սկսած է հրատարակուիլ Փարիզի մէջ, իբր «օրկան կովկասի եւ Ուկրանիայի ժողովուրդներու ազգային պաշտպանութեան», ուր իրենց ձայնը լսելի կ'ընեն վրացի եւ թաթար զանազան կուսակցութիւններու յայտնի դէմքերը, Նոյ Ռամիշվիլի, Կվազաւա, Ռասուլ Զատէ, Խոսրով պէկ Սուլթանով եւն. եւն.։

Ի՞նչ է վրացի եւ թաթար տարագիրներու քաղաքական դաւանանքը, որոնց հետ են նաեւ Ցաղստանցիները։

— Ստեղծել կովկասեան ֆետերատիւ-անկախ պետութիւն։

Ուրկէ՞ կը սկսին եւ ո՞ւր կը վերջանան այդ համադաշնակցային պետութեան սահմանները։

Ի՞նչ է հայ ժողովուրդի դիրքն ու կացութիւնը քաղաքական այս նոր ծրագրին մէջ։

Կարելի չէ համադաշնակցային անկախ պետութեան մը մասին խօսիլ, առանց ցոյց տալու անոր հողային կառուցուածքը լրիւ եւ առանց գծելու անոր սահմանային պատկերը, արտաքին եւ ներքին բաժանումներով։

Ներկայ պարագային, «կովկասեան պարանոյի չէզոքացումը», զոր կը շեշտէ «Պրոմեթէ» ամսագիրը, թերի, կեղծ եւ աննպատակ բանաձեւ մըն է։ Ալ ըսպէս, անոր հեղինակները, մասնաւորաբար վրացիներն ու թաթարները, պարտաւոր էին ուրիշ լեզուով հրապարակ գալու, եւ մանաւանդ չանտեսելու՝ թէ մէկ կողմ կը մնայ հայ ժողովուրդը, որուն իրաւունքներուն մեծագոյն մասը խլած եւ իւրացուցած է պոլշեւիկեան իշխանութեան հարաւային դաշնակիցը՝ քէմալական Թուրքիան, եւ որով «կովկասեան անկախ պետութեան» գաղափարը չի՛ կրնար դրուիլ այնպէս, ինչպէս կը թելադրեն տակաւին Թուրանական երազներով օրօրուող Ռասուլ Զատէներու եւ Մուսաւաթական քէմալի պոլիտիկոններուն քաղաքական մերձաւոր եւ հեռաւոր ծրագիրները։

«Պրոմեթէ»ն, ուրեմն առայժմ սխալ ճամբու մէջ է եւ կը ծառայէ մանաւանդ նպատակներու, բայց ո՛չ կովկասեան ժողովուրդներու ընդհանուր եւ իրական շահերուն։

ՆՈՐՔԵՐ

ԱՆԿՈՂԻՆԻՆ ՄԷՋ ՍՊԱՆՆՈՒԱԾ. — Անկուլէմի մէջ գիշեր ատեն անծանօթ մը կը մտնէ մայեարի տունէն ներս։ Ննջասենեակին մէջ կը քնանար խեղճ մարդը, զոր սպաննեց փորին ուդդուած գընդակով մը։ Ու անմիջապէս փախաւ։

Այսպէս, օրէնքը կնոջ կ'արդիլէ աշխատիլ ծննդաբերութենէն երկու ամիս առաջ եւ երկու ամիս յետոյ։ Օրէնքը տղամարդին կը շնորհէ նաեւ պարենագինի իրաւունք ամբողջ կաթնատուութեան ընթացքին (ասով կ'ուզենայ պարենագինը)։ Կրթութիւնը ձրի է և պարտաւորիչ, դպրոցները երկսեռ են, այնպէս որ նոր սերունդը նուազ կապուած պիտի զգայ ինքզինք ընտանեկան կենդրոնին։ Վերջապէս, ամէն գաւառի մէջ, պետութիւնը դրած է բժիշկ մը, աւելի օժտուած՝ բարձրագոյն դիւութեամբ քան տանտիրուհին։ Ամէն ընակավայրի մէջ կը հաստատուին ճաշարաններ, սըրճարաններ, բաղնիքներ եւն.։

Այսպէսով, դիւրին կը դառնայ առանձին կենցաղը եւ ընտանիքներու բաժանումը, որովհետեւ առանձին ապրելու ամենամեծ դժուարութիւնն է կնոջական աշխատանքներու շատութիւնը։ Հողագէտ երկրագործներ կը տարածեն մշակութեան նոր մեթոտներ, ցոյց տալով աւելի դիտութիւն քան նահապետը։ Ամուսնալուծուած ընտանիքներու զաւակները կը մեծնան ու կը կրթուին պետական յարկերու տակ։

Դժուար է գիտնալ թէ այս օրինակարգերը ո՛ր աստիճան կը գործադրուին ամբողջ երկրին մէջ։ Մենք գիտենք որ միշտ ուրոշ տարբերութիւն մը կայ օրէնքներուն եւ անոնց իրագործութեան միջեւ։ Ինչ որ ստոյգ է, սա է թէ խորհրդային կառավարութիւնը կ'ընէ ինչ որ կրնայ, տարածելու համար նոր կարգ ու սարքը։ Եւ այդ նոր իրաւակարգը աւելի դժուարութեամբ կը տարածուի լեռներուն քան այս դաշտերուն մէջ, որոնք կը տարածուին երեւանի շուրջ։ Վերը, բարձունքներուն վրայ, տակաւին նահապետական մշակութեան գործերը կը մնան նոյն ձեւով. մինչդեռ վարը, դաշտերուն մէջ, արդիւնաբերական համագործակցականները աւելին կուտան։

Քաղաքներուն մէջ պետութիւնը կը փորձէ հիմնել գործարաններ որոնք կ'աշխատին երկրին արտադրութիւններուն վրայ,— գինիի, օճառի, պահածոյ պտուղի, բամպակի գործարաններ։ Պետութիւնը բացած է նաեւ պղինձի հանքեր, պանրագործարաններ։ Բանուորները նպաստ կը ստանան արկածի, գործազրկութեան պարագային։ Քաղաքներուն մէջ, նահապետական ընտանիքի կազմալուծումը ոչ միայն ամբողջացած է, այլ կինը գործած է տնտեսապէս, առանձ կամ նուազ չափով անկախ իր ամուսինէն, շնորհիւ իր օրապահիկներուն եւ ստացած պարենագիններուն։

Շրջափոխութիւնը, որ կատարուած է Հայաստանի մէջ, վտանգէ զերծ չէ։ Երկիրը աղքատ է, հաղորդակցութեան միջոցները զարգացած չեն, այնպէս որ եկամուտի աղբիւրներն ալ սահմանափակ են։ Մինչեւ այժմ, կառավարութիւնը կը հետապնդէր իր ընկերային քաղաքականութիւնը,— որ այնքան սուղ արժեց,— միայն իր դրացի հարուստ սովետական հանրապետութիւններուն տուած նպաստներով։ Անմիջապէս որ դադրին այդ նպաստները, դժուար պիտի ըլլայ պահել իշխանութիւնը։

Միւս կողմէ վախնամ շատ արագ թուի շրջափոխութիւնը։ Անհատը, յանկարծակի բաժնելով իր նահապետական ընտանիքէն, որ մինչեւ այժմ կը պաշտպանէր զինք, թերի պատրաստուած տարր մըն է այս նոր կեանքի ձեւին համար, որ կը ներկայանայ իրեն։ Այս իրողութիւնը աւելի ճշմարիտ կը դառնայ, երբ խնդիրը կ'ներուն մասին է։ Անոնք կ'ապրէին նախապէս գրեթէ բանտարկուած։ Սիներու հաւասարութիւն յայտարերաւեցաւ, սակայն կինը նուազ կ'օգտուի այդ հանրային կարգադրութիւններէն, որովհետեւ պատրաստուած չէր ատոնց իր նախկին կեանքին պատճառով։ Պատրաստելու համար կինը իր վրայ դրուած նոր պարտականութիւններուն եւ արուած իրաւունքներէն լայնօրէն օգտուելու վիճակին, անհրաժեշտ է կրթութեան հսկայ աշխատանք մը։ Վերջապէս, անհրաժեշտ է կազմակերպել կնոջական շարժում մը այն երկրին մէջ, որ դրած է կնոջական ծրագիր մը։ Ծնունդներու համեմատութեան նուազումը, որ այսօր բաւական բարձր է, պիտի շրջունակուի, որովհետեւ երբ նահապետական ընտանիքը կը պարտադրէր ամուսնութիւնը, կը ստանձնէր նաեւ ապահովել գոյութեան անհրաժեշտ միջոցները իր անդամներուն, եւ կրթութիւնը անոնց զաւակներուն համար։

Փոլ Տիրան

ԿԵԱՆՔԸ ՀՕՄԻՆ ՄԷՋ

ՁԻԳԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԸ ԿՈՑԻՆԻԷՒ.—Վերջին երկու ամիսները Գարակէօզեան Հօմի համար եղան ընկերական զուարթ ու չէն կեանքի շրջան մը։ Գասարանական միութիւնները, իւրաքանչիւրը ուսուցչի մը ղեկավարութեան տակ դրուած, ամէն ճիգ թափեցին Հօմի մեներամին մէջ ստեղծելու կենդանի եւ ուրախ մթնոլորտ մը։

Հինգերորդ երեգ կարգը, որ երկու տարիէ վեր Հայաստանի դպրոցներուն շարժանկարի լուրջ գործիք մը հայթայթելու նպատակը կը հետապնդէ, վերջերս կոչ ըրաւ Հօմի բոլոր աւարտական եւ արհեստաւոր սաներուն աջակցութեան եւ զանոնք հրաւիրեց համախմբուիլ իր նպատակին շուրջ։ Կոչը միահամուռ արձագանգ գտաւ հեռաւոր եւ մօտաւոր սաներու մօտ եւ հազիւ իրենց օրապահիկը շահող մեր սաները գիտցան լիաբուռն նուիրել իրենց լումաները։

Բացի այդ, ե. դասարանը նոյն նպատակին համար կազմակերպեց դպրոցական շարժանկարի երեկոյթ մը, անակնկալ նուիրաբերութեամբ համեմուած եւ վիճակահանութեան ուրիշ երեկոյթ մը, որոնք մեծ յաջողութիւն ունեցան։

Ե. դասարանը իր դրամները օգտագործելու առաջադրութեամբ մտադիր է մօտերս հիմնել ճաշարանոց մը, որու հասոյթները պիտի յատկացուին իր նպատակին։

Չորրորդ եւ երրորդ դասարանները համաձայնած են իրենց չանքերը միացնելու եւ Հօմին նուիրուելու շարժանկարի կատարեալ գործիք մը։

Ձեռնաձելու համար իրենց երեց եղբայրներուն չանքերը, այս երկու դասարանները որոշած են, որչափ կարելի է տարբեր միջոցներով եւ իրենց սեփական աշխատանքներով հայթայթել անհրաժեշտ գումարը։

Այս ուղղութեամբ Դ. դասարանը փոխադրութիւն մը կնքելով, Հօմին մէջ հիմնեց մանրավաճառի խանութ մը եւ յանձնակատարութեան մանաճիւղ մը, որ Հօմի պաշտօնէութեան զանազան ապրանքները պիտի հայթայթէ նպաստաւոր պայմաններով։

Այս ձեռնարկը անհրաժեշտ պահանջի մը գոհացումը կուտայ, որովհետեւ Հօմը իր անտառին մէջ մեկուսացած հայթաթումի գժուարութիւններ ունեցած է մինչեւ հիմա. խանութը բաց է առաւօտ լոկ շաբաթ եւ կիրակի կէս օրէն յետոյ։ Գնուժերը, վաճառումները, հաշուապահութիւնը կը կատարուի նոյն գասարանի տղոց կողմէն եւ առաջնորդուած է հրապարակի գնալադոյը հայթայթելու գործնական սկզբունքէն։ Գործին կրնայ հանգամանքը ակներեւ է ամէն շուշան։

Դ. դասարանը, բացի այն փետր. 26ի շաբաթ իրիկունը նկայացուց քրքջալիր դաւեշտը «Գործի վաճառական վարպետ Լապօմպան», որ չափազանց ինքնավստահութեամբ պատրաստուած էր եւ ուրախ իրիկուն մը ընծայեց Հօմի բնակիչներուն։

Գ. դասարանը, տակաւին թարմ բաւարար, համեստ քայլերով կը ջանայ հետեւիլ իր մեծ ընկերներու ճիգերուն։ Այս դասարանը տղաքը ուղելով ծառայելու ոգիով մշակել իրենք իրենց մէջ, որոնք են իրենց խաղի կամ հանգիստի պահերէն մաս մը յատկացնել Հօմի առկախ գործերուն, Հօմի բաղնիքը մաքրելու, ուսուցիչներու կօշիկները ներկելու, այգելուծի դղեակին մէջ պտտցնելու պատրաստակամութիւնը յայտնած են իրենք եւ ասոնց գուգընթաց հինգած են գործնական եւ ձեռագործական աշխատանքներու պզտիկ արհեստանոց մը, Հօմի պաշտօնական սրահին մէջ փասթէօի եւ վիթոր Հիւկօի նկարներուն գետնաքարին առիթով նոյն դասարանը նոնց ի պատիւ երեկոյթ մը սարքեց ուր սինէմատոյով պատրաստուեցան մասնաւորապէս փասթէօի կեանքին եւ գործին մասին դպրոցական ֆիլմեր։ Նոր դասարանին նախաձեռնութեամբ վերջերս դանոնց հինգշաբթին տեղի ունեցաւ Թէյասեղան մը ի պատիւ ուսուցչական մարմնի եւ արհետաւորութեան։

Ինչպէս կը տեսնուի դասարանական այս միութիւնները, իրենց հերթական հաւաքոյթները, գիտանական կազմը եւ մանաւանդ հաշուեպահութիւնը ունեցած են Հօմի տղոց ընկերական քաղաքացիական կրթութեան լաւագոյն միջոց։ Փ

10,000 ՖՐԱՆԿԻ ԱԻԱՐ

Մարսիլիայէն կը գրեն մեզի.— Գրած էինք որ Գ. Օ. կոմիտէի գործը խաչաձեւելու համար Առաջնորդարանը կազմած է քառախնամ մարմին մը, եւ հազարէն 10 հազարը դրած է անոր տրամադրութեան տակ «Աղքատախնամ»ի առաջին հրատարակութիւնները մերժուեցան յիշեալ Հոգեւոր Հովիւը յաջողած է կազմել ուրիշ մարմին մը։ Հօկը հոգատարութեան տակ առած է վարդապետը եւ «աղքատախնամ»ը։ Հօկին մարդիկը դանոնց հինգշաբթին տեղի ունեցաւ Թէյասեղան մը ի պատիւ ուսուցչական մարմնի եւ արհետաւորութեան։

Ինչպէս կը տեսնուի դասարանական այս միութիւնները, իրենց հերթական հաւաքոյթները, գիտանական կազմը եւ մանաւանդ հաշուեպահութիւնը ունեցած են Հօմի տղոց ընկերական քաղաքացիական կրթութեան լաւագոյն միջոց։ Փ

10,000 ՖՐԱՆԿԻ ԱԻԱՐ

Մարսիլիայէն կը գրեն մեզի.— Գրած էինք որ Գ. Օ. կոմիտէի գործը խաչաձեւելու համար Առաջնորդարանը կազմած է քառախնամ մարմին մը, եւ հազարէն 10 հազարը դրած է անոր տրամադրութեան տակ «Աղքատախնամ»ի առաջին հրատարակութիւնները մերժուեցան յիշեալ Հոգեւոր Հովիւը յաջողած է կազմել ուրիշ մարմին մը։ Հօկը հոգատարութեան տակ առած է վարդապետը եւ «աղքատախնամ»ը։ Հօկին մարդիկը դանոնց հինգշաբթին տեղի ունեցաւ Թէյասեղան մը ի պատիւ ուսուցչական մարմնի եւ արհետաւորութեան։

Ցաւալին այն է որ իրենց աւարի տրուած է տասը տարի եւ շուտով պիտի հալի ինչպէս ձիւնը տաքուկ շունչին տակ։ Եւ տոյ, տալու ձեւը մուրացկանութեան կը մղէ մեր ժողովուրդը ու կը խաթարէ անոր բարոյականը։

Ժողովուրդի ամենալայն խաւերուն մէջ խորունկ զղջում պատճառած է դրամաբաժանութեան եղանակը։ Ենասած են կը պատմեն որ դրամ առնողները կարօտութիւն չունին իրենց իսկ յայտարարութեան։ Շատեր դրամը ստացած եւ իրենց չունչը առած են սրճարան եւ ստացածնին տուած բախտախաղի։ Կարօտները չեն կրնար օգտուիլ, Հօկը մեղադրելու կարելիութիւնը ունի։ Առաջնորդարանի աւարի տուչ դժուար մը, որուն բախտը վճռած է ժողովուրդը եւ կ'ըսուի որ ան տրուի Գ. Օ. կոմիտէին։

ԳՎԱՏԻ

ՀՈՎԻՆ ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՐՍՆԻՔԸ

Վեպ

Գ. Խաչատրյան

— Ես ձեզ չասա՞ց, որ ինձ հետ խոսելիս ձեր ձայնը բարձր չբարձրացնեք, ես ձեր ականջները չեմ ուզում ցավեցնել...

Ընդհատեց նրան ամուսինը, ատամները կրճտացնելով.

— Ես ձեզ ասացի, որ ինձ հետ խոսելիս ձեր ձայնը ցածր պահեք, ես ձեր ականջները չեմ ուզում ցավեցնել...

Ամուսինը ոտքի թռավ, ձեռքերը թափահարելով.

— Ես ձեզ ասացի, որ ինձ հետ խոսելիս ձեր ձայնը ցածր պահեք, ես ձեր ականջները չեմ ուզում ցավեցնել...

Կինը ոտքի թռավ, ձեռքերը թափահար

պահպանելու համար կարգ ու կանոնը։ Մզկիթներու մէջ քարոզող կրօնաւորները առանձին ուշադրութեան պիտի առնուին, խռովարար դէպքերու տեղի չտալու համար։ «Խութպէ»ները պիտի կարդացուին թուրքերէն լեզուով։

Ակէ առաջ մանաւոր մարմին մը կազմուած էր Էնկիւրիի մէջ, որոշելու համար թէ քարոզիչները ի՞նչ նիւթի վրայ պիտի կրնան խօսիլ մզկիթներու մէջ։ Էնկիւրիի կառավարութիւնը կը սարսափի խօսքի ազատութենէն։ Վստահ է թէ իր ձեռք առած արդիական միջոցներուն դէմ ոչինչ կրնայ թուրք ժողովուրդը, մանաւանդ կրօնամոլ դասակարգը, ուստի եւ գրաքննութիւն հաստատած է նոյն իսկ մզկիթի քարոզներուն վրայ, վախնալով որ կրօնաւորները կրնան մոլեռանդ ժողովուրդը գրգռել կառավարութեան դէմ։

Ազգերու Դաշնակցութեան նոր նստաշրջանը

Երկուշաբթի ժրնեւի մէջ կը բացուի Ազգերու Դաշնակցութեան խորհուրդի նոր նստաշրջանը, որուն պիտի նախագահէ Գերմանիոյ արտաքին նախարար Շթրէզէման։ Ժողովինկը մասնակցին նաեւ Պրիան, Զէմպրլէյն, վանտէրվէլտ եւլն.։ Օրակարգը այս անգամ շատ խճողուած չէ եւ կը յուսացուի որ 5—6 օրէն կարելի ըլլայ սպառել բոլոր խնդիրները։ Երկու գլխաւոր խնդիրներն են՝ Սարրէի ածխային շրջանի տարեկան տեղեկագիրը ու գերմանեւլեհ յարաբերութեանց հարցը։

Պաշտօնական օրակարգէն դուրս, նրբանցքներուն մէջ կատարուելիք մանաւոր խօսակցութիւնները աւելի կարեւոր կը նկատուին։

Ալեւորդ վիճակ Չինաստանի մէջ

Շանկայէն կը հեռագրեն թէ Չիւսիացիներու միջեւ անհամաձայնութիւն ծագած է։ Կարգ մը զօրավարներ չեն ուզեր կռուիլ նոր հրամանատար Շանկ-Ցուն-Շանկի հրամանին տակ։ Ատոնցմէ զօր. Մինկ-Շաօ-եուէհ իր 10,000 զինուորներով Քանթոնցիներուն կողմը անցած է։

Ասոր վերջինները նոր յաղթանակ մը եւս տարած են Սունկքիանկի մօտ։

Շանկայի անգլիական զինուորներու թիւն է 7000։ Բոլոր մեծ տուներու եւ բարձր դիրքերու վրայ գնդացիրներ տեղաւորուած են։ Հոնկ-Քոնկ հասան ճափոնական յածանաւ մը եւ երեք թորփիլահալածներ։ «Քարմութ» անգլ. յածանաւը Մալթայէն դէպի Չինաստան մեկնեցաւ։ Նիւ Եորքէն ալ երեք ամերիկեան թորփիլահալածներ ճամբայ ելան դէպի Շանկայ։

Չիւսիսի զինուորները Շանկայի առջեւ, անգլիական պաշտպանողական գիծէն 5—6 քիլոմէթր հեռուն պաշտպանութեան գիծ մը կազմած են։

Գործազուրկներու ցոյցը

Երեքշաբթի կէսօրէն վերջ համաչափ Արհեստակցական Միութեանց պատկանող անգործները միթինկներ գումարեցին Մաթիւրէն-Մօրօի եւ Կրանժ-օ-Պէլի սրահներուն մէջ։ 2500 գործազուրկներ, Մաթիւրէն-Մօրօ փողոցին մէջ ուզեցին թափօր կազմել, սակայն ոստիկանները արգիլեցին։ Կրանժ-օ-Պէլ հաւաքուած էին 3500 հոգի։ Րիւ Պոլիվարի մէջ գործազուրկները յարձակեցան գործարանի մը վրայ եւ պահանջեցին որ բանուորները իրենց գործերը ձգեն։ Երկուստեք կռիւ պատահեցաւ եւ չորս հոգի ձերբակալուեցան։

Նոյնը պատահեցաւ նաեւ Պուլօնեի մէկ գործարանին մէջ, ուր ոստիկանները ձերբակալեցին ինը հոգի։

«Լքեալ» գոյքերու աւարը

Պոլսոյ «Լքեալ» գոյքերու յանձնախումբը գրաւած է Բերայի հայ հարուստներէն Մ. Յակորեանի կալուածները, որոնց ժառանգորդը «փախստական» է։ Գրաւուած կալուածները կը գնահատուին 350,000 ոսկի։

Անուղի արկած Անգլիոյ հանիւրեակի մէջ

Էսպլիւի ածխահանքին մէջ (Կալլէս), ուր կ'աշխատէին հարիւրաւոր բանուորներ, առջի գիշեր կրիզուի ահռելի պայթիւն մը տեղի ունեցաւ։ Ածխահորէն ելլող սեւ ծուխ մը աղէտին լուրը կուտար։ Անմիջապէս ահազանգը հնչեց եւ օգնութիւն փութացուեցաւ։ Դժուարին եւ վտանգաւոր աշխատանքներէ վերջ կարելի եղաւ դուրս հանել ութսուն հանքագործներ՝ ողջ առողջ։ Ցետոյ մէկիկ մէկիկ գետնին երեսը բերուեցան զոհերու դիակները։ 65 հանքագործներ կը պակսին եւ յոյս չկայ որ կարելի ըլլայ ողջ գտնել զանոնք։ Երկրորդ աղէտը պատահեցաւ Մէնսֆիլտի մօտ, Պիսթրօփի ածխահանքին մէջ։ Երբ բանուորները վար կ'իջնէին, հանքին խորէն դէպի մակերես գացող ջուրի հսկայ խողովակ մը ճեղքուելով սկսաւ 100,000 քիլօէն աւելի ջուր ժայթքել բանուորներուն վրայ։ 14 բանուորներ ջուրերուն մէջ խեղդուեցան։

Միլիոնատէր կնոջ ընչահատցութիւնը

Տիկին Անժել վօվեր 52 միլիոն ֆրանք ունի եւ նօժան կը բնակի։ Փարիզի մէջ ալ ունի մեծ շէնք մը, որուն վարիչն է նախկին գաղտնի ոստիկան մը՝ Քօլմաշ։ Միլիոնատէր կինն ու գործակալը առենէ մը ի վեր կը նեղէին իրենց վարձակալները, որոնցմէ իւրաքանչիւրէն 6-7000 ֆրանք կը գանձէին, նորոգելու համար վարձակալութեան պայմանագրութիւնը, այս առթիւ չմոռնալով նաեւ կլորիկ յաւելում մը ընել տարեկան վարձքին վրայ։

Վէպէր անուն մարդ մը Քօլմաշի ներկայացաւ խնդրոյ առարկայ շէնքին մէջէն բնակարան մը վարձելու համար։ Քօլմաշ 5750 ֆր. պահանջեց իրրեւ միջնորդէք։ Վէպէր ոստիկանութեան լուր տուաւ եւ իր վճարելիք թղթադրամներու թիւերը հաղորդեց անոր։ Աջի օր երբ վճարելու համար Քօլմաշի գրասենեակը գնաց, երկու ոստիկաններ սանդուխին վրայ կը սպասէին։

Վէպէրի դուրս ելլելէն վերջ Քօլմաշ ձերբակալուեցաւ եւ խոստովանեցաւ թէ իր գանձած 6-7000 ֆրանքէն 3-400ը ինք կը գրպանէր. 1000ը դռնապանին կուտար եւ մնացածը տիկին Վօվերի միլիոններուն վրայ կը դիզուէր։

Այս անխիղճ շահագործողները դատական հետապնդումի պիտի ենթարկուին։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԷՆ-ՇԱՄՕՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

4 Մարտ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին վարիէթէ սինէմային մէջ

կը ներկայացուի "ՕԹԷԼԼՕ,,

Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

կիր. Մարտ 6ի գիշեր, 64, R. Rocher, Métro: St-Lazare Ալպէրտ Ա. սեծ Թատրոնին մէջ կուտայ իր Դ. եւ վերջին ներկայացումը

Իրմէն ՍՈՒՄԲԱՑՈՎԻ յայտնի՝

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ Տիկ. Վիրժինէ Մամուլեանի, Տիկ. Ալէքսանեանի, Եւրոպահայ Թատերախումբի եւ տեղւոյս դերասաններու։ Օր. Ասիա կոստանեանը Ա. արարին կը պարէ հարէմական պար, պարսկական յայտնի ջարկեաիը։ Տոմսերու գինը 3—20ֆր.։ Կը ծախուի բոլոր հայկական ճաշարաններէն։ Կը սկսի 8.15ին, կը վերջանայ ժամը 12ին։

ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

4 Մարտ Ուր. գիշեր ժամը 8.30ին, 57 բիս փէրիէ, սալոն միշէլի մէջ կովկ. պետ. Թատր. յայտնի դերասանուհի Տիկ. ԴՈՒՐԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆ

կը ներկայացնէ ԱՆՅԱՑՏ ԿԻՆԸ (*տռամ 4 արար*)

կը մասնակցին դերասան Յ. Ղազարեան եւ տեղական լաւագոյն ուժեր։ Թաքլինայի դերը կը կատարէ Տիկ. Դուրեան-Արմէնեան

Մուտք՝ 15, 10 եւ 5 ֆրանք։

ԸՆԿ. ԱՐԱՄ ՑԱԿՈԲԵԱՆ

ԵՒ

ՕՐ. ԵՂԻՍԱԲԷԹ ՄԵՆՊԱՔԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱՑԱՒ

կնքահայրութեամբ՝ ընկ. Պողոս Սաքակեանի։ *Տէսին*

ՇԻՐԱԿԻ ԱՂԷՏԵԱՀՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Զետաթեա-Ալբայի (Ագքերման, Ռումանիա) հայ համայնքի հանգանակութիւնը.

Յ. Ս. Աուետաուրեան 50000 լէյ, Թամարա Մ. Աուետաուրեան 1000, Մարիամ Ա. Աուետաուրեան 5000, Պ. Մ. Քրիստոուրեան 1000, Քրիստափոր Մ. Աուետաուրեան 2000, Գ. Մ. Աուետաուրեան 1000, Ե. Տ. քահ. Ապրիլեան 500, Գ. Յ. Զամուրեան 1000, Յ. Մ. Յարութիւնեան 1000, Գ. Գ. Կալպակեան 1000, Մ. Ս. Անտոնեան 1500, Յ. Ռ. Թորոսեան 1000, Ս. Գ. Զինարեան 200, Յ. Մարեանց 200, Ն. Օհանեանի ժառանգներէն 500, Ն. Պ. Վօլկով 100, Ղ. Մ. Փափուչուբէօյիւք 500, Միխայիլ Սոքօլով 200, Յ. Յ. Գալուստեան 100, Խ. Յ. Սահակեան 500, Ս. Պ. Օհանեան 100, Յ. Կ. Սիմէոնեան 500, Ա. Մալխասեան 100, Ռ. Վ. Զինարեան 1000, Եւգրաֆ Զինարով 100, Հոխիսիմ Յ. Ուրֆալեան 200, Յ. Թ. Աւագեան 500, Ա. Մ. Պապով 300, Լ. Կ. Պապով 100, Ե. Յ. Երէցփոխեան 500, Մ. Աւագեան 500, Աւագ Աւագեան 200, Մ. Յ. Թևրզի 100, Հոխիսիմ Մարութեան 200, Սողոմէ Յ. Պապովեան 200. Մարիամ Բ. Պապովեան 100, Ա. Դասպարեան 100, Մարգարիտ Կարաօղլանեան 300, Գ. Բ. Պապովեան 500, Յ. Պետրոսեան 100, Ռ. Սահակեան 200, Կ. Երէցփոխեան 100, Յ. Թ. Աւագեան 500, Եղիսաբէթ Սվիրիդովա 200, Մկրտիչ Զէմբերլեան 200, Աբրահամ Ադաթեան 300, Կաթարինէ Աուետաուրեան 500, վերա Աուետաուրովա 200, Եւա Բիւրդօղլու 100, Ս. Սիմմալեան 100, Գ. Սկիւդարլի 200, Աննա Սիմմալեան 100, Տիրուհի Սիմմալեան 300, Յակովբ Զօբլի 100, Աննա Սկիւտարլի 200, Գ. Աալանեան 200, Նունէ Յ. Պապովեան 500, Յ. Մինքայէլեան 300, Մանուկ Յ. Պապովեան 500, Յ. Կարագէօզեան 200, Յ. Բէրբէրեան 500, Անթարտ 300, Մ. Պետրոսեան 200։ Ընդամէնը 80,000 լէյ։

(Ղրկուած Եղբ. Օգնութեան Յանձնախումբին)։

ՄԱՐՍԻԼԻՈՅ ԱՄԱՍԻԱՅԻՆԵՐՈՒՆ

ՄԱՐՍԷՅԼԻ Ամասիոյ Հայրենակցական երկսեռ միութիւնը բարեկենդանի առթիւ ի պատիւ անդամ-անդամուհիներուն կազմակերպած է մեծ հացկերոյթ մը, յաւուրս կիրակի շաբաթ 5 Մարտ երեկոյեան ժամը 7.30ին, 63, բիւ Բէվիւբլիքի վերնայարկը։ Կը հրաւիրուին բոլոր Ամասիացիները։

Տիար Զարեհ Շահինեան, տէր եւ տիկին Վահրամ Քէօսէեան, այրի տիկին Քէօսէեան, տէր եւ տիկ. Գեղամ Պետիկեան եւ զաւակը, Տօքթ. Կ. Պետրոսեան (Պոլիս), տէր եւ տիկ. Երուանդ Սիւզենէճեան եւ զաւակունք (Պոլիս), տէր եւ տիկ. Ֆերհատեան եւ զաւակունք, տէր եւ տիկ. Հ. Շերիտճեան եւ զաւակունք (Պոլիս), ցաւօք սրտի կը ծանուցանեն իրենց մօր եւ ազգականին՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ

ՊԱՅԾԱՒ ՇԱՀԻՆԵԱՆ

մահը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի օր, յետ երկարատեւ հիւանդութեան։

Ցուղարկաւորութեան տխուր արարողութիւնը պիտի կատարուի վաղը՝ Ուրբաթ առաւօտ ժամը 9ին, 15 բիս Ֆան կուժօն Հայոց եկեղեցիին մէջէ։

Մասնաւոր մահագդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբր այն նկատել։

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. փարիզի Երջանայինի կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Շավիլի, վէրսայլի, Սէվռի, վիրօֆլէյի բոլոր դաշնակցական ընկերները եւ անոնք որոնք արձանագրուած չեն որեւէ խումբի մէջ 5 փետր. Շաբաթ երեկոյ ժամը 8ին 187 Grand, Rue, Chavillu (Pointe de Chavilleի Թրամուէյի կայարանին մօտ)։

Հ. Յ. Դ. «Պատամարտի Սերունդ» խումբի անդամները անպայման ժողովի կը հրաւիրուին կիրակի, 6 Մարտ ժամը 2.30ին Պէլվիլի ճանաճ հաւաքատեղին։

Հ.Յ.Դ. «Արբիւր Սերոբ» խումբի դասախօսական ժողովը 6 փետր. կիրակի ժամը 2.30ին, 4 Passage St. Hippolyte, մէթրօ ին՝ալի։

Հ. Յ. Դ. «Եռագոյն» խումբին ընկ. ժողովը, վաղը Ուրբաթ, ժամը հիշտ 8ին, 80 Rue Charles Chefson, Bois Colombes.

Հ. Յ. Դ. Տէսինի ենթակոմիտէին ընդհ. ժողովը 6 Մարտ, կիրակի, կէս օրէ վերջ ժամը 2ին։ Թիստ կարեւոր օրակարգ։

Հ. Յ. Դ. Քանի (Cannes) նորակազմ «կայծակ» ենթակոմիտէի առաջին վիճաբանական ժողովը կիրակի, 6 Մարտ, կէս օրէն վերջ ժամը 1.30ին ընկ. Ղազար Պետրոսեանի բնակարանին մէջ, Լա Պատի։ Մուտքը ազատ է։

Հ. Յ. Դ. Մարսէյլի Ռոստոմ խումբի անդամական ժողովը՝ կիրակի Մարտ 6, ցորեկէն վերջ ժամը 2ին։ Կը խնդրուի բոլոր ընկերներէն որ առանց բացառութեան ներկայ գտնուին անդամատուրներով միասին։

ՖՐԱՆՔՓԵՒՀԱՑԿԱԿԱՆ բանախօսութիւն մը, վաղը Ուր. երեկոյ, Մարտ 4, ժամը 8.30ին, Թուլուզի քաղաքապետական Գրադարանի սրահին մէջ, 1 Rue Lakanal։ Պիտի խօսի ընկեր Յարութիւն ՏԷր Պողոսեան, նիւթ ունենալով «Թուլուզի հայ գաղութը, ինչպէս հիմնուեցաւ եւ ի՞նչ է իր արդի վիճակը»։ Կը հրաւիրուին Թուլուզի բոլոր հայրենակիցները։

ATELIER D'ÉLECTRICITÉ ET DE T.S.F

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ — *Ամէն կարգի ելեքտրական գետեղումներու, ելեքտրական գործիքներու, մօթէնգրու եւն. նորոգութիւններ։*

ԿԸ ԾԻՆԷ — *Անթել հեռաձայնի գործիքներ, որոնց ձոցով կը լսէք Եւրոպայի անթելի յանոյներէն տրուած բոլոր քոնսէրները օրուան լուրերը։*

M. G. BASMADJIAN, 93, RUE DU GAZ, PARIS (13)

Tél: Goblins 52—18. Metro Italie

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՕՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

126, Rue du Faubourg St. Denis

Metro: Gare de l'Est Téléphone: Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—Կիրակի եւ տօն օրեր 9-12

ՊԷԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Ծանօթագրի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տիկին՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՅԱՐԴԱՐՈՂի այսօրուան գրական երեկոն, ժամը 9ին, Ֆլօրիա Նուիրուած է Պ. վ. Թէքէեանի գրականութեան։ Շեղինակը ներկայ պիտի գտնուի երեկոյին։ Կը խօսի Հրանտ Բալուեան, կ'արտասանեն Մարութեան, Քոչարեան, Սարեան, Սինէմեան, Դաշնակ Օր. Ն. Գալփաքեանէ։

Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիլի մասնաճիւղի ժողովը վտղը Ուր. 4 Մարտ ժամը 8.30ին 40 Rue de Belleville։

Լիոնի Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները՝ մասնակցութեամբ Տեսչի մասնաճիւղին, կիրակի Մարտ 6ին կէսօրէն յետոյ ժամը 1.30ին Հ.Յ.Դ. նախկին գրադարանը։

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԳՈՐԾ ՄԸ 7000 ՖՐԱՆՔՈՎ

Կը ծախուի պոլսահայ լիւլէ գայմաքի, թուլում պանիրի եւ ճերմակ պանիրի գործիքները, շինելու արհեստն ալ սորվեցնելն եւ եւթած ապրանքը տեղաւորելու դիւրութիւններ եւս ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք զուտ շահ։ Դիմել «Յառաջ»ի վարչութեան։

ՄԱԿԱՐԱՆ

2 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Սթերլին,	L. St.	123	99
Տոլար,	Dollar	25	56
Մարք (ոսկի) 100 Mark		605	—
Թրքական Թղթ.	L. Trq.	12	95
Թրք. ոսկի	» or	114	50
Մէճիտիէ	Médjidié	8	50
Լէվա 100 հատ	Léva	18	65
Տրախմի	» Drachme	33	—
Լիր	» Lire	111	75
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	71	50
Ջուից.	» Frc. Suisse	491	50
Լէյ 100 հատ	Ley	15	35
Ջերվոնեց	(10 Roubles or)	92	—

ԱՐԾԵԹԱԴՐԱՄ

Եգ. Ֆր. Ֆոնսիէ	1 Cr. Fonc. Eg.	3020	—
»	II »	1910	—
»	III »	1715	—
Ռումելի երկաթղ.	Lots turcs	160	—

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant: H. TEURNIER

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽԻ

Թերթիս գործակալ Գ. ... եանի ՖՐԱՆՔՕ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆ

15 բիս տէ Տօմինիքէն

Վաճառու սեղեակները նոցով միասին մեկ՝ մելքիս Նշանեանի, 2 Av. du Docteur Leray, 36 Rue mesmeh մօտերը, Paris 18 մէթրօ ին՝ալի։

Հ Ա Յ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԵՐԿ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒՄ

Arakélian, Contes et ... velles, 12 frs.։

Aharonian, Vers la Liber...

Aslan K., L'Arménie ... Arméniens 20.

Baronian, Maître Balthaz...

Barsamian, L'Homme ... Femme 6.

Barsamian, Elle et Moi

Basmadjian, Histoire Mo... des Arméniens 12.

Chirvanzadé, La Possédé

Djivani, Les plus belles ... sons, 5.

Macler F., Ancienne ... d'Arménie 12.

Macler F., Contes et Lég... de l'Arménie 12.

Macler F., La Version ... nienne 12.

Macler F., Contes Arm... 12.

Mesrob K. L'Arménie ... de vue... 12.

Minasse Mme Iskouhi... velles et Contes 15.

Minasse Mme Iskouhi... Attique, poème 6.

Minasse Mme Iskouhi... dans la Nuit, poème 7.50.

Morgan J. de, Histoire ... Peuple Arménien 40.

Papazian V.; Santho 12.

Raffi, Samouel, 2 volume...

Sandaldjian, Père J., Ho... documentaire de l'Arménie ... âges du Paganisme, 2 ... volumes 100.

Tcheraz M., Nouvelles ... tales 12.

Tchobanian A., La Fe... Arménienne 6.

Tchobanian A., La Re... d'Arménie, 2 grands volume... lustré 150.

Zartarian R., Clarté ... turne 12 francs.

Պատարագամատոյց ... դերէն 1926 փարիզ 35 ֆր.։

Ֆրանսայի եւ գաղթակ... րու վոսմի ծախք չկայ։

Նոր Հայաստանի գրա... քարտէսը։ Պատրաստեց Գ. ... մաջեան (քիչ օրէն լոյս կ... տեսնէ)։

Դիմել՝ Librairie BAL... 233 Fbg. St. Martin, Paris

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ալ.	10 ալ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն — 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՈՒՐԲԱԹ
4
ՄԱՐՏ
1927

4 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 276

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՀՈՒ ՍԱՐՍԱՓԷՆ ՅԵՏՈՑ

Թուրքիոյ մէջ օրուան խնդիրն է՝ անկախութեան դատարաններու չնչումը:

Լման երկու տարի ահ ու սարսափ տարածելէ եւ անհամար կախաղաններ կանգնելէ յետոյ, հանգստեան կը կոչուին այդ տեսիանները: Բայց կը մնայ եւ կ'երկարաձգուի Անդորրութեան Ամրապնդման օրէնքը, որուն անունով կը կտրէին ու կը կախէին երեք Ալիները:

«Յայմզ»ի թղթակիցը, որ իբրեւ աւետիս կը հաղորդէր այս լուրը, դիտել կուտայ թէ կարգ մը երեսփոխաններ զժգոհ են տրուած որոշումէն: Նոյն իսկ ըստ կայ թէ դահլիճին անդամներէն գոնէ մէկը պիտի հրաժարի: Ինչպէս ուրիշ պարագաներու մէջ, այս որոշման ատեն ալ վճռական դեր կատարած են Մուսթաֆա Քէմալ եւ Ըմմէթ փաշաները, որոնց թափին մէջ է այսօրուան Թուրքիոյ ճակատագիրը եւ որոնց կողքին կանգնած է պատերազմական գործավար Ֆէյզի փաշան, իր սպայակոյտով եւ բանակով:

Թէ անգլիական Թերթին Թղթակիցը եւ թէ «Հաքիմիյէթը Միլլիյէ» տրուած որոշումը կը համարեն ապացոյց՝ Թուրքիոյ անդորրութեան ամրացման: Բայց, կարգ մը երեսփոխաններու ընդդիմութիւնը ինքնին կը հերքէ այդ լաւատեսութիւնը: Ինչո՞ք ալ Թուրդ քէմալական են եւ հարկաւ բան մը գիտեն որ կը պնդեն երկարաձգել անկախութեան դատարաններու պաշտօնավարութիւնը:

Արտաքին տեսքով, «Ամայիշ պէր քէմալ»ն է որ կը տիրէ Թուրքիոյ մէջ. բայց ներքնապէս, այդ արիւնազանգ երկիրը միշտ ընդունակ է նոր փոթորիկներու, քանի որ ո՛չ Քիւրտերը վերջնապէս ընկճուած են, ոչ մօլլաներն ու սօֆթաները՝ դարձի եկած, ոչ ալ ընդդիմադիրները՝ սպառած: Միւս կողմէ տասնեակ հազարաւոր անպաշտօն պաշտօնեաներու եւ սպաներու անօթութիւնը, երկրին չքաւորութիւնը եւ արտաքին սպառնալիքները երբեք նպաստաւոր պարագաներ չեն բարեկարգութեան համար: «Իզվեստիա», Մոսկուայի պոլշեւիկ պաշտօնաթերթը, քանի մը որ առաջ կը հրատարակէր ճամբորդի մը տպաւորութիւնները Սամսունէն Տրապզոն, ճիշտ այն բովանդակութեամբ ինչ որ կը պատմեն բոլոր «հակայեղափոխականները», — ամայութիւն, աւեր, տնտեսական քայքայում եւ յուսահատութիւն: Եւ այս բոլորը՝ Հայերու եւ Յոյներու կոտորումէն կամ աքսորէն յետոյ: Թուրքերը եղածը քանդեր, կերեր են, առանց տեղը բան մը դնելու: Կանգ առած է, օրինակ, մետաքսագործութիւնը, որովհետեւ Հայեր չկան որ շերամով զբաղին: Տրապզոն 70.000 ժողովուրդ կը հաշուէր պատերազմէն առաջ, այսօր՝ հազիւ 30,000 եւն.:

Եւ ասոնք՝ ծովեզերեայ շրջաններ են, բանուկ եւ բարգաւաճ: Ասոնց վրայ կարելի է պատկերացնել բուն Անատոլուի՝ ներքին գաւառներու վիճակը: Թուրք ճամբորդ մը, որ ահագին տարածութիւններ կտրած էր վերջերս, Թուրքիոյ արեւելքէն արեւմուտք, կը պատմէ թէ մարդիկ ամայութենէն կը սարսափին արեւելեան նահանգներուն մէջ, եւ չեն կրնար փողոց իջնել առանց զէնքի կամ ընկերակցի:

Անշուշտ սարսափի եւ ամայութեան, ամլութեան այս պատկերն է որ մղած է օրուան վարիչները՝ քիչ մը թեթեւցնել մթնոլորտը եւ ապահովութիւն ներշնչել թէ ներսը եւ թէ դուրսը: Անկախութեան ատեաններու եւ կախաղաններու կապարէ ծանրութեան տակ, ոչ տեղացին առեւտուրի մասին կրնայ մտածել, ոչ ալ օտարը՝ տնտեսական ձեռնարկներ փորձել: Իսկ պետութիւնը դրամի կարօտ է, իր պաշտօնեաներու բազմութիւնը եւ բանակները կերակրելու համար: Ո՞վ պիտի վճարէ տուրքերը, քանի որ Հայեր եւ Յոյներ ալ չկան, որպէսզի կաշի քերթել տան:

Անկախութեան դատարաններու չնչման մէջ դեր ունի, նաեւ, արտաքին սպառնալիքը:

Շոնդալից լուրեր եւ յերիւրանքներ շատ կան, այս միջոցին: Բայց, չափազանցութիւնները մէկդի դնելով, բոլոր նշանները ալ կը հաստատեն թէ ուշ - կանուխ փոթորիկ մը պիտի պայթի Թուրքիոյ գլխուն: Եւ Էնկիւրի, լրջօրէն մտահոգ, պատրաստութիւններ կը տեսնէ: Արդ, որքան ալ զօրաւոր ըլլայ քէմալական իշխանութիւնը, չի կրնար անտեսել իրեն դէմ կուտակուած զայրոյթը: Միայն արեւմտեան (Էնկիւրի) անկախութեան դատարանը 22 ամսուան ընթացքին, 1925 Մարտ 1էն մինչեւ 1926ի վերջը դատի քաշած էր 2351 հոգի, որոնց 946ը պատժուեցան: Ասոնց 204ը մահուան դատապարտուեցաւ, 133ը անմիջապէս կախուեցան, իսկ 71ը փախստական են: Այս տեղեկագիրը իրենք հրատարակեցին. իսկ բոլորովին մութի մէջ կը մնայ Արեւելեան դատարանի գործունէութեան հաշիւը:

Մ. Քէմալ եւ Ըմմէթ փաշա կը զգան թէ միայն բռնութիւնը բաւական չէ, ամբողջ Թուրք ազգը շարժման մէջ դնելու եւ զօրանոց առաջնորդելու համար: Պէտք է նաեւ սիրաշահիլ: Այդպիսի փորձ մը կատարուեցաւ, ընդհ. ներսումով եւ կաշառքով, լեռը քաշուած Քիւրտերը հպատակեցնելու համար. իսկ հիմա երկրորդ քայլ մը կ'առնուի, քէները մոռցնելու համար:

Ինչ խօսք որ աչքի փոշի է այս ձեռնարկն ալ, որովհետեւ Էնկիւրի, առանց խորհրդարանի, եւ առանց նոյն իսկ Յալք կուսակցութեան ամբողջութիւնը նկատի առնելու, կրնայ ուզածնէն եւ ուզածին չափ մարդ կախել, միշտ կրճատած Անդորրութեան ամրապնդման օրէնքին: Այ ու սարսափի ձեւն է որ կը փոխուի, ոչ թէ իրականութիւնը: Եւ եթէ մէկ վայրկեան դադրեցնել կամ թուլնան այս ճակատին վրայ, անխուսափելի է փլուզումը:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԸ

«Յուսաբեր» նորէն անդրադառնալով «կովկասի Ազատագրման կոմիտէ»ի կազմութեան եւ Թուրքիոյ նենգամիտ խաղերուն, դիտել կուտայ.

— *Ռուսիոյ «բարեկամութիւնը» օգտագործելու համար՝ Էնկիւրին իր կուրծքին վրայ կը խնամէ Հիւսիսի Թշնամիներէն այս մէկը եւս՝ Կովկասը ռուսական լուծէն ազատագրել ձգտող անդրկովկասեան երեք ազգերու — Վրացիներու, Թաթարներու եւ Լեռնցիներու— միութիւնը:*

... Վրացիին համար ծանր է անշուշտ Թուրքին ներկայութիւնը Անդրկովկասի մէջ:

Սակայն անոր համար ահէ աւելի ծանր է Ռուսին ներկայութիւնը ի՛ր երկրին մէջ:

Ազրպէյճանի Թաթարը չ'ախորժիր անշուշտ Թուրքի տիրապետութենէն իր վրայ:

Սակայն ան ա՛լ աւելի դժբախտ կը զգայ ինքզինք, երբ Սթալինն է Քէմալի փոխարէն:

Այսպէս նաեւ Լեռնցին:

Ահա թէ ինչո՛ւ համայնավար կարմիր դրօշը այս ժողովուրդներու աչքին կը ժժգունի քէմալական կարմիր դրօշին առջեւ:

... Տարուէ-տարի Անդրկովկասի քաղաքական ընդհանուր քաոսը աւելի որոշ եւ աւելի յստակ կերպարանք կ'առնէ:

Դէպքէ - դէպք ռուսեւթուրք յարաբերութիւնները ճամբայ կը գծեն դէպի հին ու դարաւոր Թշնամութեանց ընդարձակ հունը:

Առիթէ-առիթ մեզ օգակող ուժերը կուգան ըսելու, որ խաբուսիկ է բռնութեամբ ստեղծուած այն «խաղաղութիւնը», որ այսօր կ'իշխէ մեր հայրենիքին մէջ:

Վա՛յ ուշ արթնցողին:

ԵԼԲԱՅՐ ՌԵՖԼԵՀԻՄ ԿԸ ԴՈՐԾԷ

Գրած էինք թէ աբբայ Ռեֆղեհէմ վեցերորդ անգամ ըլլալով պատառ-պատառ ըրած է «լպիրշ» հրատարակութիւնները: Ատոր փոխարէն, երկու երիտասարդներ ալ կրօնական հրատարակութիւններ պատրաստին անցեալները:

Առջի օր, եղբայր Ռեֆղեհէմ Սէն փողոցէն անցած ատեն, լրագրավաճառի կրպակի մը մօտեցաւ եւ կարգ մը «վրան բաց» հրատարակութիւններ ժողուելով պատռեց: Լրագրավաճառ կինը շիտակ ոստիկանատուն առաջնորդեց աբբան, որ անվախ պատասխանեց թէ պիտի շարունակէ իր խաչակրութիւնը առանց վախնալու օրէնքէն: Ընդհակառակն, պնդեց թէ օրէնքը իր կողմն է, քանի որ 1926 Մարտ 23ի ոստիկանական հրամանագիրը մը կ'արգիլէ ո՛ր եւ է ծանուցում հանրատուներու եւ ժամադրավայրերու համար, իսկ ուրիշ որոշման մը 10 րդ. յօդուածը կ'արգիլէ հրապարակի վրայ ծախել որ եւ է հրատարակութիւն որ հակառակ է «պատշաճութեան եւ բարոյականի»: «Այն մարդիկը որ կը տպեն եւ կը ցրուեն այդ հրատարակութիւնները, շատ պիտի ցաւէին եթէ զանոնք տեսնէին իրենց զաւակներուն ձեռքը: Բայց հոգ չեն ըներ ուրիշներու զաւակներուն համար: Մեծ յանցանք մը, մեղք մը կը գործուի եւ ես կ'ուզեմ շտկել զայն»:

ՍԱՍՈՒՆԻ վիճակը յուսահատական է եւ վայրկեանէ վայրկեան մեռնելուն կը սպասուի, կ'ըսէ Մոսկուայէն հեռագիր մը:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՆՉՈ՞Ւ ՉՆՉՈՒԵՑԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

«Յայմզ»ի Թղթակիցը Էնկիւրիէն կը հեռագրէ Մարտ 28 Թուականով.—

Հանդարտութեան երկար շրջանէ մը վերջ, Էնկիւրի կրկին քաղաքական գործունէութեան կեդրոն մը դարձաւ: Ընդհանուր կարծիքն այն է թէ Անկախութեան Ատեաններու չնչման կառավարական որոշումով նոր գլուխ մը կը բացուի Թուրք յեղափոխութեան պատմութեան մէջ:

Հանրապետութեան նախագահ Մուսթաֆա Քէմալ փաշա երկար ատենէ ի վեր կը փափաքէր վերջ տալ այն անբնականոն վիճակին, որ կը տիրէր 1925ին Անկախութեան Ատեաններու հաստատուելէն ի վեր: Երէկ «Յալք» կուսակցութեան վարիչ մարմնի դռնփակ նիստին մէջ, Քէմալ փաշա յայտնեց իր այս մտադրութիւնը, որ ընդհանուր հաւանութեան արժանացաւ: Այսօր փոխանակ Ազգային Մեծ Ժողովի՝ գումարուեցաւ Յալք կուսակցութեան լիակատար ժողովը, ուր վարչապետ Ըմմէթ փաշա երկար ճառով մը մանրամասնօրէն բացատրեց այն պատճառները, որոնք մղած էին կառավարութիւնը ստեղծելու երկու Ատեանները, ու պարզեց թէ ի՞նչու կառավարութիւնը հիմա կարելի կը նկատէր չնչել զանոնք: Վարչապետը աւելցուց թէ կարգը պահպանելու բացառիկ օրէնքը երկու տարի եւս պիտի երկարաձգուի, ու ժողովը միաձայնութեամբ հաստատեց իր խօսքերը:

Ստոյգ է սակայն թէ կարգ մը երեսփոխաններ չեն կարծեր որ յիշեալ երկու դատարանները լուծելով, կառավարութիւնը խելացի գործ մը կատարած եղաւ, եւ այսօր շատ կը խօսուի թէ այս որոշման հետեւանքով առնուազն դահլիճին անդամներէն մէկը պիտի հրաժարի: Պաշտօնական շրջանակներու մէջ այս լուրը չհաստատուեցաւ, սակայն վստահօրէն կարելի է ըսել թէ քաղաքական կացութիւնը «յեղյեղուկ» է: Ջեռնհաս շրջանակներու կարծիքն այն է թէ հանրապետութեան նախագահն ու վարչապետը աւելի շատ կը հակին «Յալք» կուսակցութեան չափաւոր տարրերուն կողմը, ի վնաս ծայրայեղ տարրերուն:

Վերջապէս, նկատի կ'առնեն նաեւ Թուրքիոյ ներքին վարչական մասին օտարներու կարծիքը: Երկիրը վարող պատասխանատու անձերը կը փափաքին ցոյց տալ եւրոպական պետութիւններուն թէ Թուրքիա կ'ուզէ նկատուիլ քաղաքակիրթ պետութիւն մը, որ կը ձգտի իր երկիրը պահել խաղաղութեան մէջ՝ զօրաւոր բայց ոչ բռնապետական կառավարութեան մը ձեռքին տակ:

Էնկիւրիէն կը հեռագրեն Մարտ 2 Թուականով.—

«Հաքիմիյէթը Միլլիյէ» կը գրէ թէ Անկախութեան Դատարաններու չնչումը ցոյց կուտայ կառավարութեան վստահութիւնը ժողովուրդին հանդէպ եւ հանրապետական - յեղափոխական սկզբունքներու վերջնական կայունացումը: Էնկիւրիի կիսապաշտօն օրկանը կը շեշտէ թէ այս որոշումը ղրական պատասխան մըն է այն չարամիտ հաւաստումներուն, որուն համաձայն իբրեւ թէ յեղափոխութեան ստեղծած վարչաձեւը մեծ նշանակութեան փոքրիկ խմբակի մը, եւ որ կանգուն կը մնայ շնորհիւ Անկախութեան Դատարաններու սպառնալիքներուն: Այս որոշումով, առաջին քայլ մը առնուած է դէպի երկրին մէջ բնականոն պայմաններու վերահաստատումը: Խաղաղութեան եւ հանդարտութեան պահպանման օրէնքն ալ իր ատենին պիտի չնչուի:

Անատոլուի եզերքներուն ամրացումը

Երէկ ղրեցինք թէ Թուրքերը իտալական յարձակումէ մը վախնալով, կ'ամրացնեն Անատոլուի եզերքները: Լրացուցիչ տեղեկութիւններու համաձայն, ամրութիւններ կը շինուին մասնաւորապէս Սքալա - Նովայի (Եէնի Իսքէլէ) շրջակաները, իրմիրէն 40 մղոն դէպի հարաւ, համանուն ծոցին վրայ, Եփեսոսի աւերակներուն մօտ, Սամոս կղզիին դիմաց:

Թուրքիոյ առեւտրական դաշնագիրը

Էնկիւրիէն Մարտ 2 Թուակիր հեռագիր մը կ'ըսէ թէ Թուրքիոյ առեւտրական դաշնագրի մը կնքումին համար երկար ատենէ ի վեր շարունակուող բանակցութիւնները վերջացած են: Դաշնագրին վերջնական խմբագրութիւնը պիտի կատարուի Զորեքշաբթի կամ Շաբաթ: Բոլոր կէտերուն վրայ կատարեալ համաձայնութիւն գոյացած է:

Նոյնպէս համաձայնութիւն գոյացած է բնակութեան դաշնագիր մը կնքելու համար:

Ռուս պատուիրակները հրաժարած են երկու երկիրներու միջեւ առեւտուրը «պետականացնելու» իրենց մարքսիստական պահանջներէն: Ատոր փոխարէն կը պնդեն որ դիւանագիտական առանձնաշնորհումներ տրուին Խորհրդային միութեան արտաքին առեւտուրի պատուիրակութեան, որուն կեդրոնն է Պոլիս:

Իտալիա եւ Հունգարիա

Հունգարիոյ վարչապետ կոմս Պէթլէն Պուտափեշտի իտալական դեսպանին հետ կարգադրած է իր դէպի Հռոմ մեկնումը

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Էջ)

ՀԵՊՔՆԹԱՑ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄ

Խորհրդային դրախտին մէջ, ինչպէս որ գրասենեակային աշխատութիւններու դանդաղութիւնը ծայր աստիճանի հասած է, նեպքնթացը արագութեամբ կը տրուին ամուսնալուծման որոշումները: կարելի է գուշակել որ ամուսնութիւնները ալ նոյն արագութեամբ կը կատարուին հոն: Խորհրդային օրէնքներու հմամաձայն, ամուսնալուծման համար փաստի, վկայի պէտք չկայ: երբ ամուսնացած կողմերէն մէկը փափաք յայտնէ, միւս կողմին հաւանութիւնը կարեւորութիւն չունի, անմիջապէս ամուսնալուծում: յունուար 8ին երկու վայրկեանի մէջ ամուսնալուծում շնորհուեցաւ: Հակառակ այս արագութեան, գրասենեակներու առջեւ ամուսնալուծում պահանջողները պոչ բռնած կը սպասեն: Գրասենեակներու գրագիրներուն միւը կրկնապատկուած է, աւելի քան նեպքնթաց արագութեամբ ամուսնալուծում շնորհելու համար փափաքողներուն, որոնք անհամբեր կը սպասեն ուրիշ նոր ամուսնութիւն մը կնքելու համար:

Ամուսնութիւն եւ ամուսնալուծում, խորհրդային դրախտին մէջ, երախայի խաղ է:

Բրանդայա կազէթա, խորհրդային Թերթը, չի ծածկեր այս պարագան: Ամուսնալուծումի համաձարակ ամէն կողմ. հայրը, քոյրը, ընտանիքով կը վազեն ամուսնալուծման գրասենեակէն: կան որ, պատահաբար ընկերացած ըլլալով ամուսնալուծում պահանջող ընկերոջ մը, փափաք կ'ունենան ամուսնալուծումի: կան երիտասարդներ, որոնք ամուսնալուծումի գրասենեակէն ելլելով, կը վազեն ուրիշ գրասենեակ մը, ամուսնութեան խնդրանք մը ստորագրելու համար: Դերերն ալ հոն են: Նոր կնիկ կ'ուզեն, ու պառաւները՛, որ նոր էրիկ կ'ուզեն: Ամուսնութեան «ֆօրտիսմ»ն է:

Ընտանիք չէ մնացած այլեւս Ռուսիոյ մէջ:

ԿՈՒԻ ՀԱԼԷՊԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

Ազգամի ատացած մէկ հեռագիրին համաձայն, Փետրուար 26ին Հալէպի կաթոլիկ եկեղեցիին մէջ ծագած վէճի մը պատճառով, ժողովուրդը երկու մասի բաժնուած եւ կռուած են: Կարեւոր թիւով վիրաւորներ կան: Եկեղեցիին մէջ ամէն բան տակն ու վրայ եղած է, նստարանները եւ ապակիները ջարդուփշուր եղած են:

ԿԻԼԻԿԻՈՅ ՆԱՀԻՆՋՆԵՐԸ

Մէրսինի, Տարսոնի, Ադանայի եւ Տէօրթ Եօլի մէջ նահինջի եւ մանտարինի բերքը այնքան առատ է որ երկաթուղիները անբաւական են Պոլիս փոխադրելու համար: Այս պատճառով երկաթուղիի ընկերութիւնը որոշած է նոր ժամանակացոյցով մը յատկուածական շոգեկառքեր տրամադրել վաճառականներուն:

ԻՏԱԼԱՅԻ հիւպատոսը պատմաբան Ֆ. Ֆերրէրօ, որ Ամերիկա պիտի երթար շարք մը փիլիսոփայական դասախօսութիւններ տալու, արգելքի հանդիպեցաւ իտալական կառավարութեան կողմէ: Ինք իսկ հաղորդելով այս լուրը, կը յայտնէ թէ «գերի է Իտալիոյ մէջ»: Ֆաշիստ մամուլը սաստիկ զայրացած է Ֆերրէրոյի արտայայտութեան համար:

*** Տաղանդաւոր հրապարակագիր Սիլվէստրի որ փորձած էր Իտալիայէն Ջուիցերիա անցնել, կղզի մը աքսորուեցաւ հինգ տարի պայմանաժամով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

(ԱԿՍՈՒՍՏԻ ՄԵ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ)

Ա. ՕՂՍԱԿԻ ՄԵՋ ԱՌԱՋԱՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ

Հայաստանի Կարմիր Խաչի Կենտրոնական Վարչության նախագահությունը հրապարակում է Ա. Օղսակի մեջ առաջացած հայտարարված ընդհանուր հանգանակության ցուցակները մինչև 1 մայիս 1926 թ. ներառյալ։

Ընդհանուր գումարը կազմում է 2,479,800 ռուբլի 71,619 փութ։ Ներկայումս գանձված է 1 մլն 688,750 ռուբլի, 297,550 ոսկի, 89,300, արծաթադրամ 81,800, պատվական 322,400 ոսկի։ (Այդ գումարներից 183,600 ռուբլի, 782,600 դեռևս չեն գանձվել)։ Ընդհանուր գումարից 16,400 ռուբլի, պատվական 21,800, ոսկեդրամ 200, մետաղադրամ 89 ռուբլի, 2,016,400 ռուբլի, 84,963 ֆունտ բրնձի վաճառքից։ Ներկայումս գանձված է 1 մլն 129,150 ռուբլի, 27,200, վարկերի, 14,150, մետաղադրամ 141,150, 659,750 ռուբլի։ Պատահական ներկայացումներից, շրջելիքներից, ընդհանուր հանգանակության ներկայացումներից, ինչպես նաև

ԴԱՏԱ

ՎԱՂԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ

— Ես, իհարկե, ի՞նչ պատասխան կարող եմ տալ... Ամեն ինչ կախված է ձեր ցանկությունից: Ես ձեզ ոչ մի բան չեմ կարող հրամայել: Ես ձեզ խնդրում եմ, որ ինձ հետ ամուսնանաք, որովհետև ես ձեզ սիրում եմ: Ես ձեզ սիրում եմ, ինչպես կարող է սիրել մի մարդ, որ ամբողջ կյանքում ոչ ոքի չի սիրել

ճամբորդութեան մանրամասնութիւնները։ Կոմսը պիտի տեսակցի Մուսօլինիի հետ Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդի նիստերէն վերջ եւ Մարտ ամսուան ընթացքին։

Երկու պետական մարդոց տեսակցութեան մասին կը զրուի ամիսներէ ի վեր եւ այս առթիւ զանազան ենթադրութիւններ հրապարակ դրուեցան ժամանակին։

Չինացի գործազուրկներու ցոյցը

Առջի առաւօտ մօտ երեսուն չինացի գործազուրկներ Պապիլոն փողոցի չինական դեսպանատունը գացին՝ գործ կամ նպաստ պահանջելու համար։ Պաշտօնեաները եկած չըլլալով, ինդրուեցաւ ժամը 10ին գալ։ Սակայն գործազուրկները չուզեցին մեկնիլ դեսպանատան բակէն եւ դիմադրեցին ոստիկանները, որոնք կ'աշխատէին դուրս հանել զանոնք։ Ասոնցմէ Մա Ֆրիա Շին աւելով սպառնաց ոստիկանի մը, որուն վրայ կոիւ ծագեցաւ ցուցարարներուն եւ ոստիկաններուն միջեւ։ 19 Չինացիներ ոստիկանատուն տարուեցան եւ յետոյ ազատ ձգուեցան, բացի մէկէն որ ինքնութեան թուղթ չունէր։

Դեսպանատունը խոստացած է գործ գտնել 160 չինացի անգործներու, հակառակ պարագային Չինաստան պիտի ղրկէ զանոնք, քանի որ նպաստի յատկացնելիք ղրամ չունի։

Կացութիւնը Չինաստանի մէջ

Շանկայէն առնուած լուրերը կը հաստատեն թէ մարշալ Սըն-Շուան-Ֆանկի զինուորներն ու սպաները կը մերժեն գործակցիլ Շանթունկէն եկած զինուորներուն հետ եւ Սունկքիանկի ռազմաճակատէն կը քաշուին, հակառակ մարշալի գերագոյն ճիգերուն։ Անհնազանդ սպաներէն եւ զինուորներէն շատեր կը միանան ազգայնականներուն։

Շանթունկի կառավարիչ զօր. Շանկ-Ցուն-Շանկ դասալիքներուն տեղ նոր զինուորներ կը փութայ հաւքել, յուսալով փրկել կացութիւնը։ Հակառակ այս նպաստաւոր առիթին, Քանթոնցիները չեն շարունակեր իրենց յառաջխաղացումը այս ուղղութեամբ, խուսափելով միջազգային բարդութիւններ ստեղծելէ։ Անոնք կուիւը դէպի արեւմուտք փոխադրած են՝ Նանքինը գրաւելու եւ Ցէնկցիէնի զինուորներու պարենաւորման խափիսիը կտրելու համար։

Շանկայը շատ լաւ պաշտպանուած է հիմա չին, անգլիացի եւ իտալացի զինուորներով։

Ընդհանուր կարծիքն այն է թէ ազգայնական բանակը մեծ դժուարութեան պիտի մատնուի եթէ փորձէ զայն գրաւել։ 12 հազար օտար զինուորներ կան Շանկայի մէջ, առանց հաշուելու նաւային ջոկատները։

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ ընկերվարականները յարձակեցան կառավարութեան վրայ, որ օտար երկրի մը ներքին գործերուն կը միջամտէ՝ զինուոր ցամաք հանելով հոն։ Չէմպըրլէյն պատասխանեց թէ Անգլիա իրաւունք ունի պաշտպանելու իր հպատակները ամէն տեղ։

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՊՕԼՏՈՒԻՆ ԿԱՆԱՐԳՈՒԻՆ

Ինչպէս գրեցինք, հանքային ծանր աղէտ մը պատահեցաւ Անգլիոյ մէջ, բազմաթիւ բանուորներ ոչնչացնելով։ Զորեքշաբթի կէս օրին, վարչապետ Պոլտուին եւ իր կինը աղէտին վայրը այցելեցին այս առթիւ, բայց թշնամական ցոյցի մը ենթարկուեցան։ Երկուքն ալ գացեր էին ցաւակցութիւն յայտնելու արկածի զոհերուն։ Երբ վարչութեան դրասենեակը մտան, խումբ մը բանուորներ լուռ ու մունջ դիտեցին իրենց անցքը, բայց երբ դուրս ելան, տեսան որ քանի մը հարիւր բանուորներ խմբուած են իրենց ինքնաշարժին բոլորտիքը։ Վարչապետը դիմաւորուեցաւ անհամար սուլոցներով. յետոյ կարգ մը մարդիկ սկսան պոռալ. «Դո՛ւք իշէք հանքերուն մէջ». «Քար մը նետենք սըսոր գլխուն»։ Աղաղակները սաստկացան, եւ զոհերիկ հայհոյանքներ արձակուեցան։ Վարչապետը, նախ զարմացած, շարունակեց ծխել. վերագտաւ սովորական պաղարիւնութիւնը եւ անվրդով մտաւ կառքին մէջ։ Իսկ տիկինը շատ զէշ ազդուած էր, պահ մը նոյն իսկ վախցուեցաւ որ փղձկի, բայց կրցաւ զսպել յուզումը։

Հասկնալի էր այս ցոյցին պատճառը։ Հանքագործներէն շատերը, արկածին մէկ կորսնցուցած են ազգականներ կամ մանկութեան ընկերներ եւ գիշերն ի բուն հսկեր էին անձրեւին տակ եւ չարաչար յոգնած։ Հակառակ այս միջադէպին, Տէր եւ Տիկին Պոլտուին մեկնելէ առաջ այցելեցին ընտանիքի մը որ երկու եղբայրներ կորսնցուցած էր։ Վերջին հաշիւներու համաձայն, զոհերու թիւն է 52, ուրիշ 13 հոգի ալ խղդուած են ողողումներէ։ Մասնագէտները որ եւ է յոյս չունին ողջ գտնելու 28 դժբախտներ, որոնք արկածի պահուն կը գտնուէին անմատչելի խորութեան մէջ։

Ֆրանսայի զին. կազմակերպութիւնը

Երեսփ. ժողովը երէկ սկսաւ քննել պատերազմ. նախարար Փէնլըվէի ներկայացուցած օրինագիծը «պատերազմի ատեն ազգին ընդհանուր կազմակերպութեան» մասին։ Նոր ոչինչ է այն օրինագիծներուն, որոնք կը ձգտին Ֆրանսայի մէջ հաստատել ազգային պաշտպանութեան նոր եւ գիտական դրութիւն մը։ Այս օրինագիծը պատրաստուելու վրայ էր չորս տարիէ ի վեր եւ հիմնուած է մեծ պատերազմի ընթացքին ձեռք բերուած փորձառութեանց վրայ։ Գլխաւոր գիծը այն է որ մեծ պետութեանց միջեւ մղուած արդի պատերազմներուն մէջ պէտք է շարժման մէջ դնել եւ օգտագործել մարդկային և նիւթական բոլոր կարելի միջոցները։ Օրինագիծին Ա. յօդուածը կը տրամադրէ այն հիմնական սկզբունքը թէ պատերազմի ատեն բոլոր Ֆրանսացի քաղաքացիները պարտաւոր են մասնակցիլ երկրին պաշտպանութեան եւ պահպանութեան գործին։

Այս հիմնական սկզբունքէն մեկնելով, օրինագիծը կուտայ այն առաջնորդող գիծերը, որոնց հիման վրայ պիտի կատարուի զօրաշարժը՝ քաղաքային եւ զինուորական ծառայութեանց համար։ Օրինագիծը կ'որոշէ նաեւ խաղաղութեան ժամանակ զինուորական կազմակերպութեան եղանակները այնպիսի ձեւով մը, որ երբ պատերազմ ծագի, կարելի ըլլայ անմիջապէս ձեռք բերել անհրաժեշտ ամէն բան։

Ձգտուած են նաեւ կառավարութեան եւ խորհրդարանին պաշտօնները խաղաղութեան եւ պատերազմի ժամանակ։ Օրինագիծին վիճաբանութիւնը բաւական երկար պիտի տեւէ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԱՑի օդանաւորդ տը փինէտտօ յաջողեցաւ Ատլանտեանը կտրել օդանաւով եւ մարտ 2ին Պուէնոս Այրէս հասաւ։

ՔԻՐԻՆՈՒՄի երէկ նիւ եորք հասաւ եւ մտադիր է Ռուսիոյ կացութեան մասին բանախօսութիւններ ընել միացեալ Նահանգներու մեծ քաղաքներուն մէջ։

ԹԻՐԱՆԱՅի մէջ իտալացի մարզիչ ենթասպայ մը մարզանքի պահուն ապտակեց Ալպանացի զինուոր մը, որ ատրճանակ պարպեց առանց վնասելու։ Ենթասպան սպաննեց զինուորը։ Ասոր վրայ, Ալպանացի զինուորներուն եւ իրենց իտալացի մարզիչներուն միջեւ սկսաւ կռիւ մը, որ շարունակուեցաւ փողոցներուն մէջ։ Գնդացիրներ ալ գործեցին։ Իտալացի հիւրամանատարը մեկնեցաւ քաղաքէն իր բոլոր մարդերով եւ ռազմանիւթերով։

"ՅԱՌԱՋ"Ի ՀԱՆԴԷՍԸ

12 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ ԻԻՆԵՐ, ԺԱՄԸ 8.30ին
ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖԻԻ ՄԷՋ, 184, Boulevard St-Germain
Ցուցադրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերուն
Կը մասնակցին՝ Շահիսաթունի, Երուիչ Նալասարդեան, Մարութեան, Դաշնակահար Ալիքսանեան, պարող Իկար։
ՏՈՄՍԵՐՈՒ ԳԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.։

Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

կիր. Մարտ 6ի գիշեր, 64, R. Rocher, Métro: St-Lazare Ալպէռ Ա. սեծ Թատրոնին մէջ կուտայ իր Դ. եւ վերջին ներկայացումը
ԻԻԹԻՆ ՍՈՒՄԲԱՏՈՎի յայտնի՝
ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ Տիկ. Վիրժինէ Մամուլեանի, Տիկ. Ալէքսանեանի, Երոպահայ թատերախումբի եւ տեղւոյ դերասանուհիներու։ Օր. Ասիա կոստանեանը Ա. արարին կը պարէ հարէմական պար, պարսկական յայտնի Զարկեանը։ Տոմսերու գինը 3—20ֆր.։ Կը ծախուի բոլոր հայկական ճաշարանները։ Կը սկսի 8.15ին, կը վերջանայ ժամը 12ին։

ՅԱՒԻՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. փարիզի Երջանային կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Շավիլի, Վէրսայլի, Սեվռի, Վիրօֆլէյի բոլոր Դաշնակցական ընկերները եւ անոնք որոնք արձանագրուած չեն որեւէ խումբի սէջ վաղը Շաբաթ երեկոյ ժամը 8ին 187 Grand, Rue, Chaville (Pointe de Chavilleի թրամուէյի կայարանին մօտ)։

Հ. Ց. Դ. «Ազատամարտի Սերունդ» խումբի անդամները պայման ժողովի կը հրաւիրուին կիրակի, 6 Մարտ ժամը 2.30ին պէլվիլի ծանօթ հաւաքատեղին։

Հ.Ց.Դ. «Աղբիւր Սերոբ» խումբի դասախօսական ժողովը 6 փետր. կիրակի ժամը 2.30ին, 4 Passage St. Hippolyte, մէթրօ Իթալի։

Հ. Յ. Դ. «Լուսգոն» խումբին ընկ. ժողովը, այսօր Ուրբաթ, ժամը ճիշդ 8ին, 80 Rue Charles Chefson, Bois Colombes.

Հ. Յ. Դ. Զաւարեան խումբի ժողովը այս երեկոյ ժամը 8ին 41 Rue St. Cloud *հայկական ճաշարանը։ Կը հրաւիրուին Պիյանքուր, Մէյսոն եւ Իսի լէ Մուլինօ ապրող բոլոր ընկերները (արձանագրուած կամ ոչ) անպայման ներկայ գտնուիլ։*

Հ. Յ. Դ. Վալանսի Շրջ. կոմիտէի ընդհ. անդամական ժողովը՝ վաղը Շաբաթ երեկոյ, ժամը 8.30ին նոր ակումբի մէջ։

Հ. Ց. Դ. Տէսինի ենթակոմիտէին ընդհ. ժողովը 6 Մարտ, կիրակի, կէս օրէ վերջ ժամը 2ին։ Թիստ կարեւոր օրակարգ։

Հ. Ց. Դ. Քանի (Cannes) նորակազմ «կայծակ» ենթակոմիտէի առաջին վիճաբանական ժողովը կիրակի, 6 Մարտ, կէս օրէն վերջ ժամը 1.30ին ընկ. Ղազար Աիարոնեանի բնակարանին մէջ, Լա Պատի։ Մուտքը ազատ է։

Հ. Յ. Դ. Մարսէյլի Ռոստոմ խումբի անդամական ժողովը՝ կիրակի Մարտ 6, ցորեկէն վերջ ժամը 2ին։ Կը խնդրուի բոլոր ընկերներէն որ առանց բացառութեան ներկայ գտնուին անդամատուրներով միասին։

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիլի մասնաճիւղի ժողովը այսօր Ուրբաթ ժամը 8.30ին 40 Rue de Belleville։

Լիոնի Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները՝ մասնակցութեամբ Տեսինի մասնաճիւղին, կիրակի Մարտ 6ին կէսօրէն յետոյ ժամը 1.30ին Հ.Յ.Դ. նախկին դրադարանը։

ՄԱՐՍԻԼԻՈՅ ԱՄԱՍԻԱՅԻՆԵՐՈՒԻՆ

ՄԱՐՍԷյԼի Ա.մասիոյ Հայրենակցական երկսեռ միութիւնը բարեկենդանի առթիւ ի պատիւ անդամ-անդամուհիներուն կազմակերպած է մեծ հացկերոյթ մը, վաղը՝ շաբաթ 5 Մարտ երեկոյեան ժամը ճիշդ 7.30ին, 63, բիս բէվիւբլիքի վերնայարկը։ Կը հրաւիրուին բոլոր Ամասիացիները։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Խորին շնորհակալութիւններս ընկերներուն, համակիրներուն, բարեկամներուն, քահանայից դասուն, Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներուն, Հ. Մ. Ը. Միութեան եւ բոլոր անոնց՝ որոնք անձամբ կամ նամակով իրենց ցաւակցութիւնը յայտնեցին յաւէտ ողբացեալ ամուսնոյս, Տօքթ. ՀԱՅԿ ՓԻՐՓԻՓՃԵԱՆի մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ Փետր. 13ին Մարսէյլի «Մալվատոս» հիւանդանոցին մէջ։

Մասնաւոր շնորհակալութիւնս Տօքթ. Ռաքըճեանի, որ չորս ամիս խնամեց անձնուիրաբար տարաբախտ ամուսինս, նոյնպէս շնորհակալութիւնս դեղագործ Պ. Նաւարչ Թաշճեանի որ ձրիաբար դեղօրայքը հայթայթեց։

Մարսէյլ Նարկիզ ՓԻՐՓԻՓՃԵԱՆ

ՊՕԼՈՒՑԻՆԵՐՈՒՆ

փարիզի մէջ կազմուած է Պոլուի եւ շրջակայից (Տիւգեֆ, Տէվրէկ-Շամիտիէ, Ջոնկուլտաք եւ Պարթըն) հայրենակցական երկսեռ միութիւն մը, նպատակ ունենալով ներկայիս բարոյապէս իսկ ապագային նիւթապէս ալ օգնել Ֆրանսաբնակ մեր հայրենակիցներուն։

Մանրամասն տեղեկութեանց եւ անհրաժեշտ աջակցութեանց համար գրաւոր դիմել միութեանս քարտուղար Պ. Ղեւոնդ Եղիազեանի. 78 Rue de Sèvres Paris VII։

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

Վիլնէօվ-Տը-Պէրկ, Դ. Ս.— Սկսանք ղրկել։ Համաձայն ենք։
ՄԱՐՄԷՅԼ, Պատ. միութ.— Չէր 24 Փետր. ժողովին ազդը Մարտ 1ին ստացանք։
ՍԷՆ ՓԱՖԷՐՆ, Մ. Ս.— Ստացանք 50 ֆր.։
ՍԷՆ ԼՈՒ, Ա. Թ.— Ստացանք 35 ֆր.։
ՊՕԼԷՆ, Գորձ.— Ստացանք 116,50 ֆր.։
ԼԱՆՍԷՅ, Գորձ.— Ստացանք 70,20 ֆրանք։
ՄԱՐԹԻՒ, Պ. Գ.— Ստացանք 35 ֆրանք։
ԹՈՒԼՈՒԶ, Յ. Տ. Պ.— Սիրով կը հրատարակենք։
Վ.Ո.ԱՆ-ՎԷՆԷՆ, Ս. Գ.— Ստացանք 20 ֆր., կարգադրեցինք։
ԿԱՆԵԻ, Ն. Տ. Մ.— Ստացանք 35 ֆր., սկսանք ղրկել։
ԳԱՇԻՐԷ, Ա. Ս.— Ստացանք 1 անգ.։
ՄԱՐՍԷՅԼ, Վ. Խ.— Ստացանք 53 ֆր.։
ՔԱՆՏԻԱ, Ա. Մ.— Ստացած ենք։
ՍԷՆ ՇԱՄՕՆ, Յ. Գ.— Պէտք չկայ։
ԼԱ ՍԷՃՆ-ՍԻՒՄՄԷՌ, Ե. Ե.— Ստացանք 70 ֆրանք, կարգադրեցինք։
ԼԻՈՆ, Գ. Մ.— Ստացանք 35 ֆրանք։
ՔՐԷՕԶՕ, Գ. Ա.— Ստացանք 15 ֆրանք։
ԹԱՒԻՐԻԶ, Հ. Ա.— Ստացանք 1000 ֆր.։
ՔԱՄՄԱՐ, Տօքթ. Խ. Տ.— Ստացանք 75 ֆրանք։

ՇՈՒՐՋԱԿԱԼԻՔ

Մայրամուտը գաւառներէն կը խնդրուի մէկ օր ԱՌԱՋ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել յամապատասխան օրուան։

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՎԱՃԱՌԱՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դաշնակցութեան Վաճառանի նոր ակումբ ընթերցարանի հասցէն է 26 Bld. Vauban, բայց է շաբթուան երկուշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը երեկոյեան ժամը 8էն մինչեւ 10ը, իսկ կիրակի օր առաւօտեան ժամը 10էն մինչեւ 12։ Հայ հասարակութիւնը կրնայ օգտուիլ սոյն պատեհութենէն, ակումբին մէջ կը գտնուին ամէն տեսակ թերթեր եւ դրքեր ընթերցման համար։

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

123 Bld. Sébastopol, 123
(Métro: St. Denis և Réaumur)
ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ
Ջերմամիզութեան, Ֆրանկա տի, արիւնի եւ մորթային հիւանդութեանց։
Բժշկական տարբեր ուժեր
Ամէն օր ժամը 9—12 և 2—8, կիրակի՝ 9—12։
Ժողով դրական գիներ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մանաւորապէս լուսաթեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենադարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Ղեւոնեանի ՖՐԱՆԿՕ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ
15 բիւ տէ Տօմինիքէն

ՎԱՌԱՆ

սեռնեակները խոնով փոխսին։ մել՝ Մելքիս Նշանեանի, 2 Ave du Docteur Leray, 36 Rue mesmeի մօտերը, Paris 13 մէթրօ Իթալի։

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԳՈՐԾ 7000 ՖՐԱՆԿՈՎ

Կը ծախուի պոլսական լայսմաքի, թուլում պանիրի ճերմակ պանիրի գործքը շինելու արհեստն ալ սորվեցնելն եւ եղած ապրանքը տուրելու դիւրութիւններ ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք զուտ շահ։ Մել «Յառաջ»ի վարչութեան։

ԱԿԱՆՐԱՆ

3 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Սթերլին,	L. St.	
Տոլար,	Dollar	
Մարք (ոսկի) 100	Mark	
Թրքական ոսկի	L. Trq.	
Թրք. ոսկի	» or	
Մէճիտիէ	Médjidié	
Լէվա 100 հատ	Léva	
Տրահմի »	Drachme	
Լիր »	» Lire	
Պելճ. ֆրանք »	Frc. Belge	
Ջուից. »	Frc. Suisse	
Լէյ 100 հատ	Ley	
Ջերվոնեց	(10 Roubles or)	

ԱՐԺԵԹԱԻԻՂԹ

Եգ. Գր. Ֆոնսիէ	1 Cr. Fonc. Eg.	
»	II »	
»	III »	
Ռումելի երկաղ.	Lots turcs	

Comptoir Parisien de change et de C
80, Rue Lafa

IMPRIMERIE - MASSIS - ÉDI
208bis, Rue Lafayette Paris

Le Gérant : H. TEURN

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՆԱՆԱՅԻՑ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30_7.30— կիրակի եւ տօն օրեր 9_12

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՓՐԱՆՍԱՀԱՅԵՐՈՒՆ
Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ։ Թարգմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով։ Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ։
ԱՐԱԳ ՁԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՐԱՆՍԱ ՄԵՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
VAHAN YARJANIAN
CONTENTIEUX
5 Rue Cardinal Mercier Paris, (9e)
Tél. CENTRAL 96-70 կամ 97_39 Métro: CLICHY
» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ
Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9_12 և 2_7 բացի կիրակի։

ՊԻՅԵԱՆՔՈՒՒՐ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ

ՁԱՇԵՑԷՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՁԱՇԱՐԱՆԸ
ՆԱԽԿԻՆ ՄՈՍԿՈՒԱ—ԿՈՎԿԱՍ
41 Rue de St. Cloud *կամ* 30 Rue Nationale
3.75 *Ֆրանքի Համեղ եւ մաքուր ճաշ*
Քրի առատ հաց

ՀԱՅՀ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵՐԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն { 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՇԱԲԱԹ 5 ՄԱՐՏ 1927

5 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 277

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԽԵԼՔ ԾԱԽԵԼԷ ԱՌԱՋ

Առաւօն կանուխ արթնցողը իմաստութիւն կը ծախէ այս անճար ժողովուրդին, որ չի գիտեր թէ ո՞ւր է իր գլուխը։

Վերջին օրինակը՝ Սուրիոյ գաղթականներուն տեղաւորման խնդիրը։

Իրենց իսկ պատմութեան համաձայն, Դամասկոսի, Հալէպի եւ իսկէնտէրունի կայաններուն մէջ խռնուած 15,000 հայ գաղթականներ պիտի տեղաւորուին Տիւրի՛։ (Տիւրոս), Սիդոնի եւ իսկէնտէրունի մէջ, Ազգերու Դաշնակցութեան նախաձեռնութեամբ։ Մարդ գլուխ պիտի տրուի 6 անգլ. ոսկի։ Ամբողջ ծրագրին գործադրութեան համար նախատեսուած է 120,000 սդերլին, որուն 25,000ը վճարած է Ֆրանսա, խոստանալով յանձնել 25,000 եւս։ Ա. Դ. Աշխատանքի Գրասենեակը յանձն առած է 3,000, Լոնտոնի Լօրտ Քաղաքապետի ֆօնտը՝ 5,000, իսկ պակսած 62,000ը պիտի ճարուի Անգլիոյ մէջ։

Եւ ահա քրիստնէլիւններ։— Ինչո՞ւ այդպէս կ՚ընեն, ինչո՞ւ Սուրիոյ մէջ կը տեղաւորեն գաղթականները, փոխանակ Հայաստան ղրկելու. ինչո՞ւ չեն բանակցիր հայկական կառավարութեան հետ եւ անոր չեն յանձներ այդ 120,000 սդերլինը եւն.։

Ամէն թիւրիմացութիւն կամ քսութիւն կանխելու համար, ըսենք անմիջապէս որ, ոչ ոք դաշնակցական մամուլին չափ ուժգնօրէն եւ հետեւողականութեամբ պահանջած է ցիւրուցան բազմութիւնները տեղաւորել Հայաստանի մէջ։ 1921էն ի վեր, անընդհատ կ՚արծարծուի այս պահանջը։ «Հոդ չկայ, փոդ չկայ» պոռացողներուն ալ պատասխանը տրուած է օրը օրին, փաստերով եւ թուանշաններով։ Եւ այս՝ հակառակ արդէն փոխադրուած գաղթականներու դառն յուսախաբութեան։ «Դրօշակ»ի վերջին (Մարտ) թիւին մէջ, երեւանէն գրուած թղթակցութիւն մը տխուր գոյներով կը նկարագրէ գաղթականներու վիճակը։

— «Ընդհանուր առմամբ բոլորն էլ դժգոհ են իրենց վիճակից. անիծում ենայն օրը եմ եկան խորհրդային Հայաստան։ Անիծում են, որովհետեւ խորհրդային գործակալները շատ վառ գոյներով էին ներկայացրել ամէն ինչ, մեծ-մեծ խոստումներ էին արել... Իրենց սպասածի եւ երազածի՝ տաններորդ մասն անգամ չգտան եւ չտեսան.սկսել են արդէն իրենց տան գոյքերը ծախել եւ դրանով ապրիլ։ Եղել են հարիւրաւոր դիմողներ, որոնք ցանկութիւն են յայտնել վերադառնալ նախկին տեղերը, բայց խորհրդային կառավարութիւնը մերժել է անցագիր տալ»։

Այս կարգի բազմաթիւ փաստեր կան տակաւին, որ լոյս աշխարհ չեն տեսներ։ Բայց եւ այնպէս, ներգաղթը պէտք չէ կասի եւ դուռները պէտք է լայն բացուին։ Այս մասին երկու խօսք չկայ։

Արդ, անոնք որ խելք սորվեցնելու ելեր են, ուրկէ՞ կու գան, ջղացքէ՞ն թէ չհրատէն։ Անոնք չե՞ն գիտեր որ Երեւանի չինովնիկները, ապիկար կամ անզգայ, ամուր փակած են բոլոր կղպանքները, գաղտնի խեղկատակութեան մը վերածելով ներգաղթի գործը։

Եթէ մոռցեր են ուրիշ բան, գոնէ չե՞ն յիշեր որ, տակաւին անցեալ տարի, երբ խոր մտահոգութիւն կը պատճառէր Սուրիոյ վիճակը, մասնաւոր ժողով մը գումարուեցաւ Փարիզի մէջ, իրենց ընկերներուն հետ մէկտեղ, եւ առաջարկուեցաւ Հայաստան փոխադրել գոնէ 5—10,000 գաղթական, ամէնէն վտանգուած շրջաններէն։ Ո՞վ էր լսողը։

Ո՞վ էր լսողը, այսօր իսկ, երբ ամէն կողմէ, Պուլկարիայէն, Յունաստանէն, Սուրիայէն, Նոյնիսկ Ֆրանսայէն մէկ ձայն կը լսուի, աւելի քան որոշ եւ բարձր,— Բացէք դուռները, որպէսզի երթանք մեր հոդերը շէնցնենք, փոխանակ օտար ափերու վրայ ճիւրելու։

Այս կացութեան մէջ, ի՞նչ կ՚արժեն իմաստութեան խորհուրդները, այն ալ ուղղուած՝ օտարներուն։ Մենք շատ լաւ գիտենք որ անոնք, օտարները, քաղաքագէտ կամ մարդասէր, պարզապէս կ՚ուզեն հաշուեյարդարի ենթարկել հայ եւ ռուս գաղթականներու գործը։ Եւ որովհետեւ չեն կրնար կամ չեն ուզեր լեզու գտնել խորհրդային իշխանութեան հետ, կը շարժին համաձայն իրենց հայեցողութեան եւ շահերուն։ Անոնք ջուրը ձգեցին Նանսէնի ծրագիրը, ոչ թէ «Դաշնակ»ներուն դառնութեամբ, ինչպէս կը գրուի ու կը խօսուի անամօթաբար, այլ պարզ այն պատճառով որ իբրեւ քաղքենի՝ անբաւական կը գտնէին Հայաստանի փոխադրութեան համար տրուած երաշխաւորութիւնները։ Ուրիշ խօսքով, «Հայաստանը դուրս կը մնայ ամէն օրէնքէ յաչս դաշնակից պետութեանց եւ Ազգերու Ընկերութեան» (Երեւան, 2 Մարտ)։

Եւ հիմա, կը հարցնենք նորէն — ինչո՞ւ զարմանալ որ Դամասկոսի եւ Հալէպի կայաններու գաղթականները տուն տեղ կ՚ըլլան, կամ ուրիշներ ալ, ճարահատ, կ՚ուզեն երթալ Սուրիա եւ Լիբանան, իրենց հայրենիքէն զլացուած ափ մը հող այնտեղ գտնելու։ Երեւանը կամ Մոսկուան կամք ունի՞ն խօսքէն գործի անցնելու եւ կարճ կապելու թափառական ժողովուրդին տառապանքները։ Թո՛ղ հրամեն ասպարէզ։ Անգլիոյ հանքագործներուն համար հեռագրով հարիւր հազարաւոր սդերլին փութացնող իշխանութիւն մը ոչ հարիւր քսան հազարի կամ նման հանգանակութեան, ոչ ալ Նանսէնեան ծրագրի պէտք ունի, եթէ անկեղծօրէն հայ ժողովուրդին բարիքը կ՚ուզէ։

Մանաւանդ որ, հայ գաղթականութեան տեղաւորումը իր հայրենի հողին վրայ՝ իսկապէս աշխատաւորական խնդիր մըն է։ Քիչ մըն ալ ա՛յս ուղղութեամբ թող մտածեն, խելք ծախելէ առաջ։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԱՌԱՆՑ ԽՏՐՈՒԹԵԱՆ

Մարսիլիոյ «Հայ Միրտ»ը, անկուսակցական, կը զարմանայ որ նոր ընտրութիւններու առթիւ, առաջնորդարանը հրաւէր ուղղած է միայն «Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ պատկանող ժողովուրդին»։

— «Մեր տեղական գաղութը ասկէ առաջ իր պատրաստած կանոնադրին մէջ բոլորովին խուսափած էր այդ կարգի անմիտ խտրականութենէ մը. իսկ մեր կրօնական իշխանութիւնը կուգայ մեր բողոքական կամ կաթոլիկ արիւնակից եղբայրներուն ըսելու թէ «Դուք իրաւունք չունիք հայ կոչուելու. հայ են միայն անոնք որ կ՚ընդունին Հայաստանեայց առաքելական եկեղեցին»։ Մի՞թէ կրնաք երեւակայել ասկէ աւելի արտառոց անհեթեթութիւն մը։ Մեր եկեղեցին շատ առաջ ունեցած ենք Հայաստան մը ու հայ ազգ մը։ Եւ ճիշտ այս իսկ պատճառով, մենք դէմ ենք որ մեր ազգային գործերը յանձնուին եկեղեցական իշխանութեանց, որոնք յայտնօրէն, փաստօրէն դէմ կ՚ընթանան մեր ազգային շահերուն։

«Հայ ժողովուրդը այլեւս չուզեր իր ազգային ու հանրային գործերը կրօնական ճիւղաւորումներով պառակտել, ծուխ ծուխ ընել։ Կրօնական դանդաղութիւնները եկեղեցիներէն ներս կը հասկնանք. ուրիշ ոչինչ. ազգային իշխանութիւնները զուտ եկեղեցական հոգաբարձութեանց հանդամանքով պէտք չէ ընդունինք, այլ ընդհանուր։ Կարելի է, լոկ եկեղեցական գործերու մատակարարման համար, յատուկ մարմին մը ունենալ, Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ զաւակներէն միայն բաղկացեալ. բայց ազգային վարչութիւնը պէտք չէ ճանչնայ կրօնական խարիսխ։ Ոչ ոք իրաւունք կուտայ մեզ մեր կաթոլիկ, բողոքական կամ ազատական արիւնակիցները հայութենէ զրկելու։»

ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՄՐՑՈՒՄԸ.— Երեւանի Շարժանկարի Ընկերութիւնը մրցում մը բացած է հայկական շարժանկար—պատկերախաղի մը պատրաստութեան համար։ Նիւթը պիտի առնուի միայն 1920—1921 տարիներու Հայաստանեան «յեղափոխական շարժումներ» ուղեկցերէն եւ պիտի տրուի գեղարուեստական գունաւորում։

Նիւթերը պէտք է ներկայացուին մինչեւ Յուլիս 1։ Հեղինակը պիտի առարաղէ ծածկանունով, եւ իսկական անունը պիտի ներկայացնէ գոց պահարանով։ Ընդունուած պատկերախաղերը պիտի վերադարձուին։ Իսկ անոնք որ մրցանակի չեն արժանանար եւ սակայն իբրեւ յաջող կարելի է ներկայացնել, երբորդ մրցանակի գինով վարձատրուելու պայմանով, պիտի մնան ընկերութեան տրամադրութեան տակ։

Ա. մրցանակ սահմանուած է 1000 րուբլի, Բ. մրցանակ՝ 500 րուբլի, Գ. մրցանակ՝ 300։

Մրցանակ շահած պատկերախաղերու համար ներկայացումներու պահուն հեղինակի իրաւունք չի տրուիր։

Ժիւրիին կ՚անդամակցին Ա. Յովհաննէսեան, Ա. Մոուեան, Ա. Կարինեան, Դիւլլի Բէօխվեան, Դ. Դգնունի, Հ. Բեկնազարեան եւ Ա. Հախումեան։ Հասցէ՝ Երեւան, Տէրեան փողոց, 2։

ՕՐԸ ՕՐԻՆ

Անգլիա եւ պոլշեւիկները

Անգլիական խորհրդարանին մէջ առջի օր կարեւոր վիճաբանութիւններ տեղի ունեցան անգլեւոռւս վերջին միջադէպին մասին։ Ագատական երեսփոխան սըր Սիմքլէր Թուանշաններով փաստեց թէ Անգլիա ոչ մէկ շահ ունի խորհրդային Միութեան հետ իր յարաբերութիւնները խզելու մէջ։ Բաղդատելով Անգլիոյ առեւտուրը Չինաստանի եւ Ռուսիոյ հետ, Սիմքլէր յայտնեց թէ վերջին տարիները Անգլիա աւելի շատ առեւտուր բրած է Ռուսիոյ քան Չինաստանի հետ։ Ու հրաւիրեց սըր Չէմպըրլէյնը լաւ մտածել՝ Ռուսիոյ հետ յարաբերութիւնները խզելու խօսք ընելէ առաջ։ Ագատական երեսփոխանը իրրեւ բողոք կառավարութեան դէմ՝ առաջարկեց հարիւր ոսկի զեղչել արտաքին նախարարին ամսականէն։ Այս առաջարկը մերժուեցաւ 146ի դէմ 271 ձայնով։

Պահպանողական սըր Ռոպերթ Հօրն պաշտպանեց Ռուսիոյ հետ յարաբերութեանց խզման տեսակէտը եւ ըսաւ թէ Անգլիայէն աւելի Ռուսիան է որ պիտի տուժէ անկէ։

Չէմպըրլէյն խօսք առնելով յայտնեց թէ «կառավարութեան քաղաքականութիւնը կը ձգտի աշխարհի մէջ խաղաղութիւնը ամրապնդելու եւ խռովարար ու կասկածելի տարրերը վանելու։ Ռուսիոյ հետ յարաբերութեանց յանկարծական խզում մը իր հակազդեցութիւնը պիտի ունենար ամբողջ Եւրոպայի եւ Արեւելքի մէջ։ Մենք պարզապէս պահանջեցինք Մոսկուայէն որ համաշխարհային յեղափոխութեան համար ջանքեր չընէ եւ մեր ներքին գործերուն չխառնուի։ Անվիճելի է որ սովետները ուրիշ երկիրներու ներքին քաղաքականութեան կը միջամտեն։ Այս պայմաններուն տակ ի՞նչ օգուտ պիտի ունենար նոր համաձայնութիւն մը կնքել. որպէս զի երկու տարի վերջ ինծի ըսեն թէ ապո՞ւշ էի հաւատալով խորհրդային կառավարութեան խօսքին լրջութեան։ Մինչեւ ե՞րբ պիտի հանդուրժենք հանդիսաւոր յանձնառութեանց դրժումներուն. մինչեւ ե՞րբ դիւանագիտական յարաբերութիւններ պիտի պահենք երկրի մը հետ, որ մեզ կ՚անարգէ»։

Ընկերվարական պետ Մաք Տոնալտ «քան զՊասն պապական» գտնուեցաւ եւ ըսաւ. «Ուրախ եմ որ արտաքին նախարարը ծանուցագիր մը ղրկած է Ռուսիոյ։ Միայն թէ այդ բանը երկու տարի առաջ պէտք է ընէր։ Չեմ վարանիր ըսելու որ եթէ տակաւին վարչապետ եղած ըլլայի, Ռուսիոյ դէմ իմ բողոքի ծանուցագիրս աւելի կանուխ եւ աւելի խիստ ոճով կը խմբագրէի»։

Ագատականներու պետ Լոյտ Ճօրճ անտեղի գտաւ Ռուսիոյ ուղղուած խզման սպառնալիքը եւ աւելցուց որ եթէ այդպիսի ծանուցագիր մը Ֆրանսայի, Իտալիոյ, Գերմանիոյ կամ Ամերիկայի ուղղուած ըլլար, այնպէս պիտի կարծուէր թէ Անգլիա պատերազմ պիտի հրատարակէ այդ երկիրներուն դէմ։ Նախկին վարչապետը թելադրեց չխզել Ռուսիոյ հետ, այլ նոր դաշնագիր մը կնքելու մասին բանակցիլ։ Նոյն իմաստով արտայայտուեցաւ նաեւ աշխատաւորական Մնօտըն։

Ժողովուրդը կը հանդարտցնեն

Մոսկուայէն հեռագիր մը կ՚ըսէ.— Պոլշեւիկեան կարգ մը վարիչներու, մանաւանդ պատերազմական գործավար Վորոշիլոֆի ահաբեկող ճառերը, որոնք մօտալուտ ցոյց կուտային պատերազմ մը, խոր սարսափի մատնած էին բնակչութիւնը։ Բազմաթիւ քաղաքներու եւ գիւղերու մէջ բնակիչները ուտելիք եւ ամէն կարգի ապրանքներ մթերած էին, աւելի եւս շեշտելով գիներու բարձրացման տագնապը։ Միաժամանակ, որոշ դժգոհութիւն կը տեսնուէր ժողովուրդին մէջ, որ բնաւ չի փափաքիր մղուիլ պատերազմի մը մէջ, որուն պատճառով երկրին մէջ դարձեալ ծայրայեղ միջոցներ ձեռք պիտի առնուին։

Այս չդագրգռութիւնը հանդարտեցնելու եւ իր հիւանդութեան ծանրութեան մասին շրջած լուրերը մեղմացնելու համար, Սթալին ճառ մը խօսեցաւ Մոսկուայի երկաթուղիի աշխատաւորներու մէկ ժողովին մէջ։ Պատերազմի մը հաւանականութեան մասին իրեն ուղղուած բազմաթիւ հարցումներուն պատասխանելով, Սթալին յայտարարեց թէ ներկայ տարուան ընթացքին չի կարծեր որ պատերազմ տեղի պիտի ունենայ Խորհրդային Միութեան դէմ, թէեւ կացութիւնը միշտ սպառնալից է։

Իր ունկնդիրները ապահովցնելու համար, հաստատեց թէ խորհրդային կառավարութիւնը կը հետապնդէ խաղաղասէր քաղաքականութիւն մը, որ դժուար կը դարձնէ պատերազմը։ Կարգ մը ունկնդիրներ, հարցուցին թէ Գ. Միջազգայինի պրոպագանտը կռիւի առիթներ չի՞ ծնցներ, Սթալին բացատրեց թէ շնորհիւ այդ պրոպագանդին, արեւմտեան Եւրոպայի բանւորները պիտի հակառակին որ այդ երկիրները պատերազմ յայտարարեն Խորհրդային Միութեան դէմ։

Սուրիոյ հրամանատարը Ֆրանսա եկաւ

Հինգշաբթի օր «Լամարթին» շոգենաւով Մարսիլիա եկաւ Սուրիոյ Ֆրանսական հրամանատար Զօր. Կամլէն, իր սպայակոյտի պետ հազարապետ Ժանէլի ընկերակցութեամբ։ Զօրավարը, որ արձակուրդով Ֆրանսա պիտի մնայ ամէն մը, կը

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՀԱՅԵՒՊՈՒԼԿԱՐ ՄԻՈՒԹԻՒՆ ՄԸ

Սօֆիայի «Աբագա»էն կ՚իմանանք թէ, քանի մը պուլկար եւ հայ գործիչներու նախաձեռնութեամբ, կազմուած է հայեւպուլկար մերձեցման կոմիտէ մը։

Նոր մարմնին առաջին ժողովը տեղի ունեցաւ փետր. 27ին, Սօֆիայի մէջ։

Պուլկարներէն ներկայ էին շատ մը հանրային ծանօթ գործիչներ, նախկին ներքին նախարար Ջօր. Բուսեվ, կառավարական կուսակցութեան առաջնակարգ դէմքերէն փաստաբան եւ երեսփոխան Վլատիմիր Թաքեվ, շամլսարանի դասախօսներէն պատմաբան փրօֆ. Ֆացարով, նահանգային խորհրդական պ. Տանքով, փաստաբան Քոնսթանթինով, մակեդ. ազգ. կոմիտէէն Վլ. Պուլեվ, մակեդոնական ծանօթ գործիչ պ. Լիափով, Սօֆիայի առեւտր. սենեակի վարչութեան անդամ փոփով, ելեւմտագէտ պ. Ալեքսիեվ ու նաեւ ժողովին նախաձեռնողներէն պ. Վելեվ եւայլն։

Ժողովը բացաւ պ. Վելեվ, ողջունելով ներկաները եւ յայտնելով նպատակը, ըսաւ թէ նախաձեռնող յանձնախումբը հայեւպուլկար մերձեցման միութեան համար պատրաստած է արդէն ծրագիր-կանոնագիր մը։

Միաձայնութեամբ ժողովին նախագահ ընտրուեցաւ փաստաբան պ. Մեսրոպ Սուրատով, իսկ քարտուղար պ. Վելեվ։

Պ. Սուրատով ընդունելով նախագահութիւնը, յայտնեց թէ սխալ կ՚ըլլար ըսել որ այստեղ հաւաքուած ենք կատարելու հայեւպուլկար մերձեցման կոմիտէ մը։ Այդ մերձեցումը դեռ Պուլկարիոյ ազատագրութենէն առաջ կար։ «Այսօր մեր պարտքն է կազմակերպութեամբ մը նուիրագործել մերձեցումը եւ անոր տալ շօշափելի բնոյթ մը։»

Ցետոյ խօսք առաւ ընկեր Գաբրեգին Նժդեհ, որ պուլկարերէն ճառով մը պարզեց երկու ժողովուրդներուն անկեղծ եւ անշահախնդիր կապը։

Յիշեց թէ ոչ մէկ ժողովուրդ այնքան լաւ կ՚ըմբռնէ ու կը հասկնայ իրարու ցաւերն ու տառապանքները ինչքան հայն ու պուլկարը, երկուքն ալ անցած ըլլալով տառապանքի միեւնոյն ճամբէն։

Պ. Ալեքսիեվ ըսաւ թէ ուրախ է միեւնոյն յարկին տակ տեսնելով երկու եղբայր ժողովուրդներու գաւակները, օգտակար գործի մը համար։

Պ. Պարոյր Տիրանով իբր օրինակ յիշեց 1896ի ջարդերը, երբ Պուլկարիա եղաւ այն միակ պետութիւնը որ լայնօրէն բացաւ իր դռները, հալածական հայութեան առջեւ։

Ցետոյ խօսք առաւ փրօֆ. Ֆացարով եւ իբրեւ պատմաբան նկատեց թէ կարծուածէն շատ աւելի հին է հայեւպուլկար կապը։ Այդ կապը, ըսաւ ան, ոչ միայն քաղաքական ու բարոյական է, այլ ունի նաեւ ցեղագրական արմատներ։ Ցարգելի փրօֆէսօրը յիշեց թէ հայերուն նախահայրերը մեկնած են հարաւ. Մակեդոնիայէն, անցած են փոքր Ասիա, ի վերջոյ միացած են Ուրարտացիներուն հետ եւ դարերու հոլովումին մէջ խառնուելով զանազան ցեղերու հետ, կազմած են այժմու հայութիւնը։

Ամէնէն վերջը պ. կ. փէչէեան կարդաց բանաստեղծ Եագորովի յիշատակին նուիրուած գրութիւն մը։

Կեդր. վարչութեան անդամներուն մէջ կը գտնուին հայերէն՝ պ. պ. Մուրատով, Գ. Նժդեհ, Շմ. Թունեան, Պարոյր Տիրանով, Արտաշէս Չալըշեան, Մնիկ Թ. Յովհաննէսեան, Տոքթ. Զարեհ Պոյաճեան։ վերատուգիչ յանձնախումբին մէջ՝ պ. պ. Արամ Յակոբեան եւ Թաչիկ Կարապետեան։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՒԿՐԱԻՆԱ

ՍՍՀՄ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ուրախ, վերելքի մեջ գտնվող մի ժողովուրդ։ Ուրախ՝ որովհետև ինքն է իր ճակատագրի տերը։ Ուրախ՝ որովհետև ինքն է ստեղծում իր երջանիկ կյանքը։ Ուրախ՝ որովհետև ինքն է ղեկավարում իր պետական, տնտեսական, մշակութային շինարարությունը։ Ուրախ՝ որովհետև ինքն է ընտրում իր ներկայացուցիչներին, ինքն է նրանց ուղարկում Խորհուրդների տարբեր մակարդակների իշխանության մարմինները։ Ուրախ՝ որովհետև ինքն է ստեղծում իր սեփական, խորհրդային մշակույթը։ Ուրախ՝ որովհետև ինքն է ղեկավարում իր ազգային պետականության զարգացումը։

Ուկրաինական ԽՍՀ-ն ունի 28 միլիոն բնակչություն։ Ուկրաինական ԽՍՀ-ն ունի 28 միլիոն ազատ մարդիկ, որոնք ոչ ոքի չեն ենթարկվում, բացի իրենց ընտրած իշխանությունից։ Ուկրաինական ԽՍՀ-ն ունի 28 միլիոն մարդ, որոնք ոչ ոքի չեն ենթարկում, բացի իրենց ընտրած իշխանությունից։

Ուկրաինական ԽՍՀ-ն ունի 28 միլիոն մարդ, որոնք ոչ ոքի չեն ենթարկում, բացի իրենց ընտրած իշխանությունից։ Ուկրաինական ԽՍՀ-ն ունի 28 միլիոն ազատ մարդիկ, որոնք ոչ ոքի չեն ենթարկվում, բացի իրենց ընտրած իշխանությունից։

Ուկրաինական ԽՍՀ-ն ունի 28 միլիոն ազատ մարդիկ, որոնք ոչ ոքի չեն ենթարկվ

ԴՎՏԻ

ՎԱՉԱՌԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

— Ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ տեղի է ունեցել Ձեր տան մեջ, ինչ որ տեղի է ունենում հիմա, ինչ որ տեղի կունենա վաղը... Ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ տեղի է ունեցել Ձեր տան մեջ, ինչ որ տեղի է ունենում հիմա, ինչ որ տեղի կունենա վաղը... Ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ տեղի է ունեցել Ձեր տան մեջ, ինչ որ տեղի է ունենում հիմա, ինչ որ տեղի կունենա վաղը... Ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ տեղի է ունեցել Ձեր տան մեջ, ինչ որ տեղի է ունենում հիմա, ինչ որ տեղի կունենա վաղը...

—

խուսափի ո եւ է յայտարարութիւն ընել Սուրիոյ կացութեան մասին: Մարզպանին եւ ընդհանուր հրամանատարին միաժամանակ Սուրիայէն բացակայութիւնը ցոյց կուտայ թէ կացութիւնը լաւ է Սուրիոյ մէջ:

Ռուսեւրուրդ հաւաձայնութիւնը

Գրեցինք թէ առեւտրական դաշնագիր մը կնքելու համար Խորհրդային Միութեան եւ Թուրքիոյ միջեւ երկար ատենէ ի վեր կատարուած բանակցութիւնները վերջ գտած են եւ դաշնագիրը պիտի սորագրուի շուտով: «Թայմզ»ի Էնկիւրիի թղթակիցը կը հաստատէ այս լուրը եւ կ'ըսէ թէ երկուստեք զիջումներ եղած են համաձայնութեան մը յանգելու համար: «Կը յուսացուի որ այս դաշնագրին շնորհիւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ առեւտուրը մեծապէս աւելնայ: Գալով խորհրդային առեւտրական գործակալներուն դիւանագիտական անձեռնմխելիութիւն վայելելու խնդրին, այստեղի պատասխանատու շրջանակները կը վախնան որ մեծ վտանգներ ծագին անկէ, քանի որ անոնք այս կերպով պիտի կրնան համայնավարական քարոզութիւններ կատարել»:

Ծոյներու ցոյցը Ալպեր Թոմայի դէմ

Ժրնեւի Աշխատանքի Միջազգային Գրասենեակի տնօրէն եւ յայտնի ընկերվարական Ալպէր Թոմա ներկայիս ճամբորդութիւն մը կը կատարէ Պալքանեան երկիրներու մէջ, գաղթականներու վիճակը քննելու եւ կարգ մը բանւորական օրէնքներու քուէարկութիւնը ապահովելու նպատակով: Հինգշաբթի առաւօտ երբ Ա֊Էնք հասաւ, յոյն համայնավարները թշնամական ցոյց մը կատարեցին իրեն դէմ: կառավարութիւնը նախապէս արգելիչ միջոցներ ձեռք առած ըլլալով, ցուցարարները չյաջողեցան ո եւ է ցաւալի միջադէպ յարուցանել: Իր Ա֊Էնք բնակութեան ընթացքին, ոստիկանական մարմին մը պիտի պաշտպանէ դինքը:

Երկարուղիի արկածներ Կովկասի մէջ

Թիֆլիսէն կը հեռագրեն մարտ 3 թուականով.—

Անդրկովկասեան երկաթուղագծին վրայ կատարուած արկածները յաճախադէպ դարձած ըլլալով, խորհրդային կառավարութիւնը որոշեց այսուհետեւ պատժել ո՛չ միայն պատասխանատու ճարտարագէտներն ու մեքենավարները, այլ բանտարկութեան խիստ պատիժներ սահմանել նաեւ այն բոլոր բարձրաստիճան պաշտօնատարներուն, որոնք ո եւ է կերպով յանցանք կ'ունենան երկաթուղային արկածներու մէջ:

«Զինուորեալ ազգ»ի կազմակերպութիւնը

Ինչպէս գրեցինք, երեսփ. ժողովը առջի օր զբաղեցաւ զինուորական կազմակերպութեան նոր օրէնքով: Նախ խօսեցաւ զինուորական յանձնաժողովի նախագահ Ա. Ալբէք ժէրօ, որ յայտնեց թէ ժողովին ներկայացուածը «մեծ օրէնք» մըն է, մտածուած, ամենաբարձր հեղինակութիւններու հաւանութեան արժանացած եւ մեծ պատերազմի փորձառութեան լոյսով լուսաւորուած: Այս օրէնքը «ազգային պաշտպանութեան նոր Սահմանադրութիւն»ն է եւ ցոյց կուտայ վճռական կամքը ժողովուրդի մը, որ կը փափաքի իր բոլոր կենդանի ուժերը իր պաշտպանութեան ի սպաս դնել:

Յետոյ խօսեցան Ժան Ֆապրի, Էմիլ Պօրէլ, պատերազմ. նախարար Փէնլեվէ, Ալպէր Մէօնիէ, Ֆէրտինան Ֆօր եւլն.: Համայնավար երեսփոխան Ռընօ Ժան բուռն կերպով յարձակեցաւ այս օրէնքին դէմ, ու մասնաւորապէս քննադատեց զեկուցաբեր Փօլ Պօնքուրը, յայտնի ընկերվարական գործիչ: Յետոյ խօսեցան ընկերվարական երեսփոխաններ Փիէր Ռընօտէլ եւ Փօլ Պօնքուր: Մասնաւորապէս ծափահարուեցաւ այս վերջինին ճառը:

Գործագրկութեան տագնապը

Երկրի պաշտօնաթերթին հրատարակած վիճակագրութեան համաձայն, մինչեւ Մարտ 3 արձանագրուած նպաստընկալ գործազուրկներու թիւն էր 80,941 հոգի, որոնց 59·412ը այր եւ 21,529ը կին. անցած շաբաթ ասոնց թիւն էր 79,689, որով մէկ շաբթուան մէջ աւելցած է 1252 հոգի: Միայն Փարիզի եւ Սէն նահանգի գործազուրկներու թիւն է 61,484: Վերջին շաբթուան ընթացքին գործ հայթայթուած է 20,147 հոգիի: Ֆրանսա մտած հինգ նոր օտար աշխատաւորներ ճարտարարուեստի մէջ գրուած են: Գործ տրուած է Ֆրանսա բնակող 1270 օտար աշխատաւորներու, 517 հոգիի Աշխատանքի նախարարութեան եւ 753 հոգիի՝ տեղաւորման գրասենեակներու կողմէ:

Վերջացող շաբթուան մէջ Ֆրանսա մտած են 20 իսկ մեկնած են 1918 օտար բանւորներ: կարելի չէ եղած գոհացում տալ 95,362 անգործներու, որոնք գործ կը պահանջէին, ասոնց 66,778ը Սէն նահանգին մէջ կը բնակին: Անցած շաբաթ ասոնց թիւը 2000 աւելի էր:

Հղյակաւոր Թորգոմի գործերեն

Փետրուար 22ի Սելանիկի յունարէն թերթերը գանագան խորագիրներու տակ կը հրատարակէին լուր մը, որուն համաձայն «զօրավար» Թորգոմ, իբրեւ «քաափառաշրջիկ, փրօփականտիսթ եւ դրամաշորթ» ամբաստանուած է եւ փախած Սելանիկէն Ա֊Էնք, արտասահման անցնելու համար: Նոյն թերթերը կ'աւելցնէին թէ Գ. Զօրաբանակը, Ոստիկանութեան Ապահովութեան ճիւղը կը հետապնդէն, նոյն իսկ եռեւէն դրկուած է մանաւանդ սպայ մը, ձերբակալման հրամանագիրով...

Սելանիկի Ընդհ. Ոստիկանապետը կը հերքէ Թորգոմի հետապնդման լուրը, թէեւ Յունարէն թերթ մը կը պնդէ թէ հայ զօրավարը օտար փրօփականտիսթ մըն է եւ այս մասին գինուորական իշխանութիւնները ձեռք ձգած են փաստաթուղթ մը:

Սելանիկի «Մէտիթէրանիըն Փալաս» պանդոկը որ 4000 տրախմի պահանջ ունէր Զօր. Թորգոմէն, վար դրած է անոր համազգեստը, սուրը, պատուանշանն ու «ամոքինակը»: Վերջին պահուն, զօրավարին մէկ բարեկամը վճարած է այդ պարտքը, բայց զոյգերը կը մնան:

Ինչպէս կ'երեւայ, հռչակաւոր բախտախնդիրը, որ ամէն մեղքիս վրայ Յունաստանի ռամկավարներուն ալ պաշտօնական ներկայացուցիչն է, յարատեւօրէն կը ճոխացնէ իր շահատակութեանց ոսկեմատեանը:

Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ ԹԱՏԵՐԱՒՈՒՄԸ

Վաղը կիրակի գիշեր, 64, R. Rocher, Métro: St-Lazare ԱլպԷռ Ա. սեծ Թատրոնին մէջ կուտայ իր Դ. եւ վերջին ներկայացումը

ԻԻԺԻՆ ՍՈՒՄԲԱՏՈՎԻ յայտնի՝

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ Տիկ. Վիրժինէ Մամուլեանի, Տիկ. Ալէքսանեանի, Եւրոպահայ թատերախումբի եւ տեղւոյս դերասաններու: Օր. Ասիա կոստանեանը Ա. արարին կը պարէ հարէմական պար, պարսկական յայտնի Զարկեաիը: Տոմսերու գինը 3—20ֆր.: Կը ծախուի բոլոր հայկական ճաշարաններէն: Կը սկսի 8.15ին, կը վերջանայ ժամը 12ին:

Կ. ԹԱՋԻ ՊԱՐԱՁԱՆԴԷՍԸ

(Հրատարակութեան իսնդրանքով)

Կ. Խաչի պարահանդէսին յաջողութիւնը կը պարտինք ամէն անոնց որոնք կը սիրեն Հայաստանը, կը սիրեն Հայը: Անոնք աշխատեցան օրերով ու ըրին ամէն զոհողութիւն, պարահանդէսին կատարեալ յաջողութեան համար:

Արփագիւղի ու Փարիզի հայ հիւանդներուն պիտի կարենանք տալ խնամք ու դեղ: Պիտի կարենանք նոյնպէս հաց ու կաթ տալ Փարիզի զործազուրկներուն:

Պարտականութիւն կը նկատենք շնորհակալութիւն յայտնել այն թերթերուն, որոնք մոռնալով ամէն քաղաքական նկատում, Կ. Խաչի գործեն առջեւ, հրատարակեցին մեր հրաւիրագիրները ձրիաբար ու հանդէսին յաջողութեան համար նպաստեցին:

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր հայ տիկիններուն, որոնք մոռնալով իրենց ընտանեկան սուգը, անձնուիրաբար օգնեցին մեզի իրենց բոլոր ջանքերով: Շնորհակալութիւն զվխաւորաբար Պ. Արմենակ Համբարձումեանի, պարահանդէսին գանձապետին ու իր ընկերներուն՝ Հրանտ ճէվահիրճեանի ու Յ. Պօյաճեանի, որոնց աշխատանքը ամէն գովեստի արժանի է:

Լոնտոնի Հ. Կ. Խաչի առենապետուհին Տիկին Նուարդ Կիւլպէնկեան, Պրիւքսէլի Հ. Կ. Խաչի առենապետուհին Տիկին Մաբեան, իրենց պարտք նկատած էին պարահանդէսին ներկայ գտնուիլ, ցոյց տալով թէ Կ. Խաչերը մէկ մարմին ու մէկ հոգի ունին: Անոնց ներկայութիւնը նոր փայլ մը տուաւ հանդէսին:

Շնորհակալութիւն այն բոլոր հայ արուեստագէտներուն, արդիւնդներուն որոնք մեզի աշխատակցեցան: Շնորհակալութիւն բոլոր նուիրատուներուն, որոնց պարգևները թոմպոլային յաջողութեան նպաստեցին:

Մօտերս պիտի հրատարակուին հաստիքին գումարը ու թոմպոլային շահող թիւերուն ցանկը:

Այս յաջողութիւնը, այն օրերուն երբ գործերը դադրած են ու ամէն անձ մտահոգ է, ապացոյց մըն է թէ Հ. Կ. Խաչը սիրուած է բոլոր Հայերէն: Այս մեր մխիթարութիւնն է ու խրախոյս մեր ջանքերը կրկնապատկելու:

Հայ Տիկնանց Միութեան
Կ. Խաչի Օգնական Մասնաճիւղ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. փարիզի Շրջանային կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Շավիլի, Վէրսայլի, Սեվրի, Վիրօֆլէյի բոլոր դաշնակցական ընկերները եւ անոնք որոնք արձանագրուած չեն որեւէ խումբի սէջ այսօր Շաբաթ երեկոյ ժամը 8ին 187 Grand' Rue, Chaville (Pointe de Chavilleի Թրամուէյի կայարանին մօտ):

Հ. Յ. Դ. «Ազատամարտի Սերունդ» խումբի անդամները անպայման ժողովի կը հրաւիրուին վաղը կիրակի, ժամը 2.30ին Պելվիլի ծանօթ հաւաքատեղին:

Հ.Յ.Դ. «Ազբիւր Սերոբ» խումբի դասախօսական ժողովը վաղը կիրակի ժամը 2.30ին, 4 Passage St. Hippolyte, մէթրօ իթալի:

Հ. Յ. Դ. Սէնթ Էթիէնի ընկերները ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները՝ մասնակցութեամբ Տեսչի մասնաճիւղին, վաղը կիրակի կէսօրէն յետոյ ժամը 1.30ին Հ. Յ. Դ. նախկին դրադարանը:

ԸՆԿԵՐ ՎԼԹԱՆԷՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ (Պրիւսել) դժբախտութիւնն ունեցած է կորնցնելու իր մեծ մայրը, Ապրի 8իկին Մարիամ Իսրայէլեան: Հանգուցեալը տիպար ներկայացուցիչ մըն էր հայ մամիկի, որ բաբերդէն մինչեւ Պոլիս եւ մինչեւ Եւրոպա ուրիշ կարօտ չունեցաւ բայց միայն իր հայրենիքը: Մեր ցաւակցութիւնները ՏԷր եւ 8իկին Մարտիկեանի եւ բոլոր ազգականներուն:

ՏԷր եւ 8իկին ՎլԹանէս Մարտիկեան եւ զաւակը, Պ. Արամ Մարտիկեան (Անվէրս) Պ. Սեդրաք Գաբրիէլեան (Պոլիս), Ապրի 8իկին Հոռոփ Ալվազեան (Պոլիս), ցովնանեան ընտանիք (Պուքրէշ), Մրտիկեան ընտանիք (Պոլիս), Մրտիկեան ընտանիք (Անվէրս), ցաւով կը ծանուցանեն իրենց մեծ մօր, մօրաքրոջ եւ ազգականին՝

ԱՅՐԻ 8ԻԿԻՆ
ՄԱՐԻԱՄ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ
(Ծնեալ Գաբրիէլեան)

մահը որ տեղի ունեցաւ 1 Մարտ 1927ին, 84 տարեկան հասակին մէջ: ցուղարկաւորութիւնը կատարուեցաւ 4 Մարտ, Ուրբաթ ժամը 1ուկէսին Պրիւսել Սէնթ-կերթրիւտի եկեղեցին:

ՊՕԼՈՒՑԻՆԵՐՈՒՆ

փարիզի մէջ կազմուած է Պոլուի եւ շրջակայից (Տիւգեճ, Տէվրէկ-Համիտիէ, Զոնկուլտաք եւ Պարթընը) հայրենակցական երկսեռ միութիւն մը, նպատակ ունենալով ներկայիս բարոյապէս իսկ ապագային նիւթապէս ալ օգնել Ֆրանսաբնակ մեր հայրենակիցներուն:

Մանրամասն տեղեկութեանց եւ անհրաժեշտ աջակցութեանց համար գրաւոր դիմել միութեանս քարտուղար Պ. Ղեւոնդ Եղիազեանի. 78 Rue de Sèvres Paris VII:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Տիգրանուհի Մխիթեան կը փնտռէ իր ամուսինը Ամասիացի Ռէժիի պաշտօնեայ Յովհաննէս Մխիթեանը որ Իզմիրի դէպքէն վերջ Թուրքերու կողմէ Ուշակի մէջ ձերբակալուած էր: Տեղեկացնել՝ խմբագրութեան: Կը խնդրուի Յունահայ եւ Պոլսահայ Թերթերէն արտատպել:

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant: H. TEURNIER

ԹՄԵՑԷՔ ԵՒ ՏԱՌԱՄԵՑԷՔ ԱՄԵՆՈՒՐԵՔ
ՀՈՏԱԻԷՏ ԵՒ ԱՆՈՒՇԱՀԱՄ
ԵԱՎՐՈՒԻ ԹԷՅԵՐԸ «THÉ YAVROU»
Հաստատուած 1880ին
ՄԵՆԱՒԱՆԱԿ ԴՆՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԴԻՄԵԼ, ՀԵՏԵՒԵԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ



ՆԱՓՈԼԻ 1906ի ՅՈՒՆՈՒԱՐԵԱՆԷն ՎԱՐՉԱՏՈՒՈՒԱԾ

ԵԳԻՊՏՈՍ.— Գաւնիկ Պաճլավեան 7 Mohamoud Pacha El Falaki Alexandrie
ՅՈՒՆԱՍՏԱՆ.— Միհրան Սարգիսեան 11 Rue Philonos le Pirée
ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Կ. Աֆէեան եւ Վաստնա
ԻՏԱԼԻԱ.— Zovighian Setrak, Via Mentana 27 Padova
ՊԷՅՐՈՒԹ.— Tamer Frères Boite Postale N° 98
ԹՈՒՆՈՒՍ.— Daniel Cartozo Rue de Tanit Bizerte
ՄԱՐՕԿ.— Elbaz Frères Boite Postale 29 Casablanca
PARIS.— O. Papadopoulo 18 Rue Pasquier Paris XVIII
NICE.— J. Ciais 5 Rue Dabray

Դնումներու եւ ամէն տեղեկութեանց համար թղթակցութիւնք ուղղել նաեւ Comptoir des THÉS YAVROU 23 Rue Senac Marseille (B. du R,)

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՒՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro: Gare de l'Est Téléphone: Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՏՀԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՒՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վիներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամ 11—12: Առտնին օգնութիւն ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՊԵԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ծանուցութիւն Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ
Թերթիս գործակալ Գ. Գերիկեանի ՖՐԱՆՓՈ-ՀԱՅ ԴՐԱՏՈՒՆԸ
15 բիւ տէ Տամինիքէն

ՀԱՅ ՀԵՂԻՒՆԱԿՆԵՐՈՒ ԵՐԿԵՐ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Arakélian, Contes et Nouvelles, 12 frs.:
Aharonian, Vers la Liberté, 12.
Aslan K., L'Arménie et les Arméniens 20.
Baronian, Maître Balthazar 12.
Barsamian, L'Homme et la Femme 6.
Barsamian, Elle et Moi 7.50.
Basmadjian, Histoire Moderne des Arméniens 12.
Chirvanzadé, La Possédée 12.
Djivani, Les plus belles chansons, 5.
Macler F., Ancienne Eglise d'Arménie 12.
Macler F., Contes et Légendes de l'Arménie 12.
Macler F., La Version Arménienne 12.
Macler F., Contes Arméniens 12.
Mesrob K. L'Arménie au point de vue... 12.
Minasse Mme Iskouhi, Nouvelles et Contes 15.
Minasse Mme Iskouhi, Flore Attique, poème 6.
Minasse Mme Iskouhi, Voix dans la Nuit, poème 7.50.
Morgan J. de, Histoire du Peuple Arménien 40.
Papazian V., Santho 12.
Raffi, Samouel, 2 volumes 25.
Sandaldjian, Père J., Histoire documentaire de l'Arménie des âges du Paganisme, 2 grands volumes 100.
Tcheraz M., Nouvelles Orientales 12.
Tchobanian A., La Femme Arménienne 6.
Tchobanian A., La Roseraie d'Arménie, 2 grands volumes, illustré 150.
Zartarian R., Clarté Nocturne 12 francs.

Պատարագամատոյց հայ-անգղերէն 1926 փարիզ 35 ֆր.:

Նոր Հայաստանի գունաւոր քարտէսը: Պատրաստեց Կ. Բասմաջեան (քիչ օրէն լոյս կը տեսնէ):

Ֆրանսայի եւ գաղթավայրերու փոստի ծախք չկայ:

Դիմել՝ Librairie BALENTZ 233 Fbg. St. Martin, Paris 10.

ՎԱՐՉՈՒԻ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի մանուկներով յարկաբաժին մը, կը բաղկանայ երկու սենեակ ներէ եւ խոհանոցէ մը, Route Versailleի վրայ, Billancourt: Դիմել՝ նախկին Մոսկուայի կաս ճաշարանը, 41 Rue de Cloud, Billancourt.

Կառավարժ *աժան գին բով կը շինուի եւ կը նորոգուին տնական բահներ, գրասենեակի սեղաններ եւ աթոռներ, ծախու են թուղթ կան թաւղուններ: Դիմել՝ 208 Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.*

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԳՈՐԾ 7000 ՖՐԱՆՔՈՎ

Կը ծախուի պոլսական մեծ դայմաքի, թուղտէ պանիրի եւ ճերմակ պանրի գործիքները շինելու արհեստն ալ սորվեցնուելն եւ եկած ապրանքը տեղը տարելու դիւրութիւններ կը տրուին: Օրական 30—40 ֆրանք գուտ շահ: Տես «Յառաջ»ի վարչութեան մէջ «Յառաջ»ի վարչութեան

ԱԿԱՆՋԱՌՈՒ
4 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Ոսկերկին,	L. St.	124
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի)	100 Mark	600
Թուրքական Ոսկի	L. Trq.	112
Թուրք. ոսկի	» or	
Մէճիտիէ	Médjidié	18
Լէվա 100 հատ	Léva	32
Տրախմի »	Drachme	111
Լիր »	» Lire	71
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	49
Զուից. »	Frc. Suisse	15
Լէյ 100 հատ	Ley	92
Ձերվոնեց	(10 Roubles or)	

ԱՐԺԵՒՈՒՂԹ

Եգ. Ֆր. Տոնսիէ	1 Cr. Fonc. Eg.	3035
»	II »	1915
»	III »	1710
Ռումելի երկԹղ.	Lots turcs	105

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafay

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շ.	40 շ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ամ.	10 ամ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԿԻՐԱԿԻ 6 ՄԱՐՏ 1927

6 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 278

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ

Երէկ, ուշադրութեան կը յանձնէինք խելք ծախելու պարագայ մը, որ առաջինը չէ, դժբախտաբար։

Դամասկոսի, Հալէպի եւ Իսկէնտէրունի կայաններուն մէջ խռնուած 15,000 հայ գաղթականները Լիբանանի մէջ տեղաւորելու ծրագրին պաշտպանութիւնը մենք չէ որ պիտի ստանձնենք։ Անոնց, ինչպէս միւս բոլոր թափառական բազմութիւններուն բնական եւ վերջնական կայանը՝ հայրենիքն է։

Այս կէտը միանգամընդմիշտ պարզ թող ըլլայ բոլոր տեսակի «ազգասէր»ներուն, եւ մանաւանդ անոնց համար, որ տակաւին կը յամառին Թուրքիա վերադարձի շնո՛րհ մըն ալ սպասել Էնկիւրիէն, ապաւինած՝ խորհրդային իշխանութեան բարեխօսութեան։

Այլ եւս անցած է միջին ճամբաններու, կարկատաններու, փորձելը կրկին փորձելու շրջանը։ Ո՛վ որ խելք ունի, կրնայ գտնել ու վճռել թէ՝ եօթը ծովերու վրայ նետուած բազմութիւնները ոչ իրենց ինկած տեղը կրնան հանդիստ ըլլալ, ոչ ալ Թուրքիոյ մէջ։ Այդ երջանիկ երկիրը մնացած հայ փոքրամասնութիւնն իսկ հազիւ կը տոկայ հաստատուած կարգ ու սարքին եւ քաղաքակեալ բարբարոսութեան։ Եւ պարապ տեղը չէ որ Սեբաստիոյ, Արաբկիրի կամ Կեսարիոյ մէջ կծկուած ափ մը Հայեր պարբերաբար ճամբայ կը փնտռեն, դուրս ելլելու համար, եւ կը քաջալերուին Թրքական իշխանութեան կողմէ։ Անոնք պարզ բայաներ են, եւ եթէ ողջ մնացած տէրտէր մը չգտնուի տեղին վրայ, այդ մխիթարութիւնն ալ շատ կը տանուի։

Ապուշները միայն կրնան հաւատալ, որ այս կացութիւնը պիտի փոխուի, եւ Թուրքիա պիտի ճանչնայ հայ ժողովուրդին ապրելու իրաւունքը, արտօնելով գաղթականներու վերադարձը եւ վերադարձնելով անոնց գոյքերը։

Թուրքիա իր «վարկը բարձրացնելու» միջոցները գտած է արդէն, կոտրել-թափելով, կեղեքելով եւ կոտրելով, եւ խրատի պէտք չունի, նոր «ժէսթ»եր ընելու, ինչպէս կը սպասեն գանագան յաւազարներ։ Եթէ ռամկավարները համոզուած են որ Ենկիւրի «վերաբերմունքի փոփոխութիւն կոյց տուած է», Շիրակի վերաշինութեան համար երեք հարիւր թոնօ փայտ շնորհելով Սօղանլուի անտառէն, թող հրապարակ իջնեն իրբեւ կուսակցութիւն, եւ ապացուցանեն այդ «փոփոխութիւնը»։ Թող քանակին եւ ապահովին նո՛ր շնորհներ, մանաւանդ «հայ ժողովուրդին ապրելու իրաւունքին ճանաչումը»։ Եւ փոխանակ տարին քանի մը անգամ ժրնեւ փութացնելու Բաշալեաններ, ամուլ դիմումներով եւ նոյնքան ամուլ ծախքերով, աւելի գործնական պիտի ըլլար ղրկել ուղղակի Էնկիւրի, Գ. Նորատունկեանն ալ միասին։

Այս կարգի ճակատագրական հարցերու մէջ, նեղելի չեն պատ ի պատ ձեւերը. «մէկը այսպէս, մէկը այնպէս»։ Պէտք է հարցը դնել շեշտակի, եւ գործել անոր համաձայն, ինչպէս կ'ըներեն հայ պոլշեւիկները, որոնք անկեղծօրէն կը հաւատան «նոր» Թուրքիոյ բարեկամութեան, եւ հրապարակաւ ալ կը փառաբանեն զայն, փոխարէն ստանալով... երեք հարիւր թոնօ փայտ։

Ռամկավարները ունի՞ն այս քաջութիւնը — ճամբան բաց է։ Եւ Թող երթան խօսին իրենց անունով, իրենց «լքեալ» գոյքերը եւ վերադարձը ապահովելու, ոչ թէ դժոխքէն ազատած բազմութիւնները սին յոյսերով օրօրելու կամ նորէն կրակը ձգելու համար։

Ատոր համար պէտք չկայ խորհրդային իշխանութեան բարեխօսութիւնը մուրալու։

Եթէ այդ իշխանութեան խօսքը ո՛ր եւ է արժէք ունի Թուրքիոյ վարիչներուն համար, քանի մը «փան»երու եւ «փարթաման»ներու փրկութեան համար չէ որ պիտի օգտագործուի, այլ ամբողջ հայ ժողովուրդին դէմ գործուած հրէշային անարդարութիւնը ատիճան մը դարմանելու, անոր հայրենի ժառանգութեան գոնէ մէկ մասը վերադարձնելու. բուն բառով՝ անոր ապրելու իրաւունքը ճանչցնել տալու համար։ Իսկ արաբ-աշխարհ գիտէ որ այսօրուան Մոսկուան ոչ կամք, ոչ ալ, թերեւս, կարողութիւն ունի այս տարրական պարտքը կատարելու, գոնէ իրբեւ «բանւորա-գիւղացիական» իշխանութիւն։

Եթէ ունենար ե՛ւ մէկը ե՛ւ միւսը, ոչ Հայաստանի ճակատները ուսումնասիրել կուտար 15,000 գաղթական տեղաւորելու համար, ոչ բեւեռախոյզ Նանսէնը մէկտեղ կը ձգէր, մէկ միլիոն սղերլին մուրալու, ոչ Քուպանը եւ Քրկրզներու երիտասարդները կը ցուցնէր իրբեւ հայկական օջախ, ոչ ալ, վերջապէս, Թոքը հարիւր հազար թափառական ժողովուրդ կը հարկադրուէր անդիպած քարին գարնելու իր գլուխը, Սուրիայէն մինչեւ Ամերիկա։

Հայ ժողովուրդին ներքին տագնապը կը լուծուի լայն բազով հայրենիքին դուռները, եւ վերադարձնելով հայկական հողերը, առաջին առիթ այն մասը որ պոլշեւիկներուն ձեռքն է այսօր։

Եթէ բոլոր հայկական հոսանքները ա՛յս ուղղութեամբ աշխատէին, փոխանակ ծնկաչոք ծափ գարնելու Մոսկուայի կամ Երեւանի գարմանազան խաղերուն առջեւ եւ միւս կողմէ շնո՛րհ ընդունելու ժրնեւէն կամ Էնկիւրիէն, կը հաւատանք թէ արդիւնքը տարբեր կ'ըլլար։

Ահա թէ ինչպէս կ'ըմբռնենք մենք հարցը, իր բովանդակ կարեւորութեամբ։

Մնգքը մեր-չէ, եթէ ջրուած ուղեղներ չեն հասկնար այսքան պարզ իրողութիւն մը, եւ օգնութիւն կը սպասեն... Ծանուցի անտառին վայտերէն։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՆՈՐՔԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԱԻԱՐԸ

Մելքոնեան նուիրատուութեան պայմանագրին համաձայն, ամէն տարի 3000 օդելին պիտի ղրկուի Հայաստանի համալսարանին։ Ահա երկրորդ տարին է որ չէ ղրկուած այդ գումարը։ «ինչո՞ւ», կը հարցնէ Յուսարեր խնամակալութեան ուղղած քաց նամակով մը։

∴ «Երեւան» նոր խմբագրականով մը նորէն կ'արծարծէ նուէրը «օրինաւոր տիրոջը» վերադարձնելու խնդիրը.

«Մենք ասել ենք եւ դարձեալ պիտի ասենք՝ Մելքոնեանը Բարեգործականի աղաներին ու փաշաներին չի նւիրել իր գոյքը, այլ հայ ժողովուրդին։

«Մեր այս պնդումը կրկնեց եւ հաստատեց բովանդակ հայ մամուլը բացի ռամկավարներից, որոնք այդ հարցում պապանձուել են, ճիշտ իրենց աղա ու փաշա տէրերի պէս։

«Մենք պահանջել ենք Բարեգործականից հրապարակային հաշուետուութիւն Մելքոնեան նւիրատուութեան մասին — եւ մեր պահանջը կրկնել ու հաստատել է բովանդակ հայ մամուլը, դարձեալ ի բաց առեալ ռամկավարներից, որոնց հոգս հնազանդութիւնը իրենց աղա ու փաշա տէրերին հասցրել է Ջաքարիայի օրին։

«Տուէք օրինաւոր տիրոջը — ասել ենք մենք եւ մեզ ձայնակցել է ողջ հայ մամուլը, բացի ձեր խոնարհ ծառաներից— ռամկավարներից։

«Բարեգործականի աղաներն ու փաշաները Թող իմացած լինեն որ Ապտիւլ Համիտեան «երանելի շրջանն» անցել է անհետ եւ մեր օրերում հասարակութիւնը չի կարող հանդուրժել մի լռութիւն, որ յղի է ոճիրներով...

«Հասարակութիւնը կը գտնէ միջոց եւ կ'անի իր արդար դատաստանը...»։

ԹԷՀՐԱՆԻ ՀԱՅ ԲԺՇԿ. ՄԻՈՒԹԻՒՆ

Թեհրանի Հայ բժշկական միութիւնը չորս տարիէ ի վեր կը շարունակէ իր գոյութիւնը եւ իր նպատակներուն իրագործումը։ Ամէն երկու շաբաթ մէկ անգամ, կը սարքուին հաւաքոյթներ, ուր բժիշկ-անդամները կը ներկայացնեն բժշկական ուսումնասիրութիւններ։

Միութիւնը ունի նաեւ գիտական ցանձնաժողով մը, որ կ'ընտրէ ժողովրդական-գիտական նիւթեր եւ կը կազմակերպէ հրապարակային դասախօսութիւններ։ Վերջին տարուան ընթացքին տրուած են դասախօսութիւններ ակռայի հիւանդութեանց, ճաճճատենդի, եւ վիժումի պատճառներուն մասին։ Այս վերջին դասախօսութեան *միայն* կիներ ներկայ էին եւ սրահը լեցուցած։ Առաջիկայ հրապարակային հաւաքոյթներու համար յայտագիրին մէջ կը մտնեն թոքախտի, երախաներու առողջապահութեան, տարափոխիկ հիւանդութեանց, վիներական ախտերու, գիշերութեան, կիներու հիւանդութեան մասին դասախօսութիւններ։ Այս 15օրեայ ժողովրդական դասախօսութիւնները ձրի են։

Բժշկ. միութիւնը կ'աշխատի ձրի օգնութիւն հայցնել դպրոցներու աշակերտներուն, եւ բանալ բուժարաններ, ձրի դարմանելու համար հայ եւ պարսիկ աղքատները։

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՁՆՁՈՒՄԸ

ԸՍՄԷԹ ՓԱՇԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թայմզի Թղթակիցը Էնկիւրիէն կը հեռագրէ Մարտ 3 Թուականով.—

Այսօր կէս օրէն վերջ Ազգային Մեծ Ժողովին մէջ կարեւոր ճառ մը արտասանեց վարչապետ Ըսմէթ փաշա։

Բացատրեց թէ Թուրքիոյ հանրապետութեան սպառնացող մեծագոյն վտանգը Քիւրտիստանի մէջ Շէյխ Սայիտի ապստամբութիւնը չէր 1925ին, այլ քաղաքային եւ ընկերային անկարգութիւնները։ Անդորրութեան Ամրապնդման Օրէնքը բոլորովին խափանեց այս անկարգութիւնները։

«Կառավարութեան քաղաքական հակառակորդներուն մեքենայութիւններն ու դաւերը վերջին երկու տարուան ընթացքին, ըսաւ Ըսմէթ փաշա, շատ անագնիւ եղան եւ ի վերջոյ Ղազի փաշայի կեանքին դէմ դաւադրութեան մը յանգեցան։ Այսպէսով բոլորովին արդարացաւ Անդորրութեան Ամրապնդման Օրէնքին գոյութիւնը եւ Անկախութեան Դատարանները խիստ օգտակար եւ հայրենասիրական պարտականութիւն մը կատարեցին»։

Վարչապետը յետոյ յայտնեց թէ Անդորրութեան Ամրապնդման Օրէնքը պիտի վերջանայ Մարտ 4ին, իսկ երկու Անկախութեան Դատարաններուն պայմանաժամն ալ՝ Մարտ 7ին։ Օրէնքը դեռ անհրաժեշտ է, սակայն Դատարանները կրնան չնչուիլ։ Ու առաջարկեց օրէնքը երկարաձգել երկու տարի եւս, իսկ Դատարանները չնչել Մարտ 7էն սկսեալ։

Ազգային Մեծ Ժողովը չախչախիչ մեծամասնութեամբ քուէարկեց այս երկու օրինագիծերն ալ, միայն քանի մը երեսփոխաններ իրենց ձեռքերը չբարձրացուցին։ Ըսմէթ փաշայի ճառը շատ պերճախօս էր։ Բազմաթիւ մեկնութիւններ կը տրուին դատարանները չնչելու համար կառավարութեան իսկական նպատակներուն մասին։ Երկու տեսակէտ կայ, մէկը այն է՝ որ կառավարութիւնը ինքզինքը բաւական զօրաւոր կը զգայ երկիրը վարելու առանց այս օգտակար զէնքին. միւս տեսակէտին համաձայն, կարգ մը ստորերկրեայ մոլուտքներ մղած են էնկիւրիի վարիչներէն ամէնէն խոհեմները աւելի իմաստուն ըլլալ եւ քաղաքական հակառակորդներու դէմ բիրտ քաղաքականութեան վերջ տալ։

Ըսմէթ փաշայի ճառը լսողի մը համար այնպէս կը թուի թէ կառավարութիւնը ինքզինքը բաւական զօրաւոր կը զգայ գործելու առանց դատարաններու աջակցութեան, եւ սակայն միաժամանակ կ'ուզէ այն տպաւորութիւնը տալ երկրին թէ՝ նոր անկարգութեան մը կամ դաւադրութեան մը առջեւին նշանին վրայ զրահապատ բռունցքը դարձեալ պիտի գործէ, եւ այս անգամ առաջուընէ աւելի անգութ կերպով։

∴ «Թան»ի Թղթակիցն ալ կը գրէ թէ անկախութեան դատարանները չնչուած ըլլալով, յառաջիկայ երեսփ. ընտրութեանց մէջ ժողովուրդը աւելի ազատօրէն պիտի կրնայ քուէարկել։ Սակայն միւս կողմէ կառավարութիւնը կ'ուզէ իր գերագոյն ատիճանին հասցնել Թուրք ժողովուրդին արտադրելու կարողութիւնն ու աշխատանքի ուժը. անոր համար ալ կատարեալ խաղաղութեան պէտք կայ. այդ է պատճառը, որ անդորրութեան ամրապնդման օրէնքը երկարաձգուեցաւ մինչեւ *1929 Մարտ 4։*

ԵՒ ՍԱԿԱՅՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ ԿԸ ԳՈՐԾԵՆ ԴԵՌ

Արեւելեան Անկախութեան ատեանը մահուան դատապարտեց Մէհտիի փաստաբան Մէլէք Փարսօմ, որ կ'ամբաստանուի թէ լրտեսութիւն ըրած է, երեք անձ սպաննած, քիւրտ ըմբոստներէն Խաչայի միացած, եւ վերջապէս Հալէպի մէջ յարաբերութիւն պահած է հայ եւ քիւրտ կոմիթէճիներուն հետ եւ անոնց յայտարարութիւնները ցրուած։

Մահավճիռը գործադրուած է արդէն։

Հայրենիք չունեցողներու կացութիւնը

Ժընեւէն հեռագիր մը կ'ըսէ թէ Ազգերու Դաշնակցութեան հաղորդակցութեանց եւ Քրանզիթի յանձնաժողովը կը շարունակէ զբաղիլ հայրենիք եւ հպատակութիւն չունեցող անձերուն տրուելիք ինքնութեան վկայագրերու խնդիրով։

Այս դասակարգին տակ կը մտնեն բոլոր անոնք, որոնք անցագիր չեն կրնար ստանալ իրենց պատկանած կառավարութենէն, այսինքն բոլոր քաղաքական տարագիրները։ Այս պատճառով աստնք ենթարկուած են դժուար կացութեան մը։ Մեծ թիւ մը կը կազմեն աստնք՝ Հայեր, Ռուսեր, Մաճառներ, Իտալացիներ, Սպանիացիներ, եւլն.։

Ցանձնաժողովը՝ մարդասիրական եւ թեքնիք տեսակէտներու վրայ կանգնած, ուզած է վաւերացնել փորձագէտներու մարմնի մը կողմէ իրեն ներկայացուած ծրագիրը, որուն համաձայն մասնաւոր անցագիրներ պիտի տրուին խնդրոյ առարկայ անձերուն։ Սակայն իտալական պատուիրակը հակառակած է այս ծրագրին յանձնաժողովին երեք նիստերուն մէջ եւ յաջողած է ձախողեցնել զայն։

Այս պայմաններուն մէջ, յանձնաժողովը Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին դիմելով, արտօնութիւն խնդրած է մաս-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ԿԻԻ ՄԱՐՍԻԼԻՈՑ ՄԷՋ

Վերջին պահուն Մարսէյլէն ստացանք նամակ մը, որ կը տեղեկացնէ թէ Մարտ 3ին կիւր մը ծագած է առաջնորդարանին մէջ, գործազուրկներու նպաստի բաշխման առթիւ։ Կան վիրաւորներ։

Մանրամասնութիւնները յաջորդով։

ԳԱՀԻՐԷ - ՊԱՍՐԱ ԳԻԾԸ

Հելիոպոլիսի մէջ Մարտ 3ին պաշտօնապէս բացումը կատարուեցաւ Գահիրէ-Պասրա օդային գիծին, ներկայութեամբ Եգիպտոսի Թուատ Թագաւորին, անգլիական մարզպան լորտ Ճօրճ Լոյտի, նախարարներու եւ անգլիացի ու եգիպտացի բարձրաստիճան պաշտօնատարներու։ Մարզպանը ճառ մը խօսեցաւ շնորհաւորելով Թուատ Թագաւորը, որ օդային այս գիծով իրարու կը միացնէ հինգ երկիրներ եւ գովեց Եգիպտոսի զարգացման համար իր Ջանքերը։

Յետոյ Թագաւորը չուան մը քաշեց, ու օդանաւին անունը երեւցաւ՝ Գահիրէ (նախկին անունը Շերքիւէս էր)։ Նոյն պահուն օդանաւին մէջէն Թուան բազմաթիւ աղաւնիներ։ Անգլ. օդանաւային ընկերութեան ներկայացուցիչը Թագաւորին ներկայացուց օդանաւին արձաթեայ մանրանկարը։

Արարողութենէն վերջ, ներկաներէն մօտ 100 հոգի կարգով օդանաւ նստան եւ Հելիոպոլիսի ու Գահիրէի վրայ Թռիչքներ կատարեցին։

ՈՁԻՒ ՄԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Գահիրէի հարուստ առեւտրականներէն Սալոմոն Սիքուրէլ Մարտ 3ի գիշերը իր անկողինին մէջ սպաննուած է չորս հոգիի կողմէ, որոնք քլորոֆորմով քնացուցին իր կինը եւ դանակով սպաննեցին զինքը։ Ոճրագործները գողցան 60,000 օդերլին արժէքով գոհարեղէններ։ Ոճրագործներէն երեքը ձերբակալուեցան։

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՒՏՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.— Ուխանով, կոմունիստ կուսակցութեան համագումարին ընթացքին, յայտարարած է թէ Մոսկուայի 29,000 տուներէն միայն 11,000ը ջուր ունին։ Բնակչութեան 700,000ը ջուրը կ'առնէ աղբիւրներէն կամ հորերէն։ Ընդհանրապէս բոլոր բանուորները հորի ջուր կը գործածեն։ Դարձեալ 29,000 տուներէն միայն 9,000ը կոյուղի ունի։

«Տակաւին մէկ հատիկ դպրոց չենք շինած, եւ մեր ունեցած դպրոցներն ալ հագիւ մեր աշակերտութեան հարիւրին 85ը կրնան ընդունիլ»։

ԿԱՏՂԱԾ ՇՈՒՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ.— Յունուար եւ փետրուար ամիսներուն, Երեւանի մէջ Թունաւորուելով սպաննուած են 460 շուներ, որոնք կատղած էին։ Ջինի պատճառով այս Թունաւորումները ընդհատուած են։

Կատղած շուները խածած են 58 հոգի, որոնք ղրկուած են Թիֆլիսի Փաստէօրեան կատաղաբուժարանը։

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՀՈՒՄՆԵՐԸ.— *Փրավտա* (յունուար 9) կը գրէ.— Ռուսերը մեծ քանակութեամբ խնձոր կ'արտածեն Եգիպտոս։ Սակայն արտածման կերպը չեն գիտեր, այնպէս որ ապրանքները յաճախ աւրուած դուրս կ'ելլեն։ Վերջերս Շամպուրկ ղրկուած խնձորի սեաղին մեծերը մը արդէն փտած դուրս ելաւ։ Գերմանները մերժեցին ընդունիլ։ Ռուսերը առաջարկեցին ծով թափել։ Գերմանները դարձեալ մերժեցին։ Սեաղին քանակութեամբ փտած խնձորով չենք ուզեր ծովը աղտոտել, ըսին անոնք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ

«ՇԱՐԱԺ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Երևան, Կոմունիստական պողոտա, № 29/1։ Հեռ. 56-20։

Տպագրված է Հայկական ՍՍՀ Պետհրատարարության տպարանում, Երևան, Աբովյան 124։

Պատվեր № 1920։ Տպաքանակ 29 հազ։

Հանձնված է արտադրության 1/VII-ին։ Ստորագրված է տպագրության 2/VII-ին։

Թուղթ 70×108 1/16։ Տպագր. մամուլ 2։ Պայմ. մամուլ 2,74։ Հրատ. մամուլ 2,5։

Գինը 20 կոպ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՈՒՑԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ)

Ըստ Հայկական ՍՍՀ Պետպլանի տեղեկագրի՝ 1940 թ. հունվար-հունիս ամիսներին Հայկական ՍՍՀ-ում ընդհանուր առմամբ կատարվել է տարեկան պլանի 49,9 տոկոսը։ Ընդհանուր առմամբ պլանը կատարվել է 37,7 տոկոսով։

	Պլանը	Կատարումը	Պլանի կատարման տոկոսը
Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը	115,978,000 ռ.	43,700,000 ռ.	37,7 %
Ներառյալ՝ տեղական արդյունաբերության	11,328,000 ռ.	4,650,000 ռ.	41,6 %
Մանր խորհրդային արտադրանքի	6,827,000 ռ.	2,540,000 ռ.	37,5 »
Կոոպերատիվ արտադրանքի	47,027,000 ռ.	13,600,000 ռ.	29,2 »
Կոլտնտեսային շուկայում վաճառված ապրանքների	21,851,000 ռ.	10,700,000 ռ.	49,9 »

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, ամենամեծ տոկոսը կազմում է կոլտնտեսային շուկայում վաճառված ապրանքների կատարումը՝ 49,9 տոկոս։ Ամենափոքր տոկոսը կազմում է կոոպերատիվ արտադրանքի կատարումը՝ 29,2 տոկոս։ Ընդհանուր առմամբ պլանը կատարվել է 37,7 տոկոսով։

Հանրապետության ընդհանուր ներքին համախառն արդյունքը, որի մեջ մտնում են նաև ոչ նյութական ծառայությունները, կազմում է 41,6 տոկոս։ Ընդհանուր առմամբ պլանը կատարվել է 37,7 տոկոսով։

ԴԱՏԿ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

— Ես... Ես ասում եմ, որ ինչ-որ բան պետք է անել, Ռուբիկ, անպայման պետք է անել... Ես չեմ կարող այսպես շարունակել... Ես ուզում եմ ապրել, ես ուզում եմ ստեղծագործել, ես ուզում եմ... Ռուբիկ, դու ինձ լսո՞ւմ ես, ես ուզում եմ, որ դու ինձ հասկանաս, ես ուզում եմ, որ դու ինձ օգնես, ես ուզում եմ, որ դու ինձ սիրես, ես ուզում եմ, որ դու ինձ ներես, ես ուզում եմ, որ դու ինձ ներես, ես ուզում եմ, որ դու ինձ ներ

նաւոր միջազգային համաժողով մը հրաւիրել, այս խնդրով զբաղելու համար։

Եւ որովհետեւ Յորհուրդը չի կրնար այս խնդիրը նկատի առնել Ցունիսի նստաշրջանէն առաջ, «անհայրենիք»ները դեռ երկար պիտի սպասեն։

Նոր շարժուձեւ մը Ջինաստանի մէջ

Փեքինէն առնուած վերջին հեռագիրներու համաձայն, Ջինաստանի քաղաքացիական կռիւները նոր փուլի մը մէջ մտած են։ Հոնանի եւ Ենհուայի նահանգներուն մէջ կազմուած է նոր բանակ մը, որուն նպատակն է կռուիլ միաժամանակ պոլշեւիկ քանթոնցիներուն եւ աւատապետական հիւսիսցիներուն դէմ։ Այս նոր բանակին հրամանատարութիւնը ստանձնած է քանթոնի վերին հրամանատար Ջօր. Շիանկ Քայշէք, որ մեծ ուժեր կը համախմբէ մանաւանդ Վու-Փէյ-Ֆուի, Սըն-Շուան-Ֆանկի եւ Շէն-Թիա-Եէնի բանակներու զինուորներէն։

Ջօր. Շիանկ Քայշէքի հետ են բոլոր չափաւոր ազգայնականները, որոնք դժգոհ են քանթոնի կառավարութեան պոլշեւիկացումէն։ Այս նոր բանակին կազմակերպութիւնով կը վտանգուի Մանչուրիոյ պատերազմ. նախապար Շանկ-Զօ-Լինի դիրքը։ Բազմաթիւ կալուածատէրեր, գործի տէրեր, նոյնիսկ աշխատաւորներ ուժ կուտան նոր շարժումին։

Նանքինը հիւսիսէն պաշարելու համար 20,000 ազգայնական զինուորներ կը յառաջանան Ենհուայ նահանգէն դէպի արեւելք, մինչ 150,000 ազգայնական զինուորներ ալ կը կեդրոնանան Հանկ-Չէուի մէջ՝ ի հարկին Շանկայը պաշտպանելու համար։ Եթէ Նանքին իյնայ, Շանկայ պիտի դրաւուի առանց կռիւի։ Դէպքերը կը գահավիժեն։

*** *Ընկերվարական կուսակցութեան փարիզի մարմինն նախաձեռնութեամբ մեծ միթինկ մը կազմակերպուած էր Ուրբաթ գիշեր, բողոքելու համար Ջինաստանի մէջ եւրոպական աշխարհակալութեան ձգտումներուն դէմ եւ պահանջելու համար այդ երկրին անկախութիւնը։ Խօսեցան յայտնի ընկերվարական հռետորներ՝ Ջիրոմսքի, Ժան Լօնկէ, Լէոն Պլում եւ քանի մը Ջինացիներ։*

Պոլշեւիկեան դրամները արգիլուած

Թ'Հրանէն կը հեռագրեն թէ Պարսկաստանի սովեդական դրամատուները կը մերժեն վճարումներ ընդունիլ ռուսական չերվոնէցներով եւ կամ անոնց փոխարէն պարսկական դրամ տալ։ Պարսիկ կառավարութիւնը արգիլեց Պարսկաստան մուտքը այս դրամներուն, որոնք չեն ընդունուիր խորհրդային դրամատուներուն կողմէ։ Երեք ամիս վերջ Պարսկաստանի մէջ գտնուած բոլոր ռուսական դրամները պիտի գրաւուին կառավարութեան կողմէ։

Ջիւն-ձմեռ Աւուստրալի մէջ

Անընդհատ տեղացող ձիւնը Ադիոնի երկաթուղին թաղած է մինչեւ խաւի մը տակ։ Անցեալ օր Իզմիրէն Ադիոն գացող մարդատար կառախումբը սաստիկ ձիւնամրրիկի մը բռնուած եւ Օթուրաքի ու Տուվլու Փունարի միջեւ խրած է երկուքուկէս մէթր մինչեւ ձիւնի խաւի մը մէջ։ Ձիւնը մաքրող մեքենան գիծէն ելած ըլլալով, շոգեկառքը ստիպուած է կանգ առնել, մինչեւ որ չորս հինգ ժամ վերջ, ուրիշ մեքենայ մը հասցուցած են Տուվլու Փունարէն։ Գիծը մաքրուելէն վերջ, կառախումբը շարունակած է իր ճամբան։

Սաստիկ փոթորիկ կը տիրէ Սեւ եւ Մարմարա ծովերուն, ինչպէս նաեւ Արքիպելագոսի մէջ։ Ծովային զանազան արկածներ տեղի ունեցած են։ Պրինտիզիէն դէպի Պոլիս ճամբայ ելած իտալական շոգենաւ մը, որ չորս հարիւր ուղեւոր կը բերէր, փոթորիկին սաստկութենէն ուղղութիւնը կորնչցնելով եւ իմպրոս կղզիին մօտերը խրած է։ Նաւէն հասած անթելին վրայ, ազատարար միջոցներ փութացուած են եւ նաւը կարելի եղած է ազատել։

Տ. Մեհեղիկեանի դատավարութիւնը սկսած

Կրընոպլէն կը հեռագրեն թէ երէկ՝ Շաբաթ օր Իզմիրի եղեռնագործ ատեանին առջեւ սկսած է դատավարութիւնը Տիգրան Մեհեղիկեանի, կօշկակար, 42 տարեկան, որ վիէնի մէջ սպաննած էր իր կինը, կացինով անոր գլուխը կտրելով։ Ֆրանսերէն թերթերը կը գրեն թէ Մեհեղիկեան, որ կը պարծենար թէ ռուսական բանակին մէջ եղած ատեն անհամար գլուխներ կտրած էր, 1923ին Մարսիլիոյ մէջ ամուսնացած էր Սաթենիկ Գահվէճեանի հետ, որ իր նախկին ամուսինէն պղջնակ մը ունէր։ Ինչպէս գրեցինք, Մեհեղիկեանի պաշտպան փաստաբանն է Պ. Պարպ։

"ՅԱՐԴԱՊՂ"Ի ՀԱՆԴԷՍԸ

12 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ ԹԻՇԵՐ, ԺԱՄԸ 8.30ԻՆ
ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖԻԻ ՄԷՋ, 184, Boulevard St-Germain

Յուցաղրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերուն
Կը մասնակցին՝ Շահխաթունի, Երզիկ Նաւասարդեան, Մարուխեան, դաշնակահար Ալիքսանեան, պարող Իկար։
ՏՈՄՍԵՐՈՒ ԴԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.։

Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

վաղը կիրակի գիշեր, 64, R. Rocher, Métro : St-Lazare Ալպէռ Ա. սեծ թատրոնին մէջ կուտայ իր դ. եւ վերջին ներկայացումը
ԻԻԺԻՆ ՍՈՒՄԲԱՏՈՎԻ յայտնի՝

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ Տիկ. Վիրժինէ Մամուլեանի, Տիկ. Ալէքսանեանի, Եւրոպահայ թատերախումբի եւ տեղւոյս դերասաններու։ Օր. Ասիա Կոստանեանը Ա. արարին կը պարէ հարէմական պար, պարսկական յայտնի Զարկեանը։ Տոմսերու գինը 3—20ֆր.։ Կը ծախուի բոլոր հայկական ճաշարաններու։ Կը սկսի 8.15ին, կը վերջանայ ժամը 12ին։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Ագատամարտի սերունդ» խումբի անդամները անպայման ժողովի կը հրաւիրուին այսօր կիրակի, ժամը 2.30ին Պէլվիլի ծանօթ հաւաքատեղին։

Հ.Յ.Դ. «Ադբիւր սերոբ» խումբի դասախօսական ժողովը այսօր կիրակի ժամը 2.30ին, 4 Passage St. Hippolyte, մէթրօ Ռիթալի։

Հ.Յ.Դ. Մարսէյլի «Քրիստափոր» խումբի ժողովը՝ վաղը երկուշաբթի երեկոյեան ժամը 8.30ին սովորական սրահին մէջ։

Հ.Յ.Դ. Լիոնի «Քեոի» խումբի ընդհ. ժողովը երեքշաբթի 8 Փետրուար, երեկոյեան ժամը 8.30ին, գրադարանին մէջ։ Օրակարգը խիստ կարեւոր։

Հ. Յ. Դ. «Քրիստափոր» խումբին անդամները ինչպէս նաեւ սէն միշելի եւ անոր յարակից թաղերը բնակող բոլոր դաշնակցականները կը հրաւիրուին մէթրօ Օտէոնի դիմաց, Քափէ Րոշէ, 9 մարտ Չորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին։ Ներկայ պիտի ըլլան փարիզի Շրջ. կոմիտէի անդամները։

ԱՅՍՕՐ կիրակի Հ. Մ. Ը. Մ.ի պահեստի եւ երկրորդ խումբերը կը մղուին I. S. St. Ouenի պահեստի եւ երկրորդ խումբերուն դէմ։ Ժամադրավայր՝ Porte de Clignancourt *ժամը 12.15ին։ Խմբովին մեկնում ժամը ճիշտ 1ին։ Կը հրաւիրուին նաեւ արձանագրուիլ փափաքող անդամները։*

ԲԱՐՁՐ ՀԱՅԳԻՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Լիոնի մէջ գտնուող խումբ մը հայրենակիցներ հաւաքուելով կազմեցինք «Բարձր Հայքի Հայրենակցական միութիւն»մը, որուն նպատակն է օգնել իր ծշուառ հայրենակիցներուն, ազգային միութիւններու հետ կապ հաստատել, միութեանս բարգաւաճման եւ փոխադարձ գործակցութեամբ աշխատիլ հայ ժողովուրդի բարքերու եւ ազգային նկարագրի պահպանման համար։

Այս առթիւ պարտ համարեցինք յայտարարել, որ եթէ կան ուրիշ հայրենակիցներ որ կը փափաքին անդամագրուիլ միութեան, եւ հրաւէր չեն ստացած, թող բարի ըլլան անձամբ կամ նամակով ներկայանալու Պ. Արմենակ Աւետեանի. 201 Avenue de Saxe։

Լիոն Տ.Տ.Մամբրէեան

ԿԸ ՓՆՏՈՒԻԻ

— Տիգրանուհի Միկէնեան կը փնտռէ իր ամուսինը Ամասիացի Ռէժիի պաշտօնեայ Յովհաննէս Միկէնեանը որ Իզմիրի դէպքէն վերջ Թուրքերու կողմէ Ուղայի մէջ զինուորագրուած էր։ Տեղեկացնել՝ Համբարձում Քիւրքեանի՝ Usine St.-Laurent de Ceris, (Charente) France։ *Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։*

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Չերիկեանի ֆրանքո-հայ գրատունը
15 րիւ տէ ֆօմինիքէն

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի պայմաններով յարկաբաժին մը որ կը բաղկանայ երկու սենեակներէ եւ խոհանոցէ մը, Route de Versaille*ի վրայ,* Billancourt: *Դիմել՝ նախկին Մոսկուա-Կովկաս ճաշարանը, 41* Rue de St. Cloud, Billancourt.

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԴՈՐԾ ՄԸ 7000 ՖՐԱՆՔՈՎ

Կը ծախուի պոլսական լիւլէ գայմաքի, թուլում պանիրի եւ ճերմակ պանիրի գործիքներ, շինելու արհեստն ալ սորվեցնելոն եւ եղած ապրանքը տեղաւորելու դիւրութիւններ եւս ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք զուտ շահ։ Դիմել «Յառաջ»ի վարչութեան։

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

123 Bld. Sébastopol, 123
(Métro: St. Denis և Réaumur)

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

ջերմամիզուկեան, ֆրանկ ա տի, արիւնի եւ մորթային հիւանդութեանց։

Բժշկական տարրալուծումներ

Ամէն օր ժամը 9—12 և 2—8, կիրակի՝ 9—12։

Ժողով ըդական գիներ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ԶԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակչէն է մանաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենադարանի դիրքերու։

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԱԿԱՆԱՏԱՆ

5 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Սթերլին,	L. St.	124	12
Տոլար,	Dollar	25	60
Մարք (ոսկի)	100 Mark	606	—
Թրքական Գդ.	L. Trq.	12	90
Թրք. ոսկի	» or	114	50
Մէճիտիէ	Médjidié	9	—
Լէվա 100 հատ	Léva	18	60
Տրախմի	» Drachme	33	—
Լիր	» Lire	111	65
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	71	20
Ջուից.	» Frc. Suisse	492	—
Լէյ 100 հատ	Ley	15	30
Չերվոնեց	(10 Roubles or)	93	—

ԱՐԺԵԹՈՒՊԵՐ

Եգ. Քր. Ֆոնտիէ	I Cr. Fonc. Eg.	3050	—
»	II »	1925	—
»	III »	1720	—
Ռումելի երկաթ.	Lots turcs	165	—

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

ՀՐԱՉ ՉԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Chirurgien - DENTISTE

ՓԱՐԻԶԻ ԲԺԾԿԱԿԱՆ ԳԱՖԻԼՓԷԷՆ
126 RUE BOLIVAR (մէթրօ պոլիվառ կամ ժօռէս)
Մասնագիտութիւն ատամնաշարերու (քաուչու թէ ոսկի) և պրճնի։ Բոլոր աշխատանքները ԱՅԱՆՑ ՑԱՒԻ, ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ։ Ընդունելութիւն ամէն օր ժամը 1.30էն մինչեւ 8ը։ Ուրիշ ատեն՝ ժամադրութեամբ։

Տիկիններ եւ Օրիորդներ

Եթէ կ'ուզէք ունենալ վերջին նորաձեւութեամբ ճաշակաւոր եւ խնամքով կարուած հագուստներ դիմեցէք՝

ԿԱՐՈՒԶԻ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
նոր հասցէին՝ 12 Rue St. Sulpice Paris (6e) Métro Odéon
Ամենադուռարահաճ յաճախորդներու գոհացում կը տրուի
ԲԱՑՈՒԱԾ Է ՄԱՍՆԱՒՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ ևս
փափաքողներու կ'աւանդուի ձեւագիտութիւն եւ կար՝
կիրակի օրերը ժամը 9—5

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՋՕԼՕԼԵԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**
9 RUE PAPILLON, PARIS IX
Square Montholon դիմաց Rue Lafayetteի կից
Հաղորդակցութեան միջոցներ.— Métro Cadet կամ Poissonnière Tram 21 (A B C D), 26 եւ 28: Autob. J. B. AC. AR. T. Thés իջնել Square Montholon:
Բաց է ամէն օր ժամը 9էն 6: Գեղարուեստական ձաշակով պատրաստուած անթերի աշխատութիւններ: Ինքնութեան խնամուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ:
ԳԻՒՂԱՄԱՏՆՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԴԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Ատամնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ
Համեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ծանօթագիր Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

PRIMEROSE

183, Rue St. Honoré, 183 PARIS (1)
Téléph. Richelieu 91-64 Métro:Pyramides - Palais-Royal
GALERIES MAUBEUGE
39, Rue de Maubeuge, 39 PARIS (9)
Téléph. Trudaine 75-55 Métro: Cadet
Սոյն երկու վաճառատանց մէջ կը ծախուին կանանց յատուկ ամէն տեսակ մետաքսեղէն եւ բրդեղէն կերպասներ շատ նպաստաւոր գիներով: Ճոխ մեթերք քրեփ տը շինի:

ATELIER D'ÉLECTRICITÉ ET DE T.S.F.

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ *Ամէն կարգի ելեքտրական գետեղումներ, ելեքտրական գործիքներու, մօթէօրներու եւն. նորոգումներ:*

ԿԸ ԾԻՆԷ *Մինթել հեռաձայնի գործիքներ, որոնց միջոցով կը լսէք Եւրոպայի անթելի կայաններէն տրուած բոլոր քոնսէրներն ու օրուան լուրերը:*

M. G. BASMADJIAN, 93, RUE DU GAZ, PARIS (13e)
Tél: Goblins 52—18, Metro Italie

կառավարժ *աժան գիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կարասիներ, գրասենեակի սեղաններ եւայլն, ծախու են թրքական թաւլուններ: Դիմել՝* 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ՍՊԱՍՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ
Դիմել «Մասիս» Տպարանի վարչութեան, 208 bis, Rue Lafayette: *Մէթրօ՝* Louis Blanc կամ Jaurès.

ՏՕՔԹ. Տ. ՍՊԱՐԹԱԼԵԱՆ

փարիզի բժշկ. Համալսարանի նախկին գլխաւոր բժիշկ եւ վիրաբոյժ իզմիրի ազգային հիւանդանոցին
44, Rue Poissonnière, Paris (2e)
Ընդունելութիւն ամէն օր ժամը 14էն 18 եւ ժամադրութեամբ

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի վոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ
8
ՄԱՐՏ
1927

8 MARS 1927

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 279

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԽՄԲԱՒ ԽՕՍՔ

ՅԱՂԹԱԿԱՆ «ԱՇԻՐԷԹ»Ը...

Այսօր, երրորդ էջին մէջ, ամբողջութեամբ կը հրատարակենք եւրոպայի Թեմական Ժողովուրդին պատճառաբանեալ կարժաբակաները:

Ինչպէս կը տեսնեն ընթերցողները, Թեմական Ժողովուրդը նախաձեռնած եղած է, չկարենալով լեզու գտնել Փարիզի հին գաղութի ներկայացուցիչներուն հետ, որոնք առանձին «աշիրէթ» մը կը կազմեն, դժբախտաբար:

«Աշիրէթ» մը, որ ոչ իսկ իր քաղաքականութիւնը բանաձեւելու քաջութիւնն ունի, եւ կը սիրէ գործել ու դաւել մութին մէջ, գրասենեակներու խորը:

Իրենց նենգութեան ծանրութիւնը հասկնալու համար, արժէ ուշադիր ակնարկ մը նետել հրաժարականը ստորագրողներուն ինքնութեան վրայ: Ուժը հոգիէն մէկը միայն դաշակցական է, ան ալ՝ չափաւորներէն, եւ վերջին պահուն հաւատացած, երբ արդէն խմբագրուած եւ վաւերացուած էր հրաժարագիրը: Մէկը՝ ամկավար է, միւսները լեցուն տարիքով եւ ծանր փորձառութեամբ օժտուած հայրենակիցներ են: Եթէ կան այս կամ այն կուսակցութեան համակիրներ, կան նաեւ բացարձակապէս չեզոքներ, նոյնիսկ հակադաշնակցականներ: Այսինքն այնպիսի տարրեր, որոնց համար ո՛ր եւ է պարկեշտ մարդ չի կրնար ըսել թէ իրենց ըրածը չեն գիտեր եւ գործիք են դարձեր ... Դաշնակցութեան ձեռքը: Որքան գիտենք, դուրս կը մնայ մէկը, բժիշկ մը, որ միշտ համամիտ եղած է իր բնակերներուն, բայց կապուած ըլլալով Փարիզի ջոջերուն հետ, խոհեմութիւն համարեր է ստորագրութիւն չդնել թուղթի տակ: Իսկ Պատգահր, կաթող. պատուիրակ Պալաքեան եպսկ., կրնայ միայն բանով պարծենալ, բայց երբեք՝ Դաշնակցութեան բարեմտութեամբ:

Երբ այսպիսի վարչութիւն մը, 1926 Յուլիսէն մինչեւ 1927 փետրուար 24 չէ կրցեր հասկացողութեան գալ Փարիզի ներկայացուցիչներուն հետ, կրնաք բմբռնել թէ ո՛ւր է չարիքին արմատը: Եւ այդ երեւելիները, մեծ մասով mercantiներ, ծանր առեւտրական եպիսկոպոսի մը հովանաւորութիւնն ալ կը վայելեն, իբրեւ թագ ու պսակ:

Կը կարդանք հրաժարագիրը, կը վերլուծենք իւրաքանչիւր նախադասութիւնը, ու կը գտնենք որ ... [illegible] Թեմական Ժողովուրդի անդամներուն քրիստոնէական համբերութեան վրայ:

— «Փարիզի վարչութիւնը ոչ միայն չհաճեցաւ մասնակցիլ Թեմական Ժողովուրդին, ոչ միայն չէզոքի եւ հանդիսատեսի պատասխանը դիրք մը գէթ չպահեց, այլ ընդհակառակն ամէն առիթ եւ միջոց ձեռնհասութիւնն չահագործեց, ամէն դժուարութիւն եւ արգելք դնելու համար Թեմական կազմակերպութեան անիւներուն տակ:»

Եւ այս՝ առաջին օրէն, ինչպէս Պատգմ. Ժողովի առաջին նստէն:

— «Մենք պատրաստ էինք առաջին օրէն մեր տեղը տալու Փարիզի հին Հայոց, եթէ անոնք այս նուիրական գործին լծուելու պատրաստութիւնն ունենային:

«Բայց անոնք նման առաջարկները կը մերժէին, որպէսզի քայքայուի եւրոպայի Թեմին մէջ Թափառական խեղճ ժողովուրդին ներկայացուցչութեան գործը եւ իրենք միան իրենց ցանկութեան համաձայն ինքնագլուխ, ինքնավար եւ անպատասխանատու»:

Ինչպէս կը հաստատէ հրաժարագիրն ալ, ամբողջ եօթ - ութ ամիս Թեմական Ժողովուրդը ուրիշ գործ չէ կրցած կատարել, եթէ ոչ գիջումներ եւ բարեմիտ ձեռնարկներ, ըմբռնած «աշիրէթը» համոզելու եւ լեռնէն վար իջեցնելու համար: Բայց անօգուտ: Եւ իբրեւ հետեւանք, ոչինչ եղած է զաղթականներու պիտակի բարւոքման, մանկապարտէզներու բացման, գործազրկութեան տագնապի թեթեւացման եւ ուրիշ հոգերու մասին: Մենք չենք վարանիր դիտել տալու թէ՝ Թեմական Ժողովուրդին անդամութեան համբերութիւնը եւ խոնարհամտութիւնը միեւնոյն կը նշանակեն անկարողութիւն: Մանաւանդ այն օրէն ի վեր որ Թեմական Ժողովուրդը եւ առաջնորդը լքեցին Փարիզի հին գաղութին ընդվզումը, եւ վարձեցին Անիէնի առաջնորդարանը, դահլիճներու աւելորդ յաւելում մը պատճառելով»:

Պատգմ. Ժողովը նախատեսելով այս պարագան, վճռած էր որ Առաջնորդը եւ Թեմ. Ժողովուրդը մնան ու գործեն այդ ազային հաստատութեան մէջ: Առաջին դժուարութեան առջեւ տեղի տալով, անոնք աւելորդ հաճոյք մը պատճառած եղան Փարիզի աղաններուն, քանի որ գետին մը կորնցուցին: Եթէ ուժ մը որ ժան կուժոնի Ժողհրդարանէն դուրս պիտի մնար մէկը կամ միւսը, այն ալ ժողովուրդը ինքն էր, ոչ թէ անոնի մը բրածոներ: Տեղի տալուն մէկ հետեւանքն ալ այն եղաւ, որ այդ մարդիկը գինովցան իրենց յաղողութենէն, աւելի յուզացան, եւ առիթով մը ծեծել փորձեցին կաթող. պատուիրակը, բայց զոհացան հրմշտուքով մը: Անկէ ի վեր, տէր - տիրական են, եւ ոչ իսկ Պալաքեան եպսկ. կը համարձակի վրդովել իրենց խաղաղութիւնը, պարզ պատարագով մը:

Մէկ խօսքով, ամբողջ ճակատին վրայ յաղթական է գլխաւոր «աշիրէթ»ը:

Վա՛յ պարտուածներուն:

... Երկա՞ր կը տեւէ այս լրբութիւնը: Չգիտենք: Պատկերը տխուր է: Եթէ տակաւին ուրիշ գաղտնիքներ կան, Թող ապացուցուին ալ երեւան հանուին: Թող «յաղթականները» իրենք ալ խօսին, եթէ քաջութիւն ունին:

Բայց, վերջ պէտք է գտնէ այս խայտառակութիւնը:

Այս առթիւ, բարեկամաբար խորհուրդ կուտանք ըմբռնողներուն, որ ծանր նստին իրենց տեղը, եւ շատ չյոխորտան իրենց մէկ-երկուքին հպատակութեամբ:

Աչքէն բան սահման մը ունի, մանաւանդ այս երկրին մէջ որուն կարգ ու սարքը հիմնուած է տրամաբանութեան եւ օրէնքի վրայ:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՆՈՐ ԽՐԱՏՆԵՐ

«Նոր երկիր», փարիզի հնչակեան շաբաթաթերթը, շարունակելով վերագնահատման ենթարկել իրենց քաղաքականութիւնը, կը Թելադրէ (6 մարտ).—

«Դաշնակցութիւնը պէտք է քննադատել, նրա սխալները Թէ անցեալում եւ Թէ ներկայում պէտք է երեւան բերել, բայց չպիտի հայհոյել, Թշնամական դիրք չպիտի բռնել դէպի այդ կուսակցութիւնը:

«Եթէ Դաշնակցութեան դէմ պայքարենք այն զէնքով, ինչ զէնքով մինչեւ այսօր պայքարում ենք, դա անպայման պիտի ուժեղացնի այդ կուսակցութիւնը, որովհետեւ Ռամկավարներն ու Հնչակեանները նրանց դէմ պայքարելիս Կոմմունիստների ճակատումն են միում եւ դրանով միակ հայ կուսակցութեան պաշիւը Թողնում են Դաշնակցութեան, որ ներկայանում է այդ դէպքում հայ իտէալների իրականացման կեդրոն, քանի որ Կոմմունիստները անկախ եւ հայ կուսակցութիւն չեն կազմում: Իսկ Սահմանադիր Ռամկավարները ո՛չ մի հող չունին:»

Ցետոյ ծրագիր մը ներկայացնելով նոր գործունէութեան համար, մասնաւորապէս կը շեշտէ.

— «Անպայման ամէն տեսակ կապ կորել Սովէտների եւ Կոմմունիստների հետ եւ գուտ Հընչակեան քաղաքականութիւն վարել: Անհրաժեշտ դէպքում բանակցել Սովէտների հետ Հայաստանի եւ Հայերին վերաբերող այս կամ այն հարցի շուրջը՝ որպէս ազատ եւ հաւասար կողմեր: Զէզոքացնել Սովէտների ազդեցութիւնն ու միջամտութիւնը արտասահմանեան Հայերի կեանքում: Արտասահմանեան հայութեան մէջ ստեղծել ուժեղ միութիւն: Հայ կուսակցութիւնները համերաշխեցնել իրար հետ արտասահմանում:

«Ես այն կարծիքին չեմ, Թէ ճշմարտութիւնները դրեւով մեր ընկերներին կամ ժողովրդին պիտի յուսահատեցնենք, ընդհակառակը, հեգեմոնիեր պատմելով ժողովրդին ոգեւորել, ապահիասթափութեան մատնել, դա սխալ բան է: Նորը արինք մենք կամաւորական շարժման օրերին. նորը արինք կիլիկիայում եւն.: Ժողովրդին պիտի ասել ճշմարտութիւնը, որ նա իր զուր աչքերը չի անկի յոյսերով դէպի Մոսկվա, ուր նստած են Պանթիւրքիզմի ամենաջերմ բարեկամները՝ Թէկուզ համապատասխան ձեւակերպմամբ ծածկած»:

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՊԱՏԿԵՐ

Պոլշեւիկեան «Թրուտ» (5 փետրուար) Թերթը, Թիւերով կը ներկայացնէ Սեվաւրոփոլի բանուորներուն առողջական արտասուելի վիճակը:

Երեք մեծ մետաղագործարաններու մէջ կատարուած քննութեամբ հասկցուած է որ բանուորներուն հարիւրին 79ը հիւանդ է: Իսկ հարիւրին 40ը Թոքախտով, հարիւրին 30ը՝ սիրտի հիւանդութեամբ:

Իբրեւ պատճառ, Թերթը կը յիշէ «գործարաններու մէջ տիրող աշխատանքի չափազանց վատառողջ պայմանները»: եւ կը հեգնէ գործավարներու մեծախօսիկութիւնը, որով անոնք կը յաւակնին «անհրաժեշտ դարմանը գտնելու»:

Էնկիրիի Ազգային Մեծ ժողովը 2ի դէմ 160 ձայնով վաւերացուց Թուրքեւհելլէն համաձայնագիրը՝ փոխանակութեան եւ լքեալ գոյքերու մասին:

ՕՐԸ ՕՐԻՆ

Ռուսաստուրմ առեւտրական դաշնագիրը

Ռուսաստուրք առեւտրական նոր դաշնագիրը հինին բաղդատմամբ շատ նպաստաւոր պայմաններ կը պարունակէ Թուրք վաճառականներուն համար: Ռուսիոյ մէջ սպառող Թրքական ապրանքները որոշ ցանկի մը համաձայն եւ որոշ քանակութեամբ կարելի պիտի ըլլայ արտածել: Ասոնք 40—50 տեսակ ապրանքներ են: Դաշնագրին կցուած այս ցանկը միայն մէկ տարուան համար ի զօրու է:Այս ցանկին մէջ նշանակուած ապրանքներուն քանակը ամէն տարի պիտի կրնայ աւելնալ ի հարկին: Եւ եթէ գալ տարի Ռուսիայէն Թուրքիա ներածուած ապրանքները արտածուածներէն շատ ըլլան, Թուրքիա ալ իր ցանկին քանակութիւնը այդ չափին պիտի կրնայ բարձրացնել: Ռուսերը միւս պետութեանց արտածման չափով պիտի կրնան ապրանք մտցնել Թուրքիա: Ցանկին մէջ նշանակուած են նաեւ ոուս առեւտր. հրապարակէն Թուրքիա մտնելիք ապրանքները:

Դաշնագրին մէկ յօդուածին համաձայն, Ռուսիա արտածուելիք Թրքական ապրանքները 7—8 միլիոն ոսկի կ'ենթադրուին եւ անոնց համար մաքսային ամենանպաստաւորեալ սակացոյցը պիտի գործադրուի: Ասոր փոխարէն Թուրքիա ալ Ռուսիայէն գալիք ապրանքներուն Լոզանի դաշնագիրը կնքող պետութեանց հանդէպ գործադրուած սակացոյցը պիտի գործադրէ: Ռուսերը առեւտր. ներկայացուցչութիւն մը պիտի ունենան Թուրքիոյ մէջ, որ քաղաքական պաշտօնատար իրաւունքներն ու առանձնաշնորհումները պիտի ունենայ: Առեւտր. ներկայացուցչութիւնը իր առեւտր. գործառնութեանց մէջ երկրին օրէնքներուն պիտի ենթարկուի: Ի հարկին Թուրքիա ալ Ռուսիոյ մէջ պիտի կրնայ առեւտր. ներկայացուցիչ մը ունենալ: Ռուսերու հետ բնակութեան պայմանագիր մըն ալ պատրաստուած է, որ երկուստեք հպատակներուն փոխադարձ երկիրները ուղեւորելու եւ բնակելու իրաւունքները կ'ապահովէ: Ռուսիա եւ Թուրքիա փոխադարձաբար իրարու երկիրները պիտի կրնան արտածել տարեկան միայն 7ուկէօական միլիոնի ապրանք: Ռուս արտաքին ներկայացուցչութիւնը 2—3 ճիւղեր ալ պիտի կրնայ բանալ: Ռուսիա կատարուելիք արտածութիւները մասամբ ոուս արտաքին վաճառականութեան ներկայացուցչութեան եւ մասամբ Թուրք վաճառականներուն միջոցաւ պիտի կատարուին: Ռուսիա ներածում կատարելու համար դիմում կատարող Թուրք վաճառականներուն ցանկը կառավարութեան յանձնուած է: Այս ցանկին մէջ նշանակուած են 52 վաճառականներ ու հաստատութիւններ, որոնք պիտի կրնան Ռուսերուն արտօնութեամբ այժմէն Ռուսիա արտածութիւններ կատարել:

Անգլ. ճառատորմը Միջերկրականի մէջ

Անգլիական նաւատորմը ռազմախոտներ պիտի կատարէ Միջերկրականի մէջ, հրամանատարութեամբ ծովակալներ սըր Րօպըրտ Քիյսի եւ սըր Հէնրի Օլիվըրի: Նաւատորմը կը բաղկանայ 80 նաւերէ, որոնց մէջ մարտանաւերու առաջին նաւաբաժինը, յածանաւերու երրորդ նաւաբաժինը, Թորփիլանաւերու երեք տորմիղներ եւ Թորփիլաձակ ընդհովեայ մը: Առաջին անգամն է որ այսքան կարեւոր ռազմախոտ մը տեղի կ'ունենայ: Ճիպրալթարէն անցնելէ առաջ Ատլանտեանի նաւատորմին հետ ռազմախոտներ տեղի ունեցան:

Ֆրանկը պիտի աւրապկոտի՞

Վերջերս գրուեցաւ Թէ Պանք տը Ֆրանսի, Անգլիոյ Պետ. Դրամատան եւ Բայխսպանքի միջեւ բանակցութիւններ կը կատարուին ֆրանքի ամրապնդման մասին հաւաքաբար միջոց մը մտածելու համար:

Ելմտական նախարարութիւնը կը հաղորդէ որ այս լուրը բացարձակապէս անհիմն է: Իրաւ է Թէ Անգլիոյ դրամատան վարիչ Մօնթէկիւ Նօրման եւ Պանք տը Ֆրանսի վարիչ Մօրօ տեսակցած են, սակայն իրենց խօսակցութիւնը կը վերաբերէր միայն Պանք տը Ֆրանսի անգլիական դրամատան մէջ ունեցած ոսկիի պահեստին: Իսկ Մօնթէկիւ Նօրման Պերլին գնաց Ռայխսպանքի տնօրէն Շախթի հետ անյետաձգելի խօսակցութեանց համար:

Ռուս կառաւորնի՞ր Պոլիսեն Չինաստան

«Ճիւմհուրիյէթ» կը տեղեկանայ Թէ՝ Պոլսոյ անգլիական դեսպանատան պաշտօնեաներէն հարիւրապետ Փլարմէն Պոլսոյ Սպիտակ Ռուսերէն կամաւոր կ'ըրձանագրէ Չինաստանի մէջ պատերազմող անգլիական բանակին համար: Արձանագրուելիք կամաւոր Ռուսերէն երաշխաւորագիր կը պահանջուի յայտնող Թէ վեց ամիս պիտի ծառայեն:

Անգլիացիները անոնց 16 անգլ. ոսկի Թոշակ կուտան: Այս Սպիտակ Ռուսերը՝ ուրիշ երկիրներու մէջ հաւաքուող Ռուսերու հետ միացնելու համար Սերպիա պիտի ղրկուին եւ հոնկէ Սեւանիկի ճամբով Չինաստան պիտի ղրկուին: Արդէն Սպիտակ Ռուսերը Սերպիոյ մէջ միութիւն մը ունին:

(Լուրերու չարունակութիւնը կարդալ Դ. Էջ)

ՏԻԳՐԱՆ ՄԵՆԵՂԻԿԵԱՆ ՅՄԱՒ ԹԻԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Կրընոպլէն կը հեռագրեն Մարտ 5 Թուականով.— Հայազգի տիգրան մենեղիկեան, որ 1926 նոյ. 22ին կացինով կտրած էր իր երկրորդ կնոջ գլուխը, վիէնի մէջ, դատապարտուեցաւ մշտնջենական Թիապարտութեան:

— երբեք չեմ զղջար կինս սպանած ըլլալուս համար, յայտարարեց դատարանին մէջ պաղարիւնութեամբ: Պատւոյ խնդիր էր ինծի համար:

Յամառօտ մեղադրանք մը չունէր անոր դէմ: ընթացքը լաւ էր, բայց, ըստ է եղեր ամբաստանեալին Թէ իրմէ զաւակ չուզեր եւ Թէ մարսելու պիտի երթայ, ուրիշի մը հետ ամուսնանալու:

— կը հայհոյէր ինծի, ըսաւ տիգրան, Թարգմանին բերնով: Ան հասարակ մեծ դժուարութիւն կը քաշէին կովկասի լեռներէն եկած այս բիբտ Աբեւելքցիին խօսքերը Թարգմանելու համար:

Նախագահը հարցուց Թէ իսկապէս 374 գլուխ կտրա՞ծ է ռուսական բանակին մէջ ծառայած ատեն:

— Ապուշ խօսքեր են ատոնք:

— ձեր զոհը, Յաթենիկ Դահվէճեանը, որուն հետ պսակուեցաք 1925ին, վիէնի մէջ, հաւանա՞ծ էր ամուսնութեան:

— ի՞նչ ըսել կ'ուզէք, բունի՞ առեր եմ:

[illegible] քը, կը հայհոյէր հօրը եւ մօրը եւ չէր յարգեր հարսանեկան նարօտը:

— երբեք չեմ զղջար: եթէ պատուով չպիտի ապրիմ, լաւ է որ սատկիմ:

վկայութեան ընթացքին, հաստատուեցաւ որ, սոսկալի կռիւէ մը յետոյ, իր կինը խոշտանգելէ, աղջիկը վիրաւորելէ յետոյ, Թենեղիկեան երկու խելայեղ զոհերը հետապնդեց մինչեւ դրացիի մը տունը եւ այնտեղ էր որ տեղի ունեցաւ գլխատութիւնը. ցաթենիկի գլուխը տակաւին վզին փակած կը մնար մսի շերտով մը: տիգրան այդ ալ փրցուց, իբրեւ ճշմարիտ դահիճ մը, եւ յետոյ, մազերէն բռնելով, պատուհանէն դուրս նետեց գլուխը:

Պաշտպան փաստաբանը յիշեցուց Թէ տիգրան սպանութենէն յետոյ անձնասպան ըլլալ ուզած էր, բայց չուանը փրթաւ:

վկաներէն տիկին Զուարթ Թարխանեան պատմեց Թէ «իր ամուսինին կողմէ հալածուելով, ցաթենիկ կը պոռար. «Ապատէ զիս, Զուարթ քուրիկ»: ես ի գուր պաղատեցայ Թենեղիկեանի որ կը ճօճէր կացինը. եւ յետոյ երախաս գիրկս էր, կ'ուզէի պաշտպանել»:

երբ ամբաստանեալին հարցուցին Թէ ըսելիք մը ունի՞ վկայութեանց համար, տիգրան ըսաւ.

— ի՞նչ օգուտ: ես գործս վերջացուցի մէկ վայրկեանէն:

Պետրոս, զոհին եղբայրը, յայտնեց Թէ տիգրան իր քոյրը սպանած է շահախնդրական մուէ նպատակով մը: Ամբաստանեալը իր աներձագն ալ սպանել կ'ուզէր:

ընդհ. դատախազը խստագոյն պատիժը պահանջեց: պաշտպան փաստաբան Պարպ գթութիւն խնդրեց, դիտել տալով.

— Պատճեցէք որ այս Աբեւելքցիները Ֆրանսացի դառնան, որպէսզի կարենանք դատել, առանց նկատի առնելու ազգագրական երեւոյթները:

տիգրան մինչեւ վերջը կ'ուրանար Թէ իր կնոջ գլուխէն զատ, 374 գլուխներ ալ կտրած է կամաւորական շարժման ատեն: բանտին մէջ 30 քիլօ պակսած էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՍԳՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈԼԵԿՏԻՎԸ ԵՎ ՀՍԳՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՍԳՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈԼԵԿՏԻՎԸ ԵՎ ՀՍԳՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԴՎՏԻ

ՎԱՊԱՅՈՒ ՖԱՆՏԱՆԻՖ

— Ես ինչ կոպիտ մարդ-ասեղ-ասեղնագործուհի եմ, որ ինձ ամուսնացնում եմ մի այնպիսի մարդու հետ, որին ես ոչ միայն չեմ սիրում, այլև ատում եմ... Ես ինչ անմիտ աղջիկ

ՇԱՆԿԱԾ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

Զօրավար Շանկ-Շունկ-Շանկի զինուորները, որոնք քանի մը օր առաջ Շանկայի շրջանը բերուած էին, սկսած են արագօրէն նահանջել Քանթոնի ուժերուն առջեւ, առանց լուրջ ընդհարումներու: Հիւսիսի զինուորներուն նահանջը սկսաւ շաբաթ առաւօտ, երբ յանկարծ ազգայնականներու բանակը անակնկալ կերպով երեւցաւ այդ շրջանին մէջ: Ազգայնականներու յարձակումը ուղղուած էր Շանկայ - Նանքին երկաթուղագծին դէմ: Շանկ-Շունկ-Շանկի բանակին հետ յանկարծական հանդիպումը տեղի ունեցաւ Սուշովի մէջ, Շանկայէն 30 մղոն դէպի հիւսիս: Թայհօ լիճին եզերքի Վուքիանկ քաղաքը գրաւուեցաւ: Ցիշեալ շրջանի հրամանատար Զօր. Փի Շաօշէն ետ քաշեց իր բոլոր զինուորները, միայն 2000 հոգի ձգելով Շանկայի հարաւը՝ Սունկքիանկի մօտ:

կացութիւնը շատ շփոթ է: Շանկայի զինարանին պետ Զօր. Լի Փաօշէն Քանթոնցիներու կողմը անցաւ:

Շանթունկի զինուորները գրաւեցին ռուսական «Փոմժաթ Լէնինա» շոգենաւը, որ թէյ կը փոխադրէր Եանկցէէն Հանքէու: Մէջի ճամբորդները, որոնց կարգին քանի մը պետական մարդիկ, ձերբակալուած են: Ռուս հիւպատոսը պահանջեց փէքինի կառավարութենէն ազատ թողուլ նաւը:

Շանթունկի զինուորական կառավարիչը կը շարունակէ ամրացնել Շանկայ-Նանքին երկաթուղագծի զանազան կէտերը: Զօր. Սըն-Շուան-Ֆանկ Շանկայէն Նակազաքի (Ճափոն) մեկնեցաւ, հետը տանելով 500,000 տոլար:

Շանկայ պաշարուած է:

Թուրքիոյ քնակչութեան խնդիրը

Թուրքիոյ առողջապահական գործավար բէֆիք պէյ հետեւեալ յայտարարութիւնները ըրած է խմբագրի մը.

Մեր բնակչութիւնը, համեմատած երկրին ընդարձակութեան հետ, քիչ է եւ կրնայ բազմանալ: Բայց մեր բնակչութեան նուազութեան գլխաւոր պատճառը մանուկներու մահացութիւնը չէ: Եթէ ճիշդ ըլլար ցոյց տրուած 75 առ հարիւր համեմատութիւնը, մեր երկիրը շատոնց փճացած կ'ըլլար: Մինչդեռ Թուրքիա գիտական եւ ընկերային տեսակէտով շատ ուժեղ է, ու կրնամ ըսել թէ բնակչութեան թիւը կ'աւելնայ: Մեր վիճակագրութիւններէն որոշակի կ'երեւի թէ. 1923ին ծնածներու մահացութեան համեմատութիւնը հարիւրին 20, եւ 1925ին ալ՝ հարիւրին 25 եղած է: Իսկ մեր գործավարութեան տեղեկութիւնները կը հաստատեն թէ, այդ համեմատութիւնը հարիւրին 30էն աւելի չէ ներկայիս:

Անկասկած այս համեմատութիւնն ալ շատ է, եւ ամբողջ ուժով կ'աշխատինք նուազեցնել զայն: Մեր ամէնէն կարեւոր գործակալութիւնը պիտի ըլլայ մանկատածութիւն սորվեցնել ծնողներուն: Այն բնակիչները, որոնք կը պնդեն թէ մահացութեան համեմատութիւնը 75 առ հարիւր է, թող գիտնան ուրեմն որ գիւղերու մէջ կը ծախուին գիրքեր, որոնցմով քարոզութիւն կ'ըլլայ զաւակ չունենալու միջոցներուն մասին: Մինչդեռ զաւակ չունենալը ոճիր կը համարուի ամբողջ աշխարհի մէջ, եւ օրէնքը այս մասին պատժական տրամադրութիւններ ունի:

Նուէր ջարդարարներու ընտանիքներուն

Էնկիւրի որոշած էր Հայերու «լքեալ» գոյքերէն կալուածներ տալ «Զինադադարի միջոցին հայ քոմիթէճիներուն կողմէ սպաննուած եւ Հայերու տեղահանութեան խնդրոյն հետեւանքով տերորի ենթարկուած Թուրք նահատակներու ընտանիքներուն»:

Վերջին թղթաբերով հասած Թուրքերէն թերթերը կը գրեն թէ այս որոշումը արդէն իսկ սկսած է գործադրուիլ եւ 18 «շէհիտ»ներու ընտանիքներուն 20,000ական Թրքական ոսկի արժէքով հայկական «լքեալ» գոյքեր պիտի տրուին: Այս կարգին մէջ կը գտնուին Թալէաթ եւ Ճէմալ փաշաներու, Տոքթ. Պէհաէտտին Շաքիրի, Ճէմալ Ազմիի, Պօղոզլեանի նախորդ գայմագամ Քէմալի ընտանիքները:

Գործավարներու Խորհուրդը որոշած է ամէնէն առաջ վարձատրել Պօղոզլեանի գայմագամ Քէմալ պէյի ընտանիքը: Քէմալ ո՛չ թէ «հայ քոմիթէճիներուն» կողմէ սպաննուած էր, այլ Պոլսոյ մէջ Քիւրտ Մուսթաֆա փաշայի պատերազմական ատեանին կողմէ դատուած ու մահուան դատապարտուելէ վերջ կախաղան հանուած էր: Քէմալ այդ թուականէն մինչեւ այսօր ալ դեռ ազգային առաջին «նահատակ»ը կը նկատուի: Այդ պատճառով ալ իր ընտանիքը կը ստանայ ամէնէն խոշոր պատառը՝ Բերայի մէջ Հիւսէյին աղա թաղը ափաթմանի մը, եւ Գատը գիւղի մէջ տուն մը: Ու այս ահագին աւարը՝ իր կնոջ Խատիճէի, աղջկան Միւզէյէդի եւ տղուն Ատնանի համար միայն:

Անվերջ փոթորիկ Մատակասքարի մէջ

Մատակասքարի արեւելեան եզերքին վրայ պայթած ահռելի ուրագան մը բոլորովին քանդեց է Թամաթաւ քաղաքը, ուր մեռան 500 հոգի: Եզերքին միւս մասին վրայ մեռնողներու թիւն է 100: Անթելի կայանը, նաւամատոյցը, մաքսատունը, նաւահանգիստը գտնուող փոքր նաւերը փոթորիկէն աւերուած են: Ուրիշ մեծ նաւեր ալ ընկղմած են: Կորուստ կը գնահատուի 100 միլիոն ֆրանք:

Թրուպիլներու անձնասպանութիւնը

Պոլիսէն հեռագիր մը կ'ըսէ թէ կառավարութիւնը սկսած է լրջօրէն մտատանջուիլ թուրք մանկամարդ կիներու եւ աղջիկներու հետզհետէ շատցող անձնասպանութեան ղէպքերով: Կառավարութիւնը կը վախնայ որ այս համաճարակը իրական ընկերային տագնապ մը դառնայ եթէ խիստ կարուկ միջոցներ ձեռք չառնուին:

Հին հազար տարուան ինութիւնները

Փէնսիլվանիոյ համալսարանին եւ Բրիտանական թանգարանին կողմէ ղրկուած հնախոյզ յանձնախումբը շարունակելով իր պրպտումները Միջագետքի մէջ, երեւան հանած է գերեզմանատուն մը, որ Քրիստոսէ առաջ 3000 տարուան հնութիւն ունի, եւ կը գտնուի Նաբուգոդոնոսոր Թագաւորի տաճարին մօտ: Գերեզմանատան դամբաններուն մէջ գտնուած են թանկարժէք քարերով պճնուած ճոխ զարդեր, այն տունի ոսկերչական արհեստի հրաշալիքներէն՝ ոսկիէ եւ արծաթէ մատնիներ, թագեր, մանեակներ եւ ապարանջաններ: Հնախոյզները պեղումներ կատարած են նաեւ Նաբուգոդոնոսորի օրերէն մնացած փողոցի մը տակ եւ գտած են պատմական մեծ արժէք ներկայացնող առարկաներ, ու փղոսկրէ տախտակ մը՝ Փիւնիկեան արձանագրութիւններով:

Աքիւղի մէջ ռումբ մը կը պայթի

Շաբաթ իրիկուն ժամը 9.30ին անծանօթ մը ռումբ մը պայթեցուց Անիէս Շոռօն գործատան դռնապանին պատուհանին առջեւ: Պայթիւնը մարդու վնաս չտուաւ, բայց նիւթական կարեւոր կորուստներ պատճառեց:

Դռնապանը կ'ըսէ թէ գործի համար դիմած և մերժուած իտալացի մըն է որ ռումբը պայթեցուցած է վրէժ լուծելու համար: Բայց դռնապանին յայտարարութիւնը կասկածելի կը թուի ոստիկանութեան:

"ՅԱՐԴԱՊՂ"Ի ՀԱՆԴԷՍԸ

12 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ ԻՐԻՆԵՐ, ԺԱՄԸ 8.30ԻՆ
ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖԻԻ ՄԷՋ, 184, Boulevard St-Germain
Յուցադրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերուն
Կը մասնակցին՝ Շահիսաթունի, Երգիչ Նալեասարդեան, Մարութեան, դաշնակահար Ալիքսանեան, պարող Իկար:
ՏՈՄՍԵՐՈՒԻ ԳԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՎԻՃԱԿԱԽՈՂԸ

Փարիզի Հայ կարմիր խաչի վերջին պարահանդէսին ատեն սարքուած վիճակախաղէն շահուած են հետեւեալ թիւերը, (62 կտոր).—

1471, 799, 1168, 801, 1393, 20, 857, 1344, 333, 1049, 179, 151, 1022, 48, 1144, 1448, 371, 49, 308, 1119, 350, 470, 428, 1373, 73, 886, 917, 133, 201, 749, 1177, 719, 855, 804, 181, 1496, 459, 152, 82, 499, 1009, 1379, 50, 1449, 424, 1353, 1155, 677, 846, 1450, 366, 1297, 1405, 1411, 1148, 15, 426, 890, 616, 832, 1128, 1298:

(Կնիք)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. «Քրիստափոր» խումբին անդամները ինչպէս նաեւ սէն միշէլի եւ անոր յարակից թաղերը բնակող բոլոր դաշնակցականները կը հրաւիրուին մէթրօ Օտէոնի դիմաց, Քաֆէ Րօշէ, վաղը Զորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին: Ներկայ պիտի ըլլան Փարիզի Շրջ. կոմիտէի անդամները:

Հ. Ց. Դ. Ռոստոմ խումբի ժողովը վաղը, Չորեքշաբթի մարտ 9, ժամը 8.30ին Ռոստոմի սրահը: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՅԱՐԴՈՊՂԻ առաջիկայ գրական երեկոն, 10 մարտ Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա ճաշարանը: վաիրամ կաքաւեան կը խօսի Միւրմէլեանի «Լոյս Ջուարթ» քերթուածներու հաւաքածոյին մասին: կը հրաւիրուին անդամներն ու համակիրները:

ԲԱՐՁՐ ՀԱՅՐԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Լիոնի մէջ գտնուող խումբ մը հայրենակիցներ հաւաքուելով կազմեցինք «բարձր Հայքի Հայրենակցականմիութիւն»ը, որուն նպատակն է օգնել իր Թշուառ հայրենակիցներուն, ազգային միութիւններու հետ կապ հաստատել, միութեանս բարգաւաճման եւ փոխադարձ գործակցութեամբ աշխատիլ հայ ժողովուրդի բարքերու եւ ազգային նկարագրի պահպանման համար:

Այս առթիւ պարտ համարեցինք յայտարարել, որ եթէ կան ուրիշ հայրենակիցներ որ կը փափաքին անդամագրուիլ միութեան, եւ հրաւէր չեն ստացած, Թող բարի ըլլան անձամբ կամ նամակով ներկայանալու պ. Արմենակ Աւետեանի. 201 Avenue de Saxe:

Լիոն Տ.Տ.Մամբրէեան

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Մշեցի Յովհաննէս Բորոյեանէ (Լիոն) իր ճիշդ հասցէն ուղարկել «Յառաջ»ի, աւանդ մը ստանալու համար:

Կահագործ *աժան դիներով կը շինուին եւ կը նորոգուին անակաս կարասիներ, գրասենեակի սեղաններ եւ աթոռներ, ծախու են թրքական թաւվուններ: Դիմել՝* 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ՍՊԱՍՈՒԻՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Դիմել «Մասիս» Տպարանի վարչութեան, 208 bis, Rue Lafayette: *Մէթրօ՝* Louis Blanc *կամ* Jaurès.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Տիգրանուհի Միկէնեան կը փնտռէ իր ամուսինը Ամասիացի Ռէժիի պաշտօնեայ Յովհաննէս Միկէնեանը որ Իզմիրի զէպքէն վերջ Թուրքերու կողմէ Ուշլայի մէջ զինուորագրուած էր: Տեղեկացնել՝ խմբագրութեան: Կը խնդրուի Յունահայ եւ Պոլսահայ թերթերէն արտատպել:

— Խնամսի Դուման գիւղէն Ազատ Գէորգեան որ հինգ ամիս առաջ Մարսէյլ կը գտնուէր: Կը կարծուի որ այժմ Փարիզ է. Գրել՝ Abkar Assadourian, Rue AnatoleFrance Cantine Arménien Le Creusot (S. et L.):

— Վահան, Լուսվիկ, Մարիամ, Սիրանուշ եւ Թագուհի Քիւրքեան որոնք Տէր-Զօր աքսորուած էին: Տեղեկացնել՝ Համբարձում Քիւրքեանի՝ Usine St.-Laurent de Ceris, (Charente) France: *Կը խնդրուի արտատպել:*

— Տիկին Վարդենի Իշխէճեան որ Իզմիրի աղէտէն վերջ ամուսնոյն հետ Գանտիա (Կրետէ) ապաստանած է, կը փնտռէ իր քոյրերը Մարիամ եւ Լուսաբեր, որոնց մասին լուր առած է թէ գործի գործարանի մը մէջ կ'աշխատին Լիոն, Մարսէյլ կամ շրջակայքը: Իմացնել Լիոնի Ազգ. Միութեան վարչութեան, 75, Avenue Berthelot, Lyon:

— Պրուսայի Մեծ Նոր Գիւղէն Գէորգ Մարգիսեան (Հեղինէեան) հօր անունը Յովհաննէս, մօր անունը Ովսաննա որ 1925ին Թրակիայէն Յունաստան գացած էր: Իմացնել՝ Անդրէաս Մարգիսեանի Aux Établissements A. Vital, Aubenas, Ardèchè, France: *Կը խնդրուի յունահայ թերթերէն արտատպել:*

— Զօրումցի Էշմաս Վարժապետեան կը փնտռէ իր որդին Յովհաննէս Վարժապետեան, 26 տարեկան որ կորսուած է Տէր-Զօրի եւ Մուսուլի կողմերը: Գրել՝ Բարսեղ Լօշեանի՝ 20 Rue de Bezons, Courbevoie, (Seine): *Լուր տուողին նուէր մը պիտի տրուի:*

ԱԿԱՌԱՆ

7 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Սթերլին,	L. St.	124	10
Տոլար,	Dollar	25	59
Մարք (ոսկի)	100 Mark	606	—
Թրքական Ոսկի.	L. Trq.	12	80
Թրք. ոսկի	» or	115	50
Մէճիտիէ	Médjidié	9	—
Լէվա 100 հատ	Léva	18	65
Տրահմի	» Drachme	33	25
Լիր	» » Lire	112	50
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	71	25
Ջուից.	» Frc. Suisse	491	50
Լէյ 100 հատ	Ley	15	20
Ջերվոնեց	(10 Roubles or)	95	—

ԱՐԺԵԹՈՒՂԹ			
եգ. Ֆր. Ֆոնսիէ	I Cr. Fonc. Eg.	3045	—
»	II »	1910	—
»	III »	1700	—
Թումանի երկաղ.	Lots turcs	164	—

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

IMPRIMERIE - **MASSIS** - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐԲԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—Կիրակի եւ տօն օրեր 9-12

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ՅԱՆՁԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՃՕԼՕԼԵԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**
9 RUE PAPILLON, PARIS IX
Square Montholon դիմաց Rue Lafayette կից
Métro : Cadet կամ Poissonnière
Բաց է ամէն օր ժամը 9էն 6: Գեղարուեստական ճաշակով պատրաստուած անձերի աշխատութիւններ: Ինքնութեան իսկական լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ:
ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՑԿԵՐ ԵՒ ՑՆՕՐԴՆ՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Առտնինաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ"

փարիզի հայկ. ժամադրավայրը: Աբեւելեան կերակուրները
Համեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷՎԻԼԻԱ ՅԱՆՁԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Աբեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Յանձնարարի Աբեւելեան վաճառներ ալ կը ծախուին

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԸՆՀՐԱԾԾԵՑ ԲՈԼՈՐ ՓՐԱՆՍԱՀԱՅԵՐՈՒՆ
Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ: Թարգմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով: Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ:
ԱՐԱՓ ՉԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
VAHAN YARJANIAN
CONTENTIEUX
5 Rue Cardinal Mercier Paris, (9e)
Tél. CENTRAL 96-70 կամ 97-39 Métro: CLICHY
» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ
Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9-12 և 2-7 բացի Կիրակի

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՁԻՈ-ՀԱՅ ԴՐԱՏՈՒՆԸ
15 բիւ տէ Տամինիքէն

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի պայմաններով յարկաբաժին մը որ կը բաղկանայ երկու սենեակներէ եւ խոհանոցէ մը, Route de Versailles *վրայ,* Billancourt: *Դիմել՝ նախկին Մոսկուա-Կովկաս ճաշարանը,* 41 Rue de St. Cloud, Billancourt.

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԴՈՒՆ ՄԸ 7000 ՖՐԱՆԿՈՎ

Կը ծախուի պոլսական լիւքս գայմաքի, թուլում պանիրի եւ ճերմակ պանիրի գործիքներ, շինելու արհեստն ալ սորվեցնելուն եւ եղած ապրանքը տեղափոխելու դիւրութիւններ ևս ցուցնելու պայմանաւ: Օրական 30—40 ֆրանք զուտ շահ: Դիմել «Յառաջ»ի վարչութեան:

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՏԷ ՁԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենադարանի գիրքերու:

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

Հ Ա Յ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԵՐԿԵՐ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Arakélian, Contes et Nouvelles, 12 frs.:

Aharonian, Vers la Liberté.

Aslan K., L'Arménie et les Arméniens 20.

Baronian, Maître Balthazar.

Barsamian, L'Homme et la Femme 6.

Barsamian, Elle et Moi 7.

Basmadjian, Histoire Moderne des Arméniens 12.

Chirvanzadé, La Possédée.

Djivani, Les plus belles chansons, 5.

Macler F., Ancienne Eglise d'Arménie 12.

Macler F., Contes et Légendes de l'Arménie 12.

Macler F., La Version Arménienne 12.

Macler F., Contes Arméniens 12.

Mesrob K. L'Arménie au point de vue... 12.

Minasse Mme Iskouhi, Nouvelles et Contes 15.

Minasse Mme Iskouhi, Flore Attique, poème 6.

Minasse Mme Iskouhi, Voix dans la Nuit, poème 7.50.

Morgan J. de, Histoire du Peuple Arménien 40.

Papazian V., Santho 12.

Raffi, Samouel, 2 volumes.

Sandaldjian, Père J., Histoire documentaire de l'Arménie depuis du Paganisme, 2 grands volumes 100.

Tcheraz M., Nouvelles Orientales 12.

Tchobanian A., La Femme Arménienne 6.

Tchobanian A., La Rose d'Arménie, 2 grands volumes illustré 150.

Zartarian R., Clarté Nocturne 12 francs.

Պատարագամատոյց հայերէն դերէն 1926 փարիզ 35 ֆր.:

Նոր Հայաստանի գոնձարքարաէսը: Պատրաստեց Կ. Բեմաջեան (քիչ օրէն լոյս տեսնէ):

Ֆրանսայի եւ գաղթավայրու փոսթի ծախք չկայ:

Դիմել՝ Librairie BALENT 233 Fbg. St. Martin, Paris 10

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
9
ՄԱՐՏ
1927

9 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 280

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՕՐՕՐ ՄԻ ԿԱՐԴԱՔ

Ուշագրաւ է որ, միայն դաշնակցական թերթերն ու գործիչները լրջօրէն կը զբաղին Հայաստանի եւ հայ ժողովուրդին ապառնացող վտանգով։

Մենք են որ, դիրքերով, վաստերով, թուանշաններով, նոյն իսկ թշնամի աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններով կը պարզեն գալիքը, անխուսափելի չարիքը։ Եւ միշտ ալ կ'առարկեն, համաձայն իրենց հայեցողութեան եւ փորձառութեան։

Ինչո՞ւ այսպէս։ Շատ կարճ է պատասխանը.

— Դաշնակցութիւնը խորհրդային իշխանութեան թշնամի ըլլալով, կ'ուզէ վարկաբեկել զայն։

Կան ալ որ, ոչ թէ պոլշեւիկներուն, այլ բուն իսկ Հայաստին թշնամի կը հռչակեն Դաշնակցութիւնը, «հակահայաստանեան» կ'որակեն զայն, ու կը շարունակեն երկու ականջի վրայ քնանալ։

Մենք շա՛տ պիտի ուզէինք որ վտանգի բոլոր ազդանշանները, Հայաստանէն հասած բոլոր տեղեկութիւնները ու փաստերը սուտ ըլլային, տեսողութեան պատրանք, եւ Դաշնակցութիւնը անարգութեան սիւնին գամուէր, խորտակուէր, անգամ մըն ալ ոտքի չկանգնելու պայմանով։

կը մաղթէինք, մանաւանդ, որ նուազագոյն ձլասով ազատուէր հայ ժողովուրդը, շնորհիւ խորհրդային վարիչներու ուղղո՛ւն եւ իմաստո՛ւն քաղաքականութեան, եւ մենք ծնանիլ սեւերես։

Իսկ մինչեւ այդ, մեր սրբազան պարտականութիւնն է ուշադրութեան յանձնել ինչ որ կ'անցնի կը դառնայ մեր մինուճար հայրենիքին մէջ, եւ անոր բոլորտիքը։ Պիտի շարունակենք ամէնուն երեսին պոռալ ճշմարտութիւնը, մինչեւ որ ջլափին, եւ անոր համեմատ քաղաքականութիւն վարեն, կամ հանձնուին վարել։

Քանի մը օր առաջ, երեւանէն հասած ընդարձակ թղթակցութիւն մը, դժբախտաբար կը հաստատէ ինչ որ կը պրուի ամիներէ ի վեր,— Թուրքերը տուն-տեղ կ'ըլլան Հայաստանի մէջ։ Ամբողջ շրջաններ, եւ մանաւանդ Զանգիբասարը լեցուեր են Թուրքերով։ Անոնք անարգել Հայաստան կը մտնեն ամէն կողմէ, եւ կը տեղաւորուին առանց դժուարութեան։ Անոնց ներհասական վիճակը անհամեմատ աւելի բարձր է քան հայ գաղթականներուն կացութիւնը։ Անոնք լիուլի կը վայելեն փոքրամասնութեանց իրաւունքները, միեւնոյն ատեն ամբողջական թրքական ճակատը։ Դեռ վերջերս «Խորհրդային Հայաստան» կը գրէր թէ կառավարութիւնը Թուրքերէն գիրքեր տպագրած է Բագու, Վէդի Բասարի Թուրք դպրոցներուն համար։ Եւ նոյն թերթն էր, դարձեալ, որ կը մատնանշէր թէ Թուրքին Ախտայի հայ գիւղացիները արցունք կը թափեն որ պարտէզ չունին իրենց 130 աշակերտներուն համար, ոչ ալ տեղ մը դպրոց ունենալու համար։

Հայաստանէն հասած նամակներուն մէջ փափուկ մանրամասնութիւններ կան զորս կարելի չէ գրի առնել։ կը բաւէ նշան ոգին պարզել։ Եւ այդ գործը կը կատարէ, «Յառաջ»ի մէջ, հայրենակից մը որ վերջերս հեռացած է Երեւանէն։ Իր յօդուածաշարքին մէջ՝ (Հայաստանը ինչպէս որ է) ընթերցողները արդացին հետեւեալ հատուածները, չոր եւ պերճախօս.

— «Թուրք - Թաթարները խաղաղութեամբ եւ աստիճանաբար կը նուաճեն Հայաստանը։ Դարալագեազի եւ Ջանգեզուրի ոգամասերուն վրայ տեղաւորուած են Թուրքեր։ Միլլի Դարայի, Ղզղիի եւ Ջերմանիսի ձորերը անոնց ձեռքն են։ Ազրաքսի ափի երկայնութեամբ ձգուած են Թրքական գիւղեր»։

Անոնք եւ Հրազդանի շրջանէն շատ մը գիւղեր Թաքստոցներ են Թուրք-Թաթար գործակալներու համար, եւ «օր մըն ալ պիտի ծառայեն իրբեւ ռազմական կէտեր»։ Լէռնային Ղարաբաղի կողմին իր ձեռքը պահելով, Ազրբէջան «կ'աշխատի փակել Հայաստան տանող ամէն ճամբայ եւ իրեն համար բաց պահել ամէն դուռ»։

Այս իմաստով տեղեկութիւններ հրատարակած ենք վեց ամիս առաջ ալ, մանրամասն թղթակցութեամբ մը։ կը նշանակէ թէ պատկերը ոչ միայն չէ բարեփոխուած, այլ եւ կը ծանրանայ։ Երկիւղ, մեր ընթերցողներէն մէկը խմբագրութեան կը հարցնէր ընտանեկան նամակ մը. գրուած՝ Ռուսաստանէն։ Պիտի հրատարակենք վաղը, բայց կ'աճապարենք արտատպել յատկանշական հատուած մը.

—«Մենք կուլանք Հայու համար, Հայաստանի համար, Հայաստան ալ հայ չկայ. ան ի՞նչպէս բան է։ Թուրքը շատ է քան զՀայը»։

Ինչ է տարբերութիւնը այս միամիտ տողերուն եւ միւս հատուածի տեղեկութիւններուն։

Կայ տարբերութիւնը այս փաստերուն, եւ այն խօսքին զոր արտասանեցին Սասունցիները, երեւանի ծանօթ դահավարութեան առեն. «Մենք այս Հայաստանին Հայաստան կ'ուզենք»։

Ահա թէ ինչո՛ւ բարեկամաբար խորհուրդ կուտանք ամէնքն, պոլշեւիկ ըլլան թէ ռամկավար, կոմիսար թէ ժամկոչ, չէ՛ որ թէ հակադաշնակցական, ամէնո՛ւն, որ զգուշանան օրօր ըսելէ, Փարիզէն մինչեւ Ամերիկա։

Չգիտնալը մեղք չէ, բայց չհետաքրքրուիլը՝ աններելի է, մանաւանդ երբ ամբողջ ժողովուրդի մը գոյութեան խնդիրը կայ։ Եթէ չեն հաւատար տեղացող փաստերուն, ճամբան բռնեն։ Թող իրենց մասին պրպտումներ կատարեն եւ իրականութիւնը պարզեն։

Բայց որքան ատեն որ աւելի բան մը չեն գիտեր կամ չեն ուզեր գիտնալ, եւ իրենց աչքերն ու ականջները փակած, կը շարունակեն սաղմոս երգել, արժանի պիտի ըլլան օղակի մէջ գտնուած ժողովուրդի անէծքին։

Շ.

ՄԱՄՈՒԼ

«ՀԱՐԻՒՐԻՆ ՔԱՆԻ՞»

Թուրք թերթերը կը շարունակեն քրքրել մանուկներու մահուան եւ բնակչութեան նուազման խնդիրները։ Քէմալական եօնուս Նատի «ձիւմհուրիյէթ»ի մէջ դիտել կուտայ.

— «Մանկապաշտպան Միութեան ընդհանուր քարտուղար և Գըրդլար Էլիի երեսփոխան Տօքթ. Ֆուատ պէյ, հինէն ի վեր համոզուած է թէ մանուկներու մահացութիւնը շատ է Թուրքիոյ մէջ։ Քորա-հինգ տարի առաջ, համաժողովի մը մէջ ըսաւ թէ համեմատութիւնը հարիւրին 75 է։ Թէվֆիք Բիւշտի պէյ առարկեց, ըսելով թէ համեմատութիւնը ոչ թէ հարիւրին 75, այլ հազարին 75 իսկ չէ։

«Սակայն Ֆուատ պէյ թերեւս չէր հասկնար խօսող մարդ չէ. միեւնոյն ատեն իր դասը յաժառօրէն հետապնդող է։ Ան ատենէն ի վեր, իր պաշտօնին իսկ բերումով, վիճակագրութիւններով կը զբաղէր։ Վերջապէս, անցեալները կատարուած վիճակագրութիւնն ալ նկատի ունենալով, ըսաւ թէ մանուկներու մահացութեան համեմատութիւնը հարիւրին 75 է։ Եւ ես ալ, այդ համեմատութեան ահաւորութեան առջեւ, դառն արտայայտուեցայ։ Ասոր վրայ Անատոլուի գործակալութիւնը դեկոյցի ձեւով բան մը հրատարակեց, ըսելով թէ իրական համեմատութիւնը հարիւրին 30էն աւելի չէ։

«Եւ ահա վիճաբանութիւն մը, Առողջապահական գործավարութեան եւ Մանկապաշտպան Ընկերութեան մէջեւ։ Սակայն ի՞նչ օգուտ վիճելէ, երբ անդին մեր պզտիկները կը մեռնին։ 75 կամ 30 առ հարիւր, համեմատութիւնը միշտ մեծ է, և բոլորիս պարտքն է դարմանի մասին խորհիլ։»

ՏՈՒՆԵՐ ՊԼՅՈՒՐԻԹԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Պէյրութէն կը գրեն թէ Սուրիոյ Ֆրանս. մարզպանին եւ տեղական կառավարութեան աջակցութեամբ Պէյրութի դուրսը, Էշրէֆիէի բարձունքին վրայ պիտի կառուցուին 500 տուներ, որոնք պիտի յատկացուին հայ գաղթականներուն։ Պայման պիտի դրուի որ տարեկան մասնավճարներով գաղթականները վճարեն տուներուն գինը եւ տէր դառնան անոնց։ Այս ձեւով պիտի ցրուեն գաղթականներու կայանը։

ՋԻՒՆ - ՋՄԵՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. — Փետրուար 1ի երկրորդ տասնեակին ընթացքին առատօրէն ձիւնած է Հայաստանի մէջ։ Ուրբաննի, Աշտարակի եւ Սամադարի շրջանին գիւղերը թաղուած են ձիւնի տակ։ Ամէն հաղորդակցութիւն դադրած է։

Ուստ այս ձիւնին շնորհիւ գիւղացիները հրդեհ մը մարած են ձիւնով։

Երեւանի մէջ սաստիկ ցուրտ մը կը տիրէ։ Այս պատճառով քաղաքին նախակրթարաններու եւ եօթնամեայ վարժարաններու առաջին դասարանի աշակերտութեան (փոքրերուն) արձակուրդ տրուած է Փետրուարի 19էն մինչեւ 27։ Նոյնը նաեւ Ղարդուղուլուի մէջ։

Մեղրիէն կալեր գիւղը գացած պահուն Ազաքել Մելիք Ասլանեանը, իր ջորիին հետ, կը սառի ճամբան։ կալերի գիւղական խորհուրդի նախագահին ալ, օգտուելով գիւղացիին սառած վիճակէն, խեղճին դրամները կը կողոպտէ...

ՕՐԸ ՕՐԻՆ

Թուրքիա եւ Պալքանները

«Միլլիյէթ»ի մէջ Սղերդի երեսփոխան Մահմուտ պէյ յօդուած մը կը հրատարակէ Պալքաններու մէջ Թուրքիոյ հետապնդած քաղաքականութեան մասին։ Յիշելէ վերջ թէ Թուրքիոյ քաղաքական շրջանակներուն պալքանեան դէպքերը խաղաղօրէն դիտելը երբեք անշարժութեան նշան չէ, Մահմուտ պէյ կ'աւելցնէ թէ երբ գործելու ժամը գայ, Էնկիւրի դիրք պիտի բռնէ։ Որովհետեւ, Թուրքիա թէեւ յարձակողական ոեւէ ծրագիր չի մնուցաներ, սակայն չի կրնար չշահագրգռուիլ պալքանեան քաղաքականութեամբ։ Ակնարկելով իտալեւալպանական դաշնագրին պատճառած դժգոհութեան վրայ, «Միլլիյէթ» կը քննադատէ Պելկրատի կառավարութեան բռնած տատամսոտ եւ վարանոտ դիրքը յիշեալ դաշնագիրը ստորագրելուն յաջորդող տագնապալի շրջանին։ Կ'ըսէ թէ Պելկրատի մէջ զրոյց կը տարածեն թէ եուկօսլաւիա կը փափաքի դիրք բռնել Ռուսիոյ եւ Թուրքիոյ կողքին եւ միացեալ ճակատ կազմել անոնց հետ։ «Թուրքիա կը հերքէ այս զրոյցները», կ'ըսէ Պոլսոյ կիսապաշտօն օրկանը։

«Այսպիսի սխալ զրոյցներ տարածելը ոչ մէկ օգուտ ունի։ Թուրքիա, որ բարեկամական յարաբերութիւններ կը մշակէ Իտալիոյ հետ, յարաբերութիւններ, որոնք օրէ օր աւելի կը սեղմուին, պարտականութիւն կը սեպէ լոութեամբ չանցնիլ այս կարգի շշուկներու վրայէն։ Խորհրդարաններու մէջ հաստատուն մեծամասնութիւն չունեցող կառավարութիւններու բախտն է տկար և վարանոտ ըլլալ։ Սակայն ո՛չ մէկ պետութիւն ստիպուած չէ յարգանք տածել խախուտ եւ անվճիռ կառավարութեանց հանդէպ։ Պալքաններու խաղաղութիւնը կ'իրականանայ այն ատեն միայն, երբ վերջ կը տրուի գաղտնի մեքենայութեանց քաղաքականութեան եւ երբ Պալքանեան ոեւէ պետութիւն դուրս չի ձգուիր պալքանեան կարգադրութիւնեզերէ։ Ա[illegible] քաղաքականութիւնը Պալքաններու մէջ։»

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՊԱԼՔԱՆՆԵՐԸ

Պելկրատի կիսապաշտօն «Փոլիթիքա» թերթը իր Մարտ 3ի թիւին մէջ հրատարակած է «Անգլիական քաղաքականութիւն» խորագրով ուշագրաւ խմբագրական մը, որ խոր տպաւորութիւն առաջ բերած է Աթէնքի քաղաքական շրջանակներուն մէջ։ Յօդուածը կ'ըսէ թէ պատերազմէն ի վեր անգլիական քաղաքականութիւնը բոլորովին փոխուած է եւ թէ Սալաներու նախկին զինակիցը այսօր թշնամական քաղաքականութեան մը կը հետեւի Ռուսիոյ եւ միւս սլաւ երկիրներուն հանդէպ, որոնց մէջ է նաեւ եուկօսլաւիան։

Յետոյ իբր փաստ կը հրատարակէ հեռագիր մը, զոր Լոնտոնի հելլէն դեսպան Քաքլամանոս Յունուար 2ին ուղղած է Յունաստանի արտաքին նախարարին։ Այդ հեռագրին համաձայն, Անգլիա կը յանձնարարէ Յունաստանի՝ 1.— Աշխատիլ համաձայնութեան մը գալ Պուլկարիոյ հետ։ 2.— Բարեկամական յարաբերութիւններ մշակել Թուրքիոյ հետ։ 3.— Դաշնագիր չկնքել եուկօսլաւիոյ հետ, այլ առկախ խնդիրները բերել Ազգերու Դաշնակցութեան, ուր Անգլիա պիտի պաշտպանէ Յունաստանի տեսակէտը։ 4.— Զգուշանալ ոեւէ վէճէ Իտալիոյ հետ. Անգլիա ապահովութիւն պիտի բանեցնէ որ երկոտասան Կղզիներու խնդիրը կարգադրուի ի նպաստ Յունաստանի։ 5.— Յունաստան պէտք չէ հետաքրքրուի իտալեւալպանական դաշնագիրով։

«Թայմզ»ի Աթէնքի թղթակիցը կը հեռագրէ թէ Յունաստանի արտաքին նախարարութիւնը անմիջապէս պաշտօնական հերքում մը հրատարակեց, յայտարարելով թէ բոլորովին անհիմն են «Փոլիթիքա»յի գրածները։ «Էհօթիա» կը գրէ թէ այս լուրերը զարմանք պիտի պատճառեն նոյն իսկ եուկօսլաւ շրջանակներու մէջ, ուր ամէն մարդ գիտէ թէ Յունաստան պատրաստ է վերսկսիլ սերպահելլէն դաշնագրին բանակցութիւնները, որոնք ընդհատուած էին փանկալօսէն առաջ։

Լոնտոնէն հասած լուրերու համաձայն, Անգլիա փոխատրութիւն մը պիտի ընէ հելլէն կառավարութեան, պայմանով որ միջազգային կամ մասնաւոր հակակշռի մը ենթարկուի Յունաստանի ելեւմուտքը։ կառավարական շրջանակները տրամադիր չեն այսպիսի պայման մը ընդունելու։

ՄԻԱՑԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՄԱԿԵԴՈՆԻԱ

«Թայմզ»ի Սոֆիայի թղթակիցը կը հերքէ Պելկրատի մէջ շրջան ընող այն լուրերը թէ «Մակեդոնական ներքին յեղափոխական կազմակերպութեան» կեդրոնական Կոմիտէին մէջ պառակտում յառաջ եկած է եւ ի վերջոյ յանգած Կոմիտէի գլխաւոր վարիչ Զօր. Փրոթէկերոֆի սպանութեան՝ Իվան Միխայիլոֆի եւ Եօրկի Փոփ - Խրիսթոֆի ձեռքով։ Սակայն ճիշտ է որ մակեդոնական կազմակերպութիւնը, որ մինչեւ վերջերս թուլցած էր, գոնէ Պուլկարիոյ մէջ, հիմա սկսած է նոր գործունէութեան մը։ Անցեալ Օգոստոս 11ին հելլէն, ռումէն եւ եուկօսլաւ ներկայացուցիչներու միացեալ ծանուցագրին վրայ, պուլկար կառավարութիւնը ամենախիստ միջոցներ ձեռք առաւ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

«ՈՒՐ Է ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ»

Երիտասարդ համայնավար մը հետեւեալ նամակը ղրկած է պոլշեւիկեան «Բոմսոմոլսկայա Փրավտա» թերթին (27 Փետր.).—

«Յեղափոխութիւն եղաւ։ Մենք կը կռուէինք ռազմաճակատներու վրայ։ Արիւնը կը հոսէր։ կը մտածէինք, թէ աւելի լաւ պիտի ապրինք։ Բայց ի՞նչ եղաւ,—մեծ գործազրկութիւն, հազարաւոր անօթիներ, որոնք կտոր մը հացի համար պատրաստ են ոեւէր գործելու, պոռնկութիւն ընելու... Աշխատանքի սակարաններու մէջ, գործազուրկներու խումբեր։ Իսկ ո՛վ է, որ հաց ու կարագ կ'ուտէ։ Քաղքենին, մտաւորականները, հաշուապահները, տոմարակալները, անկուսակցականներ, անոնք, որ կը պահուէին, երբ կը սուլէին գնդակները, իսկ այժմ՝ մեր պետերն են։ Այժմ անոնք կրնան «զտել», այսինքն՝ դուրս քշել մեզ, խլել մեր հացի կտորը։ Եւ ստիպուած ենք մեջք ծռել զանազան կառավարիչներու եւ օգնականներու առջեւ... Որո՞ւ համար է, որ կ'աշխատինք այժմ «Մփեց»ներու (մասնագէտներ)։ Առաջ պուրժուազիի համար կ'աշխատէինք, այժմ «մփեց»ներու. ի՞նչ է տարբերութիւնը։ Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը։ Հազարաւոր գործազուրկներ ունինք մենք, որոնց շարքերէն կ'աճի բանակը նոր պոռնիկներու. իմ քոյրս ալ պոռնիկ է, որովհետեւ ուտելիք չունէր ժամանակ, թէկուզ աժան, աշխատանք ունէր... Դուք նստած էք Մոսկուայի մէջ։ Դուք շատ բան չէք գիտեր։ Բայց ահա, երբ հայրենավարական պետութեան մը մէջ մարդիկ կը մեռնին անօթութենէ ու կը սառին ցուրտէ, ակամայ կը սկսիս կասկածիլ։ Դիւղերու մէջ քուլաքն է (ունեւոր գիւղացի) ապրողը — մեղր ու կարագի մէջ կը լողայ, իսկ կողքին, մշակը անօթութենէ կը սատկի։

«Քաղաքներու մէջ սփեցը կ'ուտէ ու կը պայթի, իսկ գործազուրկներու հազիւ ոտքերը կը շարժին։ Ո՞ւր են հապա յեղափոխութեան արդիւնքները։ Ո՞ւր է հաւասարութիւնը։ Ջեզի ծիծաղելի կ'երեւայ, բայց ես կը տառապիմ. ինծի կը թուի, որ անգամ մը եւս պէտք է վերաշինել կեանքը։»

Թե՛զ մարդ. արդարութիւն ու հաւասարութիւն կը փնտռէ աշխարհիս ամէնէն անարդար եւ անհաւասար կարգերն ունեցող երկրի մը մէջ։

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Համաձայն Խորհրդային իշխանութեան պաշտօնական հաղորդագրութեան, մինչեւ Յունուար 1 Խորհրդային Միութեան 256 աշխատանքի սակարաններու մէջ արձանագրուած էին 1,271 հազար գործազուրկ։ Նախորդ ամսուան համեմատութեամբ գործազուրկներու թիւը աճած է 3 առ հարիւր, իսկ Հոկտեմբերի համեմատութեամբ՝ 19 առ հարիւր։ վերջին երեք ամսուան ընթացքին գործազուրկներու թիւը աւելցած է 200,000 հոգի, իսկ անցեալ տարուան նոյն ժամանակաշրջանին հետ համեմատելով աճած է աւելի քան 600,000 հոգի։

ԻՆՉՊԻՍ ՄՈՒՍՈԼԻՆԻՆ.— «Խորհրդային Հայաստան»ի մէջ աշխատակից մը կը գանգատի որ կուսակցական պատասխանատու ընկերներուն վրայ կը ծանրաբեռնուին զանազան պաշտօններ։ Այս առթիւ կը յիշէ անունը «ընկերոջ» մը, որ 15 պաշտօն ունի, ինչպէս Մուսոլինին։ (Արդեօք 15 հատ ալ ամսակա՞ն)։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԱՆՋԵՐԸ

— Ես, իհարկե, չեմ կարող ասել, թե ինչ ազգեցություն է ունեցել Հայրենիքի տանջանքների մասին պատմությունը Ռուզանի վրա, բայց նկատել եմ, որ այդ պատմությունից հետո նա ավելի է սիրել մեր ազգը, ավելի է ատել թշնամուն։ Ես ինքս էլ, որ ամեն անգամ հիշում եմ Հայրենիքի տանջանքները, ինձ ավելի ուժեղ եմ զգում, ավելի կամքով եմ լցվում։

— Ես էլ եմ այդպես զգում, — ասաց Ռուզանը։

Ես նրան պատմեցի Հայրենիքի տանջանքների մասին։ Ես պատմեցի, թե ինչպես Հայրենիքը, որ ամենից շատ էր սիրում իր զավակներին, ամենից շատ էր ատում նրանց թշնամիներին։ Ես պատմեցի, թե ինչպես Հայրենիքը, որ ամենից շատ էր ատում ստրկությունը, ամենից շատ էր սիրում ազատությունը։ Ես պատմեցի, թե ինչպես Հայրենիքը, որ ամենից շատ էր ատում ստրուկներին, ամենից շատ էր սիրում ազատ մարդկանց։

— Ես էլ եմ ատում ստրուկներին, — ասաց Ռուզանը։

— Ես էլ եմ սիրում ազատ մարդկանց, — ասացի ես։

Ռուզանը ինձ նայեց, ժպտաց և ասաց.

— Ես էլ եմ սիրում ազատ մարդկանց։

Ես ասացի.

— Ես էլ եմ սիրում ազատ մարդկանց

ՊՈՍՏԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ՏՈՒՄԱՆՅԱՆ

Ա.

Կրկին ամռան վերջն էր, կրկին ծաղկել էին վահան Թումանյանի վարդերը, կրկին ամռան վերջին ծաղիկները հավաքելով՝ ուզում էին ուղարկել Թիֆլիս, Վահանի գերեզմանին դնելու համար։ Ամռան վերջին ծաղիկները... Ինչպես ամռան վերջին ծաղիկները, այնպես էլ Վահան Թումանյանի կյանքի վերջին տարիները, ամռան վերջին ծաղիկների նման, ամենից գեղեցիկ, ամենից հոտավետ տարիներն էին։

քոմիթէճիական դաւադրութեանց դէմ, եւ անկէ իվեր կը կարծուէր թէ կազմակերպութիւնը հրաժարած է յեղափոխական մեթոտներէ եւ քաղաքական պրոպագանդէ։

Մակեդոնացի յեղափոխականները առ այժմ հրաժարած են ապստամբական շարժումէ մը, որուն իրականացումը օրէ օր կը դժուարանայ եւ կը սպառնայ աղետալի պատերազմի մը մղել Պուլկարիան։ Առտո փոխարէն, անոնք սկսած են «սահմանադրական» պայքար մը՝ ուղղուած մասամբ Յոյներուն, բայց գլխաւորաբար Եուկոսլաւներուն դէմ։ Սոֆիայի մէջ կազմակերպութեան կողմէ հիմնուեցաւ «Մակեդոնիա» թերթը, որ արդէն շատ տարածուած է եւ մեծ հեղինակութիւն կը վայելէ։ Այս թերթը ինքնավարութիւն կը պահանջէ Մակեդոնիոյ համար՝ Եուկոսլաւ Դաշնակցութեան մը սահմաններուն մէջ։ Այս նպատակով իր յօդուածները կը ձգտին ժողովրդականացնել «Մակեդոնացի» ազգի մը գոյութիւնը՝ անկախ Պուլկարէն, եւ որուն մէջ կը մտնեն ո՛չ միայն Մակեդոնիոյ Պուլկարները, այլ եւ միւս բոլոր տարրերը։ Այս շարժումը շատ տարածուած է Մակեդոնիոյ մէջ, ուր բնակիչներէն շատեր սկսած են իրենք զիրենք կոչել ոչ Պուլկար եւ ոչ Սերպ, այլ «Մակեդոնացի»։ Բնականաբար ասիկա պարզապէս ռազմավարութիւն մըն է եւ կը ձգտի չեզոքացնել սերպացումի հոսանքը։

Յարձակում Սոֆիայի ոստիկանութեան վրայ

Սոֆիայէն կը հեռագրեն թէ ոտքէն մինչեւ գլուխը զինուած չորս յեղափոխականներ յարձակում գործեցին ոստիկանութեան շէնքին վրայ եւ գրաւեցին աւելի քան մէկ միլիոն լեվա։ Մեկնելու պահուն, ոումբ մը նետեցին, որ մասամբ քանդեց ոստիկանութեան շէնքը եւ սպաննեց Սոֆիայի Ընհանուր Ապահովութեան քաղաքական բաժնի տնօրէն Իքոնոմոֆը։ Ոստիկանութիւնը կը հետապնդէ այս ոճիրին հեղինակները, որոնք կը կարծուի թէ համայնավարներ կամ հողագործականներ են։

ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Երկուշաբթի օր Ժընեւի մէջ բացուեցաւ Ազգ. Դաշնակցութեան Մորհուրդի 44րդ. նստաշրջանը։ Կը նախագահէ գերման արտաքին նախարար Շթրէզէման, որ գերմաներէն կը խօսի։

Ինչպէս գրեցինք, այս նստաշրջանին օրակարգի ամէնէն կարեւոր խնդիրն է գերմանեւլեհ վէճը։ Շթրէզէման տեսակցեցաւ Զէմպըրլէյնի եւ Պռիանի հետ, առաջինին հետ աւելի երկար։ Պռիան գերման նախարարին ուշադրութիւնը հրաւիրեց Ֆրանքֆորթի մէջ կոմս Վէսթարփի արտասանած ճառին վրայ, որուն մէջ գերման պետական մարդը ըսած էր թէ Գերմանիա երբեք չէ ճանչցած Վերսայլի դաշնագիրը, ոչ ալ իր սահմանները։ Պռիան դիտել տուաւ նաեւ որ Ֆրանսայի հանրային կարծիքը մտատանջ է գերման դահլիճին մէջ ազգայնականներ գտնուելուն։ Ի վերջոյ յիշեցուցուց թէ Հենոսեան երկիրներու պարպումի խնդիր չի կրնար յարուցուիլ, մինչեւ որ զինաթափութեան հարցը չվճռուի, այսինքն մինչեւ որ Քէօնիկսպէրկի ամրութիւնները չքանդուին։

Սըր Զէմպըրլէյն մեծ գործունէութեան մէջ է. կ'ուզէ իբրեւ միջնորդ ծառայել Շթրէզէմանի եւ Զալէսքիի միջեւ, գերմանեւլեհ անհամաձայնութիւնը բարեկամաբար կարգադրելու համար։ Կը կարծուի թէ անգլիացի նախարարը նախապատրաստական աշխատանքներ ալ կը կատարէ՝ Ռուսիոյ դէմ եւրոպական պետութեանց ճակատ մը ստեղծելու համար։ Զէմպըրլէյն կրնայ թէ՛ Լեհաստանի եւ թէ Գերմանիոյ վրայ ճնշում բանեցնել. առաջինը պէտք ունի Անգլիոյ ելմտական, իսկ երկրորդը՝ քաղաքական աջակցութեան։

Գերման պատուիրակութիւնը միասին բերած է երկար տեղեկագիր մը՝ Հենոսեան հողամասերու պարպումին մասին, սակայն չի կարծուիր որ այս խնդիրը քննութեան առնուի ներկայ նստաշրջանին մէջ։

Չինուոր. կազմակերպութեան նոր օրէնքը

Երեսփոխանական ժողովը չորս օրուան վիճաբանութիւններէ վերջ 31ի դէմ 500 ձայնով վաւերացուց պատերազմի ատեն ֆրանսական ազգի զինուորական կազմակերպութեան նոր օրինագիծը։ Հակառակ քուէարկեցին միայն համայնավարները։ Ասիկա առաջինն է այն ծրագիրներէն, որոնք հետզհետէ Խորհրդարանին կողմէ պիտի քննուին։ Քուէարկուած օրէնքը կը բաղկանայ յիսուն յօդուածներէ։ 15րդ յօդուածը կ'արտօնէ կառավարութիւնը խաղաղութեան ժամանակէն իսկ ցուցակագրել այն անձերը, անասունները, առարկաները եւլլն. որոնք անհրաժեշտ պիտի ըլլան զօրաշարժի ատեն։ 25րդ յօդուածը կը ճշտէ երեսփոխաններու դիրքը պատերազմի ատեն։

Օրինագիծը ղրկուեցաւ Մերակոյտին, որ անմիջապէս պիտի սկսի քննել զայն եւ վաւերացնելէ վերջ օրէնք պիտի դառնայ։

Խիստ միջոցներ համակիրներուն դէմ

Յունաստանի Հաղորդակցութեան նախարարութեան եկած գաղտնի հեռագիր մը կը տեղեկացնէ թէ վերջերս Սելանիկի մէջ մեծ գործունէութիւն ցոյց կուտան համայնավարները՝ բանուորները լարելով կառավարութեան դէմ։ Մակեդոնիոյ ընդհանուր կառավարիչ Պ. Քալէվրաս կ'ըսէ թէ համայնավարները յեղաշրջական շարժում մը կը պատրաստեն։

Կառավարութիւնը լայն իւաւասութիւն տուած է Մակեդոնիոյ կառավարիչին խիստ միջոցներ ձեռք առնելու համայնավարներուն դէմ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՍՈՖԻԱՅի բանտին մէջ 150 քաղաքական յանցաւորներ ցացադուլ յայտարարած են՝ բողոքելու համար իրենց հանդէպ ցոյց տրուած վերաբերումին դէմ։ Ներկայիս 2000 քաղաքական բանտարկեալներ կան Պուլկարիոյ բանտերուն մէջ։

ՁԱՓՈՆի մէջ նոր երկրաշարժ մը պատահեցաւ Օզաքայի, Քօպէի եւ Քեօթօի շրջանին մէջ։ Օզաքայի մէջ սինեմա մը փլաւ եւ 80 հանդիսականներ վիրատակներուն տակ մնալով մեռան։ Նիւթական կորուստը մեծ է։ Ցնցումներ զգացուած են նաեւ կեդր. Ասիոյ մէջ։

ՄԵՔՍԱԿԱՅի պոլշեւիկեան դեսպանուհի Տիկին Ալեքսանդրա Քոլոնթայ իր առաքելութեան մէջ ձախողած ըլլալով, շուտով պիտի մեկնի յիշեալ քաղաքէն։

ՄԵՐՁԱԻՈՐ Ափեւելքի ջուրերը այցելող Ֆրանսական նաւատորմը պիվերթէն ճամբայ եւաւ դէպի յունական ջուրերը, ուսկից պիտի անցնի Սուրիա, Թուրքիա եւ Սեւ ծով։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ *վիճաբանական ժողովը՝ 11 փետր. ուրբաթ երեկոյ ժամը 8ին, փլաս տ'Իթալի քաֆէ ռէսթորան Լիւնի վերնայարկը, մէթրօ՝ Իթալի։*

"ՅԱՐԴԱՊՂ"Ի ՀԱՆԴԷՍԸ

12 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐ, ԺԱՄԸ 8.30ին

ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖիի ՄԷՋ, 184, Boulevard St-Germain

Ցուցադրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերուն

Կը մասնակցին՝ Շահխաթունի, Երզիկ Նաւասարդեան, Մարութեան, դաշնակահար Ալիքսանեան, պարող Իկար։

ՏՈՄՍԵՐՈՒ ԳԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.։

ՕՐ. ՀՌԻՓՍԻՄԷ ՀԱՄԱԼԵԱՆ

ԵՒ

ԸՆԿ. ԱՐՄԵՆԱԿ ԴՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԱՄՈՒՆԱՑԱԾ

5 Մարտ 927 ՍԷՆ Շամօն

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Քրիստափոր» խումբին անդամները ինչպէս նաեւ սէն միշելի եւ անոր յարակից թաղերը բնակող բոլոր դաշնակցականները կը հրաւիրուին մէթրօ Օտէոնի դիմաց, ֆաֆէ Բօշէ, այսօր ջորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին։ Ներկայ պիտի ըլլան փարիզի Շրջ. կոմիտէի անդամները։

Հ. Յ. Դ. Ռոստոմ խումբի ժողովը այսօր ջորեքշաբթի մարտ 9, ժամը 8.30ին Ռոստոմի սրահը։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Հ. Յ. Դ. Մարսէյլի պատ. միութեան վիճաբանական ժողովը՝ վաղը Հինգշաբթի 10 մարտ երեկոյեան ժամը 8.30ին գրադարան-ընթերցասրահին մէջ։

Հ. Յ. Դ. Մարսէյլի պատ. միութեան ընդհ. ժողովը կիրակի 13 մարտ կէս օրէ վերջ ժամը 1ին ընթերցասրահին մէջ։

Հ. Յ. Դ. Լիոնի կուկունեան խումբի ընդհ. ժողովը՝ վաղը Հինգշաբթի երեկոյ ժամը ճիշտ 8.30ին, դաշնակցութեան գրադարանը։ Միասին քերել նաեւ հին եւ նոր անդամատետրները։

ՅԱՐԴԱՊՂԻ առաջիկայ գրական երեկոն, վաղը Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա ճաշարանը։ Վահրամ Կաքաւեան կը խօսի Սիւրմէլեանի «Լոյս Ջուարթ» քերթուածներու հաւաքածոյին մասին։ Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

Մարսէյլ, Գործ.— *Ստացանք 425 ֆրանք։*

Լապէկիւտ, Մ. Գ. — *Ստացանք 20 ֆրանք։*

Ռոման, Մ. Թ.— *Ստացանք 12 ֆրանք։*

Լիոն, Տ. Տ.— *Ստացանք 10 ֆրանք։*

Լա Սօն Տ. Թ.— *Ստացանք 20 ֆրանք։*

Նէօյեի Ա. Մ.— *Ստացանք 35 ֆրանք։*

Լա Սօն, Մ. Թ.— *Ստացանք 8 ֆրանք։*

Մարսէյլ, Ա. Ա.— *Ստացանք 70 ֆրանք։*

Վալֆրուաքուռ, Ս. Բ.— *Ստացանք 10 ֆրանք։ Շուտով կը ղրկենք։*

Պօնիէռ, Հ. Մ.— *Ստացանք 35 ֆրանք։*

Վ.օ-ան-Վէլէն, Մ. Գ.— *Ստացանք 35 ֆրանք։ Մկսանք ղրկել Յ. Խ.ին։*

Քուրպէվուա Բ.Լ.—*Ստացանք 10 ֆրանք։*

Օպընա, Ա. Ս.— *Ստացանք 5 ֆրանք։*

Մարսէյլ, Իշխան Խ. — *Չեր նամակը ուշ ստացանք։*

Լը Քրէօզօ, Ա. Ա.— *Ստացանք 10 ֆրանք։*

Շալիէօ, Շ. Տ. Խ.— *Ստացանք 50 ֆրանք։*

Փրովիտէնս Վ. Ա.—*Ստացանք 3 տոլար։*

Մարսէյլ, Ա. Հ.— *Ստացանք 35 ֆրանք։*

Մարսէյլ, Գ. Թ.— *Ստացանք։*

Փարիզ, Խ. Ի.— *Ստացանք 22 ֆրանք։*

Պէլֆօռ, Գ. Շ.— *Ստացանք 10 ֆրանք։*

Քէմպրիճ, Գ. Ն.— *Ստացանք 70 ֆրանք։*

Փարիզ, Տոքթ. Պ.Գ.—*Ստացանք 140 ֆրանք։*

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Ծերիկեանի ՖՐԱՆՔՕ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ

15 Բիւ տէ Տօմինիքէն

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Խնուսի Դուման գիւղէն Ազատ Գէորգեան որ հինգ ամիս առաջ Մարսէյլ կը գտնուէր։ Կը կարծուի որ այժմ Փարիզ է. Գրել՝ Abkar Assadourian*ի, Rue AnatoleFrance Cantine Arménien Le Creusot (S. et L.):*

— Վահան, Լուսվիկ, Մարիամ, Սիրանուշ եւ Թագուհի Քիզիրեան որոնք Տէր-Զոր ապրուած էին։ Տեղեկացնել՝ Համբարձում Քիզիրեանի՝ Usine St.-Laurent de Ceris, (Charente) France*։ Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։*

— Տիկին Վարդենի Իյնէճեան որ Իզմիրի ազէտէն վերջ ամուսնոյն հետ Գանտիա (Կրետէ) ապաստանած է, կը փնտռէ իր քոյրերը Մարիամ եւ Լուսաբեր, որոնց մասին լուր առած է թէ գորգի գործարանի մը մէջ կ'աշխատին Լիոն, Մարսէյլ կամ շրջակայքը։ Իմացնել Լիոնի Ազգ. Միութեան վարչութեան, 75, Avenue Berthelot, Lyon*։*

— Պրուսայի Մեծ Նոր Գիւղէն Գէորգ Սարգիսեան (Հեղինէեան) հօր անունը Յովհաննէս, մօր անունը Ովսաննա որ 1925ին թրակիայէն Յունաստան գացած էր։ Իմացնել՝ Անդրէաս Սարգիսեանի Aux Établissements A. Vital, Aubenas, Ardèche, France*։ Կը խնդրուի յունահայ թերթերէն արտատպել։*

— Զօրումցի Էլմաս Վարժապետեան կը փնտռէ իր որդին Յովհաննէս Վարժապետեան, 26 տարեկան որ կորսուած է Տէր-Զօրի եւ Մուսուլի կողմերը։ Գրել՝ Բարսեղ Լօշեանի՝ 20 Rue de Bezons, Courbevoie, (Seine)*։ Լուր տուողին նուէր մը պիտի տրուի։*

— Ալաշկերտի բերդից գիւղէն Տիգրան Մխիթեան, իր անունը Իսրօ, մօրը անունը Տիլպէր, կնոջ անունը Ընուշ, զաւակներուն անունները, Իշխան, Զարզանդ, Արշալոյս, Աղաւնի։ Քոյրերը Լուսիկ, Ագնիւ, Եսթեր, Զարուն, Նունիկ, Մաքրուհի, հօրեղբայրները Մելքոն, Գասպար. պապի, անունը Մարտիրոս. կը կարծուի Ֆրանսա ըլլալ։ Կը փնտռուի իր գերդաստանի կողմանէ Ռուսաստանի կրասնոդար քաղաքէն։

Իմացնել Հ. Աւետիսեանի՝ S. Donnet St. Hilaire Grasse A.M.

Կ'ուզուի *փամագործ աշկերտ մը 16 - 18 տարեկան դիմել՝* Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ԿԸ ԳՆԵՆՔ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԳՈՐԳԵՐ

ԿԸ ԳՆԵՆՔ, արծաթեղէն, ոսկեղէն, ադամանդ, հին եւ նոր յարդի ձեռագործներ։ Կը փնտռենք լաւ ձեռագործ գիտցողներ.

Դիմել՝ «Էնթէրէսօ» ընկերութեան մէջ մեր նոր բացած գրասենեակը ամէն օր 10—1 եւ 3—6։

41 Rue de la Chaussée d'Antin

Tél. Trudaine: 01—41

Բ. յարկ աջ կողմ առաջին սենեակը։ Կը խօսինք Հայերէն, ռուսերէն եւ օտար լեզուներ։

ՍՊԱՍՈՒԻՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Դիմել «Մասիս» Տպարանի վարչութեան, 208 bis, Rue Lafayette*։ Մէթրօ՝* Louis Blanc *կամ* Jaurès.

ATELIER D'ÉLECTRICITÉ ET DE T.S.F.

Ամէն կարգի ելեքտրական գործեր, մօթէօրներու ելեքտրական գործիքներու, մօթէօրներու ևն. նորոգութիւններ։

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ

ԿԸ ԾԻՆԷ

Մինթել հեռաձայնի գործիքներ, որոնց միջոցով կը լսէք եւրոպայի անթելի կայաններէն տրուած բոլոր քոնսէրներն ու օրուան լուրերը։

M. G. BASMADJIAN, 93, RUE DU GAZ, PARIS (13e)

Tél: Goblins 52—18. Metro Italie

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96 - 61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առտնին օգնութիւն ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ

Համեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ՇԱՆՕՔ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՃՕԼՕԼԵԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ PHOTO ARAX

9 RUE PAPILLON, PARIS IX

Square Montholon դիմաց Rue Lafayetteի կից

Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ժամը 9էն 6։ Գեղարուեստական ճաշակով պատրաստուած անթերի աշխատութիւններ։ Ինքնութեան խնամուած լուսանկարները յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ։

ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի պայմաններով յարկաբաժին մը որ կը բաղկանայ երկու սենեակներէ եւ խոհանոցէ մը, Route de Versailleի վրայ, Billancourt: *Դիմել՝ նախկին Մոսկուա-Կովկաս ճաշարանը,* 41 Rue de St. Cloud, Billancourt.

ՋԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ

Ֆաքիր Թահրա պէյ 5, Բժիշկին գիրքէն փրցուած էջեր 12.50, Յունահայ տարեգիրք 25, Ռասքութին 15, Նամուս 10, Զար ոգի 10, Պատուի համար 10, Լուսթիւնը 8, Երազահան 6, Կոյսի մը Օրագիրը 5, Անձկութեան ժամեր 2, Ծապլվար 12,50, Բարիզէթ 7.50, Տօքթ. Մօրի Վրէժը 5, Մացառներու մէջ (2 հատ.) 25, Ոսկի Աքաղաղ 10, Թուղթի փառք 5, Վերջալոյսին տակ 5, Ճամբուն վրայ 10, Պէպէքօ 10. Հայրենի Փնար 12.50, Հայոց դիները 7, Սասմայ Մհեր 5, Հացին երգը 25, Հայաստանի Նկարիչների Ալմանախը 40, Նարեկ աշխարհաբար 40, «ՆՈՐ ՕՐ»ի գրական տետրակները, Թիւը 2, ինչպէս նաեւ վիպական, թատերական բանաստեղծական եւ ազգային գիրքեր, բառարաններ, խօսակցութիւններ հաւաքածոներ եւայլն։

ԳՐԱՅՈՒԾԱԿԸ ՁՐԻ

Ֆրանսայի եւ գաղութներուն համար, փոխի ծախք չկայ։

Ստանալու համար՝ դիմել նամակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ՇԱՀԱԻՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԳՈՐԾ ՄԸ 7000 ՖՐԱՆՔՈՎ

Կը ծախուի պոլսական լիւլէ գայմաքի, թուլում պանիրի եւ ճերմակ պանիրի գործիքներ, շինելու արհեստն ալ սորվեցնելուն եւ եղած ապրանքը տեղաւորելու դիւրութիւններ եւս ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք զուտ շահ։ Դիմել «Յառաջ»ի վարչութեան։

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

123 Bld. Sébastopol, 123

(Métro: St. Denis և Réaumur)

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

Ջերմամիզութեան, ֆրանկ ախտի, արիւնի եւ մորթային հիւանդութեանց։

Բժշկական տարրալուծումներ

Ամէն օր ժամը 9—12 և 2—8, Կիրակի՝ 9—12։

Տոլով րդ ական գիներ

Կահագործ աժան գիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կահ կարասիներ, զրասենեակի սեղաններ եւայլն, ձախու են թրքական թաւվուններ։ Դիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ՍԱԿԱՐԱՆ

8 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

			Ֆր.
Սթերլին,	L. St.		124 08
Տոլար,	Dollar		25 58
Մարք (ոսկի)	100 Mark		606 —
Թրքական Ոսկի.	L. Trq.		12 80
Թրք. ոսկի	»	or	115 50
Մէճիտիէ	Médjidié		9 —
Լէվա	100 Հատր	Léva	18 65
Տրախմի	»	Drachme	33 25
Լիր	»	» Lire	112 50
Պելժ. Ֆրանք	»	Frc. Belge	71 25
Զուից.	»	Frc. Suisse	491 50
Լէյ	100 Հատր	Ley	15 20
Ջերվոնեց	(10 Roubles or)		95 —

ԱՐԺԵԹՈՒՊԹ

Եգ. Ֆր. Ֆոնսիէ	I Cr. Fonc. Eg.	3040 —
»	II »	1930 —
»	III »	1710 —
Ռումելի երկաթ.	Lots turcs	164 —

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԹԱՓԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 Ֆ.	70 Ֆ.	140 Ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 Ֆ.	200 Ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն { 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ
10
ՄԱՐՏ
1927

10 MARS 1927

Թ. ՏԱՐԻ Թիւ 281

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԹԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՐՔԱՆՔՆԵՐ

Ժընեւի ժողովին առաջին արդիւնքը եղաւ Պեսարապիոյ կցման վաւերացումը՝ Իտալիոյ կողմէ։

Մինչեւ այսօր Հռոմ կը ղգուշանար ստորագրել 1920 Հոկտ. 20ի պայմանագիրը, որով Անգլիա եւ Ֆրանսա կը հաստատէին Թ. Իումանիոյ կը պատկանի այդ ընդարձակ եւ հարուստ երկրամասը։ Այս վերապահումը ուժ կուտար խորհրդային իշխանութեան, եւ պահանջելու Պեսարապիան։ Միւս կողմէ կը համարուէր բարեկամութեան ապացոյց մը հանդէպ Մոսկուայի, որուն հետ Իտալիա մասնաւոր դաշնագիր մը կնքեց Անգլիացին անմիջապէս յետոյ։

Այսօր ալ, հաղորդելով Պեսարապիոյ կցման վաւերացումը, Իտալիոյ արտաքին նախարարը հարկ դատեր է շեշտել թէ այս որոշումը «ո՛ր եւ է թշնամական հանգամանք չունի Ռուսիոյ հանդէպ»։ Արհեստով դիւանագէտներուն, եւ անոնց կարգին՝ պոլշեւիկ պոլիտիկոսներուն կը թողունք մեկնել այս յայտարարութեան իմաստը։

Այս վաւերացումը ևս կուգայ հաստատել թէ Մեծ Պատերազմէն վերջին ալ, անխախտ կը մնան գաղտնի դիւանագիտութեան աւանդութիւնները։ Եւ յետոյ, այդ քայլը նոր ապացոյց չէն է թէ իսկապէս գործակցութեան ծրագիր մը մշակուած է Ժընեւի եւ Իտալիոյ միջեւ, հակառակ բոլոր հերքումներուն։ Ժընեւի արտաքին եւ ելմտական նախարարներուն դէպի Հռոմ ընթեւեւը իրրեւ առաջին տեսանելի արդիւնք ունեցաւ Իտալիոյ գործօն միջամտութիւնը՝ Զինաստանի մէջ։ Անկէ առաջ եւ մինչեւ այսօր, Պալքաններու մէջ նշմարուած արտասովոր գործունէութիւնը հետեւանք է, նոյնպէս, անգլեւիտալական ծրագիրներու։ Եւ ահա Պեսարապիոյ կցման վաւերացումը, իրրեւ տրամաբանական ձեռնարկ՝ խոչընդոտ մը հարթելու։

Այս իրողութիւններէն յետոյ, աւելորդ է գուշակութիւններ փորձել անգլեւիտալական համաձայնութեան միւս կէտերու մասին, որոնք պիտի պարզուին ժամանակի ընթացքին։ Ակնհայտ է, միայն, պահպանողական Անգլիոյ ճիգը՝ ընդհանուր ճահճացում մը ստեղծելու խորհրդային իշխանութեան դէմ։ Զէմպրլէն փընեւի մէջ հերքեց այս պարագան, դիտել տալով թէ Անգլիա միայն իր մասին կը մտածէ։ Բայց այդ հերքումն իսկ հաստատուն է օրուան գործունէութեան, որ կը ձգտի «ապահովել խաղաղութիւնը»։ Արդ, կարելի չէ այդ նպատակին հանդիպ, առանց չէզոքացնելու խորհրդային իշխանութիւնը, որ անընդհատ կ'արծարծէ կրակը, աշխարհի բոլոր մասերուն մէջ, ամէն առիթ Մեծն Բրիտանիան խոցոտելու համար։

Ինչպէս Անգլիոյ համար հեքեաթ են խորհրդային իշխանութեան խաղաղասիրական հաւաստիքները, այս վերջինին համար ալ գաղտնիք չեն Անգլիոյ թաքուն ծրագիրները։ Ընդուշտ այս է պատճառը որ, Ռուսիոյ մէջ երկու զօրաւոր հոսանքներ կը հակադրին իրարու դէմ, վերջ տալու համար տատանումներուն։

Օրուան լուրերուն համաձայն, այդ հոսանքներէն մէկը, գործադրել, կ'ուզէ սաստկացնել պոլշեւիկեան գործունէութիւնը Ասիոյ մէջ, իրականացնել համասիական ճակատը, ուժգնօրէն ընդդիմանալու համար բրիտանական աշխարհակալութեան հիմքերը։ Այս աշխատանքը դղրդագին ղէպքերու ծնունդ տուաւ Զինաստանի մէջ, եւ ելքը անստոյգ է տակաւին։ Միւս կէտը, որուն առանձնօրէն է, կ'ըսեն, արտաքին գործավարի օդնական Լիթվինով, կը թելադրէ, ընդհակառակն, մօտենալ արեւմուտքի, քանի որ Ռուսիա, պէտք ունի օտար դրամագլուխի, ինքզինքը ազատելու համար։ Մէկ խօսքով, երկու կողմերն ալ բարիք չեն տեսներ միջին ճամբաներէն, երկդիմի քաղաքականութիւններէն, եւ կ'ուզեն վերջնական ելք մը գտնել։

Այս նոյն խարխափումներուն մատնուած են քաղքենի պետութեանց իրաքանչիւրը։ Եւ ժընեւի պարբերական ժողովները ամէնէն պերճախօս արտայայտիչն են տիրող քաղաքականութեան։ Երէկ՝ Վերսայլով եւ Ազգերու Դաշնակցութեան ուխտով հրում կ'ընէին. այսօր՝ Լոքարնօն է կախարդական գաւազանը, խաղաղութիւն խաղալու եւ ինքնագովութիւններ կատարելու։ Դէպ չէ թէ, այդ մարգանքներուն հետ միաժամանակ, եւ անոնց վերեւ, առանց վերապահութեան կը շարունակուին սպառազինութիւնները։ Այս ճամբուն վրայ, մէկը միւսէն աւելի անմեղ չէ, որպէսզի առաջին քարը նետէ։ Ո՛չ խորհրդային միութիւնը, որ զինուորեալ ազգի նշանախօսքը արձակեց ու կը գործադրէ, ոչ ալ միջազգային սեղանաւորը, Ամերիկան, որ մէկ ձեռքով զէնքնկէցութեան ժողով կը հրաւիրէ, իսկ միւսով ուժգնացուցած նոր մարտանաւերու շինութեան։

Պատերազմէն տասերեք տարի յետոյ այս բարքերը, «խաղաղասիրական» այս մարգանքները այնքան չարաշուք են, որ իսկապէս մտահոգութիւն կը պատճառեն ժողովուրդներուն։ Եւ ամէն օր աստիճան մը աւելի կը թանձրանայ մթնոլորտը, նորանոր թոյներով, որոնց առջեւ կը դեղնին խաղաղութեան եւ փոխադարձ ապահովութեան համար ստորագրուած բոլոր մագաղաթները։ Ահաւասիկ նոր պարագան, — Պեսարապիոյ կցման վաւերացումը։ Ուշ-կանուխ Իտալիան ալ պիտի ստորագրէր այս թուղթը, սակայն եօթը տարի ձգձգելով, առիթ ունենալ սակարկելու եւ նոր իրաւունք մը արժեցնելու։ Եւ այսօր ինչ Մոսկուայն հետագիր մը կ'իմացնէ թէ՝ Իտալիոյ ընթացքը ոչ-բարեկամական կը նկատուի Մոսկուայի մէջ, եւ հետեւանք՝ անգլեւիտալական դաշնագրի մը, որուն համաձայն Լոնտոն իրաւունք տուած է Հռոմի, ազատօրէն գործել Ալպանիոյ եւ Միջերկրականի մէջ։

Այս պայմաններուն մէջ, բարի քրիստոնեաները միայն կրնան հաւատալ խաղաղութեան։

Շ.

ՄԱՄՈՒԼ

«ԱԶԳԱՅԻՆ ՑԵՑԵՐ»

Այս խորագրով խմբագրականի մը մէջ (5 մարտ), պոլսոյ «Ագդարար»ը, որ աւելի կանուխ ստացած է եւրոպայի թեմական խորհուրդին հրաժարագիրը, դիտել կուտայ.

— «Մէկէ աւելի առիթներով, մենք շեշտած ենք ազգային թթու հոգեբանութիւնը, որով լեցուած են փարիզի ջղերը, եւ կը մնրժեն իրենց շուքէն դուրս որ եւ է հեղինակութիւն ճանչնալ։ Վարիչն ալ իրենք են, «ազգ»ն ալ իրենք։ Ժողովուրդը կրնայ շատ բլլալ թիւով, մինչեւ 20,000, բայց իրաւունք ունի միայն ազօթելու եւ մոմ վառելու, եւ ոչ թէ կարծիք յայտնելու. այդ իրաւունքը մենաշնորհն է իրենց՝ «տեղացի»-ներուն, դիրք ու տիտղոս ունեցողներուն։ Ամիրանե՛ր, ըսէք թերեւս. բայց ո՛չ, այդ որակումին անգամ արժանի չեն։ Հին ամիրաները, իրենց յաւակնութիւններու կարգին, ունէին նաեւ վեհանձնութեան, գթասրտութեան շարժուձեւեր. մինչդեռ Փարիզի նրբացած աղաներուն մօտ այդ բանն իսկ կը պակսի։ Անոնք ո՛չ միայն չեն բարեհաճիր ղբաղիլ հայ գաղթականներով, այլ եւ պատ կը քաշեն բոլոր անոնց առջեւ, որ կը փորձեն բաներ մը ընել, դոնէ չթողուլ որ նորահաս սերունդը այլասերի օտար ափերու վրայ։

«Ազգային ցեցե՛ր. — ահա ամէնէն ճիշդ որակումը։ Մինչեւ երէկ խաղաղ նստած էին իրենց բոյնին մէջ, առանց ո եւ է մէկէ խանդարուելու, բայց անմիջապէս որ վերակազմութեան փորձ եղաւ, մէջտեղ ելան ու սկսան խառնել, այրինքն կրակել։

«Թող ցնծան ուրեմն ազգային ցեցերը, եւ «յաղթանակ»ին ի պատիւ հանդիսաւոր պատարագ մատուցանեն Ժան Կուժօնի «իրենց» եկեղեցիին մէջ, պատարագիչն ալ կարգելով «իրենց» հովիւը։ Իսկ տիրացուները թող միաբերան «ուրախ լեր Ս. եկեղեցի» գեղգեղեն, քանզի «ոչ եւս է» մղձաւանջը, ժողովրդական մարմինը որ պիտի դար դեղ ու դարման փնտռելու այլասերումի ցաւին համար։»

ԽՐԻՄԻ ՀԱՅԵՐԸ

Հին Խրիմի կողմերը, Սուբայի եւ Շէյխ Մամա երկու հայաբնակ գիւղերուն բնակչութեան թիւն է 1200։ Ասկէ գատ խոշոր թիւ մը կ'ապրի Թէոդոսիայի մէջ։ Ցետոյ Հայերը ցրուած են շրջանին բազմաթիւ գիւղերուն մէջ (կրինեչկա, Ինգոյ եւայլն)։ Այս շրջանին մէջ կայ երկու հայկ. դպրոց, Սուբաշի ու Դոմաշի, որոնց աշակերտներուն թիւն է 130։ Սուբաշին, որ հայ հոչակաւոր ծովանկարիչ Այվազովսքիի գիւղն է, ունի յատկապէս կառուցուած դպրոցական գեղեցիկ շէնքեր։ Դոմաշ էլիի հայ գիւղացիները այս տարի շինած են նոր դպրոց մը։

ՎՆԱՍԱԿԱՐ ԹՈՒՐԲԵՐԷՆ ԴԻՐԲԵՐ

Պոլսոյ ընդհ. դատախազը հետապնդման հրաման տուած է հեղինակի մը դէմ, որ հրատարակութեան տուած էր «ցրի չմնալու համար» անունով գիրք մը։ Նման գիրքեր հրապարակաւ կը ծախուին Պոլսոյ փողոցներուն մէջ։

Սկիզբը Դեպի սկսած է բարձրանալ վերջին օրերս։ Կը վախցուի որ Մարտ ամսուան ընթացքին ոտոշումներ պատահին։

ՕՐԸ ՕՐԻՆ

Իտալիա եւ Ռումանիա

Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին իտալական պատուիրակ Շիալոյա միջազգային մամուլի ներկայացուցիչներուն յայտարարեց թէ Իտալիոյ նախարարական խորհուրդը որոշած է վաւերացնել 1920 Հոկտ. 20 Թուականը կրող դաշնագիրը, որով Պեսարապիան կը կցուի Ռումանիոյ։ Մինչեւ հիմա միայն Ֆրանսա եւ Անգլիա վաւերացուցած էին այս դաշնագիրը։

Շիալոյա բացատրեց թէ իտալական կառավարութիւնը այս որոշումը տուաւ անոր համար, որ այլեւս դժուար պիտի բլլար յետաձգել վաւերացումը միջազգային դաշնագրի մը, որ արժէք կը ներկայացնէ ու եթէ մինչեւ հիմա սպասեց որոշում մը տալու համար, պատճառն այն էր որ կառավարութիւնը կը փափաքէր որ Ռումանիա եւ Ռուսիա ուղղակի համաձայնութեան մը յանգին։

Իտալական կառավարութիւնը անհրաժեշտ կը զգայ դիտել տալ որ այս որոշումը ո եւ է թշնամութիւն չենթադրեր Ռուսիոյ դէմ։ Իտալիա պարզապէս կը վաւերացնէ յանձնառութիւն մը, որմէ խուսափելու մտադրութիւն ցոյց չէ տուած բնաւ։

Յիշենք որ անցեալ 1926 Սեպտեմբեր 16ին Հռոմի մէջ իտալեռումէն դաշնագիր մը կնքուեցաւ, որուն սէջ բան չկար ըսուած Պեսարապիոյ խնդրին մասին։ Սակայն Մուսօլինիի և Ավերէսքուի միջեւ փոխանակուած նամակներ նախատեսել կուտային թէ վաւերացումը չպիտի ուշանայ։

Այս ձեւով Իտալիա կարեւոր աջակից կը կ'ունենայ Պալքաններուն մէջ։

Անգլիոյ Արտաքին նախարար սըր Զէմպըրլէյն յայտնեց թէ «անցեալ ձմեռ երբ Ռիվիէրայի մէջ Մուսօլինիի հետ տեսակցեցայ, խօսք դարձաւ նաեւ Պեսարապիան Ռումանիոյ կցող դաշնագրին վաւերացման մասին։ Մուսօլինի այն առեն պատասխանեց թէ քանի որ նախ[illegible] թիւնը ստորագրած էր այդ համաձայնութիւնը, անպայման պիտի վաւերացուի»։

Իտալիոյ վաւերացումով, խնդրոյ առարկայ դաշնագիրը վերջնական հանգամանք կը ստանայ. կը մնայ միայն ճապոնի վաւերացումը, որ կը կարծուի թէ չպիտի ուշանայ։

Ժընեւի միջազգային շրջանակներուն մէջ քաղաքական այս դէպքը կը նկատուի առաջին քայլը, զոր Անգլիա կ'առնէ Ռուսիոյ դէմ։

Ֆրանսա եւ Իտալիա

Իտալական մամուլը կը զբաղի Ֆրանսայի գինուորական կազմակերպութեան նոր օրէնքով։ «Քօրիէրէ տէլլա Սէրա» չի կարծեր թէ օրինագիծը բացարձակ նորութիւն մըն է տեսական, գիտական եւ քաղաքական դետնի վրայ։ Ցետոյ յիշելով որ ֆրանսական սահմանները ամրացնելու սահմանուած 7 միլիառ ֆրանքէն մաս մը պիտի յատկացուի Ալպեան սահմանի իտալական մասը ամրացնելու, «Քօրիէրէ տէլլա Սէրա» կը զարմանայ ու կ'աւելցնէ.

«Պէտք է յիշել, որ մինչեւ հիմա փարիզի մէջ միայն Գերմանը իրական թշնամի մը կը նկատուէր։ Այս սկզբունքը յայտնապէս կը սկսի սխալ թուիլ կամ հիննալ Սէնի ափերուն վրայ։

«Ամէն երկիր իրաւունք ունի իր ապահովութիւնը երաշխաւորել ուզածին պէս։ Եւ սակայն ալպեան ամրութիւններէն աւելի ամուր ապահովութիւն մը պիտի բլլար Ֆրանսայի համար անկեղծօրէն բարեկամական քաղաքականութիւն մը հանդէպ Իտալիոյ։ Ալպեան ամրութիւնները ռազմագիտական յեղաշրջումներու կրնան ենթարկուիլ. մինչդեռ, երբ բարեկամութիւնը անկեղծ է ու փոխադարձ, ոչ անակնկալ կը ճանչնայ, ո՛չ ալ խզումէ կամ պաշարումէ կը վախնայ»։

Ազգերու Դաշնակցութեան ժողովը

Կը կարծուէր թէ Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին ներկայ նստաշրջանը հետաքրքիր չպիտի բլլայ, տրուած բլլալով օրակարգի նիւթերը։ Պեսարապիոյ մասին իտալական որոշումը եւ Զէմպրլէյնի ճառը Ռուսիոյ մասին շատ հետաքրքիր մթնոլորտ մը ստեղծեցին։

Պատասխանելով հարցումի մը, անգլիացի նախարարը յայտարարեց թէ Ռուսիոյ հետ յարաբերութիւնները շատ գէշ են։ «Անգլ. կառավարութիւնը աւելի քան երկու տարիէ ի վեր խաղաղասէր քաղաքականութեան կը հետեւի հանդէպ Խորհրդային Միութեան։ Դաշնագիրներու տակ ստորագրելը բաւական չէ պատերազմի վախերը փարատելու։ Անգլիա յարատեւօրէն կը ձգտի իրական խաղաղութեան։ Առաջին քայլը եղաւ Լոքառնօն, երկրորդը՝ Գերմանիոյ մուտքը Ազգերու Դաշնակցութեան մէջ։

Մենք երբեք չենք ուզած անգլ. շահերը առաջ քշել՝ ուրիշ երկիրներու մէջ խռովութիւններ ստեղծելով, մենք երբեք ո եւէ երկիր ուրիշի մը դէմ չենք գրգռած, այլ միայն խաղաղասէր քաղաքականութիւն մշակած ենք բոլոր երկիրներու հետ»։

Պատասխանելով այն գրոյցներուն թէ Անգլիա կ'աշխատի եւրոպական երկիրներու խմբակցութիւն մը կազմել՝ պաշարման գիծ մը հաստատելու համար Խորհրդային Միութեան

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՀԱՇԻՇԱՄՈՒՆԵՐԸ

«Իգտամ»ի Թղթակիցը կը գրէ հետեւեալ հետաքրքրական նշումները. «Բարձրաբերձ անտառներու եւ լեռներու մէջ ճամբորդելէ յետոյ, հասանք իլկազ աւանին, ուր գիշերեցինք։ Լքուած աւան մըն է իլկազը, եւ բնակչութիւնը կը ներկայացնէ ողբալի վիճակ մը։ Ողին եւ մասնաւորաբար հաշիւը տարածուած է գիւղացիներուն մէջ։ Շարունակ կը թունաւորուին, եւ այս գինովութեան պատճառով յաճախ հրաձգութիւններ կը պարպեն եւ զանազան դէպքեր կը պատահին։ Նոյնիսկ, քանի մը անգամ զէնք արձակած են գայմագամին տան վրայ եւ քարկոծած են»։

ՀԵՒԵԼԱՆԻԻ ՄՐՑՈՒՄԻՆ ԱՌԹԻՒ.— կիրակի օր կազմակերպուած էր հեւեւելանիւի մրցում մը փարիզէն նիս։ Մրցորդներէն երիտասարդ մը, կի, որ յաջգուած մարզիկ մըն էր, մրցման ճամբան, կրասի մօտիկ-փոսի մը վրայէն ոստումի մը պահուն, կը կոտրէ անիւը եւ գետին կը գլորի։ Առաջին առթիւ ոչինչ կը զգայ մրցորդը, եւ կ'աճապարէ նորոգել անիւը, շարունակելու համար մրցումը։ «Միայն փոքր քիչ մը կը ցաւի», կ'ըսէր ընկերացողներուն։ Սակայն քիչ մը վերջ կը զգայ որ չպիտի կրնայ շարունակել ճամբան։ Շիւանը կը մեռնի։

ՊԶՐՈՒՀԻՆ.— Ալպերթին ժամքար 35 տարեկան փորձառու պչրուհի մըն է։ Ջափագանց դիւրին կը փոխէր երիկը, շապիկի պէս, եւ արագ, եւ սուղնոցը։ Ձգեց երիկը, գտաւ բարեկամ մը։ Ջիւնեցաւ, ուրիշ մը առաւ։ Ֆիլմը կը հոտի, բսաւ եւ ուրիշի մը աչք բրաւ։ Շատ սիրեցինք իրար, ուրի՛շ մը։ Դրամ չունիս, ուրի՛շ մը։ վերջապէս եօթնեորդ երիկն էր փաստաբ սիորի, 30 տարեկան, բանուոր մը, խելօք, ժուժկալ եւ կամքի տէր։ Ֆիլ մըն ալ նախանձոտ էր։ Քանի մը անգամ ալ բանուորէն գատուեցաւ, թէեւ շուտով նորէն կը վերադառնար։

Իրիկուն մը, Պալոմին քաղաքին մէկ սրճարանը նստած էին, վէճ մը ծագեցաւ իրենց միջեւ։ Սիորի ապտակ մըն ալ զարկաւ։ Է՛ֆ, ալ չկրցաւ տանիլ։ Ցուն գացին, դժոխքի պէս փրթաւ ադմուկ մը։ Այն առեն, Սիորի երկարեց ձեռքերը, ոլորեց կնոջ ճիտը եւ խեղդեց։

Դուռը գոցեց եւ տունէն հեռացաւ։ Առտուն, իր բանուոր ընկերները գտան ջրանցքին եզերքը, տող մը գիր։

— Ե՛ս եմ մարդասպանը։

Սակայն կորսուած էր ինք, հաւանաբար ջուրը նետուած էր եւ խեղդած նաեւ ինքզինքը։

ԽԵՆԹԻ ՄԸ ՋԱՐԴԸ.— վարշաւայի բանուորական թաղին՝ Սոլէքքի մէջ, բանուոր մը, Մասլանէի, կէս գիշերին կ'ելլէ եւ ատրճանակի հարուածներով մէկիկիկ կը սպաննէ կինը, զոքանչը, երկու քեռիները եւ աներորդին։ Ցետոյ՝ ինքզինք։ Նամակով մը կը յայտնէ որ, կեանքի դառնութիւններէն զզուած, ուզած է վերջացնել տառապանքները ի՛ր եւ ընտանիքին։

Հաւանական է որ խենդութեան նոպայ մը ունեցաւ խեղճ բանուորը այս աիւելի ջարդին սկսելու համար։

ՋՕՐ. Վ. ԲԱՆԿԷԼԻ եղբայրը Ջօրջ Նիքոլա վրանկել անծնասպան եղաւ Շուոմ իշխան Վոլքոնսքիի բնակարանին մէջ, ջղագարութեան նոպայի մը հետեւանքով։

Ց. ՏՐՏՈՒՆԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ

Հայ վաղտարմ Հռիմին՝ Ամիսոսի մեջ, ծագում կ՚առնէ Հին Հայաստանի մէջ, ուր ան ունէր զանազան անուններ, ինչպէս՝ Ամիսոսի վարչատուն, Ամիսոսի ուսումնարան, Ամիսոսի գրադարան, Ամիսոսի ճեմարան, Ամիսոսի հոգեւոր ճեմարան, Ամիսոսի վարդապետարան, Ամիսոսի վանք, Ամիսոսի վարդապետական դպրոց, Ամիսոսի վարդապետանոց, Ամիսոսի վարդապետական ճեմարան, Ամիսոսի վարդապետական վարչատուն, Ամիսոսի վարդապետական գրադարան, Ամիսոսի վարդապետական վանք, Ամիսոսի վարդապետական դպր

ՊՈՍՏՈՓ

ՎԱՀԱՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Պ.

Հեռախոսով ասած տեսակ մը կախվածութիւն կայ մարդոց միջեւ։ Ես կը կարենամ զանոնք տեսնել, անոնք ալ զիս, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը տեսնենք զիրար։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կ՚երեւին անոնք ինծի, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ես ինչպէս կ՚երեւիմ անոնց։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը խօսին անոնք ինծի հետ, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը խօսիմ ես անոնց հետ։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը մտածեն անոնք ինծի մասին, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը մտածեմ ես անոնց մասին։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը զգան անոնք ինծի հանդէպ, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը զգամ ես անոնց հանդէպ։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը սիրեն անոնք ինծի, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը սիրեմ ես անոնք։

Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը ծիծաղին անոնք ինծի հետ, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը ծիծաղիմ ես անոնց հետ։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը լացեն անոնք ինծի հետ, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը լամ ես անոնց հետ։ Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը մեռնին անոնք ինծի հետ, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը մեռնիմ ես անոնց հետ։

Ես կրնամ ըսել թէ ինչպէս կը ծնանին անոնք ինծի հետ, բայց ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս կը ծնան

շուրջ, Զէմպրէէն յայտնեց թէ այս կարգի լուրերը Մոսկուայէն կը բխին։ «Ես երբեք այսպիսի բան մը մտքէս չեմ անցուցած։ Վերջին դէպքերուն մէջ չկայ բան մը, որ ցոյց տայ թէ մեր քաղաքականութեան մէջ փոփոխութիւն մտած է։ Առանց խորհրդարանի վաւերացման, ո՛չ մէկ յանձնառութիւն կրնանք ստանձնել»։ Այս յայտարարութեամբ կ'ուզէր հերքել այն զրոյցները թէ կ'աշխատի հաշտեցնել Լեհաստանն ու Գերմանիան՝ Ռուսիոյ հետ անհամաձայնութեան մը պարագային։ «Անգլ. քաղաքականութեան մէջ գաղտնիքներ չկան», շարունակեց նախարարը։ «Զանազան հարցերու մասին կարելի չէ անմիջապէս զեկոյց հրատարակել, երբ դեռ բանակցութիւնները կը շարունակուին»։ Գալով Զինաստանի, Անգլիոյ քաղաքականութիւնը հանդէպ չինացի ազգայնականներուն շատ ազատական է։ Կ'ըմբռնենք թէ նախկին դաշնագիրները այլեւս հինցած են եւ բարեփոխութեան կը կարօտին։ Կը յուսամ թէ քաղաքացիական կոիւը շուտով պիտի վերջանայ եւ պիտի կազմուի զօրաւոր չինական կառավարութիւն մը, որուն հետ կարելի պիտի ըլլայ բանակցիլ եւ օտարներու պաշտպանութեան ներկայ վարչաձեւին վերջ տալ։ Չինական խնդիրները մասնաւոր բնոյթ կը ներկայացնեն, եւ Ազգ. Դաշնակցութեան միջամտութիւնը չի կրնար օգտակար ըլլալ։

Ի վերջոյ ակնարկելով Ռուսիոյ, Զէմպրէէն ըսաւ. «Իմ ծանուցագրիս սովետներու պատասխանը չզարմացուց զիս։ Սակայն խօսքերը չեն որ կրնան փոխել կացութիւնը, այլ գործերը, ու մենք կը սպասենք Ռուսիոյ ընելիքներուն։ Երբեք պատահած չէ որ դիւանագիտական բարեկամական յարաբերութիւններ մշակող երկու երկիրներէն մէկը շարունակ թշնամական նպատակներ հետապնդէ եւ միւս երկրի քաղաքականութեան միջամտէ, ու միւս երկիրն ալ այսքան երկար հանդուրժէ։ Մենք ըրինք այդ բանը պարզապէս Եւրոպայի խաղաղութեան համար»։

Փուանքարէի վստահութեան քուէ կը ստանայ

Երեսփոխանական ժողովին մէջ ընկերվարական երեսփոխան Վէնսան Օրիոլ առաջարկ ներկայացուց անմիջապէս վճռաբանութեան ենթարկել պարտքերու մասին կառավարութեան առժամեայ համաձայնագիրները Անգլիոյ եւ Ամերիկայի հետ։ Վէնսան Օրիոլի առաջարկին տակ ստորագրած էին 50 երեսփոխաններ, որով խնդիրը օրակարգի դրուեցաւ եւ Օրիոլ պարզեց իր տեսակէտը՝ յայտնելով, որ այսպիսի մասնակի վճռաբանութիւնները անխուսափելիօրէն պիտի յանգին Մէլըն - Պէրանժէ եւ Քայեօ - Զըրչիլ համաձայնագիրներու վաւերացումին։ «Մենք կը նշանակեն թէ պարտքերը օրինական են, թէ մենք կը հրաժարինք աւելի արդար կարգադրութիւն մը պահանջելէ։ Գիտցէք որ եթէ վաւերացնենք, մեր պարտատէրերը փոխանակ մեղմանալու, աւելի խստապահանջ պիտի դառնան մեզի դէմ»։

Վարչապետը հաստատօրէն պատասխանեց թէ մասնակի վճարումները երբեք չեն կապեր Ֆրանսան եւ թէ Խորհրդարանը կատարելապէս ազատ է չվաւերացնելու զանոնք։ Կառավարութիւնը առժամեայ համաձայնագրութիւնները ստորագրեց պարզապէս ժամանակ տալու համար խորհրդարանին, որ երկարօրէն մտածէ այդ համաձայնագիրներուն մասին, որոնք 62 տարուան համար պիտի կապեն Ֆրանսան եւ պիտի ծանրանան քանի մը սերունդներու վրայ։ «Ֆրանսա չի կրնար ուրանալ իր պարտքերը։ Այսօր առանց վտանգի կրնայ վճարել իր պարտքերը։ Բայց ապագային վստահ չենք։ Եթէ երկու տարի վերջ Գերմանիա չվճարէ մեզ, բնական է որ դժուարութեան պիտի բախինք»։

Վարչապետը վստահութեան խնդիր ըրաւ, յայտարարելով թէ ձեռնպահները իրրեւ հակառակ քուէ պիտի նկատէ։ Երեսփ. ժողովը 180ի դէմ 350 քուէով վստահութիւն յայտնեց Փուանքարէի։ Ընկերվարականները, համայնավարները եւ կարգ մը արմատականներ հակառակ քուէ տուին։ Հակառակ այս արդիւնքին, երեսփոխաններուն մեծամասնութիւնը հակառակ է յիշեալ համաձայնագիրներու վաւերացումին։

Ֆաշիստներու տասնաբաւնեայ պատուիրանքը

Ֆաշիստները հրատարակութեան տուած են հետեւեալ տասնաբանեայ պատուիրանք՝ ուղղուած բոլոր ֆաշիստներուն, մասնաւորաբար զինուորներուն.—

1. Ցիշէ՝ թէ ֆաշիստը պէտք չէ կարծէ որ տեւական խաղաղութեան մէջ կ'ապրի։

2. Կրնաս երկրիդ ծառայել, նոյնիսկ եթէ զոյգ մը քարիւղի թիթեղի պահապան ըլլաս։

3. Եթէ պատժուիս, կը նշանակէ թէ ատոր արժանի էիր։

4. Ընկերներդ քու եղբայրներդ են, որովհետեւ անոնք քեզի հետ կ'ապրին եւ քեզ պէս կը մտածեն։

5. Հրացանդ ու համազգեստդ քեզի չեն տրուած քու ծուլութիւնդ ծածկելու, այլ երկիրդ պաշտպանելու համար։

6. Մի՛ ըսեր երբեք, «Այս ծախքը կարեւորութիւն չունի, կառավարութիւնն է որ կը վճարէ», որովհետեւ վճարողը դուն ես, ու կառավարութիւնը այն է որ դուն փափաքած եւ որուն համար համազգեստ հագած ես։

7. Կարգապահութիւնը բանակներու առաքինութիւնն է. առանց ատոր զինուոր չկայ, այլ անկարգ խմբակներ, որոնք կոչուած են պարտուելու։

8. Ինչ որ Մուսօլինին կ'ընէ, լաւ է։

9. Յանցաւորը չի կրնար երբեք մեղմացուցիչ պարագաներ մէջ բերել, եթէ անհնազանդ գտնուած է։

10. Ամէն ինչէ աւելի թանկագին բան մը կայ. Մուսօլինիի կեանքն է այն։

Ճափոնի նոր երկրաշարժը

Երէկ գրեցինք թէ Ճափոնի մէջ նոր երկրաշարժ պատահած է։ Նոր լուրերու համաձայն, ցնցումները եղած են խիստ սաստիկ եւ մեռած են մօտ 2000 հոգի, քանդուած են հինգ քաղաքներ եւ ուրիշ քաղաքներ ալ կ'այրին, երկրաշարժը հրդեհ առաջ բերած ըլլալով։ Ամէնէն աւելի վնասուած են Թանկօ, Թուրպա եւ Թէճինա նահանգները. Ճափոնի հարաւակողմը։ Միայն այս վայրերուն մէջ մեռած են 1600 հոգի, իսկ քանդուած տուներու թիւն է 6500։ Կեդրոնի քաղաքները եւ Թօքիօ չեն վնասուած։ Բացի հրդեհէն, ծովեզերեայ կարգ մը քաղաքներ ու գիւղեր ողողումի ենթարկուած են։

Կառավարութիւնը զինուորներ, մարտանաւեր եւ օդանաւեր փութացուց աղէտին վայրերը, ուր պաշարման վիճակ պիտի յայտարարուի այսօր։ Հաղորդակցութեան ճամբաները կտրուած են։ Առաջին ցնցումը սկսաւ կիրակի գիշեր եւ 24 ժամուան ընթացքին զգացուեցաւ զանազան տեղեր։

Այս նոր աղէտը գրեթէ կը հաւասարի 1923ի եւ 1925ի մեծ ցնցումներուն։ Կորուստները միլիոններու կը հասնին։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ վիճաբանական ժողովը՝ վաղը՝ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին, Փլաս ա'Իթալի քաֆէ Քլէոպատր-Լիւնի վերնայարկը, Մէթրօ՝ Իթալի։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Պատ. Միութեան ընդհ. ժողովը կիրակի 13 Մարտ կէս օրէ վերջ ժամը 1ին ընթերցասրահին մէջ։

Հ. Յ. Դ. Մարսիլիոյ «Իշխան» խումբի ժողովը՝ շաբաթ 12 Մարտ իրիկուան ժամը 8.30ին Րիւ Րէպիւպլիք, 63 թիւ սըբ-ճարանին մէջ։

ՅԱՐԴՈՂԻ գրական երեկոն այսօր Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա։ վ.ահիրամ կաքաւեան կը խօսի Սիւրմէլեանի «Լոյս Ջուարթ» քերթուածներու հաւաքածոյին մասին։ Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ջափ. երկս. Որբերու Միութեան լսարանական յանձնախումբը դասախօսութիւններու շարքը բացած է։

Բժշկ. Միութեան կողմէ կը դասախօսէ Տքթ. վահան Պալասան «Մննդառութիւն» նիւթին շուրջ, որ տեղի կ'ունենայ Միութեան ընթերցարանին մէջ 61, Rue Mr. le Prince, կիրակի 13 Մարտ կէս օրէ վերջ։ Կը հրաւիրուին բոլոր անդամներն, հիմակիրները, ու ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին այս դասախօսութիւնով։

ՍՏԱՑԱՆՔ

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳԻՐ

Թիւ 4 (1927 Փետրուար)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Վ. Վալադեան, Շահնազարանց Աւետր.—Արամ Հայկազ, Ծնունդի գիշեր մը.— Յովհ. Ասպետ, Երկու կիներ.— Ռէն, Դնդակահարուածները.— Կոստան Զարեան, Անցորդը եւ իր ճամբան.— Ռ. Լեւոնեան, Մեծ աղէտի նախօրէին.— Անտոն Կագէլ, Կին, Զգոյշ, Աչքերդ.— Ա. Արշակունի. Փետրուարեան Ապստամբութիւնը.— Մ. Վարանդեան, Թէ ինչպէս կը խօսի մեռելը.— Լեւոն Շանթ, Հոգիի արտայայտութեան երեք ձեւը.— Պրօֆ. Ն. Ադոնց, Բաղաք, հոսանքներ հին Հայաստանում.— Ռուբէն, Բիմիական Պատերազմը.— Պրօֆ. Վ. Տոտոմեանց, Համագործակցութեան նշանակութիւնը եւ նուաճումները.— Գ. Ա. Ուռհայեցի, Ուրֆան եւ իր երկամեայ Հայկ. Ինքնավարութիւնը.— Ալ. Խատիսեան, Հայաստ. Հանրապ. Ծագումն ու զարգացումը.— Յ.Յ. Կարմիրեան, Քանի մը յուշեր Շապին Գարահիսարէն.—Վարդուհի Ք. Նալպանտեան, Մատթէոս Մամուրեան որպէս քաղաքական գրող.— Ն., Հայ Յեղափոխականի փիլսոսայութիւնը.— Սիմոլ Սեդ, Հայ կեանքը (ամսական տեսութիւն) եւայլն, եւայլն... Հասցէ.— 13-15 Shawmut St. Boston, Mass. U. S. A.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսացի ֆիկ. էֆգարէս ձամճեան եւ որդիքը Հրանտ եւ Մարի ձամճեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Յ. ձամճեան, այժմ 27 տարեկան, որ գաղթականութեան միջոցին «Արբինազտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի Թերթերէն արտատպել։ Ցեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Rue Villeroy Lyon. France.

— Կը փնտռուին Սեբաստացի Գեղամ Աստուրեան եւ իր քոյրը փիփէ Աստուրեան որոնք 7—8 ամիս առաջ Գավալայէն Մարսէյլ եկած են։ Իմացնել՝ Nichan Chirinianի Dugradu par Ucel (Ardèche)։

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ
Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՖՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ
15 Րիւ տէ Ֆօմինիքէն

ԱՌ ՈՐ ԱՆԿ Է

Լիոնի ազգային միութեան հասցէն է Union Nationale Arménienne, 75 Ave. Berthelot, Lyon.

— Խնուսի Դուման գիւղէն Ազատ Գէորգեան որ հինգ ամիս առաջ Մարսէյլ կը գտնուէր՝ կը կարծուի որ այժմ Փարիզ է. Գրել՝ Abkar Assadourianի, Rue AnatoleFrance Cantine Arménien Le Creusot (S. et L.)։

— Վահան, Լուսվիկ, Մարիամ, Սիրանուշ եւ Թագուհի Քիզիրեան որոնք Տէր-Զոր աքսորուած էին։ Տեղեկացնել՝ Համբարձում Քիզիրեանի՝ Usine St.-Laurent de Ceris, (Charente) France։ *Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։*

— Տիկին Վարդենի Իշխէեան որ Իզմիրի աղէտէն վերջ ամուսնոյն հետ Գանտիա (Կրետէ) ապաստանած է, կը փնտռէ իր քոյրերը Մարիամ եւ Լուսաբեր, որոնց մասին լուր առած է թէ գործարանի մը մէջ կ'աշխատին Լիոն, Մարսէյլ կամ շրջակայքը։ Իմացնել Լիոնի Ազգ. Միութեան վարչութեան, 75, Avenue Berthelot, Lyon։

— Պրուսայի Մեծ Նոր Գիւղէն Գէորգ Սարգիսեան (Հեդինէեան) հօր անունը Յովհաննէս, մօր անունը Ովսաննա որ 1925ին Թրակիայէն Յունաստան գացած էր։ Իմացնել՝ Անդրէաս Սարգիսեանի Aux Établissements A. Vital, Aubenas, Ardèche, France: *Կը խնդրուի յունահայ Թերթերէն արտատպել։*

— Զօրումցի Էլմաս Վարժապետեան կը փնտռէ իր որդին Յովհաննէս Վարժապետեան, 26 տարեկան որ կորսուած է Տէր-Զօրի եւ Մուսուլի կողմերը։ Գրել՝ Բարսեղ Լօշեանի՝ 20 Rue de Bezons, Courbevoie, (Seine)։ *Լուր տուողին նուէր մը պիտի տրուի։*

— Ալաշկերտի Բերդից գիւղէն Տիգրան Մխիթեան, հօր անունը Խաչո, մօրը անունը Տիպէր, կնոջ անունը Անուշ, զաւակներուն անունները, Իշխան, Զարզանդ, Արշալոյս, Աղաւնի։ Քոյրերը Լուսիկ, Ագնիւ, Եսթեր, Զարուն, Նունիկ, Մաքրուն, հօրեղբայրները Մելքոն, Գասպար. պապի, անունը Մարտիրոս. կը կարծուի Ֆրանսա ըլլալ՝ կը փնտռուի իր գերդաստանի կողմանէ Ռուսաստանի կրասնոդար քաղաքէն։

Իմացնել Հ. Աւետիսեանի՝ S. Donnet St. Hilaire Grasse A.M.

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՎԱՂԱՆՑԻ ՄԷՋ

Հ. Յ. Դաշնակցութեան Վաղանցի նոր ակումբ ընթերցարանի հասցէն է. 26 Bld. Vauban, *բաց է շաբթուան երկուշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը երեկոյեան ժամը 8էն մինչեւ 10ը, իսկ կիրակի օր առաւօտեան ժամը 10էն մինչեւ 12։ Հայ հասարակութիւնը կրնայ օգտուիլ սոյն պատեհութենէն, ակումբին մէջ կը գտնուին ամէն տեսակ թերթեր եւ գրքեր ընթերցման համար։*

ԿԸ ԳՆԵՆՔ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՂԹԻՆԵՐ ԵՒ ՓԻԼԻՄՆԵՐ

ԿԸ ԳՆԵՆՔ, արծաթեղէն, ոսկեղէն, ադամանդ, հին եւ նոր յարդի ձեռագործներ։ Կը փնտռենք լաւ ձեռագործ գիտցողներ։

Դիմել՝ «Էնթէրբոս» ընկերութեան մէջ մեր նոր բացած գրասենեակը ամէն օր 10—1 եւ 3—6։

41 Rue de la Chaussée d'Antin
Tél. Trudaine: 01—41

Բ. յարկ աջ կողմ առաջին սենեակը։ Կը խօսինք հայերէն, ռուսերէն եւ օտար լեզուներ։

ՊԻՒՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ծանօթացիր Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՒՆԻ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,
փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ
Շամեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ԳՐԱՆՑԱՒԱՃԵՐՈՒՆ
Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ։ Թարգմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով։ Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ։
ԱՐԱԴ ՁԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
VAHAN YARJANIAN
CONTENTIEUX
5 Rue Cardinal Mercier Paris, (9e)
Tél. CENTRAL 96-70 կամ 97.39 Métro: CLICHY
» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ
Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9.12 և 2.7 բացի կիրակիէ

ՎԱՐԶՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի պայմաններով յարկաբաժին մը որ կը բաղկանայ երկու սենեակներէ եւ խոհանոցէ մը, Route de Versailles*ի վրայ,* Billancourt: *Դիմել՝ նախկին Մոսկուա-Կովկաս ճաշարանը,* 41 Rue de St. Cloud, Billancourt.

ՇԱՀԱԽՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԳՈՐԾ ՄԸ 7000 ՖՐԱՆՔՈՎ

Կը ծախուի պոլսական լիւլէ գայմաքի, թուլում պանիրի եւ ճերմակ պանիրի գործիքներ, շինելու արհեստն ալ սորվեցնելուն եւ եւրոպական ապրանքը տեղաւորելու դիւրութիւններ եւս ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք զուտ շահ։ Դիմել «Յառաջ»ի վարչութեան։

ՍՊԱՍՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Դիմել «Մասիս» Տպարանի վարչութեան, 208 bis, Rue Lafayette: *Մէթրօ՝* Louis Blanc *կամ* Jaurès.

ՄԱԿԱՐԱՆ

9 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Սթերլին,	L. St.	124	04
Տոլար,	Dollar	25	56
Մարք (ոսկի) 100 Mark		605	—
Թրքական Թղթ. L. Trq.		12	80
Թրք. ոսկի » or		114	50
Մէճիտիէ	Médjidié	9	—
Լէվա 100 ֆռանք	Léva	18	65
Տրահմի »	Drachme	33	—
Լիր »	» Lire	112	90
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	71	40
Ֆռանց. »	Frc. Suisse	491	50
Լէյ 100 ֆռանք	Ley	15	20
Ջերվոնեց	(10 Roubles or)	93	—

ԱՐԺԵԹՈՒԹԵՐ			
Եգ. Ֆր. Ֆոնսիէ I Cr. Fonc. Eg.		3070	—
» II »		1925	—
» III »		1730	—
Ռումելի երկաթ. Lots turcs		170	—

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)
Le Gérant : H. TEURNIER

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ԶԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մատենադարանի դիրքերու։
Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han Tchakmakdjilar. Constantinople.

ՏՕՔԹ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
48, rue Montmartre
(Բ. յարկ. աջ կողմ առաջին դուռ) Ֆրանսացի կարող մասնագէտներ՝ բնակարգութեամբ կը դարմանէ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՎԵՆԵՐԱԿԱՆ եւ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ՔԻԹԻ. ԱԿԱՆՋԻ եւ ԿՈԿՈՐԴԻ հիւանդութիւններ
Téléph. CENTRAL 73-38
Métro : SENTIER կամ HALLES
Ընդունելութեան ժամեր՝ ամէն օր 8ԷՕ — 10եւ 1,30 — 8

DOCTEUR PROY
Ex - Interne des Hopitaux
Médaille d'argent
Տօքթ. Յ. ԽՈՒՄԷՍԷՐԵԱՆ
Աչքաբոյժ
Աշխատակցութեամբ
Կը խնամէ ներքին, կանանց, մորթային, վէներական հիւանդութիւնները։ Բակալաւրիաներու (varices) հիւմնական դարմանում առանց գործադրութեան։
Ամէն օր ժամը 10-12, եւ 2.8, կիրակի եւ տօն օրեր 9—12։
142 R. DU FB. St. DENIS
Կառ սը լ'Էթթի մօտ,
Հեռաձայն՝ Nord 31—49։

Կաւագործ աժան գին, բով կը շինուի եւ կը նորոգուին տնական իրեր, դրասենեակի սեղաններ եւ աթոռներ, ծախու են քրքաններ եւ ամէն տեսակ կահ կարասիներ։ Դիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

Կ'ուզուի ժամագործ 16-18 կերտ մը տարեկան։ Դիմել՝ պէօճէնեան 49 Rue Fondary, Paris (15e).

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԼԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՈՒՐԲԱԹ 11 ՄԱՐՏ 1927

11 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 282

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԱՒՈՒ ԽՕՍՔ

ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍՊԷՍ ԱՆՃԱՐԱԿ

Նոր չէ որ պիտի հաստատենք թէ, օտարները աւելի լրջութեամբ կը հետաքրքրուին հայկական մշակոյթի արժէքներով, քան մենք որ իրապէս շահագրգռուած ենք։

Պատմական, գիտական, բանասիրական ուսումնասիրութիւններ հայ ժողովուրդի մասին՝ ընդհանրապէս օտարներու գործեր են։ Եւ մինչեւ այսօր ալ, Փարիզի մէջ, անվհատ կը գործէ հաստատութիւն մը, «Հայագիտական Ընկերութիւնը» (Société des Etudes Arméniennes), որուն 1927ի կոչը հրատարակեցինք երէկ։

Հայկական մշակոյթի նուիրուած երկու գիտնականներ, պ. պ. Ֆ. Մաքլեր եւ Ա. Մէյէ, այդ շրջաբերականը ստորագրած ատեն, կ'արտայայտուին այնպիսի հաւատքով մը, որ ապահովաբար պիտի զարմացնէ մեր շատ մը տիտղոսաւոր այլ եղեղուկ «ագգասէր»ները։ Եւ անոնք ուռուցիկ խօսքեր չէ որ կը հոլովեն.

—«Հայաստան պէտք է ստանայ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին աջակցութիւնը։ Այդ աջակցութիւնը պիտի գտնէ աւելի լաւ կերպով, երբ ճշգրիտ եւ անշահախնդիր ուսումնասիրութիւններ աշխարհին ցոյց տան հայ ժողովուրդին ինքնատպութիւնը, իզօր կենսունակութիւնն ու կորովը»։

Այդպիսի աշխատանքի մը յատկացուած է «Հայագիտական Հանդէս»ը, որ կը հրատարակուի ամէն քանի մը տարիէ ի վեր, իբրեւ պանագային ժողովածու մը հայկական մշակոյթի ուսումնասիրութեան։

Այս ձեռնարկը գնահատած ատեն, կարելի չէ առանց ակնթի յիշել տխուր իրականութիւնն մը։

«Հայագիտական Ընկերութիւնը» եւ անոր հրատարակութիւնները սահմանուած են օտարին ճանչցնելու հայկական արուեստը, գրականութիւնը, լեզուն, կրօնը. մէկ խօսքով՝ քաղաքակրթութիւնը։ Իսկ մենք ունի՞նք ո՛ր եւ է կեդրոնական հաստատութիւն, որ յատկապէս նուիրուէր այս ժողովուրդի մեծաւոր արժէքներուն պահպանման եւ զարգացման։

Զենք ուրանար Հայաստանի մէջ կատարուած աշխատանքը, թէեւ գիտենք որ այնտեղ «մարքսիստ» կապկութիւնը յաճախ աւելի մեծ դեր կը կատարէ, քան բուն գիտական միտքը, քննական, առարկայական վերլուծումը։ Մարդիկ Հայաստանի համալսարանն անգամ կրկէս դարձուցած են լկնկնական մարդանքներու։ Կոմիսար Աշոտ Յովհաննիսեան, տակաւին քանի մը շաբաթ առաջ, այս իմաստով խրատներ կուտար շրջանառարտներուն, ծամծմելով ծանօթ «ֆորմիւլ»ները։

Զենք ուրանար, նաեւ, ինչ որ կատարած են վէնետիկն ու վիէննան, իրենց մանրակրկիտ, բայց հետզհետէ սահմանափակ պրպտումներով։ Գիտենք, վերջապէս, անհատ մասնագէտներ, որոնք տարիներէ ի վեր կը տքնին այս ապերախտ ճամբուն ճամբուն վրայ, կովկասի «Ազգագրական Հանդէս»ի հիմնադիր եր. Լալայեանցէն մինչեւ փրոֆէսէօր Մ. Մինասեանը։ (Այս վերջինը, գիտական նոր աղբիւրներու կրթնած, կը շարունակէ պանագային ուսումնասիրութիւններ հրատարակել Ամերիկայի «Հայրենիք» ամսագրին եւ իր հանդէսին՝ «Լոյս»ի մէջ, հայ ցեղին ծագման, ընկերային եւ ընտանեկան կարգուսարքի, քաղաքակրթութեան եւն. մասին)։

Բայց այս բոլորը կը լրացնե՞ն պակասը։ Աւելի ճիշտ — արտասահմանի մասին խօսելով —կարելի՞ չէ՞ համախմբել, և տեսական, հետեւաբար աւելի արդիւնաւոր դարձնել այս ցիրուցան ճիգերն ու ձեռնարկները։

Կարելի չէ՞ ունենալ հայկական Տուն մը (Foyer), այսպէս կոչուած, «Աշխարհական Վէնետիկ» մը, եւրոպայի ծոցին վրայ, ամբողջովին նուիրուած հայկական մշակոյթին։ Ես այս՝ անենալային առումով։ Այնտեղ պէտք է ամփոփուի հայկական միտքը, իր բոլոր արտայայտութիւններով, բայց մանաւանդ ներկայ երկունքը արժեցնելու, զարգացնելու մտահոգութեամբ։ Տաղանդներ կան որ կը ծլին ու կը խամրին. ուրիշներ՝ ճարահատ, կը քաշուին հրապարակէն. աւելի բախտաւորներ մեկենաս կը փնտռեն, կամ կ'ոստոստեն մերթ ալ, մերթ ձախ։ Մէկ խօսքով, լքում եւ ամլութիւն։ Այս կացութեան առջեւ, կան քաղաքական «ամերիկեան դիտողներ», որոնք միջոց ունին, բայց իրենց մտքը մոխիրը չեն թաթխեր։

Անհատական նախաձեռնութի՞ւնն է որ կը պակսի, թէ հաստատական կամքը։ Գիտենք։ Ամէն պարագայի մէջ, դառն է պատկերը։

Եւ դեռ աւելի արտասուելին։ Քանի մը սերունդ առաջ, Պոլսոյ մէջ, մեր եղբայրներն ու քոյրերը խելք եւ կամք ունեցեր են ստեղծելու Միացեալ եւ Ազգանուէր ընկերութիւնները, որպէսզի լոյս տարածեն մինչեւ հեռաւոր անկիւնները, Զէյթունն, Սասունն կամ Տիգրանակերտ։ Այսօր, Յունաստանի կամ Սուրիոյ կայաններուն մէջ հարիւրաւոր մանուկներ քերականի մը կարօտը կը քաշեն։ Զկայ կազմակերպութիւն մը որ ամսական քանի մը հազար ֆրանք ապահովէ, այս թշուառները փոքրիկ փրկելու համար։

Իսկ այստեղ, տարին քանի մը հարիւր հազար ֆրանքներ կը մսխուին զանազան անպէտ «միսիոն»ներու համար, խղճի կատարեալ հանգստութեամբ, բայց երեք հարիւր ֆրանք չի գտնուիր, որպէս զի երեսունն հայ մանուկներ հայերէն սորվին Տէսթինի կամ Փոն տը Շէրիի մէջ։

Ինչո՞ւ այսպէս անճարակ, երբ այնքան միջոցներ եւ տրամադրութիւններ կան։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՊԱՐՊՈՒԻ ՀԱՑԱՍՏԱՆԸ

«Յուսաբեր» կրկին շօշափելով Հայաստանի քնակչութեան նուազման խնդիրը, համաձայն վերջին մարդահամարին, կը նկատէ.

—«Ռուսութիւնը «բարեկամութիւնը» կը շարունակէ յարատեւել՝ ընդհանրապէս Անդրկովկասի եւ յատկապէս Հայաստանի հաշուին։

Թուրքիա կը շարունակէ «բարեկամ» մնալ Ռուսիոյ այնքան ատեն, որքան ատեն Մոսկուան կը շարունակէ զիջող ըլլալ Թուրքիոյ հանդէպ՝ ընդհանրապէս Անդրկովկասի եւ առանձնապէս Հայաստանի վերաբերող հարցերուն մէջ։

Իր դարաւոր պատմութեան ընթացքին, Թուրքիա թերեւս երբեք Անդրկովկասի մէջ ունեցած չէ այն դիրքն ու կշիռը, ինչ որ ունի այսօր։

...Ուժեղ Հայաստանը, Էնկիւրիի համոզումով, վատագոյն թշնամին է ռուսութիւրք «բարեկամութեան»։

Եւ որովհետեւ Մոսկուան դիտէ այս ճշմարտութիւնը, եւ որովհետեւ Մոսկուան ի դին ամէն զոհողութեան կ'ուզէ պահել Էնկիւրին իր «բարեկամներու» ցանկին մէջ, ճիշտ այդ պատճառով ալ ան կ'ուժասպառէ Հայաստանը։

...Իր բոլոր փչչերէն անդամահատուած Հայաստանը՝ սակաւարիւն դարձած է հողային տարածութեամբ, որպէսզի սակաւարիւն մնայ նաեւ իր ժողովուրդին քանակով։

...Այս հիմնական քաղաքականութիւնն է պատճառը նաեւ այն տարօրինակ երեւոյթին, որ պակսած է Հայաստանի ազգաբնակութեան քանակը՝ ի հաշիւ հա՛յ ժողովուրդի, բայց ոչ այլազգիներու։ Երկրէն բնիկ տարրը կը զաղթէ, իսկ օտարը կը մնայ եւ կ'աւելնայ հոն։ Հայը Հայաստանէն կը մեկնի դէպի Ռուսաստանի տարբեր մասերը, իսկ թաթարը չերթար ո՛չ ցեղակից Թուրքին եւ ո՛չ ալ թաթարին քով, հակառակ անոր, որ թէ՛ Ազրպէյճանի եւ թէ Թուրքիոյ մէջ ան կրնայ ունենալ կեանքի եւ գոյութեան ամէն դիւրութիւն։

100,000 ՖՐ. ՇԻՒԱԿԻ ՀԱՄԱՐ

Եղբայրական օգնութեան յանձնախումբը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ փետրուար 15ին Ամերիկեան Նպաստամատոյցի ներկայացուցիչ պ. կորբըն Պէրրիի յանձնուած է հարիւր հազար (100,000) ֆր., իր հանգանակած գումարէն։

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՎ.— Մարդ մը Իտալիոյ Փիէմոն թէ քաղաքին անկեղծութիւնը մատած էր, զրկուած ըլլալով լիշողութենէ։ Ոչինչ կը յիշէր, ոչ իր անունը, ոչ մականունը, ոչ գիւղը, ոչի՛նչ, ոչի՛նչ։ Օր մը հիւանդապահուհիներէն մէկը ցոյց կուտայ լուսանկար մը։ Հիւանդը յանկարծ ներքին զօրաւոր լուզումի մը շնորհիւ, լիշողութիւնը կը գտնէ. կը ճանչնայ լուսանկարը, որ զարմա՛նք, իր կնոջն էր։ Կը խօսի, կը հասատատէ իր ինքնութիւնը։ Վերջն քաղաքին փիլիսոփայութեան դասախօսն էր, որ 10 տարիէ ի վեր կորսուած էր, եւ յիշողութիւնը խանգարուած ըլլալով չէր կրնար գառնալ իր տեղը։

ՕՐԸ ՕՐԻՆ

ԲՈՂՈՔ 375 ՖՐԱՆՔԻՆ ԴԷՄ

ԻՆՔՆՈՒԻՇԵԱՆ ԹՈՒՂԹԵՐԸ 150 ԵՒ 20 ՖՐԱՆՔ ?

Ջուիցերիայէն վերջ, Անգլիա եւ Պելճիքա եւս բողոքեցին Ֆրանսական կառավարութեան մօտ, Խորհրդարանի այն որոշումին դէմ, որով ամէն տարի 375 կամ 40 ֆրանք պիտի գանձուի օտարականներէն՝ ինքնութեան թուղթի համար։

Պելճիքայի հեռագրական գործակալութիւնը 9 մարտ թուականով ժրնեւէն հետեւեալ հեռագիրը կը հաղորդէ այս մասին.—

«Պ. Վանտէրվելտ կարեւոր տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Պոհանի հետ ֆրանսաբնակ օտարականներու բնակութեան տուրքին մասին։

«Պելճիքայի արտաքին նախարարը յայտնեց թէ Պելճիքացիները մեծապէս յուզուած են տեսնելով որ իրրեւ օտարական կը նկատուին Ֆրանսայի մէջ։ Ներկայ սակը ահագին է եւ իրական տուրք մը կը կազմէ, քանի որ պիտի գանձուի մարդ գլուխ եւ ամէն տարի։ Դիտել տուաւ թէ սկզբունքով այդ տուրքին պէտք է ենթարկուին այն օտարականները, որոնց դրամը բարձր է. մինչ Պելճիքացիները միակ դրացիներն են, որոնց համար ֆրանս. դրամը աւելի բարձր է։ Ուրեմն կը հետեւի թէ Պելճիքացիները ամէնէն աւելի կը տուժեն։

Պ. Պ. Փուանքարէ եւ Պրիան համամիտ են Պելճիքացիներուն համար ջնջելու այս սակը, սակայն կ'երեւի թէ այս ջնջումը դժբախտաբար սեծամասնութիւն չպիտի գտնէ ելմտական յանձնաժողովին եւ Խորհրդարանին մէջ։ Բայց եւ այնպէս հաւանաբար զեղչուելուն համար մեծամասնութիւն գոյանայ։

Պ. Վանտէրվելտ նոյնպէս շատ կը գտնէ վարձու աշխատաւորներու համար նշանակուած 40 ֆրանքը։ Կը սպասուի որ Պելճիքայի բանւորական կազմակերպութիւնները միանալով Ֆրանսայի քոյր կազմակերպութեանց հետ, յաջողին ձեռք բերել փափաքուած զեղչը»։

Այս առթիւ *Էքսէլսիօր* կը գրէ.—

Ֆրանսական կառավարութիւնը այս դիմումին առաջ արդէն զբաղած էր ինքնութեան թուղթի սակին խնդրով։ Խորհրդարանին կողմէ նշանակուած սակը կարելի չըլլար հաշտեցնել այն դաշնագիրներուն հետ, որոնք Ֆրանսան կը կապեն մեծ թիւով օտար պետութիւններու։ Այս պատճառով կառավարութիւնը դիմեց Շերակոյտի եւ Երեսփ. ժողովի ելմտական յանձնաժողովներուն, առաջարկելով նշանակել աւելի չափաւոր սակ մը, որ ո եւ է կապ չունենայ ուղղակի տուրքերուն հետ։

Միւս կողմէ, Ծերակուտական Րէպէրթի առաջարկած էր բարեփոխել ինքնութեան թուղթի սակերը։ Վարչապետ Փուանքարէ նամակով մը այս գրութիւնը ղրկեց Շերակոյտի ելմտական յանձնաժողո՛վին, որ Պ. Քլէմանթէլի նախագահութեամբ գումարուելով նկատի առաւ զայն առջի օր։

Ելմտական, արտաքին եւ ներքին նախարարները համաձայնելով խմբագրած են ծրագիր մը, որուն համաձայն ինքնութեան թուղթ առնելու կամ նորոգելու համար պիտի գանձուի ոչ թէ 375 այլ 150 ֆրանք, որուն 120ը պետութեան, 10ը նահանգին եւ 20ը համայնքին համար։ իսկ զեղչեալ սակը 40ի տեղ պիտի ըլլայ 20 ֆրանք, 14ը պետութեան, 2ը նահանգին եւ 4ը համայնքին համար։

Ասկէ զատ ինքնութեան թուղթ պիտի պահանջուի երկու ամիսէ աւելի Ֆրանսա բնակող օտարականներէ, փոխանակ մէկ ամիսի։ Ինքնութեան թուղթերը պիտի նորոգուին ամէն տարի։

Շերակոյտի ելմտական յանձնաժողովին մէջ այս մասին տեղի ունեցաւ երկար վիճաբանութիւն, որուն մասնակցեցան նախագահը, զեկուցաբերը, Պ. Պ. Րէպէրթի, Քայեօ, Շրասէք եւ Փասքէ։ Յանձնաժողովը ընդունեց կառավարութեան առաջարկած ծրագիրը, որ շուտով ծերակոյտին պիտի ներկայացուի։

ԱՆԳԼ. ՆԱԻԱՏՈՐՄԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Գրեցինք թէ անգլիական նաւատորմը ռազմափոթներ պիտի կատարէ Միջերկրականի մէջ։ Հիպրալթարէն կը հեռագրեն 9 մարտ թուականով.—

Գարնանային ռազմափոթներու համար այսօր Միջերկրականի մէջ կը համախմբուի անգլիական մեծ նաւատորմ մը։ Բացի Մեծ Պատերազմէն, երբեք այսքան հսկայ նաւատորմ մը չէ գտնուած մէկ հոգիի հրամանատարութեան տակ։ Ատլանտեանի եւ Միջերկրականի միացեալ նաւատորմիները, իւրաքանչիւրը բաղկացած մօտ 70 մարտանաւէ, դրուած են սըր Րոճըր Քիյսի վերին հրամանին տակ։

Ատլանտեանի նաւատորմը ճիպրալթարէն մեկնեցաւ այս առաւօտ կէսգիշերէն քիչ վերջ, խաղաղօրէն սահելով նաւահանգիստէն դուրս՝ միանալու համար Միջերկրականի նաւատորմին։ Բուն ժամադրավայրը գաղտնի կը պահուի, որովհետեւ ռազմափոթի յատակագիծին համաձայն՝ թշնամի նաւատորմը պէտք չէ գիտնայ թէ ո՛ւր է միւս նաւատորմը։ Գործողութեանց սահմանին մէջ գտնուած բոլոր առեւտրական նաւերուն արգիլուած է իրենց անթելի գործիքները գործածել։

Այսքան ահագին նաւատորմի մը Միջերկրականի մէջ համախմբուիլը ցոյց կուտայ թէ անգլիական կառավարութիւնը նաւատորմին կեդրոնը Հիւսիսային ծովէն փոխադրած է Միջերկրական եւ կ'ազդարարէ բոլոր շահակիցներուն թէ Անգլիա կ'ուզէ իր գերակշռութիւնը պահպանել այդ ջուրերուն մէջ։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՄԱՐԴԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Փրակայէն կը հեռագրեն թէ Մոլտավայի ոստիկանութիւնը ձերբակալած է մարդակեր գնչուներու խումբ մը, որ կը բաղկանար 26 հոգիէ։

Խումբին պետն է Ալեքսանդը Ֆիլքէ, որ խիստ հարցաքննութեան մը չնորհիւ խոստովանութիւններ ըրած է։

— Այո՛, յարձակեցանք, եթէ չեմ սխալիր, վեց ճամբորդի վրայ։ Մորթեցինք զանոնք։ Ջարդեցինք եւ կտորները բերինք մեր վրաններուն տակ։ Ջանազան համեմներ դրինք եւ կերանք։

Խումբին միւս անդամները աւելի մանրամասնութիւններ կուտան.

— Միսերը կ'եփէինք, *փափրիքա* աւելցնելէ յետոյ, բրինձով, գետնախնձորով, եւ հունգարական *կուլաշ* (կերակուրի տեսակ) կը շինէինք։

Խուլ համր մը, Ռիպար, որ խումբին միակ գրող-կարդացողն էր, գրաւոր տեղեկագրով մը կը յայտնէ թէ ի՛նչպէս աղ կը ցանէին մխսերուն վրայ, որպէսզի չհոտին։

Դեռատի գնչու մըն ալ, նոյն խումբէն, ժօզէֆ Քուտաք, կը նկարագրէ թէ ինչպէս կին մը կերած են.

— Ռիպար կացինով ճեղքեց գլուխը, Ֆիլքէ դանակով մը բացաւ որովայնը, մերէ՛ն վար։ Դուրս քաշեց փորոտիքը, որոնք դեռ տաք էին։ Մենք անմիջապէս կէսը եփեցինք ու կերանք։ Միւս կէսն ալ պահեցինք յաջորդ օրուան, ինչ մը աղը պակաս դրած էին, գոնէ ես այնպէս գտայ։

Ոստիկանութիւնը քննութիւն կը կատարէ տեղւոյն վրայ։ Ճամբան ցիանխուստի փորձ մը կը կատարէ Ֆիլքէ, որ կ'առաջնորդէր։ Շուտով կը բռնուի սակայն եւ ցոյց կուտայ, անտառի մը մօտ, բազմաթիւ փոսեր, ուր թափած էին ոսկորները։ Ոսկորներուն վրայ ոեւէ արիւն չկայ, որովհետեւ խաշելէ յետոյ նետուած էին։

Կիներուն միսը աւելի համով գտած են, եւ, համաձայն իրենց խոստովանութեան, կերած են չորս կին եւ մէկ դալրոցական տղայ։

Մարդակեր գնչուները յայտարարած են.

— Օդերը գէշ կ'երթային, եւ դատապարտուած էինք գործազրկութեան։ Մեր կիներն ալ չկրցին գործ գտնել։ Է՛, անօթի չէինք կրնար մնալ, մորթեցինք ձամբորդները եւ կերանք։

ԴՈՐՏԵՐԸ Կ'ԱՐՇԱԻԵՆ.— Գորտերու անվերջ բազմութիւն մը արշաւած է քալէ քաղաքին Լիլի դրան առջեւ բացուող դաշտին վրայ, որ ողողուած էր վերջերս ծովին ջուրով։ Գորտերը այնքան շատ են, որ կարելի չէ հաշուել եւ տեսակ մը սալայատակ շինած են ջրուտ մարգագետինին մէջ։

ՆԵՐՈՒԻՄՏԱՐՈՒԻՆԱԿԱՆԻՆ.— Ամերիկայի մէջ, երկու տարի առաջ դատապարտուած էր դասախօս մը, որ տարուբինականութիւն քարոզած էր իր աշակերտներուն։ Ամերիկայէն կը հեռագրեն թէ փրօֆէսէօրը ներում ստացած է, սակայն նորէն արտօնութիւն չկայ տարուբինականութիւն քարոզելու Ամերիկայի մէջ։

ՈՉ ԱՌԱՋԻՆ, ՈՉ ԱԼ ՎԵՐՋԻՆ.— Փրուսիական կրթական նախարարը, Տէքթէր, հրամայած է, Զաակի արձակուրդներէն վերջ, ջնջել բոլոր դպրոցներուն մէջէն աշակերտներու դասակարգումը, առաջին, երկրորդ եւայլն։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՂԵՒՀԱՅԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՊՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ «ՏՈՒՊՐԱՆ»Ի ԴԷՄ

Ինչպէս կը հաղորդուի Սոֆիայէն, Պուլղարիոյ պատգամաւորներու ժողովը «Տուպրան»ի դէմ հարուցած է քրէական հետապնդում։ Ամբաստանեալներուն մէջ կը գտնուին նաեւ Պուլղարիոյ նախկին վարչապետ Ալեքսանդր Ստամպոլիյսքի եւ նախկին նախարար Ռատոսլավով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ինչպէս կը հաղորդուի Սոֆիայէն, Պուլղարիոյ պատգամաւորներու ժողովը «Տուպրան»ի դէմ հարուցած է քրէական հետապնդում։ Ամբաստանեալներուն մէջ կը գտնուին նաեւ Պուլղարիոյ նախկին վարչապետ Ալեքսանդր Ստամպոլիյսքի եւ նախկին նախարար Ռատոսլավով։

ՊՈՍՏԱԼ

ՎԵՊԵՐԱԿԱՆ

II.

Վերջացրի ես տասը դպրոցական տարիներս, ապրեցի մանկության ամենաերջանիկ տարիները, ամենաանհոգ օրերը։ Ամեն ինչ ինձ համար հետաքրքրական էր, ամեն ինչ ինձ համար նոր էր։ Ամեն օր նոր բան էի սովորում, նոր բան էի իմանում։ Ամեն օր նոր ընկերներ էի ձեռք բերում, նոր ծանոթություններ էի անում։ Ամեն օր նոր ուրախություններ էի ապրում։ Ամեն օր նոր հետաքրքրություններ էի ունենում։ Ամեն օր նոր ցանկություններ էի զգում։ Ամեն օր նոր երազներ էի տեսնում։ Ամեն օր նոր հույսեր էի փայփայում։ Ամեն օր նոր ապագա էի պատկերացնում։ Ամեն օր նոր կյանքի էի նայում։ Ամեն օր նոր կյանքի էի սպասում։ Ամեն օր նոր կյանքի էի ձգտում։ Ամեն օր նոր կյանքի էի կարոտում։ Ամեն օր նոր կյանքի էի տենչում։ Ամեն օր նոր կյանքի էի ուզում։ Ամեն օր նոր կյանքի էի ցանկան

Չին ազգայնականները կը յառաջանան

Շանկայէն կը հեռագրեն թէ անձրեւները դադրած ըլլալով, Քանթոնի ազգայնական զինուորները արագօրէն կը յառաջանան Եանկ-Ցէ-Քիանկի երկայնքը. Նանքինի ուղղութեամբ, ուր բազմաթիւ հիւսիսեան զօրաբաժիններ կեդրոնացած են՝ անոնց յառաջխաղացումը արգիլելու համար: Ասոնք պաշտպանողականի վրայ են այժմ: 7000 հոգինոց ռուս բանակ մը սկսած է նահանջել, Նանքինի գրաւումէն վախնալով: Անգլիա ցամաք հանեց վաշտ մը զինուոր եւ ուժ զրահապատ ինքնաշարժեր, որոնք ժամը 100 քիլոմեթր կրնան կտրել: Շանկայ-Նանքին գիծին վրայ երկաթուղիի աշխատաւորները գործադուլ յայտարարեցին:

Անգլիոյ երեսփ. ժողովը 950,000 սոերլինի վարկ մը քուէարկեց Չինաստանի արշաւաբանակին ծախքերուն յատկացուելու համար: Աշխատաւորական կուսակցութեան կողմէ Քլայնս իբրեւ բողոքի նշան պահանջեց 100 սոերլինի զեղչել այդ վարկը: Երեսփոխան Քէնուօրթի հարցուց թէ ինչո՞ւ Անգլիա այսքան զօրաւոր բանակ մը ղրկեց Չինաստան, մինչ միւս երկիրները՝ ինչպէս Ճափոն եւ Ամերիկա քանի մը հարիւր զինուորով բաւականացան:

Պատերազմական նախարար Ուօրթինկթըն պատասխանելով հերքեց Աշխատաւորականներու այն տեսակէտը թէ անգլ. կառավարութեան գործունէութիւնը արգելք կ'ըլլայ Չինաստանի զարգացման: «Ցաճախ կը մոռցուի թէ, ըսաւ, մեր Չինաստան կատարած արտածումները մօտ 50,000 բանւորներ կ'ապրեցնեն, ու եթէ չինական շուկան կորսնցնենք, այդ մարդիկը Անգլիա պիտի գան եւ մեր գործազուրկներուն շարքերը պիտի ստուարացնեն: Միւս կողմէ, պատրաստ ենք բանակցելու Չինաստանի հետ, ու վերջին շաբաթներու դէպքերը ցոյց տուին որ մեր հետապնդած քաղաքականութիւնը լաւ էր»:

Աշխատաւորականներու առաջարկը մերժուեցաւ 124ի դէմ 303 ձայնով եւ 950,000 ոսկիի վարկը քուէարկուեցաւ:

*** Մարաջախտ Շանկ-Ցօ-Լինի հրամանով է հրացանազարկ եղան գրաւուած «փամիաթ-Լէնինա» շոգենաւին մէջ գտնուող բոլոր ռուս եւ չինացի համայնավարները, բացի Տիկ. Պորոտինէ, Չինաստանի խորհրդային ներկայացուցչին կինը: Տիկին Պորոտին երբ գերի բռնուեցաւ, նախ յայտնեց թէ իր անունն է Տիկին Կրոսպերկ եւ իր գոյքերը դիւանագիտական անձեռնմխելիութեան ենթակայ են: Սակայն Սպիտակ Ռուսերու չոկատէն զինուորներ ռուսերէն լեզուով հարցաքննեցին կինը եւ իմացան որ անիկա Քանթոնի խորհրդային պատուիրակ եաքոպ Պորոտինի կինն է: Իր պայուսակներէն գրաւուեցան կարեւոր վաւերաթուղթեր, մասնաւորաբար Չանկ-Ցօ-Լինի զօրքերուն դիրքը եւ Շանկայի պաշտպանութիւնը ցոյց տուող յատակագիծեր: Խորհրդային հիւպատոսը Նանքին երթալով խնդրած է Անգլիացիներէն որ Չինացիներուն մօտ բարեխօսեն Տիկին Պորոտինի ազատ արձակման համար:

Սիրակցող զինակիցները

Էքմալական «Միլլիյէթ»ի մէջ, Սոերդի երեսփոխան Մաիմուտ պէյ կը բացատրէ թէ ռուսեւթուրք առեւտրական դաշնագիրը ունի նաեւ քաղաքական նշանակութիւն.—

«Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ գոյացած համաձայնութիւնը, քաղաքական տեսակէտով ալ նուազ կարեւորութիւն չունի: Ինչո՞ւ իրականութիւնը եղածին պէս չտեսնենք: Առեւտրական յարաբերութիւններուն տարիներէ ի վեր առկախ մնալը՝ ան բնական կացութիւն մը ստեղծած էր: Ոչ ոքի անծանօթ է թէ թուրքեւռուս բարեկամութիւնն է առանցքը մեր արտաքին քաղաքականութեան: Թուրքիա պատրաստ է ամէնէն անկեղծ եւ ընդարձակ յարաբերութիւնները մշակել պալքանեան ու եւրոպական բոլոր պետութեանց հետ: Արդէն մեծ մասին հետ լաւ յարաբերութեան մէջ է: Հակառակ ասոր, երբեք չէ ուզած ո եւ է պատրուակով բամնուիլ Ռուսիոյ հետ իր ունեցած անկեղծ յարաբերութիւններէն:

«Գիտնալով հանդերձ թէ տնտեսական խնդիրները պէտք է բոլորովին անջատօրէն քննել քաղաքական հարցերէն, միշտ ջժուարութիւն կը քաշէինք այս ճշմարտութիւնը բացատրելու արտաքին աշխարհին: Վերջին համաձայնութիւնը մէջտեղէն վերցուց բոլոր այս ջժուարութիւնները: Հիմա աւելի ուժով կրնանք պնդել թէ երկու հարեւաններուն քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները բնականոն ճամբու մէջ մտած են, եւ աստիճան մը աւելի ամրապնդուած:»

*** Ռուսեւթիւրք դաշնագրին մէջ կարգ մը փոփոխութիւններ պիտի մտցուին, այդ պատճառով ստորագրութիւնը յետաձգուած է:

Սուրիա եւ Պաղեստին

Պէյրութէն կը հեռագրեն.—

Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ կնքուած համաձայնութիւն մը կ'արտօնէ Սուրիոյ Ֆրանսացի ոստիկանները ոճրագործները հետապնդել անգլիական հողամասի վրայ: Անգլիացի ոստիկանները փոխադարձ իրաւունքներ պիտի վայելեն ֆրանս. հոգատարութեան ենթակայ հողերուն վրայ:

*** Անցած օր ծերակուտական փիէր Պէրժէ Ծերակոյտի բանակի յանձնաժողովին առջեւ զեկոյց մը տուած էր Սուրիոյ զինուորական ջժուարութիւններուն մասին: Առջի օր ալ նոյն խնդրին մասին լսուեցաւ պատերազմական նախարար Փէնլըվէ:

Յանձնաժողովը արձանագրեց նախարարին յայտարարութիւնները: Հարցումներ եղան նախարարին զօր. Միշօի մասին, որուն զօրագունդը ջարդուած էր Տիւրզիներուն կողմէ: Զօր. Միշօ եօթը ամիս պատիժի ենթարկուած էր, զօր. Տիւփօրի տեղեկագրին վրայ:

Անգլիացի լրտես դատապարտուած

Անգլիացի լրտես Վիվիըն Սթրանտըրս երկու տարի բանտարկութեան եւ 1000 ֆրանք տուգանքի դատապարտուեցաւ առջի օր: Ինչպէս կը յիշուի, Սթրանտըրս հարիւրապետ եղած էր անգլիական բանակին մէջ, Չինադաշտարին Գերմանիա գնաց իբրեւ թարգման Չատուցումներու Յանձնաժողովին եւ Միջդաշնակցային Չինուոր. Հակակշռի օդանաւային ճիւղին: Գերմանիոյ մէջ լրտեսական կազմակերպութեան պետ Տոքթ. Վէպէր պաշտօն տուաւ իրեն Ֆրանսայի օդանաւի եւ թանքի վերաբերեալ նորութիւնները ուսումնասիրել եւ յայտնել իրեն: Նոյնը նաեւ Պելճիքայի մէջ: Սթրանտըրս անցած տարի օձիքը ձեռք տուաւ:

Ռամոմսի վերադարձաւ

Փարիզի խորհրդային դեսպան Ռաքովսքի Զորեքշաբթի առաւօտ Մոսկուայէն Փարիզ վերադարձաւ:

Ժընեւի ներկայ խօսակցութիւնները բուռն մեկնութեանց առարկայ կը դառնան պոլշեւիկեան պաշտօնական շրջանակներուն մէջ, ուր կ'ըսուի թէ անգլեւխորհրդային ձգտումը վտանգաւոր կէտի մը հասած է:

Ժընեւի ժողովը

Ժընեւի մէջ նրբանցքի խօսակցութիւնները աւելի հետաքրքիր են եւ կարեւոր քան պաշտօնական ժողովներու մէջ անցած դարձածները: Մասնաւոր տեսակցութիւններ տեղի կ'ունենան՝ կատարեալ գաղտնապահութեամբ: Շեթրէզէման տեսակցեցաւ Չեմպըրլէյնի, Զալէսքիի եւ ի վերջոյ Պռիանի հետ: Այս պահուս եւրոպական քաղաքականութիւնը պատմական նոր փուլի մը մէջ կը մտնէ: Բոլոր գաղտնի խօսակցութեանց առարկան է Ռուսիան:

Ամէնէն կարեւոր խնդիրն է գիտնալ թէ ի՞նչ դիրք պիտի բռնէ Գերմանիա՝ Ռուսիոյ դէմ հետապնդուելիք քաղաքականութեան մէջ: Ուրիշ խօսքով Շեթրէզէման պիտի շարունակէ՞ գգուել Մոսկուան, թէ դէպի Լոնտոն ու Փարիզ պիտի դառնայ:

Օրուան ամէնէն կարեւոր խնդիրն է Անգլիոյ եւ Ռումանիոյ տարած յաղթանակը, այն է՝ Իտալիոյ կողմէ Պեսարապիոյ դաշնագրին վաւերացումը:

Ճափոնի երկրաշարժին աւերն ը

Վերջին պաշտօնական տեղեկագիրներու համաձայն, երկրաշարժին զոհերն են աւելի քան 2500 մեռեալ եւ մօտ 4000 վիրաւոր. քանդուած են 7,800 տուներ, մեծ մասամբ փայտաշէն պզտիկ շէնքեր: Կը կարծուի թէ նիւթական կորուստը 10 միլիոն ենէն աւելի չէ: Ամինօ նաւահանգիստը որ մօտ 4,000 բնակիչ ունէր, ամբողջովին քանդուած է: Նորաշէն թատրոն մը փլած է: Հրդեհի հետեւանքով 200 հոգի մեռած են եւ 500 վիրաւորուած: Չինուորները դիակ կը փնտռեն աւերակներուն մէջէն: 50,000 հազար հոգի անապաստան կը մնան:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՊԵԼԿՐԱՏԻ մէջ եւս համայնավարական ցոյցեր տեղի ունեցան երբ Աշխատանքի Միջազգային Դրասենեակի տնօրէն Ալպէր Թօմա բանախօսութիւն մը կ'ընէր:

ԱՆԳԼՆԻ մէջ երէկ ընդհանուր գործադուլ յայտարարեցին խանութպանները: Բազմաթիւ բանւորական կազմակերպութիւններ միացան անոնց: կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ կարգը պահպանելու համար:

ՎԻԼՆԱՅԻ մէջ խորհրդային դիւանագիտական սուրհանդակ մը բռնուեցաւ: Պայուսակներու մէջէն գտնուեցան 30,000 թուղթիկներ, ռուսերէն եւ լեհերէն լեզուով, հրատարակուած Գ. Միջազգայինին կողմէ: Սուրհանդակը ազատ ձգուեցաւ, բայց թուղթիկները գրաւուեցան:

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ *վիճաբանական ժողովը՝ այսօր Ուրբաթ երեկոյ ժամը 8ին, փլաս ս'Իթալի քաֆէ Քլէոպատր-Լիւնի վերնայարկը. Մէթրօ՝ Իթալի:*

"ՅԱՐԴԱՊՂ"Ի ՀԱՆԴԷՍԸ

ՎԱՂԸ՝ ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐ, ԺԱՄԸ 8.30ին

ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖիի ՄԷՋ, 184, Boulevard St-Germain

Յուցադրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերուն

Կը մասնակցին՝ Շահխաթունի, Երդիչ Նաւասարդեան, Մարութեան, դաշնակահար Ալիքսանեան, պարող Իկար:

ՏՈՄՍԵՐՈՒի ԳԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Ալֆօրվիլի «Սարգիս Մինասեան» ենթակոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները եւ անոնք որոնք մինչեւ այժմ որ եւ է խումբի մէջ արձանագրուած չեն վաղը Շաբաթ երեկոյ ժամը 8ին 7ին երիտ. միութեան ակումբին մէջ: կարեւոր օրակարգ:

Հ. Յ. Դ. Սէնթ Էթիէնի ընկ. ընդհ. ժողովը այս կիրակի օր ժամը 2ին րիւ տը լա Լուար կրան քաֆէ տիւ փալէ սրահին մէջ. ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

Հ. Յ. Դ. Լիոնի Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները վաղը Շաբաթ, կէսօրէ վերջ ժամը 2ին, էմիլ Զօլայի վերնայարկը, Rue Boileau 127-129. ներկայ պիտի ըլլայ նաեւ ընկ. Աբօեան: Ներկայանալ անպայման անդամատոմսերով:

Հ. Յ. Դ. Մարսէյլի Պատ. Միութեան ընդհ. ժողովը կիրակի 13 Մարտ կէս օրէ վերջ ժամը 1ին ընթերցասրահին մէջ:

Հ. Յ. Դ. Մարսիլիոյ «Իշխան» խումբի ժողովը՝ շաբաթ 12 Մարտ իրիկուան ժամը 8.30ին Րիւ Րէփիւպլիք, 63 թիւ սըրճարանին մէջ:

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիլի մասնաճիւղի ընդհ. ժողովը՝ երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին, 40 Րիւ տը Պէլվիլ:

ԵՐԳԱՀՈՒՀԻ ՕՐ. Հայկանոյշ Թորոսեանի երգահանդէսը տեղի կ'ունենայ 22 Ապրիլ Ուրբաթ երեկոյ բոլոր կազմակերպութիւններէն կը խնդրուի նկատի ունենալ յիշեալ թուականը:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսացի Տիկ. Էֆգարէս Ճամպեան եւ որդիքը Շրեան եւ Մարի Ճամպեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Յ. Ճամպեան, այժմ 27 տարեկան, որ գաղթականութեան միջոցին «Ասըրնազտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել: Ցեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Rue Villeroy Lyon. France.

— կը փնտռուին Սեբաստացի Գեղամ Աւետուրեան եւ իր քոյրը Փիփէ Աւետուրեան որոնք 7—8 ամիս առաջ Գավալայէն Մարսէյլ եկած են: Իմացնել՝ Nichan Chirinianի Dugradu par Ucel (Ardèche):

— Ալաշկերտի Բերդից գիւղէն Տիգրան Մխիթեան, իր անունը իսրօ, մօրը անունը Տիլպէր, կնոջ անունը Ասուշ, զաւակներուն անունները, Իշխան, Զարգանդ, Արշալոյս, Աղաւնի: Քոյրերը Լուսիկ, Ազնիւ, Եսթեր, Զարուն, Նունիկ, Մարքրուն, հօրեղբայրները Մելքոն, Գասպար. պապի, անունը Մարտիրոս. կը կարծուի Ֆրանսա ըլլալ: կը փնտռուի իր գերդաստանի կողմանէ Թուսաստանի կրամտոդար քաղաքէն:

Իմացնել Հ. Աւետիսեանի՝ S. Donnet St. Hilaire Grasse A.M.

—Շապին Գարահիսարցի հայրենակիցներէն կը խնդրուի որ եթէ Շապին Գարահիսարցի Աստուն Սէրճէնեանի ուր, ողջ կամ մեռած ըլլալու մասին, ո եւ է տեղեկութիւն ունին հաճին իմացնել կամքով. Պատուիրակութեան դիւանին, Անիէս, 80 Av. Pereire, AsnièresS)Seine Գ. Աստուն Սէրճէնեան որ շուրջ երկու տարի է ի վեր Ֆրանսա եկած է հաստատուելէն կը կարծուի թէ Փարիզ կը բնակի:

ՊԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Յանձնարարի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՅԻՆ ԵԻ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-11

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տիկին՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Առտնին բաժինը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՁԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ"

Փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ

Շամեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ Գ.Ր. ՃՕԼՕԼԵԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**

9 RUE PAPILLON, PARIS IX

Square Montholonի դիմաց Rue Lafayetteի կից

Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ժամը 9էն 6: Գեղարուեստական ձաշակով պատրաստուած անձերի աշխատութիւններ: Ինքնուրոյն լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ:

ԴԻՒՐԱՄԱՏՈՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Չերիկեանի ՖՐԱՆՔՕ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ

15 րիւ տէ Ֆօմինիքէն

ՆԱՐԵԿ Հայ Մատենագրութեան գլուխ-գործոցը աշխարհաբար լեզուով, գիրք՝ ընթերցումի եւ աղօթքի: Գին 40 Ֆր.: կը ծախուի «Յառաջ»ի խմբագրատունը, Պալենց գրատունը եւ Սեւունիի մօտ (5, Ave. Quihou, St-Mandé):

ՋԱՆԱՋԱՆ ԳԻՐՔԵՐ

Ձեռքը Թահրա պէյ 5, Բժիշկին գիրքէն փրցուած էջեր 12.50, Յունահայ տարեգիրք 25, Ռասքոլնիկ 15, Նամուս 10, Շար ոգի 10, Պատուի համար 10, Լուսնթիւնը 8, Երազահան 6, Կոյսի մը Օրագիրը 5, Անձկութեան ժամեր 2, Մապվար 12,50, Բարիզէթ 7.50, Տօքթ. Մօրի վրէժը 5, Մացառներու մէջ (2 հատ.) 25, Ոսկի Աքաղաղ 10, Թուղթի փառք 5, Վերջալոյսին տակ 5, Ճամբուն վրայ 10, Պէպէքս 10, Հայրենի Քնար 12.50, Հայորդիները 7, Սասմայ Մհեր 5, Հացին երգը 25, Հայաստանի Նկարիչներուն Ալպոմները 40, Նարեկ աշխարհաբար 40, «ՆՈՐ ՕՐ»ի գրական տետրակներ, թիւը 2, ինչպէս նաեւ վիպական, թատերական բանաստեղծական եւ ազգային գիրքեր, բառարաններ, խօսակցութիւններ հատ-քածոներ եւայլն:

ԳՐԱՏՈՒԻՆԱԿԸ ՉՐԻ

Ֆրանսայի եւ գաղութներուն համար, փոթի ծախք չկայ:

Ստանալու համար՝ դիմել նամակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՔԷ ՋԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մանանոթագիտական Լուսաբեր ընթերցարաններու եւ ամէն մէկը մը ունի մատենադարանի գիրքերու:

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

Կահագործ *աժան գնով կը շինուի եւ կը նորոգուին տնական բոլոր կահերը, գրասենեակի սեղանները, գրասենեակի աթոռներ եւայլն, ծախու են բոլորովին նոր կահավուններ: Դիմել՝ 20 Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.*

Կ'ուզուի ժամագործի աշկերտ մը 16-18 տարեկան: Դիմել՝ Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ՇԱՀԱԻՈՐ ԵԻ ԴԻՒՐԻՆ ԴՈՒՐՍ 7000 ՖՐԱՆՔՈՎ

Կը ծախուի պոլսական [illegible] գայմաքի, թուղում պանիրի ճերմակ պանիրի գործիք շինելու արհեստն ալ սորվելուն եւ եւրոպական ապրանքը տեղերու դիւրութիւններ տեսնելու պայմանաւ: Օրական 30—40 ֆրանք զուտ շահ մել «Յառաջ»ի վարչութեան:

ՍՊԱՍՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Դիմել «Մասիս» Տպագրական վարչութեան, 208 bis, Rue Lafayette: Մէթրօ՝ Louis Blanc-Jaurès.

ԱԿԱՆԱՏԱՆ

10 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Սթերլին,	L. St.	[illegible]
Տոլար,	Dollar	[illegible]
Մարք (ոսկի) 100 Mark		[illegible]
Թրքական Գոյթ. L. Trq.		[illegible]
Թրք. ոսկի	» or	[illegible]
Մէճիտիէ	Médjidié	[illegible]
Լէվա 100 հատ	Léva	[illegible]
Տրախմի	» Drachme	[illegible]
Լիր	» Lire	[illegible]
Պելճ. Ֆրանք	» Frc. Belge	[illegible]
Ֆրանք.	» Frc. Suisse	[illegible]
Լէյ 100 հատ	Ley	[illegible]
Ցերվոնեց	(10 Roubles or)	[illegible]

ԱՐԺԵՒՈՒԻՊ

Եգ. Քր. Ֆոնտիէ	I Cr. Fonc. Eg.	30[illegible]
»	II »	[illegible]
»	III »	[illegible]
Թուրքի երկաղ.	Lots turcs	[illegible]

Comptoir Parisien de change et de C[illegible]

80, Rue La[illegible]

IMPRIMERIE - MASSIS - EDI[illegible]

208bis, Rue Lafayette Paris

Le Gérant : H. TEURN[illegible]

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՇԱԲԱԹ
12
ՄԱՐՏ
1927

12 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 283

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ. ԽՕՍՔ

ՈՐՊԻ՞ ՀԱՄԱՄԱՐ ԱՅՍ ԽՐԱՏՆԵՐԸ

Երէկ պարզեցինք անճարակութեան օրինակ մը, որ միակը չէ, զժբախտաբար:

Հայկական Տան մը չգոյութիւնը, Եւրոպայի մէջ, ոչ միայն կը զլաւէ մեր մտաւոր արժէքներու զարգացումը, այլ եւ եղածն ալ կորուստի կը դատապարտէ:

Երկար չեն կրնար տոկալ այն ցիրուցան, անկապ եւ խաչաձեւ աշխատանքները, որ կը թափուին քիչ մը ամէն տեղ, անհատներու կամ խմբակներու կողմէ: Բարի է բոլորին ալ միտքը, եւ գնահատման արժանի՝ ինչ որ կը կատարուի: Բայց, որքան կրնան տեւել մանր-մունր ճիգերը այս համայնակուլ յորձանքին մէջ, ուր համրանքները կը հալին իրարու եւեւէն:

Այլասերման վտանգը, որ տարիներէ ի վեր կը զործէ Ամերիկայի մէջ, վերջերս դող հանած է նաեւ պատուելիները: Անոնց շաբաթաթերթը, «Կոչնակ», քանի մը շաբաթ առաջ խորհուրդ կուտար մէկ ճակատ կազմել, «հասարակաց թշնամի»ին դէմ.

—«Ջուլումի հետեւանքով արտասահմանի հայութեան աստիճանական ջնջումն ալ ադէտ մըն է... պէտք է խմբուիլ, զինուիլ եւ ասպարէզ գալ: Պէտք է պահպանել Ամերիկայի հայ գաղութը, անտարբեր չափահասները սթափեցնելով, անգիտակից նորահասները դաստիարակելով... Ակնկառոյց կը սպասենք ողջունելու այն Ազգային միութիւնը որ նպատակ ունենայ մղելու այս գերագոյն պայքարը Ամերիկայի մէջ»:

Հասկավարներու պաշտօնաթերթն ալ շարք մը յօդուածներ հրատարակեց եւ խրատներ տուաւ, շեշտելով թէ ամերիկահայ նոր սերունդը եւ մասնաւորապէս ուսանողները մեծ մասով մոռցած են մայրենի լեզուն, կորուած՝ հայկական կեանքէն, եւ կը խօսին ու կը խորհին իրրեւ օտարականներ:

Տեղն է հարցնել, —որո՞ւ համար են այս խրատները:

Թէ հասկավարները եւ թէ պատուելիները, եւ անոնց հետ զինզոյն խմբակցութիւններ, փարիզի գոհարավաճառներու շքախումբէն մինչեւ բանւորա-գիւղացիական Հօկերը եւ մինչեւ այլասերած «լեվանդէն»ները,—մէկ ճակատ կազմած են արդէն, որ եւ է Ազգային Միութիւն վիժեցնելու համար: Եւ այս՝ ամէն տեղ: Երբ խնդիրը խօսքէն գործի անցնելու կուգայ, «հասարակաց թշնամի»ն ոչ թէ այլասերման վտանգն է, այլ... Դաշնակցութիւնը: Ու քար քարի վրայ կը շարեն բոլորը մէկ, որպէսզի չըլա՛յ թէ արտասահմանի մէջ ազգային կեդրոնական իշխանութիւն մը հաստատուի: Այդպիսի ձեռնարկ՝ ոճիր է Հայաստանի դէմ, անոնց տեսակէտով:

Այս իսկ պատճառով, ձախողեցաւ ինչ որ կը փորձուի տարի-հինգ տարիէ ի վեր: 1923ին, Ռումանիոյ Թեմական Խորհուրդը նախաձեռնարկ եղաւ գաղթային համագումար մը հրաւիրելու: Ոչ Թեմական Խորհուրդը դաշնակցական էր, ոչ ալ՝ հրաւիրուողը, ոչ ալ՝ համագումարին ծրագիրը: Ամիսներով սպասեցին նամակներու պատասխանին, պատրաստ՝ ո՛ր եւ է ձեւ գոյանալու, միայն թէ յաջողէր ժողովը: Եւ կը սպասեն մինչեւ այսօր...: Դաւադիր ձեռքեր, սարուկ հոգիներ ամէն կողմէ թունաւորեցին մթնոլորտը, եւ իրերը ծնան իրենց վիճակին մէջ:

Ուրիշ խօսքով, գաղութները դարձան ասպարէզ՝ անիշխանութեան եւ ամլութեան: Ուր որ քիչ շատ կազմակերպութիւն կար, շարունակեց իր իւղովը տապկուիլ. ուրիշ տեղեր՝ պատակաւոռներ եւ կռիւներ. երրորդ միջավայրի մը մէջ՝ կատարեալ անտարբերութիւն: Անվերջ քաշքշուք՝ ամէն կողմ:

Այս պայմաններուն մէջ, ի՞նչպէս կարելի է յուսալ հայկական մշակոյթի գարգացում, նոր սերունդի փրկութիւն, դպրոց, ակումբ, փոխադարձ օգնութիւն եւ արդիւնաւոր աշակցութիւն հայրենիքին: Որովհետեւ, պէտք է խոստովանիլ որ այս անկերպարան եւ անշնորհ վիճակին հետեւանքը ծնասակար է ոչ միայն գաղութներուն, այլեւ հայրենիքին համար: Եւ երեւանի վարիչները ի զուր օգնութեան եւ պարտաճանաչութեան կոչեր կ'ուղղեն, կը պահանջեն «օրինաւոր տիրոջը» յանձնել արտասահմանի կտակները: Իրենք շատ հետու են եւ զուրկ՝ շատ մը իրաւասութիւններէ. իսկ ազգային ներկայացուցիչները իրենց դիմացը ո՛ր եւ է օրինաւոր, կեդրոնական իշխանութիւն չգտնելով, իրենց վստահուած կտակները կը մատակարարեն համաձայն իրենց բարի կամքին:

Այս՝ մինչեւ կեալ: Խնդիրը այն է որ, այլասերումը, «աստիճանական ջնջումը» ամէն տեղ կը հետեւի իր բնական ընթացքին եւ մեր ազգասէրները փոխանակ սթափելու եւ գործելու, ապրուած կը դրեն եւ խրատներ կուտան չորս հովերուն: «Պէտք է խմբուիլ, զինուիլ եւ ասպարէզ գալ», կը թելադրեն, բայց ոչ ոքին քայլ մը չեն առներ, այլ եւ, երբ ուրիշները առաջ անցնին, քար կը նետեն, կամ առնուազն կը հայհոյեն:

«Կոչնակ»ը, որ «ակնկառոյց» կը սպասէ, իր կռնակն ունի այդ կրթական Հիմնարկութիւնը, 200,000 տոլար դրամագլուխով: Ի՞նչ ժողովրդական գործ կատարած է այդ հաստատութիւնը մինչեւ այսօր: Քանի մը թարգմանութիւններու եւ քարոզներու հրատարակութի՞ւնն է իր կոչումը, գերագոյն պայքարի այս օրերուն:

Չի բաւեր բարի խրատներ տալ: Ներելի չէ, նաեւ, վէրքը ծածկել եւ ծալապատիկ նստիլ: Եթէ անկեղծօրէն կ'ուզեն ներումնափակել այլասերման չարիքները, պարտաւոր են ասդիսկայ իջնել մաքուր սրտով եւ պայծառ աչքերով:

Ու պէտք է հասկնան, վերջապէս, թէ ինչ որ պիտի կատարուի գաղութներուն մէջ, ի վերջոյ ընդհանուր հայրենիքի համար է:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՄՈ՞ՒԿ ԹԷ ԿՈՕՊԵՐԱՏԻՎ

Բազուի «Կոմունիստ» թերթին մէջ կը կարդանք.—

«Պատմութիւնը կ'ըսէ թէ մուկերը առաջին անգամ Եւրոպայի վրայ տեսնուած են 13րդ դարուն: Իսկ 18րդ դարուն, Ասիոյ մէջ երեւցած են սեւ մուկեր, հաստ ու կարճ ոտքերով, թեփաւոր պոչով:

Սակայն կան նոր տեսակ մուկեր, որոնց ծագման մասին լուր չունինք:

Այս մուկերը նոր են անոր համար, որ նախ կոօպերատիւ խանութներու մէջ կ'ապրին, երկրորդ՝ երկոտանի են, երրորդ՝ սարսափելի շատակեր են եւ աներես:

Անոնց ակռաներէն բան չ'ազատիր, կ'ուտեն իւղ, թուղթ, բրինձ, կաւ եւ դրամ: Բանւորա-գիւղացիական կառավարութիւնը *ամա՛ն* կը պոռայ: Որովհետեւ հացուստեղէնի հակերը, պանիրին գործարանը, պետական առեւտրական գրասենեակները, համագործակցական խանութները լեցո՛ւն են այս մուկերով: Ու շարունակ կը քաշեն իրենց ծակերը, կը լափեն ու կը փճացնեն:

Ուրկէ՞ եկան այս մուկերը: Թամանօֆի ժամանակներէն եկած են ոմանք, որովհետեւ անոնց ակռաներուն մէջ գտնուած են այդ շրջաններէն մնացած իարստութեանց պատառիկներ:

Ինչ որ ալ ըլլայ, այս երկոտանի մուկերը աւելի վնասակար են քան դաշտային մուկերը կամ անապատի մորեխը:

Այս երկոտանի մուկերը, որ Գործակցականներուն մէջ կը վխտան եւ կը փճացնեն խորհրդային իարստութիւնները, չեն կշտանար պետական գանձարանները պարպելով, անոնք կը լափեն բանւորներուն մնուդներն ալ:»

ՄԱՐՍԻԼԻՈՑ մէջ Մարտ 3ին ծագած միջադէպին հետեւանքով, Հայոց եկեղեցիին առջեւ ոստիկաններ դրուած են, որպէսզի իսկեն կարգապահութեան: «Հայ Սիրտ» կ'իմանայ թէ վարչային խորհուրդը, որ պատասխանատուն է այս խայտառակութեանց, իրաժարական պիտի տայ: Նոյն աղբիւրէն կ'իմանանք թէ բողոքի ցոյց մը տեղի ունեցած է վարչական խորհուրդի ատենապետ Պ. Յ. Սահաթճեանի գրասենեակին առջեւ:

ՀԱՑ ԳԱՂԹԱԿԱՆ ՄԸ ԱՆՋՆԱՍՊԱՆ.— Միտիլիի մէջ, Արսլանպէկի գաղթականներէն վաղարշակ ցեր Մարտիրոսեան, 50 տարեկան, Մարտ ամսուն սկիզբը, աղբիւրէն ջուր բերելու պատրուակով, տունէն դուրս կ'ելլէ եւ ինքզինքը ծով կը նետէ:

Անձնասպանը աղքատ մարդ մըն էր: Ամուսնացած էր երկու տարի առաջ: կինը եւ զաւակը Իլանդ էին, միւս կողմէ նիւթական հոգերը տագնապի մատնած էին զայն: Ցարի մը առաջ, նորաշէն տունի մը տանիքը կը փլչի գլխուն վրայ: Գանկի ոսկորը վիրաւորուած ըլլալով, մտքի խանգարման դատապարտուած էր: Վերջերս կ'ապրէր տեղւոյն հայ եկեղեցիին մէջ դպրութիւն ընելով:

ՀԱՑ ԿԱԹՈՂԻԿ ԲԷՅԼիքեան եպիսկ., որ մինչեւ այժմ կը գտնուէր Ատանայի մէջ, Թրքական կառավարութենէն իրաման ստացած է կարճ պայմանաժամի մը ընթացքին հետեւանալու Թուրքիային:

ՕՐԸ ՕՐԻՆ

Գերմանիա, Ռուսիա եւ Ֆրանսա

Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին նախագահ Շթրեզեմանի ժրնեւի մէջ միջազգային մամուլի 250 ներկայացուցիչներուն առջեւ յայտարարութիւնները ըրաւ Ռուսիոյ եւ Ֆրանսայի հանդէպ գերման քաղաքականութեան մասին:

«Շատ կը խօսուի որ, ըսաւ, անգլիական դիւանագիտութիւնը կ'ուզէ միակ ճակատ մը կազմել խորհրդային միութեան դէմ: Զէմպըրլէյնը կը ճանչնամ Լոքառնոյէն ի վեր եւ կը հաստատեմ թէ անկէ ի վեր այսպիսի փորձ մը չէ կատարուած: Խորհրդային պաշտօնաթերթը «Իզվէսթիա» գրեց թէ ծրագրուած է «Տանցիկն ու վերին Սիլեզիոյ մէկ մասը Գերմանիոյ տալ. յետոյ ստեղծել Բոզաքներու հանրապետութիւն մը՝ Գերմանիոյ եւ Լեհաստանի թեւարկութեան տակ: Ասոնք պաշտօնաթերթի չվայելող յերիւրանքներ են: Գերմանիոյ դիրքը շատ որոշ է: Անկեղծօրէն պիտի ցաւինք, եթէ կնճռոտութիւններ ծագին Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ: Աշխարհի տնտեսութիւնը չի կրնար բնականոն կերպով կարգի մտնել, եթէ 150 միլիոնոց ժողովուրդ մը Եւրոպայի արեւելքը կծկուի՝ այդ տնտեսութենէն դուրս: Կը փափաքինք որ աշխարհի միւս մասին հետ լաւ յարաբերութիւններ մշակեն անոնք: Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ կնքուած Ռափալլոյի դաշնագրին մէջ երկու երկիրներու զինուորական յարաբերութեանց մասին գաղտնի ոչ մէկ յօդուած կայ:

«Գալով Չեմպըրլէյնի երկիրներու պարպուելու խնդրին, «Մէսաճէրօ» գրած էր թէ ես ընկրկած եմ Պոհանի բուռն ընդդիմութեան առջեւ: Ինչ որ կրնամ ըսել այս մասին, սա է թէ այս խնդրին մասին եոկարօրէն խօսած ենք մեր տեսակցութեանց ընթացքին: Գերմանիա դեռ չէ որոշած թէ պաշտօնապէս ե՞րբ պիտի պահանջէ այդ հողերու պարպումը: Այսօր աւելի լաւ կը հասկնան թէ կարելի չէ մէկ կողմէն խաղաղութեան մեծ գործի մը մասին խօսիլ ու միաժամանակ 70,000 զինուորներու գրաւման տակ պահել մեր երկրին կարեւոր մէկ մասը. ասիկա համապատասխան չէ Լոքառնոյի ոգիին, ոչ ալ Վերսայլի դաշնագրին 431րդ յօդուածին:

∴ Զուիցերիական կառավարութիւնը կրկին պիտի հրաւիրէ խորհրդային միութիւնը մասնակցիլ զինաթափութեան համաժողովին, որ պիտի գումարուի զուիցերիական հողի վրայ:

Ընդհ. փաշայի յայտարարութիւնները

«Այմգ»ի Թղթակիցը Էնկիւրիէն կը հեռագրէ Մարտ 9 Թուականով.—

Այսօր տեսակցեցայ վարչապետ Ընդհ. փաշայի հետ, որ ինծի յայտարարեց թէ անգլեւթուրք յարաբերութիւնները լաւ են եւ երթալով կը բարւոքին: Թուրքեւխորհրդային առեւտրական դաշնագրին վրայ խօսելով, հարցուցի թէ սովետական առեւտրական գործակալներուն դիւանագիտական անձեռնմխելիութիւն շնորհուիլը չպիտի՞ դիւրացնէ պոլշեւիկեան քարոզութիւնները, փաշան պատասխանեց. «Այդ մասին վախ չունինք»: Ցետոյ աւելցուց թէ Թուրքեւխորհրդային յարաբերութիւնները բարեկամական եւ բնականոն եղած են վերջին քանի մը տարուան ընթացքին:

Ընդհ փաշա ըսաւ թէ տնտեսական կայունութիւնը լաւագոյն դեղթափն է քաղաքական անորոշութեան եւ թէ Թուրքիոյ ներքին քաղաքական կացութիւնը գոհացուցիչ է, ինչպէս ցոյց տուաւ երկու Անկախութեան Ատեաններու ընտրութեամբ: Շեշտեց թէ Թուրքիոյ արդիւնաբերական ուժերը երթալով կ'աճին եւ թէ վերջին թիւերը ցոյց կուտան թէ պատերազմին յաջորդող տարիներուն արտադրութիւնները աւելցած են (ու ասիկա հակառակ այն իրողութեան թէ այնատեն Թուրքիոյ մէջ կային աւելի քան մէկ միլիոն Յոյներ ու Հայեր, որոնք կը նկատուէին իրրեւ երկրին գլխաւոր արտադրող տարրը): Յիշեց թէ ներկայիս Անատոլուի մէջ երկաթուղիի գանազան գիծեր շինուելու վրայ են, եւ շեշտեց թէ երկաթուղային լաւ սիստեմ մը՝ երկրին տնտեսական կեանքին խարիսխն է: Ի վերջոյ, վարչապետը հաւաստեց ինծի թէ Թուրքիոյ նպատակն է գործել ու զարգանալ խաղաղութեան մէջ:

Սուրիոյ պատուիրակները ժընեւի մէջ

Ինչպէս ամէն նստաշրջանի, այս անգամ եւս Սուրիա-Պաղեստինեան կոմիտէի ներկայացուցիչները էմիր Շէքիպ Արսլան եւ ընկերները ժընեւ գացած են՝ իրենց պահանջները ներկայացնելու համար Ազգերու Դաշնակցութեան: Այս ազգայնական-յեղափոխականները, որոնք մինչեւ հիմա կը պնդէին Ֆրանսայի Սուրիային դուրս հանուելուն եւ անկախ ու միացեալ արաբական պետութիւն մը կազմուելուն վրայ, այս անգամ աւելի համեստ ծրագիրով կը ներկայանան, ինչպէս կը տեսնուի իրենց ներկայացուցած հետեւեալ խնդրագրէն.

«Ստորագրեալներս, Սուրիա-Պաղեստինեան կոմիտէի պատուիրակներս, տեղեկանալով որ Ֆրանսական կառավարութիւնը Ազգերու Դաշնակցութեան ներկայացնելու վրայ է սուրիական խնդրին լուծման եղանակ մը, կ'օգտուինք այս առիթէն՝ անգամ մը եւս յայտարարելու համար թէ անկեղծօրէն

(Լուրերու չարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԵՐԵՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐ ԴԷՊԻ ՆԱՆՔԻՆ

Ազգայնականները իրենց բոլոր ուժը կը թափեն նանքինի վրայ, կտրելու համար զօր. Շանկ-Շունկ-Շանկի նահանջի գիծը: Կ'ըսուի թէ Շէքիանկ եւ Ֆիանկցի նահանգներէն դէպի հիւսիս-արեւելք կը յառաջանան երեք բանակներ, բոլորն ալ նանքինի ուղղութեամբ: կեդրոնական ուժերուն վերին հրամանատարն է զօր. Շիանկ-ֆայշէք:

Հակառակորդ հրամանատարը՝ Շանկ-Շունկ-Շանկ մօտ 100,000 լաւ սպառազինուած զինուորներ ունի, մէջն ըլլալով ռուս վարձկան զօրքերը: Ասոնք ցրուած են Շանկայ-փեքին երկաթուղագիծին վրայ 2000 մղոն տարածութեան վրայ: Իր գլխաւոր ուժը կեդրոնացած է նանքինի մէջ: նանքին 400,000 բնակիչ ունի եւ 30 մղոն շրջաճիծ ունեցող պարիսպով մը շրջապատուած է ամբողջովին:

ՊԱՐԻ ՀՐԱՒԷՐ.— Պելլինի մեծագոյն պարասրահներէն մէկուն տէրը, բոլոր սեղաններուն վրայ դրած է հեռաձայնի փոքրիկ գործիքներ, որոնք թուագրուած են: Եթէ երիտասարդ մը ուզէ պարի կանչել օրիորդ մը, որ կը գտնուի սրահին մէկ անկիւնը՝ սեղանի մը առջեւ, կը նայի սեղանին թիւը եւ կը բանայ իր սեղանին հեռաձայնը: Անմիջապէս օրիորդին գրաւած սեղանին հեռաձայնին կարմիր լամբարը կը վառի: Օրիորդը կը հասկնայ որ մէկը պիտի խօսի: կը բանայ հեռաձայնը եւ կը խօսին սեղանէ սեղան:

Ու կը պարեն:

ՌՈՒՄԲ ՄԸ ԿԸ ՊԱՅԹԻ ՇԻԼԷԻ ՄԷՋ.— Շիլէ գաւառակին գլխերէն Գարա Քիրազի մէջ Ազիզ օղլու Էօմէր, եղբօր հետ, տանը մէկ սենեակը քաշուած, պարկերու մէջ կը լեցնէին եգիպտացորենը: Ջուանը կը պակսի: փնտռտուքի ատեն պահարանի մը մէջ կը տեսնէ երկաթեայ գունդ մը: կը տանի ցոյց կուտայ կնոջը, որ տղուն հետ նստած էր քովի սենեակը: երբ ձեռքին մէջ բռնած, կը դարձնէր գունդը, յանկարծ կը տեսնէ որ բռնկելու նշանները ցոյց կուտայ: Անմիջապէս գետին կը նետէ: Ռումբը կը պայթի: Էօմէր աղա կը վիրաւորուի ազդրէն եւ յետոյքէն, կինը՝ բազուկէն ու քունքէն: Իսկ կը մեռնի պաւակը:

ՓԱՐԻԶԻ ԵՐԿԻՆՔԸ շաբունակ ծածկուած է ծուխի սեւ շղարշով մը: Օդը խառնուած է ծխափոշիով: փարիզի քաղաքապետութիւնը, նկատելով որ մայրաքաղաքին օդը հետզհետէ անշնչելի կը դառնայ, հրաւիրած էր հնարիչները, որ գործիքով մը մաքրեն օդը:

Ռումէն ճարտարագէտ մը, Պ. Արափու, հնարած է գործիք մը, զոր տրամադրած է քաղաքապետութեան:

Այս գործիքով կարելի պիտի ըլլայ *աւելի* փարիզի երկինքը: Գործիքը պիտի դրուի կաթսաներուն վերեւ եւ շոգիի միջոցով պիտի բանտարկէ ծխանիներէն անցնող մուխին փոշին:

ՄԱԼԹԱՑԻ ԱՒՏՈՐԵԱԼՆԵՐՈՒՆ ԲԱՑԱՒ ԴԱՍԸ.— Ջինադադարի ընթացքին մալթա աքսորուած Թուրքերը դատ բացած են Անգլիոյ դէմ, եւ կը պահանջեն վնասուց հատուցում: Դատը պիտի տեսնուի Պոլսոյ Թուրքեւանգլիական դատարանին մէջ: իրաւաբանական համալսարանի դասախօսներէն Մասաիէտտին Ատիլ պէյ պիտի պաշտպանէ իրաւունքները Ալի պէյի (նախագահ Անկախութեան Ատեանի), ինչպէս նաեւ Ադա օղլու Ահմէտ, ձելալ Նուրի եւ Ֆայիք պէյերու:

,,ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ ԵՍ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑԻ ՀԱՅՐԵՆԻՔՍ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ ԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ,,

Յիսնամեայ տարեդարձի առթիւ 1920 թուականի յունուարեան ապստամբութեան մասին

Ռուսահայ գրականութեան ամենաանկեղծ ու ամենաանմիջական գործիչներէն մէկն է Ալեքսանդր Ծատուրեան։ Ան ծնած է 1880 թուականին Ռուսիոյ Վրաստան նահանգի Ախալքալաքի գաւառը։ Ուսումը ստացած է Թիֆլիսի ռուսական գիմնազիոնին մէջ։ Ծատուրեան ռուսերէն գրած է իր առաջին պատմուածքները, որոնք տպագրուած են ռուսական պարբերականներու մէջ։ Ան հայերէն գրելու սկսած է 1905 թուականին։ Անոր հայերէն գրած առաջին պատմուածքները տպագրուած են «Մուրճ» հանդէսին մէջ։ Ծատուրեան հայ գրականութեան մէջ մտած է իբրեւ ինքնուրոյն արուեստագէտ։ Անոր գրչին տակ հայ կեանքը կ՚առնէ նոր գոյներ, նոր ներդաշնակութիւններ։ Ան հայ գրականութեան մէջ ստեղծած է իր ուրոյն ոճը։ Ծատուրեան հայ գրականութեան մէջ մտած է իբրեւ ինքնուրոյն արուեստագէտ։ Անոր գրչին տակ հայ կեանքը կ՚առնէ նոր գոյներ, նոր ներդաշնակութիւններ։ Ան հայ գրականութեան մէջ ստեղծած է իր ուրոյն ոճը։

ՊՈՍՏԱՊՈՂ

ՎԵՐՆԱԳԻՐ

II.

— Ես, ըստ որում, պիտի ոգ մ՝ ամ ոչ ոք ըստ ինձ, ոչ ոք ինձ հետ, ոչ ոք ինձ մոտ, ոչ ոք ինձ համար, ոչ ոք ինձ վրա, ոչ ոք ինձ մեջ, ոչ ոք ինձ մասին, ոչ ոք ինձ պես, ոչ ոք ինձ նման

եւ եռանդով կը փափաքինք ֆրանքեւսուրիական յարաբերութիւնները վերահաստատել համաձայնութեան եւ բարեկամութեան հաստատ հիման վրայ։ Պարտականութիւն կը համարենք հանդիսաւորապէս յայտարարել թէ երբեք հետապնդած չըլլալով անձնական նպատակ մը եւ աշխատած ըլլալով միայն Սուրիոյ ազատութիւնն ու անկախութիւնը ապահովելու համար, ոչ մէկ դժուարութիւն կը զգանք՝ ընդունելու համար սուրիական ազգին ցանկութեանց համապատասխանող լուծում մը։ Կը յուսանք թէ ֆրանսական ժողովուրդին եւ կառավարութեան ազատականութիւնը անյապաղ պիտի յաղթէ համերաշխութեան ճամբուն վրայ կուտակուած բոլոր խոչընդոտներուն »։

Այս յայտարարութիւնը, որուն տակ ստորագրած են նաեւ Սուրիոյ անկախութիւնը պահանջող կուսակցութեանց ներկայացուցիչները, յանձնուեցաւ թէ՛ Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդի նախագահ Շեթըզէմանի եւ թէ Ֆրանսայի Ա. պատուիրակ Պոլիանի։

Ժընեւի Սուրիացի Ուսանողներու Միութիւնը եւս, որ ազգայնականութեան օջախ մըն է, համամիտ գտնուած է այս յայտարարութեան։

Պոլշեւիկեան դաւեր Պուլկարիոյ մէջ

Սոֆիայէն կը հեռագրեն թէ ոստիկանապետ Իվան Իքոնոմոֆի ռումբով սպանութեան հետեւանքով բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան Սոֆիայի եւ գաւառներուն մէջ։ Մայրաքաղաքի մէկ արուարձանին մէջ հինգ հոգի բռնուեցան եւ իրենց բնակարանէն գտնուեցան մեծ քանակութեամբ յեղափոխական պրոպագանդի գրքոյկներ։ Սիրփանի մէջ կոիւ մը պատահեցաւ ոստիկան - զօրքերու եւ գիւղացիներու միջեւ, զոր կ'ուզէին ձերբակալել։ Բուռն հրացանաձգութիւններ տեղի ունեցան։ Երկուստեք մեծ թիւով վիրաւորներ կան։ Սոֆիայի բանուորական արուարձաններուն մէջ եւս ոստիկանները երկար խուզարկութիւններ կատարեցին։ Իշխանութիւնները կը յայտարարեն թէ գտած են հետքը համայնավարական կարեւոր շարժումի մը, որ միաժամանակ եւ ուժգին կերպով պիտի պայթէր պալքանեան գանագան երկիրներու մէջ։

Պոլշեւիսմի ճահանիչը

Վարշաւայէն կը հեռագրեն թէ Ուկրաինայի խորհրդային կառավարութիւնը հրամայած է բոլոր անշարժ կալուածները վերջնապէս իրենց նախկին տէրերուն դարձնել։ Բացառութիւն պիտի կազմեն միայն այն շէնքերը, որոնք իբր պետական հաստատութիւն անհրաժեշտ են։ Կառավարութիւնը իր հրահանգին մէջ կը թելադրէ թէ այս կարգի բացառիկ պարագաներու քանակը պէտք չէ չափազանցել։

Ամերիկեան հետաքրքրութիւն մը Լոյտ Ճորճի դէմ

Անգլիոյ խորհրդարանին մէջ երեսփոխան մը յայտարարեց թէ ազատական կուսակցութիւնը Լոյտ Ճորճի վարչապետութեան օրով իր գանձը լեցուցած է տիղմոններու եւ պատուանշաններու վաճառումէն գոյացած դրամներով։ Այս առեւտուրը Լոյտ Ճորճէն առաջ ալ կար, սակայն վաճառումը փոքրաքանակ կ'ըլլար։ Միացեալ կառավարութիւնը ատիկա մեծաքանակի վերածեց։

Ճախոնի երկրաշարժին աւերները

Թոքիոյէն կը հեռագրեն թէ սոճի ու ցուրտը աւերներ կը գործեն երկրաշարժէն աղէտեալ շրջաններուն մէջ։ Մահերու թիւը հետզհետէ կ'աւելնայ։ 70,000 հոգի առանց ապաստանի կը մնան, շատերը անօթի են, ամէն կողմէ փութացուած օգնութիւնները անկարող կ'ըլլան աղէտին առաջքն առնելու։ Երկաթուղագիծերը աւերուած եւ ձիւնը բոլոր ճամբաները ծածկած ըլլալով, հեռաւոր շրջաններուն հետ կարելի չըլլար հաղորդակցիլ։ Ջինուորներ, կրօնաւորներ եւ քաղաքային կամաւորներ կը կազմակերպեն ուտեստեղէնի բաշխումը։ Շարունակ տեղացող ձիւնը շատ կը դժուարացնէ անոնց գործը, ու եթէ օդը այսպէս շարունակուի, շատեր ցուրտէն պիտի մեռնին։

Պաշտօնական վիճակագրութեան մը համաձայն, երկրաշարժէն մեռած են 2,275 եւ վիրաւորուած են 4,770 հոգի։ Ընդհանուր կորուստ կը հաշուուի մօտ 10 միլիոն եէն (5 միլիոն տոլար)։ Ճափոնի կայսրն ու կայսրուհին 51,000 եէն տուին Հանգանակիչ Յանձնախումբին։ Ճափոնական և օտար աղբիւրներէ նպաստներ կը տեղան։ Աշխարհի բոլոր կողմերէն ցաւակցական հեռագիրներ կը հասնին Թոքիո։

Փոթորիկ եւ ողողում Ֆրանսայի մէջ

Մինչ մէկ կողմէ փոթորիկը կը ծեծէ Ֆրանսայի ատլանտեան եւ միջերկրականեան եզերքները, միւս կողմէ երկիրը զանազան ուղղութեամբ ճեղքող գետերը կը բարձրանան մտահոգիչ արագութեամբ։ Վերջին օրերու անձրեւները հեղեղներ ու ողողումներ առաջ բերին գիւղական շրջաններու մէջ։

Սէն գետը վաղը պիտի կրնայ բարձրանալ մինչեւ 4.60 մեղր Օսթերլիցի կամուրջը, եւ 5.30 մեղր Պրզօնի առջեւ։ Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը կը յայտնէ թէ Մառնի եւ Սէնի վերին մասերուն մէջ թափող փոքրիկ գետերու յորդումը իր առաւելագոյն աստիճանին հասած է արդէն, այնպէս որ եթէ նոր անձրեւներ չտեղան, Փարիզի շրջանին մէջ ողողումներէ չի վախցուիր։

Լուառ գետը զգալի կերպով բարձրացած է. Տիկուանի մէջ գետը 4.50 մեղրէն աւելի է եւ երկու եզերքները ողողուած են։ Բարձրացումը կը շարունակուի։ Շատ մը գիւղերու միջեւ հաղորդակցութիւնները կտրուած են։ Մարգերուն մէջ արածուող արջառը հապճեպով գիւղերը դարձուած են։ Այդ շրջաններուն մէջ կորուստները մեծ են։

Թուլուզէն կը հեռագրեն թէ Լօ գետի ջուրերը զգալաբար սկսած են իջնել, սակայն Սէն-ժօրժ եւ Քապէսիւ տակաւին ողողուած են։ Քահորի մէջ կին մը կամուրջէ մը անցած ատեն խեղդուեցաւ։ 1832էն եւ 1866էն ի վեր այսքան ողողում չէր տեսնուած Լօի աւազանին մէջ։

Կարոնի բարձրացումը եւս կը շարունակուի. Պօրտոյի հիւսիսային արուարձանները ողողուած են. ամբողջ հարաւ-արեւմտեան շրջանին մէջ շատ պէշ օդ մը կ'ընէ։ Կը յորդին նաեւ Սօն, Ռօն, Ալէյրօն եւ Թառն։ Տօրտոնեի մէջ Օվզէր գետը 5 մէթր բարձրացած է կարգ մը տեղեր. փէրիկէօի ցած մասերուն մէջ տասնեակ մը տուներ ողողուած են։ Ջուրերը արագօրէն կը յորդին, հետզհետէ ողողելով մինչեւ 1913ի հեղեղին հասած տեղերը։ Լիոնէն Ռիվ-տը-Ժիէռ տանող ճամբան կտրուած է եւ Սօնը հինգ մեղր բարձրացած է Շալօնի մէջ։

Լա Ռոշէլի առջեւ ովկիանոսը կատղած է։ Քանի մը նաւեր ալիքներէն քշուեցան. ձկնորսանաւ մը ընկղմեցաւ եւ մէջի հինգ ձկնորսները ծովամոյն եղան։

Պիսքայեան ծոցին մէջ գտնուող բազմաթիւ նաւեր օգնութիւն կը խնդրեն։ Լօրիանի անթելի կայանը հասած հեռագիր մը կը հաղորդէր թէ անգլ. շոգենաւ մը փուանթ տէ Պալէնէն հինգ մղոն դէպի արեւմուտք ժայռոտ եզերքին վրայ ընկղմած է։ Մարսիլիայէն եւս նման նշաններ կը ստացուին։

"ՅԱՐԴԱՂ"Ի ՀԱՆԴԷՍԸ

ԱՅՍՕՐ ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐ, ԺԱՄԸ 8.30ին

ՍԱԼ ՏԸ ԺԷՕԿՐԱՖԻԻ ՄԷՋ, 184, Boulevard St-Germain

Ցուցադրութիւն՝ Փարիզի երիտասարդ հայ արձանագործներու եւ նկարիչներու գործերուն

Շահխաթունի, *երգիչ* Նաւասարդեան, Մարութեան, եւ ուրիշ արուեստագէտներ կը մասնակցին գեղարուեստական բաժինին։

ՏՈՄՍԵՐՈՒ ԴԻՆԵՐԸ՝ 5 ֆր. եւ 3 ֆր.։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. Ալֆօրվիլի «Սարգիս Մինասեան» ենթակոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները եւ անոնք որոնք մինչեւ այժմ որ եւ է խումբի մէջ արձանագրուած չեն այսօր շաբաթ երեկոյ ժամը ճիշտ 7ին երիտ. միութեան ակումբին մէջ։ կարեւոր օրակարգ։

Հ. Ց. Դ. Սէնթ Էթիէնի ընկ. ընդհ. ժողովը վաղը կիրակի օր ժամը 2ին րիւ տը լա Լուար կրան քաֆէ տիւ փալէ սրահին մէջ. ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Հ. Ց. Դ. Մարսէյլի պատ. միութեան ընդհ. ժողովը վաղը կիր. 13 մարտ կէս օրէ վերջ ժամը 1ին ընթերցասրահին մէջ։

Հ. Ց. Դ. Մարսէյլի Քրիստափոր ենթակոմիտէի ժողովը 14 մարտ երկուշաբթի երեկոյան ժամը 8 ուկէսին ճանօթ հաւաքատեղին, ներկայանալով անդամատետրերով։

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիլի մասնաճիւղի ընդհ. ժողովը՝ երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին, 40 Րիւ տը Պէլվիլ։

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիւի մասնաճիւղին Ֆուէթպոլի պաֆեստի խումբը, պիտի մրցի կիրակի 13 մարտ C. A. Montrougeի պաֆեստի խումբին դէմ, ժամը 1 ուկէսին։ Հաւաքավայր ժամը 12 ուկէսին փորթ տ'Օրլէան։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հիւսեան (երեւան - Մարսէյլ) եւ Շահլամեան (Մարսէյլ) ընտանիքները հրապարակաւ իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն հեռաւոր թէ մօտիկ այն բոլոր ազգականներուն, բարեկամներուն, հայրենակիցներուն եւ ընկերներուն որոնք անձամբ, կամ հեռագրով թէ նամակներով փութացին իրենց խնդակցութիւնն ու շնորհաւորանքը յայտնել պօղոս Հիւսեանի եւ իսկուհի Շահլամեանի ամուսնութեան առթիւ, որ տեղի ունեցաւ 1927 փետրուար 27ին Մարսէյլի մէջ, կնքահայրութեամբ որդի վ. Ղազարեանի։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Ջափ. երկս. Որբերու Միութեան լսարանական յանձնախումբը դասախօսութիւններու շարքը բացած է։

Բժշկ. Միութեան կողմէ կը դասախօսէ տքթ. վահան պալասան «Մննդառութիւն» նիւթին շուրջ, որ տեղի կ'ունենայ միութեան ընթերցարանին մէջ 61, Rue Mr. le Prince, վաղը կիր. 13 մարտ կէս օրէ վերջ։ կը հրաւիրուին բոլոր անդամները, համակիրները, ու ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին այս դասախօսութիւնով։

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

Վիլնէօվ-Տը-Պէրկ, Գ. Ս.— Մասացանք 10 ֆրանք։

ՓԱՐԻԶ, Տ. Գ.— Մասացանք 70 ֆրանք։

ՄԱՐՍԷՅԼ, ԳՈՐԾ. — Մասացանք 523 ֆրանք։

ԼԻՈՆ, Ժ. Թ. Ի. — Ղրկեցէք 30 ֆրանք։

ՍՈՒԱՆ, Կ. Շ.— Մասացանք 5 ֆրանք։

ԼԻՈՆ, Ա. Վ.Դ. Ս. — Մասացանք 35 ֆրանք։

ՖԷՐԻԷՌ, Կ. Ա.— Մասացանք 35 ֆրանք։ Սկսանք ղրկել։

ՓԱՐԻԶ, Ա. Փ.— Մասացանք 10 ֆրանք։

ՍԷՆԹ-ԷԹԻԷՆ, Ռ. Գ.— Մասացանք 35 ֆրանք։

ՄԱՐՍԷՅԼ, Յ. Մ.— Մասացանք 70 ֆրանք։

ՍԷՆ ՌԱՄՊՈՒ ՏԱԼՊՕՆ, Ա. ԴԱԼ.— Ղրկեցէք 30 ֆրանք։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսացի տիկ. Էֆգարէս ձամճեան եւ որդիքը Շրանտ եւ Մարի ձամճեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Յ. ձամճեան, այժմ 27 տարեկան, որ գադթականութեան միջոցին «Ատըրնազտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի Թերթերէն արտատպել։ Տեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Rue Villeroy Lyon. France.

— կը փնտռուին սեբաստացի Գեղամ Ասատուրեան եւ իր քոյրը փիփէ Ասատուրեան որոնք 7—8 ամիս առաջ գաղալայէն Մարսէյլ եկած են։ իմացնել՝ Nichan Chirinianի Dugradu par Ucel (Ardèche)։

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի պայմաններով յարկաբաժին մը որ կը բաղկանայ երկու սենեակներէ եւ խոհանոցէ մը, Route de Versailleի *վրայ,* Billancourt: *Դիմել՝ նախկին Մոսկուա-Կովկաս ճաշարանը, 41* Rue de St. Cloud, Billancourt.

ԿՐ ԳՆԵՆՔ ԵՒ ԿՐ ՆՈՐՈԳԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԽԱԼԻՐ ԵՒ ՓԻԼԻՄՆԵՐ

ԿՐ ԳՆԵՆՔ, արծաթեղէն, ոսկեղէն, ադամանդ, հին եւ նոր յարդի ձեռագործներ։ Կը փնտռենք լաւ ձեռագործ գիտցողներ։

Դիմել՝ «Էնթէրբոս» ընկերութեան մէջ մեր նոր բացած գրասենեակը ամէն օր 10—1 եւ 3—6։

41 Rue de la Chaussée d'Antin
Tél. Trudaine: 01—41

Բ. յարկ աջ կողմ առաջին սենեակը։ Կը խօսինք հայերէն, ռուսերէն եւ օտար լեզուներ։

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

123 Bld. Sébastopol, 123
(Métro: St. Denis և Réaumur)

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

Ջերմամիզութեան, փրանկ ա տի, արիւնի եւ մորթային հիւանդութեանց։

Բժշկական տարբալուծումներ

Ամէն օր ժամը 9—12 և 2—8, կիրակի՝ 9—12։

Ժողով բդական գիներ

ԽՄԵՑԷՔ ԵՒ ՏԱՐԱՄԵՑԷՔ ԱՄԵՆՈՒՐԵՔ
ՀՈՏԱԻԷՑ ԵՒ Ա.ՆՈՒՇԱՀԱՄ
ԵԱՎՐՈՒԻ ԹԷՅԵՐԸ «THÉ YAVROU»
Շաստատուած 1880ին
ՄԵՆԱՓԱՆԱԿ ԴՆՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԴԻՄԵԼ, ՀԵՏԵՒԵԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ



ԵԳԻՊՏՈՍ.— Խանիկ Պահլավան 7 Mahmoud Pacha El Falaki Alexandrie
ՅՈՒՆԱՍՏԱՆ.— Միհրան Սարգիսեան 11 Rue Philonos le Pirée
ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Կ. Աֆէեան եւ Ընկ. վաճառ
ԻՏԱԼԻԱ.— Zovighian Setrak, Via Mentana 27 Padova
ՊԼՅՐՈՒԹ.— Tamer Frères Boite Postale N° 84
ԹՈՒՆՈՒՍ.— Daniel Cartozo Rue de Tunis Bizerte
ՄԱՐՕԿ.— Elbaz Frères Boîte Postale 299 Casablanca
PARIS.— O. Papadopoulo 18 Rue Poulet Paris XVIII
NICE.— J. Ciais 5 Rue Dabray

Դնումներու եւ ամէն տեղեկութեանց համար թղթակցութիւնք ուղղել նաեւ Comptoir des THÉS YAVROU 23 Rue Senac Marseille (B. du R,)

ՊԻԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Յունուարի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՒՆՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est — Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՁԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ"
փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ
Շամեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԻՅԵԱՆՔՈՒՌԻ ԱՃԽԱՏԱՒՈՐՆԵՐ
ՁԱՇԵՑՔԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՁԱՇԱՐԱՆԸ
ՆԱԽԿԻՆ ՄՈՍԿՈՒԱ—ԿՈՎԿԱՍ
41 Rue de St. Cloud *կամ* 30 Rue Nationale
3.75 *ֆրանքի համեղ եւ մաքուր ճաշ*
Ջրի առատ հայց

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ" ԿԸ ԾԱԽՈՒԻ
Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՓՕ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ
15 րիւ տէ Ֆօմինիքէն

ՇԱՀԱՒՈՐ ԵՒ ԴԻՒՐԻՆ ԳՈՐԾ ՄԸ
7000 ՖՐԱՆՔՈՎ
Կը ծախուի պոլսական լիւէ դայմաքի, թուլում պանիրի եւ ճերմակ պանիրի գործիքներ, շինելու արհեստն ալ սորվեցնելոն եւ եւթած ապրանքը տեղաւորելու դիւրութիւններ եւս ցուցնելու պայմանաւ։ Օրական 30—40 ֆրանք գուտ շահ։ Դիմել «Յառաջ»ի վարչութեան։

Կ'ուզուի ժամագործի աշկերտ մը 16 - 18 տարեկան։ Դիմել՝ Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ԶԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մանաւանդ արտաքին Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մատենադարանի գիրքերու։
Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԱՌԱԿԱՐԱՆ
11 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Ստերլին,	L. St.	124
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի) 100 Mark		606
Թրքական Թղթ. L. Trq.		12
Թրք. ոսկի »	or	117
Մէճիտիէ	Médjidié	9
Լէվա 100 հատ	Léva	18
Տրախմի »	Drachme	33
Լիր »	» Lire	113
Պելճ. ֆրանք »	Frc. Belge	73
Ջուից. »	Frc. Suisse	491
Լէյ 100 հատ	Ley	125
Ջերվոնեց	(10 Roubles or)	91

ԱՐԺԵԹՈՒՂԹ

Եգ. Բր. Ֆոնսիէ I Cr. Fonc. Eg.		30
» II »		19
» III »		17
Թուրքի երկթղ. Lots turcs		16

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITEUR
208bis, Rue Lafayette Paris

Le Gérant : H. TEURNIER

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՐԱՉ

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԿԻՐԱԿԻ 13 ՄԱՐՏ 1927

13 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 284

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՂԱԾՔ ԿԵԴՐՈՆԱԳՑՆԵԼՈՎ

Վերջերս կը գրէինք թէ 1926 Յունուար 1էն մինչեւ Դեկտ. 31 փարիզի մէջ Թոքախտէն մեռած են 31 հոգի: Եւ այս՝ միայն եկեղեցիէն հաղորդուած արձանագրութիւններն են: Դեռ քանի՛ քանի՛ կան որ շիլած են անտէր - անտիրական, եւ անգիր, հիւանդանոցի մը անկիւնը, եւ նետուած փոս մը:

1926ին գործազրկութեան տագնապ չկար: Նոյեմբերին էր որ ծայր տուաւ անձկութիւնը, քթէ բերնէ բերելով քանի մը տարուան համեմատական հանգիստը: Եւ իրրեւ հետեւանք, վերջին հինգ ամսուան ընթացքին խախտեցաւ շատ-շատերու առողջութիւնը: Զարաչար աշխատանք, անբաւական մնունդ, վատառողջ բնակարան, գանազան հոգեր եւ մոլութիւններ տարուէ տարի կը մաշեցնէին շատ մը աշխատաւորներու ֆիզիքականը, իսկ վերջին տագնապը լրացուց պակասը: Մանաւանդ որ, օդն ու ջուրն ալ կը շարունակեն իրենց դաւադրական աշխատանքը, մեծ քաղաքներու մէջ:

Առաջին անգամ չէ որ ուշադրութիւն կը հրաւիրենք այս կարեւոր կացութեան վրայ:

«Բուժանք» վերջերս շարք մը յօդուածներ հրատարակեց, գիտականօրէն պարզելով չարիքը, եւ առանձնապէս՝ «ընկերային հիւանդութիւններու» յարաճուն վտանգը՝ գաղթական եւ դիտասարդութեան համար: Իր հաւաստիքներուն համաձայն, Ֆրանսայի մէջ ամէն տարի հազար հոգիի վրայ 10 - 20 հոգի Թոքախտէ կը վարակուին, եւ ասոնց 2 - 5ը կը մեռնի: Առնուազն նոյն համեմատութիւնը պէտք է ընդունիլ հայ Թոքախտաւորներուն համար, ինչ որ մօտաւոր գաղափար մը կուտայ այդ աղէտին ահաւորութեան մասին»:

Աւելի մխիթարական չէ սեռական հիւանդութիւններէ, ալքոլամոլութենէ, գործարանային աշխատանքէ հիւանդացածներու վիճակը: Բայց, մինչ այդ կարգի դժբախտներու համար գանազան դիւրութիւններ կան, մինչեւ անգամ ձրի բժիշկ եւ հիւանդանոց, Թոքախտաւորներուն պարագան բոլորովին տարբեր է: «Անոնք ոչ միայն պէտք չէ աշխատին, իրենց հիւանդութեան ընթացքը չծանրացնելու համար, այլ եւ պէտք է ունենան առնուազն 7—10,000 ֆր.ի խնայողութիւն», որպէսզի դարմանելու յոյս մը ունենան:

Եւ մեր պաշտօնակիցը, («Բուժանք», Թիւ 9) մէջտեղ կը դնէ ծրագիր մը,—կազմել ընկերութիւն մը, Թոքախտի ենթակայ հայրենակիցներու «իրերօգնութեան անտուկ» մը, 5—10 ֆր. անդամավճարով:

Առանց մանելու ծրագրին մանրամասնութեան մէջ, կը կարծենք Թէ իրագործելի չէ այս առաջարկը, Թէ նիւթական եւ Թէ մանաւանդ հոգեբանական տեսակէտով: Զենք գիտեր Թէ օրիշ ազգերու մէջ կա՞ն այս ծրագրով ընկերակցութիւններ: Բայց, մօտէն ճանչնալով մեր հասարակութիւնը, կրնանք ապահով ըլլալ Թէ առողջ, հիւանդ կամ ենթակայ, ո՛չ մէկը պիտի ուզէ մօտենալ «վէրէմ»ի հետ կապուած գործի մը:

Ամէնուն միտքէն կ'անցնի Թէ օր մը պիտի սեռնի: Բայց Թէ մէկը մղուի խորհիլ Թէ օր մը Թոքախտ պիտի ըլլայ, եւ մի՛ ուղղութեամբ տանջէ իր միտքը, խնայողութիւն կատարէ, Թոքախտի ենթականերու ընկերակցութեան անդամագրուի, ապահովաբար պիտի հիւանդնայ կասկածէն եւ մտավախութենէն:

Միւս կողմէ, դիտելի է որ, ամէնէն սովորական, անհրաժեշտ ընկերակցութեանց եւ միութեանց մէջ անգամ, մեր հայրենակիցները այլամերժ են, եթէ ոչ իրերամարտ: Ո՛ւր կը մնայ այսպիսի կազմակերպութեան մը պարագային:

Մեր կարծիքով, լաւագոյն ձեւն է հասկացողութեան մը գալ արդէն եղած հաստատութեանց հետ, եւ եթէ ոչ դարմանատուն մը բանալ, գոնէ 20-30 մահճակալ ապահովել ապաքինարանի մը մէջ:

Այսպէս, կարմիր Խաչ, Տիկնանց, Աղքատախնամ, Բարեգործական, Հայրենակցական եւ նման միութիւններ կրնան իրենց տարեկան եկամուտէն որոշ մաս մը յատկացնել առանձնապէս այս գործին: Որքան գիտենք, Ֆրանսայի լաւագոյն ապաքինարանները օրական 40 ֆրանք ծախս կը պահանջեն իւրաքանչիւր Թոքախտաւորէ: Այս հիման վրայ, ենթադրելով որ երկարելի չէ ոչ ամբողջ Եւրոպայի մէջ առանձին դարմանատուն մը բանալ, ոչ ալ աւելի աժան պայմանաւորուիլ, միայն Ֆրանսայի մէջ քանի մի՛այնն մահճակալի համար ամսական պիտի պահանջուի 24,000 ֆրանք:

Մեր ուժէն վե՞ր է այս գործը: Ո՛չ. մանաւանդ որ կարելի է միշտ բացառիկ օգնութիւններ ապահովել, նոյն իսկ օտարներէ (Րոքֆելլերը ևն.):Ծանօթ մարդասէր Քրաֆթ-Պոնար տարիներէ ի վեր հայ ուսնեւորներուն ուշադրութիւնը կը հրաւիրէ այս պիսի ծրագրի մը վրայ: Բայց, ամէնն ալ իրարու կը նային, որովհետեւ չկայ մէկը որ առաջին քայլը առնէ: Պոլսոյ Ազգային հիւանդանոցը երկինքէն չինկաւ: Այն ալ արդիւնք է ձեռներէցութեան, աշխատանքի, եւ ժողովրդական տասնոցներու:

Եղածը կեդրոնացնելով եւ որոշ ծրագիր մը պատրաստելով, կարելի է այստեղ ալ արդիւնաւոր գործ կատարել, փոխանակ բախտին ձգելու բազմաթիւ անճարներ:

Ու հասարակ, խառնիխուռն եւ խաչաձեւ են մեր հանրային գործերը: Ցաճախ տասը տեղ, դրամ կը հանի միեւնոյն նպատակին համար, եւ բոլորովին կը մոռցուի նոյնքան կարեւոր նպատակ մը:

Չարկ է գտել, ամփոփել եւ ներդաշնակել բազմազան օրէնքներ, աւելի արդիւնք ստանալու համար: Շ.

ՄԱՄՈՒԼ

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

Պոլսոյ «ձիւմիուրիյէթ» Թերթին Լոնտոնի Թղթակիցը, որ Անգլիա գտնուած յիսուն Թուրքերէն մէկն է, ինչպէս կը գրէ ինք, երկար մտածելէ յետոյ, հաստատեր է Թէ... Անգլիացիները նկարագրով շատ կը նմանին Թուրքերուն, եւ փոխադարձաբար: Ահա Թէ ինչպէս.

— «Անգլիացիներուն հետ մեր յարաբերութիւնները աւելցնելով, մօտէն ճանչցած պիտի ըլլանք նաեւ ազգ մը, որուն նկարագիրը եւ բարքերը շատ կը նմանին մեր նկարագրին ու բարքերուն: Անգլիացին ծանրախոհ է եւ մարմնոյն ամէն կողմերը շարժելով ու դէմքի ծամածռումով խօսող անձերէն չախորժիր: Թուրքերն ալ այնպէս են: Անգլիացին երկար փորձերէ ետք բարեկամ կ'ընտրէ մէկուն եւ իր բարեկամութեան մէջ անկեղծութիւն եւ անձնուիրութիւն ցոյց կուտայ:

«Թուրքերն ալ այնպէս են: Անգլիացին իր գործերուն մէջ ուղղամիտ է: Կեղծաւորութենէ նախապատիւ կը սեպէ ուղիղ խօսքը, եթէ անիկա դառն իսկ ըլլայ: Թուրքերն ալ այսպէս են:

«Անգլիոյ մէջ իմ տեսած հիւրասիրութիւնս միայն Թուրքերուն քով կը գտնուի:»

Բարի վայելում:

ՈՒԿՐԱՅՆԱՑՄԱՆ ԴԷՄ

«Փրավտա»յի (5 Մարտ) մէջ Թղթակից մը խիստ քննադատութեան կ'ենթարկէ «ուկրայնացման» քաղաքականութիւնը, որ «սկսած է յիշեցնել առաջուան Ռուսացումը»: Ուկրայինայի բոլոր քաղաքներուն մէջ ցուցատախտակները, սինեմայի մակագրութիւնները, յայտագիրները եւայլն կը գրուին միայն ուկրայներէն: Ուկրայնական յամալսարաններու մէջ դասաւանդութիւնը կը պատրաստուին դարձնել ուկրայներէն, բոլոր աշխատակիցները անխտիր պարտաւոր են սորվիլ ուկրայներէնը. Թղթակիցը կը բողոքէ ուկրայնացման նեղ-ազգայնական քաղաքականութեան դէմ եւ կը պահանջէ, որ ռուսերէն լեզուն ալ տեղ ունենայ Ուկրայինայի գէթ այն վայրերու մէջ, ուր ռուս տարրը կ'ապրի խոշոր զանգուածներով:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ապրիլ 10ին պիտի գումարուի խորհրդային միութեան խորհուրդներու հերթական՝ 4րդ համագումարը: Այդ առթիւ միութեան գործադիր կոմիտէի նախագահութիւնը կատարած է պատգամաւորներու նոր բաշխում, ըստ որու՝ խորհրդային Ռուսաստանը պիտի տայ 1,032 պատգամաւորներ, որոնցմէ ռուսական նահանգները՝ 598, Ուքրալի շրջանը՝ 71, Հիւսիսային կովկասը՝ 89, Սիպերիան՝ 85, Հեռաւոր-Արեւելքի շրջանը՝ 24, ինքնավար հանրապետութիւնները՝ 144: Ուկրայինային յատկացուած է 312 տեղ, Պելոռուսիային՝ 55, Անդրկովկասին՝ 63, Ուզպեքիստանին՝ 46 եւ Թուրքմէնիստանին՝ 9 —ընդամէնը 1,517 պատգամաւոր: Խորհրդակցական ձայնով պատգամաւորներու ներկայութիւնը արգիլուած է:

ԹՈՒՐՔԵՐԸ ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ՍՈՐՎԻՆ.— Հայաստանի Մասլու Թրքալեռնակ գիւղին բնակիչներէն հայերէն սորվելու համար արձանագրուած են 25 հոգի:

ՕՐԸ ՕՐԻՆ

Պեսարապիոյ խնդիրը եւ Ռուսիա

Պուքրէշի երեսփ. ժողովը եւ Ծերակոյտը հանդիսաւոր նիստեր գումարեցին, պաշտօնապէս լսելու համար Պեսարապիոյ կցման վաւերացումը Իտալիոյ կողմէ: Երբ մէկ կողմէ Ռումանիոյ մէջ ուրախութիւններ կ'ըլլան, միւս կողմէ սուգ մտած են պոլշեւիկները:

Մոսկուայի պաշտօնաթերթը, «Իզվեսթիա» կը գրէ Թէ «իտալ. կառավարութիւնը այս անգամ իր երկրին շահերը որոշապէս շփոթած է շահերուն հետ անոնց, որոնց ուղղակի նպատակն է վնասներ պատճառել Խորհրդային Միութեան օրինական իրաւունքներուն: Խորհրդային Միութեան հետ իր արտաքին յարաբերութեանց մէջ անկախ չըլլալը խիստ լուրջ հետեւանքներ կրնայ ունենալ Իտալիոյ շահերուն համար: Պեսարապիոյ համաձայնագրին վաւերացումը բնաւ չպիտի ճանչցուի Խորհրդային Միութեան կողմէ, որ չի փոխեր իր տեսակէտը այդ խնդրին մէջ:

«Բողոքելով Իտալիոյ այս վերջին արարքին դէմ, կը յայտարարենք Թէ ատիկա ո՛չ մէկ կերպով կրնայ պարտադրել Խորհրդային Միութիւնը: Այս արարքը կը նկատենք ուղղակի անբարեկամական, որ կը սպառնայ մինչեւ հիմա երկու երկիրներուն միջեւ պահպանուած բարեկամական յարաբերութիւններուն :»

ՊՈՅՔՈԹ ՌՈՒՍ. ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Թեհրանէն Մարտ 10 Թուականով հետագիր մը կ'ըսէ.—

Կառավարութիւնը մերժած ըլլալով առեւտրական յարաբերութիւնները խզել Ռուսիոյ հետ, կասպից ծովու նաւահանգիստներու վաճառականները իրրեւ բողոքի նշան որոշեցին արգիլել Ռուսիայէն եկած կամ հոն պրկուելիք վաճառքներու նաւէն հանուիլը կամ նաւ բեռցուիլը: Կը սպասուի որ Ռուսերը միջամտեն:

Աբեւիի մեծ գործադուլը

Ինչպէս գրեցինք, անցած օր Աթէնքի եւ Փիրէի բոլոր խանութները, ճաշարանները եւ սրճարանները փակուեցան՝ բողոքելու համար կառավարութեան կարգ մը որոշումներուն դէմ, որոնք են՝ Ա.— Եկամուտի տուրքերու վճարման համար պայմանաժամ տրուած է մինչեւ Ապրիլ 1: Բ.— կալուածատէրերուն իրաւունք տրուած է տուներու, խանութներու եւ վաճառատուններու վարձքերը աւելցնել պատերազմէն առաջուան սակին 100ին 25 համեմատութեամբ:

Մայրաքաղաքին գլխաւոր փողոցները անսովոր տեսարան մը կը պարզէին՝ փակուած փեղկերով, սրճարաններն ու ճաշարանները պարապ աթոռներով: Գիշերը մինչեւ ուշ առեն ժողովուրդը խուժած էր նպարավաճառներու և հացագործներու խանութները՝ ուտելիք եւ հաց ապահովելու համար, վախնալով որ գործադուլը կրնայ երկարիլ: Բժիշկներն ու դեղագործներն ալ հրաւիրուեցան մատնակցիլ գործադուլին, սակայն անոնք մերժեցին այս հակամարդկային առաջարկը:

Կառավարութիւնը պիտի գրաւէ փուռերը եւ հաց պիտի պատրաստէ ժողովուրդին համար, եթէ գործադուլը երկարի:

Կառավարութիւնը տեղեկացաւ որ Փանկալոսի օրով պաշտօնի վրայ եղող սպաներ ծրագրած են հրահրել գործադուլը, և առիթէն օգտուելով ձեռք առնել իշխանութիւնը: Ասոր վրայ, խիստ լուրջ միջոցներ ձեռք առնուեցան: Ամէն կողմ պահակներ կը շրջին. եւ բաց խանութները ոստիկանական հսկողութեան տակ են: Օդանաւեր կը թռին քաղաքին վերեւ եւ հրշէջներ պատրաստ են ամէն վայրկեան շարժման մէջ դրուելու պատահական ցոյցերը ցրուելու համար:

Մինչեւ ակռաները զինուած ոստիկաններ ժողովուրդին հաց եւ պտուղներ կը ծախեն:

Մարտ 10ի գիշերը ամբոխը յարձակեցաւ պահակ զինուորներու չոկատի մը վրայ եւ ուզեց զինաթափ ընել զայն: Պատահած ընդհարումին հետեւանքով մէկ հոգի սպաննուեցաւ, քանի մը հոգի ալ վիրաւորուեցան: Շնորհիւ հասած օգնական զօրքերու, կարելի եղաւ ամբոխը ցրուել: Քանի մը ձերբակալութիւններ կատարուեցան: Սպաննուողը համայնավար մըն է, որ կարմիր դրօշ մը բռնած ցուցարարներու առջեւէն կ'երթար:

Փիրէի խանութներէն շատերը բացուած են արդէն: Աթէնքի մէջ եւս գործադուլը վերջ գտած է:

Միւս կողմէ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ մէջ ալ կառավարական պաշտօնեաները գործադուլ յայտարարած են՝ պահանջելով ամսականի յաւելում:

Գործազրկութիւնը գրեթէ կանգ առած

Պաշտօնաթերթին հրատարակած վերջին վիճակագրութեանց համաձայն, մինչեւ Մարտ 10 ամբողջ Ֆրանսայի մէջ նպաստընկալ գործազուրկներու թիւն էր 81,916, որոնց 60,049ը այր եւ 21,867ը կին: Անցած շաբաթ ասոնց թիւն էր 80,941, որով մէկ շաբթուան մէջ աւելցած են 975 հոգի: Ասոնցմէ շատեր նախկին գործազուրկներ են, որոնք գործ գտնելէ յուսահատած, դիմած են նպաստի մնտուկներուն: Փարիզի շրջանին մէջ գործազուրկներուն թիւը 1034 հոգի պակասած է:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԱԼԻԱՔ - ՋՈՒԼՖԱ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Ալիաք-Ջուլֆա երկաթուղագծի շինութիւնը ուժգին թափով առաջ կը տարուի: Շինուելիք 384 վերստ ճանապարհէն 230ը արդէն շինուած է: Մուղանի եւ միւլի դաշտերը կտրուած են եւ կը մնայ շինել ամէնէն աւելի դժուար լեռնային մասը, ուր պէտք է փորուի 10 երկքնուղի: կեդրոնական կառավարութիւնը նոր գումարներ յատկացուցած է այդ նպատակով:

ԱՆՎԵՐՋ ԶԵՂՅՈՒՄՆԵՐ

Խորհրդային միութեան բանուորա - գիւղացիական տեսչութիւնը քննած է միջին Ասիոյ ջրատնտեսութեան գործերը եւ երեւան հանած է բազմաթիւ զեղծումներ: Այսպէս, 1925—26ին յատկացուած 21 միլիոն րուբլիէն ծախսուած է իր նպատակին համար միայն 4,5 միլիոն, մնացածը վատնուած է: Հաշիւ ու ծրագիր չկայ. ստացուած արդիւնքները բոլորովին անարժէք են: Մասնաւորապէս դատապարտելի են ֆարա-ֆում անապատի հետազօտութիւնները, որոնց նպատակը պիտի ըլլար Ամու-ցարիա գետի հոսանքը դէպի կասպից ծով ուղղել. այդ հետազօտութեան վրայ ծախսուած է մէկուկէս միլիոն րուբլի առանց ո եւ է հետեւանքի: Մէկ տարուան մէջ միջին Ասիոյ ջրատնտեսութեան պաշտօնեաներու թիւը 1,268էն բարձրացած է 4,286ի, որոնց տարեկան ռոճիկը միայն 9 միլիոն րուբլի է:

Այս եւ նման ուրիշ աղաղակող զեղծումները նկատի առնելով, տեսչութիւնը որոշած է Ուզպեքիստանի եւ Թիւրքմէնիստանի ջրային կոմիտէի գործերը յանձնել գերագոյն դատարանին եւ անմիջապէս պաշտօնազուրկ ընել միջին Ասիոյ ջրատնտեսական կոմիտէի նախկին նախագահ եւ այժմ խորհրդային միութեան ուռոգման կոմիտէի փոխնախագահ Ռըքզունովը, Ուզպեքիստանի ջրային վարչութեան պետ փրոխորովը, Ուզպեքիստանի կառավարութեան փոխնախագահ Մորը: Որոշուած է նաեւ պաշտօնէութեան կազմը անմիջապէս կրճատել 50 առ հարիւր եւ փոփոխութիւններ կատարել միջին Ասիոյ ջրատնտեսութեան ծրագրի եւ ղեկավարութեան մէջ:

Պէտք է նկատի ունենալ, որ այս շրջանը Ռուսաստանի բամպակի գլխաւոր շտեմարանն է:

ՅԵԼԱՅԻ ՀԱՅ ՄԸ.— Մեքսիկայի մէջ Հայերը դեռ անուն ու համբաւ չունին: Տոքթ. Իշխանեան անուն պատուելի մը Մեքսիկայի մէջ երկար ժամանակ կը թափառի, սակայն չի յաջողիր բարձրացնել Հայկազանց անունը: Օր մըն ալ կը կազմակերպէ Պաշտպան ընկերութիւն մը: Ու Ծնունդի տօնին առթիւ, բանուկ հրապարակի մը վրայ, կը հաւաքէ գանազան կենդանիներ եւ անոնց կուտայ Ծնունդի սեղան մը: Մեքսիկայի թերթերը կը հիանան այս խելացի Հայուն կատարած մեծ գործին վրայ եւ կը հրատարակեն Տոքթ. Իշխանեանին նկարը, տօնի գանազան պարագաները, թէ ինչպէս շուները վեր վեր կը ցատկեն միսին հասնելու համար, թէ ինչպէս էշը ստեպղին կ'ուտէ ախորժակով:

Թերթերը տոքթորին կուտան Սիրոյ առաքեալի անունը, յայտնելով որ Հայաստանէն եկած է, քարոզելու համար իր վարդապետութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԸ

Կէս օրուան ատենը էդ տարօրինակ ձայնը լսուեցաւ։ Ընտանիքի անդամները, որոնք ճաշի սեղանի շուրջ էին հաւաքուած, իրար նայեցին։

— Ի՞նչ է, ո՞ր ես...

Ծերուկ Հաղորդավարը ոտքի ելաւ։

— Ես կ՚երթամ, ինչ որ է, ես կ՚երթամ։

Բերանի մատուցած մի կտոր միսը ձգեց ափսէի մէջ եւ սրբեց բեղերը։

* * *

Ծերուկ Հաղորդավարը ոտքի ելաւ եւ ուղղուեցաւ դէպի դուռը։ Ընտանիքի անդամները, որոնք ճաշի սեղանի շուրջ էին հաւաքուած, իրար նայեցին։

— Ի՞նչ է, ինչ որ է, կ՚երթամ, ես կ՚երթամ։

ՊՈԼՍԱՀԱՅԱՍՏԱՆ

ԳԱԶԵԹԱՅԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ

— Հիշո՞ւմ ես, Ռուբո, երբ դու ինձ ասացիր, թե ամեն մարդ ունի իր ճակատագիրը, որը նա չի կարող փոխել։ Ես քեզ հավատացրի, որ դա սխալ է։ Ես ասացի, որ մարդ ինքն է իր ճակատագրի տերը։ Ես ասացի, որ մարդ կարող է ինքնուրույն ընտրել իր ճանապարհը կյանքում

Փետր. 28էն Մարտ 5 կարելի չէ եղած գոհացում տալ գործի համար դիմող 90,170 հոգիի, 65,376 այր եւ 24,791 կին. շաբաթ մը առաջ գոհացում չէր տրուած 96-670 հոգիի։

Նոյն շաբթուան մէջ Ֆրանսա մտած են 17 օտար բանուորներ. գործ հայթայթուած է 1271 օտարներու՝ մասնաւորաբար Մարսիլիոյ, Լիոնի, Նանթի, Պօրտոյի, Թուլուզի մէջ։ Ֆրանսայէն մեկնած են 2176 օտարականներ, որոնց 786ը Իտալացի, 330ը Լեհ, 295ը Սպանիացի, 234ը Չեխոսլավաք, եւայլն։

Հեղինեւսակով վէմ մը

Պելկրատէն հասած յուրերու նայելով, լուրջ անհամաձայնոդթիւն մը ծագած է Յունաստանի եւ Եուկոսլաւիոյ միջեւ։ Կ'ըսուի թէ հեղինէն կառավարութիւնը կը փափաքի կարգ մը հիմնական փոփոխութիւններ մտցնել Սելանիկի մասին կնքուած համաձայնագրին մէջ։ Յունաստանի այս դիրքը զբրգոութիւն մը կը նկատուի Պելկրատի մէջ։ Աթէնք մինչեւ հիմա չէ ուզած վաւերացնել յիշեալ համաձայնագիրը, հակառակ անոր որ գոհացում չի տար Եուկոսլաւիոյ բաղձանքներուն։

Ալպանիոյ անկախութիւնը

Ալպանիոյ նախկին վարչապետ գերապայծառ Ֆան Նոլի Վիէննայէն Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին ուղղուած հեռագրով մը կը պահանջէ որ Ալպանիա ազատագրուի Եուկոսլաւիոյ եւ Իտալիոյ թեւարկութենէն։ Ֆան Նոլի կ'ամբաստանէ Եուկոսլաւիոյ նախկին արտաքին նախարար Ինինիչը, որ Ահմէտ Զօկուին զրամական եւ զինուորական աջակցութիւններ բրաւ, 1924ին ալպանական կառավարութիւնը ձեռք առնելու համար։ Զօկու մինչեւ այսօր իշխանութեան գլուխ կը մնայ։ Կը մեղադրէ նաեւ Ազգերու Դաշնակցութիւնը որ թոյլ կուտայ Մուսոլինիին ահուսարսափի քաղաքականութիւն մը վարել Ալպանիոյ մէջ, այդ երկիրը դարձեալ ֆաշիստներու գաղթավայր մը, ինչ որ անխուսափելիօրէն պիտի փութացնէ պալքանեան նոր պատերազմ մը։

«Եթէ Ազգերու Դաշնակցութիւնը լռութեամբ պատասխանէ, պզտիկ ժողովուրդները պիտի ստիպուին հաւատալ որ Ազգերու Դաշնակցութիւնը կը հրաժարի իր խաղաղարար առաքելութենէն եւ Ուիլսընի սկզբունքներուն տեղ կ'ընդունի ֆաշիստական հաւատամքը, վերջ տալով մեծաշուքնդ ու ողբերգական, եւ սակայն շքեղ մարդասիրական երազի մը»։

Որովհետեւ Ֆան Նոլի այլ եւս Ալպանիան չի ներկայացներ, Խորհուրդը նկատի չպիտի առնէ այս դիմումը։

Զինաթափութեան համաժողովը

Ուաշինկթընի զինաթափութեան համաժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունիս 1ին։ Հակառակ Ֆրանսայի եւ Իտալիոյ մերժումին, այս երկու երկիրները անպաշտօն դիտողներ պիտի ղրկեն Ուաշինկթընի՝ հետեւելու համար Ամերիկայի, Անգլիոյ եւ Ճափոնի միջեւ կատարուած խորհրդակցութիւններուն։

Ժընեւի մէջ Ազգերու Դաշնակցութեան հովանիին տակ կատարուելիք զինաթափութեան ժողովը եւ Ուաշինկթընի համաժողովը իրար չպիտի խաչաձեւեն, ընդհակառակը իրար պիտի լրացնեն։ Խորհրդակցութեանց գլխաւոր առարկան պիտի ըլլայ յածանաւերու, ընդծովեանները, Թորփիլահալածներու եւ ուրիշ մարտանաւերու քանակին զեղչումը, վերջ տալու համար նաւային մրցակցութեանց։ Անգլիա կը պնդէ որ ծովերու հսկողութեան համար պէտք ունի նոր յածանաւերու. միւս կողմէ Միացեալ Նահանգներն ալ կը պահանջեն Անգլիոյ հաւասար ուժ ունենալ։

Զինաստանի կռիւները

Զինուորական դէպքերը կը գահավիժին Շանկայի շուրջ։ Մէկ կողմէ ճակատամարտը սկսած է Եի-Շանկի շրջանին մէջ եւ Զօր-Շանկ-Շուն-Շանկ իր ընդհանուր բանակատեղին Նանքինէն փէնկ-փու փոխադրած է, անձամբ վարելու համար պաշտպանութեան գործողութիւնները եւ արգիլելու համար որ երկաթուղին կտրուի Նանքինի, Զանքինկի, Ֆու-Չէուի եւ Շանկայի մէջտեղ։

Գալով ագգայնական ուժերուն, անոնք ալ կեդրոնացած են Ու-Չուէն 20 քիլոմեդր հեռու եւ գետին երկու կողմերէն դէպի Նանքին կը յառաջանան։ Կարեւոր զօրագունդ մը գետը անցնելով դիրք բռնած է հիւսիսային եզերքին վրայ։

Հոնանի մէջ, մեծ կռիւներ տեղի կ'ունենան։ Րիւթէրի հեռագիր մը կ'ըսէ թէ 600 վիրաւորներ հասած են փէքինի։ Զանկ-Զօ-լինի զինուորները կը յառաջանան՝ յարձակելու համար ագգայնականներուն դէմ, որոնք բուռն կերպով կը դիմադրեն, այս յառաջխաղացումը արգիլելու համար։ Քանթոնի բանակին թնդանօթները աւելի զօրաւոր են քան հակառակորդ բանակինը, այնպէս որ ագգայնականները դիւրութեամբ պիտի կրնան կտրել գետը՝ շատ մը կէտերէ։

Փեքինի խորհրդային գործակատարը կրկին պահանջեց կառավարութենէն ազատ արձակել պոլշեւիկեան շոգենաւին մէջէն գերի բռնուած Տիկ. Պորոտինն ու երեք խորհրդային դիւանագիտական սուրհանդակները։ Կառավարութիւնը պատասխանեց թէ յիշեալները չի յանձներ, սակայն իրենց կեանքին ոեւէ վտանգ չի սպառնար։

Ամերիկա 20 նոր մարտանաւ կը շինէ

Անգլիոյ ծովային նախարարութեան հրատարակած զեկոյցին համաձայն, 1927ի ընթացքին պիտի շինուին քսան նոր մարտանաւեր, որոնց համար ծախք նախատեսուած է 58 միլիոն սդերլին։ Անգլիական նաւատորմին մէջ կը ծառայեն 102,000 հոգի։ Վերջացող տարուան ընթացքին ամբողջացուած են երկու նոր մարտանաւեր՝«Նէլսըն» եւ «Ռոտնի», որոնք Ատլանտեանի նաւատորմին պիտի միանան. Տիւս մեծ մարտանաւերը Ատլանտեանէն Միջերկրականի նաւատորմին պիտի փոխանցուին։ Հանքագործներու գործադուլին պատճառով չորս յածանաւերու շինութիւնը յետաձգուած է։

Օդանաւերու շինութեան եւս ուժ պիտի տրուի։ Անցած տարի այս նպատակին յատկացուած էր 9,083,000 սդերլին, այս տարի 900,000 աւելի տրամադրուած է՝ այսինքն 9,983,000 սդերլին։ Իսկ օդանաւերու սպառազինութեան համար 681,000ի փոխարէն 882,000 սդերլին պիտի յատկացուի։

Թմրեցուցիչներու առեւտուրը

Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին առջի օրուան նիստին մէջ, լանդիր եղաւ թմրեցուցիչներու առեւտուրին մասին։ Պարսկաստանի ներկայացուցիչը բուռն կերպով բողոքեց այն զրպարտութեան դէմ, որուն համաձայն ամբողջ աշխարհի թմրեցուցիչները Պարսկաստան կը հայթայթէ։ Ու իր կարգին ամբաստանեց դեղ պատրաստող երկիրները՝ Գերմանիան, Հոլանտան, Զուիցերիան, Ֆրանսան, Ճափոնը, Անգլիան ու Միացեալ Նահանգները, որոնք են պատասխանատուները աշխարհի մէջ տարածուած մորփինին, հէրօինին եւ քօքայինին։ Պարսկաստանի հարկային վարչութեան տնօրէն գնդապետ Դանիէլ Մաք Քորմիք տեղեկագիր մը կարդաց, ցոյց տալով որ պարսկական տունկերը 100ին 10 միայն թոյն կը պարունակեն ու չեն կրնար մրցիլ մակեդոնական եւ թրքականներուն հետ, որոնք 100ին 16 կը պարունակեն եւ մորփինի յարմար են։ Ներկայիս ամբողջ աշխարհի մէջ տարեկան 5000 թոնօ ափիոն կ'արտադրուի, մինչդեռ ըստ օրինի 400 թոնօ միայն անհրաժեշտ է, իսկ իբր դեղ կը գործածուի 12 թոնօ։ Պարսկաստան պատրաստ է, զեղչելու իր արտադրութիւնը, եթէ միւս պետութիւններն ալ նոյն յանձնառութիւնը ընդունին։

ՕՐ. ԷԼՄԱՍ ԿՈՍՏԱՆԵԱՆ
եւ
ԸՆԿ. ԲԱԳՐԱՏ ՊԱՊԱԵԱՆ
ԱՄՈՒՍՆԱՑԱԾ
5 փետր. Պելմոն-փոն-տը-Շէրուի

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Խաժակ» խումբի պելվիլի, ժթրէսի եւ շրջականները բնակող ընկերները ժողովի կը հրաւիրուին երեքշաբթի երեկոյ ժամը 9ին, «Ռոստոմ»ի սրահը, Faub. du Temple: կարեւոր օրակարգ:

Հ. Յ. Դ. Ուսանող. միութեան ընկ. ընդհ. ժողովը յառաջիկայ Ուրբաթ, Մարտ 18ին եւեկոյեան ժամը 8.30ին Ֆլօրիայի սրահը։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Հ. Յ. Դ. Մարսէյլի Քրիստափոր Ենթակոմիտէի ժողովը 14 Մարտ երկուշաբթի երեկոյան ժամը 8 ուկէսին ծանօթ հաւաքատեղին: Ներկայանալ անդամատետրերով:

Հ. Մ. Ը. Մ.ի Պելվիլի մասնաճիւղի ընդհ. ժողովը՝ Երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին, 40 Րիւ տը Պելվիլ։

ՓԱՐԻԶԻ Հայ Ուսանողական Միութեան հրապարակային դասախօսութիւնը 16 Մարտ Չորեքշաբթի գիշեր՝ Société Savantesի մէջ, Métro : St.-Michel—Odéon: կը խօսի կ. Ճ. Բասմաջեան «Խաչակիրները եւ Հայերը» նիւթին վրայ: Մուտք՝ 1 ֆրանք:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Զափ. երկս. Որբերու Միութեան լսարանական յանձնախումբը դասախօսութիւններու շարքը բացած է:

Բժշկ. Միութեան կողմէ կը դասախօսէ Տքթ. Վահան Պալասան «Սննդառութիւն» նիւթին շուրջ, որ տեղի կ'ունենայ Միութեան ընթերցարանին մէջ 61, Rue Mr. le Prince, վաղը կիր. 13 Մարտ կէս օրէ վերջ: Կը հրաւիրուին բոլոր անդամներն, իսկ ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին այս դասախօսութիւնով:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսացի տիկ. էֆգարէս ձամճեան եւ որդիքը Հրանտ եւ Մարի ձամճեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Ց. ձամճեան, այժմ 27 տարեկան, որ գաղթականութեան միջոցին «Ատրպնազտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի Թերթերէն արտատպել: Ցեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Lyon. France.

— կը փնտռուի Գեղամ Աատուրեան որ փոխէ Ազատուրեան 7—8 ամիս առաջ գավալայէն Մարսէյլ եկած են, իմացնել՝ Nichan Chirinianի Dugradu par Ucel (Ardèche):

Կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16 - 18 տարեկան: Դիմել՝ Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

«Բուժարի» Լոյս տեսաւ 9րդ թիւը (Մարտ) պատկերազարդ եւ ճոխ բովանդակութեամբ: կը ծախուի Պելվիլի եւ Սէն-Միշէլի լրագրավաճառներուն քով:

ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ հայ գործարան մը կը փնտռէ 2 կարող հայ գործակատարներ: Մնայուն գործ, լաւ շահ: Դիմել՝ երկուշաբթի 9—12, Charcuterie «Praga», 2, Cité Popincourt, Paris (11e).

ԳՈՐԾԱՏՈՒԻՐԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Մագ կտրել եւ սափրուիլ
3 ՖՐԱՆՔ
ԱՆՏՈՆ ՔԻՒՉԻՒՔԵԱՆ
Դիմել՝ 28 Rue Traversière, Billancourt (Seine).

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի մէկ օր առաջ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել համապատասխան օրուան:

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ

Ծաքիր Թահրա պէյ 5, Բժիշկին գիրքէն փերցուած էջեր 12.50, Յունահայ տարեգիրք 25, Ոսմպուքին 15, Նամուս 10, Զար ոգի 10, Պատուի համար 10, Լուսթիւնը 8, Երազահան 6, Կոյսի մը Օրագիրը 5, Անձկութեան ժամեր 2, Մապլվար 12,50, Բարիկէթ 7.50, Տօքթ. Մօրի Վբէժը 5, Մացառներու մէջ (2 հատ.) 25, Ոսկի Աքաղաղ 10, ... Թի փառք 5, Վէր... ...ուն

...ր, «ՆՈՐ ՕՐ»ի ... տեսարակներ, Թիւը 2, ինչպէս նաեւ վիպական, Թատերական բանաստեղծական եւ ազգային գիրքեր, բառարաններ, խօսակցութիւններ հաւաքածոներ եւայլն:

ԳՐԱՁՈՒԹԻՒՆԱԿԸ ՉՐԻ

Ֆրանսայի եւ գաղութներուն համար, փոստի ծախք չկայ։

Ստանալու համար՝ դիմել նամակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ՀՐԱՉ ԶԱՐԴԱՐԵԱՆ
ՎԻՐԱԲՈՅԺ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Chirurgien - DENTISTE
ՓԱՐԻԶԻ ԲԱՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼԹԷԻՆ
126 RUE BOLIVAR (Մէթրօ Պոլիվար կամ ժօռէս)
Մասնագիտութիւն ատամնաշարերու (քաուչու թէ ոսկի) եւ պրիճի
Բոլոր աշխատանքները ԱՒՐԱՑ ՅԱՒԻ, ԴԻՒՐԵՐԸ ՉԱՓԱԴԻՐ
Ընդունելութիւն ամէն օր ժամը 1.30էն մինչեւ 8ը։ Ուրիշ ատեն՝ ժամադրութեամբ։

ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԿԱՐՈՒՀԻ
12 Rue St. Sulpice Paris (6e) Métro Odéon
Փորձառու եւ մասնագէտ մանթոյի, գիշերուան եւ ցերեկուան հագուստներու։ Կը պատրաստէ վերջին նորաձեւութեամբ հագուստներ, ձարկաւոր եւ խնամեալ կար։
Իսկ Կիրակի օրերը բացուած է մասնաւոր դասընթացք մը ձեւագիթեան եւ կարի։
Կիրակի առաւօտ 9—12, եւ 2—5։ Անոնք որ կ'աշխատին եւ ժամանակ չունին, կրնան օգտուիլ։

PRIMEROSE
183, Rue St. Honoré, 183 PARIS (1)
Téléph. Richelieu 91-64 Métro:Pyramides - Palais-Royal
GALERIES MAUBEUGE
39, Rue de Maubeuge, 39 PARIS (9)
Téléph. Trudaine 75-55 Métro: Cadet
Սոյն երկու վաճառատանց մէջ կը ծախուին կանանց յատուկ ամէն տեսակ մետաքսեղէն եւ բրդեղէն կերպասներ շատ նպաստաւոր գիներով: Հոս մոթերը բրէփ տը շինի:

ՊԵԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպաստեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ֆոնոկրաֆի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԴԻՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՅԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30_7.30—կիրակի եւ տօն օրեր՝ 9_12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՓՍ"
փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ
Համեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ
Թերթիս գործակալ Դ. Ներիկեանի ՖՐԱՆՓՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ
15 Րիւ տէ Ֆօմինիքէն

ՎԻԷՆԻ „ՅԱՌԱՋ"Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է
ՀՄԱՅԵԱԿ ՈՒԶՈՒՆԵԱՆ
Rue Victor Fougier N. 69
Vienne - Isère

ԿՐ ԳՆԵՆՔ ԵՒ ԿՐ ՆՈՐՈԳԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹԱԼԻՆԵՐ ԵՒ ՓԻԼԻՄՆԵՐ
ԿՐ ԳՆԵՆՔ, արծաթեղէն, ոսկեղէն, ադամանդ, հին եւ նոր յարդի ձեռագործներ։ Կը փնտռենք լաւ ձեռագործ գիտցողներ.
Դիմել՝ «Էնթէրբոս» ընկերութեան մէջ մեր նոր բացած գրասենեակը ամէն օր 10—1 եւ 3—6։
41 Rue de la Chaussée d'Antin
Tél. Trudaine: 01—41
Բ. յարկ աջ կողմ առաջին սենեակը։ Կը խօսինք հայերէն, ռուսերէն եւ օտար լեզուներ։

Թ. Տ. ՍՊԱՐԹԱԼԻ
...ժշկ. Համալսարանէն ... սեռ բժիշկ եւ վիրաբ... Իրի Ազգային ...անոցին
4' ...roissonnière, Paris (2e)
...ունելութիւն ամէն օր ժամը 14էն 18 եւ ժամադրութեամբ:

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՏԷ ԶԵՋԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԴՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մրցերք մը ունի մատենադարանի դիրքերու։
Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԱԿԱՄԱՆ
12 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.
Սթերլին,	L. St.	124
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի) 100 Mark		606
Թրքական Թղթ. L. Trq.		12
Թրք. ոսկի » or		115
Մէճիտիէ	Médjidié	9
Լէվա 100 հատ	Léva	18
Տրախմի »	Drachme	32
Լիր »	» Lire	113
Պելճ. ֆրանք »	Frc. Belge	71
Զուից. »	Frc. Suisse	491
Լէյ 100 հատ	Ley	15
Ջերվոնեց	(10 Roubles or)	93

ԱՐԺԵԹՈՒՂԹ		
եգ. Քր. Ֆոնտիէ	I Cr. Fonc. Eg.	3060
»	II »	1930
»	III »	1720
Ռումելի երկթղ.	Lots turcs	162

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԱՔ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԶՈՒԻՑԵՐԻԱ		»	»
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200 ֆ.

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն { 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ
15
ՄԱՐՏ
1927

15 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 285

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՄԻՆՉԵՒ ՓՆԱՅՈՂԸ ԱՐԹՆՆԱՅ

Ընդհանուր անստուգութեան, զանազան խմորումներու եւ պատերազմի վախերու ժխորին մէջ, աչքի կը զարնէ տարօրինակ պատկեր մը։

Մինչ մենք եւ մեր զաղափարակիցները կ'աշխատինք բոլորին ուշադրութիւնը կեդրոնացնել Հայաստանի եւ հայ ժողովուրդին սպառնացող վտանգներու վրայ, մեր անարժան հակառակորդները կը շարունակեն ցրուել այդ ուշադրութիւնը, և տարբ վրայ քնացնել հասարակութիւնը։

Այդ «ազգային» գործին նուիրուած են, Հայաստանի մէջ, ցրուան վարիչները, իսկ արտասահմանի մէջ անոնց հաւատարիմներն ու ռամկավարները։

Երկուքն ալ թէեւ մահու չափ կ'ատեն իրար, բայց հաշտարար են մէկ բանի մէջ,— կարելի եղածին չափ ոսկեզօծել, ուռեցնել ներկայ Հայաստանի պատկերը, որպէսզի խայտառակ երկուսան իշխանութիւնը։ Եւ ատոր համար, կա՛մ կը ծածկեն իրականութիւնը, եւ կամ կը պատմեն այնպիսի հէքեաթներ, որոնք հեռաւոր կապ անգամ չունին այդ իրականութեան հետ։ Մասունքի պէս հրատարակութեան կուտան եւ վերթէ թերթ, երկիրէ երկիր կը պտտցնեն խեղճուկրակ երախտաւորի մը անձնական նամակը, որ կը փառաբանէ Հայաստանի լուսինն ու դաշտերը եւ «շինարարական աշխատանքը»։ Իսկ բա՛ռ չեն արտասաներ տասն անգամ տասը լաւատեղեակ եւ փաստացի թղթակցութեանց մասին, որոնք թանձրացել իրողութիւններ կը յայտնեն նոյն լուսնկային տակ եւ դաշտերուն մէջ տքացող ժողովուրդի կեանքէն, կը պարզեն անոր անվերջ տառապանքն ու յուսախաբութիւնները։ Չեն զգալիր, մինչեւ անգամ, իրենց փառաբանած իշխանութեան հրատարակութիւններով, թերթերէն մինչեւ վիճակագրութիւնները, որոնք ամբողջ ողբերգութիւն մը կը կազմեն, հասկցողին համար։

Ամենէն վերջին պարագան, — 1926ի մարդահամարը։ Մենք այնօրէն արտասպեցինք ինչ որ հրատարակեց խորհրդային իշխանութիւնը, օրը օրին։ Մեզի հետեւեցան սեր պաշտօնակիցներն ալ։ Եւ յետոյ վերլուծումներ՝ այդ չոր թիւերուն վրայ, որոնք ամէն բանէ առաջ կ'ապացուցանեն Հայաստանի ժողովուրդին ցրուումը, նօսրացումը։ Զարիքը այնքան ակներեւ էր, որ պոլշեւիկներն անգամ հարկադրուեցան բացատրել առնուազն տարիբ հազար հոգիի նուազումը։

Այդ փորձերը եղան «ի բուժումն գայթակղեալ մտաց», բայց իրականին մէջ, աւելի պղտորեցին կացութիւնը։ Մանաւանդ որ, տակաւին չէ հրատարակուած մարդահամարին ազգագրական համեմատութիւնը։ «Ոչ թէ 870,000, այլ 930,000 հոգի է ըլլայ Հայաստանի ժողովուրդին թիւը», աղաղակեցին։ Բայց չըսին թէ ո՛րքանը հայ, ո՛րքանը օտար։ Այդ բաղդատական ցուցակին հրատարակութենէն վերջն է որ, պիտի կրնանք ամբողջական գաղափար կազմել ահաւոր իրականութեան մասին։ Այնատեն է որ, թուանշանները ձեռք առնելով, պիտի տեսնենք թէ ոչ միայն տարուէ տարի կը նուազի մեր դժբաղդ հայրենիքին բնակչութիւնը, այլ և մանաւանդ կը սկսի բուն իսկ հայրենիքին գաւակները, եւ ուշագրաւ համեմատութեամբ կ'աւերնան թուրք-թաթարները. անոնք որ հեռացեր էին նախորդ կառավարութեան օրով, եւ որոնք թէ սեռական հայրենիք ունին եւ թէ տէր տիրական։

Այս անողոք իրականութեան առջեւ, ի՞նչ կ'ընեն օրուան իշխանաւորները, հաւատարիմներն ու «ողջամիտ»ները։ Ի՞նչ կը խորհին, այդ կացութենէն ծագելիք վտանգներուն եւ ուրիշ անհնկալներու հանդէպ, որոնք հետզհետէ՝ ձեւ ու մարմին կ'առնեն։

Ոչինչ։ Կա՛մ քար լռութիւն, եւ կամ, աւելի ղգուելին, նոր աշխարհութիւն, չարիքը ծածկելու, «թշնամի»ն անուանարկելու եւ սադմոսերգութիւնը շարունակելու համար։

Թուրքէն դիտող մը պիտի զարմանար այդ երջանիկ արտայներուն վրայ։ Անոնց դատողութեան եւ պատասխանատուութեան զարգացումը այնքան ցամքեր է որ, երբ թուանշաններն ու փաստերը կը շարես, գլխու պտոյտ կ'ունենան, եւ անկիւն մը կը քաշուին։

Այսպիսի հակապատկեր՝ քիչ կը գտնուի յետամնաց ազգերու մէջ անգամ։ Կրնանք ըսել թէ Թուրքերը մեզմէ արթուն եւ խնաւոտուն են այս տեսակէտով։ Անոնք, որքան ալ ակռայ կիտեն ներքնապէս, դիւրաւ կը հասկնան սպառնացող վտանգի մը էութիւնը, եւ անոր համեմատ կը վարուն իրենց պայքարին ու պատրաստութիւնը։ Մեր մէջ, ամէն գլուխ ձայն կ'ելլէ ամէնէն ճակատագրական պահուն, բանգէտ երեւալու համբաւով. իսկ ներկայ պարագային՝ օրուան իշխանաւորներուն հաճոյանալու տիմարութեամբ։ Մինչդեռ, օր պիտի գայ այդ մարդիկն անգամ պիտի թքնեն իրենց երեսը, ինչպէս եղել է բոլոր կեղծաւորներուն եւ փարիսեցիներուն։

Կարելի՞ է զգաստացնել այս կամաւոր կոյրերն ու փոքրոգիները։

Չենք հետաքրքրուիր։ Հանրային կարծիքին յանձնելով այս տրտում երեւոյթը, մենք պիտի շարունակենք պարզել անողորմ ճշդութեամբ, մինչեւ որ արթննան բոլոր քնացողները։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՈՒԺԱՍՊԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Նոր երկիր», փարիզի հինչակեանններու շաբաթաթերթը, իր կարգին քննելով Հայաստանի բնակչութեան նուազման խնդիրը, գլխաւոր պատճառ կը ցուցնէ երեւանի վարիչներուն քաղաքականութիւնը եւ կոմիսար Արտաշէս կարինեանի հետեւեալ խօսքը. «Պէտք է վերջ տալ հայութեան հաւաքման Հայաստանում եւ 300 հազար արեւմտահայ գաղթականները ցրուել Ռուսաստանում»։

— *« Այսպէս պատգամած էր Խ. Հայաստանի ներկայ քօմիսէրներէն ամենաթթու պոլշեւիկ եւ ա՛մենաոխերիմ տաճկահայատեաց Ա. Կարինեան, «Տնտեսական Լրաբեր» պոլշեւիկեան պաշտօնաթերթին մէջ գրած իր այլեւս հռչակաւոր յօդուածովը։*

...«Եթէ Հայաստանի դռները ամրապինդ փակուած են արտասահման թշուառութեան ճիրաններուն մէջ գտնուող դժբախտ հայ տարագիրներու առջեւ, անոնք, սակայն, լայնօրէն բացուած են դէպի Ռուսաստան գաղթողներու առջեւ։ Ու, թող չըսեն մեզի թէ, ինչպէս կը փառաբանէր Երկրագործութեան Քօմիսէրը, Տաճկահայերը քիսըրիճիներ են, լուցկի ծախելու եւ գրամ շահելու համար կը փախչին կ'երթան Կովկաս, Պրիմ և այլուր, կամ փինաչիներ են, ինչպէս գեհկօրէն արտայայտուած էր Կրթական Քօմիսէրը։ Չենք ուրանար, որ Հայերու մէջ կը գտնուին քիսըրիճիներ, փինաչիներ, կինտօներ եւայլն, որոնք կուսակցական հմայքի շնորհիւ կը բարձրանան մինչեւ նախարարական աթոռները. բայց Հայերու չափազանց մեծամասնութիւնը կը սիրէ իր նախահայրերուն օճախը, եւ, ա՛մենազօրաւոր պայմաններուն խոկ հանդուրժելով, կառչած կը մնայ Հայաստանի հողին ու ջուրին։ Սուլթաններու եւ Ցարերու բռնապետական վարչութիւններուն տակ իսկ հայ աշխատասէր եւ հայրենասէր ժողովուրդը չէ քանդած իր պապենական բոյնը եւ լուցկի ծախելու համար օտար երկիրներ գաղթած։

...«Հողային ֆօնտի կողմէն աղքատ հռչակուող Հայաստանի ամէնէն արգասաբեր մասերուն մէջ, կը տեղաւորուին 30,000 թուրք գաղթականներ, որոնց առջեւ կը թուի թէ միշտ բաց են Հայաստանի դռները։ Իսկ Նախիջեւան, Ախալքալաք, Ղարաբաղ եւ Գանձակ հայաբնակ գաւառները կը ձգուին «դաշնակից» Վրաստանին եւ Ադրբէջանին, կամ անոնց հովանաւորութեան տակ «ինքնավար» կը հռչակուին, հակառակ ազգաբնակչութեան կամքին եւ ինքնորոշման սկզբունքին, զոր նուիրական հռչակած էին պոլշեւիկները իրենց տիրապետութեան առաջին օրերը»։

ԻՇԽԱՆ ՔԱՐՈԼԻ ԿԻՆԸ ԿԸ ԽՕՍԻ

Ռումանիոյ գահաժառանգ իշխան Քարոլի առաջին կինը, Լամպրինօ, մօտերս պիտի հրատարակէ ինքնակենսագրութիւն մը, դժբախտ կնոջ մը ցիշատակները։ Այս գիրքը, որ պիտի պարունակէ իշխան Քարոլի հետ փոխանակուած սիրային նամակները, ինչպէս նաեւ խիստ քննադատութիւններ Մարիա թագուհիի մասին, արդէն գայթյթ մը առեղծած են ռումանական պալատին մէջ։

ՕՐԸ ՕՐԻՆ

Սուրիոյ նոր վարչաձեւը

Վերջերս շատ խօսուեցաւ Սուրիոյ վարչաձեւին փոփոխութեան մասին։ Ֆրանսայի արտաքին նախարարութիւնը հերքեց Պէյրութի մէկ թերթին հրատարակած այն լուրը թէ Սուրիա միացեալ թագաւորութեան մը պիտի վերածուի, Լիբանան ինքնավար պիտի ըլլայ եւլն.։ Սուրիոյ ազգայնականներն ալ հաշտուած կ'երեւին Ֆրանսացիներուն հետ։ Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին նստաշրջանը աւարտելէ առաջ, Շաբաթ օր Պռիան յայտնեց որ Սուրիոյ նոր Սահմանադրութեան քննութիւնը յետաձգուի ուրիշ նստաշրջանի մը։ Յետոյ կարդաց դրաւոր յայտարարութիւն մը, որուն մէջ կ'ըսէր թէ Սուրիոյ եւ Լիբանանի համար տեղական իշխանութեանց հետ համախորհուրդ պատրաստուած Սահմանադրութիւնը, ըստ հոգատարութեան սկզբունքներուն, նկատի պէտք է առնէ յիշեալ երկիրներուն մէջ բնակող բնակիչներու իրաւունքները, շահերն ու իդէալները, եւ նպաստաւորէ տեղական ինքնավարութիւններ, կարելիութեանց սահմանին մէջ։

Եւ սակայն այդ հողերուն մէջ բնակող ժողովուրդներու զանազանութիւնը և անոնց իրաւունքներուն հակամարտութիւնը շատ դժուարացուցին համերաշխութեան ջանքերը։ Ուստի առժամեայ սահմանադրութիւն մը տրուեցաւ միայն այն ինքնավար պետութեանց, որոնց մէջ ապրող զանազան տարրերուն միջեւ կարելի եղած էր համաձայնութիւն մը գոյացնել։ Այս մասնաւոր սահմանադրութիւնները կարեւոր հանգրուան մըն են դէպի ընդհանուր սահմանադրութեան մը ընդունելութիւնը, որուն համար անհրաժեշտ է որ իւրաքանչիւր պետութեան ներկայացուցիչները իրարու հետ բանակցին ու համաձայնութիւն գոյացնեն։ Այս ուղղութեամբ սկսուած ջանքերը դեռ եզրակացութեան մը չեն յանգած։ Հոգատար պետութիւնը ամէն ջանք կ'ընէ եւ շուտով կը յուսայ յաջողիլ։

Պոլշեւիկ մը ձերբակալուած Պոլսոյ մէջ

«Թայմզ»ի Պոլսոյ Թղթակիցը կը հեռագրէ Մարտ 11 Թուականով.—

Թուրք քաղաքական ոստիկանութիւնը քանի մը օր առաջ ձերբակալեց Պոլսոյ խորհրդային առեւտրական ներկայացուցչութեան գլխաւոր պաշտօնեաներէն Ագունօֆը, որ տակաւին բանտը կը մնայ։ Այս ձերբակալութիւնը խիստ ուշագրաւ երեւոյթ մըն է։ Ագունօֆի հայրենակիցները ամէն ինչ կ'ընեն զայն ազատ արձակել տալու համար։

Կ'ըսուի թէ շատ մը գաղտնի վաւերաթուղթեր գտնուեցան Ագունօֆի վրայ, երբ ձերբակալուեցաւ։ Այդ վաւերաթուղթերէն մէկ քանին կը վերաբերին Թուրքեւիրաքեան սահմանի զինուորական խնդիրներուն։ Այս ձերբակալութեան առթիւ դարձեալ ուշադրութիւն կը հրաւիրուի խորհրդային առեւտրական գործակալներու գործունէութեան վրայ։

Ռումիոյ առաջարկը Ռումանիոյ

Պուքրէշի պաշտօնաթերթը «Ընտէփէնտան» իր կիրակիի թիւին մէջ կը գրէ թէ Ռուսիա Գերմանիոյ միջնորդութեանը դիմած է Ռումանիոյ հետ համաձայնութեան մը գալու համար Պեսարապիոյ խնդրին մասին։

Ռուսիա կ'առաջարկէ որ Ռումանիա հրաժարի պահանջելէ 60 միլիոն տոլար արժէքով ոսկեղրամը, որ պատերազմի առեն Մոսկուա փոխադրուեցաւ՝ յառաջացող գերման բանակին ձեռքը չձգելու համար, եւ գոր վերջերս կարմիրները գրաւեցին։ Ռուսիա նոյնպէս կ'առաջարկէ բարեկամական դաշինք մը կնքել։ Այս ձեւով կը յուսայ Անգլիան զրկել իր լաւագոյն դաշնակիցներէն մէկէն։

Գերմանիա այս խնդրին միջամտելով ձեռք կը բերէ բազմաթիւ տնտեսական մենաշնորհներ։ Ազատական թերթ մը կը բողոքէ ասոր դէմ։ «Շ. Թրիպիւն»ի թղթակիցը վերջերս տեսակցած է ռումէն պետական մարդու մը հետ, որ յայտնած է թէ Ռումանիա կ'ուզէ չէզոքութեան դաշինք մը կնքել Ռուսիոյ հետ, եթէ այս վերջինը ճանչնայ Ռումանիոյ իրաւունքը Պեսարապիոյ վրայ։ Ռուսիոյ առաջարկը հիմա շփոթութեան կը մատնէ Ռումանացիները, քանի որ ատով Գերմանիա դարձեալ հրապարակ կ'ելլէ իբրեւ գործօն ու անկախ ազդակ մը եւրոպական խնդիրներու մէջ։

Անգլիոյ եւ Իտալիոյ փնտռած ուժերու հաւասարակշռութեան դրութիւնը երբեակ կողմեր ունի։ Գերմանիա Իտալիոյ հանդէպ իր դիրքը կը ճշդէ համաձայն այն դիրքին զոր Իտալիա կը բռնէ Ասարիոյ եւ Գերմանիոյ միացման խնդրին մէջ։ Մինչ Իտալիա այս միացան մէջ կը տեսնէ սպառնալիք մը հարաւային Թիրոլի իր հողերուն դէմ։

Լրտեսական ցանցի մը առաջակը

Պոլսոյ քէմալական «Միլլիյէթ» թերթը սկսած է յօդուածաշարք մը հրատարակել, «Օսմ. մայրաքաղաքին մէջ գործող լրտեսներ»ու մասին։ Եւ իրբեւ առաջին դրուագ, կը պատմէ Հայտար Փաշայի կայարանին զինամթերքին պայթումը, որ տեղի ունեցաւ 1916ի վերջերը։ Այդ պայթումը կազմակերպող մարմնին անդամներուն եւ օժանդակներուն մէջ կը յիշէ նաև Գր. Զօհրապի, Գ. Փաստրմաճեանի, Գ. Նորատունկեանի, Յա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

«ՊԱՇՏՊՕԶՈՒԹԻՒՆ» ԽՄԲԱԿԸ

Ինչպէս գրած էինք ամէն առաջ, Զօր. Թորգոմ վերջերս Սեւանիկ գնաց, եւ ուղեց համերաշխութեան գալ Դաշնակցութեան հետ, Յունաստանի վճճերը դադրեցնելու համար։ Զօրավարը կը ներկայանար Ռամկավար կուսակցութեան վկայականով, եւ իբր այդ, կոչ մը հրատարակեց ընկեր Յ. Ամատունիի հետ։ Երկու կողմերը ուրիշ կարգ մը հայրենակիցներ ալ հրաւիրելով, համաձայնած էին որ բացարձակապէս չէզոք վարչութիւններ կազմուին Սեւանիկի եւ Աթէնքի մէջ։ Առաջինը կազմուեցաւ. իսկ երբ խնդիրը Աթէնքի եկաւ, խառնակիչները ամէն միջոցի դիմեցին որ խափանեն։ Կարմիր աքլորները իբրեւ իտալական կառավարութեան լրտես ներկայացուցին Թորգոմը, որ իրենց աչքին լոյսն էր երէկ, իսկ Ռամկավարները, որ անոր անունով երդում կ'ընէին, նմանապէս երես դարձուցած են։ «Ազիք»ի (5 Մարտ) մէջ կը կարդանք հետեւեալ ազդը.—

«Զօր. Թորգոմի մասին Ռամկավար Ազատական կուսակցութեան շրջ. վարչութիւնը պէտք կը զգայ յայտարարել թէ՝ Սեւանիկի մէջ, տեղական ազգային գործերու շուրջ, բաղձացուած հաւաքաշխութիւնը գոյացնելու համար կատարուած խորհրդակցութեանց առթիւ, միայն տեղւոյն Ռամկավար Ազատական ընկերներէ ոմանց կողմէ, Զօր. Թորգոմի եղած յանձնարարութիւնը տեղւոյն մէջ կասարուած խօսակցութեանց հետ վերջ գտած ըլլալով, ո եւ է հանգամանք չի ներկայացներ։»

ԲԱՐԲԵՐՈՒ ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մոսկուայի քննիչ մարմինը հետազօտած էլիպքնէֆի ճեմարանի ուսանողական հանրակացարանը՝ բարքերու տեսակէտով։ Եւ երեւան հանուած է, թէ «շատ ժամանակէ ի վեր սովորութիւն դարձած է, որ, յաճախ, այրերու սենեակներու մէջ կը գիշերեն կիները, իսկ կիներու բաժնին մէջ՝ այրեր. ամուսիններն են, որ կուգան իրենց զոյգերուն քով պառկելու։ Նոյն սենեակներուն մէջ կը մնան եւ ամուրիներ։ Հանրակացարանին մէջ յաճախ տեղի կ'ունենան կերուխումեր ու քէֆեր, սրիկայութիւններ եւ ուրիշ հակընկերային արարքներ»։

Ահա մէկը նման «արարքներէն»։ Ուսանող փ. սկսած է ապրիլ նոյն ճեմարանի ուսանողուհի Ֆ.ի հետ։ Բայց Ֆ. իմացած է, որ փ. ուրիշը կը սիրէ եւ նոյն իսկ ամուսնացած է։ Ֆ. կ'որոշէ թողուլ փ.ն եւ ապրիլ ուրիշի մը հետ։ փ. ինքզինքը անպատուած զգալով «սկսած է հետապնդել Ֆ.ն եւ բունի ստիպել, որ կենակցի իր հետ։ Եւ այս ամէնը տեղի կ'ունենայ, ընկերներու աչքին առջեւ, հասարակաց սենեակի մը մէջ, ուր կ'ապրին տղաներ ու աղջիկներ»։ Այլեւս չկրնալով հանդուրժել՝ Ֆ., ուրիշներուն ներկայութեան ըսած է թէ, պէտք է վերջ տալ այս վիճակին։ փ. կատղած՝ առած է սեղանի վրայէն մկրատը եւ վիրաւորած Ֆ.ն։

ՋՈՐԱԳԵՏԻ ՋՐԱԿԱՑԱՆԸ.— Լենինկրատ գացած են Հայաստանի ժողովրդական Գործավարներու խորհուրդին կողմէ լիազօր պատուիրակ Շափունց, ճարտարագէտ Անտրէեվ, խորհրդակցելու համար Զորագետի վրայ ջրակայանի մը շինութեան մասին։ Կայանին համար Լենինկրատի գործարաններուն տրուած է 2,5 միլիոն րուբլիի ապսպրանք։

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ ՓՈՂՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԱՐՈՒՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴՐԵԼ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Ընկ. Ս. Ղազարյանի զեկուցումը

Ընկ. Ս. Ղազարյանի զեկուցումից հետո ելույթ ունեցավ ընկ. Ա. Ղազարյանը, որը նշեց, որ ընկ. Ս. Ղազարյանի զեկուցումը ամբողջական է և ընդգրկում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման բոլոր հարցերը։ Ընկ. Ա. Ղազարյանը ասաց, որ ընկ. Ս. Ղազարյանի զեկուցումը ամբողջական է և ընդգրկում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման բոլոր հարցերը։ Ընկ. Ա. Ղազարյանը ասաց, որ ընկ. Ս. Ղազարյանի զեկուցումը ամբողջական է և ընդգրկում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման բոլոր հարցերը։

ՊՈՍՏԱԼՈՎ

ՎԱՊՈՒՍԿԱՆԱՅ

Ի.

Ասոնք վիպակներ կ՚ընծայէ ինքզինքին մեր ժամանակներու ամենէն ինքնատիպ վիպասաններէն մէկը՝ Ալեքսանտր Պոստալով։ Ասոնք ամենէն աւելի ինքզինքին վրայ ծռած վիպասանի մը գործեր են։ Ասոնք ամենէն աւելի ինքզինքին մէջ

րութիւն Պօշկէզէնեանի, յոյն մէպուսներէն Քօզմիտիի, և յոյն ու արաբ ուրիշ մէպուսներու անուննները։

«Ճիւմհուրիյէթ», անդրադառնալով այս յօդուածաշարքին, կը գրէ.—

«Որպէս թէ պատմութեան յենլով՝ երեւակայական պատմութիւններ հրատարակել.— ահա՛ հիւանդութիւնը որմէ գէշ կերպով վարակուած են կարգ մը թուրքերէն թերթեր։ Մամուլին պարտականութիւնն է արգելք ըլլալ այս ախտին։

«Լրտեսները ի՞նչ ըրին Օսմ. մայրաքաղաքին մէջ» վերնագրով յօդուածաշարքը, ասկէ առաջ յիշած էր պատերազմական նախարարութեան Շուէտացի երեւակայական յանձնաւոր Թրավէնսթրէն մը. մինչդեռ այս անունն անգամ շուէտական չէ։ Հիմա ալ կը յիշէ իրական անուններ, որոնց մէկ մասը մեռած, մէկ մասն ալ ողջ է։ Անգլ. լրտեսական ցանցին գլուխը կայ եղեր նաեւ Քօզմիտին, որ «սատանայ մարդ էր, եւ գիտէր թուրքերէն աւելի թուրք երեւալու միջոցը»։ Մինչդեռ այդ մարդը շատոնց դուրս տուած էր իր գոյնը, եւ Սելանիկ փախաւ, երբ Իթթիհատականները գործի գլուխ անցան, Քեամիլ փաշայի դահլիճը տապալելով։ Ընդհ. պատերազմի ընթացքին, Քոզմիտի ոչ երեսփոխան էր, ո՛չ պոլսոյ մէջ էր, ոչ ալ հետեւաբար կ'աշխատէր թուրքէն աւելի թուրք երեւիլ։

«Յօդուածաշարքին հեղինակները երբ չեն գիտեր Քոզմիտիի նման շատ նշանաւոր անառակի մը կացութիւնը, կարելի՞ բան է որ տեղեակ ըլլան անգլ. լրտեսական ցանցին բոլոր գաղտնիքներուն, քանի որ կ'ըսեն թէ այդ ցանցը՝ ոստիկանական կազմակերպութենէն եւ հակալրտեսական խումբէն՝ օձիքը ազատելու չափ կատաղի է եղեր»։

Աւելցնենք որ յիշուած Հայերէն ալ ոչ մէկը մասնակցութիւն կրնար ունենալ, քանի որ Գր. Զօհրապ սպաննուած էր, Փաստրմաճեան Կովկաս անցած էր, իսկ Պ. Նորատունկեան ալ Լօզան կը գտնուէր։

Պարսկաստան եւ Պոլշեւիկները

Թէհրանէն Մարտ 13 թուակիր հեռագիր մը կ'ըսէ թէ քիչ մնաց որ Պարսկաստանի եւ Խորհրդային Միութեան միջեւ յարաբերութիւնները խզուէին։ Շաբաթ օր Շահը իր մօտ կանչեց խորհրդային դեսպանը, որուն հարցուց թէ ի՛նչ վիճակի մէջ են ռուսեւպարսիկ առեւտրական դաշնագրին բանակցութիւնները։ Դեսպանը պատասխանեց թէ ինք չի կրնար բանակցիլ դաշնագիր կնքելու համար, քանի որ պարսիկ կառավարութիւնը թոյլ կուտայ իր ժողովուրդին խօսելու, գրելու եւ գործելու ազատութիւն։ Ու առաջարկեց որ Պարսկաստան պատուիրակութիւն մը ղրկէ Մոսկուա, այդ մասին բանակցութիւնները վարելու համար։

Շահը, իբրեւ զինուորական, այս պատասխանէն զայրացած, կանչել տուաւ վարչապետը եւ հրամայեց անոր յարաբերութիւնները խզել Ռուսիոյ հետ և անմիջապէս դադրեցնել նաւերու պարպումը։ Վարչապետը հանդարտեցուց Շահը, ցոյց տալով անոր այն վտանգները որոնք կրնային առաջ գալ այսպիսի հապճեպ արարքէ մը։

Դահլիճը, յետ խորհրդակցութեան, որոշեց պատուիրակութիւն մը ղրկել Մոսկուա և կնքել համաձայնագիր մը նաւահանգիստներու մէջ ապրանքներու փոխանակութեան եւ անոնց գիներուն մասին։ Այս ձեւով Պարսկաստանի մէջ գտնուող խորհրդային թրքսթները պիտի ստիպուին լուծուիլ։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱՐՏ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սոֆիայէն կը հեռագրեն.—

Սոպրանիյէի մէջ արտաքին գործերու ելմտացոյցին քուէարկութեան առթիւ ծագեցաւ կարեւոր վէճ մը, որու ընթացքին գլխաւոր կուսակցութեան ներկայացուցիչները պարզեցին իրենց տեսակէտները Պուլկարիոյ արտաքին քաղաքականութեան մասին։ Նիստը փակուեցաւ արտաքին նախարար Պուրօֆի մէկ ճառով։

Ամէնէն ուշագրաւ եւ ծափահարուած ճառը արտասանեց նախկին վարչապետ Տանէֆ, որ յիշելով թէ երկար ատենէ ի վեր կողմնակից եղած է պուլկարեւեուկօսլաւ մերձեցման մը, քննեց այդ մերձեցումին ներկայ կարելիութիւնները։ Տանէֆ շեշտեց թէ սերտ մամուլին այնքան յեղյեղած «քօմիթէճի»ներու խնդիրը գրեթէ լուծուած է. անոնց գործունէութիւնը արդէն զգալապէս թուլցած է եւ բոլորովին պիտի մարի այն օրը, ուր պատշաճ ազատութիւններ տրուին Մակեդոնիոյ քնակիչներուն։ Պուլկարիան իր կարգ մը նախկին դաշնակիցներուն պէս չազատագրուած հողերու խնդիր չունի եւ կը փափաքի ուղղակի համաձայնիլ իր դրացիներուն հետ։ Պատերազմէն ի վեր բոլոր պուլկար դահլիճները ազդուեցան յեղափոխութիւններէ ու միշտ նախաձեռնարկ եղան բանակցելու Պելկրատի հետ, սակայն դժբախտաբար մերձեցումի մը գաղափարը շատ մօտիկ չէր Եուկօսլաւիոյ ժողովուրդին սիրտին, քանի որ ոչ միայն Ցանքոֆի Պելկրատ կատարած դիմումը արձագանգ չգտաւ, այլ եւ Պուլկարիոյ յարուցած բոլոր խնդիրները՝ մասնաւորապէս գաղթականներու փոխադրութեան եւ վարձկան զօրքերու ջնջումին մասին՝ բուռն ընդդիմութեան բախեցան Պելկրատի մէջ, եւ որ ի վերջոյ յանգեցան Սօֆիա յանձնուած հաւաքական ծանուցագրին։ Եւ սակայն յոռետեսութեամբ չվերջացնելու համար իր ճառը, նախկին վարչապետը յոյս յայտնեց որ եուկօսլաւ կառավարութիւնը ի վերջոյ պիտի հասկնայ կացութիւնը եւ նկատի պիտի առնէ երկու դրացի երկիրներու շահերը։

Արտաքին նախարար Պուրօֆ ըսաւ թէ Պուլկարիոյ գլխաւոր նպատակն է աշխարհը համոզել իր պահանջներու արդարութեանմասին։

Նաւթիւի անկումը մօտալուտ

Զին ազգայնական բանակը յաղթական կը յառաջանայ Եանկէ գետին երկայնքին եւ արդէն Նանքինի 30 մղոն մօտեցած է։ Նանքինի թերթերը արդէն ազգայնականներու ձեռքն ինկած են եւ մէկ երկու օրէն քաղաքի անկումին կը սպասուի։

Չի կարծուիր թէ զօր. Շանկ-Յուն-Շանկ Քիանկսուի նահանգը պաշտպանելու ձեռնարկէ, այլ շուտով պիտի պարպէ Նանքինը՝ թոյլ տալու համար ազգայնականներուն, որ գրաւէն զայն։ Իսկ ինք պիտի երթայ Շանկայի ճամբով Եանկցէի հիւսիսը, միանալու Շանկ-Ցօ-Լինի բանակին եւ ուղղուելու դէպի Չանքէու, ուր տեղի պիտի ունենայ գլխաւոր ճակատամարտը։ Նանքին-Շանկայ երկաթուղագիծը օդը հանուած է։ Կ'ըսուի թէ Շանկայ մտած են արդէն 8000 ազգայնական զինուորներ, քաղաքային հագուստներով։ Ծովակալ Եանկ, Շանկայի չինական նաւատորմին հրամանատարը իր բոլոր սպաներով միասին ազգայնականներուն կողմը անցաւ։

ՖՈՒԹՊՕԼԻՍՏ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Կիրակի կէս օրէ վերջ Սէն-Մանտէ զուիցերական խումբի մարզարանին մէջ ֆութպոլի մրցում կար ֆրանսական Սթատ Օլէնպիկ Էսթ եւ զուիցերական մարզական խումբերուն միջեւ։ Խաղը սկսելէն 25 վայրկեան վերջ, Զուիցերացի կեդրոնի յառաջապահ Փօլլից կ'աշխատէր գնդակը ղրկել դէպի նշանակէտ, երբ Ֆրանսացի բերդապահ Լբպիտուա զայն արգիլելու համար Զուիցերացի յառաջապահին ոտքերուն մէջ ինկաւ այնքան դժբախտ ձեւով մը, որ Զուիցերացիին կօշիկը իր վիզի երակին զարնուեցաւ, ու Լբպիտուա շանթահար գետին ինկաւ, առանց արիւն կորնչցնելով։ Հանդերձարանին մէջ բժիշկ մը անհրաժեշտ խնամքները տուաւ, սակայն ի զուր, քառորդ ժամ վերջ երիտասարդ մարզիկը հոգին աւանդեց։

Ֆրանսական թերթեր մեծ գովեստով կը խօսին Լբպիտուայի վրայ, որ 24 տարեկան էր եւ ճանչցուած էր իբրեւ լաւ խաղացող։ Ակամայ մարդասպան Փօլլից Զուիցերացի յայտնի մարզիկ մըն է եւ գնահատուած է բոլորէն։ Լբպիտուայի մահուան լուրին վրայ, խաղը ընդհատուեցաւ։

Նշանաւոր հասչագողի մը ձերբակալութիւնը

Ոստիկանութիւնը կիրակի օր փասիի իր բնակարանին մէջ ձերբակալեց Հանրի Ռօշէթը, որ 1908ին շատ խօսեցնել տուած էր իր վրայ իբրեւ ճարպիկ խաչագող եւ բանտարկուած էր։

Ահա՛ թէ ի՛նչ կ'ընէր Ռօշէթ — կը հրատարակէր «Պուրս է Ֆինանս» անուն թերթ մը, իբրեւ գործակալութիւնը համանման թերթի մը՝ «Լը Մօնիթէօր Ֆինանսիէ»ի։ Մասնաճիւղեր ունէր Լիոն, Լիլ, Մարսիլիա, Լիմոժ եւ Թուր։ Այս կեղրոններուն մէջ ապրող հաւանական յաճախորդներու հասցէին «Պուրս է Ֆինանս» թերթը ձրի կը ղրկուէր որոշ ատեն մը։ Թերթին մէջ խօսքը կ'ըլլար կարգ մը արժեթուղթերու, որոնց մասին սակարանի թերթերը բնաւ տեղեկութիւն չէին տար։ Այս արժեթուղթերու գիները ամէն օր կը բարձրանային, եւ թերթին մէջ հրատարակուած յօդուածներ մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրէին անոնց վրայ։ Երբ բաւական պրոպագանդ կատարուէր, միջնորդ մը փառաւոր ինքնաշարժով մը այցելութեան կ'երթար յաճախորդի մը եւ զայն համոզելով քանի մը արժեթուղթ կը գնէր։

Այս ձեւով ծախուած կեղծ արժեթուղթերու ընդհանուր գումարը կը հասնի 40 միլիոն ֆրանքի. իսկ գոհերուն թիւը կը հաշուուի 10,000 հոգի։ Շատ մը յաճախորդներ արժեթուղթերու կտրօններուն չվճարուելէն մտատանջ՝ բողոքեցին կատիկանութեան, որ չուշացաւ խնդիրը քննել եւ խաչագողները երեւան հանել։ Հանրի Ռօշէթ կը գործէր 4-5 կեղծանունով։ Իր գլխաւոր մեղսակիցներէն էին Անտրէ Մէքսանտօ եւ Թորէլ, որոնք նոյնպէս ձերբակալուեցան։

Ռօշէթ, որ նախապէս սրճարանի սպասաւոր էր, 1906ին ալ այս տեսակ գործեր ըրած եւահաղին դրամ գարկած էր։ Այն ատեն կը հրատարակէր Քրէտի Մինիէ, Ֆինանս փրաթիք, Պիւլէթէն Էկոնոմատէը տը լա Պանք Ֆրանքօ-Էսփանեօլ, Ֆինանսիէ եւայլն։ Իր միջնորդները մասնաւոր դասախօսութիւններ ալ կուտային խնդրոյ առարկայ արժեթուղթերու մասին։ 1908ին ձերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ։ Մեծ պատերազմին, պատիժը վերջացնելէ յետոյ, զինուոր գրուեցաւ կեղծ անունով մը։ 1923էն ի վեր ձայնը չէր լսուեր։ Մինչեւ հիմա 250 ֆր. խորած է այս ձեւով։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. «Թաժակ» խումբի պելվիլի, ժօրէսի եւ շրջակաները բնակող ընկերները ժողովի կը հրաւիրուին այսօր՝ երեկոյեան ժամը 9ին, «Թոստում»ի սրահը, Faub. du Temple: կարեւոր օրակարգ:

Հ. Յ. Դ. Ուսանող. միութեան ընկ. ընդհ. ժողովը յառաջիկայ Ուրբաթ, Մարտ 18ին երեկոյեան ժամը 8.30ին Ծլօրիայի սրահը։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Հ. Ց. Դ. Սէն Շամօնի կոմիտէին ընկ. ընդհ. ժողովը կիրակի 20 Մարտ կէսօրէ վերջ ժամը 2.30ին վարուժան ակումբին մէջ։ Օրակարգ խիստ կարեւոր. կը հրաւիրուին բոլոր ընկեր-ընկերուհիները։ Ներկայանալ անդամատետրով։

Հ. Ց. Դ. Լիոնի «կայծակ» խումբի ընկերները ժողովի կը հրաւիրուին վաղը՝ Դշ. երեկոյ, խումբի սրահին մէջ։

Հ.Ց.Դ. Մարսէյլի «վարդգէս» խումբի ժողովը 20 Մարտ, կիրակի կէսօրէ վերջ, ժամը 3.30ին 63, Rue de la Républiqueի սրահը։

Հ. Մ. Ը. Մ.ի Պէլվիլի մասնաճիւղի ընդհ. ժողովը՝ այս իրիկուն ժամը 8.30ին, 40 Բիս ու Պէլվիլ։

ԸՆԾԱՆԵԿԱՆ երեկոյթ - պարահանդէս, 19 Մարտ 1927, Շաբաթ գիշեր, ժամը 9էն մինչեւ առաւօտ, 12 Rue du Renard, մէթրօ Հոթէլ ու վիլ։ Ներկայացում, երգ, արտասանութիւն եւ պար։ Ձագ-պանտ։ Մուտք՝ 5, 10 եւ 20 ֆրանք։

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ.— Հինգշաբթի, 17 Մարտ, ժամը 9ին, Սալ Քոմէտի, 51 Ռիւ Սէն Ժօրժ։ Գեղարուեստական մասէն առաջ պիտի բանախօսէ Պ. Ժակ Քայղէր, նիւթ ունենալով «Մակեդոնիա եւ Պալքանները։ խաղաղութիւնը»

ՓԱՐԻԶԻ Հայ Ուսանողական միութեան հրապարակային դասախօսութիւնը վաղը՝ Չորեքշաբթի գիշեր Sociétés Savantesի մէջ, Métro : St.-Michel—Odéon՝ կը խօսի Կ. Յ. Բասմաջեան «թաչակիրները եւ Հայերը» նիւթին վրայ։ Մուտք՝ 1 ֆրանք։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի ՕՐ ԱՌԱՋ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել համապատասխան օրուան։

Կ'ուզուի

ժամագործութիւն սորվիլ ուզող աշակերտ մը 16 - 18 տարեկան։ Դիմել՝ Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

Կահագործ

ժամն գինեբովի կը շինուին եւ կը նորոգուին անական կարասիներ, զրասենեակի սեղաններ եւայլն, ծախու են թրքական թաւվուններ։ Դիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ՎԱՐԶՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Վարձու է դիւրամատչելի պայմաններով յարկաբաժին մը որ կը բաղկանայ երկու սենեակներէ եւ խոհանոցէ մը, Route de Versailleի վրայ, Billancourt։ Դիմել՝ նախկին Մոսկուա-Կովկաս ճաշարանը, 41 Rue de St. Cloud, Billancourt.

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՏԷՐ ԵՒ ՏՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՃՕԼՕԼԵԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**

9 RUE PAPILLON, PARIS IX

Square Montholonի դիմաց Rue Lafayetteի կից

Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ժամը 9էն 6։ Գեղարուեստական ճաշակով պատրաստուած անձերի աշխատութիւններ։ Ինքնուիներ խնամուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ։

ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՁԱՅՆԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ

Շամեդ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՓՐԱՆՍԱՀԱՅԵՐՈՒՆ

Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ։ Թարգմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով։ Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ։

ԱՐԱԳ ՁԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

VAHAN YARJANIAN

CONTENTIEUX

5 Rue Cardinal Mercier Paris, (9e)

Tél. CENTRAL 96-70 կամ 97-39 Métro: CLICHY

» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ

Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9-12 և 2-7 բացի Կիրակի

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսացի Տիկ. Էֆգարէս Ճամճեան եւ որդիքը Շրանտ եւ Մարի Ճամճեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Յ. Ճամճեան, այժմ 27 տարեկան, որ գաղթականութեան միջոցին «Ատրբնազտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։ Յեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Rue Villeroy Lyon. France.

— կը փնտռուին Սիւքաստացի Գեղամ Ասատուրեան եւ իր քոյրը Փիփէ Ասատուրեան որոնք 7—8 ամիս առաջ Գավալայէն Մարսէյլ եկած են։ Իմացնել՝ Nichan Chirinianի Dugradu par Ucel (Ardèche):

— Կիրասոնցի Արմենակ եւ Մնացական Շահիրիկեան եղբայրները, որոնք ընդհ. պատերազմէն առաջ Մարզուանի գօլէժը կը գտնուէին։ Գրել՝ իրենց հօրաքրոջ որդին Vartan Tchakarianի, 46, Str. Fund Despot-Woda, Bucarest (Roumanie).

ԿԸ ՇԻՆՈՒԻՆ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻՆ

Նպաստաւոր պայմաններով կապարէ, թիթեղէ, զինկէ եւ ապակիէ ամէն տեսակ գործեր (ջուրի, ելեքտրական, կազի խողովակներ եւայլն), փարիզ եւ արուարձանները։

Դիմել կամ գրել՝ LOUDER FÉNERDJIANի, 83, Rue de la Bienfaisance, Blanc-Mesnil (S.-et-Oise).

ԳՕՐԾԱՁՈՒԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Մագ կտրել եւ սափրուիլ

3 ՖՐԱՆՔ

ԱՆՑՈՒՆ ՔԻՒՉԻՒՔԵԱՆ

Դիմել՝ 28 Rue Traversière, Billancourt (Seine).

IMPRIMERIE - **MASSIS** - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերլեմեանի ՖՐԱՆՔՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ

15 Բիւ տէ Տօմինիքէն

ՎԻԼՆԻ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼ

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՏԷ ԶԷՋԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մանուկ տարագրեալ Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մի՛երգ մը ունի մատենադարանի դիրքերու։

Դիմել, — Librairie Hagachène, 9 Agopian Hamp. Tchakmakdjilar, Constantinople.

ԱԿԱՐԱՆ

14 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.
Ոսկերին,	L. St.	124 —
Տոլար,	Dollar	25 50
Մարք (ոսկի) 100 Mark		605 —
Թրքական Ոսկ. L. Trq.		12 —
Թրք. ոսկի » or		115 —
Մէճիտիէ	Médjidié	9 —
Լէվա 100 հատ	Léva	18 50
Տրախմի »	Drachme	32 —
Լիր »	» Lire	113 —
Պելժ. ֆրանք »	Frc. Belge	71 20
Զուից. »	Frc. Suisse	491 50
Լէյ 100 հատ	Ley	15 65
Չերվոնեց	(10 Roubles or)	95 —

ԱՐԺԵԹՈՒՂԹ	
Եգ. Քր. Յանսիէ I Cr. Fonc. Eg.	3070 —
» II »	1940 —
» III »	1735 —
Ռումելի երկաթ. Lots turcs	160 —

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
16
ՄԱՐՏ
1927

16 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 286

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԽՐԿԱՒ ԽՕՍՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿՐԿՆՈՒԻ

Հին աղուէսները, քաղաքական խաղերու վարպետները Լոզանի վերջնական ուշադրութիւնը կեդրոնացուցած են, նորէն, Մոսուլի վրայ, մօտաւորէն մինչեւ հեռաւորը:

Զինաստանի մէջ, դէպքերը կ'ընթանան անսովոր արագութեամբ: Այդ անսահման երկիրը, որ մինչեւ հիմա ծանօթ էր իր մահաճոյն թմբիրով, այսօր աշխարհը կը զարմացնէ արշինթց եւդրդագին ոստումներով: Փէքինի կեդրոնական, կրատական իշխանութիւնը անդամալոյծ է արդէն, եւ հարաւը, ապստամբ երկրամասը անարգել կը շարունակէ իր արշաւը: Ամէն օր բազմաթիւ հաւատարիմներ, մինչեւ անգամ զօրավարներ եւ ծովակալներ կը լքեն կեդրոնը եւ կը միանան ազգայնական ուժերուն:

Զինական դէպքերու զարգացման ընթացքը շատ կը նմանի մեզի Թուրքիոյ անցուդարձերուն:

Այնատեն ալ կար «օրինաւոր» կառավարութիւն մը, եւ ապստամբ ուժ մը: Կեդրոնը, Պոլիսը, վճիռներ արձակեց ըմբոստներուն դէմ եւ «զսպիչ» գունդեր դրկեց, մահուան դատապարտելով Մուսթաֆա Քէմալը: Այն ատեն ալ, Անգլիան էր որ կը խթանէր կեդրոնը, եւ կը մղէր զայն ոչնչացնել ըմբոստները: Ինք ամէն միջոց ունէր խելքի բերելու միլլի հրոսախումբերը, բայց կը նախընտրէր ցեղակիցը ցեղակիցին միջոցաւ ջարդել, ինչպէս կ'ընէ, այսօր Զինաստանի մէջ: Իր մարտանաւերն ու զինուորները կազմ և պատրաստ կեցած են չինական ջուրերուն մէջ, բայց անոնք չեն որ արիւն կը թափեն, այլ Զինացիները իրենք, հիւսիսն ու հարաւը մէկ-մէկու կոկորդին փարած:

Ապահովաբար տարբեր չպիտի ըլլայ ելքն ալ: Ինչպէս որ Թուրքիոյ մէջ պաշտօնապէս «աւազակապետ» հռչակուած Մուսթաֆա Քէմալը դարձաւ պետը Թուրքիոյ ազգային կառավարութեան, եւ իբր այդ՝ հրաւիրուեցաւ ներկայացուցիչներ ղրկելու Լոնտոն եւ բանակցելու, շուտով Քանթոնցի ապստամբապետն ալ կը սանձայ օրինաւոր հանդամանք, եւ կը դառնայ արժանի՝ հաւասարէ հաւասար խօսելու Չէմպըլէններու հետ:

Արդէն իսկ, Լոնտոն սկսած է հաճութեամբ խօսիլ չինացի ժողովուրդի իրաւունքներու մասին: Եւ կը խոստովանի թէ, չին գաղնագիրներուն ժամանակը անցած է, եւ կացութիւնը նոր պահանջներ կը ներկայացնէ: Բայց մինչեւ այդ, իր մարտանաւերը շոգեպլոյտ կը սպասեն, որպէսզի Անգլիացիի մը քիթը չարիւնի. իսկ միւս կողմէ իր դիւանագիտական գործակալները երկու ճակատի վրայ կը գործեն, որպէսզի կռիւը շարունակուի չին ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ: Միլլի շարժման ատեն ալ, Պոլիս խարսխած բրիտանական հրամանատարութիւնը կ'օգնէր ե'ւ Պոլսոյ կառավարութեան և' Էնկիւրիի, կը խաբէր ե'ւ բարեկամը ե'ւ թշնամին, Թուրքիայէն մինչեւ Կովկաս:

Տարօրինակ զուգադիպութեամբ մը, այս նոր ռազմախաղին մէջ, խորհրդային իշխանութիւնն ալ կը կատարէ ճիշտ այն դերը զոր ստանձնած էր թրքական շարժման ատեն: Ոտքով ձեռքով կապուած «յեղափոխական» Տաճկաստանին, ամէն արդիւնութիւն ոտքի տակ առած՝ անոր փրկութեան եւ զօրացման համար, Մոսկուա անհաշիւ դրամ, զէնք եւ ռազմանիւթ կը հասցնէր թուրք ազգայնականներուն: Եւ երբ տեսաւ որ զղտազգի, նաւակներով, մաքսանենգութեամբ եղած առաքումները անբաւական են, վճռապէս պահանջեց Հայաստանէն՝ բանալ բուն ճամբան՝ Կարսը: Ու յաջողեցաւ ունենալ այդ ճամբան, Հայաստանի խորտակման գնով:

Նոյնը եւ այսօր: Ինչպէս թրքական շարժման, Զինաստանի այսօրուան դէպքերուն կենքահայրն ալ Մոսկուան է: Ամէնուշտ չինացի ժողովուրդը արթնցած է եւ ազգային ոգին բռնկած: Բայց ներկայ պայքարին մղիչ ուժը՝ կոմինտէրնն է, իսկ անոր նշանակէտը՝ բրիտանական աշխարհակալութեան տապալումը: Չինացիները կրնային իրենք իրենց գլխուն ալ կոտրիլ, բայց բոլորովին ծարբեր պայմաններու մէջ: Միլլի Թուրքիան ալ կրնար շարունակել կռիւը, եւ չարաչար պարտուիլ, առանց պոլշեւիկներու գործօն աջակցութեան: Ու մինչդեռ չինական յաղթանակով ժողովուրդ մը պիտի ազատագրուի առանց ուրիշին ինասելու, Թրքական յաղթանակը ուրիշներու գերեզմանը փորեց, տապանաքարն ալ պոլշեւիկներուն կնքել տալով:

Ըսել կ'ուզենք թէ՝ այս դիւային խաղերուն մէջ, ժողովուրդներուն շահը չէ որ մղում կուտայ դէպքերուն, այլ քաղաքագէտներուն կողմնացոյցը:

Արեւելքը՝ խառնարան մը եղած է դարերով, բայց մանաւանդ ժամանակակից շրջանին: Երկու հսկաներ, Անգլիա եւ Ռուսիա կը դարձնեն անոր բախտին անիւը, մերթ բարձրացնելով, մերթ ճզմելով այս կամ այն ժողովուրդը: Մինչեւ հիմա, անոնք ուժ կը գտնէին քնացնելով Արեւելքի ժողովուրդները: Այսօր, երբ ժամանակները փոխուած են, անոնք դարձեալ կը շարունակեն հին խաղերը, արթնցողները իրարու դէմ հանելով:

Այս խարդախութեան եւ դարաւոր մրցակցութեան ուրիշ մէկ երեւոյթը կը տեսնենք Պարսկաստանի մէջ,— նոյնպէս հնաոճ եւ թմրած երկիր մը, որ սակայն կը շահագործուի նոյնքան խորամանկութեամբ:

Կը խօսինք այդ մասին ալ:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՀԱՐԻՒՐԻՆ ՔԱՆԻՆ ԿԸ ՄԵՌՆԻ

Պոլսոյ «ձիւմհուրիյէթ» լրագիրը նորէն կ'արծարծէ Թուրք մանուկներու նուագման խընդիրը: Ինչպէս գրած էինք ասկէ առաջ, վերջին վիճակագրութեան մը համաձայն, կարգ մը շրջաններու մէջ Թուրք մանուկներու 75 առ հարիւրը կը մեռնի: Առողջապահական գործավարութիւնը չափազանցութիւն համարած ըլլալով այս համեմատութիւնը, «ձիւմհուրիյէթ» երկրորդ խմբագրականով մը դիտել կուտայ.

— « *Գործավարութիւնը 25 առ հարիւր կը ցուցնէ մանուկներու մահացութեան համեմատութիւնը: Անկախ այն հանգամանքէն թէ այս չափն իսկ շատ է, պէտք է դիտել տալ թէ ատիկա ալ ստուգուած չէ: Դիտենք մեր երկրի առողջապահական կազմակերպութիւնը, եւ դժբախտաբար հեռու ենք հաւատալէ թէ, այդ կազմակերպութեան հաւաքած թիւերը իրականութեան կը համապատասխանեն:*

«Առողջապահական գործավարութիւնը կ'ապաւինի մեր ցեղին բազմածնութեան: Ասիկա ճիշտ է, բայց կապ չունի գործավարութեան հետ: Այո', իր պարտականութիւնն է զբաղիլ հանրային առողջութեամբ, բայց վերջապէս մեր կեանքին տէրը չէ, եւ մենք իրաւացի ենք, երբ մերթ ընդ մերթ կը վրդովուինք, մահերու թիւին շատութեան առջեւ:

«Գալով այն առարկութեան թէ՝ խնդիրը քաղաքական կարեւորութիւն եւ փափկութիւն ունի, պէտք է դիտել տալ թէ հանրապետական Թուրքիոյ մէջ այլեւս տեղ չունին այս տեսակ նկատումներ, որոնք միայն հանդուցեալ Պապը Ալիին կը վայլէին:»

ԼԵՌՄԸ ԴՏՆՈՒԵՑԱՒ.— Այո', աշխարհագիր դիտնականները լեռ մը գտան: Ռուսիոյ երկրային ովկէանոսին մէջ, Եապութներու երկրին վրայ յաղթ կը կանգնի այս լեռը, որուն մասին աշխարհագրութեան դիրքերը տեղեկութիւն չունէին, պարզապէս կը կարծէին զայն վարդագոյն դաշտ մը: Փրոֆ. Նօքալսքի, կ'ըսէ թէ այս գիւտը մեծ կարեւորութիւն ունի, որովհետեւ արկածի բազմաթիւ սիրահարներ, որոնք կը տառապէին անձանօթ երկիրներու կարօտէն, քննութեան պիտի վազեն այս լեռան վրայ:

Լեռը երկար շղթայ մըն է եւ կը տարածուի հազար քիլօմէթր երկարութեամբ: Ունի 300 քիլօմէթր լայնութիւն եւ 3,300 մէթր բարձրութիւն:

ՈՍԿԵՒՈՅՆԵՐԸ.— Երկու Անգլիացիներ եւ մէկ Ամերիկացի Փանամայի կառավարութենէն արտօնութիւն ստացած են պեղումներ կատարելու համար Փանամա քաղաքին մէջ: Համաձայն ոսկեխոյզներուն, 18րդ դարուն անգլիացի նշանաւոր ծովահէն մը, Մօրկըն անհատին գանձ մը թաղած է քաղաքին եկեղեցիին տակ: Արդէն կատարուած պեղումներու շնորհիւ, ոսկեխոյզները գտած են ոսկեայ վարդեր, ադամանդներ, շափիւղաներ, յակինթներ, զմրուխտներ եւ այլ թանկագին քարեր, որոնք պիտի բաժնուին կառավարութեան եւ երեք ոսկեխոյզներուն միջեւ, անմիջապէս որ աւարտին բոլոր պեղումները: Պեղումներու շնորհիւ, երեւան եկած են փապուղիներ եւ ջրամբարներ:

ՕՐԸ ՕՐԻՆ

Ռուսեւթուրք առեւտրական դաշնագիրը

«Թայմզ»ի Պոլսոյ Թղթակիցը կը հեռագրէ Մարտ 13 Թուականով.—

Թուրքեւխորհրդային առեւտրական դաշնագիրը, որ ստորագրուեցաւ Էնկիւրիի մէջ, մեկ տարուան արժէք ունի եւ կրնայ ինքնաբերաբար նորոգուիլ, բացի այն պարագայէն, ուր դաշնագիրը կողմերէն մէկն ու միւսը ուզեն վերջ տալ անոր:

Դաշնագիրը բաժնուած է երեք մասի. առեւտուր, բնակութիւն եւ նաւարկութիւն:

Թուրքիայէն խորհրդային երկիրները կատարուած արտածումները տարեկան 7ուկէս միլիոն Թրքական ոսկիէն աւելի չեն կրնար ըլլալ եւ այդ արտածումներէն մէկ մասը պէտք է կատարուի սովետական առեւտրական գործակալութեանց միջոցաւ: Սովետները Թրքական ամէնէն կարեւոր ապրանքներէն մաքսատուրք պիտի գանձեն ասիական սակին համաձայն, այսինքն ամէնէն վար գինը. իսկ միւս արտադրութիւններէն՝ ամէնէն նպաստաւորեալ ազգի սակացոյցին հիման վրայ:

Պաշտօնապէս կը հաղորդուի թէ խորհրդային երեք առեւտրական գործակալներ դիւանագիտական առանձնաշնորհներ պիտի վայելեն Թուրքիոյ մէջ եւ թէ արտահողային անձեռնմխելիութիւն պիտի ունենան Պոլսոյ եւ Էնկիւրիի ոուս առեւտրական պատուիրակութեան գրասենեակները: Խորհրդային կառավարութիւնը նոյն առանձնաշնորհները պիտի տայ իր երկրին մէջ հաստատուելիք Թուրք առեւտրական հիմնարկութիւններուն:

Հետաքրքիր է տեսնել թէ այս առեւտրական համաձայնութիւնը ի՛նչպէս պիտի գործադրուի: Կարգ մը Թուրք վարիչներ չեն ծածկեր իրենց վախը համաչնաւոր քարոզութեանց տարածումին համար: Մինչ այս մինչ այն, Պոլսոյ ոստիկանութիւնը խիստ հսկողութեան տակ առած է Ռուսերը, առանց քաղաքական համոզումի խտրութեան, եւ ձերբակալած է կարգ մը «Սպիտակ»ներ, պարզապէս անոր համար որ անոնք զինուրագրական գրասենեակ մը բացած էին «Սպիտակ Ռուս»երը Զինաստան ղրկելու, կռուելու համար «կարմիր»ներու դէմ:

**** Էնկիւրիի կառավարութիւնը արտօնած է որ վերաբացուի Պոլսոյ հնագիտական ռուս հիմնարկութիւնը, փակուած 1914էն ի վեր: Այս հիմնարկութիւնը երկար տարիներ գլխաւոր վառարանը եղած է բիւզանդական քաղաքակրթութեան վրայ գիտական հետազօտութիւններու: Իր գիրքերն ու հաւաքածոները անվթար կը մնան Պոլիս: Վերաբացումը պիտի կատարուի գարնան եւ աշխատուժիւնները պիտի կազմակերպուին միջազգային հիման վրայ:*

Սուրիոյ կռիւները պիտի վերսկսին ?

«Թայմզ»ի Թղթակիցը Հայֆայէն կը հեռագրէ Մարտ 12 Թուականով.—

Հոմսէն հասած լուրերու համաձայն, նախապէս Ֆրանսիշխանութեանց հպատակութիւն յայտնող ապստամբները սկսած են դարձեալ գլուխ վերցնել, մանաւանդ հրոսախումբի վարիչ հարիւրապետ Ֆավզի Քավուքճի գաղտնապէս քաղաք կ'այցելէ: Քանի մը օր առաջ Հոմսի տանիքներուն վրայ ապաստանած ապստամբներ գիշերային յարձակում մը գործեցին պահակախումբի մը վրայ, որուն կ'ընկերանային չերքէզ կամաւորներ: Ընդհարման պահուն երեք Չերքէզներ վիրաւորուեցան: Օգնական ուժերը շատ ուշ հասան եւ չկրցան բռնել դարանակալ ապստամբները:

Հարիւրապետ Քավուքճի յայտարարած է որ եթէ ազգային պահանջները չգոհացուին, գարնան հաւանաբար կռիւները պիտի վերսկսին: Հոմսի մէկ մասը լեցուած է ապստամբներով: Ֆրանս. իշխանութիւնները սպառնացած են պաշարման վիճակ յայտարարել:

Լիոնի դատը վերջացած

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի Մայիս 2ին Լիոնի մէջ ընկեր Ահարոնեանի բանախօսութեան պահուն համայնավարները խռովութիւն հանած էին եւ խուճապի պահուն սպանած էր Մխիթար Պաղտասարեան անուն Մշեցի բանւոր մը: Համայնավարները ամէն ստոր միջոցներու դիմեցին այս ոճիրը բեռցնելու համար Դաշնակցութեան վիզին. նոյնիսկ սուտ վկաներով եւ զրպարտութիւններով քանի մը ամիս բանտարկել տուին երկու անմեղները՝ Պօղոս Թիւլպէնտճեան եւ Թագուոր Թագուորեան, որոնց անմեղութիւնը հաստատուելով ամիսներ առաջ ազատ արձակուեցան արդէն: Չարցաքննիչ դատաւորը անկէ ի վեր կը շարունակէր իր քննութիւնները:

Լիոնի մեր Թղթակիցը կը գրէ թէ մանրակրկիտ քննութենէ վերջ կարելի չէ եղած գտնել սպանիչը եւ հարցաքննիչ դատաւորը փակուած յայտարարած է խնդիրը, եւ պէտք չէ տեսած եղեռնադատ Ատեանին ղրկելու զայն:

Միայն Տեսինարնակ Յարութիւն Մուրատեան պիտի հեռատպղուի «հարուածի եւ վէրքի համար»: Ինչպէս կը յիշուի, Մուրատեանի ձեռքը կոտրած գաւազան մը գտած էին ոստիկանները:

(Լուրերու չարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՋՈՒՌՆԱՅՈՎ ԵՒ ԹՄԲՈՒԿՈՎ ԿԸ ՏՕՆԵՆ ԼԷՆԻՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Թիֆլիսի «Զարիա Վաստոկա» Թերթը (1 Մարտ) կը հրատարակէ հետեւեալ փաստաթուղթը.—

«Լէնինի մահուան 3րդ տարեդարձին առթիւ Հայաստանի Կաչաչքուրտ գիւղի երիտասարդ համայնավարներու կոմիտէն կազմակերպած էր հանդէս-ժողով մը, որու առթիւ կազմուած է հետեւեալ արձանագրութիւնը, զոր կը ներկայացնենք ամբողջութեամբ.

«Արձանագրութիւն No (Թիւը մեր տունը մնացած է).— 21 Յունվ. 1927 տեղի ունեցաւ բջիջի բաց ժողովը: Ներկայ էին՝ կոմսոմոլի անդամներ՝ 14, անկուսակցական երիտասարդներ՝ 26, անկուսակցական աղջիկներ՝ 10, պիոներներ՝ 30:

Հանգիստ.— Լէնինի մահուան երրորդ տարեդարձը, 1. խօսեցաւ կարապետ Թահմազեան 2. խօսեցաւ Սարգիս Թահմազեան, 3. խօսեցաւ Մովսէս Թահմազեան, 4. խօսեցաւ Յակոբ Դաւիթեան, 5, Մելսակ Թահմազեան, 6. Ղեդրաք Թահմազեան, 7. Սարիբէգ Դալլաքեան:

Որոշեցին.— 22—1—27 թ. Շաստարակութիւնը ուրախութեամբ, զուռնայով ու թմբուկով ոտնից ընկ. Լէնինի մահուան երրորդ տարեդարձը: Ջուռնաձիներն էին՝ 1. կամսար Դաւթեան, 2. վախտանգ Գալուստեան-Թմբկաձար, 3. Ալրզուման Տէր-Ալիքեան:

Ժողովի քարտուղար՝ կարապետ Թահմազեան. իսկականին համապատասխան է՝ գործավար՝ Քիւրտ Ղազօ»:

Ուրեմն, վրդովուած կը գրէ «Զարիա Վաստոկա»ն Կաչաչքուրտ գիւղի համայնավար երիտասարդները, անկուսակցական երիտասարդութիւնն ու պիոներները ուրախութեամբ տօնած են ընկ. Լէնինի մահուան երրորդ տարեդարձը: Ինչի՞ համար կ'ուրախանան բջիջն ու երիտասարդները. այն ալ զուռնայով ու թմբուկով, Լէնինի մահուա՞ն համար... Ինչո՞ւ ամբողջ մարդկութեան համար սուգի օրը Կաչաչքուրտ գիւղի երիտասարդութեան համար պէտք է ըլլայ տօնի եւ ուրախութեան օր:»

ԹՈՒՐԲԻՈՅ Ազգ. ժողովը դռնփակ նիստ մը դումարեց Մարտ 9ին, ամբողջ երկու ժամ: Թերթերը մեծ կարեւորութիւն կուտան այս դէպքին, առանց ո՛ր եւ է մանրամասնութիւն հաղորդելու:

**** Նոր փոփոխութիւններ կը կատարուին Թուրքիոյ դինուրական պատժական օրէնքին մէջ: Պատիժները պիտի սաստկանան: Անոնք որ երեք ամիս հրաւէրի չեն պատասխաներ զօրաշարժի ատեն, պիտի գնդակահարուին:*

**** Փոքրամասնութեանց իրաւունքներու մասին, Էնկիւրի հաղորդած է Ազգերու Դաշնակցութեան, թէ չի կրնար ընդունիլ իրենց տեսակէտը: Ուրիշ խօսքով, Թուրքիա կրկին կը մերժէ Լոզանի դաշնագրին տրամադրութիւնները եւ իր ուզած եղանակով օրէնք մը պիտի պատրաստէ բոլոր փոքրամասնութեանց համար:*

ՄԵԼՔՈՆեԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ.— Կը տեղեկանանք թէ Զաւէն արքեպս. տեղ Կիպրոսի Մելքոնեան հաստատութեան տնօրէնութեան կոչուած է Պ. Գրիգոր Կիրակոսեան, Գահիրէի ազգային վարժարանին տնօրէնը:

CCCP.

ՆՈՅՆ ՅԱՒԵՐԸ ՊԻՒՏՃԷԻ ԱՌԹԻՒ

Փետրուար 14ին բացուեցաւ Փետր. 20ին փակուեցաւ Խորհրդային Միութեան Գործադիր կոմիտէի հերթական երրորդ-նստաշրջանը։ Օրակարգի գլխաւոր հարցերն էին Միութեան պիւտճէն, մարդահամարի նախնական արդիւնքները, քրէական օրէնքներու կարգ մը յօդուածներու փոփոխութիւնը, պիւտճէի իրաւունքներու սահմանումը եւայլն։ Վերջին հարցը յետաձգուեցաւ յաջորդ նստաշրջանին։

Այս նստաշրջանը, ընդհանրապէս անզոյն անցաւ. «հատուածային կարգով» լուծուելիք խնդիրներ չկային։ Բայց եւ այնպէս հետաքրքրական ու բնորոշ կողմեր ունի։ Մեզ համար հետաքրքրական են օրակարգի երկու կէտերը, որոնց վրայ կանգ կ'առնենք։

Առաջինի՝ պետական պիւտճէն, որու քննութեան ժամանակ երեւան եկան չափէն աւելի բնորոշ տրամադրութիւններ։ Միութեան անդամ հանրապետութիւններու ներկայացուցիչները միաբերան կը բողոքէն կեդրոնին դէմ, որ բաւարար ուշադրութիւն չի դարձներ ինքնավար շրջաններու վրայ։ Գանգատներու դուռը բացաւ Ուկրաինայի պատգամաւոր Փոլոզ, որուն կարծիքով թերի է պիւտճէի օրէնքը, որ «բաւարար չափով չորշեր առանձին հանրապետութիւններու իրաւունքները։ Պիւտճէն կազմելու ժամանակ հաշուի չեն առնուիր իւրաքանչիւր հանրապետութեան առանձնայատկութիւնները, կըրճատումները կը կատարուին մեքենաբար»։ Առնենք, օրինակ, «Ուկրաինան մեր երկիրն է, որ կուտայ արտածման նիւթ կազմող ապրանքի զլխաւոր մասը. մեր մօտ կեդրոնացած է մետաղը, քարածուխը, երկաթը եւայլն։ Բնական է, որ մեր ազդաբնակութեան մշակոյթի պահանջները շատ աւելի բարձր են, քան այս կամ այն հանրապետութեան բնակիչներունը։ Մինչդեռ, կեդրոնին մէջ, պիւտճէ կազմելու ժամանակ, կը մեկնին միայն ազգաբնակութեան քանակէն։ Մեր, առանց այդ ալ ողորմելի պիւտճէն կեդրոնի մէջ կը կրճատուի։»

Միտքը պարզ է. ըսել կ'ուզէ, թէ, Ուկրաինան աւելի հարստութիւն կուտայ Միութեան, հետեւաբար եւ պէտք է աւելի դրամ ստանայ։ Մինչդեռ կեդրոնը Ուկրաինայէն առնուած դրամը կը յատկացնէ ուրիշ աւելի աղքատ շրջաններու։

Նոյն դանդատը ունին եւ Տաղիստանի պատգամաւոր Սամուրսկին. կեդրոնը բաւականաչափ ուշադիր չէ տեղական պահանջներուն։ Դեկտեմբեր ամսուն Խորհրդային Ռուսիոյ գործկոմը որոշած է 13 միլիոն րուբլի յատկացնել ինքնավար հանրապետութիւններու արդիւնաբերութեան եւ այդ հաշուով ալ կազմուած են ծրագիրներ։ Սակայն, ամիսներ յետոյ կեդրոնը այդ գումարը կրճատած է եւ որոշած յատկացնել Յուկէս միլիոն, որով բոլոր ծրագիրները խանգարուած ու սկսուած գործերը կանգ են առած։

Գերման հանրապետութեան ներկայացուցիչ Քուրց կը բողոքէ, որ կեդրոնը ժամանակին չի հատատաներ պիւտճէն, որով գործերը կը տուժեն։ Ելմտական տարուան սկիզբը կազմուած են ծրագիրներ ու յատկագծեր, որոնք արդէն սկսած են գործադրուիլ։ Բայց ահա, հինգ ամիս յետոյ, կեդրոնը հիմնական փոփոխութիւններ կը մտցնէ անոնց մէջ, կը կրճատէ գումարները եւ այդպէսով կ'անդամալուծէ տեղական նախաձեռնութիւնն ու շինարարութիւնը։

Նոյն իմաստով արտայայտուեցան եւ ուրիշ պատգամաւորներ։ Եւ եթէ փորձենք բանալ ըսուածներու փակագիծը, կը պարզուի բաւական խրատական մը. «անկախ» հանրապետութիւնները ոտքի ելած են Մոսկուայի դէմ ի պաշտպանութիւն իրենց ոտնահարուած իրաւունքներու։ Եւ ահա կը բերուին փաստեր ու հիմնաւորումներ որոնք չափազանց «հակայեղափոխական» են եւ ամէն օր կ'երեւան տարագիր հակայեղափոխականներու մամուլին մէջ։

Պիւտճէն պետութեան մը ամէնէն նուրբ մասն է։ Անոր վրայ կ'անդրադառնան նախ եւ առաջ իշխող կարգերու յոռի կողմերը։ Եւ զարմանալի չէ, որ այս գետնին վրայ կը սաստկանայ ներհակութիւնը Մոսկուայի եւ «ծայրագաւառներու» կամ ինչպէս պոլշեւիկները կ'ըսեն. «անկախ հանրապետութիւններու» միջեւ։ Այս «անկախ հանրապետութիւններն» ալ սկսած են հասկնալ, որ Մոսկուան չարաչար կը գործածէ իրենց վստահութիւնը, բայց, մանաւանդ, իրենց նիւթական միջոցները։ Ու եղած են բողոքելու։ Մարդարէ ըլլալու պէտք չկայ բնաւ հասկնալու համար, որ այս տրամադրութիւնը երթալով աւելի պիտի սրուի ու դառնայ խորհրդային իշխանութեան քայքայման հուժկու ազդակներէն մէկը։

Եւ այդ իրողութեան ապացոյց է այն փաստը, որ նստաշրջանը որոշած է յետաձգել քննութիւնը կեդրոնի եւ «անկախ հանրապետութիւններու» ելմտական փոխ-յարաբերութիւնները սահմանող օրէնքի նախագիծին։ Այս ծրագիրը, ինչպէս կը հաւաստուն, կազմուած էր խիստ կեդրոնամիտ ոգիով եւ անոր դէմ ըմբոստացած են «հանրապետութեանց», բայց, մանաւանդ, Ուկրաինայի ներկայացուցիչները։

Բնորոշ է եւ այն, որ ամէնէն աւելի յարձակողական եւ Մոսկուայի հանդէպ ընդդիմադիր դիրք բռնած է Ուկրաինան։ Աւտոր պատճառը, մեր կարծիքով, երկու է։ Նախ՝ ուկրաինական ազգային ոգիի արագ աճումն ու Ուկրաինայի ազգայնականներու ձեռք բերած ազդեցութիւնը իրենց երկրի գործերուն մէջ։ Երկրորդ՝ այն պարագան, որ Ուկրաինան Խորհրդ. Միութեան ամէնէն հարուստ եւ անտեսական անձալրածիր կարելիութիւններ ներկայացնող երկրամասն է։ Երբ այս երկու պարագաները միացնէ՛ք, պարզ կը դառնայ, թէ ինչու Ուկրաինայի ազգայնացման — չըսելու համար, անջատողական — տրամադրութիւնը տարուէ տարի կ'աճի ու կ'ամրանայ։

Միութենական Գործկոմի վերջին նստաշրջանը անգամ մը եւս ցոյց տուաւ այն անվիճելի ճշմարտութիւնը, որ յաճախ կը հերքուի խորհրդային վարիչներուն կողմէ։ Այսինքն՝ այլ եւս կարելի չէ հերքել, թէ պոլշեւիկները իրար խաչաձեւող ու ժխտող երկու քաղաքականութիւն կը վարեն ազգային խնդրին մէջ։ Մէկ կողմէն ընդ առաջ կ'երթան ազգային ամենաանմտալարեղ պահանջներու, կ'արծարծեն ու կը հրահրեն ազգային ազատագրական շարժումները — իրենց սահմաններէն դուրս. միւս կողմէն ամենաանդոք պայքար կը մղեն ազգային առանձնաշնորհներ կամ ազգային իրաւունքներ հետապնդող տրամադրութիւններու դէմ, իրենց սահմաններուն մէջ։ Այս երկու ներհակ քաղաքականութիւնները, հակասական եւ անհեթեթ, ա՛լ աւելի կը սրեն ազգային կիրքն ու առանձնացման ձգտումը, ա՛լ աւելի հրատապ կը դարձնեն ազգային խնդիրը։ Եւ որքան ալ ուզեն համոզել, թէ Խորհրդային Միութեան մէջ ազգային հարցը լուծուած է հիմնովին, կեանքի անողոք փաստերը կուգան հաստատել հակառակը։ — Ազգային հարցը, իր այլեւայլ արտայայտութիւններով դարձած է խորհրդային իրականութեան ամէնէն ցաւագին երեւոյթներէն մէկը։

Ս. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԱՄԱՅԻ ԵՒ ԱՒԵՐԱԿ
ԹՈՒՐՔԻԱՆ

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԳԷՏԻ ՄԸ ՏԵՍԱԾՆԵՐԸ ՍԱՄՍՈՆԻ ԵՒ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՄԷՋ

Գերման գրագէտ Պէլնարտ Քէլլերման վերջերս պտոյտ մը կատարեց Թուրքիոյ եւ Ռուսիոյ մէջ։ Խորհրդային պաշտօնաթերթը արտատպած ըլլալով գանոնք, ստորեւ կը Թարգմանենք Թրքական մասը։

ԹՈՒՐՔԻԱ, 1926 Դեկտ.

Սամսոն մտնելով կրկին քանի մը տարիներու բացակայութենէն յետոյ, ոտք կը դնեմ ասիական Հողի վրայ։ Այս փոքրիկ քաղաքը գրեթէ ամբողջութեամբ պահպանած է իր տաճկական հանգամանքը։

Ամայացած պարտէզներու մէջ ամբողջ շարքերով տուներ դապ-դատարկ են։ Ցուներու մէկ մասը փլած։ Առաջ այս տուներուն մէջ կ'ապրէին Յոյներ, զորս վռնտած են Տաճիկները եւ Հայեր, որոնք այլեւս կենդանի չեն...

Ցան մը ճակատին հետեւեալն է արձանագրուած. «Այստեղ, այս քաղաքը, ոտք դնելով քէմալ փաշան՝ առաջին անգամ՝ մտաւ ասիական Տաճկաստան։ Այս տունէն ղրկեց այն հեռագիրները, որոնց մէջ կոչ կ'ընէր իր բարեկամներուն ազատել Հայրենիքը»։

Ի հարկէ, Սամսոնի մէջ ալ, ինչպէս եւ ամբողջ աշխարհի մէջ, կը յղանան մեծ ծրագիրներ։ Կը մտածեն երկաթուղի անցընել Էնկիւրիէն, բարեկարգել նաւահանգիստը։ Խոլորը կը հաւատան «յաղթանակի» ուժին։ Կը հաւատան թէ ան կրկին կենդանութիւն պիտի տայ երկրին, պիտի գեղեցկացնէ զայն։

Ահա եւ Ցրապիզոնը։ Այս քաղաքին նաեւ լեռները ծածկուած են իսր ձիւնով։ Կը հրաժարիմ Ցրապիզոնէն թաւրիզ տանող կարաւանի ճանապարհէն։ Բացի ճամբու դժուարութիւններէն, իմացայ, որ Թուրքիա այս ճամբան փակած է օտարներու առջեւ։ Ցրապիզոնի տուները կարծես նոր են ներկուած — գեղեցիկ շարքերով կ'իյնան լերան ստորոտը։

Ցրապիզոնը քաղաք մըն է՝ որ ինքզինքը Հարուածեր է։ Քաղաք մը որ ինքը կտրեր է իր աչքը եւ գրկեր է իր ուղեղի մէկ մասէն։ Ան ջարդած է իր մէջ ապրած տասնըհինգ հազար Հայերը, նոյնքան Յոյներ ալ դուրս է քշած։ Շարիւրաւոր լաւագոյն տուներ վերածուած են աղբակոյտերու։ Ցունական հինաւուրց եկեղեցին ամբողջութեամբ աւերի է մատնուած եւ հրդեհուած։ Այժմ այնտեղ Հաստատուած է փականագործի արհեստանոց մը։ Մօտիկը՝ անցնող գիւղեր կը ներկայացնեն աւերակներու բեկորները։ Ցրապիզոնի շրջանի վաճառականութեան մեծ մասը կը գտնուէր խողխողուած Հայերու եւ վռնտուած Յոյներու ձեռքը։

Ներկայիս Ցրապիզոնի առեւտուրը գրեթէ կրկնապատիկ ինկած է։ Պատերազմէն յետոյ Թէեւ Ցրապիզոնի մէջ քնակչութեան վիճակագրութիւն չէ եղած, սակայն կը խոստովանին, որ 70,000 մարդու փոխարէն այժմ Ցրապիզոնի մէջ Հազիւ Թէ 30,000 Հոգի կայ։ Մանաւանդ որ Ցրապիզոնը ներկայիս ալ մարդուս վրայ կը Թողու գործունեայ քանասէր արհեստաւորներով վերածագող քաղաքի մը տպաւորութիւնը։ Քաղաքին գլխաւոր Հաստատութիւնը կը կազմէ մէջէն անցնող կարաւանի շահը։

Այստեղ բազմաթիւ կօշկակարներ եւ դարբիններ կան։ Ռնտանկիրներ անընդհատ կը դղրդեն նեղ զառիվեր փողոցները։ Այէն տեղ կը Հանդիպիս ձիերու եւ էշերու։ Պարսկաստանէն նոր Հասած քառասուն ուղտի կարաւան կը սպասէ բեռնաւորուելու։ Ինքնաշարժներու շարքերը կ'անցնին նեղ փողոցներէն։ Երեք Հարիւր քիլոմէթր Հեռաւորութեան վրայ գտնուող կարին քաղաքը այժմ կապուելի է Հասնիլ երկու օրէն։ Ճանապարհորդական կառքերու սուն Թրք. ոսկի։

Ցրապիզոնի վրայ աւելի նկատելի է Եւրոպայի ազդեցութիւնը քան Սամսոնի։ Այսպէս, Ցրապիզոնի մէջ փողոցները լուսաւորուած են էլեկտրականութեամբ, էլեկտրականութիւն մը սակայն որ շատ նախնական է եւ որ կ'արձակէ ազօտ-կարմրաւուն լոյս։ Կայ նաեւ Հեռաձայն, սակայն այդ ալ կը գործէ միայն չորս եղանակներուն։ Խոնաւ ժամանակ այդ Հեռաձայնը կը գադրի գործելէ։ Ընդհանրը միայն գիտէ, Թէ ինչու նախապէս ամբողջ պարսկական առեւտուրը կը կատարուէր Ցրապիզոնի մէջէն։ Ամէն տարի Հարիւրաւոր կարաւաններ Խոյէն եւ Թաւրիզէն կը Հասնէին Ցրապիզոն բերելով գորգեր, բուժոժ (մետաքսի), կաշի եւ Հիւսուածեղէններ։ Ներկայիս պարսկական բոլոր ապրանքները կ'արտածուին Թաճուճի միջոցաւ։ Ցրապիզոնը իր նշանակութիւնը կը պահպանէ միայն ներքին գործածութեան յատուկ ապրանքներու ներմուծումով։

Ցրապիզոնը կ'արտադրէ բաւական քանակութեամբ ծխախոտ, որ սակայն շատ եւ շատ ետ կը ձգայ Սամսոնի արտադրութենէն։

Ցարեկան 1000էն մինչեւ 2000 արկղ (իւրաքանչիւր արկղի մէջ 100 Հատ) տաճկ. ընկոյզ եւ Հաւկիթ կ'արտածուի գլխաւորապէս Մարսէյլ։ Սուրիա եւ Եգիպտոս կը ներածեն խնձոր։ Ձկնեղէնը նոյնպէս կ'արտածուի մեծ քանակութեամբ։

Արեւտաքսեայ գործուածքներ եւ կոկոնի արտածութիւն խսպառ դադրած է Հայերու կոտորուելէն ի վեր։

Ճաշէն յետոյ կ'այցելենք հինաւուրց եւ սքանչելի մզկիթ մը՝ Այա-Սոֆիա, որ կը գտնուի քաղաքէն քիչ Հեռու։ Ցունական հին վանքէ մը կազմուած այս մզկիթը այժմ բոլորովին աչքէ ինկած է։ Նախկին վանքի խուցերուն մէջ ապաստանած են քանի մը մուրացիկներ միայն։ Հորիզոնին վրայ, աւելի քան Հարիւր քիլոմէթր Հեռաւորութեամբ կ'երեւայ լեռներու ճերմակ շղթան՝ կովկասը։

ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԺԱՄԱՑՈՅՑ.—Ցուրիխի արհեստագիտական շրջանակներուն մէջ մեծ հետաքրքրութիւն արթնցուցած է ժամագործի մը գիւտը։

Ջուիցերիացի ժամագործ մըն է, որ յաջողած է շինել ժամացոյց մը օժտուած «յաւիտենական շարժումով»։ Ջուիցերիական թերթերը կը հաստատեն թէ փորձերը յաջողած են։ Ժամացոյցը Ցուրիխի բազմարուեստեան վարժարանի փորձարանին մէջ 24 ժամ ինքն իրմով բանիլ սկսած է։ «Յաւիտենական շարժում»ը կարելի եղած է ստեղծել, օգտագործելով շրջապատի բարեխառնութիւնը՝ շնորհիւ ջերմաչափի մը։ Ջափազանց զգայուն ջերմաչափ մը, որուն մնդիկը Հաճախայն օդին բարեխառնութեան՝ կը բարձրանայ կամ կ'իջնէ, կը ստեղծէ ժամացոյցին անհրաժեշտ շարժումները։

ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին 44րդ նստաշրջանին առիթով յղնեւ գացած էր Գաղթականաց կեդր. յանձնաժողովի վարիչ Պ. Լ. Բաշալեան, որ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ մեզի.—

ՆԱՆՍԷՆԻ ԾՐԱԳԻՐԸ.— Այս անգամ դարձեալ օրակարգի վրայ էր Ցօքթոր Նանսէնի ծրագիրը՝ Հայ գաղթականներու տեղաւորման մասին։ Ցօքթ. Նանսէն Հեռագիր մը ուղղելով Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին, խնդրած է խնդրին քննութիւնը յետաձգել Խորհուրդի Ցունիսի նստաշրջանին, որուն ինք անձամբ ներկայ պիտի գտնուի եւ կը յուսայ ներկայացնել գրական առաջարկներ։ Ինչպէս յայտնի է, Ազգերու Դաշնակցութիւնը մերժած էր գրամ գտնել Նանսէնի ծրագրին գործադրութեան Համար, այն ձեւով ինչ ձեւով ըրած էր Աւստրիոյ, Ցունաստանի եւ Պուլկարիոյ Համար։ Միայն 15000 դուխերական ֆրանք տրամադրած էր Ցօքթ. Նանսէնի՝ պրոպագանդի եւ հրատարակչական անհրաժեշտ ծախքերու Համար։

Ու այժմ ո՞ւ է տեղեկութիւն չկայ Ցօքթ. Նանսէնի գրական առաջարկներուն մասին։

«ԼԵՒԱԼ» ԳՈՑՔԵՐԸ.— Այս խնդիրը Ազգերու Դաշնակցութեան օրակարգին վրայ է 1925ի Դեկտեմբերէն ի վեր։ Ասկէ առաջ գործը յանձնուած էր Գերմանիոյ, Իտալիոյ եւ Հոլանտայի պատուիրակներէն կազմուած մասնաժողովի մը քննութեան։ Ընկէ ի վեր այս երրորդ նստաշրջանն է որ կը գումարուի եւ յիշեալ պատուիրակները իրենց տեղեկագիրը չեն ներկայացներ Խորհուրդին։ Հետեւաբար Թրքահայերու գրաւուած գոյքերու խնդիրը այս անգամ եւս քայլ մը առաջ չէ գացած։

Կը կարծուի Թէ մանախուժբի վարանումին պատճառը այն է որ եթէ Ազգերու Դաշնակցութիւնը Հայերուն Համար նպաստաւոր որոշում մը տայ, ատիկա Թուրքիոյ պտրտադրող ուժ մը չպիտի գտնուի։

ՓՈՓՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ.— Ազգերու Դաշնակցութեան առջեւ ներկայիս կայ աւելի կարեւոր խնդիր մը Թուրքիա բնակող ոչ-իսլամ փոքրամասնութեանց Հարցը, զոր անցեալ Դեկտեմբերի նստաշրջանին բարձրացուց Հելլէն կառավարութեան ներկայացուցիչը ի վեր Հանելով այն բոլոր ուրացումներն ու զարտուղութիւնները փոքրամասնութեանց իրաւունքներու, զոր Թուրքիա Հանդիսաւորապէս ընդունած էր Լօզանի մէջ։ Ազգերու Դաշնակցութիւնը այս գործը յանձնած էր Գերմանիոյ, Շվեյսլովաքիոյ եւ Սալվատորի պատուիրակներուն, որոնք նոյն անկին առջեւ կը գտնուին՝ ո՞վ պիտի պարտադրէ Թուրքիոյ՝ իր յանձնառութեանց գործադրութիւնը։ Թուրքիա, որմէ Ազգերու Դաշնակցութիւնը բացատրութիւն պահանջած է փոքրամասնութեանց իրաւունքներուն խղճմտօրէն գործադրուելու պատճառներուն մասին, նոյնիսկ չէ բարեհաճած պատասխանել։

ԱՆՑԱԳՐԻ ԽՆԴԻՐԸ.— Եւրոպայի մէջ ներկայիս կը գտնուին շատ մարգեր, որոնք կամովին կամ իրենց կամքէն անկախ ըլլալով պատութիւն մը չունին, որով եւ ոչ եւ է Հպատակութենէ զուրկ են։ Այսպիսիներուն նախապէս heimatlos (հայրենազուրկ) անունը կը տրուէր, իսկ Հիտլերեան պետութենէ զուրկ (staatlos) կոչուին անոնք։ Այսպէս են գլխաւորապէս Հակաֆաշիստները, Իտալիայէն դուրս ապրող Մաճառները, Ռումանիոյ մէջ ապրող Ռումէնները, Հունգարիոյ մէջ ապրող Գերմանները, Գերմանիոյ մէջ ապրող Լէհերն ու Հրեաները։ Այսոցմէ կազմութեան մը տանելու Համար պիտի ստեղծուի գիր մը ստեղծելու, ու Հայ գաղթականներն ալ պիտի շարքին մէջ դասուին։

Փարիզի ուսումնական կազմակերպութեանց Հետ Համաձայնութեան գաղթականաց կեդր. յանձնաժողովին կողմէ խիստ բողոք մը ղրկած էի Ազգերու Դաշնակցութեան, դիտել տալով Ազգերու Դաշնակցութիւնը բաւունք չունէր Հայերու իրաւունքները ուրանալու, զանոնք չփոթելով զինուորական դասալիքներու կամ այլ պատճառներով իրենց պետութիւնէն զրկուած անձերու Հետ։ Հայ գաղթականներուն Համար Նանսէնի գրասենեակը ընդունուած է որպէս անձնագիրը ընդունուած է մինչդեռ Հայերը նոր ստեղծուելիք անցագրին ենթարկուելու Հրաժարած պիտի նկատուէին իրենց քաղաքական պահանջներէն։

Ազգերու Դաշնակցութեան նկատի առած է այս բողոքը տեղեկագրեր պ. Կերբօ, Պալվանոլի նեռակայացուցիչը, Ազգերու Դաշնակցութեան Ուրբաթ օրուան նիստին մէջ պաշտօնապէս յայտարարեց Թէ Հայերն ու Հրեաները գուրս ձգուած են այս կազմակերպութենէն։

Հետեւաբար Նանսէնեան անձնագիրը ի գործու պիտի ընդունուի Հայերուն Համար։

ԿԵԱՆՔԸ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ

Աթէնք, 4 Մարտ

Ազգային կեանք գրեթէ գոյութիւն չունի Աթէնքի մէջ։ Մէն մի ինչ կազմալուծուած վիճակ մը կը ներկայացնէ։ Ընդհանուր անունը կրող մարմինը փաստօրէն գոյութիւն չունի, պատգամաւորականին դիւանն ալ իրերու չափ կացութեան առջեւ անձրկած։

Ուրուարձաններու գործերը կաղն ի կուղ կ'ընթանան։ Թաղական եւ Հոգաբարձու մարմիններու խաւտանքները անգործ են կրթական ողբալի կացութիւնը գամանալու։

Կրթական կոչուած մարմինը, որուն կ'անդամակցէր Համայնավար թափթփուք մը, պաշտօնապէս կազմալուծուած է։ Թաղային դպրոցները շատ գէշ վիճակ ունին նիւթական տեսակէտով։

Վերջերս գումարուած՝ ընդհանուր ժողովի մէջ ուսուցչական ընդհանուր մարմինը մէկ ուսուցչ։ Միութեան վարչութիւնն ու Մայր Դիւանը ուսուցիչներու նիւթական կացութիւնը քննելով, որոշեց թողութիւն տալ իր շահերուն պաշտպանութեան, քանի որ ոչ վարչութիւն կայ, ոչ ալ կրթական ծառայութիւն։

Այս ժողովին մէջ տրուած որոշման մը համաձայն, Ուսուցչական Միութեան վարչութիւնն ու Մայր Դիւանը իր կնիքով եւ ստորագրութեամբ նամակներ պիտի գրեն արտասահմանեան քանի մը Հարուստներուն եւ բարեգործա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՈՒՍՏՈՒԹՅԱՆ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական հարցերը, որոնք ներկայացնում են Հայաստանի ինքնավարության, Ցեղասպանության հետևանքների վերացման, Արցախի ազատագրման և Հայաստանի անվտանգության հիմնական խնդիրները, ունեն խորը պատմական արմատներ և բազմաշերտ բնույթ։ Դրանք ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային նշանակություն ունեցող հարցեր են, որոնց լուծումը կախված է միջազգային իրավունքի, դիվանագիտության և ժողովրդավարական արժեքների հաղթանակից։

Հայկական հարցերի պատասխանատվության հարցը բարդ է և բազմակողմանի։ Պատասխանատվությունը կրում են ոչ միայն անմիջական հանցագործները, այլև նրանք, ովքեր լռությամբ կամ անտարբերությամբ թույլ տվեցին հանցագործությունների կրկնությունը։ Պատասխանատվության հարցը չի սահմանափակվում անցյալով. այն շարունակում է ազդել ներկայի և ապագայի վրա, քանի որ չլուծված հարցերը վերածվում են նոր լարվածությունների աղբյուրների։

Հայկական հարցերի լուծման ուղիները պետք է հիմնված լինեն միջազգային իրավունքի, մարդու իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների վրա։ Միայն այդ դեպքում հնարավոր կլինի կայուն և արդար խաղաղություն հաստատել տարածաշրջանում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Հայկական հարցերի պատմական արմատները սկսվում են դեռևս 19-րդ դարի վերջից, երբ Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը սկսեց պայքարել իր իրավունքների և ազատության համար։ Այդ պայքարը հանգեցրեց զանգվածային բռնությունների և Ցեղասպանության, որի հետևանքները մինչև այսօր ազդում են հայ ժողովրդի վրա։

Ազգայնականներու յաղթանակը

Զինաստանէն առնուած լուրերը կը հաստատեն ազգայնական բանակին արագ յառաջխաղացումը։ Զօր. Շանկ-Ցուն-Շանկ կը պատրաստուի պարպել Շանկայը, զոր Քանթոնցիները պիտի դրաւեն առանց գնդակ արձակելու։ Կարմիրները իշխանութիւնը ձեռք առած են Շանկայի ամբողջ հարաւային շրջանին մէջ։ Ազգային բանակի վերին հրամանատար Զօր. Շանկ-Քայ-Շէք, որ վերջերս հակապոլշեւիկ ձգտումներ ցոյց տուած էր, պաշտօնանկ եղած է եւ հաւանական է որ հարաւային Զինաստանի դիկտատոր հռչակուի Քանթոնի խորհրդային ներկայացուցիչ Պորոտին։

Զօրավար Շանկ-Քայ-Շէք, որ իսկական յաղորդն է Սըն-Եաթ-Սէնի, հեռագիրով մերժեց իր բանակատեղիէն մեկնիլ, եթէ Պորոտին իր պաշտօնէն չհրաժարի։ Հանքէուի մէջ, ազգայնականները դռնփակ նիստ մը գումարած եւ հոն ծանրակշիռ որոշումներ տուած են։ Կարմիր տարրերը յաղթանակը տարին։

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Ընկերվարական «*Փոփիւլէր*»ի պելկրատի թղթակիցը խօսելով պալքանները կացութեան վրայ, կը գրէ.—

Աթէնքի մէջ տիրապետող զգացումը վախն է։ Կը վախնան Թուրքիայէն եւ անոր դէմ յենարան մը կը փնտռեն Իտալիոյ մօտ։ Կ'ուզեն մտերմօրէն կապուիլ Փոքր Համաձայնութեան հետ, սակայն այս վերջինը կը քայքայուի եւ Եուկօսլաւիան ելք մը կը փնտռէ դէպի Եգէական Ծով։ Արքայական ընտանիքներու միջեւ խնամիական յարաբերութիւնները կտրուած են այն օրէն ի վեր որ Ցունաստան վռնտեց իր թագաւորը։ Ահա՛ թէ ինչու Աթէնքի մէջ կ'աշխատին եւրոպական բոլոր դահլիճներուն դուռը գարնել ու միաժամանակ պատերազմի պատրաստուիլ, առանց գիտնալու թէ որո՞ւ դէմ եւ որո՞ւ հետ։

Պելկրատի մէջ 1914էն առաջուան պէս պաշարուած կը զգան եւ պատերազմը ո՛չ թէ անխուսափելի, այլ խիստ մօտալուտ կը կարծեն։ Հոն շատ լաւ գիտեն թէ Հունգարիա եւ Պուլկարիա ինչ դիրք պիտի բռնեն։ Սա ստոյգ է որ այս երկու հին թշնամիները երբեք չպիտի կրնան առանձին պատերազմի մտնել։ Իտալիային է որ, կը կարծեն թէ կախում պիտի ունենայ պատերազմը, գիտնալով հանդերձ որ Իտալիա առանց Անգլիոյ հաւանութեան բան մը չպիտի կրնայ ընել։ Ռումանիայէն կը կասկածին։ Եուկօսլաւներուն համար ստոյգ բարեկամներ կը մնան միայն Չեխօսլավաքիան եւ Ֆրանսան։

Կատարեալ վստահութիւն ունին Ֆրանսայի վրայ, որ եբաշխաւորած է եուկօսլաւ սահմաններու ամբողջութիւնը եւ այս ուղղութեամբ ենթակայ են Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան։ Փարիզի պնդումներուն վրայ է որ Նինչիչի հրաժարումէն վերջ իտալեւալպան դաշնագրին առթիւ վէճը չշարունակեցին եւ համաձայնեցան Մուսոլինիի եւ Հունգարիոյ հետ, որուն պատրաստ են ելք մը տալու Ադրիականի վրայ, իր բարեկամութիւնը շահելու համար։ Պելկրատի մէջ այս քաղաքականութեան կը հետեւին ակամայ, չխանգարելու համար ծրագիրները Պոհանի, որուն ուսին վրայ կը բարդեն կանխաւ այս քաղաքականութեան ամբողջ պատասխանատուութիւնը։ Վտանգը մօտալուտ է։

Թուրքիոյ նոր երկաթուղիները

Էնկիւրի-Երէյլի եւ Քէլլեր-Տիարպէքիր գիծերուն շինութեան յանձնառու շուէտական խմբակին կողմէ ղրկուած ճարտարագէտներ տեղւոյն վրայ աշխատանքի սկսած են արդէն վերջնական յատակագիծը պատրաստելու համար ևիրենց գրասենեակները հաստատած են Էնկիւրի։ Այս խմբակին մաս կը կազմեն վարպետարժերու շուէտական ընկերութիւն մը, երկաթուղիի դանիական ընկերութիւն մը, ինչպէս նաեւ բազմաթիւ սկանդինաւեան դրամատուններ։ Հանրօգուտ շինութեանց նախարար Պէհիճ պէյի կողմէ Շուէտ եւ Տանիմարքա պիտի երթայ թուրք ճարտարագէտ մը՝ հսկելու համար վարպետարժերու, երկաթուղիի ձողերու եւ ուրիշ նիւթերու յանձնումին։

Պելժ խմբակը, որ Թուրխալ-Սվազ գիծը պիտի շինէ, նոյնպէս նախապատրաստութիւններ կը տեսնէ՝ օդերը լաւանալուն պէս գործի ձեռնարկելու համար։ Պաշտօնի կանչուած ճարտարագէտները Ֆրանսացի եւ Պելճիքացի են, նախատեսուած է նաեւ թուրք մասնագէտներու գործակցութիւնը։ Էնկիւրի հասած է արդէն այս խմբակէն Պ. Թալպօ եւ յարաբերութեան մէջ մտած է հանրօգուտ շինութեանց նախարարին հետ։

Եւրոպայէն դէպի Անատոլու եւ Սուրիա ուղղակի երկաթուղիի սպասարկութիւնը պիտի սկսի Մայիս 17ին։ Շաբաթը երեք անգամ եւրոպայէն հասնող ճամբորդները ուղղակի պիտի կրնան շարունակել իրենց ճամբան դէպի Անատոլու։ Պոլիսէն Էնկիւրի պիտի հասնին 14 ժամէն։ Միայն Հալէպ գացող ճամբորդները մէկ գիշեր պիտի մնան Պոլիս, որովհետեւ Սուրիա գացող կառախումբը յաջորդ առտու կը մեկնի։

Քէրենսկի ապստամբած

Ինչպէս գրեցինք, Ռուսիոյ նախկին մենշեւիկ վարչապետ Ալեքսանդր Քէրէնսքի Ամերիկա գնաց, գլխաւոր քաղաքներուն մէջ բանախօսութիւններ ընելու համար Ռուսիոյ կացութեան մասին։ Մարտ 14ին, մենշեւիկեան յեղափոխութեան տասնեւորդ տարեդարձը տօնելու համար հանդէս մը սարքուած էր Նիւ Եօրքի Սէնչըրի թատրոնին մէջ, ուր պիտի խօսէր Քէրէնսքի, ի ներկայութեան 5000 հանդիսականներու։ Հազիւ թէ բեմ բարձրացած էր, երբ Քաթէրին Պարրի անուն ռուս աղջիկ մը, ձեռքը ծաղկեփունջ մը, անոր մօտեցաւ։ Սակայն փոխանակ փունջը նուիրելու, ձեռնոցապատ ձեռքով երեք անգամ ապտակեց զայն, ըսելով.

«Ահա՛ թէ ինչի արժանի էք դուք։ Դո՛ւք, միայն դուք էք պատասխանատուն Ռուսիոյ ներկայ վիճակին։ Եւ դուք էք պատճառը նշանածիս մեռնելուն»։

Ապտակող աղջիկը քոյրն է ցարական աղնուականի մը. իսկ իր նշանածը սպայ էր ցարական բանակին մէջ. երբ յեղափոխութիւնը ծագեցաւ։

Այս միջադէպը մեծ գրգռութիւն առաջ բերաւ հանդիսականներուն մէջ, եւ թէեւ ոմն դէմ ցոյցեր կատարուեցան։ Սակայն Քէրէնսքի յաջողեցաւ խաղաղեցնել ներկաները շնորհիւ իր պերճախօսութեան, թէեւ յաճախ իր խօսքերը կ'ընդհատուէին արքայականներու եւ համայնավարներու կողմէ։

Օր. Պարրի ձերբակալուեցաւ, սակայն Քէրէնսքիի խնդրանքին վրայ ազատ արձակուեցաւ։ «Խեղճ միապետականներ, ըսաւ Քէրէնսքի, ո՛րքան ինկեր են, որ նախկին ցարական սպայ մը չի համարձակիր դէմս ելլելու եւ կին մը կը ղրկեն իրենց համար կռուելու։»

Նահակներն կը սպեն

Ապրիլ 1էն սկսեալ, պիտի բարձրանայ արտասահմանի հետ թղթակցութեան սակը։ Նամակները 1 ֆրանք 75, քարթերը 1 ֆրանք պիտի արժեն։

Զինադադարի համաժողովը

Փարիզի ամերիկեան դեսպան Մայրըն Հէրրիք արտաքին նախարար Պռիանի յանձնեց երկրորդ ծանուցագիրը մը, որով նախագահ Քուլիճ կրկինկրհրաւիրէ Ֆրանսան մասնակցիլ Ուաշինկթընի Զինադադարի համաժողովին։ Ծանուցագիրը կը պատասխանէ այն բոլոր առարկութիւններուն, որոնց հիման վրայ Ֆրանսա մերժած էր բերել իր մասնակցութիւնը։ Մասնաւորաբար կը շեշտէ թէ Ուաշինկթընի համաժողովը երբեք միջամտութիւն մը չի նշանակեր Ազգերու Դաշնակցութեան կողմէ ժընեւի մէջ նոյն նպատակով գումարուելիք ժողովներուն։ Ֆրանսան միայն «դիտող» պիտի ղրկէ։

Հ. Մ. Ը. Մ.Ի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Փարիզի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.) իր տարեկան պարահանդէսը կուտայ Մարտ 19ի Շաբաթ գիշերը, Washington Palaceի (14 Rue Magellan) սրահներուն մէջ, բարձր հովանաւորութեամբ Ֆրանս. նախկին պատերազմական նախարար Պ. Ընտրէ Լըֆէվրի։

Պարահանդէսին կազմակերպութիւնը յանձնուած է փարիզահայ յայտնի երիտասարդութեան։ Յաջողութեան համար ամէն կարգադրութիւն եղած է. կ'արժէ որ փարիզի հայութիւնը ամենալայն չափով իր օժանդակութիւնը բերէ, ներկայ գտնուելով սոյն երեկոյթին, որ եղանակին վերջինն է։

ՑԵՐԵԿՈՅԹ - ՀԱՆԴԷՍ

20 Մարտ 1927, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին
Ալֆոռվիլի երիտ. Միութեան կողմէ, Ակումբին մէջ
Իր կազմութեան Ա. Տարեդարձին առթիւ
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԵՐԳ, ՆՈՒԱԳ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Խաժակ» խումբի պելվիլի, ժօրէսի եւ շրջակաները բնակող ընկերները ժողովի կը հրաւիրուին այսօր՝ երեկոյեան ժամը 9ին, «Ռոստոմ»ի սրահը, Faub. du Temple: կարեւոր օրակարգ:

Հ. Յ. Դ. «Եռագոյն» խումբի անդամական ժողովը՝ Ուրբաթ 18 Մարտ, երեկոյեան ժամը 8ին, ծանօթ հաւաքատեղին: Բոլորը անպայման ներկայ:

Հ. Յ. Դ. «Դոյամարտ» խումբի ժողովը 20 Մարտ կիրակի կէսօրէ վերջ ժամը 3.30ին ծանօթ հաւաքատեղին: Անդամատեարները միասին բերել: Կարեւոր զեկուցում:

Հ. Յ. Դ. պելվիլի ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ, Արմէն-Դարօի, Դէորգ Զավուշի, Ռոստոմի, Խաժակի, ինչպէս նաեւ սոյն շրջանի մէջ գտնուող եւ ցարդ որ եւէ խումբի չմասնակցող բոլոր ընկերները Ուրբաթ 18 Մարտ ժամը 8.30ին, Ռոստոմի գրադարանը, 131, Faubourg du Temple, métro: Belleville.

Հ. Յ. Դ. Ուսանող. միութեան ընկ. ընդհ. ժողովը յառաջիկայ Ուրբաթ, Մարտ 18ին երեկոյեան ժամը 8.30ին Ֆլօրիայի սրահը: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

Հ. Յ. Դ. ՍԷն Շամոնի կոմիտէին ընկ. ընդհ. ժողովը կիրակի 20 Մարտ կէսօրէ վերջ ժամը 2.30ին վարուժան ակումբին մէջ: Օրակարգ խիստ կարեւոր. կը հրաւիրուին բոլոր ընկեր-ընկերուհիները: Ներկայանալ անդամատետրով:

Հ.Ց.Դ. Մարսէյլի «վարդգես» խումբի ժողովը 20 Մարտ, կիրակի կէսօրէ վերջ, ժամը 3.30ին 63, Rue de la Républiqueի սրահը:

Հ. Ց. Դ. Մարսէյլի պատանեկ. միութեան ընդհ. անդամական ժողովը՝ կիրակի կէսօրէ առաջ ժամը 9ին: կարեւոր օրակարգեր: Անդամատետրները միասին բերել:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ միութեանց կեդր. վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ բոլոր Հայրնկց. միութեանց ներկայացուցիչները յառաջիկայ Ուրբաթ 18 Մարտ երեկոյ ժամը 8.30ին Ֆլօրիա ճաշարանը. խիստ կարեւոր օրակարգ:

ՅԱՐԴՈՊԻ գրական երեկոն, վաղը՝ Հինգշաբթի ժամը 9ին Ֆլօրիայի սրահը: Պ. վահրամ Սեւունի կը խօսի Թարգմանական գրականութեան մասին եւ կը կարդայ Թարգմանութիւններ օտար գործերէ: Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները:

«ԳՈՒՍԱՆ» երգչախումբի վարչութիւնը կը յայտարարէ, որ խումբի փորձերը վերսկսած են: Յաւաչիկայ համերգը տեղի կ'ունենայ Ապրիլի սկիզբը:

ՓԱՐԻԶԻ Հայ Ուսանողական Միութեան հրապարակային դասախօսութիւնը այսօր Ցորեքշաբթի գիշեր Sociétés Savantesի մէջ, Métro: St.-Michel—Odéon: կը խօսի Կ. Յ. Բասմաջեան «Թաչակիրները եւ Հայերը» նիւթին վրայ: Մուտք՝ 1 Ֆրանք:

ԵՐԵԿՈՅԹ

Հ. Յ. Դ. հիմնադիրներէն անզուգական Քրիստափորի յիշատակին, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Մարսիլիոյ «Քրիստափոր» ենթակոմիտէին, 9 Ապրիլ Շաբաթ երեկոյ ժամը 8.40ին Սալօն Միշելի մէջ:

Կը խնդրուի բոլոր կազմակերպութիւններէն նկատի առնել: Մանրամասնութիւնները մօտ օրէն:

ԲԱՑՕՒՄ - ԹԷՅԱՍԵՂԱՆ

Ալֆօրվիլի Հ. Մ. Ը. Մ.ի եւ Շաւ. երկ. Որբերու Միութեան մասնաճիւղերը, բացման առթիւ, կազմակերպած են Թէյասեղան մը՝ որ տեղի կ'ունենայ յառաջիկայ Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին (19 Մարտ 1927), 184, Rue Etienne Dolet, Alfortville: կը խօսին Պ. Պ. Թ. Մեծատուրեան եւ Շ. Նարդունի:

Կայ նաեւ գեղարուեստական բաժին, խմբերգ, նորակազմ «կոմիտաս երգչախումբին կողմէ:»

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի ՕՐ ԱՌԱՋ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել յամապատասխան օրուան:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՑՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ
15 բիս տէ Ֆոմինիքէն

ՎԻԷՆԻ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ
Rue Victor Fougier N. 69
Vienne - Isère

ԴՈՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
126, Rue du Faubourg St. Denis
Metro: Gare de l'Est Téléphone: Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
ցէր եւ ցնօրէն՝ ԴՈՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,
փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ
Համեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԵԼՎԻԼԻ ՇԱՆՕՔ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ծանօթագրի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսացի Տիկ. Էֆգարէս ձամճեան եւ որդիքը Շրանտ եւ Մարի ձամճեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Ց. ձամճեան, այժմ 27 տարեկան, որ գադթականութեան միջոցին «Աւրբինագտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել: Ցեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Rue Villeroy Lyon. France.

— Կը փնտռուին Սեբաստացի Գեղամ Աատուրեան եւ իր քոյրը փիփէ Աատուրեան որոնք 7—8 ամիս առաջ Գավալայէն Մարսէյլ եկած են: Իմացնել՝ Nichan Chirinianի Dugradu par Ucel (Ardèche):

— Կիրասունցի Արմենակ եւ Մնացական Շահիրկեան եղբայրները, որոնք ընդհ. պատերազմէն առաջ Մարզուանի գօլէժը կը գտնուէին: Գրել՝ իրենց հօրաքրոջ որդին Vartan Tchakarianի, 46, Str. Fund Despot-Woda, Bucarest (Roumanie).

— Կը փնտռուի Խարբերդի Ս. Ստեփաննոս Թաղէն Խաչատուր Գէորգեան, որ երկու տարի առաջ կը գտնուէր Լիվերփուլ (Անգլիա) եւ կ'աշխատէր Նաւերու մէջ: Իմացնել N. Sarkissianի, 25 Rue Belle Image, Valence. Drome-France:

ԼԱՒ ԼՈՒՐ ՄԸ ՓԱՇ ՓՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒՆ

Ձեր մետաքը (ժէրսէ) մի գնէք օրուան գինով: Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն հրապարակի գինէն 5 Ֆրանք աւելի աժան կը ծախէ:

Բաց է ամէն օր, նոյնիսկ Շբ. մինչեւ իրիկուան ժամը 7ը:

Կը խօսուի Թուրքերէն:

ՊԱՔԻՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ԴԱՀՆԱԿԻ ԵՒ ՕՒԿԻ
Աքսոռա եւ նորոգութիւն
Դաշնակահարուհի ՕՐ. Ն. ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր:
Դիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Marcadet:

Կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16 - 18 տարեկան: Դիմել՝ պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

Կաւագործ *աժան գինով կը շինուին եւ կը նորոգուին առնական կարասիներ, գրասենեակի սեղաններ հեւալն, ծախու են թրքական թաւլուններ: Դիմել՝* 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)
Le Gérant: H. TEURNIER

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մանաւանդ Լուսաբեր ընթերցարանին եւ ճոխ մատենադարանի գիրքերու:
Դիմել, — Librairie Haigachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

DOCTEUR PROY
Ex - Interne des Hopitaux
Médaille d'argent
Տօքթ. Յ. ԽՈՒՄԷՍԷՐԵԱՆ
Աշխատակցութեամբ
Կը խնամէ ներքին, կանանց, մորթային, վէներական հիւանդութիւններ եւ բակալայնութիւններու (varices) հիմնական դարմանում առանց գործողութեան:
Ամէն օր ժամը 10-12, և 2-8, կիրակի եւ տօն օրեր 9—12:
142 R. DU FB. St. DENIS
Կան ատ լ'Էսթի մօտ,
Հեռաձայն՝ Nord 31—49:

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
123 Bld. Sébastopol, 123
(Métro: St. Denis և Réaumur
ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ
Ջերմամիզութեան, ֆրանկացւոյ, արիւնի եւ մորթային հիւանդութեանց:
Բժշկական տարրալուծումներ
Ամէն օր ժամը 9—12 և 2—8
Կիրակի՝ 9—12:
Ժողով բդեական գիներ

ԱԿԱՆԱՐԱՆ
15 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Ստերլին,	L. St.	124 —
Տոլար,	Dollar	25 —
Մարք (ոսկի)	100 Mark	605 —
Թրքական ոսկի	L. Trq.	12 —
Թրք. ոսկի	» or	115 —
Մէճիտիէ	Médjidié	9 —
Լէվա 100 հատ	Léva	18 —
Տրախմի	» Drachme	32 —
Լիր	» Lire	115 —
Պելժ. Ֆրանք	» Frc. Belge	71 —
Ֆրանկ.	» Frc. Suisse	491 —
Լէյ 100 հատ	Ley	13 —
Ցերմոնեց	(10 Roubles or)	95 —

ԱՐԺԵԹՈՒՂԹ

Եգ. Ֆր. Ֆոնտիէ	1 Cr. Fonc. Eg.	3050 —
»	II »	1940 —
»	III »	1700 —
Ռումելի երկաթ.	Lots turcs	160 —

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԻՔ

ԲԱԺԱՆԴԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ 17 ՄԱՐՏ 1927

17 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 287

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԱՐԴԻՒՆ ԽՕՍՔ

ԺԸՆԵՒԻ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ուրիշ բացատրութիւն կարելի չէ գործածել կազմակերպութեան մը համար, որ կը խօսի ու կը գործէ յիսուն ազգերու անունով, բայց, իրականին մէջ, հայ-լուսաւորչական խորհուրդի մը չափ ալ ուժ չունի:

Ազգերու Դաշնակցութիւնն է այդ վիթխարի օրկանը:

Տակաւին երէկ շարք մը նոր փաստեր կը հրատարակէինք անոր անկութեան մասին:

1925էն ի վեր, այդ կազմակերպութեան սեղանին վրայ է «լիգայի» գոյքերու խնդիրը: Եւ պարբերաբար երթեւեկներ կը կատարեն հայ ներկայացուցիչները, սրտառուչ միամտութեամբ մը իբրեւ առաջին եւ վերջին գործ, մասնախօսմբ մը կազմած է, խնդիրը ուսումնասիրելու համար: Բացարձակապէս ազգային արարք մը յանձնել մասնախօսմբերու քննութեան, ի նշանակէ թաղել զայն, Թրքական «հէվալէ»ներու դրութեամբ:

Եւ այդպէս ալ եղած է: Մասնախօսմբին անդամները արդարօրէն կը մտածեն թէ, անօգուտ է իրենց աշխատանքը, քանի որ լուծման ի՛նչ ձեւ ալ առաջարկեն, Ազգերու Դաշնակցութիւնը չպիտի կրնայ գործադրել զայն: Ո՛չ կամք ունի, ոչ կարողութիւն: Միլլի Թուրքիան, խորապէս գիտակ այս իրողութեան, պատասխան անգամ չի տար յիսուն ազգերու անունով գործող արիսպագոսի նամակներուն: Եւ աւելին,— կը բացակէ գործել այնպէս ինչպէս որոշած էր 1915ին, իթթիհատական աւարառութեան օրով, եւ ինչպէս 1922ին, քէմալական յաղթանակէն յետոյ: Երեւոյթները փրկելու համար, անցեալ տարի բարեհաճեցաւ նոր հրահանգ մը հրատարակել, որուն համաձայն պիտի վերադարձուին այն կալուածները որ յափշտակուած են 1924 Օգոստ. 6էն առաջ: Գողօնի մը մէկ մասը վերադարձնելու այս խաբէութիւնն ալ «ժէսթ» մը նկատուեցաւ, Ժողովրդի անտառէն 300 թոնօ փայտ կտրելու շնորհին մէկտեղ:

Խնդիրը այն է որ, էնկլիւրի տիրաբար կը գործադրէ իր նախնեաց իրաւունքները, եւ լա՛յն քրքիջ մը կ'արձակէ, երբ մարդիկ տրտունջներ կը յայտնեն Ազգերու Դաշնակցութեան կամ նման մարմիններու առջեւ:

Այս իրականութիւնը չախչախիչ կերպով հաստատուեցաւ Լոզանի փոքրամասնութեանց իրաւունքներու պաշտպանութեան առթիւ:

Լոզանի դաշնագիրը խմբագրուած է բուն իսկ Թուրքիոյ առաջարկած բովանդակութեամբ: Անոր մէջ քանի մը վախկոտ, գաղջուկ հատուածներ կան փոքրամասնութեանց իրաւունքներու մասին: Եւ սակայն, էնկլիւրի այդ խեղճուկրակ յանձնառութիւններն ալ կը մերժէ, եւ փոքրամասնութիւնները կը վարէ այնպէս ինչպէս հաճոյ է իր օգոստափառ կամքին:

Այսեղ ալ, շատ յստակ է եւ կտրուկ՝ Թուրքիոյ դիրքը: Ամենաբնական առիթ օր, էնկլիւրիէն Մարտ 8 Թուականը հեռագիր մը կ'աղաղդեր թէ՝ «Լոզանի դաշնագրին տրամադրութիւնները գործադրելով, Թրքական քաղաքային օրէնքին տրամադրութիւնները ենթարկուելու համար, գործավարներու խորհուրդը մօտ օրս որոշում մը պիտի տայ»: Մանաւանդ որ, «Թուրքիոյ ընտրութիւններուն մէջ ապրող ամէն անհատ ազատ է յայտնելու իր փափաքը: Այս խնդիրը հաղորդուած է Ազգերու Դաշնակցութեան, որուն այս մասին ունեցած տեսակէտը չպիտի կրնայ ընդունուիլ»:

Աւելորդ է բացատրել թէ՝ տեսակէտի խնդիր չկայ, այլ՝ տարօրինակ իտալական պատուիրակին բողոքներուն:

Շատ բարի: Բայց, նաւային կամ օդային փորձերէն առաջ, պարզ համերաշխութեան փո՛րձ մը կատարէին Թուրքիոյ հանդէպ, ոչ թէ մեր սեւ աչքերուն համար, այլ իրենց ստորագրութիւնը, ուրիշ խօսքով՝ պատիւը փրկելու համար: Սոսկական անգամ ի հարկին միջոցներ կը գտնէ իր արժանապատուութիւնը պաշտպանելու:

Փրնեւի Թաղ. խորհուրդը այդքա՞ն ալ պատուախնդրութիւն չունի:

Եւ արդեօք ատո՞ր համար է որ կ'աճապարէ ժամ առաջ իր դիրքին տակ առնել Թուրքիան, յաւիտենական ըմբոստը:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՊԱՐՏՔԸ ՄԵՐ ԼԵԶՈՒԻՆ ՀԱՆԴԷՊ

Այս խորագրով խմբագրականի մը մէջ, «ցուսաբեր» կը գրէ (7 Մարտ).—

— « Յանձնաժողով մը նշանակուած է Երեւանի մէջ, որ պարտականութիւն ունի վերաքննութեան առնելու Աբեղեան փորձանքը (նոր ուղղագրութիւն):

«Պաշտօնական և անպաշտօն աղբիւրներէ կ'իմանանք, որ Յանձնաժողովը իր մտածմատնութեան մէջ որոշած է, արմատականապէս, հայ ուղղագրութեան շարք մը հիմնական օրէնքները արմատական փոփոխութեանց ենթարկել:

« Բան մը» ըրած ըլլալու մոլեգնքէն տարուած, Երեւանի մէջ գտած են, որ «անվտանգ» Աբեղեանը, («անվտանգ» իր բացայայտ այլանդակութեանը համար) պէտք է թաղել, ու վերստին կեանքի կոչել վտանգաւոր Աբեղեանը (վտանգաւոր՝ իր վիճելի այլանդակութեանը համար):

...« Մեր միակ բաղձանքն է, որ տարագիր հայութիւնը գոնէ ուղղագրական հարցին մէջ ազգու կերպով լսելի ընէ իր ձայնը Երեւանի վարիչներուն:

« Այս պարտականութիւնը կ'իյնայ անոնց, որոնք իրենց գործերով ու կոչումով կապուած են առաւելապէս հայ լեզուին ու գիրին:

« Երեւանի բոլոր Աբեղեաններն ու բոլոր Յանձնաժողովները անկարող են վերջապէս թաղել լեզու մը, որ դարերու կեանք ունի: Բայց ինչո՞ւ թողուլ, որ ան շարունակ քաշքշուի, աղճատուի ու այլանդակուի»:

ՖՐԱՆՍ. ԸՆԴՕՎԵԱՆ ՀԱՆՈՒԱԾ

Գրած էինք թէ 1915ին ցարտանելի մէջ ընկղմած Ֆրանս. *Մառիօթ* ընդօվեան ցամաք հանելու համար ձեռնարկներ կ'ըլլան: Պոլիսէն կը գրեն թէ ընդօվեան, ասիական եզերքին մօտ, Զանաքքալէի առջեւ 20 մէթր խորը կը գտնուէր եւ արդէն կարելի եղած է ջուրին երեսը հանել: Նաւ գոցուած են ընդօվեային արտաքին բոլոր ծակերը, յետոյ խտացած օդ լեցուած է մէջը, ու զօրաւոր բեռնաբարձ մեքենայով մը դուրս քաշուած է: Իտալական ընկերութիւն մը յանձն առած է Թրքական ջուրերուն մէջ ընկղմած բոլոր պատերազմական նաւերը դուրս հանել: Ընկերութեան ներկայացուցիչ Պ. Սէրա կը յայտարարէ թէ հակառակ երկար ատեն ջուրին տակ մնալուն, «Մառիօթ»ը կարելի պիտի ըլլայ պզտիկ նորոգութեամբ գործածելի դարձնել:

«Մառիօթ»ի իրամանատարը նախապէս օդանաւով անցած էր տարտանելի վրայէն եւ յետոյ արտօնութիւն ստացած էր նեղուցը անցնելու ընդօվեայով: Մինչեւ տարտանելի մէջտեղը անվտանգ անցաւ, սակայն Զանաքքալէի առջեւ ցանցի մը մէջ ինկաւ եւ անկէ ազատուելու համար ստիպուեցաւ ջուրին երեսը ելլել: Թուրքերը սկսան կրակել: Հրամանատարը ժամանակ ունեցաւ բոլոր վաւերաթուղթերը փճացնելու եւ իր նաւաւորները ազատելու:

Գեղ ծովուն տակ կը մնայ «Պուվէ» մարտանաւը, նեղուցի մուտքին առջեւ, 75 մէթր խորութեան տակ:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԹՈՒՐՔԻԱ ՄԻԹՑ ՄՏԱՀՈԳ

Թուրք թերթերը մեծ կարեւորութիւն կուտան Իտալիոյ կողմէ Պեսարապիոյ համաձայնագրին վաւերացման եւ զայն կը նկատեն իբրեւ անհերքելի փաստը անգլեւիտալական քաղաքական սերտ գործակցութեան:

«Միլլիյէթ», որ Պոլսոյ քէմալական կիսապաշտօն օրկանը կը նկատուի, այս առթիւ կը գրէ.— «Դժուար չէ նախատեսել որ Ռուսիա պիտի պատասխանէ այնպիսի միջոցներով, որոնք ձգտում առաջ պիտի բերեն երկու պետութեանց միջեւ»: Թերթը յետոյ կը յիշէ այն քաղաքական համաձայնութիւնները, որոնց մասին խօսուեցաւ եւրոպական մամուլին մէջ, Մուսոլինիի, Չէմպրլէնի եւ Զըրչիլի տեսակցութիւններուն առթիւ: Բնականաբար այդ համաձայնութիւնները հերքուեցան. սակայն դործերն ու իրողութիւնները հիմա տեղի կ'ունենան ամէնուն աչքին առջեւ: Կասկած չկայ որ Մերձաւոր եւ Միջերկրական Արեւելքները ներկայիս երկու կէտեր են, որոնց վրայ ստիպուած է կեդրոնանալ համաշխարհային քաղաքականութիւնը: Թէեւ այդ երկու կէտերը իրարմէ հազարաւոր քիլոմեթր հեռու կը գտնուին, սակայն իրարու կապուած են հասարակաց ազդեցութիւններով եւ ազգակիներով: «Շահակից ժողովուրդներու պարտականութիւնն է մօտէն եւ աչալուրջ հետեւիլ դէպքերուն »:

ԻՏԱԼԻՈՅ ՕԴԱՅԻՆ ՏՈՐՄԻՂԸ ԵՒ "ՉԷԿԱ"Ն

Հռոմէն հեռագիր մը կ'ըսէ թէ նախարարական խորհուրդը երկու կարեւոր որոշումներ տուաւ՝ մէկը օդային տորմիղի ուժեղացման, միւսը երկրի պաշտպանողական միջոցներուն խստացման մասին: Օդանաւային նոր տորմիղ մը պիտի շինուի եւ պիտի յատկացուի ոստիկանական սպասարկութեան: Երկրի ներքին ուժեղացման համար շատ կարեւոր կը նկատուի այս որոշումը :

Երկրորդ որոշման համաձայն, մասնաւոր դատարան մը պիտի ստեղծուի, իրեն կից ունենալով հարցաքննիչ յատուկ մարմին մը: Այս մարմինը պաշտօն պիտի ունենայ քննելու ամէն խնդիր, եւ պիտի դիւրացնէ մասնաւոր ատեանին պաշտօնը: Ան է որ պիտի որոշէ թէ ո՛ր խնդիրը սովորական դատարաններուն, եւ ո՛րը մասնաւոր ատեանին իրաւասութեան ենթակայ է :

Այս կարգադրութիւնը եղած է անոր համար, որ վերջերս Ֆաշիստ դատարանը դատավարութեան մը առթիւ անպարտութեան վճիռներ արձակեց: Նոր օրէնքին համաձայն, մասնաւոր ատեանին առջեւ պիտի հանուին լուրջ դէպքերը միայն, իսկ միւս դատերը սովորական դատարաններուն առջեւ պիտի տեսնուին:

Ասկէ զատ, կառավարութիւնը կը քաջալերէ օդանաւորդութեան զարգացումը Իտալիոյ մէջ: Մասնաւոր հրամանագիրով մը ամէն տուրք եւ մաքսէ զերծ պիտի ըլլան առեւտրական օդանաւորդութեան զարկ տալու նպատակով կազմուած ընկերութիւնները: Իտալիա իր առեւտրական օդային տորմիղը կը նկատէ իբրեւ պահեստի զինուորական զէնք մը. ու բոլոր մեքենաները ատոր համաձայն շինուած են:

ՖՐԱՆՍԱ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՄԵՐԺԷ

Ուաշինկթընի Զինաթափութեան համաժողովին մասնակցելու համար նախագահ Քուլիճի երկրորդ հրաւիրագիրին վրայ, արտաքին նախարար Պռիան կը մտածէր չէզոք «դիտող» մը ղրկել, առանց պաշտօնապէս մասնակցելու:

Նախարարական խորհուրդը առջի օր գումարուելով երկարօրէն վիճաբանեցաւ այս մասին եւ ի վերջոյ որոշուեցաւ բացէ ի բաց մերժողական պատասխան գրել: Պռիան այս պատասխանին պատճէնը պիտի ներկայացնէ Շաբաթ օր գումարուելիք նախարարական խորհուրդին:

Կատաղի կռիւներ Եանկցէի հովիտին մէջ

Շանկայէն կը հեռագրեն թէ Եանկցէ գետին հարաւը Քիանկսու նահանգին երկաթուղագծին երկայնքը չորս կէտերէ միաժամանակ կատաղի յարձակումի սկսան ազգայնականները, որոնք կը ծրագրեն ընդհանուր յարձակողական մը Շանկ-Շունկ-Շանկի բանակին դէմ, զայն Շանթունկի նահանգէն դուրս նետելու համար: Այդ չորս կէտերն են Սանկքիանկ, Սուշու, Իշինկ եւ Նանքին: Ամէնէն կատաղի յարձակումը Նանքինի դէմ կը կատարուի, ուր օտարականները միջոցներ ձեռք առած են՝ ի հարկին անմիջապէս քաղաքէն մեկնելու համար: Ամերիկեան, անգլիական եւ ճափոնական թորպիլահալածներ ու թնդանօթակիրները կը սպասեն՝ անհրաժեշտ պարագային պաշտպանելու համար իրենց քաղաքացիները: Շանամի բանակը Նանքինէն 30 մղոն հեռու կը գտնուի դեռ: 400 Ամերիկացիներ կան յիշեալ քաղաքը, մեծ մասամբ միսիոնէրներ :

Նանքինի եւ Շանկայի միջեւ համախմբուած զինուորներու թիւն է 50,000, մինչ ազգայնականներուն ուժը կը գնահատուի 60,000 հոգի: Ազգայնականներու վճռական ճակատամարտը պիտի մղուի շաբթուս վերջը:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԵՐԿՈՒ ՀՈՎԻՒՆԵՐՈՒ ՎԷՃԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Մեզի կը հաղորդեն թէ Էջմիածնի Գերագոյն Խորհուրդը Փետր. 24 թուակիր նամակ մը ուղղելով Լոնտոնի եկեղեցւոյ խնամակալութեան, կը յայտնէ թէ Վռամշապուհ եպիսկ. «միայն Փարիզի հոգեւոր հովիւ է, ենթարկուում է Տ. Գրիգորիս եպիսկ.ին (Պալաքեան) եւ ոչ մի լիազօրութիւն չունի միջամտելու այլ գաղթավայրերի հոգեւոր գործերին»: Նոյնիմաստ նամակ մըն ալ ղրկուած է Վռամշապուհ եպիսկ.ին, որ Լոնտոն ղրկած էր Բարթող քահանան, «առանց կաթող. պատուիրակ Տ. Գրիգորիս եպիսկ.ի համաձայնութիւնն առանալու»: Այս առթիւ Գերագոյն Խորհուրդը կը յանձնարարէ Փարիզի հոգեւոր հովիւին. «Դուք չպէտք է միջամտէք առաջնորդական գործերին եւ եթէ որ եւ է տեղից ձեզ դիմումներ են ուղարկում, այդ դիմումները պէտք է յանձնէք կաթող. Պատուիրակին, յայտնելով այդ մասին ձեզ դիմողներին»:

**** Լիոնի Ազգ. Մխիթարեան երկար բողոքագիր մը ուղղելով կաթողիկոսին, կը գանգատի Փարիզի հոգեւոր հովիւին եւ ծանօթ խմբակին դէմ, որոնց «անկարգապահ ոխերիմ ընթացքը, յայտնապէս դիտումնաւոր հակառակութիւնը կը սպառնայ վերի վայր շրջել ոչ միայն ձեռք բերուած, այլ եւ ձեռք բերուելիք գեղեցկագոյն արդիւնքները: Ցարդ առանց հակակշռի, աղիկամի գործողներուն այս ընդվզումը հաստատուած կարգին դէմ՝ ուղղակի վնաս եւ մեծ վնաս կը պատճառէ հայ ժողովուրդին, որ հազարումէկ դժուարութիւններու կուրծք տալ պարտաւորուած է, իր գոյութիւնը քաշքշելու համար»: Բողոքագիրը կ'աւելցնէ թէ կաթող. պատուիրակին կողմէ փելոնազուրկ կամ կարգալոյծ հռչակուած քահանաները ներման կ'արժանանան Փարիզի հոգեւոր հովիւին կողմէ եւ թէ Դատաստ. Խորհուրդը անգործութեան դատապարտուած է այդ խմբակին խաղերուն շնորհիւ, խախտելով ընտանեկան բարքերը: Եզրակացնելով, Ազգ. Մխիթարեանը, յոյս կը յայտնէ թէ հակառակորդները պիտի սթափին, անսալով հոգեւոր ամենաբարձր իշխանութեան սաստին եւ յորդորներուն»:*

Երանի՛ հաւատացողներուն:

**** Փոն-տը-Շէրլի մատուռի հոգաբարձութիւնը նամակով մը կը յայտնէ թէ իրականութեան չի համապատասխաներ կաթող. պատուիրակութեան դիւանին կողմէ հրատարակուած հետեւեալ տեղեկագիրը. «Մարենի լեզուի դասաւանդութիւնը պիտի տրուի ժամանակացոյցի պահերէն դուրս Փոն տը Շէրլի հայ գաղութին կողմէ վճարուած ուսուցչի մը կողմէ»: Հոգաբարձութիւնը կը խնդրէ ճշտել թէ «Ուսուցիչը ոչ գաղութին կողմէ վճարուած, ոչ ալ հրաւիրուած է, այլ կրթական խորհուրդին կողմէ եւ կաթող. պատուիրակէն վաւերացուած յանձնարարականով եկած է դպրոց բանալու: Ցաջողութեան պարագային, ոչ միայն ուսուցչին թոշակը, այլ եւ աշակերտներու գրենական բոլոր պիտոյքներն ալ կրթական խորհուրդը պիտի վճարէր»:*

Ու այս ամէնը՝ ամսական 3—400 ֆր.ի խնդիր է...

ՉԻՉԼԻՐԻՆ մտադիր է մօտ օրէն փարիզ գալ, մասնակցելու համար ռուսական պարտքի մասին կատարուելիք խորհրդաժողովին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵՐ ՇՈՒՐՋ

(ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՎՈՍՏՈՆԱԴԻՒՆ)

Ա. ՀՈՆԵՐՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՀԱՅԵՐՆԻ

Հայերուն մասին շատ բան գրուած է, եւ ամէն անգամ որ անոնց մասին կը խօսուի, կամ կը գրուի, կարծես նոր բան մը չի կրնար ըսուիլ։ Ամէն ինչ ըսուած է, ամէն ինչ գրուած է։ Հայերը ինքնին ալ ամէն ինչ գիտեն իրենց մասին։ Ուրեմն ինչո՞ւ նորէն անոնց մասին խօսիլ։

Ինչո՞ւ որովհետեւ հայերը ներկայիս կը գտնուին ամենաանհաւատալի պայմաններու մէջ։ Ինչո՞ւ որովհետեւ հայերը ներկայիս կը գտնուին ամենաանհաւատալի պայմաններու մէջ։ Ինչո՞ւ որովհետեւ հայերը ներկայիս կը գտնուին ամենաանհաւատալի պայմաններու մէջ

ՊՈՒՇԿԻՆՅԱՆ ԴՈՒՍՏԵՐԻՆ

(ՀՈՒՇԵՐԻ ՀԱՏՈՐԻՆ)

Թամարա Ղ. Ղ.

— Ուրախ եմ, որ քեզ տեսնում եմ, Թամարա, ասաց նա ինձ տեսնելիս, ուրախ եմ, որ ինձ մոռացել չես: Ես քեզ միշտ հիշում եմ, ինչպես նաև ամբողջ ընտանիքդ: Ինչպե՞ս են ծնողներդ, քույրերդ, եղբայրդ, ինչպե՞ս է ապրում ամբողջ ընտանիքդ:

Ես պատասխանեցի, որ ամբողջ ընտանիքս ողջ է, առողջ, ապրում է Երևանում, ինչպես նաև ես, որ ամուսնացել եմ և ունեմ երեխաներ:

— Ես էլ ամուսնացել եմ, ասաց նա, ունեմ երեք երեխա, երկու աղջիկ և մի տղա, ամուսինս էլ է ուսուցիչ, ինչպես և ես, ապրում ենք Ղարաքիլիսայում, ուր ես ծնվել եմ և մեծացել: Ես ուզում եմ, որ դու գաս մեզ մոտ, ամուսինս էլ ուզում է քեզ տեսնել, ես նրան շատ եմ պատմել քո մասին, ասել եմ, որ դու իմ ամենամտերիմ ընկերուհիներից մեկն ես եղել:

Ես խոստացա գնալ, ասացի, որ ինձ համար մեծ ուրախություն կլինի նրանց տեսնելը, ինչպես նաև Ղարաքիլիսան, որտեղ ես ծնվել եմ և մեծացել:

Ես

ՌՈՒՍԻԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

Անգլիոյ պատերազմական նախարարը պատասխանելով բազմաթիւ երեսփոխաններու հարցման, կարգ մը յայտարարութիւններ ըրաւ Ռուսիոյ զինուորական կացութեան վրայ: Ըսաւ թէ վերջին պաշտօնական տեղեկութիւններու համաձայն, պոլշեւիկեան գործօն բանակը կը բաղկանայ 650,000 հոգիէ կամ մէկ միլիոնէ, հաշուելով քաղաքապահները եւ երկրապահները: Աւոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ 8 միլիոն պահեստիներ: Այսօրուան թիւերը անցած տարուընէ բարձր են:

Նախարարը աւելցուց թէ Ռուսիոյ մէջ լրջօրէն կ'ուսումնասիրուի պատերազմի առեն կազերու գործածութեան խնդիրը: Բազմաթիւ գործարաններ շինուած են այս նպատակով կամ շինուելու վրայ են, եւ անոնց արտադրութիւնը ահագին պիտի ըլլայ:

«Կասկած չկայ, որ, աւելցուց, խորհրդային իշխանութիւնները լրջօրէն կ'ուսումնասիրեն քիմիական պատերազմի կարելիութիւնը եւ մեծ պատրաստութիւններ կը տեսնեն ի հարկին լայնօրէն օգտագործելու համար զայն: Այս ուղղութեամբ Ռուսիոյ պատրաստութիւնները անհամեմատ աւելի մեծ են՝ քան միւս բոլոր երկիրներունը»:

ԱՆԳԼ. ՆԱԻԱՏՈՐՄԸ ԱՄԷՆԷՆ ՋՕՐԱՒՈՐԸ

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ ծովային նախարարութեան ելմտացոյցի քննութեան առթիւ նախարար Պրիճմէն ճառ մը խօսեցաւ, որուն մէջ ըսաւ.

«Մեր քննադատները յաճախ կը պնդեն թէ Անգլիա կը հակառակի նաւային սպառազինութեան ամէն նոր սահմանափակումի: Այս խօսքերը հաստատող մէկ հատիկ փաստ գտնել անկարելի է: Քանիցս կրկնած եմ որ ոչ մէկ առարկութիւն ունիմ զինաթափութեան նոր համաժողովի մը գումարուելուն դէմ:

«Գալով մեր պատերազմական նաւատորմին, մեր պայմանները բոլորովին կը տարբերին միւս ազգերու պայմաններէն: Մենք ստիպուած ենք պահել նաւատորմ մը, որուն ուժը հաւասար ըլլայ ուրիշ ո եւ է մէկ ազգի նաւատորմին, մեր առեւտրական հաղորդակցութեանց ապահովութիւնը երաշխաւորելու համար: Կը կարծեմ թէ երեսփ. ժողովի անվստահութեան պիտի ենթարկուէինք, եթէ այս չափաւոր քաղաքականութենէն շեղինք: Եթէ այլ եւս թոյլ չտրուի ինծի այդ ճամբան հետապնդել, չպիտի կրնամ շարունակել ընդունիլ պատասխանատուութիւնը իմ ներկայ պաշտօնիս: Ծրագրուած համաժողովի յաջողութեան համար անհրաժեշտ է որ պետութիւնները կատարեալ անկեղծութեամբ շարժին:

«Անկեղծօրէն կը յուսամ թէ ֆրանսական եւ իտալական կառավարութիւնները վերաքննութեան պիտի ենթարկեն խնդիրը եւ վստահ՝ մասնակցող պետութեանց բարի կամեցողութեան վրայ, իրենք եւս ներկայացուցիչներ պիտի ղրկեն:»

*** *Մայիս 30ին ֆրանսական նաւատորմը Անգլիա պիտի այցելէ:*

Տնտեսական տագնապը պիտի վերջանայ

Վարչապետ Փուանքարէ առջի օր Ծերակոյտին առջեւ յայտարարեց. «Կը կարծեմ թէ անհրաժեշտ է ֆրանքին ներկայ սակը պահպանել երկար առեն: Եթէ կարենանք ատիկա յաջողցնել —եւ Պանք տը Ֆրանսը ատոր միջոցները ունի— շուտով պիտի մեղմանայ տնտեսական տագնապը եւ շատ չանցած բոլորովին պիտի վերջանայ:»

Անգլիա կը գաւնէ պահանջները

Անգլիոյ Գանձային նախարարութիւնը կը տեղեկացնէ թէ Մարտ 15ին իտալիա վճարած է իր պարտքին երրորդ մասնավճարը՝ 2,000,000 ոսկերլին: Նոյն օրը Ֆրանսա եւս վճարած է իր պարտքի հաշուոյն երկրորդ մասնավճար մը՝ նոյնպէս երկու միլիոն ոսկերլին:

Գերման եւ Ֆրանսացի Ֆրան-վաստակներ

Վերջերս թերթերը գրեցին թէ ֆրանսացի եւ գերման ազատ-որմնադիրները կը ծրագրեն նախաձեռնարկ ըլլալ ֆրանքեւ-գերման մերձեցման:

Պերլինէն առնուած հեռագիր մը կ'ըսէ թէ գերման մասոնական օթեակները վերջնապէս մերժած են հանդիպում մը ունենալ, ըլլայ Ֆրանքֆորթի ըլլայ չէզոք երկրի մը մէջ, Ֆրանսայի կրանտ Օրիանին պատկանող օթեակներու պատուիրակներուն հետ:

«Ժուռնալ» կը գրէ թէ գերման մասոնական օթեակները, որոնք ամէն բանէ առաջ ազգայնական, նոյնիսկ կայսերական ձգտումով քաղաքական կազմակերպութիւններ են, կը յայտարարեն թէ իրենց արժանապատուութեան համար վիրաւորական կը նկատեն տեսակցիլ ֆրանսացի մասոններուն հետ, այնքան առեն որ «թշնամի զինուորներ կը կոխկռտեն գերման հողը եւ մինչեւ որ պատերազմին մէջ Գերմանիոյ պատասխանատուութեան խօսքերը ետ չեն առնուիր:

Հետապնդում ներեսփոխանի մը դէմ

Անցեալները Ֆլէօրիի ճամբուն վրայ մարդ մը ինքնաշարժին տակ մնալով մեռաւ: Դատական իշխանութիւնները յետ քննութեան կասկած ունեցան Լուաւռ-Շէրի երեսփոխան Շավանեի վրայ, որ նոյն օրը եւ նոյն ժամուն ինքնաշարժով անցած էր ւիշեալ ճամբէն: Հարցաքննիչ դատաւորը նոյնիսկ քննած էր ինքնաշարժը եւ կղպանքի տակ առած գայն:

Շավանեը քանի մը օր առաջ երեսփ. ժողովի նախագահին ներկայանալով բողոքեց հարցաքննիչ դատաւորի այս արարքին դէմ, յայտնելով որ իբրեւ, երեսփոխան ինք անձեռնմխելի է եւ պահանջեց որ յիշեալ դատաւորը պատժուի: Նոյնիսկ նախարարական խորհուրդը զբաղեցաւ այս խնդրով:

Այս անգամ Օրլէանի ընդհանուր դատախազը դատական նախարարութեան ուղղուած խնդրագրով մը կը պահանջէ որ երեսփ. ժողովը վերցնէ Շավանեի անձեռնմխելիութիւնը, դատական հետապնդումի ենթարկուելու համար:

*** *Հնդկաչինի ընդհ. կառավարիչ նախկին ընկերվարական երեսփոխան Այեքսանտր Վառէն ալ կ'ամբաստանուի որ իր բարեկամ ընկերվարական Մայլհօի 8000 հէքթար հող տուած է կողմնակալութեամբ:*

Հ. Մ. Ը. Մ.Ի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Փարիզի Հայ մարմնակրթական ընդհանուր միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.) իր տարեկան պարահանդէսը կուտայ Մարտ 19ի շաբաթ գիշերը, Washington Palaceի (14 Rue Magellan) սրահներուն մէջ, բարձր հովանաւորութեամբ Ֆրանս. նախկին պատերազմական նախարար Պ. Ալնարէ Լըֆեվրի:

Պարահանդէսին կազմակերպութիւնը յանձնուած է փարիզահայ յայտնի երիտասարդութեան: Յաջողութեան համար ամէն կարգադրութիւն եղած է. կ'արժէ որ փարիզի հայութիւնը ամենալայն չափով իր օժանդակութիւնը բերէ, ներկայ գտնուելով սոյն երեկոյթին, որ եղանակին վերջինն է:

ՅԵՐԵԿՈՅԹ-ՀԱՆԴԷՍ

20 Մարտ 1927, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին
Ալֆոռվիլի երիտ. Միութեան կողմէ, Ակումբին մէջ
Իր կազմութեան Ա. Տարեդարձին առթիւ
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԵՐԳ, ՆՈՒԱԳ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ց. Դ. «Եռագոյն» խումբի անդամական ժողովը՝ վաղը Ուրբաթ երեկոյեան ժամը ճիշտ 8ին, ծանօթ հաւաքատեղին: Բոլորը անպայման ներկայ:

Հ. Յ. Դ. «Գոյամարտ» խումբի ժողովը 20 Մարտ Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3.30ին ծանօթ հաւաքատեղին: Անդամատերերը միասին բերել: Կարեւոր զեկուցում:

Հ. Ց. Դ. «Քրիստափոր» խումբը ժողովի կը հրաւիրէ Սէն-Մի-Շէլի եւ շրջականերու բոլոր դաշնակցականները 19 Մարտ շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, քաֆէ Ռօշէ մէթրօ՝ Օտէոն:

Հ. Ց. Դ. Պելվիլի ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ, Արմէն-Գարօի, Գէորգ Զավուշի, Ռոստոմի, Թաժակի, ինչպէս նաեւ սոյն շրջանի մէջ գտնուող եւ ցարդ որ եւ է խումբի չմասնակցող բոլոր ընկերները վաղը Ուրբաթ ժամը 8.30ին, Ռոստոմի գրադարանը, 131, Faubourg du Temple, métro: Belleville.

Հ. Ց. Դ. «Կայծակ» ենթակոմիտէի ֆանն եւ արուարձանները բնակող բոլոր ընկերները ընդհ. ժողովի կը հրաւիրէ Շաւիլի, Վէրսայլի, Սէվռի, Վիրօֆլէյի բոլոր դաշնակցական ընկերները եւ անոնք որոնք արձանագրուած չեն ոեւէ խումբի մէջ 19 Մարտ շաբաթ երեկոյ ժամը 8ին 187 Grand'Rue, Chaville (Pointe de Chavilleի թրամուէյի կայարանին մօտ):

Հ. Յ. Դ. Ուսանող. միութեան ընկ. ընդհ. ժողովը վաղը Ուր., ժամը 8.30ին Ֆլօրիայի սրահը: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

Հ. Ց. Դ. Սէն Շամօնի կոմիտէին ընկ. ընդհ. ժողովը կիրակի 20 Մարտ կէսօրէ վերջ ժամը 2.30ին վարուժան ակումբին մէջ: Օրակարգ խիստ կարեւոր. կը հրաւիրուին բոլոր ընկեր-ընկերուհիները: Ներկայանալ անդամատերով:

Հ. Ց. Դ. Մարսէյլի պատանեկ. միութեան վիճաբանական ժողովը՝ այսօր Շինգշաբթի 17 Մարտ երեկոյեան ժամը 8.30ին գրադարան-ընթերցասրահին մէջ: Մուտքը ազատ է:

Հ. Ց. Դ. Մարսէյլի Ռոստոմենթակոմիտէին ժողովը՝ 20 Մարտ կիրակի, երեկոյեան ժամը 7ու կէսին, ծանօթ հաւաքատեղին:

Հ. Ց. Դ. Մարսէյլի ընկերուհիներուն ընդհ. անդամական ժողովը՝ կիրակի 20 Մարտ, կէսօրէ վերջ ժամը ճիշտ 1ին, 13, բիւ տը լա Ռէփիւպլիքի վերի յարկը:

Հ.Ց.Դ. Մարսէյլի «Վարդգէս» խումբի ժողովը 20 Մարտ, կիրակի կէսօրէ վերջ, ժամը 3.30ին 63, Rue de la Républiqueի սրահը:

Հ. Ց. Դ. Մարսէյլի Պատանեկ. միութեան ընդհ. անդամական ժողովը՝ կիրակի կէսօրէ նուաջ ժամը 9ին: կարեւոր օրակարգեր: Անդամատերները միասին բերել:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ միութեանց կեդր. վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ բոլոր Հայրնկց. միութեանց ներկայացուցիչները վաղը վաղը՝ Ուրբաթ երեկոյ ժամը 9ին Ֆլօրիայի սրարը. խիստ կարեւոր օրակարգ:

ՅԱՐԴՈՂի գրական երեկոն, այսօր Շինգշաբթի ժամը 9ին Ֆլօրիայի սրահը: Պ. վահրամ Սեւունի կը խօսի Թարգմանական գրականութեան մասին եւ կը կարդայ Թարգմանութիւններ օտար գործերէ: կը հրաւիրուին անդամներն ու համակիրները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ երեկոյթ - պարահանդէս, 19 Մարտ 1927, շաբաթ գիշեր, ժամը 9էն մինչեւ առաւօտ, 12 Rue du Renard, մէթրօ Հոթէլ տը Վիլ: Ներկայացում, երգ, արտասանութիւն եւ պար: Ձագ-պանտ: Մուտք՝ 5, 10 եւ 20 ֆրանք:

ԲԱՑՕՒՄ - ԹԷՅԱՍԵՂԱՆ

Ալֆօրվիլի Հ. Մ. Ը. Մ.ի եւ Զափ. երկ. Ըրբերու միութեան մասնաճիւղերը, բացման առթիւ, կազմակերպած են Թէյասեղան մը՝ որ տեղի կ'ունենայ յառաջիկայ շաբաթ իրիկուն ժամը 8.30ին (19 Մարտ 1927), 184, Rue Etienne Dolet, Alfortville: կը խօսին Պ. Պ. Ք. Մեճատուրեան եւ Շ. Նարդունի:

Կայ նաեւ գեղարուեստական բաժին, խմբերգ, նորակազմ «Կոմիտաս երգչախումբին կողմէ:»

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

Տիթրոյթ, Կ. Ք.— *Ստացանք 20 տոլար, սկսանք ղրկել:*

Նիւ Եօրք, Ժ. Մ.— *Ստացանք 5 տոլար 5 ֆրանք, կարգադրեցինք:*

Պէլֆօռ, Ղ. Գ.— *Ստացանք 70 ֆրանք:*

Շաթիյեօն, Ք. Գ.— *Ստացանք 10 ֆրանք:*

Փարիզ, Մ. Պ.— *Ստացանք 70 ֆրանք,*

Մարսէյլ, Ա. Պ.— *Ստացանք 35 ֆրանք:*

Տէսին, Գ. Պ.— *Ստացանք 42 ֆրանք:*

Մարսէյլ, Հ. Ե.— *Տեղական մարմիններուն դիմեցէք:*

Մարսէյլ, Զ. Գավէզ.— *Ձեր նոր հասցէն մեզ ղրկեցէք:*

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— կեսարիոյ Սարը օղլան գիւղէն կարապետ Պապիկեան: Գրել՝ Garo Ohanianի Café Arménien, Avenue Jean-Jaurès. Décines, (Isère): կը խնդրուի արտասահմանեան Թերթերէն արտատպել:

— Պրուսացի Ֆիկ. Լֆգարէս ձամճեան եւ որդիքը Շրանտ եւ Մարի ձամճեան կը փնտռեն իրենց որդին եւ եղբայրը Ց. ձամճեան, այժմ 27 տարեկան, որ գաղթականութեան միջոցին «Ատըրնազտաղը» աքսորուած էր, վերջերս կիլիկիա տեսնուած էր իբր անգլիական զինուոր. կը խնդրուի արտասահմանի Թերթերէն արտատպել: Տեղեկացնել՝ Dick Nicolianի 47 Rue Villeroy Lyon. France.

— կիրասոնցի Ադմենակ եւ Մնացական Շահիրիկեան եղբայրները, որոնք ընդհ. պատերազմէն առաջ Մարզուանի գօլէժը կը գտնուէին: Գրել՝ իրենց հօրաքրոջ որդին Vartan Tchakarianի, 46, Str. Fund Despot-Woda, Bucarest (Roumanie).

— Կը փնտռուի Խարբերդի Ս. Մեսրոպեան թաղէն Խաչատուր Գէորգեան, որ երկու տարի առաջ կը գտնուէր Լիվըրփուլ (Անգլիա) եւ կ'աշխատէր նաւերու մէջ: Իմացնել N. Sarkissianի, 25 Rue Belle Image, Valence. Drome-France:

ՎԻՆԻՆ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ
Rue Victor Fougier N. 69
Vienne - Isère

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ
ԾԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
Փարիզի եւ գաւառներու Հայութեան համար կը պատրաստէ
ՀԱՄՈՎ, ՀՈՏՈՎ, ԱՆԹԱՐԴԱԽ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ
Մեծաքանակ եւ փոքրաքանակ *Անմրցելի գիներով*
Մէկ փորձ բաւ է համոզուելու, հետեւեալով ապսպրանքները անմիջապէս կը ղրկուին: Թէլէֆոն: Provence 38.63, Métro Cadet
26, Rue de Trévise Paris (9)

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
Տէր եւ Տիկնոջ՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96 - 61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Առաւմնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—Կիրակի եւ տօն օրեր 9-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ"
փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրները
Շամդէ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Թօնոկրաֆի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

Կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16 - 18 տարեկան: Դիմել՝ Պէօձէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ՎԱՐԶՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ ԵՒ ՄԵՆԵԱԿՆԵՐ
վարձու է Պաստիլի կողմը ածան գինով յարկաբաժին մը 2 մեծ եւ 2 պզտիկ սենեակներով: կան նաեւ վարձու սենեակներ Իթալիի կողմը: Դիմել՝ 6էն—7.30, Maison Melkis, 2 Ave. Docteur le Roy, 36 Rue Damesmeի մօտ, Paris (13) մէթրօ Իթալի:

ԿԸ ԳՆԵՆՔ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԽԱՂԻՐԵՐ ԵՒ ՓԻԼԻՄՆԵՐ
ԿԸ ԳՆԵՆՔ, արծաթեղէն, ոսկեղէն, ադամանդ, հին եւ նոր յարգի ձեռագործներ: Կը փնտռենք լաւ ձեռագործ գիտցողներ.
Դիմել՝ «Էնթէրսօ» ընկերութեան մէջ մեր նոր բացած գրասենեակը ամէն օր 10—1 եւ 3—6:
41 Rue de la Chaussée d'Antin
Tél. Trudaine: 01—41

Բ. յարկ աջ կողմ առաջին սենեակը: Կը խօսինք Հայերէն, Ռուսերէն եւ օտար լեզուներ:

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՔԱՅՔԷ ԶԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենադարանի դիրքերու:
Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ
Թերթիս գործակալ Գ. Չերիկեանի ՖՐԱՆՔՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ
15 բիւ տէ Ֆոմինիքէն

Կառնագործ աժան դիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կառասլներ, գրասենեակի սեղաններ եւ այլն, ծախու են Թրքական թաւլուններ: Դիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)
Le Gérant : H. TEURNIER

ԼԱՒ ԼՈՒՐ ՄԸ ՔԱՆ ՔՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒՆ
Ձեր մետաքսները մի փնչեր օրուան գինով: Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն հրապարակի գինէն 6 ֆրանք աւելի աժան կը ծախէ:
Բաց է ամէն օր, նոյնիսկ շբ. մինչեւ իրիկուան ժամը 7ը:
Կը խօսուի Թուրքերէն:

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ
Ծաքիր Թահրա պէյ 5, Բժիշկի գիրքէն փրցուած էջեր 12.50, Յունահայ տարեդիրք 25, Ռասքոլնիքի 15, Նամուս 10, Շար ոգի 10, Պատուհամար 10, Լուսնթիւնը 8, Երազներ 6, Կոյսի մը Օրագիրը 5, Աւձկութեան ժամեր 2, Մասլվար 12.50, Բարիզէթ 7.50, Տօքթ. Մօրի Վրէժ 5, Մացառներու մէջ (2 հատ.) 25, Ոսկի Աքաղաղ 10, Թուղթի փող 5, Վերջալոյսին տակ 5, Ճամբան վրայ 10, Պէպէքօ 10. Հայրենի Քնար 12.50, Հայորդիները 7, Սասմա Մհեր 5, Հացին երգը 25, Հայոց տանի Նկարիչները Ալմանախը 40, Նարեկ աշխարհաբար 40, «ՆՈՐ ՕՐ» գրական տետրակներ, թիւը 2, ինչպէս նաեւ վիպական, թատերական բոլոր տեսակ ձեռագիր եւ տպագրեալ գիրքեր, բառարաններ, խօսակցութիւններ հնագոյն եւ նորագոյն հրատարակութիւններէ:
ԳՐԱՏՈՒՆԱԿԸ ՁՐԻ
Ֆրանսայի եւ գաղութներուն համար փոստի ծախք չկայ:
Ստանալու համար՝ դիմել նամակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ԱԿԱՆԱՏՆ

16 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Ստերլին,	L. St.	124	
Տոլար,	Dollar	25	53
Մարք (ոսկի) 100 Mark		605	75
Թրքական Թղթ. L. Trq.		12	70
Թրք. ոսկի	» or	115	—
Մէճիտիէ	Médjidié	8	50
Լէվա 100 հատ	Léva	18	35
Տրախմի	» Drachme	32	50
Լիր	» Lire	115	60
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	71	20
Ջուից.	» Frc. Suisse	490	75
Լէյ 100 հատ	Ley	15	40
Ձերվոնց	(10 Roubles or)	94	—

ԱՐԺԵԹՈՒՊԹ			
Եգ. Ֆր. Յանսիէ	I Cr. Fonc. Eg.	3040	—
»	II »	1942	—
»	III »	1670	—
Ռումկի երկթղ.	Lots turcs	158	—

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 Ֆ.	70 Ֆ.	140 Ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ՋՈՒԻՑԵՐԻԱ		»	»
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԱՄԵՐԻԿԱ		6 ամ.	10 ամ.
ԵՒՐՈՊԱ		100 Ֆ.	200 Ֆ.

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն — 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պետք է վճարել 2 ֆրանք

ՈՒՐԲԱԹ
18
ՄԱՐՏ
1927

18 MARS 1927

Գ. ՏԱՐԻ թիւ 288

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՐԿՈՒ ՁԱՄԲԱՅ ՉԿԱՅ

Պոլսոյ թերթերէն առնելով, քիչ անդին կը հրատարակենք լուր մը, որուն համաձայն պ. պ. Պօղոս Նուպար եւ Գ. Նորատունկեան ալ «բարի խրատներ» տուեր են ծերակուտական ֆինկի, Լօզանի դաշնագրին վաւերացման պայքարին առթիւ: Արատապած ենք նաեւ անոնց վերագրուած նամակը, առանց երաշխաւորելու բովանդակութեան կամ թարգմանութեան ճշդութիւնը: Եւ ատոր համար ալ, առայժմ չենք զբաղիր մանրամասնութիւններով:

Մենք առաջին անգամ «Հայրենիք»էն իմացանք թէ, հանգուցեալ Զօպանեանէն զատ, ամերիկացի ծերակուտականին գաղտնի նամակներ գրած են նաեւ պ. պ. Պօղոս Նուպար եւ Գ. Նորատունկեան, միեւնոյն առաջադրութիւններով: Երէկ, «Վազդի լուրին վրայ, հեռախօսով հարցուցինք պ. Նորատունկեանի, որ առանց հերքելու կամ հաստատելու, տեսակցութիւն մը կարգադրեց մեր խմբագրին հետ: Սպասելով իր բացատրութեանց, ստիպուած ենք լուրջ ուշադրութիւն հրաւիրել չափազանց տխուր երեւոյթի մը վրայ:

Կ'ակնարկենք այն անմիտ եւ յամառ խաչաձեւումներուն, որ տեղի կ'ունենան մեր հանրային կեանքին մէջ, ամէնէն ճակատագրական խնդիրներուն համար իսկ: Այո՛, անբնական է միջինակ մտածում եւ գործունէութիւն. պահանջել բոլորէն, մանաւանդ մեր խեղճուկ իրականութեան մէջ, ուր առտուն կանուխ արթնցողը բանգիտութիւն կը ծախէ: Բայց կան պարագաներ, երբ տարրական ողջմտութիւնը կը պահանջէ չխանգարել ուրիշին գործը:

Այդ կարգի պարագայ մըն է Լօզանի դաշնագրին վաւերացման խնդիրը: Խումբ մը Ամերիկացիներ, որոնք չեն ուզեր ծախել իրենց խիղճն ու երկրին պատիւը, աննկուն պայքարի մը կը ձեռնարկեն, այդ քաղաքի կտորը մէկդի նետելու համար: Զորս տարի անընդհատ, անոնք հանրային կարծիքը կ'ալեկոծեն զարհուրելի յայտնութիւններով, թուանշաններով եւ իրողութիւններով, եւ կը բողոքեն ու կը մաքառին հրէշային անարդարութեան մը դէմ: Անոնք իրենց հետ ունին հայ ժողովուրդին յախճապահ մեծամասնութեան, եւ ինչո՞ւ չէ, Դաշնակցութեան համակրանքը:

Այսպիսի պայքարի մը մէջ, ի՞նչ կը նշանակել ո՛ր եւ է հայ մարդու, մանաւանդ կուսակցական գործիչ, հրապարակագիր կամ դիւանագէտ, վերջապէս պատասխանատու մարդու:

Որքան ալ տարբեր համոզումներ ունենայ, որքան ալ անհնարութեամբ լեցուած ըլլայ այս կամ այն հոսանքին դէմ, այդ մարդը պիտի մտածէ որ, նախ՝ բողոքողներն ու գործողները օտարներ են, եւ լա՛ւ է որ չլսեն մեր ներքին վէճերը: Երկրորդ՝ անոնք նուիրուած են աշխատանքի մը որ սերտ կապ ունի հայ ժողովուրդի ճակատագրին հետ (Հայկական Դատ, անկախ եւ միացեալ Հայաստան): Երրորդ՝ ազդեցիկ եւ կորովի մարդիկ են անոնք, բայց սակաւաթիւ, եւ իրենց դէմ ունին անհամար բանակ մը չարակամներու, վարձկաններու, քաղաքական եւ կուսակցական հակառակորդներու, չհաշուելով Ամերիկայի պետական-հանրային կեանքին բարդ մեքենականութիւնը, որ կրնայ յուսահատեցնել ամէնէն բարեացակամ գործիչն ալ: Հետեւաբար, պէտք չէ ջուր հոսեցնել այդ հակառակորդներու ջաղացքին, ինչպէս եղած է հիմա: (Ամերիկեան շատ մը թերթեր արդէն արդէն սկսած են պայքարիլ Քինկի եւ ընկերներուն, հետեւաբար եւ հայ ժողովուրդի պահանջներուն դէմ, օգտագործելով հայկական տարբեր հոսանքներու վէճերն ալ):

Դեռ կարելի է երկարել այս խորհրդածութիւններուն շարքը. բայց կը բաւէ:

Արդ, այս տարրական մտահոգութիւնն ունեցա՞ծ են Զօպանեանն ու իր հովանաւորները:

Ո՛չ միայն չեն ունեցած, ոչ միայն գաղտնի նամակներ գրած են, խելք սորվեցնելու եղած եւ սաստ լսած են, միտք պղտորած եւ հայկական դատը լղճած են, այլ եւ կը շարունակեն յամառիլ իրենց սխալին վրայ, մինչեւ անգամ տանտէրը գոռ հանելով:

Որքան ալ բարեհաճութեամբ դատել ուզէ մարդ, չի կրնար ըմբռնել այս ցաւագար մարդանքներուն իմաստը:

Եթէ այդ խափանարար խմբակը ըսել կ'ուզէ որ յոյս չկայ ո՛ր եւ է դաշնագրէ, թէ զուր են Հայաստանի անկախութեան համար կատարուած բոլոր ձեռնարկները եւ պէտք է հաշտուինք եղածին հետ, սիրաշահելով Թուրքերը, — թող ըսէ, ըլլայ հրապարակ իջնէ եւ փորձէ այդ ճամբան: Մինչ է բռնած իրենց թեւէն:

Ո՞րն է, վերջապէս, աղա-փաշա-ռամկակար խմբակցութեան «վարքագիծը»ր, ինչպէս կ'ըսեն բարբարոս բառակապակցութեամբ մը: Ինչո՞ւ մէկ բերանով կը շողոքորթեն Թուրքերը, որպէս զի կրկնուի Սօղանլուի անտառին հռչակաւոր «ժեստ»ը, միւս բերանով «դարաւոր տեսիլք»էն կը ճառեն, ծովերէ ծով երազներ հիւսելով, երրորդ բերանով մը՝ Քինկի կամ Տորդումի. Միութեան բարեխօսութիւնը կը մուրան, որպէս զի... քնալ գոյքերը ետ տրուին, ու վերջապէս չորրորդով մը՝ «ազգասէր» կ'երգեն Ազգերու Դաշնակցութեան պատուհաններուն տակ:

Կա՛մ մէկը կա՛մ միւսը: Կա՛մ Սէվր-Ուիլսըն, կա՛մ Լօզանը: Ընտրութիւնը:

Երկու ճամբայ չկայ: Չկայ, մանաւանդ, դէպքերու ընթացքը տեսնելէ յետոյ:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՆՈՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑ ՄԸ

Պէյրութի մէջ սկսած է հրատարակուիլ նոր թերթ մը, «Ազդակ», առայժմ շաբաթը երկու անգամ: Գարզելով իր ուղին, մեր պաշտօնակիցը կը գրէ.—

«Առանց մեծ խոստումներու, բայց իր դերին խոր գիտակցութեամբ ԱԶԴԱԿ կ'իջնէ հայ լրագրական ասպարէզը:

ԱԶԴԱԿը պիտի ձգտի արժեցնել մամուլի իսկական դերը, զոհելով անհատական շահը հանրային շահուն:

Անկախ ըլլալով հանդերձ ունէ կազմակերպութենէ, անոր հրատարակիչները պարծանք պիտի սեպեն շեշտելու, որ պիտի տանին այն գիծը որ անցնող եւ ներկայ ազատատենչ սերունդինը եղած է:

Ընդհանուր, համայնական ըմբռնումով, մեր ձգտումը պիտի ըլլայ՝ խորացնել անկախութեան գաղափարը, քարոզել զոհողութեան ոգին, վառ պահել հայրենիքի սէրը հոգիներուն մէջ:

Իբրեւ գաղութի թերթպիտի աշխատինք ուժ տալ Սուրիահայութեան ազգային կազմակերպութեան գործին, ցոյց տալ որ ոչ մէկ դէպք յաջողած է կասեցնել ազգերու յառաջդիմութեան անիւը: Հետու ամբոխային տրամաբանութենէ, գիտակից մեր ժողովուրդի ե'ւ յոռի կողմերուն, այնուամենայնիւ կը ճնանք լաւատես, Սուրիահայութեան ազգային կազմակերպութեան գործին վերաբերմամբ:»

Յաջողութիւն:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ատանայի Թուրք Թերթերէն.

Ֆրանսական մարզպանութիւնը արգիլած է «Մուսօլինի-Կարիպալտի» գրքին Սուրիա և Լիբանան մուտքը: Ստիպուած ենք որ այդ գիրքը կը կարդան ու իրենց վրայ կը կրեն:

*** Պէյրութ-Հալէպ հաղորդակցութիւնը խզուած է տեղացող ձիւներուն հետեւանքով: Շատ մը գործաւորներ գործի վրայի ձիւները կը մաքրեն:

*** Սուրիոյ վարչապետը դեռ կը շարունակէ իր քննական ուղեւորութիւնը:

*** 35 հոգիէ բաղկացած հրոսախումբ մը գաղտնաբար Դամասկոս մտած, բայց ետ քշուած է: Ուրիշ հրոսախումբ մըն ալ գիւղի մը վրայ յարձակում գործած, բայց հասնող Ջոկատնեբուն կողմէ փախած է: Հրոսախումբը այդ գիւղէն իր հետ տարած է շատ մը արջառներ: Հետապնդումը կը շարունակուի:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ.— Թիֆլիսի Հայ Արուեստի Տան վարչութիւնը մօտ օրէն կը հրատարակէ «Հայ Գրողներու Ընկերակցութեան ժողովածու»ն, որ պիտի ունենայ բանաստեղծական, Թատերական, գրադատական եւ գեղարուեստական բաժիններ: Այս վերջին բաժինը պիտի կազմուի Հայ Արուեստի Տան երաժշտական ու նկարչական հատուածներու անդամներուն մասնակցութեամբ:

ժողովածուն կը խմբագրեն Արշ. Մելիքեան, Ցովհ. Պօղոսեան, Նար-Դոս, Վերուն Թորգոմեան:

Մինչեւ Հոկտեմբեր պիտի հրատարակուի երկու ժողովածու:

ԵԳԻՊՏՈՍԻ Ֆուատ Թագաւորին եղբայրը եւ թոռիվ իսմայիլի չորրորդ տղան Իպրահիմ Հիլմի մեռաւ Նիսի մէջ:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՏԱԼԻԱ ՆՈՐ ՀՈՂԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

Հռոմէն մարտ 6 թուակիր հետագիր մը կ'ըսէ.—

Ազգային տնտեսութեան նախարար Պէլլուցցօի ըրած յայտարարութիւնները իտալական ժողովուրդի տնտեսական կարողութեանց մասին, անգամ մը եւս օրակարգի վրայ դրին Իտալիոյ համար անհրաժեշտ շուկաներու խնդիրը: Բոլոր ֆաշիստ թերթերը կը զբաղին այս հարցով:

«Փոփոլօ տ'Իթալիա», որուն տնօրէնը Մուսոլինիի եղբայրն է, կը գրէ.

«Եւրոպայի մէջ միայն Պելճիքան եւ Իտալիան են որ իրենց տարածութեան հետ բաղդատմամբ շատ բնակիչ ունին. սակայն Պելճիքայի հողը արգասաբեր է, հարուստ հանքեր եւ գաղթային մեծ կայսրութիւն մը ունի: Ամբողջ երեսուն տարի մեր ցեղին ծաղիկը գոհեցինք՝ ի նպաստ ուրիշին: Տեսնենք թէ այս աշխարհի մէջ չկա՞յ անկիւն մը, ուր Իտալացիները կարենան տեղաւորուիլ, ու դրօշակ մը՝ զիրենք պաշտպանելու համար»:

Ուրիշ կարեւոր ֆաշիստ թերթ մը, «Իմփէրօ», կը գրէ.—

«Տասներկու միլիոն Իտալացիներ կ'աշխատին Իտալիայէն դուրս: Այն հողերը զորս կը մշակեն, այն հանքերը, զորս կը շահագործեն, այն երկաթուղիները զորս կը շինեն, տրամաբանօրէն պէտք չէ՞ որ Իտալիոյ պատկանին:

«Ո՞րն է այն մարդկային իրաւունքը, նուիրագործուած պատմական հին աւանդութեամբ մը, որ թոյլ տայ ժողովուրդի մը բարգաւաճիլ ուրիշ ժողովուրդի մը ի վնաս եւ անոր քրտինքով, երբ առաջինը ո՛չ աւելի քաղաքակիրթ, ո՛չ աւելի խելացի եւ ո՛չ աւելի գօրաւոր է քան երկրորդը: Ո՛չ մէկ իրաւունք, ո՛չ մէկ բարոյական կայ այս արտառոց վիճակին մէջ»:

Թուրքիա եւ Ամերիկա

Փետրուար 17ին Էնկիւրիի մէջ ծովակալ Պրիսթոլի եւ Թէվֆիք Րիւշտի պէյի միջեւ կնքուած համաձայնագրին պատճէնը առջի օր հրատարակուեցաւ միաժամանակ թէ Ամերիկայի եւ թէ Թուրքիոյ մէջ:

Համաձայնագիրը 15 ամսուան համար է եւ կը նախատեսէ դիւանագիտական եւ հիւպատոսական յարաբերութեանց հաստատումը, ինչպէս նաեւ դեսպաններու նշանակումը, «որքան կարելի է շուտ»: Առեւտրական յարաբերութիւններու մէջ ընդունուած է փոխադարձութեան սկզբունքը, մաքսի համար ամէնէն նպաստաւորեալ ազգի սակը պիտի գործադրուի: Մօտ ատենէն բանակցութիւններ պիտի կատարուին հպատակութեան պայմանագիր մը կնքելու համար:

Պոլշեւիկեան դաւեր ամեն կողմ

Զուիցերիոյ ոստիկանութիւնը երեւան հանեց լրտեսական ընդարձակ ցանց մը, կազմակերպուած խորհրդային իշխանութեան կողմէ զուիցերական հողին վրայ: Պէռն, Պալ եւ Ցուրիխ գործունէութեան երեք գլխաւոր կեդրոններն էին այս կազմակերպութեան, որ Ժընեւի մէջ եւ Ազգերու Դաշնակցութեան շուրջ եւս առաջնակարգ սպասարկութիւն մը ունէր:

Ամիսը երեք անգամ Ժընեւէն փարիզ կը մեկնէին գաղտնի գործակալներ՝ կեդր. կոմիտէի հրամանները տարածելու համար բոլոր երկիրներուն մէջ: Լրտեսական կազմակերպութեան գլուխը կը գտնուէր Ժընեւ հաստատուած լեհ վաճառական մը:

Պելկրատի մէջ եւս երեւան հանուած է լրտեսական մեծ կազմակերպութիւն մը, որ կը գործէր Իտալիոյ եւ պոլշեւիկներու հաշուոյն: Խիստ կարեւոր դիրքեր գրաւող բազմաթիւ անձեր ձերբակալուած են:

Օդանաւով ռմբակոծման փորձեր

Հռոմի մօտ, Ֆուրպարայի մէջ առջի օր նոր տեսակ քափրոնի օդանաւերով ռմբակոծման փորձեր տեղի ունեցան: Ներկայ էր Մուսօլինի եւ օդանաւային փոխնախարար զօր. Պալպօ:

Իտալիա եւ Ռումանիա

Իտալիոյ եւ Ռումանիոյ միջեւ յարաբերութիւնները հետզհետէ մտերմական կը դառնան: Ռումէն երեսփոխանական ժողովին առջի օրուան նիստին մէջ երեսփոխան Փոփ առաջարկ ներկայացուցած է Մուսօլինիի արձանը կանգնել Պեսարապիոյ մայրաքաղաք Քիշնեւի մէջ՝ «ինչպէս ռումէն ժողովուրդի երախտագիտութիւն հանդէպ Իտալիոյ»:

Ռումանիոյ Ֆէրտինանտ թագաւորն ու թագուհին մօտ օրէն պաշտօնական այցելութիւն մը պիտի տան Իտալիոյ թագաւորին: Այս այցելութիւնը քաղաքական կարեւորութիւն պիտի ունենայ, որովհետեւ միասին պիտի ճամբորդէ նաեւ վարչապետ զօր. Ավերէսքու, որ Հռոմի մէջ Մուսօլինիի հետ պիտի ստորագրէ իտալեռումէն առեւտրական նոր դաշնագիր մը:

Այս առթիւ կ'ըսուի թէ Ֆէրտինանտ թագաւորը հանդիպում մը պիտի ունենայ նաեւ իշխան Կարոլի հետ:

*** Հունգարիոյ վարչապետ կոմս Պէթլէն ալ յառաջիկայ շաբաթ Հռոմ պիտի երթայ տեսակցելու համար Մուսօլինիի հետ: Այս այցելութեան ալ մեծ կարեւորութիւն կը տրուի:

*** Պելկրատէ «Փոլիթիքա»ն կը գրէ թէ իտալացի զինուորները կը պատրաստուին ցամաք ելլել ալպանական եզերքը: Իսկ իտալացիներն ալ՝ կ'ամրապատանեն Սերպերը որ Ալպանիոյ ներկայ կառավարութիւնը տապալել կ'ուզեն:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇՆ ԵՒ Գ. Ե. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ ԱԼ...

Յառաջի փետր. 11ի թիւին մէջ հրատարակեցինք ռամկավար Արշակ Զօպանեանի ողբալի նամակը ուղղուած ծերակուտական ֆինկի եւ այս վերջինին կծուպատասխանը: Պոլսոյ *Վազրթ* թերթը իր մարտ 12ի թիւին մէջ մեծատառ խորագիրներով կը գրէ թէ պ. պ. Պօղոս Նուպար եւ Գաբրիէլ Նորատունկեան եւս նոյնիմաստ նամակ մը գրած են ծերակուտական ֆինկի, ու կը հրատարակէ թէ՛ անոնց նամակը եւ թէ հայասէր ծերակուտականին պատասխանը: կ'արատապնենք առանց խորհրդածութեան, Ազգ. պատուիրակութեան երկու նախագահներուն ձգելով լուսաբանել հանրութիւնը.—

պ. ֆինկ,

«... Հանգուցեալ նախագահ Ուիլսընի գլխաւորութեամբ՝ Եւրոպայի պետական անձնաւորութեանց կողմէ նոյն ինքն Հայոց լոյսերը գլող անցնող խոստումներ, մեր ազգին համար աղէտալի ըլլալէն զատ՝ ոչ մէկ օգուտ չեն ապահոված, ինչ որ ցաւով կ'ուզենք յիշատակել:

«Մի՛ւս կողմէ՝ տրուելիք խոստումներուն իրականացման համար՝ ապահով ըլլալով թէ ոչ մէկ տէրութեան կողմէ գործնական ձեռնարկ մը չպիտի ըլլայ, անգամ մըն ալ կը խնդրենք որ՝ այլեւս Լօզանի դաշնագրին առթիւ Հայերէ եւ Հայութենէ չխօսուէք: Արդէն Թուրքիոյ մէջ ապրող մեր հայրենակիցները Թուրքիոյ Հանրապետական կառավարութենէն գոհ են, որովհետեւ նոր օրէնքները, ոչ-իսլամներուն ալ կ'ապահովեն իսլամներուն ունեցած իրաւունքները:

«Այս նամակին պատճէնը Ազգաժողովին ղրկուած ըլլալով, ամէն տեսակ թիւրիմացութեանց տեղի չտալու համար, խնդրելով կրկին անգամ որ ձեր պայքարին մէջ այլեւս մեր մասին չխօսիք, կը ժառանգանենք Ձեզ մեր յարգանքները:»

պ. ֆինկ այս նամակին հետեւեալ պատասխանը տուած է.

Պարոններ,

«Ձեր նամակը ստացայ: Թուրքիոյ Հանրապետութեան եւ Թուրքիոյ մէջ ապրող Հայոց մասին ձեր խորհրդածութիւնները ճիշդ չեն, որովհետեւ բուն իսկ տեղւոյն վրայ քննութիւնները կատարելով, ճշմարտութեան իրազեկ եղած եմ:

«Լօզանի դաշնագիրը երբէ Ամերիկայի ծերակոյտին կողմէ վաւերացուի, Ամերիկայի հանրային կարծիքը, անկախ Հայաստանի մը կազմութիւնը անկարելի պիտի նկատէ: Եւ սակայն, Ամերիկացիները, այն համոզումը ունին թէ՝ օր մը պիտի իրականանայ նախագահ Ուիլսընի խոստումը: Եւ ասիկա ապահովելու համար աշխատիլը՝ իրենց համար պարտականութիւն մը նկատող շատ մը Ամերիկացիներ կան:

«Լսեցի թէ ռամկավար կուսակցութեան վարիչ Զօպանեան Արշակ Հայոց տեսակէտին մասին Ամերիկայի պետական անձնաւորութեանց տեղեկութիւն տալու համար՝ Ամերիկա եկած է: Յարգելի Զօպանեան, տարիներէ ի վեր՝ մեր հետապնդած քաղաքականութեան դէմ հրապարակաւ արտայայտուելէ առաջ եւ առաջ պէտք էր տեսակցէր այդ գետնին վրայ աշխատող անձերու հետ: Բնաւ կասկած չկայ թէ՝ Հայոց համար անձնուիրաբար աշխատող այս Ամերիկացիներն ալ բան մը գիտեն:

«Որովհետեւ մենք տեղեակ ենք ճշմարտութեան եւ արդարութեան, ասկէ վերջ ալ միեւնոյն ճամբէն պիտի շարունակենք ընթանալ:»

ՊՈՒՐՃԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՏԵՂԱՀԱՆՈՒՄ ԿՈՏՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդհանուր ներկայացուցչական ժողովի նախագահ Ա. Ա. Ֆրանգյանի առաջարկով ժողովը հանդիսավոր կերպով հարգեց Պուրճի հայ գաղթականների հիշատակը՝ ոտքի կանգնելով։

Ապա ընդհանուր ներկայացուցչական ժողովի նախագահ Ա. Ա. Ֆրանգյանը ներկայացրեց Պուրճի հայ գաղթականների ներկայացուցիչ Ա. Ա. Ֆրանգյանին, որ

ԽՐԱՏՆԵՐ ՋԱՓԱՀԱՍ ՈՐԲԵՐՈՒՆ

Ինչպէս գրեցինք երէկ, կիրակի օր Թուռի մէջ սեղան մը տրուեցաւ Լ'Նտր-է-Լուաւ նահանգի 170 որբերուն, Ամերիկեան գի 170 որբերուն, Ամերիկեան նպաստամատոյցի ներկայացուցիչ պ. կորտըն պէրրիի եւ Ֆրանսայի երկրագործական գրասենեակին կողմէ։ Այս առիթս պ. պէրրիի խօսած ճաշի գլխաւոր կէտերը կուտանք ստորեւ.—

Ձեզմէ ոմանք կը փափաքին ձգել ազարակները եւ երթալ մեծ քաղաքները, եւ թերեւս ձեզմէ շատեր ասկէ վերջ ալ պիտի երթան։ Սակայն դեռ ժամանակը անյարմար է, այն պատճառով, զոր պիտի բացատրեմ հիմա։

Ես ծանօթ եմ ձեր կացութեան եւ համակրանք ունիմ ձեզի։ Ու անձնապէս ծանօթ եմ նաեւ ֆրանսական ագարակներուն։ 1918ին սկիզբը, առաջին փորձառութիւնս առած Ֆրանսայի մէկ գիւղին մէջ, որ կը գտնուի Լիւնէվիլի մօտ, ուր կը վարէի օգնութեան գործ մը, որ կազմակերպուած էր Ամերիկացիներու կողմէ եւ կապուած ֆրանսական բանակին։ Ես կը բնակէի գեղջկական ամարանոց մը։

Տան բոլոր այրերը մեկնած էին ճակատ։ Մեծ մայրիկը, մայրը եւ տղաքը առտուն կանուխ կ'արթննային եւ կը վազէին դաշտ, կը վարէին հողը։ Թէեւ աշխատանքի տակ կը կքէր իրենց կռնակը, սակայն մինչեւ իրիկուն անոնք կը շարունակէին իրենց աշխատանքը, գիտնալով որ, եթէ 1914-1918ի մեծ պատերազմի ընթացքին չկատարէին իրենց պարտականութիւնը, ճակատին վրայ կռւողներն ալ պիտի զատապարտուէին վարանումի։

Ես կը ճանչնամ նաեւ ձեր բաղձանքները, որովհետեւ, երկար տարիներ, Մերձաւոր Արեւելքի հեռաւոր երկիրներուն մէջ զուք եղաք մեր զաւակները։

Ես ապրած եմ, թերեւս ձեզմէ ոմանց հետ, սովի, Լարդերու եւ հալածանքներու տարիներուն ընթացքին, — Աստուած անգամ մըն ալ ցոյ չտայ—երբ մեր որբանոցները լեցուեցան հարիւր քսանչինդ հազար որբեր եւ որբուհիներ։ Այդ որբերէն շատերը տեղաւորուած են հիմա։ Մնացեալ 30,000 որբերն ալ իրենց կարգին ստիպուած են թողուլ որբանոցը, ձեզի նման մանելու համար գործի։ Մենք չենք մոռնար, զուք եւ ես չենք մոռնար այն սարսափի օրերը, զոր ապրեցանք 1920-1921ին Թուրքիոյ մէջ, այն վտանգները ու տառապանքները, զոր անցուցինք 1922ին Յունաստանի մէջ, 5000 որբերու այն երկար ճամբորդութիւնը Թուրքիոյ քաղաքներէն դէպի Սուրիա, եւ աշխատանքները, զոր սկսանք այդ երկրին եւ Պաղեստինի մէջ։ Տրապիզոնի, Իզմիրի, Օրօփոսի, Սիրայի, Կեսարիոյ, Ատանայի, Հալէպի անունները ձեզի պիտի յիշեցնեն այն պատկերները, որոնք չպիտի նմանին գեղեցիկ Ֆրանսայի մէջ ձեր տեսնելիքներուն։ Սակայն չեմ ուզեր աւելի կանգ առնել այս կէտին վրայ։

Երբ այսօր լրացած են ձեր պայմանագրութիւններուն օրերը, հաւաքուելով հոս, զուք առիթը պիտի ունենաք ստուգելու այն թիւրիմացութիւնները, որոնք կրնային ծնած ըլլալ ձեր միտքին մէջ։

Ինչպէս Ծնունդի առթիւ գրած նամակիս մէջ ըսած եմ, այս տարին ամենադժուարն է, ուր կը գտնուի Ֆրանսա պատերազմին վերջաւորութենէն իվեր, կամ գոնէ 1921էն ասդին՝ շըրջան մը, երբ 100,000 բանուորներ անգործ մնացին։ Վերջին շաբթուան ընթացքին հրատարակուած վիճակագրութեան համաձայն, այժմ քաղաքներու մէջ կան նոյնքան թիւով գործազուրկներ։ Եթէ զուք երթաք Փարիզ, Լիոն, Մարսելիա կամ ո եւ է ուրիշ քաղաք մը, զուք բնաւ չպիտի կրնաք գործ գըտնել։ Եթէ գտնուի գործ մը, նախ Ֆրանսացի բանուորը կը դնեն հոն։ Օտարին գործ կուտան ամէնէն վերջ։

Քանի կը տեւէ այս կացութիւնը, ոչ մէկ նոր օտար բանուր կրնայ Ֆրանսա գալ։ Այս միջոցով միայն կարելի պիտի ըլլայ լուծել տիրող դժուարութիւնները, եւ մենք կը յուսանք որ զուք չպիտի դժուարացնէք կառավարութեան գործը, այլ պիտի ջանաք օգնել անոր, ուսումնասիրելով մինչեւ կացութեան բարելաւումը ձեր դիրքերուն մէջ, ագարակները, ուր բարեբախտաբար գործը չի պակսիր։ Այսպէս, զուք պիտի շահիք նաեւ ձեր առողջութեան տեսակէտէն, պիտի դառնաք քաջակազմ, պիտի ամրապնդուի ձեր նկարագիրը, պիտի աւելցնէք ձեր խնայողութիւնները, որոնց պէտք պիտի ունենաք երբ ձեռնարկէք ուրիշ արհեստի մը։

Թերեւս ներքնապէս կ'ըսէք. «Պ. Պէրրի, եթէ գիտնայիք թէ ի՛նչ տաժանելի աշխատանքներ կը կատարենք, զուք տարբեր պիտի խօսէիք»։ Սիրելի զաւակներս, գիտեմ թէ ինչքան տաժանելի են ձեր աշխատանքները, ատոր համար է որ կը հիանամ ձեր վրայ։ Կեանքն է այդ եւ ի՛նչ ալ ըլլայ մեր զբաղումը եթէ մենք չաշխատինք յամառօրէն, մենք չենք հասնիր մեր նպատակին։ Մնաց որ զուք չէք աշխատիր աւելի քան ֆրանսացի ագարակապանը կամ բանուորները։ Ցետոյ այս միակ աշխատանքն է, որով Նպաստամատոյցը կրնայ օգնել ձեզի, որովհետեւ մենք յարաբերութիւն չունինք այլ մարմիններու հետ, որոնք տարբեր աշխատանքներ կուտան։

Քանի կ'ապրիք այս երկրին մէջ, — եւ ձեզմէ շատեր թերեւս միշտ հոս անցընեն իրենց կեանքը — յիշեցէք որ ձեր ազգը, ձեր ցեղը պիտի դատուի Ֆրանսացիները այնպէս ինչպէս կը տեսնուին ձեզ եւ պիտի ճանչնան ձեզմով։ Ձեզմէ անոնք որ, օր մը, պիտի դառնան Հայաստան, Ֆրանսայի մէջ իրենց բնակութեանը շնորհիւ պիտի դառնան լաւագոյն Հայերը, եւ ձեր հայրենակիցներուն պիտի ծանօթացնեն Ֆրանսացիները։

Ուրեմն ձեզի կը մնայ աշխատիլ, այսօրուան ֆրանսացի հիւրերուն տալու համար լաւագոյն տպաւորութիւնը իրրեւ աշխատասէրներու։ Ըրէք այնպէս որ Հայաստանի անունը փայլի ֆրանսական պատմութեան մէջ, շնորհիւ ձեր աշխատանքին եւ ձեր կեանքին, զոր հոս անցուցիք։

ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Թարգմ.՝ Խորհրդ. Թերթերէն)

Անչափահաս յանցաւորները. — Մէկ տարուան ընթացքին զանազան յանցանքներով ձերբակալուած են 250 անչափահաս պատանիներ (236ը մանչ, 14ը աղջիկ)։ Առնուազն 133ը ամբաստանուած են գողութեամբ՝ շուկայի կամ տուներու մէջ։ 54 հոգին՝ իբրեւ քսակահատ։ Երկու հոգի՝ իբրեւ կուսապիղծ։ Այս պատանիներուն մեծամասնութիւնը 10-14 տարեկան է։ Այս 250 յանցաւորներէն 215ը Հայ են. 33ը Թուրք, 2ը Ռուս։

Կրիմը.— Նոր-Բայազիտի մանկապարտէզի մանուկներուն մէջ տարածուած էր կրիմը։ Այս պատճառով մանկապարտէզը փակուած է 15 օրուան համար։

Աչքի հիւանդութիւն.— Դալիդարդաշ գիւղին եօթնամեայ վարժարանին մէջ շատ տարածուած է աչքի հիւանդութիւնը։ Մասնագէտ ակնաբոյժ մը ղրկուած է քաղաքէն։

Կապոյտ հազ.— Դիլիջանի գաւառին մէջ դարձեալ տարածուած է կապոյտ հազը։ Այս պատճառով դպրոցները 15 օր փակ պիտի մնան։

Եկեղեցին՝ սինեմա.— Դիլիջանի նախկին ռուսական եկեղեցին, որ զօրանոցի վերածուած էր, այս անգամ ալ փոխեցին սինեմայի։ Առաջին անգամ ներկայացուած է խաչ եւ մավզեր պատկերախաղը։

Պայքարը քահանաներու դէմ. — Երեւանի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին քահանան վէճի կը բռնուի տիրացու Աբրահամեանին հետ։ Վէճը այնքան սուր ձեւ մը կ'առնէ, որ քահանան զայն կը վտարէ՝ քիչ մը իր ուժն ալ փորձելով։ Տիրացուն, իրրեւ վրէժխնդրութիւն, դատ կը բանայ Երեւանի «արդարադատ» դատարանին մէջ եւ, ամէն դիմով դատը շահելու համար, կ'ամբաստանէ քահանան իբրեւ մէկը որ սեռային յարաբերութիւն կը մշակէ... կենդանիներուն հետ։

Ատամնաբոյժ կ'ուզեն.— Ղուրդուղուլուէն «Խորհրդային Հայաստան»ի կը գրեն թէ շրջանին 35,000 բնակչութեան մէջ մէկ ատամնաբոյժ իսկ չկայ։

Ալեքսանդրապոլի մանարանը ունի 2000 լիտր եւ 160 հոր (ափգկահ) եւ 80 հիւանդու մեքենայ։

ՀԱՅԵՐԸ ՔՈԿՈՒԷՆԻ ՄԷՋ

ՔՈԿՈՒԷՆ (Վար).— Սէն Ռաֆայէլէն 39 քիլոմէթր հեռաւորութեամբ գեղեցիկ եւ օդասուն գիւղ մըն է «Քոկոլէն», ուր կը բնակինք այժմ 17 հայ ընտանիքներ, 60 անձերէ բաղկացած 22 այր, 38 կին եւ աղջիկներ հետեւեալ զաւառներէն։ — 5 ընտանիք, Սպարդացի, 4 Ուշագցի, 3 Բէօթահիացի, 2 Խարբերդցի, 2 Պուրտուրցի եւ մէկ Սեբաստացի։ Մեծ մասը 1923ի վերջերը եկած հաստատուած են հոս եւ կը զբաղին գործագործութեամբ, բացի քանի մը երիտասարդներէ որոնց երկուքը կ'աշխատին 9 քիլոմէթր հեռու St. Tropez «Թորփիլ» գործարանին մէջ եւ կը ստանան օրական 22—25 ֆրանք, իսկ երկու հոգին ալ ներկարար են։

Առհասարակ բոլորն ալ քիչ շատ բարեկեցիկ վիճակ ունին, շնորհիւ իրենց աշխատասիրութեան։ Գործի գործարանը որ հաստատուած է մեր հայրենակիցներու ժամանումով, կը պատկանի ֆրանսացի Պ. Ժէրմանի ընկերութեան եւ ունի շատ մասնաճիւղերը Մարսէյլ եւ մօտակայ գիւղերը։ — Ֆրանսայի մէջ առաջնակարգ գործի գործարանն է ուր կ'աշխատին մեր հայրենակից կիները, բոլորն ալ մասնագէտ բացի քանի մը հոգիէ։ Իսկ այրերը կը զբաղին զանազան գործերով նոյն շէնքին մէջ, կիները կը ստանան իրենց աշխատանքին համեմատ օրական 15—25 ֆրանք։ կան նաեւ շատ մը ֆրանսացի աղջիկներ որոնք նոր կը վարժուին եւ հետզհետէ կը տիրանան արհեստին, շնորհիւ մեր հայրենակիցներու ջանքերուն։

Գործարանին վարիչ-տնօրէնն է Պ. Խ. Գազազեան, բնիկ Սեբաստացի, որ իր հետ ունի օգնական պաշտօնեաներ իր երկու զաւակները։ Շատեր հայրիկ կ'անուանեն զինքը, ցոյց տուած գուրգուրանքին առթիւ։ Գործարանը ունի ամառնային շրջան մը շերամաբուծութեան, ուր կրնան աշխատիլ բաւական թիւով գործաւորներ։

Հոս ազգային ո եւ է կազմակերպութիւն չկայ, բայց ունինք լաւ երիտասարդներ որոնց մէջ միշտ վառ է ազգային ոգին։ Մինչեւ հիմա ո եւ է անհամաձայնութիւն տեղի չէ ունեցած։ Գործազրկութիւն չէ պատահած։ Քանի մը հոգիներ կը ստանանք միայն «Յառաջ»ը որմէ կարելի կ'ըլլայ օգտուիլ եւ հասկնալ արտաքին աշխարհի անցուդարձերը։

Ֆրանսացիներու վերաբերումը շատ լաւ է։

Ց. ՏԷՕՔՄԷՏԵԱՆ

ԲԱՆՒՈՐ Կ'ՈՒԶԷՆ

ՔԱՆ (Caen) 14 Մարտ.— Այստեղ «պէթօն»ի փոքր գործարան մը կայ որ բանուոր կ'առնէ։ Դեռ այսօր երկու Ռուսեր, որոնք 5—6 օրէ ի վեր կ'աշխատէին մեր գործարանին մէջ գործ առնել, չյաջողեցան եւ դիմելով վերոյիշեալ գործարանը ընդունուեցան։ Ես ալ անոնցմէ լուր առի որ միշտ բանուոր կ'ընդունի։

Այն հայրենակիցները որ անգործ են, անմիջապէս թող հոս գան։ Մանաւորաբար անոնք որ բաւական լաւ ֆրանսերէն գիտեն, աւելի դիւրութեամբ կ'ընդունուին։ Պէտք է ունենան լաւ վկայական, հին կամ նոր։ Պէտք է արագ շարժիլ, որովհետեւ ինչպէս լսեցի 15 օր յետոյ արձանագրութիւնը պիտի փակուի։ Օրական կը վճարուի 25 ֆրանք։ Գործարանը ունի ննջարան եւ ճաշարան։

Ա. Հայկունի

Ց. Գ. կրնան դիմել ինձի. Arménien Haigouni, Caen Ferme Bellanger Colombelles, Cantine Russe, (Calvados)

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՇՈՒՆ ՄԸ ԻՆԱՒ ԵՐԿԻՆՔԻՆ.— Առջի օր, Լըժանտրը փողոցին մէջ, հսկայ շէնքի մը չորրորդ յարկէն վար ինկաւ գեղեցիկ որսորդական շուն մը։ Ինկաւ ուղի՛ղ կնոջ մը գլխուն վրայ։ Կինը տապալեցաւ գետին, շունը փախաւ՝ առանց վիրաւորելու։ Մինչդեռ կնոջ գլուխը չէր դիմացած, եւ յուսահատական վիճակի մէջ փոխադրուած է հիւանդանոց։

ԿՆՈՋ ՄԸ ԽԵՆԹՈՒԹԻՒՆԸ.— Աժէնի մօտ ագարակի մը մէջ երեսուն տարու կին մը, Քազակրանտ, ծագումով Իտալացի, յանկարծ կը խենթենայ եւ իր կաթի երախային բերանը կը դնէ ձագար մը (հունի), և կը լեցնէ արջասպ (զաճ եաղը)։ Ցետոյ կը փորձէ ինքզինքը կախել չուանով մը։ Սակայն կը փրթի չուանը։ Ու անմիջապէս կը նետուի ագարակին հորը, ուրկէ կը հանեն զինք, ոսքը կտրած վիճակի մէջ։ Հիւանդանոց հազիւ տարուած՝ կը մեռնի։

ԵՐԱԽԱՆ ալ, նոյնպէս, ագիոդորմ ճիչերու մէջ կը մեռնի։

ԱՆՁՆԱՍՊԱՆՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ.— Լա Քէօ-լէ-Զիվըլէնի մէջ ամբողջ ընտանիք մը կը տառապէր Ղազարութենէ։ Մայրը յիմարանոց փոխադրուելով, մեռած էր հոն։ Եղբայրը անցեալ շաբաթ, դարձեալ նոյն ցաւին ենթակայ, ատրճանակով կը սպաննէ ինքզինքը։

Ու անցեալ օր աղջիկը կ'առնէ կանեփ մը եւ չուան կը հիւսէ։ Ցետոյ չուանը կը կապէ դրան կղպանքին, կապը կ'անցընէ իր վիզին եւ կը խեղդէ ինքզինքը։

ՓՈՓՐԻԿ ՈՃՐԱԳՈՐԾ ՄԸ.— Ժօնթէն-Բուվէրթ գիւղաքին մէջ տիկին Թէսիէ, 23 տարեկան, առիպուած ըլլալով քանի մը ժամ բացակայիլ տունէն, սենեակին մէջ փակած էր իր երեք տղաքը, որոնց տարիքն էր 5, 2 եւ 1։

Երեք ժամ վերջ, երբ մայրը տուն եկաւ, տեսաւ որ միջնեկ տղան փոռուած է գետինը՝ արեան մէջ։ Մոշոր վերք մը գլխուն վրայ, ուրկէ արիւնը հոսեր, հոսեր եւ պաղեր էր։

Սարսափահար մայրը տեսաւ վիրաւոր տղեկին քով հրացան մը։ Ու կասկածելով հարցուց մեծին։ Փոքրիկ ոճրագործը պատասխանեց թէ փամփուշտ մը գտնելով, զրած է հրացանին մէջ, այնպէս ինչպէս հայրիկը կ'ընէր։ Ցետոյ նշան առած է եւ կրակած։ Արդիւնք՝ իր եղբայրը գետին ինկած է արիւնլուայ։

ՔՍԱԿԱՀԱՏԸ.— Սանթիէ մէթրոյին մէջ քսակահատ մը, ճամբորդի մը գրպանը մաքրած պահուն, կը բռնուի։ Ուղղակի ոստիկանատուն։

Հոն ցոյց կուտայ իր ինքնութեան թուղթերը։ Արթիւր Ռընար, 50 տարեկան, Թրինիդից։ Ոստիկանապետը անմիջապէս կը հետաձգէ։ Պատասխան կուգայ որ, այդ անունով անձը, պատերազմի ընթացքին, լրտեսութեամբ ամբաստանուած հրացանագարկ եղած է։

— Անշուշտ դուն չես այդ յարուցեալ մահապարտը, կ'ըսէ ոստիկանապետը։

— Ո՛չ, կը խոստովանի մարդը, սխալ անուն ընտրեր եմ, որովհետեւ ես ալ ուրիշ դատապարտեալ մըն եմ, Լավալար կը կոչուիմ, եւ զանազան գողութիւններու պատճառով շատ անգամներ դատապարտուած եմ։

Բանտ։

ՄՈՒՐԱՑԻԿ ՄԻԼԻՈՆԱՏԸՐԸ.— Առջի օր ոստիկանները քղանցքէն քաշելով ոստիկանատուն տարին կին մը, որ Ցրդ Քաղաքապետութեան շէնքին մէջ խառնուած էր հարսնեւորներու շքախումբի մը, եւ փեսային ու հարսին եռեւէն կը զառնար։

Հարցաքննութեան ընթացքին չխոստովանեցաւ իր անունը, սակայն կատարուած քննութեամբ յայտնի եղաւ որ այս մուրացիկ կինը, բոպիկ ու կիսամերկ, միլիոնատէր էր։ Լիէժ փողոցին մէջ ունի հսկայ տուն մը, որուն 6րդ յարկին մէջ կը բնակի։ Այս տունը 45,000 ֆր.ի վարձքի տրուած է։ Արրասի մէջ ալ ունի երեք տուն, Ուազի մէջ ագարակ մը եւ մօտ երկու միլիոն հարստութիւն։ 56 տարու այս կինը չափազանց պառաւ ու թոռոմած է, ինքզինքը զրկելով։ Առտուն կանուխ կ'ելլէ մուրալու համար, կը մնայի կրծուկներով, կերակուրի աւելցուկներով եւ աւրուած միսերով։

ՄՈԳԱԿԱՆ ԱԴԱՄԱՆԴԸ

(ՀՆԴԿԱԿԱՆ ՀԷՔԵԱԹ)

Թարգմանեց Ե. Ն.

Վերջապէս Թագաւորը իր ամբողջ երկրին մէջ յայտարարութիւն հանեց թէ, ազջիկը պիտի տայ անոր որ կրնայ բժշկել իշխանը. նոյնիսկ իր թագաւորութեան կէսն ալ պիտի տար։

Հակառակ այս արքայական նուէրներուն, ոչ ոք ներկայացաւ բժշկելու համար իշխանը։ Որովհետեւ ծանր էր անոր վիշտը, որուն մէկ դեղ պիտի կրնար ազդել։

Վերջապէս սակայն ներկայացաւ մէկը. փանէշուլին մայրիկը անո։ Միայն ա՛յս մուրացիկը կրնար բժշկել իշխանը, որովհետեւ ծանօթ էր գաղտնիքին։

Եւ ըսաւ Թագաւորին.

— Ցէ՛ր, ես Հասարակ մուրացիկ մըն եմ ձերունի։ Բայց խստացիր ինծի աղջիկդ տալ փանէշուխս կնութեան, եւ ես պիտի կրնամ ընել ինչ որ պէտք է փրկելու համար զաւակդ։

Թագաւորը խոստացաւ։ Եւ ահա թէ ինչ ըրաւ պառաւը. առաւ ադեկատ մը, ջահր մը, գոգ մը բամպակ եւ դրաւ առագաստանաւի մը մէջ։ Ցետոյ երգելով սկսաւ նաւարկել.

Սիպտա՛կ նաւակս, սիպտակ Թեւով,
Երթանք գտնենք Մանիմալան,
Սիպտա՛կ նաւակս սիպտակ Թեւով
Ջիս ադուրին տար անմըսման։

Եւ նաւակը սահեցաւ դէպի լճակին միւս ափը, որուն ներքեւ կը գտնուէր Մանիմալայի թագաւորութիւնը։

Պառաւը գամաք ելաւ, եզերքին վրայ շարեց իր աղեկատը եւ սկսաւ մանել։

Մանիմալա, որ առաջին երեւումով ամէն բան տեսնելու ժամանակ չունեցաւ, այդ օրերուն նորէն դարձաւ երկիր։ Նշմարեց պառաւը, որ բամպակ կը մանէր, հարցուց.

— Ո՞րտեղացի ես, խաթուն մայրիկ, ինչ կընես հոգ։ Ինծի համար ալ հագուստ մը կը շինե՞ս։

Պառաւը առիթը յարմար նկատեց։ Մանածովը հիւսեց ազուր կերպաս մը։

Ցետոյ պառաւը ուզեց իր վարձքը։

Մանիմալա պատասխանեց.

— Դրամ չունիմ, այս Ադամանդէն պատ ուրիշ բան չունիմ։

— Այդ Ադամանդը կը բաւէ ինծի, ըսաւ պառաւը։

Եւ ճարպիկութեամբ մը յափշտակեց Ադամանդը, յետոյ գրկեց իշխանուհին եւ նաւակ տարաւ։

Ու երգեց.

Սիպտա՛կ նաւակս, սիպտակ Թեւով
Մանիմալան ու զիս առ տար,
Սիպտա՛կ նաւակս, սիպտակ Թեւով,
Մեզ իշխանին տար սիրահար։

Նաւակը սահեցաւ արագօրէն եւ հասան Արքայական պալատը։ Պառաւը Մանիմալան յանձնեց Թագաւորին եւ դարձաւ տուն, Ադամանդը հետը բերելով։ Համոզուած էր այլեւս որ իր զաւկին համար գտած էր Թէ կին եւ Թէ դրամ։ Ուստի, փանէշուն գտնելու համար, ամէն կողմ սուրհանդակներ ղրկեց։

* * *

Երբ Մանիմալա պալատ հասաւ, իշխանը փոխակերպուեցաւ։ Բաւական եղաւ մէկ վայրկեան տեսնել իր սիրածը, բոլորովին յուսահատ։ Ամէն առտու կը սպասէր որ երեւար իր սիրականը, սակայն ի զո՛ւր։

Ան կը յուսար նաեւ որ պիտի վերադառնար նախարարին տղան, իր հաւատարիմ բարեկամը։ Սակայն ափսո՛ս որ չէր կրնար գիմաւորութեան երթալ, որովհետեւ առանց Ադամանդի, կը վախնար որ օձերը կը լափեն զինք։

Օր մը, նախարարին տղան, համաձայն իր խոստումին, եկաւ լիճին եզերքը։ Միասին բերած էր գահաւորակներ եւ երաժիշտներ։ Հակեցաւ ջուրին վրայ եւ կանչեց բոլոր ուժովը։

— Բարեկա՛մ, ա՛յ բարեկամ, ահա եկայ, դէմս եկուր։

Պատասխան չկայ։ Սպասեց երկա՛ր, շատ երկա՛ր։ Օրերը կը յաջորդէին օրերուն, գիշերները՝ գիշերներուն։ Սակայն իր բարեկամը չէր պատասխաներ իր կանչերուն։

(Շար.)

Կռիւները Չինաստանի մէջ

Երբ մէկ կողմէ ազգայնական բանակը չորս կէտէ կատաղի յարձակումի սկսած է եւ կը սպառնայ Նանքինի ու Շանկայի, միւս կողմէ հիւսիսային բանակն ալ Զանկ-Զօ-Լինի հրամանատարութեամբ կարեւոր յաղթանակ մը տարած է՝ գրաւելով Զին-Զէուն, Հոնանի շրջանին մէջ։

Ցիշեալ քաղաքը Հոնանի նահանգին դիմադրութեան կեդրոնն էր եւ ուր Ու-Փէյ-Ֆուի զինուորները Հանքէուի ճամբան կը փակէին։ Ու-Փէյ-Ֆու պարտուած կը փախչի դէպի Լօ-Եանկ։ Հիւսիսի յաղթական բանակը, Մուքտէնի հրամանին տակ, կը յառաջանայ դէպի Հանքէու։

Ու-Հուի եւ Նանքինի մէջտեղ կռիւը սկսած է։

Փանկալօսի թիկնապահը ձերբակալուած

Աթէնքէն կը հեռագրեն «Թայմզ»ի թէ Մարտ 15ի գիշերը ձերբակալուած է Զօր. Փանկալոսի թիկնապահ հրամանատար Լասքօս, որ անթել հեռագիր մը ղրկած էր՝ յայտնելով թէ յեղափոխութիւն ծագած է Աթէնքի մէջ։ Կ'ըսուի թէ յիշեալը կ'ուզէր օգտուիլ Աթէնքի վերջին գործադուլէն, ի նպաստ Փանկալոսի ըմբոստութիւն մը հանելու համար։ Ա.յսպիսի շարժումէ մը չի վախցուիր ո՛չ բանակին եւ ոչ ալ նաւատորմին մէջ։ Բայց եւ այնպէս կառավարութիւնը հրամայեց աւելի խիստ հսկողութեան տակ առնել նախկին դիկտատորը։

Թուրքեւռուս համաձայնագիրը

Ըստ ռուսեւթուրք համաձայնագրին տրամադրութեանց, Ռուսիա ապրանք արտածողները պարտաւոր պիտի չըլլան փոխարէնը ապրանք գնելու, ինչպէս կ'ընէին նախապէս, այլ հաբիւրին քսանըհինգ համեմատութեամբ միայն ապրանք գնելու պարտաւոր պիտի ըլլան, մնացեալը դրամ ըլլալով պիտի կրնան դուրս հանել Ռուսիայէն։

Թուրքիայէն Ռուսիա կ'արտածուին ամէնէն աւելի լեմոն, նարինջ եւ փալուտ։ Մասնաւորաբար լեմոնը շատ սուղ կը ծախուի Ռուսիոյ մէջ։ Ստորագրուած համաձայնագրէն զատ, առանձին համաձայնութիւն մը կնքուած է չորս հարիւր հազար ոսկիի արժողութեամբ ապրանք արտածելու համար Ռուսիա։

Այս առժամեայ համաձայնագրին համաձայն, արտածուելիք ապրանքներուն ցուցակը կառավարութեան յանձնուած է ռուսական առեւտրական ներկայացուցչութեան կողմէ։ Ռուսերը չեն ուզած որ ամէն մարդ կարենայ ապրանք արտածել Ռուսիա, եւ կառավարութեան յանձնած են քառասուն վաճառականներու ցանկ մը։ Ինդրուած է որ չորս հարիւր հազար ոսկիի ապրանքին արտածման արտօնագրերը բաժնուին ներկայացուած ցանկին մէջ նշանակուած անձերուն վրայ։ Այս ցանկին մէջ արձանագրուածներուն կարգին կը գտնուին նաեւ յոյն, հայ, հրեայ եւ ուրիշ ազգութեանց պատկանող ընկերութիւններ։

Տեւական առեւտրական համաձայնագրին համաձայն, Ռուսիա արտածուելիք բոլոր ապրանքները պիտի հակակշռուին առեւտրական գործավարութեան կողմէ որ պիտի հաստատէ թէ իրապէս Թրքական՞ն արտադրութիւն են անոնք։

Համաձայնագրի բանակցութեանց ոուս մասնագէտները մօտերս Մոսկուա պիտի երթան, համաձայնագիրը միասին տանելով, զեկուցում ընելու համար իրենց կառավարութեան։ Հաւանական է որ անոնց հետ Մոսկուա երթայ նաեւ Ռուսիոյ առեւտրական ներկայացուցիչը։

Սևրել հեռաձայնը Պոլսոյ մէջ

Պոլսոյ անթել հեռաձայնի կայանին փորձերը վերջացած եւ կատարեալ արդիւնք տուած են։ Կայանը մօտ օրէն պիտի սկսի յարաբերութիւններ մշակել աշխարհի բոլոր մեծ կայաններուն հետ, նուագահանդէսներ տալու համար Պոլսոյ մէջ։

Էնկիւրիի կայանին աշխատութիւնները դեռ վերջացած չըլլալով, երկուքուկէս-երեք ամիս վերջ միայն կարելի պիտի ըլլայ անթելի գործունէութեան սկսիլ այնտեղ։

Ընկերութիւնը պայմանաւորուած է Պոլսոյ երաժշտանոցի նախկին տնօրէն Մուսա Սիւրէյեա պէյի հետ, որ երաժշտական դասեր պիտի տայ եւ նուագահանդէսներ կազմակերպէ։ Մեծ կարեւորութիւն պիտի տրուի Թրքական երաժշտութիւնը ղրացի պալքանեան երկիրներուն եւ մասնաւորապէս Եգիպտոսի, Միջագետքի, Պարսկաստանի եւ Ատրպէյճանի մէջ լսելի ընելու։

Յարիւն գոհարներն կը ծախուին

Լոնտոնի Քրիսթի սրահին մէջ առջի օր սկսան աճուրդով ծախուիլ ցարին գոհարեղէնները եւ այլ թանկարժէք առարկաներ, որոնք անցած տարի գոհարավաճառներու խմբակի մը կողմէ գնուած էին Մոսկուայի մէջ։ Անոնց մէջ են ադամանդներ, ճենապակեղէն, բիւրեղեայ անօթներ, հայելիներ, գորգեր, նկարներ, պրօնզներ եւն., որոնք նախապէս կը զարդարէին ձմեռնային պալատը եւ կայսերական ուրիշ պալատներ։

Մասնաւորապէս հետաքրքիր է որսորդական ճաշի սպաս մը, զոր շինել տուած էր ցար Ալեքսանդր Գ.։

Եւրոպայի ամէն կողմէն գոհարավաճառներ հաւաքուած են Լոնտոն՝ աճուրդին մասնակցելու համար։ Առաջին օրուան վաճառումէն գոյացաւ 80561 ոսկի, մօտ 10 միլիոն ֆրանք։ 5100 սդերլինի ծախուեցաւ լանջազարդ մը՝ ադամանդով, շափիւղայով, մարգարիտով եւ զմրուխտով զարդարուած, հաւկիթաձեւ ադամանդ մը՝ 11,800 սդերլինի, ծխատուփ մը՝ 2,600 սդերլինի։ Կատարինէ Բ.ի «հարսանեկան պսակը»՝ 6100 սդերլինի գնեց Փարիզէն Պ. Ֆունէս։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՓԱՐԻԶի խորհրդային դեսպան Ռաքովսքի ընդունուեցաւ արտաքին նախարար Պրիանի կողմէ։ Ֆրանքեւռուս բանակցութիւնները որոշուեցաւ սկսիլ Շաբաթ օր։ Օրակարգին վրայ են իրաւական, դիւանագիտական, մտաւորական եւ ելմտական խնդիրներ։ Ամէնէն կարեւորը պարտքերու հարցն է։

ՀԱՅՐ ԲԵԹՂԵՀԷՄ, մերկ պատկերներ պատռող հերոսը, 11 ֆրանք տուգանքի դատապարտուեցաւ դատարանին կողմէ։ Նոյն պատիժին ենթարկուեցան նաեւ այն երկու լրագրողները, որոնք կրծնական պատկերներ պատռած էին։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԷՍԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

3 ԱՊՐԻԼ 927 ԿԻՐԱԿԻ ԿԷՍ ՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄՈՒ 2.30ԻՆ

Նուվելթի Տանսինկ սինեմայի մէջ, Av. Jean Jeurès (կայարանին մօտ)

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝ ԽԱՂԱՄՈՒԼԸ ԵՒ ԹԻԳ-ԹԱՔ գաւեշտը

Ներկայացումէն վերջ մինչեւ կէս գիշեր պար եւ ճազ-պանտ

Հ. Մ. Ը. Մ.Ի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Փարիզի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.) իր տարեկան պարահանդէսը կուտայ վաղը Շաբաթ գիշեր, Washington Palaceի (14 Rue Magellan) սրահներուն մէջ, բարձր հովանաւորութեամբ ֆրանս. նախկին պատերազմական նախարար Պ. Ալնտրէ Լըֆեվըրի։

Պարահանդէսին կազմակերպութիւնը յանձնուած է փարիզահայ յայտնի երիտասարդութեան։ Յաջողութեան համար ամէն կարգադրութիւն եղած է. կ'արժէ որ փարիզի հայութիւնը ամենալայն չափով իր օժանդակութիւնը բերէ, ներկայ գտնուելով սոյն երեկոյթին, որ եղանակին վերջինն է։

ՅԵՐԵԿՈՅԹ-ՀԱՆԴԷՍ

20 Մարտ 1927, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին

Ալֆոռվիլի Երիտ. Միութեան կողմէ, Ակումբին մէջ

Իր կազմութեան Ա. Տարեդարձին առթիւ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԵՐԳ, ՆՈՒԱԳ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Եւագոյն» խումբի անդամական ժողովը՝ այսօր Ուրբաթ երեկոյեան ժամը 8ին, Ծանօթ հաւաքատեղին։ Բոլորը անպայման ներկայ։

Հ. Յ. Դ. «Դոյամարտ» խումբի ժողովը 20 Մարտ կիրակի կէսօրէ վերջ ժամը 3.30ին ծանօթ հաւաքատեղին։ Անդամատերերը միասին բերել։ Կարեւոր զեկուցում։

Հ. Յ. Դ. «Քրիստափոր» խումբը ժողովի կը հրաւիրէ սէն-Միշելի եւ շրջականերու բոլոր դաշնակցականները վաղը՝ Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, ֆաֆէ Ռօշէ մէթրօ՝ Օտէոն։

Հ. Յ. Դ. պէլվիլի ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ, Ակումբն-Գարօի, Գէորգ Զավուշի, Ռոստոմի, Խաժակի, ինչպէս նաեւ սոյն շրջանի մէջ գտնուող եւ ցարդ որեւէ խումբի չմասնակցող բոլոր ընկերները այսօր Ուրբաթ ժամը 8.30ին, Ռոստոմի գրադարանը, 131, Faubourg du Temple, métro: Belleville.

Հ. Յ. Դ. «կայծակ» ենթակոմիտէի ֆանն եւ արուարձանները բնակող բոլոր ընկերները ընդհ. ժողովի կը հրաւիրուին այս կիրակի կէս օրէն վերջ ժամ 1ին, Rue Du Pré No. 21 Cannes: կարեւոր օրակարգ։

Հ. Յ. Դ. փարիզի շրջանային կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Շավիլի, վէրսայլի, սէվռի, վիրօֆլէի բոլոր դաշնակցական ընկերները եւ անոնք որոնք արձանագրուած չեն ոեւէ խումբի մէջ վաղը՝ Շաբաթ երեկոյ ժամը 8ին 187 Grand'Rue, Chaville (Pointe de Chavilleի Թրամուէյի կայարանին մօտ)։

Հ. Յ. Դ. Ուսանող. միութեան ընկ. ընդհ. ժողովը այսօր Ուր., ժամը 8.30ին Ծլօրիայի սրահը։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Հ. Յ. Դ. սէն Շամոնի կոմիտէին ընկ. ընդհ. ժողովը կիրակի 20 Մարտ կէսօրէ վերջ ժամը 2.30ին վարուժան ակումբին մէջ։ Օրակարգ խիստ կարեւոր. կը հրաւիրուին բոլոր ընկեր-ընկերուհիները։ Ներկայանալ անդամատետրով։

Հ. Յ. Դ. Մարսէյլի Ռոստոմեն-Թակոմիտէին ժողովը՝ 20 Մարտ կիրակի, երեկոյեան ժամը 7 ու. կէսին, Ծանօթ հաւաքատեղին։

Հ. Յ. Դ. Մարսէյլի ընկերուհիներուն ընդհ. անդամական ժողովը՝ կիրակի 20 Մարտ, կէսօրէ վերջ ժամը ճիշտ 1ին, 13, բիւ տը լա Ռէփիւպլիքի վերի յարկը։

Հ.Յ.Դ. Մարսէյլի «վարդգէս» խումբի ժողովը 20 Մարտ, կիրակի կէսօրէ վերջ, ժամը 3.30ին 63, Rue de la Républiqueի սրահը։

Հ. Յ. Դ. Մարսէյլի պատանեկ. միութեան ընդհ. անդամական ժողովը՝ կիրակի կէսօրէ առաջ ժամը 9ին։ կարեւոր օրակարգեր։ Անդամատետրները միասին բերել։

ՀԱՅԲԵՆԱԿՑԱԿԱՆ միութեանց կեդր. վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ բոլոր Հայրնկց. միութեանց ներկայացուցիչները այսօր Ուրբաթ երեկոյ ժամը 9ին Ֆլօրիայի սրահը. խիստ կարեւոր օրակարգ։

ԵՐԵԿՈՅԹ

Հ. Յ. Դ. հիմնադիրներէն անզուգական քրիստափորի յիշատակին, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Մարսիլիոյ «Քրիստափոր» ենթակոմիտէին, 9 Ապրիլ Շաբաթ երեկոյ ժամը 8.40ին սալօն միշէլի մէջ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ երեկոյթ - պարահանդէս, վաղը՝ Շաբաթ գիշերը, ժամը 9էն մինչեւ առաւօտ, 12 Rue du Renard, մէթրօ Օթել տը Վիլ։ Ներկայացում, երգ, արտասանութիւն եւ պար։ Ձագ-պանտ։ Մուտք՝ 5, 10 եւ 20 ֆրանք։

ԲԱՑՈՒՄ - ԹԷՅԱՍԵՂԱՆ

Ալֆօրվիլի Հ. Մ. Ը. Մ.ի եւ Ջափ. երկ. Որբերու Միութեան մասնաճիւղերը, բացման առթիւ, կազմակերպած են Թէյասեղան մը՝ որ տեղի կ'ունենայ վաղը՝ Շաբաթ ժամը 8.30ին, 184, Rue Etienne Dolet, Alfortville։ կը խօսին Պ. Պ. Թ. Մեճատուրեան եւ Շ. Նարդունի։

Կայ նաեւ գեղարուեստական բաժին, խմբերգ, նորակազմ «Կովիտաս երգչախումբին կողմէ։»

ՆԱՄԱԿ ՈՐԻՆ

Միհրան Իփէքճեան, Նշան Յովհաննէսեան. դիմել՝ խմբագրատուն։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— կեսարիոյ Սարը օղլան գիւղէն կարապետ Պապիկեան։ Գրել՝ Garo Ohanianի Café Arménien, Avenue Jean-Jaurès. Décines, (Isère): կը խնդրուի արտասահմանեան Թերթերէն արտատպել։

— Կը փնտռուի Խարբերդի Ս. Աստվածածնայ Թաղէն Խաչատուր Գէորգեան, որ երկու տարի առաջ կը գտնուէր Լիվրփուլ (Անգլիա) եւ կ'աշխատէր նաւերու մէջ։ Իմացնել N. Sarkissianի, 25 Rue Belle Image, Valence. Drome-France։

— Կը փնտռուի Պրուսայի Մեծ Նոր Գիւղէն Գէորգ Սարգիսեան (Հեղինէեան), հօր անունը Սարգիս, մօր անունը Ովսաննա որ 1925ին Թրակիայէն Յունաստան գացած էր։ Գրել՝ Անդրէաս Սարգիսեանի Aux Etablissements A. Vital, Aubenas, Ardèche, France: Կը խընդրուի յունահայ Թերթերէն արտատպել։

— Երուանդ Աշճեան կը փնտռէ իր հայրը Մանուէլ Աշճեան Եոզկատցի, 45 տարեկան, որմէ վերջին անգամ Դամասկոսէն լուր առնուած է. իմացնել Achdjian, Gaudinière-La Ville-aux-Clercs, Loir-et-Cher. France: Արտասահմանեան Թերթերէն կը խնդրուի արտատպել։

ՎԻԼՆԻ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼԸ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՅՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ

ԾԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Փարիզի եւ գաւառներու Հայութեան համար կը պատրաստէ

ՀԱՄՈՎ, ՀՈՏՈՎ, ԱՆԹԱՐԴԱԽ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ

Մեծաքանակ եւ փոքրաքանակ Ամէրիկեան դիներով

Մէկ փորձ բաւ է համոզուելու, հետեւաբար ապագրանքները անմիջապէս կը ղրկուին։ Թէլէֆոն։ Provence 38.63, Métro Cadet

26, Rue de Trévise Paris (9)

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քիթ, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՁԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ"

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ

Շամեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Ծծնոկրաթի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԱՄԷՆՈՒԻՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ Գ.Ր. ՃՕԼՕԼԵԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**

9 RUE PAPILLON, PARIS IX

Square Montholonի դիմաց Rue Lafayetteի կից

Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ժամը 9էն 6։ Գեղարուեստական ճաշակով պատրաստուած անձերի աշխատութիւններ։ Ինքնուրոյն խնդուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ։

ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Շերիկեանի ՖՐԱՆՔՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ

15 բիւ տէ Ֆոմինիքէն

Կահագործ *աժան դիներով կը շինուին եւ կը նորոգուին անակոռասիներ, զրասենեակի սեղաններ հեւալէն, ծախու են Թրքական թավլուներ։ Դիմել՝* 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

Կ'ուզուի *ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16 - 18 տարեկան։ Դիմել՝ պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).*

ՊԱՔԻՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ԴԱՇՆԱԿԻ ԵՒ ՕՌԿԻ

Աքոռատ եւ նորոգութիւն Դաշնակահարուհի ՕՐ. Ն.ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր։

Դիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Marcadet:

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑՔԱՅՔԷ ՋԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մասնաւորապէս լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մեթերք մը ունի մատենադարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

IMPRIMERIE - **MASSIS** - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ՎԱՐՋՈՒԻ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ ԵՒ ՍԵՆԵԱԿՆԵՐՈՒ

վ.արձու է պասթիլի կողմ ժան գինով յարկաբաժին մեծ եւ 2 պզտիկ սենեակներ կան նաեւ վարձու սենեակներ իթալիի կողմը։ Դիմել՝ 6էն–7 Maison Melkis, 2 Ave. Docteur Leray, 36 Rue Damesme մօտ, Paris (13) մէթրօ Իթալի

ԼԱԻ ԼՈՒՐ ՄԸ

ՔԱՇ ՔՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒՆ

ձեր մետաքսները մի գ... օրուան գինով։ Դիմեցէք H. Gemel վաճառատունը, 5 R... Bergère, փարիզ, երրորդ յ... ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքին գինն է ֆրանք աւելի աժան կը ծ...

Բաց է ամէն օր, նոյնիսկ մինչեւ իրիկուան ժամը 7ը կը խօսուի Թուրքերէն։

ԱԿԱՆԱՏ

17 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Սթերլին,	L. St.		
Տոլար,	Dollar		
Մարք (ոսկի)	100 Mark		
Թրքական Ձդ.	L. Trq.		
Թրք. ոսկի	» or		
Մէճիտիէ	Médjidié		
Լէվա 100 հատ	Léva		
Տրախմի	»	Drachme	
Լիր	»	» Lire	
Պելճ. ֆրանք	»	Frc. Belge	
Զուից.	»	Frc. Suisse	
Լէյ 100 հատ	Ley		
Ջերվոնեց	(10 Roubles or)		

ԱՐԺԵԹՈՒՂԹ

եգ. Քր. Ֆոնտիէ	1	Cr. Fonc. Eg.	307
»	II	»	153
»	III	»	153
Ռումելի երկաթ.	Lots turcs		

Comptoir Parisien de change et de C...

80, Rue Lafa...

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՒԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՇԱԲԱԹ
19
ՄԱՐՏ
1927

19 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 289

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿԱՌ ԽՕՍՔ

ՓՈՂ ՏՈՒԼԻՔ ՈՐ ՀՈՂ ՏԱՆՔ

Ա՛յս է, սկիզբէն ի վեր եւ մինչեւ այսօր, երեւանի վարիչ-ներուն պատասխանը, ներգաղթի աղաղակին առջեւ։

«Տեղ չունինք»,— այդ արդէն կ'լսեն ու կ'լսեն։ Բայց միշտ ալ կ'աւելցնեն, — «եթէ փող տաք, հող կուտանք»։

Այնպէս որ, հայրենիքի զաւակներուն Հայաստան վերադարձը, կարճ բառով՝ ներգաղթը կը դառնայ ո՛չ թէ հողի, այլ փողի խնդիր։

Եւ կը փրփրին, երբ դիտել կուտանք թէ՝ ա՛յս ընթացքը վայել չէ ինքզինքը յարգող իշխանութեան մը, նոյն իսկ աշխարհակալ-քաղքենի երկիրներու մէջ։ Կը բարկանան, եթէ ուզենք բացատրել թէ չկայ երկիր մը ուր պետութիւնը սահմանէ իր ժողովուրդին հետ, մանաւանդ աղիտաւոր, հալածական, անճար ժողովուրդի մը հետ։

1922ին, Յունաստանն ալ, չարաչար պարտուած, նոյնքան եւ թերեւս աւելի դժնդակ պայմաններու մէջ կը գտնուէր քան այսօրուան Հայաստանը, բայց դուռները լայն բացաւ փոքր Ասիոյ փախստականներուն առջեւ, որոնց մէջ Հայեր ալ կային, մօտ հարիւր հազար։ Զախջախուած եւ անպաշտպան Պուլկարիան քանի հազար հայ փախստական հիւրընկալեց, առանց հարցնելու թէ վեց ամիս ապրելու դրամ ունի՞ն։ Սուրիա, տակաւին ալեկոծ, ներս առաւ կիլիկոյ ամբողջ ժողովուրդը։ Իսկ երիք հարիւր հայրենակիցներ որ խելք ըրեր էին կովկաս երթալ, ետ դրկուեցան բաթումէն, «վիզէ»ի առարկութիւններով։ Ասոնք ալ կը փախչէին սարսափահար, ինչպէս միւս բազմութիւնները...

Այս իրողութիւնները կը գրենք ու կը պատմենք 1922էն ի վեր։ Կը գրեն ու կը պատմեն ուրիշներ ալ։ Արդի՞նքը, — բնաւ լուսթիւն կամ գեհենիկ հայհոյանք։ Պարբերաբար շնո՛րհ կ'ըլլար քանի մը հազար հոգի ընդունելու, ինչպէս, ժամանակին, «Իրատէ» կ'ելլէր Թուրքիոյ մէջ, պետական պաշտօնեաներու թոշակները վճարելու համար։ Շիրակի շարժը պատճառ եղաւ որ այդ շնորհն ալ դադրի։ Հիմա, թէեւ կը խօսին հինգ հազարի նոր ցանկի մը մասին, բայց կը կարծենք թէ Դ. Նանսէրտեանի սովորական սուտերէն մէկն է այդ պատմութիւնն ալ։ Արտասահմանի իր միւս պաշտօնակիցները բոլորովին տարբեր բաներ գրեցին այս մասին։

Յունաստանի մէջ կատարուած խաչագողութիւններէն, ներգաղթի վրան-բաց առուծախէն յետոյ, դժուար թէ հաւատացողներ գտնուին նոր կարգադրութեան։

Ամէն պարագայի մէջ, այդ խեղկատակ շնորհները չեն որ պիտի լուծեն տագնապը։

1926 Ապրիլին, Երեւանի ներքին գործավարութեան Գաղթականներու Բաժինը հրատարակեց վիճակագրութիւն մը, որուն համաձայն 1922ի սկիզբէն մինչեւ 1925ի վերջը արտասահմանէն Հայաստան գացած են 17,452 գաղթականներ։ Տարին ալ իսկ հինգ հազար, ենթադրելով որ բոլորն ալ մեր հասկցած գաղթականներն են։ Մինչդեռ գիտենք որ այդ շրջանին իրական ներգաղթ կատարուեցաւ միայն Յունաստանէն, եւ գաղթականներուն թիւը հինգ-վեց հազարէն աւելի չէ։ Իսկ ո՞ւր է որ, այդ միեւնոյն ժամանակամիջոցին, եւ մանաւանդ աւելի վերջերը, երեսուն հազար Թուրքեր եկած տեղաւորուած են մեր մանրանկար հայրենիքին մէջ։ Եւ տակաւին չենք հաշուեր այն տասնեակ հազարաւոր հայրենակիցները որ կարաւան-կարաւան հեռացած են Հայաստանէն, գործադրելով Արտաշէս կարինեանի հռչակաւոր պատգամը. «Պէտք է վերջ տալ հայութեան հաւաքման Հայաստանի մէջ եւ 300,000 արեւմտահայ գաղթականները ցրուել Ռուսաստանի մէջ»։ Ցրուել, որպէսզի մարի «նացիոնալիստական» բաղձանքներու կրակը։

Եւ այսպէս ալ պիտի շարունակուի, որքան ատեն որ Երեւանի մարզպանները հիմնովին չփոխեն իրենց կորստաբեր, նախահայկական քաղաքականութիւնը։ Որքան ատեն որ պայրենիքի զարգացման, ազգաճաւաքման գործը շփոթեն ագարակի մը կամ Սիբիրօէնի գործարանին մատակարարութեանհետ։

Համաձայն ենք որ արտասահմանի մէջ կուտակուած բոլոր ազգային գումարները օգտագործուին Հայաստանի համար։ Այս մասին երկու խօսք չկայ։ Բայց, մանկամտութիւն է այդ պայմանին հետ կապել ներգաղթը։ Փոխանակ պահանջելու որ փող տրուի, հայրենիքին դուռները բանալու համար, պէտք է նախ իջը տան, առանց առարկութեան եւ տաղտկալի ձեւակերպութեանց, եւ փողը ինքնին կը հոսի, թէ անհատաբար՝ վերադարձողներուն ձեռքով, եւ թէ հաւաքաբար, հանրային ձեռնարկներով։

Հարեւան Էնկիւրին, իրենց եղբայրակիցն ու գինակիցը, ծրագիր պատրաստեր է արտասահմանէն 80—90,000 Թուրքեր փոխադրելու Թուրքիա։ Մինչեւ անգամ կը խորհին կովկասէն (Ճարիա եւն.) առնել մէկ մասը։ Ինչո՞ւ Երեւանն ալ չի մշակէ այսպիսի ծրագիր մը, նոյն իսկ փոխադարձ համաձայնութեամբ, Ճարիայի տեղ Հայաստանը թեթեւցնելով։ Ինչո՞ւ չեն օգտուիր Զիչէրինի հաւաստիքներէն, Քուպանի տեղ կովկասը առաջարկելով։

«Կա՛մ պիտի տարածուինք, կամ պիտի պայթինք», ըսաւ Մուսոլինին։

Տարբե՞ր է այսօրուան Հայաստանի վիճակը։

Նոյն իսկ իրենց գործադրութ գինակիցներուն եւ տէրերուն համար, աւելի շահաւոր չէ՞ որ պակսի «տարածուելու» փորձութիւն մը, օտար աշխարհակալութեան գետին մը...։ Շ.

ՄԱՄՈՒԼ

ՍԱԿԱՑՆ ԵՒ ԱՅՆՊԷՍ...

Արեւ, եգիպտոսի ռամկավարներուն պաշտօնաթերթը, պարզելով գաղթականութեան անվերջ թափառումը երկիրէ երկիր, հետեւեալ բարի խրատները կուտայ.

— «Փրկութիւնը ներգաղթն է։ Այսպէս ըսած ենք առաջին օրէն եւ պիտի շարունակենք միշտ ալ պաշտպանել այդ շիտակ տեսակէտը։ Գաղթականներն ու տարագիրները փոխանակ երկրէ երկիր տանելու ի խնդիր աշխատանքի եւ ապրուստի, գանոնք պէտք է մաս առ մաս եւ անընդհատաբար փոխադրել Հայաստան։

« Բայց կ'ուշանայ այս փերկարար ծրագրին գործադրութիւնը։ Ներգաղթը վերջին տարիներու ընթացքին կատարուած է ցանցառ եւ դանդաղ։

« Սակայն հիմա ընենք, ինչ որ երէկ չըրինք։ Հինգ հազար տարագիրներու փոխադրութեան նախապատրաստութիւն տեսնուած է եւ պահանջուած գումարն ալ հայթայթուած։ Այս փոխադրութիւնը ուշացաւ Լէնինականի աղէտին պատճառաւ, ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, բայց այս գարնան կարաւանը պէտք է ճամբայ ելնէ։

« Եւ այնուհետեւ խօսքն ու գործը գաղութահայութեանն է, Ան է որ պարտական է անմիջապէս նոր ձեռնարկներ կատարել, եւ Հայաստանի անունով ու Հայաստանի համար տրամադրուած ու տրամադրելի բոլոր գումարները իմ հաւաքելով յատկացնելու է մեր երկրի շինարարութեան եւ տարագիրներու փոխադրութեան նպատակներուն։»

Այս խելօք խրատներուն առթիւ, *Երեւան*, դիտել կուտայ.

—«Համաձայն ենք «Արեւ»ին. մենք ալ միշտ նոյն տեսակէտն ենք արձարծեր ամէնէն առաջ և ամէնէն հետեւողական կերպով պաշտպաներ զայն։ Մեր այս տեսակէտին կիրարկումն է որ մեզի կը թելադրէ հրապարակով պահանջել որ Հայաստանին, իր իսկական տիրոջը տրամադրուի իմիջի այլոց նաեւ Մելքոնեանի նուիրատուութիւնը, ներգաղթի գործին ծառայեցնելու համար։

«Ուրեմն, «Արեւ»ին կը մնար շիտակ շիտակ ըսել, թէ ինչ է իր կարծիքը. արդեօք Մելքոնեան նուիրատուութի՞ւնն ալ կը մտնէ «Հայաստանի անունով ու Հայաստանի համար տրամադրուած ու տրամադրելի բոլոր գումարները» ցանկին մէջ։

« Ինչո՞ւ «Արեւ»ը մեզի հետ մէկ տեղ չի պայքարիր Մելքոնեան նուիրատուութիւնը իր իսկական տիրոջ վերադարձնելու եւ ներգաղթի գործին տրամադրելու համար։ Առանց այդ պայքարին, լոկ բարի ցանկութիւն, թղթին յանձնուած մէկ ընդհանուր տեղիք կը մնայ «Արեւ»ի խորհրդածութիւնը։»

Մեզի կը հաղորդեն թէ «Վաղըթ»ի կողմէ Ազգ. Պատուիրակութեան նախկին նախագահներուն վերագրուած նամակը պարզ չարիւրանք է։

ԿԱՐՏԱԼԻ (Մարսէյլ) Լա Մին թաղամասին մէջ կազմուած է Լճէի հայրենակցական միութեան մասնաճիւղ մը։ Միութիւնը թէեւ փոքրաթիւ է, սակայն եռանդուն եւ գործունեայ։

ՕՐԸ ՕՐԻՆ

Անգլիոյ եւ Ֆրանսայի ռազմախորհուրդը

Պոլսէն կը հեռագրեն մարտ 17 Թուականով.— Իգտամ կը գրէ թէ՝ այն պահուն, ուր պետութեանց արտաքին նախարարները ամէնէն աւելի կը խօսին խաղաղութեան մասին, Անգլիա, ռազմափորձի պատրուակին տակ, Ճիպրալթարի շուրջ կը համախմբէ իր նաւատորմը, անշուշտ Ֆրանսան եւ Իտալիան վախցնելու եւ այս երկու ազգերուն հասկցնելու համար որ Թանճէրի խնդրին մէջ անգլ. քաղաքականութիւնն է որ պէտք է յաղթէ։

Այս նաւային ցոյցով Անգլիա կ'ուզէ աշխարհին հասկցնել թէ վճռած է պաշտպանել Հնդկաստանի ճամբան։

Գալով Ֆրանս. ռազմափորձերուն, «Իգտամ» կ'ըսէ թէ անոնք պատասխան մըն են անգլիական ռազմափորձերուն։

∴ Մարտ 16ին Սելանիկի առջեւ հասաւ Ֆրանս. նաւատորմը, ծովակալ Պուիի հրամանատարութեան տակ։ Ծովակալը այցելեց Զէյթինլիքի Ֆրանս. գինուորական գերեզմանատունը, ինչպէս նաեւ իտալ. եւ անգլ. գերեզմանատունները։

Իտալիա եւ Ալպանիա

Պերլինէն մարտ 17 Թուակիր հեռագիր մը կ'ըսէ.—

Դիւանագիտական շրջանակները մեծ ուշադրութեամբ կը հետեւին այն դէպքերով որոնք ժամանակէ մը ի վեր կը պատրաստուին Պալքաններու մէջ։ Մանաւանդ հետաքրքրութիւն կայ Ալպանիոյ մասին, որ իտալական մեքենայութեանց շնորհիւ գրգռութեանց վառարան մը դարձած է, ուսկից կրնայ ծագիլ պատերազմ բոնկցնող կայծը։

Իտալական գործակալներ Թիրանայէն մինչեւ Վիէննա լուր կը տարածեն այս առաւօտ թէ սերպ «քօմիթէճի»ները կը պատրաստուին արշաւել Ալպանիոյ վրայ, ուր բնակչութիւնը շատ մտահոգ է։ Եթէ այդ յարձակումը կատարուի, գերման ազգայնականներն ալ, որոնք հակառակ Ահմէտ Զօկուի ներկայ կառավարութեան, Սերպերուն պիտի միանան՝ Թիրանայի կառավարութեան դէմ։

Այս բոլոր զրոյցները ձգտուած վիճակի մէջ կը պահեն Պալքանները։ Իտալիոյ գինուորական պատրաստութիւններն են պատճառը այս վիճակին։

Եուկոսլաւիոյ թագաւորը Ալեքսանդր, որ Պուքրէշ գացած էր, Պելկրատ մեկնեցաւ։

∴ Վիէննայէն կը հեռագրեն թէ Ալպանիոյ վարչապետ Ահմէտ Զօկու զինքի տակ կանչած է բազմաթիւ դասակարգեր եւ իր անձնապահ գունդը զօրացուցած է, վախնալով այն լուրերէն թէ Սերպերը կը ծրագրեն տապալել զինքը։ Ալպանական կառավարութիւնը սարսափած է այն լուրերէն թէ հրոսախումբեր կը կազմուին եուկոսլաւ հողի վրայ։

Պալքաններու կացութիւնը

«Փոփիւլէր»ի պալքանեան թղթակիցը նոր թղթակցութեան մը մէջ դարձեալ կը քննէ Պալքաններու կացութիւնը եւ կ'ըսէ. «Մինչեւ մեծ պատերազմ, Անգլիոյ շահերը Պալքաններու մէջ — գոնէ ուղղակի — կը վերաբերէին Պոլսոյ եւ Յունաստանի։ Պատերազմէն վերջ այս շահերը ընդարձակուեցան և հիմա Անգլիա ամուր կերպով ոտք դրած է ամբողջ պալքանեան թերակղզիին մէջ, բացի եուկոսլաւիայէն, ու ամէն տեղ կը տեսնուի Անգլիոյ ազդեցութիւնը։

Փոքր համաձայնութեան պետութիւնները Ֆրանսայի կապուած են իրենց շահերու համանմանութեան պատճառաւ։ Անգլիոյ վարիչները, իբրեւ գործնական մարդեր, երկրի մը շահերը նկատի չեն առներ, ժողովուրդը սիրաշահիլ չեն ուզեր, կառավարութիւնը կը բաւէ։ Այդ կառավարութիւնը ո՛րքան շատ դժուարութիւններ ունենայ, այնքան դիւրին է գայն գործիք դարձնել։ Անգլիա գիտէ նաեւ լաւ վարձատրել իր հաւատարիմները։ Դրամ փոխ կուտայ, իբրեւ գործի մարդ, եւ այդ առիթէն օգտուելով Անգլիացիներ կը տեղաւորուին ամէն տեղ՝ դրամատուներու, գործարաններու, նոյնիսկ նախարարութեանց մէջ, ու այսպէսով իրական տէրը կը դառնան այդ երկրին։ Այս մեթոտին շնորհիւ այսօր Անգլիա Պալքաններու տէրը դարձած է։ Իր գլխաւոր նպատակն է պաշարման տակ առնել Ռուսիան։

Այս վերջինը եւս մեծապէս կը շահագրգռուի Պալքաններով։ Վտանգաւորը ռուս պոլշեւիկութիւնը չէ այլ ռուս ազգայնականութիւնը, որ այսօր աւելի քան երբեք զօրաւոր է։ Անգլիա բնաւ չպիտի կրնայ Եուկոսլաւիան եւ Չեխոսլովաքիան իր կողմը շահիլ՝ Ռուսիոյ դէմ գործելու համար։ Նախկին եռանկիւնը՝ Պելկրատ—Փրակա—Մոսկուա՝ պիտի վերակենդանանայ, ու այն ատեն Պուլկարիա, Ռումանիա, նոյնիսկ Հունգարիա՝ պաշարուած 130 միլիոն Սլաւներէ, պիտի ստիպուին հրաժարիլ անգլիական պաշտպանութենէն։

Զերբակալուած պոլշեւիկը արձակուած

Գրեցինք թէ Պոլսոյ քաղաքական ոստիկանութիւնը ձերբակալած էր խորհրդային առեւտրական գործակալութեան գլխաւոր պաշտօնեաներէն Աքունօֆը։ Յիշեալը երեքշաբթի օր ազատ արձակուեցաւ։ «Թայմզ»ի թղթակիցը կը հեռագրէ թէ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՊՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

Անգլիոյ խորհրդարանին մէջ գանձային նախարարը յայտարարեց թէ խորհրդային կառավարութեան կողմէ առանց հատուցումի գրաւուած Անգլիացիներու պատկանող առեւտրական և ճարտարագործական սեփականութեանց ընդհանուր արժէքը 180 միլիոն սղերլին կը գնահատուի։ Այս մասին քանիցս բանակցութիւններ կատարուած են, առանց արդիւնքի մը յանգելու։

Պելճիքան ալ պիտի ճանչնայ.— Պելճիքայի ծերակոյտին մէջ արտաքին նախարար ընկերվարական Վանտէրվէլտ յայտարարեց.

« Ես կողմնակից եմ սովետներու ճանաչման, որովհետեւ այդ հսկայ երկիրը կարելի չէ դուրս ձգել միջազգային խնդիրներէն։ Արդէն գրեթէ բոլոր երկիրներն ալ ճանչցած են գայն։ Սակայն այս խնդիրը չկայ կառավարութեան ծրագրին վրայ ու կը խոստանամ ատով չզբաղիլ։»

ՓԱՅՏԷ ԿՕՇԻԿՈՎ.— Լիւի մօտ Մ'իլօնֆօս գիւղին մէջ ձերբակալուեցաւ Ֆրանսացի ագարակապանի մը 16 տարուտղան, Փիէր Պոնէ, որ հօրը դրամները գողնալու համար փայտէ կօշիկի հարուածներու տակ սպաննած էր իր հայրը։ Ամբողջ գանկը ջարդու փշուր եղած և աչ ականջը փրթած էր։ Սակայն, կատարուած քննութենէն կը հասկցուի որ, սարսափելի պայքարէ մը յետոյ միայն հայրը ինկած և յաղթուած է։ Հօրը ձեռքին մէջ կը մնային մազի փունջեր, զորս խլած էր զաւկին գլխէն՝ ինքզինք պաշտպանած ատեն։ Վայրենի հայրասպանը սակայն այնքան անգթօրէն գործադրած էր ոճիրը, որ հօրը մարմինը ծեծուած միս էր դարձած, ճակատոսկորը ներս էր ինկած։ Պատերը ներկուած էին արիւնով, որ ժայթքած էր ուժգնօրէն։

Քննութիւններուն ներկայ գտնուած է հայրասպանը, ձեռքերը գրպանը, վստահ որ չպիտի կրնան հասկնալ, որովհետեւ լուացած էր իր արիւնթաթախ լաթերը։ Սակայն արգարութիւնը իր ծանր ձեռքը դրաւ այդ վայրենի գազկին ուսին վրայ։

ԵՐԵՔ ՏՂԱՅ ՈՂՋ ՈՂՋ ԱՅՐԱՑԱ.— Հինգշաբթի ցորեկին, Մէնթ'Ուէնի աղքատիկ տագաւարներէն մէկուն մէջ, երեք տղաք կը խաղային։ Մինակ էին ու իրենց տարիքն էր 4, 2 տարու եւ 5 ամսու։ Ցանկարծ կրակ ցատկեց ծածկոցներուն վրայ, բռնկեցաւ տագաւարը եւ ողջ ողջ այրեցան երեք երախաները։

Մայրը տուն դարձաւ այն պահուն, երբ վերջին կրակները կը ծխային դեռ։ Յուսահատ դեռատին ինկաւ։

ԱՆՋԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՀՌԵԼԻ ԵՂԱՆԱԿ ՄԸ.— Պորտոլի Պէկկը փողոցին մէջ վաթսունամեայ կին մը անձնասպան կ'ըլլայ զարհուրելի եղանակով մը։ Նախ նամակի մը մէջ նկարագրելէ յետոյ թէ ի՛նչ եղանակով պիտի մեռնի ինքզինք, կը մտնէ մառանը, իր հագուստներուն վրայ կը թափէ քարիւղ, կը վառէ ինքզինք եւ սարսափելի չարչարանքներու մէջ՝ դեռնէն վրայ սողալով կրակ կը ձգէ մառանին ամէն կողմը։

Ու մինչեւ որ հրշէջները կը հասնին, դժբախտ կինը ածխացած էր արդէն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ա. Ա. ՍԱՐՅԱՆ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ա. Ա. ՍԱՐՅԱՆ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՅԱՂՈՒՄՈՎՈՒ ԴՈՒՏՈՎԵՄ

(ՀԱՏՎԱԾ Հ ԴԱՇՏԻ)

Ցաղումով Ը. Ն.

— Ինչի՞ համար ես ինձ ասում, որ ես ուզում եմ ամուսնանալ Ռուդիկի հետ, ես ինքս էլ գիտեմ, որ ուզում եմ, ես ինքս էլ գիտեմ, որ ես ինքս էլ գիտեմ, որ ես ինքս էլ գիտեմ, որ

մեծ գաղտնապահութիւն կը տիրէ այս մասին, և չի գիտցուիր թէ իրեն դէմ եղած ամբաստանութիւնն՞ըը սխալ էին թէ սովետական դեսպանատան բողոքին վրայ է որ ազատ ձգուեցաւ։

Չինական կռիւներ

Շանկայէն կը հեռագրեն թէ ազգայնականները Մարտ 17ին գրաւեցին Թայհօ լիճին հարաւը գտնուող Իշինկ ռազմագիտական քաղաքը։ 30,000 հիւսիսային զինուորներ պարտաւորուեցան նահանջել դէպի Վուզիհի երկաթուղագիծը, Շանկայէն մօտ 50 մղոն հիւսիս։ Երբ այս փախստական զինուորները անկարգօրէն Վուզիհ հասան, ընդհանուր խուճապ առաջ եկաւ եւ Շանկ-Շունկ-Շանկի զինուորները թէ Վուզիհէն եւ թէ Շանկ-Շօուէն սկսան հապճեպով նահանջել դէպի Շինքեանկ, Շանկայ—Նանքին գծին վրայ։ Այս նահանջը հաւանաբար կանգ պիտի առնէ Շինքեանկի մէջ։

Ազգայնական լրտեսներ Սու-Շէուի եւ Վուզիհի միջեւ երկաթուղիի գիծը քանդեցին, նահանջող բանակի հաղորդակցութեան ճամբան կտրելու համար։

Նանքինի շուրջ կռիւները կը շարունակուին։ Օտարական կիներն ու տղաքը կը մեկնին քաղաքէն՝ վախնալով որ հիւսիսեան զօրքերու եւ ոուս վարձկան զինուորներու կողմէ կը կեղեքուին։ Վերին հրամանատար Շանկ-Շունկ-Շանկ հապճեպով փէքին գնաց տեսակցելու համար Շանկ-Յօ-Լինի հետ՝ եանկցէի ստորին հովիտին զինուորական լուրջ կէտերու մասին։ Հանկչէուի մէջ ժողովուրդը յարձակեցաւ բրինձի խանութներուն վրայ եւ կողոպտեց զանոնք։

Շանկայի մէջ Նանքինի գրաւման մասին զրոյց շրջած ըլլալով, կրկին գործադուլ յայտարարուեցաւ։ Համայնավար բանուորները սպաննեցին իրենց այն պետերը, որոնք կը հակառաւ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 Ֆ.	70 Ֆ.	140 Ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շ.	40 շ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 Ֆ.	200 Ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԿԻՐԱԿԻ
20
ՄԱՐՏ
1927

20 MARS 1927

Գ. ՏԱՐԻ թիւ 290

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀՐԱԲԽԱՅԻՆ

Հռոմէն հեռագիր մը կը տեղեկացնէ թէ վէսուվը բորբոքած է նորէն։

Զգիտենք ո՛րքան ճիշտ էապես բնական երեւոյթը։ Բայց իսկապէս հրաբխային վիճակ մը կը տիրէ Պալքաններու մէջ, բորբոքուն՝ իտալական լաւաներով։

Տասը օրէ ի վեր, գարմանագան լուրեր կ՛իմանանք այդ մշտավառ հնոցի մասին։ Պնդումներ, հակասութիւններ, հերքումներ իրարու կը յաջորդեն։ Բայց եթէ ուզենք հետեւութիւն մը հանել այդ բոլորէն, կարելի է առանց չափազանցութեան հաստատել թէ բաներ մը կը դառնան։

Ամէնէն առաջ, ակներեւ է Իտալիոյ յարաճուն գործունէութիւնը՝ Պալքաններու մէջ, իբրեւ հետեւանք նոր քաղաքականութեան մը, որ նուիրագործուեցաւ Ալպանիոյ Թեւարկութեամբ եւ Պեսարապիոյ կցման վաւերացումով։

Այսօրուան Իտալիան այդ երկրամասին մէջ կը կատարէ ձիշտ այն դերը զոր հանգուցեալ Աւստրիա-Հունգարիան։ Ան առեն, Հապսպուրկներու կողքին կանգնած էր կայսերական Գերմանիան։ Այսօր՝ սեւ շապիկաւոր Իտալիոյ Թեւերը կը մարդէ Մեծն Բրիտանիան։ Ան առեն, կռուախնձոր մըն էր Պօսնա-Հէրսէքը, եւ մրցակից մը կամ ցարական Ռուսիոյ աթին մէջ գործիք մը՝ Սերպիան։ Այսօր՝ փորձութեան գեօտը Ալպանիան է, եւ միւս ճակատը՝ նորէն Սերպիան, որ Նուկօ-Սլաւիա կը կոչուի այժմ, եւ որ ճարահատ աչքերը կուղղէ միեւնոյն հասցէին, դէպի պոլշեւիկ Ռուսիան։ Ան առեն, մրցակցութեան դաշտ մը կամ քաւութեան նոխազ մըն էր ապստամբ Մակեդոնիան։ Այսօր ալ, խորապէս դժգոհ եւ հնաւանդ փորձութեան ենթակայ է այդ երկրամասը, եւ իր յեղափոխականները ռազմախաղեր կը փորձեր, «Մակեդոնիան Մակեդոնացիներուն» վերադարձնելու համար։ Վերջերս լուր կար թէ Զօր. Փրոթոկէրօֆ, հոչակաւոր Թոտոր Ալեքսանդրովի յաջորդը, Ալպանիա անցեր է Մուսոլինիի դրդումով, խորհրդակցելու ալպանացի յեղափոխականներուն հետ, գործակցութեան մը համար։ Աւելորդ է բացատրել թէ՝ այդ գործակցութիւնը պիտի ուղղուի Եուկօսլաւիոյ դէմ, քանի որ նպատակ Մակեդոնիոյ մեծագոյն մասը կը գտնուի այդ պետութեան ձեռքը։

Ինչքերուն իր ուզած ընթացքը տալու համար, Իտալիա ոչ միայն կը զինէ Ալպանիան, այլ եւ բազմաթիւ գործակալներ կը տեղաւորէ, իբրեւ առեւտրական, յանձնակատար, կամ երկրապահ։ Նոյնը կ՛ընէին Գերմանները Թուրքիոյ մէջ։

Ինչպէս որ, ճակատները յարդարուած են արդէն, եւ տակաւ ի տակ, Եուկօսլաւիան դաշնակիցներ կը փնտռէ խելակորոյս։ Ան այն Պելկրատը որ անողոք «ժանտարմ»ի մը պէս կանգնած էր ուժասպառ Պուլկարիոյ գլխուն և երկու խօսքը մէկ Սօֆիան գրաւել կը սպառնար, այսօր համաձայնութիւն կ՛առաջարկէ, յանուն սլաւական միութեան։

Երկրորդ ակներեւ երեւոյթ մըն է, իբրեւ տրամաբանական հետեւանք իր մշակած քաղաքականութեան, Իտալիոյ ճիգը՝ քանդելու Փոքր Համաձայնութիւնը։

Այդ խմբակցութիւնը շունչ կ՛առնէր Ֆրանսայէն։ Արդ, խմբակցութեան անդամներէն Ռումանիան հետզհետէ կը տարբերայ Իտալիոյ հետ, շնորհիւ նոր դաշինքներու եւ սիրալիր երեսներու։ Չեխօ-Սլովաքիան պրպտումներու մէջ է, այն օրէն ի վեր որ խաւարեցաւ Պենեշի արեւը. իսկ Եուկօ-Սլաւիան նոր քաղաքականութեան բուն նշանակէտն է արդէն, թակարդը ձգուած։

Ո՞ւր է այս հրաբխային կացութեան ճակատագրական ելքը։

Դուշակութիւններով չզբաղինք։ Մանաւանդ երբ հարցը քաղաքական-դիւանագիտական խաղերու կը վերաբերի, մեզի կ՛ինայ միայն պարզել երեւոյթները եւ դէպքերու ընթացքը։

Հակնայլ է որ, պալքանեան հրաբուխ մը չի կրնար սահմանափակուիլ տեղին վրայ։ Կամ աւելի ճիշդ, այնտեղ բռնկած կայծերը իրենց վերջնական ճարակը պիտի գտնեն Արեւելքի մէջ։ Այդ ուղղութեամբ լարուած են դիւանագէտներուն աչքերն ալ։

Շատ բաներ կը պատմեն Իտալիոյ ձգտումներու մասին, Պելկրատէն եւ Քորսիքայէն մինչեւ Թունուզ։ Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ ալ կարգ մը շրջանակներ կ՛աղմկեն այս առթիւ։ Բայց, ինչպէս դիտել տուած ենք ուրիշ առեն, այդ ենթադրութիւնները աւելի մտավախութեան հետեւանք են, քան իրական հաշիւներու։ Իտալիան հող կը պահանջէ, իսկ այդ հողերը չի կրնար կորզել Ֆրանսայէն։ Այդպիսի ձեռնարկ մը իրեն դէմ շուռ տալու համար, բաւ կ՛ըլլար որ Ֆրանսան եթէ ոչ ամբողջ աշխարհը, գոնէ Անգլիան, որ իր դաշնակիցն է այսօր։

Իրերու բերումով, բաց կը մնան Պալքաններն ու Արեւելք.— Թուրքիան։

Ինչ որ կը կատարուի այսօր Պալքաններուն մէջ, ամբողջ շղթայի մը մէկ մասն է, ռազմավարութիւն մը, բուն կէտին հասնելու։

Ալպանիան եւ Մակեդոնիան չեն կրնար գոհացնել Իտալիոյ ախորժակները։ Անտեղ քաղաքական խարիսխն է որ կը պատուհասի եւ տնտեսական շահաստանները միայն կարելի է ապահովել։ Իսկ տարեկան չորս հարիւր հազար աւելորդ բնակիչները տեղաւորելու համար, բաց դաշտեր, լայն տարածութիւններ պէտք են։

Հարց եւ հրապուրիչ է միայն մէկ երկիր.— այն ալ արիւնի եւ աւերակներու վրայ հիմնուած։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՆԵՐՍԷՆ ԵՒ ԴՈՒՐՍԷՆ

«Հայրենիք» յոգնութիւն կրած է տասը խմբագրական գրելու, Արշակ Զօպանեանի կողմէ ծերակուտական քինկի ուղղուած ցաւագար նամակին եւ այդ առթիւ ռամկավարներու քունած դիրքին առթիւ։ Եզրակացութեան մէջ, մեր պաշտօնակիցը աւելորդ անգամ մըն ալ կը շեշտէ.

—«Եւ այսպէս Ռամկավար շէֆերը, պ. Զօպանեանի դլխաւորութեամբ, տարուած միայն իրենց անձնական կամ խմբակցական ստոր հաշիւներէն ու կիրքերէն, փաստօրէն կ՛օգնեն հայ ազգային արտաքին թշնամիներուն՝ Մոսկուային եւ անոր միջոցով նաեւ Էնկիւրիին, երբ, փոխանակ Դաշնակցութեան հետ միասին անոնց դէմ պայքարելու, անոնց հետ միասին Դաշնակցութեան դէմ կը պայքարին բոլոր ճակատներու վրայ, Շիրակի երկշաւիղէն սկսած մինչեւ Լօզանի դաշնագիրը։

«Կը կարծենք, թէ ժամանակը արդէն հասած է, որ բովանդակ հայութիւնը վերջապէս հասկնայ թէ հայ ազգի ապառութեան, անկախութեան եւ միութեան ոխերիմ արտաքին թշնամիներուն չափ ներքին թշնամիներ ալ ունի յանձին հայկոնուն պոլշեւիկներուն եւ ռամկավար շէֆերուն, որոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ մեր ներքին ռուսն ու թուրքը, արտաքին Ռուսին ու Թուրքին գործակալները։

«Ժամանակ է, որ մեր ազգային թշնամի օտար ոյժերուն կամայ թէ ակամայ ծառայող այդ վարձկան թէ անվարձ դաւաճաններուն դէմ հայութիւնը մէկ ճակատ կազմէ, օր առաջ չէզոքացնելու համար անոնց ազգադաւ ճիգերը»։

ՄԱՐՍԷՅԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸՐ

Մարսէյլի ընտրական յանձնախումբէն ստացանք հետեւեալ ազդը, Մարտ 17 թուականով.—

«Ընտրական Յանձնախումբս լրացուցած ըլլալով իր նախնական աշխատանքները, այսօրուընէ բացած է արձանագրութեանց տետրը, որ պիտի շարունակուի մինչեւ Ապրիլ 14, Աւագ Հինգշաբթի, կէսօրէ վերջ ճիշտ ժամը 6, ուրկէ ետքը որեւէ դիմում անհետեւանք պիտի թողուի։ Ուստի կը հրաւիրենք Մարսէյլի բոլոր Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ զաւակները, որպէսզի անյապաղ իրենց ազգային պարտականութիւնը կատարեն՝ վճարելով «ազգային տուրքը, 12ուկէս ֆրանք, 1927 տարւոյ առաջին վեցամսեակին համար (տարեկան 25 ֆր.ի հաշուով), չզրկուելու ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունքէն։

Ընտրական յանձնախումբս առանձին պաշտօնական յայտարարութեամբ հարկ եղած բոլոր կէտերը բացատրած է»։

ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

Ազդրկովկասի ելեկտրական պետական վարչութիւնը (կէթ) 1923էն թ. ի վեր շինած է, Վրաստանի մէջ 9 ելեկտրակայան (Ախալցխա, ցխինվալի, կուրծանի, քվիրիլի, Ապաշէ, Հաշմի, ջիաթուրի, Շաիւմեան եւ ցակվերի), իսկ Հայաստանի մէջ 2 ելեկտրակայան (երեւան, էջմիածին)։ Այժմ ալ շինելու վրայ է Վրաստանի մէջ՝ 6 ելեկտրակայան 27,750 ձիի ուժով եւ Հայաստանի մէջ 4 ելեկտրակայան 8,125 ձիի ուժով. («Ջ. վ.» 8 Մարտ)։

ՕՐԸ ՕՐԻՆ

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

«Թայմզ» կը գրէ.— Իտալական կառավարութիւնը Անգլիոյ եւ ուրիշ կառավարութեանց ծանուցած է թէ իր ստացած տեղեկութեանց համաձայն, Եուկօսլաւիոյ հողին վրայ պատրաստութիւններ կը տեսնուին մեծ արշաւանք մը կատարելու համար Ալպանիոյ դէմ։ Այս գործողութեան նպատակն է տապալել Թիրանայի ներկայ կառավարութիւնը։

«Թայմզ» կը յիշէ թէ Ալպանիոյ հանրապետութեան նախագահ Ահմէտ Զօկու վերջերս Իտալիոյ հետ ստորագրեց Թիրանայի դաշնագիրը, ու կ՛աւելցնէ թէ իտալական կառավարութիւնը անտարբեր չպիտի մնայ ներկայ ալպանական կառավարութեան վիճակին հանդէպ։

Այս լուրին հետ միասին, «Թայմզ» կը հրատարակէ Ալպանիոյ իր թղթակցին մէկ հեռագիրը, որով մասնաւորապէս կը պարզէ Իտալիոյ տեսակէտը եւ կը յայտարարէ թէ եուկօսլաւ պաշտօնական իշխանութիւնները գործակցելով սերպ հողին վրայ հաստատուած ալպանական յեղափոխական կոմիտէին հետ, «քոմիթէճի»ներու խումբեր կը կազմեն՝ Ալպանիոյ վրայ արշաւելու նպատակով։ Թղթակիցը կ՛ամբաստանէ Մանասթըրի կառավարիչն ու Գարատաղի պատերազմական նախկին նախարար Մարթինովիչը, ու կ՛ըսէ թէ զինուորական համախմբումներ տեղի կ՛ունենան Ալպանիոյ գլխաւոր քաղաքէն՝ Շքոտրայէն երկու ժամ հեռաւորութեամբ։

Պելկրատէն «ձոռնալէ տ՛Իթալիա»յի Թղթակիցը կը հեռագրէ հետեւեալը.—

«Բացարձակապէս վստահելի աղբիւրէ քաղուած տեղեկութիւններու համաձայն, սպայակոյտը, Եուկօսլաւիոյ թագաւորին անձնական դեկավարութեան տակ, ներկայիս կ՛իրագործէ ընդարձակ ծրագիր մը, զոր կարելի է զօրաշարժ կոչել. տեղի կ՛ունենան արտակարգ պատրաստութիւններ, որոնք որոշապէս ստիպողական բնոյթ կը կրեն։ Ամէն բան կարծել կուտայ թէ միջոցներ ձեռք առնուած են հապճեպով պատերազմական վիճակի մէջ դնելու համար բանակները։»

Փրակույէվացի եւ պետական վաոդարաններու մէջ տենդոտ գործունէութիւն կը տիրէ։ Կը ջանան փութացնել Պելճիքա ապսպրուած գնդացիրներու եւ ռազմանիւթերու յանձնումը։ Մեծ քանակութեամբ հագուստեղէն եւ վրաններ կը գնուին. հրասայլեր եւ օդանաւեր գնելու համար զանազան բանակցութիւններ կը կատարուին։ Սահմանները կ՛ամրացուին։

Թերթը կ՛աւելցնէ նոյնպէս թէ իտալական եւ ալպանական սահմաններու վրայ զինուորական կարեւոր համախմբումներ տեղի կ՛ունենան։

ԻՏԱԼԻԱ ԿԸ ՀԵՐՔԷ

Հռոմի կիսապաշտօն սթեֆանի գործակալութիւնը կը հրատարակէ հետեւեալ զեկոյցը.—

«Կարգ մը օտար թերթեր կը շարունակեն տեղեկութիւններ հրատարակել Իտալիոյ կարծեցեալ պատերազմական պատրաստութիւններուն մասին, իբրեւ հետեւանք Պալքանեան Թերակղզիին մէջ նկատուած մանաւանդ կացութեան։

«Այս լուրերը բոլորովին անհիմն են եւ հակաճշմարիտ ու խուճապ առաջ բերելու բնոյթ կը կրեն։

«Ճշմարտութիւնը այն է որ, Իտալիա, ինչպէս ամբողջ աշխարհի առջեւ ցոյց տուած է, կը հետապնդէ խաղաղասէր համաձայնութեանց քաղաքականութիւն մը եւ բնաւ մտադիր չէ ուղղակի կամ անուղղակի կերպով վտանգելու խաղաղութիւնը Եւրոպայի ո եւ է մէկ մասին մէջ։

«Անոնք որ հակառակը կը պնդեն, կամ լաւատեղեակ չեն և կամ չարամտութիւն ունին»։

*** Սերպիոյ «Ավալա» կիսապաշտօն գործակալութիւնն ալ կը հերքէ «Ձոռնալէ տ՛Իթալիա»յի հաղորդած լուրերը։

Շքոտրայէն կը հեռագրեն Մարտ 18 թուականով.—

Վալոնայէն առնուած լուրեր կը հաւաստեն թէ վերջին 15 օրուան ընթացքին Իտալիայէն մեծ քանակութեամբ ռազմանիւթ հասած է յիշեալ նաւահանգիստը, իտալական մարտանաւերով։ Մարտ 7ի իրիկունը վալոնա հասած է իտալական Թորփիլանաւ մը՝ լեռնային թնդանօթներ բեռցած, որոնք ցամաք հանուեցան դիշերը։ Տուրացցոյի մօտ իտալական չորս փոխադրանաւեր ցամաք հանած են ռազմանիւթ, զէնք եւ պահածոյ ուտելիքներ։

Երէկ առաւօտ հասած հեռագիրները կը հաստատեն Իտալիոյ պատրաստութիւնները՝ Անգլիոյ հաւանութեամբ դրաւելու համար Ալպանիան։ Ալպանիոյ յեղափոխականները գործունէութեան սկսած են եւ երկրի ազատագրութեան համար ազգային կուսակցութիւն մը կազմուած է։ Իտալիա կը ձգտի թագաւոր ընել Ահմէտ Զօկուն։ Այս նպատակով պիտի գրաւէ Այպանիոյ ծովեզերեայ քաղաքները։

*** Սօֆիայի եուկուսլաւ նոր դեսպանը իր հաւատարմագրերը ներկայացուց Պորիս թագաւորին, երկուստեք արտասանուած ճառերը յոյս կը յայտնեն թէ երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները պիտի բարւոքին եւ սերտ մերձեցում առաջ պիտի գայ։

*** Ահմէտ Զօկու Շքոտրայի մէջ կախել տուած է 30 հոգի, որոնք անցեալ աշնան ապստամբութիւն մը սարքած էին։ Բանտարկուած են 2000 հոգի։

(Լուրերու չարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԵՐԸ 100 ՖՐԱՆՔ

ԵՒ 2 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Ծերակոյտի Ուրբաթ օրուան նիստին մէջ ընդունուեցաւ կառավարութեան ներկայացուցած առաջարկը, որով ինքնուրոյեան թուղթերու սակ կ՛որոշուի 100 ֆրանք, զեղչեալ սակէն օգտուողները պիտի վճարեն 20 ֆրանք։ Ինքնուրոյեան թուղթերը երկու տարուան համար արժէք պիտի ունենան։

Կը մնայ երեսփ ժողովէն ալ վաւերացնել այս օրէնքը, որպէս զի սկսի գործադրուիլ։

ՇԻՐԱԿԻ ՀԱՄԱՐ

Ատիս-Ապէպայէն (Չապէշիստան 309.11.5 (երեք հարիւր ինը սդերլին, տասնըմէկ շիլին եւ ինկ փէննի) հանգանակուած է Շիրակի աղէտեալներուն համար եւ գոց պահարանով մը դրկուած «ցառաջ»ի, յանձնուելու համար Պ. Պօղոս Նուպարի։

Կը խնդրուի ստանալ համապատասխան ընկալագրով։

ՇԷՐԻԱՔՁԻԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Անկախութեան Դատարանները հազիւ թէ չնչուած էին, երբ Պոլսոյ մէջ ուշագրաւ դատ մը սկսաւ։

Ագշամի Փետրուար 23ի թիւին մէջ հրատարակուած ծաղրանկար մը ցոյց կուտար դէպի երկինք բարձրացող օդապարիկ մը, որուն մէջ տեղ գրաւած էին 4.5 Թրքուհիներ։ Օդապարիկը քանի բարձրանար, Թրքուհիները վար կը ձգէին աւազի պարկեր, որոնց վրայ գրուած էր. «խիղճ», «նամուս», «առաքինութիւն»։ Չորրորդ պարկ մը՝ «բարոյական» վերտառութեամբ, պատրաստ էր վար նետուելու։ Ծաղրանկարին տակ գրուած էր. «կ՛ըսուի թէ կինները կը բարձրանան»։ Այս ծաղրանկարը բացէ ի բաց ըսել կ՛ուզէր թէ Թրքուհիները կը յառաջդիմեն, վրայ տալով ամէն առաքինութիւն ու պատիւ։

Ընդհանուր դատախազը քէմալական կառավարութեան բարեկորոգչական ձեռնարկներուն համար վերաւորական գտաւ «Ագշամ»ի այս նկարը, որ նմանցուեցաւ Սահմանադրութեան շրջանին Շէյխ Վահտեթիի «կրօնքը ձեռքէ կ՛ելլէ կոր» շէրիաթճիական դրութեան։

Դատավարութիւնը եղաւ շատ հետաքրքիր։ «Ագշամ»ի խմբագիրները բուռն կերպով բողոքեցին իրենց վերագրուած յեղաշրջական գաղափարներուն դէմ եւ խիստ լեզու գործածեցին դատաւորներուն հանդէպ եւ վերաւորեցին անոնց արժանապատուութիւնը։ Իրենց պաշտպանողականին գլխաւոր հիմը այն էր թէ ծաղրանկարը ո՛չ թէ Թրքուհիներուն, այլ առհասարակ աշխարհի բոլոր կիներուն կ՛ակնարկէ։

Դատարանը Մարտ 17ին տուաւ իր վճիռը, որով Ագշամի խմբագրապետ Նէճմէտտին Սատըգ կը դատապարտուի 5 ամիս բանտարկութեան և 250 Թրքական ոսկի տուգանքի, միւս խմբագիրներէն Բեհչէտ Շինասի, Ալի Նաճի, եւ Սէնիհ Մուամմէր 3ուկէս ամիս բանտարկութիւն եւ 110 ոսկի տուգանքի, իսկ ծաղրանկարիչ Րաթիպ Թահսին պէյը՝ մէկ ամիս բանտարկութեան և 20 ոսկի տուգանքի։ Այս անակնկալ վճիռը մեծ զարմանք առաջ բերած է Պոլսոյ բոլոր շրջանակներուն մէջ։

Կացցէ մամուլի ազատութիւնը։

ՍՊԱՆԻԱՑՈՒ ՀԱՅՐԸ

Հետեւեալ պատմութիւնը կարդացած եմ ֆրանսերէն լեզուի մէջ, եւ մեծ հետաքրքրութեամբ կարդացի զայն։ Պիտի ջանամ զայն հնարաւորին չափ պարզ ոճով մը գրել, նախ եւ առաջ՝ ներողութիւն խնդրելով ընթերցողներէն, որ ես գրագէտ մը չեմ, եւ ոչ ալ ունիմ գրական որեւէ ձիրք։ Ուրեմն, ներողութիւն, եւ կրկին ներողութիւն։

Ֆրանսայի հարաւային կողմերը, Պիրենէական լեռներուն մօտ, կը գտնուի Սէն-Ժան-դը-Լիւզ անունով գեղեցիկ քաղաքը։ Ան կը գտնուի ծովեզերքին վրայ, եւ ունի 15 հազար բնակիչ։ Ամառնային ամիսներուն, ուր ծովը կը տաքնայ, եւ ուր ամէն կողմ ծաղկած է, այդ քաղաքը կը դառնայ ամենագեղեցիկ տեղը։ Ամէն կողմէ հիւրեր կը հոսին, եւ ամառնային ամիսներուն քաղաքին բնակչութիւնը կրկնապատկուած կ՚ըլլայ։

Ես ալ ամառնային ամիսներուն հոն կ՚երթայի, եւ հոն ունէի ընտանեկան տուն մը։ Ամէն տարի, ուրախութեամբ, կ՚երթայի հոն, եւ ամէն տարի ալ նոր բաներ կը գտնէի։ Ամէն տարի ալ նոր ծանօթներ կը շինէի։ Ամէն տարի ալ նոր բարեկամներ կը ձեռք բերէի։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր շէնքեր կը շինուին, նոր փողոցներ կը բացուին, նոր պարտէզներ կը հաստատուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ապրանքներ կը մտնեն, նոր խանութներ կը բացուին, նոր ծաղիկներ կը ծաղկին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր հիւրանոցներ կը շինուին, նոր ճաշարաններ կը բացուին, նոր ժամասրահներ կը հաստատուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային պալատներ կը շինուին, նոր ամառնային պարտէզներ կը բացուին, նոր ամառնային ծաղիկներ կը ծաղկին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային հագուստներ կը ծախուին, նոր ամառնային կօշիկներ կը ծախուին, նոր ամառնային գլխարկներ կը ծախուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ուտելիքներ կը ծախուին, նոր ամառնային ըմպելիքներ կը ծախուին, նոր ամառնային պաղպաղակներ կը ծախուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային զբօսանքներ կը կազմակերպուին, նոր ամառնային խաղեր կը կազմակերպուին, նոր ամառնային մրցումներ կը կազմակերպուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ուրախութիւններ կը կազմակերպուին, նոր ամառնային տօներ կը կազմակերպուին, նոր ամառնային հանդէսներ կը կազմակերպուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ճաշկերոյթներ կը տրուին, նոր ամառնային պարահանդէսներ կը տրուին, նոր ամառնային ընթրիքներ կը տրուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային հիւրեր կը գան, նոր ամառնային զբօսաշրջիկներ կը գան, նոր ամառնային ճամբորդներ կը գան։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ծանօթներ կը շինուին, նոր ամառնային բարեկամներ կը շինուին, նոր ամառնային սիրեկաններ կը շինուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային սիրուհիներ կը շինուին, նոր ամառնային կանայք կը շինուին, նոր ամառնային ամուսիններ կը շինուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ամուսնութիւններ կը կատարուին, նոր ամառնային նշանդրէքներ կը կատարուին, նոր ամառնային հարսանիքներ կը կատարուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ամուսնալուծութիւններ կը կատարուին, նոր ամառնային բաժանումներ կը կատարուին, նոր ամառնային դատավարութիւններ կը կատարուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ծնունդներ կը կատարուին, նոր ամառնային մանուկներ կը կատարուին, նոր ամառնային մկրտութիւններ կը կատարուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային մահեր կը կատարուին, նոր ամառնային թաղումներ կը կատարուին, նոր ամառնային սգոյներ կը կատարուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային յանցագործութիւններ կը կատարուին, նոր ամառնային գողութիւններ կը կատարուին, նոր ամառնային սպանութիւններ կը կատարուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ոճիրներ կը կատարուին, նոր ամառնային դաւադրութիւններ կը կատարուին, նոր ամառնային մահափորձեր կը կատարուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ոստիկաններ կը կանչուին, նոր ամառնային զինուորներ կը կանչուին, նոր ամառնային պահակներ կը կանչուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային բանտեր կը շինուին, նոր ամառնային դատարաններ կը շինուին, նոր ամառնային գերեզմաններ կը շինուին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային դժբախտութիւններ կը պատահին, նոր ամառնային աղէտներ կը պատահին, նոր ամառնային ողբերգութիւններ կը պատահին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային հրդեհներ կը պատահին, նոր ամառնային խորտակումներ կը պատահին, նոր ամառնային ջրհեղեղներ կը պատահին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ինքնասպանութիւններ կը կատարուին, նոր ամառնային խեղդուելներ կը կատարուին, նոր ամառնային կախուելներ կը կատարուին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային հիւանդութիւններ կը պատահին, նոր ամառնային համաճարակներ կը պատահին, նոր ամառնային մահեր կը պատահին։

Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ծերեր կը մեռնին, նոր ամառնային մանուկներ կը մեռնին, նոր ամառնային երիտասարդներ կը մեռնին։ Ամէն տարի, երբ հոն կ՚երթայի, կը տեսնէի, որ քաղաքին մէջ նոր ամառնային ինքնասպանութիւններ կը կատարուին, նոր ամառնային սպանութիւններ կը կատարուին, նոր ամառնային մահ

ԳԱՂԹԻՔ ԿԱ ՅՈՒՄԱՐ

(ՀՈԳԵՎԱՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾ)

Թարգմ. Ե. Ղ.

Ի տես ձեռնարկին, որ Ֆրանսայի մէջ ծրագրուած է ընել՝ ի նպաստ Ազգային Պաշտպանութեան, մեր ընթերցողներուն յիշեցնենք թէ Ֆրանսայի մէջ ազգային պաշտպանութեան համար ամէն տարի ընդհանուր հանգանակութիւն մը կը կատարուի, որ կը կոչուի «Ազգային Ամրոց»։ Ամէն տարի ալ ամէն ֆրանսացի կամ ֆրանսահպատակ իր նուիրատուութիւնը կ՚ընէ։ Ասոնք կը կազմեն ազգային ամրոցին քարերը։ Ամէն տարի ալ ամէն ֆրանսացի կամ ֆրանսահպատակ կը հարցնէ թէ ինչ քանակ գումար նուիրած է։ Ամէն տարի ալ ամէն ֆրանսացի կամ ֆրանսահպատակ կը ջանայ աւելի նուիրել քան նախորդ տարի։ Ամէն տարի ալ ամէն ֆրանսացի կամ ֆրանսահպատակ կը ջանայ ամրոցին քարերը աւելի մեծ ընել։

Ֆրանսայի Ազգային Ամրոցը կը կազմեն ֆրանսացի կամ ֆրանսահպատակ ամէն մարդ, որ ունի ֆրանսական հպատակութիւն։ Ամէն մարդ, որ ունի ֆրանսական հպատակութիւն, կրնայ ամրոցին քարերը մեծցնել

Չինաստանի կռիւները

Շանկայ, ասիական եզերքի ամէնէն հարուստ քաղաքը, Անգլիոյ առեւտրական, նաւային եւ ելմտական գործունէութեան միջնաբերդը, ազգայնական բանակին ձեռքը անցնելու նախօրեակին մէջ կը գտնուի։ Ազգայնականները առջի օր գրաւեցին քաղաքէն 30 մղոն հեռու գտնուող թէ՛ հիւսիսային եւ թէ հարաւային ռազմագիտական բոլոր կէտերը, իրարմէ բոլորովին կտրելով Շանկայի շուրջ կեդրոնացած հիւսիսային զինուորները։

Քանթոնցիներու յաղթանակները տօնելու համար, Շանկայի Աշխատաւորական ընդհ. միութիւնը ընդհանուր գործադուլի հրաւիրեց բոլոր աշխատաւորները։ Գործադուլը սկսաւ երէկ կէսօրին եւ պիտի շարունակուի, մինչեւ որ ազգայնականները գրաւեն Շանկայը։

Հարաւային շրջանին մէջ Հանկէչէուի եզերքի երկայնքէն յառաջացող Քանթոնցիները գրաւեցին Սունկքիանկ քաղաքը և կը պատրաստուին անցնիլ Հուանփոու գետը, նպատակ ունենալով առանց կռուի իրարմէ կտրելու հիւսիսայիններու ուժերը Շանկայ—Հանկչէուու երկաթուղագծին եւ Սունկքիանկի միջեւ։ Այս ձեւով 20 մղոն պիտի մնայ Շանկայի։ Հիւսիսային կողմէն գրաւեցին Վուքեանկ քաղաքը, ստիպելով թշնամին նահանջել Սու-Շէուէն անդին։

«Թայմզ»ի թղթակիցը Շանկայէն կը հեռագրէ թէ Զօր. Զանկ-Քայ-Շէք հրամանագիր մը ուղղած է իր զինուորներուն, որով, կը հրամայէ ամսոյս 15էն սկսեալ մինչեւ 10 օր գրաւել Ֆու Չէուն։ Նանքինի անկումը մօտալուտ է։ Ազգայնականները 15 քիլօմեթր մօտեցած են քաղաքին։

Քանթոնի ազգայնական բանակին եւ հիւսիսայիններու միջեւ կռիւները կատաղի կերպով կը շարունակուին։ Զօր. Շանկ-Ցուն-Շանկ կը հրամայէ 250,000 հոգիի, բաժնուած Շանկայի եւ Ցի-Նան-Ֆուի միջեւ, մէջն ըլլալով ռուս նշանաւոր պահակախումբը, բաղկացած 2000 հոգիէ եւ զրահապատ ահռելի կառախումբերէ։

Զօր. Զանկ-Քայ-Շէք, ազգայնականներու վերին հրամանատարը որ վերջերս շնորհազուրկ եղած էր, հպատակութիւն յայտնած է համայնավարներուն։

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱԿՍԻ

Աշխատանքի նախարարութեան պաշտօնական վիճակագրութեան համաձայն, Մարտ 17ին ամբողջ Ֆրանսայի մէջ նպաստ ստանալու համար արձանագրուած գործազուրկներու թիւն էր 80,414, որոնց 57,996ը այր եւ 22,418ը կին։ Անցած շաբաթ ասոնց թիւն էր 81,916 (60,049 այր եւ 21,867ը կին), որով այս շաբաթ նպաստընկալներու թիւը 1500 հոգի պակասած է։ Փարիզի մէջ շաբաթ մը առաջ նպաստ կը ստանային 36,665 հոգի, այս շաբաթ 34,639, որով նպաստընկալներու թիւը 2026 հոգի պակասած է։ Իսկ Սէն նահանգի միւս համայնքներուն մէջ այս շաբաթ նպաստի համար արձանագրուածներուն թիւը կը բարձրանայ 25,872ի, անցած շաբթուան վրայ 1199 հոգի աւելի. իսկ ամբողջ փարիզեան շրջանի մէջ 827 նպաստընկալ պակսած է։

Վերջին շաբթուան մէջ Աշխատանքի նախարարութիւնը գործ հայթայթած է Ֆրանսա բնակող 523 օտար անգործ բանուորներու։ (Փարիզի մէջ տեղաւորուած են 199 հոգի, Մարսիլիա՝ 146, Նանթ՝ 46, Թուլուզ՝ 41, Պօրտօ՝ 38, զանազան՝ 55)։ Իսկ Տեղաւորման Գրասենեակները գործ հայթայթած են 756 օտարականի. գումար՝ 1279 հոգի։

Ֆրանսա մտած են 14 օտար աշխատաւորներ, իսկ Ֆրանսայէն մեկնած են՝ 1962 հոգի։ Մեկնողներն են 100 Պելճիքացի, 365 Սպանիացի, 67 Փորթուկալցի, 567 Իտալացի, 297 Չեխոսլովաք, 270 Լեհ, 134 Զուիցերիացի, 95 Յոյն եւն։

Պոլշեւիկները կը բողոքեն

Հռոմէն կը հեռագրեն Մարտ 18 Թուականով.—

Խորհրդային կառավարութիւնը Հռոմի դեսպանատան միջոցաւ բողոքի ծանուցագիր մը ղրկեց Պեսարապիոյ մասին Փարիզի դաշնագրին Իտալիոյ կողմէ վաւերացման դէմ։

Հնդկաչինի խնդիրը խորհրդարանին մէջ

Երեսփ. ժողովը առջի օր զբաղեցաւ Հնդկաչինի «գայթակղութիւն»ներով։ Մանաւորաբար կ'ամբաստանուէր ընդհ. կառավարիչ Ալ. Վառէնի փոխանորդ Սապաթիէ, որ 8000 հէքթար հող տուած է իր բարեկամին՝ Մայլհօի։ Այս առթիւ կառավարութեան հարցապնդում ուղղած էին երկու երեսփոխաններ՝ Ութրէ եւ Մարսէլ Քաշէն։ Ութրէ ըսաւ թէ խնդրոյ առարկայ հողը 99 տարուան համար տրուած է, հէքթարը 1 ֆր. 30էն։ Մայլհօ 50 միլիոն ֆրանք դրամագլուխով ընկերութիւն մը կազմած է, իրեն վերապահելով 95 միլիոն ֆրանքի հիմնադիրի բաժին եւ 100 ֆրանքնոց 80,000 արժեթուղթ։

Մարսէլ Քաշէն եւս ծանր ամբաստանութիւններ ըրաւ եւ քննադատեց այս կարգի խնամիական գործերը։ Այս կերպով տեղացիները կը զրկուին իրենց հողերէն։ Եզրակացնելով ըսաւ. «Պէտք է ազատ եւ անկախ թողուլ Հնդկաչինը։ Մի՛ սպասէք որ բռնի ուժով ստանան զայն»։

Գաղթային նախարար Լէոն Փէրիէ գովեց Սապաթիէն, որ խաղաղեցուց Տարլաքի շրջանը եւ տեղացիները Ֆրանսայի կապեց։ Մայլհօի խնդրին մէջ ֆրանս. օրէնքներուն համաձայն շարժած է, որով բնաւ յանցաւոր չէ։

Ընդհ. կառավարիչ Ալեքսանդր Վառէն իր կարգին պաշտպանեց Սապաթիէն եւ փաստերով ցոյց տուաւ թէ քննադատող երեսփոխանը Ութրէ՝ երբ 1912ին Քամպոճի կառավարիչ էր, ուրիշ ընկերութիւն մը կազմեց նոյն ձեւով եւ իր հօր եղբօրորդւոյն ընդարձակ հողեր ու մենաշնորհներ տուաւ։ Վառէն կարդաց նամակ մը, որուն մէջ երեսփոխան մը կ'ըսէր որ եթէ 100 հատ հիմնադրի բաժին տրուի իրեն (350,000ֆր.), պայքարը պիտի դադրեցնէր Մայլհօի ընկերութեան դէմ։

Ադմկալից եւ գիշերային երկար նիստէ մը վերջ ստուար մեծամասնութեամբ մերժուեցաւ ընկերվարականներու եւ համայնավարներու երկու բանաձեւերը, որոնք քննութիւն կը պահանջէին։ Փուանքարէ դարձեալ վստահութեան խնդիր դրաւ եւ ստուար մեծամասնութեամբ ընդունուեցաւ Ընտրէ Հէսի բանաձեւը, որով հարցը փակուած կը նկատուէր։

Վիլհելմ Գերմանիա պիտի դառնայ

Պերլինէն հեռագիր մը կ'ըսէ թէ ներքին նախարարութեան ելմտացոյցին քննութեան առեն նախարար Քէօյտէլ ոեւէ ակնարկութիւն չէ ըրած «Հանրապետութեան պաշտպանութեան» օրէնքին մասին, որ վերջ կը գտնէ 1927 Յուլիս 23ին։ Այս օրէնքին 23րդ յօդուածը կը տրամադրէ Գերմանիոյ նախկին կայսերական ընտանիքներու անդամներուն Գերմանիա քնակութիւնը արգիլել կամ սահմանափակել, եթէ անկէ վտանգ մը կը ծնի Հանրապետութեան համար։

«Ֆօսիշէ Ցայթունկ» կը գրէ թէ ազգայնական նախարարները օրինագիծ մը պիտի առաջարկեն, որով սկզբունքով պիտի չարգիլուի Վիլհելմ Բ.ի Գերմանիա մուտքը։ Զրոյց կը շրջի թէ Յուլիս 23էն ետք Վիլհելմ Հոլանտայէն Համպուրկ պիտի փոխադրուի։

ՑԵՐԵԿՈՅԹ - ՀԱՆԴԷՍ

Այսօր կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին
Ալֆոնվիլի երիտ. Միութեան կողմէ, Ակումբին մէջ
իր կազմութեան Ա. Տարեդարձին առթիւ
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԵՐԳ, ՆՈՒԱԳ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Գոյամարտ» խումբի ժողովը այսօր կիրակի կէսօրէ վերջ ժամը 3.30ին ծանօթ հաւաքատեղին։ Անդամատերերը միասին բերել։ Կարեւոր զեկուցում։

Հ. Յ. Դ. Թալիի Թաղամասին Աղբիւր սերոբ խումբը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ պիսէթրի, ժանթիլեի եւ վիլթիւիֆի ընկերներն ու համակիրները, այսօր կիրակի, ժամը 2ին, ընկ. Տ. Գավէճեանի բնակարանը, 21 RueBlanqui,K.Bicêtre (Seine)։

Հ. Յ. Դ. Լիոնի «Գնունի» խումբի ընկերական ընդհ. ժողովը՝ վաղը երկուշաբթի երեկոյեան ժամը ճիշտ 8ուկէսին, գրադարանի սրահը։ Խիստ կարեւոր օրակարգ։ Ներկայանալ անդավաճտորով։

Հ. Յ. Դ. Մարսիլիոյ «Իշխան» ենթակոմիտէի ընկերական ժողովը՝ երեքշաբթի մարտ 22 իրիկուան ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին։ Շատ կարեւոր հարցի մը համար անհրաժեշտ է բոլոր ընկերներու ներկայութիւնը։

Հ. Յ. Դ. Լիոնի «Բեռի» խումբի վիճաբանական ժողովը՝ երեքշաբթի մարտ 22ին՝ գրադարանին մէջ, ներկայանալ ձին անդամատետրերով։ Օրակարգը խիստ կարեւոր։

ՅԱՐԴԳՈՂԻ առաջիկայ գրական երեկոն, 24 մարտ Հինգշաբթի, ժամը 9ին, ֆլօրիա, նուիրուած է պեթհովէնի, իր հարիւրամեակին առթիւ։ Օր. Նուարդ Գալփաքեան կը ներկայացնէ մեծ երաժիշտին կեանքն ու գործը։ երեկոն ունի նուագի բաժին։ կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Լիոնի կովիտէն կը ծանուցանէ բոլոր ընկերներու եւ համակիրներու թէ՝ Գրադարան ընթերցարանը փոխադրուած է, Rue Paul-Bert, թիւ 75, սրճարանի ներքնասենեակը։

ՆԱՄԱԿԱՏՈՒԿ

Տիւկրիւաիւ Ն. Շ.— *Ստացանք 20 ֆրանք։*

Նանթ, Բ. Ձ.— *Ստացանք 35 ֆրանք։*

Փարիզ, Մ. Ն.— *Ստացանք 20 ֆրանք։*

Քրիւաս, Գործ.— *Ստացանք 101 ֆր. 70 սանդիմ։*

Քօկօլէն, Ց. Տ.— *Ստացանք 35 ֆրանք։ Ձեր ուղած հասցէն՝* Karnik Karsian. 27 Rue du Pré, Cannes, (A. M.)։

Մարսէյլ, Գործ.— *Ստացանք 475 ֆրանք։*

Փարիզ, Ժ. Տ.— *Ստացանք 50 ֆրանք։*

Լանսէյ, Գործ.— *Ստացանք 59 ֆրանք 10 սանդիմ։*

Լիթիւի, Խ. Ք.— *Ստացանք 35 ֆրանք։*

Պրիւքսել, Լ. Զ.— *Ստացանք 50 ֆրանք պելճիքական։*

Լա Սիօթա, Տիկ. Շ. Խ.— *Ստացանք 5 ֆրանք։*

Նիկոսիա, Շ. Ակ.— *Ստացանք 1 անգլ.։*

ԿԸ ՓՆՏՈՒԻ

— կը փնտուի Աստիոքցի Աբրահամ Միքայէլեան 19 տարեկան։ Գրել՝ Յամուէլ Միքայէլեանի, Chez Mr. Maisson Bois Neuvy le Roi (Indre et Loire)

France. կը խնդրուի սուրիական Թերթերէն արտատպել։

— կը փնտուի Մշոյ Շմլակ գիւղացի եղիազար Նահօտեան, իւր անունը Սուկո, որ Մարսէյլ կը գտնուէր։ Իմացնել՝ Հայկանուշ Բարսեղեանի, Quartier Barthélemy No. 4, La Ciotat։

ՎԻՆԻՆ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՖՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ

15 րիւ տէ Ֆոմինիքէն

ՓՈՐՁՈՒԱԾ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

(Ֆրանսախօս եւ ռուսախօս)

վկայեալ Ֆրանս. վարժարանէ

Ընդունելութիւն Երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ, ժամը 1—4։ 6, Av. Ville d'Avray, Chaville (S. et O.)։

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՓԱՅԹԷ ԶԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մանաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մի՛եր ք մը ունի մատենադարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ՁԱՇԱՐԱՆ COSTAS

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԵԻՐՈՊԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԳԻՏ

Խնամեալ սպասարկութիւն

Ընդարձակ սրահներ

Մանաւոր սենեակներ

54, Rue du Pont-Neuf, BRUXELLES, Tel. 118.44

ՏՕՔԹ. Տ. ՍՊԱՐԹԱԼԻ

փարիզի բժշկ. Համալսարանէն նախկին գլխաւոր բժիշկ եւ վիրաբոյժ իզմիրի Ազգային Հիւանդանոցին

44, Rue Poissonnière, Paris (2e)

ընդունելութիւն ամէն օր ժամը 14էն 18 եւ ժամադրութեամբ։

ԼԱՒ ԼՈՒՐ ՄԸ ՓԱՇ ՓՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒԻՆ

Ձեր մետաքսները մի գնէք օրուան գինով։ Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն ֆրապարակի գինէն 5 ֆրանք աւելի աժան կը ծախէ։

Բաց է ամէն օր, նոյնիսկ շբ. մինչեւ իրիկուան ժամը 7ը։

կը խօսուի Թուրքերէն։

ԿԸ ՇԻՆՈՒԻՆ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻՆ

Նպաստաւոր պայմաններով կապարէ, թիթեղէ, զինկէ եւ ապակիէ ամէն տեսակ գործեր (ջուրի, ելեքտրական, կազի խողովակներ եւ այլն), փարիզ եւ արուարձանները։

Դիմել կամ գրել՝ LOUDER FÉNERDJIANի, 83, Rue de la Bienfaisance, Blanc-Mesnil (S.-et-Oise).

ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԿԱՐՈՒՀԻ

12 Rue St. Sulpice Paris (6e) Métro Odéon

Փորձառու եւ մասնագէտ մանթոյի, գիշերաւան եւ ցերեկեան հագուստներու։ Կը պատրաստէ վերջին նորաձեւութեամբ հագուստներ, համակատար եւ խնամեալ կարի։

Իսկ Կիրակի օրերը բացուած է մասնաւոր գաղտնի մուտքով մը ձեւարանին եւ կարի։

Կիրակի առաւօտ 9—12, եւ 2—5։ Անոնք որ կ'աշխատին եւ ժամանակ չունին, կրնան օգտուիլ։

ՀՐԱՉ ՉԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Chirurgien - DENTISTE

ՓԱՐԻԶԻ ԹԱՂԿԱՑԿԱՆ ՖԱՒԲԻԼԹԷՆ

126 RUE BOLIVAR (Մէթրօ Պոլիվար կամ Ժօռէս)

Մասնագիտութիւն առատաձաշարերու (քառչու թէ ոսկի) եւ պրիճներ

Բոլոր աշխատանքները ԱՌԱՆՑ ՑԱՒԻ, ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ

Ընդունելութիւն ամէն օր ժամը 1.30էն մինչեւ 8ը։ Ուրիշ առեն՝ ժամադրութեամբ։

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առտնին բոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ

ԾԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Փարիզի եւ գաւառներու հայութեան համար կը պատրաստէ

ՀԱՄՈՎ, ՀՈՏՈՎ, ԱՆԹԱՐԴԱԼԻ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ

Մեծաքանակ եւ փոքրաքանակ *Անմրցելի գիներով*

Մէկ փորձ բաւ է համոզուելու, հետեւաբար այսպէսով յարաբերութիւնները անմշտական կը դարձուին։ Թէլէֆոն՝ Provence 38.63, Métro Cadet

26, Rue de Trévise Paris (9)

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԴԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր՝ 9.12

ՁԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ

Շամեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷՎԻԼԻԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Ց. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Ծանօթացի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՁՕԼՕԼԵԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**

9 RUE PAPILLON, PARIS IX

Square Montholon դիմաց Rue Lafayetteի կից

Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ժամը 9էն 6։ Գեղարուեստական ձաշակով պատրաստուած անձերի աշխատութիւններ։ Ինքնուրոյն խնամուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ։

ԳԻՒՐԱՄԱՏՋԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԿԸ ԳՆԵՆԻՔ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳԵՆԻՔ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹԱԼԻՆԵՐ ԵՒ ՓԻԼԻՄՆԵՐ

ԿԸ ԳՆԵՆԻՔ, արծաթեղէն, ոսկեղէն, ադամանդ, հին եւ նոր յարգի ձեռագործներ։ Կը փնտռենք լաւ ձեռագործ գիւցազներ։

Դիմել՝ «Լունէթոս» ընկերութեան մէջ մեր նոր բացած գրասենեակը ամէն օր 10—1 եւ 3—6։

41 Rue de la Chaussée d'Antin

Tél. Trudaine: 01—41

Բ. յարկ աջ կողմ առաջին սենեակը։ Կը խօսինք Հայերէն, ռուսերէն եւ օտար լեզուներ։

ՊԱՓԻՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ԴԱՀՆԱԿԻ ԵՒ ՕՐԿԻ

Ազնուտ եւ նորոգութիւն Դաշնակահարուհի ՕՐ. Ն. ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր։

Դիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Marcadet:

IMPRIMERIE - **MASSIS** - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ԱՍԿԱՐԱՆ

19 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.
Սթերլին,	L. St.	124
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի) 100 Mark		605
Թրքական Ոսկի.	L. Trq.	12
Թրք. ոսկի	» or	115
Մէճիտիէ	Médjidié	8
Լէվա 100 հատ	Léva	18
Տրախմի	» Drachme	32
Լիր	» » Lire	118
Պելժ. ֆրանք	» Frc. Belge	70
Զուից.	» Frc. Suisse	101
Լէյ 100 հատ	Ley	15
Ջերվոնեց	(10 Roubles or)	90

ԱՐԺԵԹՈՒՂԹ		
Եգ. Քր. Ֆոնտիէ	I Cr. Fonc. Eg.	3060
»	II »	1940
»	III »	1550
Թուրքի երկթղ.	Lots turcs	102

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

ՅԱՌԱՋ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ալ.	10 ալ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ 22 ՄԱՐՏ 1927

22 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 291

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՔՈՒՐՋԵՐԸ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հեռագրաթելերը անընդհատ կը բանեն, բանալով օրուան տագնապին բոլոր ծալքերը։

Հռոմ եւ Պելկրատ, երկու ոսոխները, թէ՛ կը պատրաստուին եւ թէ՛ իրար կը մեղադրեն Մեծերուն առջեւ, որոնց շարքին իր տեղը գրաւած է, այս անգամ, «յանցաւոր» Գերմանիան։ Դէպքերը կ'ընթանան այնպէս ինչպէս ամէն պատերազմի նախօրեակին։ Զօրաշարժ, ծանուցագիրներ, չափաւորութեան խորհուրդներ, դիւանագիտական խորհրդակցութիւններ եւ իրարանցում՝ սեղանաւորական հրապարակին վրայ։

Պատմութիւնն է որ կը կրկնուի, նորէն միջազգային խաղերու դասական հնոցի մը մէջ։ «Հին հին դարուց յիշատակ» պատմութիւնը, մոայլ եւ արկածալի։ Կնճռոտած են դիւանագէտներու դէմքերը, հակառակ Ազգերու Դաշնակցութեան ուխտին, ապահովութեան դաշինքներուն եւ իրաւարարութեան պայմանագիրներուն, որոնք, թէեւ շքեղ, բայց նոյնքան եւ աւելի քուրջի կտորներ են, որքան երէկ։

Առաջ, մարդիկ աւելի յարգանք ունէին այդ կարգի թուղթերու հանդէպ։ Պելժիոյ չէզոքութեան բռնաբարուած պահպանելու անակնկալ մըն էր, հետեւանքը՝ ճակատագրական պայքարի մը։ Քանի շատցան մագաղաթները, այնքան խախտեցան հաստատուած կարգ ու սարքի, խաղաղութեան հիմքերը։ Այնքան կեղծ եւ առածգական է նոր դաշնագիրներուն բովանդակութիւնը, որ իւրաքանչիւր ստորագրող միշտ ճեղք մը կ'նայ գտնել, իր ուզած մեկնութիւնը տալու եւ գործելու ազատութիւն ստանալու համար։ Եւ յետոյ, ամէն մէկ նոր դաշնագիր իր կարգին քար մը կը խախտէ հինէն, կամ առնուազն կը ջլատէ անոր ամբողջական գործադրութիւնը։

Այդ հետեւանքը ունեցաւ Թիրանայի դաշինքը, Իտալիոյ եւ Ալպանիոյ միջեւ։ Սովորական կաղապարով պայմանագիր մըն էր այս ալ, բայց վերի վայր շրջեց պալքանեան խաղաղութիւնը, խանգարելով հաւասարակշռութիւնը, եւ գերակշիռ դիրք տալով անհամբեր, անհամբոյր պետութեան մը։

Եւ հիմա շփոթութեան մատնուեր են ոչ միայն Պալքանեան պետութիւնները, այլ եւ անոնք որ աշխարհի ճակատագիրը կը վարեն, իրրեւ յաղթական եւ իրաւարար։

Ու մինչ բարեխօսութիւններ կ'ըլլան եւ խոհեմութեան խրատներ կը տրուին, միւս կողմէ յառաջ կը տարուի մրցակցութիւնը, շահուած գետինը պահելու համար։ Խրատներ կուտայ Անգլիան, ամրապնդելով հանդերձ իր գործակցութիւնը Իտալիոյ հետ։ Իրեն կը հետեւի Ֆրանսան, որ հաւատարիմ բրնկումն է Եուկօ-Սլաւիոյ, վերջին պատերազմէն ի վեր, եւ կը զարմանայ Իտալիոյ յանդգնութեան վրայ։ Յատկապէս հետաքրքրուած է Գերմանիան, ճգնելով վերահաստատել իր կորուսած ազդեցութիւնը։ Անտարբեր չեն, նաեւ, Ռուսիան եւ Թուրքիան։ «Պալքաններուն մէջ ոչինչ կարելի է փոխել՝ առանց մեր հաւանութեան», յայտարարեր է պատասխանատու անձ մը։

Կացութեան ողբերգութիւնը հաստատելու համար, աւելցնենք թէ՝ ճիշտ այս միջոցին բանակցութիւնները վերսկսած են Ֆրանսայի եւ Խորհրդային Միութեան միջեւ, հին պարտքերու մասին։ Երկու տարի քաշքշելէ յետոյ, բանակցութեանց վերսկսումը կը զուգադիպի այնպիսի ժամանակի մը, երբ խոշոր սեւ կատու մը անցած է, նորէն, Մոսկուայի եւ Լոնտոնի միջեւ, եւ վախ կայ որ փրթի բնականոն յարաբերութեանց վերջին թելը։ Միւս կողմէ, ֆրանսական հեղինակաւոր թերթեր, եւ մասնաւորապէս ձախակողմեան «Ռոթիսիէն»ը, լրջօրէն սեղանի վրայ դրած են Ֆրանքեւթուրք մերձեցման խնդիրը։ «Ազգեւռուս կայսերական հակամարտութիւնը կը սպառնայ հին աշխարհի խաղաղութեան», կ'ըսեն անոնք։ «Հետեւաբար, ուղղակի կը շահագրգռէ մեզ»։ Եւ, Ֆրանսայի տալով խաղաղութեան իրաւարարի դերը, կը բացատրեն. «Ֆրանքեւթուրք մերձեցում մը, օրուան այս ժամուն, հակառակորդները պիտի հեռացնէ իրենց ռազմաճակատի ամէնէն գոյաւոր կէտին վրայ։ (Ցմոռնանք որ Մեծ Պատերազմը Արեւելքէն եկաւ)։ Այդ մերձեցումը պիտի վերահաստատէ Միջերկրականի խաղաղութիւնը, որ այնքան վտանգաւոր է այսօր»։

Ինչպէս կը տեսնէք, շահակիցներն ալ շատ հաւատք չունին ստորագրուած քուրջերուն վրայ, եւ անվերջ որոնումներ կը կատարեն։ Այդ հետապնդումներու ընթացքին, թէ պզտիկները կը ճգմուին եւ թէ մեծերու յարաբերութիւնները կ'այլափոխուին։ Որովհետեւ, յաճախ միեւնոյն գետնին վրայ կը գործեն բոլորն ալ։ Ֆրանսայի չափ, Անգլիան ալ կը ճգնի սիրաշահիլ Թուրքիան, զայն խորհրդային իշխանութենէն անջատելու եւ այս վերջինը մինակ ձգելու համար։

Ուրիշ խօսքով, փալլուն մագաղաթներու խշրտուքը չի կրնար խափանել իրականութեան ստորերկրեայ որոտումները, որոնք աւելի բարձր կը հնչեն այսօր։ Ալպանական կռուանիները աւտնց մէկ արձագանգն է, եւ չարաշուք ազդանշան մը։

Թերեւս կարելի ըլլայ մարել կրակը։ Բայց այդպիսի յաղթութիւն մը շատ-շատ կրնայ յետաձգել փոթորիկը եւ ոչ թէ բոլորովին խափանել զայն։ Հիմնականը այն է որ, պետութիւնները ճատրակ կը խաղան ժողովուրդներու գլխուն, առանց դոհացնելու անոնց պահանջները։

Եւ որքան տեւէ այս վիճակը, միշտ ալ մարդիկ խաղալու պիտի վերահաստատէ Միջերկրականի խաղաղութիւնը, որ այնքան վտանգաւոր է այսօր»։

ՄԱՄՈՒԼ

ԵԹԷ ՊԱՏԵՐԱԶՄ ԾԱԳԻ

«Յուսաբեր» անխուսափելի գտնելով իտալեւթուրք պատերազմ մը, հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ.—

«Իր պատմութեան վերջին յիսնամեակին Թուրքիան անդամահատուած է առաւելապէս բուն Անատոլուի սահմաններէն դուրս։

«Այս է պատճառը, որ այս անդամահատութեան քաղաքական հետեւանքները աննշմար անցած են մեզ համար։

«Սակայն այսօր հնչած է ժամը, երբ այլեւս ասկէ ետքը ըլլալիք անդամահատութիւնները տեղի պիտի ունենան բո՛ւն Անատոլուի մէջ՝ առով իսկ փոխելով քաղաքական մթնոլորտը մեր երկրին համար։

«Մինակ ձգել Թուրքը Փոքր Ասիոյ մէջ, կը նշանակէ՝ ամէնի զգացողը միշտ կենդանի պահել անոր հոգիին մէջ, պատրաստ՝ ճամբուն ինկած տկարը վայրագօրէն յօշոտելու։

«Այս զգացողը սանձելու միակ կերպն այն է, որ եւրոպական հզօր ուժերէն ո՛եւէ մէկը զայ եւ անմիջականօրէն, բուն Անատոլուի մէջ, Թուրք երկրին ղրկից պետութիւն դառնայ։

«Այս ըսել չէ երբեք, թէ այն առեն մենք փրկուած կ'ըլլանք այս չարգարար ցեղին արիւնոտ մղձաւանջէն։

«Սակայն այս ըսել է, որ այն առեն այս մղձաւանջը նկատելիօրէն մեղմացած կ'ըլլայ։

«Իսկ ասիկա ինքնին, մեր ժողովուրդի բովանդակ ապագային տեսակէտով, մեծարժէք երեւոյթ մըն է արդէն։

«Եւրոպական պետութեան մը տեւական հաստատումով Անատոլուի հողերուն վրայ — ու որքան մեզի մօտ, այնքան մեզի լաւ — առաջին հերթին հիմնապէս պիտի փոխուի քաղաքական մթնոլորտը նաեւ մեզ համար»։

100,000 ԳԱՂԹԱԿԱՆ ԴԷՊԻ ԹՈՒՐՔԻԱ

Էնկիւրիի Ջետեղման Գրասենեակին ընդհ.տնօրէն Մարուֆ պէյ հետեւեալը յայտարարած է.

— Մօտերս Ռուսիայէն 50, Սուրիայէն 15, Կիպրոսէն 6, Պուլկարիայէն 8, Եուկօսլաւիայէն 9 հազարի մօտ գաղթական պիտի գան։ Առանց զետեղման համար տեղեր պատրաստուած են։ Ռուսիայէն գալիքները Էլ-Ազիզ, Մուշ, Տիարպէքիր, Կիպրոսէն եկողները հարաւային նահանգները եւ միւս տեղերէ եկողները զանազան տեղեր պիտի տեղաւորուին։ Ֆինլանտիայէն գալիք գաղթականներն ալ պիտի բնակին Իսկիշէհիրի եւ Պոլսոյ մէջ։ Կառավարութիւնը շատ կարեւորութիւն կ'ընծայէ զետեղման քաղաքականութեան։

«Թուրքիա գալիք գաղթականները վերջապէս մէկ քանի տարուան միջոցին մեր երկրին ամէն կողմը կատարելապէս տեղաւորուած պիտի ըլլան։ Ան այս պիտակին մէջ բաւականաչափ գումար մը պիտի յատկացուի եւ իրենց օժանդակութիւն պիտի ըլլայ։

«Զետեղման համար՝ ամէն կողմ կատարեալ գործունէութեամբ կ'աշխատուի։ Բոլոր գաղթականներուն առողջական վիճակը լաւ է։ Շատերուն հոգ եւ հունտ պիտի բաժնուի։ Շատերու ալ լծկան եզ և գրամ տրուած է։»

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱԽԵՐԸ

ՄԵԾ ԻՐԱՐԱՆՑՈՒՄ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ

Թիրանայի ծանօթ դաշնագրին առթիւ Իտալիոյ եւ Եուկօ-Սլաւիոյ միջեւ առաջ եկած ձգտումը կը սպառնայ նոր պատերազմ մը պայթեցնել Պալքաններու մէջ։ Գրեցինք թէ Իտալիա անգլիական կառավարութեան դիմելով հաղորդած է որ Եուկօսլաւիա պատրաստութիւններ կը տեսնէ Ալպանիոյ վրայ յարձակելու համար։ Իտալիա նոյն դիմումը կատարեց նաեւ Ֆրանսական եւ գերման կառավարութեանց մօտ։ Ֆրանսայի արտաքին նախարարութեան մէկ զեկոյցին մէջ կ'ըսուի. «Ֆրանսա չափաւորութեան խորհուրդներ կուտայ եւ պիտի շարունակէ տալ եուկօսլաւ կառավարութեան ու կը յուսայ թէ Իտալիա այս խնդրին մէջ պիտի գործէ ինչպէս վայել է խաղաղասէր մեծ պետութեան մը՝ այսինքն վերջին ծայր չափաւորութեամբ։ Բոլորովին անհիմն են իտալական կարգ մը թերթերու ամբաստանութիւնները Եուկօսլաւիոյ մէջ գործող Ֆրանսացի որոշ անձնաւորութեանց մասին։ Իտալական կառավարութիւնը գիտէ ասիկա եւ Հռոմի Ֆրանսական դեսպանէն անհրաժեշտ հաւաստիքները ստացած է»։

Ասիկա պատասխանն է այն ամբաստանութեանց թէ՝ Ֆրանսա կը խորացնէ իտալեւսերպ վէճը՝ քաջալերելով Պելկրատի բաղձանքները Ալպանիոյ եւ Ադրիականի նաւահանգիստներուն վրայ, թէ սերտ յարաբերութիւն կայ Ֆրանսայի եւ Սերպ սպայակոյտին միջեւ, Փարիզի եւ Պելկրատի միջեւ զինուորական դաշինք կնքուելէն ի վեր, եւ թէ Ֆրանսա փոխ ղրամ կուտայ Սերպիոյ, զէնք, հագուստ, թանք, օդանաւ եւ ուրիշ ռազմանիւթ գնելու համար։

Ամբողջ Եւրոպայի արտաքին նախարարութիւնները, դեսպանատունները իրար անցած են նոր պատերազմի մը այս յանկարծական հաւանականութեան առջեւ։ Երկար ծածկագիր հեռագիրներ կը փոխանակուին եւ ամէն պետութիւն կ'ուզէ իր բարեկամներուն ու դաշնակիցներուն դիրքը հասկնալ Պալքանեան նոր տագնապին մասին։ Անգլիա այս խնդրին առթիւ կը բանակցի Ֆրանսայի եւ Գերմանիոյ հետ։

Միւս կողմէ, շահակից պետութեանց սերպ դեսպանները բացարձակ հաւաստիքներ տուին թէ Եուկօսլաւիոյ մէջ կատարուած զինուորական շարժումները «պաշտպանողական նպատակ միայն ունին», ու հերքեցին թէ սերպասէր Ալպանիացիներ նպատակ ունեցած ըլլան Ալպանիոյ վրայ արշաւելու։

Պելկրատի իտալական դեսպան գօր. Պոտրէրօ բերանացի հաղորդեց եուկօսլաւ կառավարութեան թէ չի կրնար չէզոքութիւն պահել, եթէ յարձակում մը գործուի Ալպանիոյ դէմ։ Դեսպանը աւելցուց թէ Իտալիա վճռած է ամէն գինով հաւասարակշռութիւնը պահպանել Պալքաններուն մէջ։

Սքուփչինայի նիստէն վերջ Սերպիոյ արտաքին նախարար Փէրիչ ընդունեց «Թայմզ»ի թղթակիցը եւ հետեւեալը յայտարարեց.

«Մենք միշտ խաղաղասէր քաղաքականութիւն հետապնդած ենք եւ կը խուսափինք ամէն արկածախնդրութենէ։ Մեր բարեմտութիւնը հաստատելու համար պատրաստ ենք ենթարկուելու ամենախիստ եւ մանրակրկիտ քննութեան։ Անկեղծօրէն կը հրաւիրենք աշխարհի բոլոր զինուորական եւ այլ մասնագէտները՝ ապացուցանելու համար որ մեր ձեռք առած զինուորական միջոցները բնականոն սահմանները չեն անցած։ Այդ քննութիւնով պիտի պարզուի թէ ո՛րքան դիտումնաւոր են Ալպանիոյ նկատմամբ մեզի վերագրուած նպատակները»։

Պերլինի սերպ դեսպանը արտաքին նախարար Շթրէզէմանի դիմելով խնդրած է որ իրրեւ Ազգերու Դաշնակցութեան վերջին նստաշրջանի նախագահ՝ խնդիրը ներկայացնէ Ազգերու Դաշնակցութեան արտակարգ մէկ ժողովին, եթէ կացութիւնը ծանրանայ։ Սերպիա համաձայն է, որ խռովութեան պարագային, Ազգերու Դաշնակցութիւնը բանակ մը ղրկէ Ալպանիա՝ կարգը վերահաստատելու համար։ Փարիզի գերման դեսպան Ֆոն Հէօշ կիրակի օր այս մասին տեսակցեցաւ արտաքին նախարարութեան ընդհ. քարտուղար Պ. Պէրթլօի հետ։

Սերպ թերթերը կը գրեն թէ հարիւր իտալացի սպաներ ցամաք եւած են Ալպանիա՝ իբրեւ բանակի կազմակերպիչ։ Զրոյց կը շրջի թէ ալպանական կառավարութիւնը պաշարման վիճակ յայտարարած է ամբողջ երկրին մէջ եւ թէ Թիրանայի ու Շքոտրայի շրջակայ ցեղախումբերը ապստամբած են։

Շքոտրայի մէջ կախուած է Ճովաննի Կածուլլի քահանան, իբրեւ խռովութիւն սերմանող։

«Ճոռնալէ տ'Իթալիա» խմբագրականի մը մէջ խօսելով Սերպիոյ պատրաստութեանց մասին, կը գրէ թէ Ֆրանսացիները կը քաջալերեն այս քաղաքականութիւնը՝ իտալեւալպանական բարեկամութիւնը քայքայելու համար եւ կասկածելի լուրեր կը տարածեն Պեսարապիոյ կցումին վաւերացման առթիւ։ Ըստ իրեն, լեհ, հելլէն եւ զուիցերական թերթերը Ֆրանսայի թելադրանքով սարսափեցնող լուրեր կը տարածեն Իտալիոյ յարձակողական ծրագիրներուն մասին։ Միւս կողմէ Ա-թէնքի Ֆրանս. դեսպանը մերձեցում մը կը պատրաստէ Յուգոսլաւիոյ եւ Եուկօսլաւիոյ միջեւ՝ Իտալիոյ ազդեցութիւնը նուազեցնելու համար Պուլկարիոյ մէջ։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՅԱՐՈՒԿԱՍՏԱՆԻ ՊԱԼՇԵՒԻԿՆԵՐՈՒ ՁՆՇՈՒՄԸ

ԹՈՒՐՔԵՐՆ ԱԼ ԴՈՐԾԻ ՎՐԱՅ

Թէհրանէն կը գրեն մեզի.—

Ռուսեւպարսիկ առեւտրական դաշնագրին անյաջող ելքը լրջօրէն զբաղած է առեւտրական դասը։ Ռուսերը ոգեմանը փակած են պարսկական ապրանքներու ներածման դէմ, ինչ որ մեծ վնասներ կը պատճառէ։ Իրրեւ պատասխան, պարսիկ առեւտրականները կը պահանջեն փակել պարսկական սահմանը ռուսական ապրանքներու ներածման դէմ եւ արգիլել բոլոր ռուսական հաստատութիւններու գործունէութիւնը։ Կառավարութիւնը տակաւին կը շարունակէ յուսալ թէ կարելի պիտի ըլլայ լեզու գտնել։ Այդ պատճառով ալ, չուզեր լայն ասպարէզ տալ ժողովուրդին դրգռութեան։ Գիտէն որ, եթէ շարունակէն սեղմել առեւտրական կապերը, անտնկութեան պիտի դատապարտեն այս տընտեսապէս խեղճ երկիրը։

Միւս կողմէ, Թրքական պրոպագանդը կը սպառնայ այս երկրին։ Կառավարութիւնը բուն պարսիկ՝ ֆարս տարրերով կը լեցնէ այն շրջանները ուր թուրք-թաթար բնակչութիւն կ'ապրի եւ ֆարսացման քաղաքականութիւն մը կը հետապնդէ։ Պետական հաստատութեանց մէջ տեղացիները կամ չեն ընդունուիր, կամ երկրորդական դիրքերու վրայ կը պահուին։ Տեղական լեզուն կը հալածուի դպրոցներէն եւ հիմնարկութիւններէն։ Այս քաղաքականութիւնը դժգոհութիւն կը պատճառէ տեղացի մտաւորականութեան որ հրապարակաւ կը մաքառի։ Թուրքերը մեծապէս կ'օգտուին այս տրամադրութիւններէն։

Ամերպատակի կրթական տեսուչը սխալ հասկնալով իրեն տրուած հրահանգը, ուզած էր հայկական դպրոցներուն համար ալ գործադրել ֆարսացման ծրագիրը, եւ այդ խմաստով պատուէրներ տուած էր։ Բարեբախտաբար թիւրիմացութիւնը շուտով պարզուեցաւ եւ նախկին կացութիւնը կը մնայ անփոփոխ։

Քրտական խնդիրն ալ որոշ մտահոգութիւն կը պատճառէ կառավարութեան։ Սմկոյի հեռացումով վերահաստատուեցան խաղաղ յարաբերութիւնները։ Սակայն կասկածելի է որ այդ խաղաղութիւնը տեւական դառնայ։ Կառավարութեան համար վճռուած խնդիր է Քիւրտերու զինաթափումը, ինչ որ մահացու հարուած պիտի տայ քրտական դատին։

ՈՐՔԱՆ ԴՐԱՄ ՂՐԿՈՒԱԾ Է ԱՆԳԼԻԱ

«Թրուդ», Ռուսիոյ պոլշեւիկեան սէնտիքաներու կեդրոնական օրկանը, կը հրատարակէ տեղեկագիր մը, որուն համաձայն 1926 Մարտիէն մինչեւ 1927 Մարտ 1 Կոմիտէն Անգլիոյ հանքագործներուն համար ստացած է 16 միլիոն րուբլի,— մօտաւորապէս 200 միլիոն ֆրանք։ Եւ այս՝ ակներեւ ճնշումներու շնորհիւ։ Գաւառական քաղաքներ կան որոնք սակաւաթիւ բանւորներ ունին, եւ սակայն «նուիրած» են տասնեակ հազարաւոր րուբլի,— օրինակ՝ Կոմէլ՝ 10,000, Վորոնէժ՝ 102 հազար, Թամպով՝ 97,000, Փէնզա՝ 46,000 եւն.։ Զանազան հանրապետութեանց մէջ, Հայաստանն ալ մէջն ըլլալով, տեղական կոմիտէներուն եւ նոյն իսկ թերթերուն պարտադրուած են որոշ գումարներ։ «Ֆրանսի Տաղտաան» (կարմիր ֆաղստան) լրագիրը միայն կրցեր է հաւաքել 18,000 րուբլի...

CCCP.

144,805,000

Խորհրդային Միութեան բնակիչներու թիւն է ասիկա, առ 15 Փետրուարի։

Համամիութենական կենտրոնական վիճակագրական գործկոմի վերջին նստաշրջանին մէջ, Դեկտեմբերեան մարդահամարի ընդհանուր ղեկավար Օսինսկի տուաւ մանրամասն զեկուցում մարդահամարի նախնական արդիւնքներու մասին։ Իր եղրակացութիւնները, բնականաբար, վարդագոյն էին, որովհետեւ պոլշեւիկներու թագաւորութեան մէջ, ինչպէս յայտնի է, գէշ բան չկայ։ Փորձենք, սակայն, պաշտօնական լաւատեսութեան մէջէն հանել կացութեան իսկական իմաստը։

Նախ՝ ի՞նչ ձեւով են բաժնուած Խորհրդ. Միութեան բնակիչները։ Օսինսկիի տուած տեղեկութիւններով 144,805,000 հոգիէն 99,670,000ը (հարիւրին 69ը, կ'ապրի Խորհրդ. Ռուսաստանի մէջ, 28,879,000ը (հարիւրին 20ը) Ուկրայինայի, 5,791,000ը (հարիւրին 4) Անդրկովկասի, 4,926,000ը (մօտ հարիւրին 4) Պելոռուսիոյ եւ 4,552,000ը (մօտ հարիւրին 4) Թուրքմէնիստանի եւ Ուզպէքիստանի մէջ։

Ապա՝ ազգաբնակութեան աճումը։ Ի՞նչ փոփոխութիւններու է ենթարկուած Խորհրդ. Միութեան բնակչութեան քանակը։

Համաձայն 1897ի ընդհանուր մարդահամարի, Խորհրդ. Միութեան ներկայ սահմաններու մէջ կար, կլոր թիւով, 104 միլիոն մարդ։ Մինչեւ 1 Յունուար 1914, նոյն տարածութեան վրայ, կ'ապրէր 135,600,000 մարդ։ Ըսել է,17 տարուան ընթացքին աւելցած է 31 միլիոն կամ մօտ մէկ երրորդ։

1920 թուին,խորհրդային իշխանութեան կատարած մարդահամարով, Խորհրդ. Միութեան բնակչութեան թիւը հաւասար էր 131, 5 միլիոնի։ Ուրեմն 4, 1 միլիոնով պակաս, քան 1920ին։ Այս 4 միլիոնը այն կորուստն է, զոր երկիրը ունեցաւ պատերազմի եւ քաղաքացիական կռիւներու առաջին տարիներու ընթացքին։ Սակայն, այս կորուստի միայն մէկ մասն է. անհրաժեշտ է աւելցնել նաեւ բնական աճումը, որ, նախորդ տարիներու համեմատութեամբ, Օսինսկին կը հաշուէ առնուազն 11 միլիոն մարդ. որով միշտ ըստ Օսինսկիի, Ռուսաստանի այժմու Խորհրդ. Միութեան մարդկային ամբողջ կորուստը առ 1920 կը հաւասարի 15 միլիոնի։

Բայց այս ալ բոլորը չէ։ 1920էն յետոյ եկան սովի տարիներ եւ, յատկապէս, 1921ի ահռելի սովը, երբ ամբողջ նահանգներ համարեա դատարկուեցան։ Ի՞նչքան է սովամահներու ընդհանուր գումարը — ո՞վ կրնայ ըսել։ Պաշտօնական տուեալներ չկան, բայց կողմնակի տեղեկութիւններով հնարաւոր է մօտաւոր թիւը պարզել։ Ա.յսպէս, համաձայն Վոլթինսկիի մէկ աշխատութեան («Ամբողջ Աշխարհը թիւերով», հատ. Ա.) Ռուսաստանի ընդհանուր կորուստը պատերազմէն, քաղաքացիական կռիւներէն ու սովէն կը հաշուուի 22 միլիոն մարդ։ Մօտաւորապէս նոյն թիւը ցոյց կուտան եւ ուրիշ վիճակագիրներ։ Որով, եթէ այս թիւէն հանենք Օսինսկիի հաշուած 15 միլիոն կորուստը մինչեւ 1920, զուտ սովին բաժին կը հասնի 7 միլիոնի։

Ուրիշ խօսքով, պատերազմի Մողոքին Ռուսաստանը գոհ տուած է 4 միլիոն, սովին՝ 7 միլիոն եւ միաժամանակ կորսնցուցած է ամենաքիչը 11 միլիոն բնական աճումը— գումար 22 միլիոն մարդ. ահաւոր թիւ մը, որ կրնար հիմէն կործանել ուրիշ երկիր մը, իսկ Ռուսաստանը կայ ու կը մնայ՝ իր վիթխարի կազմուածքով։

Ժողովուրդին աճումը առանձնապէս արագ է վերջին տարիները։ 1923ին, այսինքն՝ սովէն ճիշտ երկու տարի յետոյ, բնակչութեան ընդհանուր թիւն էր 133,500,000, իսկ երեք տարի անցած՝ 1927ի սկիզբը, արդէն, 144,805,000, ուրեմն, երեք տարուան մէջ յաւելում եղած է 11,3 միլիոն, իսկ տարեկան 3,7 միլիոն մարդ, 2.8 առ հարիւր։ Բայց եւ այնպէս, 1914էն ասդին եղած կորուստը ամբողջապէս դեռ լեցուած չէ —կը պակսի 15—11,3 միլիոն հաւասար 3,7 միլիոն մարդ։ Ըսել է, առնուազն մէկ տարի եւս անհրաժեշտ է, որպէսզի Ռուսաստանը՝ ներկայ Խորհրդային Միութիւնը դարմանէ մարդկային բոլոր կորուստները։

Օսինսկիի հաղորդած աղիւսակներուն մէջ առանձնապէս ուշադրաւ է քաղաքի եւ գիւղերու ազգաբնակութեան շարժումը։ 1920ի մարդահամարը քաղաքներու ազգաբնակութիւնը ցոյց տուաւ 20,343,000 մարդ։ 1925ի վիճակագրական հաշուով այդ թիւն է 22,980,000։ Իսկ հաշուառման վերջին մարդահամարի, Խորհրդ. Միութեան քաղաքներուն մէջ կ'ապրի 25,651,000 մարդ։ Կը նշանակէ, հինգ տարուան ընթացքին, քաղաքային բնակիչներու դումարը աւելցած է գրեթէ 5 միլիոն, որմէ, Օսինսկիի ըսելով 1,5 միլիոնը կ'իյնայ բնական աճումի վրայ, իսկ 3,5 միլիոնը գիւղերէն եկած մարդիկ են։

Արդեօք բնական պահանջի հետեւանքո՞վ է, որ գիւղացիները կը թափին քաղաք։ Բնական կ'ըլլար, եթէ երկրին արդիւնաբերութիւնը զարգանար եւ քաղաքի գործարանները նոր առնէին նորանոր բազմութիւններ։ Սակայն, իրենց իսկ, պոլշեւիկներու խօսքով, խորհրդային արդիւնաբերութիւնը դեռ հաղիւ նախապատերազմեանի 90 առ հարիւրը կը կազմէ։ Խորհրդային ճարտարարուեստը ո՛չ միայն ի վիճակի չէ ընդունելու նոր գանգուածներ, այլ քաղաքի աշխատող ձեռքերու մէկ խոշոր մասն ալ կը մնայ գործազուրկ եւ աշխատանքի կարօտ վիճակի մէջ։ Հետեւաբար, այն միլիոնները, որ գիւղերէն քաղաք կը վազեն, ո՛չ մէկ յոյս կրնան ունենալ գործ եւ հաց ճարելու եւ կ'երթան աւելցնելու քաղաքի գործազուրկներու, մուրացիկներու եւ պոլշեւիկեան «սրիկաներու» թիւը։ «Ազգաբնակութեան աճումը, կ'ըսէ Օսինսկի, քիչ մը աւելի արագ կ'ընթանայ, քան մեր անտեսութեան աճումը»։ Շատ մեղմ է ըսուած։ Երբ գիւղերէն տարեկան 750 հազար մարդ քաղաք կ'երթայ ու կը մնայ գործազուրկ եւ անօթի, ազգաբնակութեան եւ երկրի անտեսութեան աճումի մէջեւ եղած անհամաչափութիւնը «քիչ մը» որակել՝ առնուազն քիչ մը քիչ է...

Անհապաղ կամ իրերու վիճակը քօղարկելու շահ չունեցող մարդու համար երեւոյթի բացատրութիւնը բացայայտ է։ Հակառակ մարզկային ստուգի արագ զարգացման, խորհրդային տնտեսութիւնը կը մնայ շատ ետ, եւ միլիոնաւոր մարդիկ կը տառապին աշխատանքի եւ ապրուստի միջոցներու բացակայութենէն։ Մանաւանդ, ծանր է գիւղական աղքատներու, լծկան ու զրամագլուխ չունեցողներու վիճակը։ Կտոր մը հաց ճարելու յոյսով անոնք կը թափին քաղաք, բայց քաղաքն ալ գործ եւ ուտելիք չի կրնար տալ։ Եւ ահա մեծ կեդրոններու մէջ կը կազմուին «անապատատան», «սրիկայ», գործազուրկ, մուրացկան բազմութիւններ, որոնց կեանքը անընկարագրելի տանջանք է եւ որոնք իրենց թշուառութեամբ կրնան համեմատուիլ, թերեւս, հնդկական քաղաքներու մուրացիկներուն հետ։ Այս թշուառներու մասին Օսինսկին, հարկաւ, չըսաւ գործկոմի նստաշրջանին ներկայացուցած իր զեկուցման մէջ, բայց մարդահամարի օրերուն խորհրդային թերթերը լեցուն էին մերկացումներով եւ սարսռազդեցիկ տեսարաններուն կարագրութիւններով։

Ի վերջոյ, պէտք է արձանագրել եւ այն, որ ինչպէս գործկոմի օրակարգի բոլոր հարցերու, նոյնպէս եւ Օսինսկիի զեկուցման առթիւ տեղի ունեցան բուռն մեղադրանքներ ազգային գետնի վրայ։ Այսպէս, Զուվաշներու հանրապետութեան ներկայացուցիչ Շեւլէ դառնօրէն դանդատեցաւ թէ՝ Զուվաշներէն շատերը, մարդահամարի միջոցին, արձանագրուած են որպէս Ռուսեր եւ մայրենի լեզուի իրաւունքը ըլլանտեսուածէ։ Ուկրայինայի պատգամաւոր Տուցենկօ խստօրէն բողոքեց մարդահամարի կեդրոնացման դէմ՝ նկատելով անոր մէջ ազգային իրաւունքներու ու Խորհրդ. Միութեան սահմանադրութեան խախտում, որով «հանրապետութիւնները տեսակ մը չէզոքացուած են մարդահամարի բովանդակ աշխատանքի պատասխանատուութենէն» մարդահամարի ամբողջ գործը ամբողջապէս կեդրոնացուած է Մոսկուայի ձեռքը։ «Ուկրայինայի գործիչները կը պահանջեն վերաքննել այդ որոշումը»։ Թթոլ տալ, որ մարդահամարի նիւթերը մշակուին քանավար հանրապետութիւններու վիճակագրական մարմիններուն կողմէ։

Ի հարկէ, այս պահանջը մերժուեցաւ, բայց արտայայտուած մտայնութիւնը շատ բնորոշ է։ Զկայ հարց մը որու առթիւ «ինքնավար հանրապետութիւնները» ներկայացուցիչները, այս կամ այն ձեւով, չծառանան Մոսկուայի ծայրայեղկեդրոնացման դէմ։

Ս. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Մարտ 6ին վերջացաւ Նախիջեւանի Հանրապետութեան — Նախկրայ—խորհուրդներու 6րդ. Համագումարը, որ ընտրեց նոր կառավարութիւն հետեւեալ կազմով.— Նախագահ եւ կրթական գործավար՝ Մուսաեւ, երկրագործական գործավար՝ Խոսայեւ, առողջապահական՝ Շասանով, ելմտական՝ Սաֆարով, արդարադատութեան՝ Թարվերտիեւ, աշխատանքի՝ Ալիարով, ներքին գործոց՝ Ալիեւ, բանւորա-գիւղացիական վարչութեան լիազօր՝ Կուլամով, կեդր. վիճակագրութեան վարչութեան վարիչ՝ Քաֆանեան, գինուորական գործավար՝ Մամէտով, քաղաք. պիւրօի վարիչ՝ Թախմանով, սահմանապահ զօրքերու պետ՝ Նիկիշով։ կենտգործկոմի նախագահութեան մէջ ընտրուած են 11 հոգի. նախագահ՝ Պապայի եւ Պապա։

ՌՈՒՍԻԱ ՄԱՐԴ Կ'ԱՐՏԱՀԱՆԷ

Մարտի սկիզբը Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ համառուսական գաղթականական ժողով մը, որուն խորհրդակցութիւններուն համաձայն 10 տարուան ընթացքին Մոսկուայի կառավարութիւնը պիտի արտածէ 4,166 հազար գաղթական, այդ առթիւ տրամադրելով 500 միլիոն րուբլի պետական դրամ։ Այս գաղթականներուն մաս պիտի կազմեն բանւորական խումբեր։

ՓՈՐՏԱԶՈՒԻԿ ԲԺԻՇՆԵՐ.— Ռուսիոյ մէջ արձանագրուած բժիշկներու ընդհ. թիւն է 54,157, որուն 7,385ը՝ ատաճնաբոյժ։ Անցեալ տարուան Հոկտեմբեր 1ին գործազուրկ բժիշկներու թիւն էր 5,465։ Եթէ բոլորգործազուրկ բժիշկները մեկնին գիւղերը, եւ հեռանան քաղաքներէն, ուր տեսակ մը խռնում կայ, անմիջապէս կ'անհետանայ գործազրկութեան տագնապը։ Երբ բժիշկները քաղաքներու մէջ կը տառապին գործազրկութենէ, գաւառներուն մէջ գիւղացիները կը փնտռեն, զրկուած ըլլալով բժշկութեան բարիքներէն։

Եղա՞ծը կեդրոնացնել թէ նոր ուղի ընտրել

Իրական աղէտ մը կը սպառնայ գաղութներու Հայութեան։

Ջարդերէն, տարագրութիւններէն եւ ամէն տեսակ տառապանքներէն ետք, հիմա ալ ընկերային կոչուած հիւանդութիւնները վրդովիչ համեմատութեամբ զոհ կը խլեն օտար ափերու վրայ ցրուած հայ բեկորներէն եւ հիմնովին կը խաթարեն ցեղին կենսունակութիւնը։

Այդ ախտերու կարգին կը դասուին սեռային հիւանդութիւնները, ալքոլամոլութիւնը, թոքախտը։ Պէտք է աւելցնել նաեւ վիժեցումը եւ մանուկներու մեծ համեմատութեամբ մահացութիւնը՝ հետեւանք ընկերային պայմաններու եւ մանկատածական տարրական գիտելիքներու խոր տգիտութեան։

Ընկերային կոչուած են այս հիւանդութիւնները, չարիքները, նախ որովհետեւ կը վտանգեն մարդկային ընկերութեան գոյութիւնը, թէ որակով եւ թէ քանակով. յետոյ անոր համար որ, անոնց տարածման մէջ շատ կարեւոր դեր կը կատարեն ընկերային կարգ մը պայմաններ,— թշուառութիւնը, խառնակեցութիւնը, վատառողջ խշտեակները, աշխատանքի պայմանները, գործագրկութիւնը, միջավայր (քաղաք, գիւղ), ընկերային նախապաշարումները եւայլն։ Եւ վերջապէս այն պատճառով որ, անոնց դէմ պայքարելու եւ աւերները սահմանափակելու համար անհատական միջոցները անզօր են ու միայն հասարակական, ընկերային միջոցները կրնան գրական, շօշափելի արդիւնք տալ։

Ահա թէ ինչո՛ւ, իւրաքանչիւր երկրի մէջ, պետութիւնները իրենք իսկ ստանձնած են այդ հիւանդութիւններուն դէմ պայքարելու ծանր բայց կենսական հոգը։ Այդ պայքարին իրենց լայն օժանդակութիւնը կը բերեն իւրաքանչիւր երկրի մէջ կազմուած բազմաթիւ ընկերակցութիւնները եւ անոնց միջազգային կազմակերպութիւնները, մասնաւորաբար 54 պետութիւններու կարմիր խաչերու ընկերակցութեանց Դաշնակցութիւնը, որու կեդրոնը Փարիզ կը գտնուի։

Արդ, երբ տասնեակ միլիոններով ժողովուրդ ունեցող պետութիւններ լրջօրէն նկատի կ'առնեն վտանգը ու ջանք կը թափեն ամէն կերպ պայքարելու եւ չարիքը սահմանափակելու համար, պէտք չէ՞ որ մենք ալ մեր անկարելին փորձենք, փրկելու համար մեզմէ երթալ պատրաստ մեր ազգօրդիները եւ մանաւանդ նորահաս սերունդը, ստոյգ փճացումէ մը կամ առնուազն ֆիզիքական այլասերումէ։

Այս հարցն է որ մէջտեղ դրած էինք «Ռուժանք»ի մէջ (Թիւ 8 եւ 9) եւ երկու խմբագրականներով մատնանշելէ ետք աղէտը, որ իրական, ծանր ու տեւական է, կարգ մը կարելի ու գործնական միջոցներ թելադրած էինք։

«Ցառաջ», խմբագրականով մը (13 Մարտ), կ'անգրագառնայ մեր մատնանշած աղէտին, եւ անիրագործելի գտնելով անոր դէմ պայքարելու համար «իրերօգնութեան» սկզբունքին վրայ հիմնուած մեր թելադրութիւնները, կ'առաջարկէ «եղածը կեդրոնացնել»։

Շնորհակալութիւն կը յայտնեմ «Ցառաջ»ին, որ առիթը տուաւ ընթերցողներու աւելի լայն շրջանակի մը ծանօթացնելու այն միջոցները զորս թելադրած էինք «Ռուժանք»ի մէջ։ Մանաւանդ որ մեր թելադրած միջոցներու արդիւնաւորութիւնը համբողջովին կախում ունի ժողովուրդի լայն խաւերուն մէջ, մեր մէջ այդ իրերօգնութեան սկզբունքին մուտ գործելէն, ու անոնց բարոյական ու նիւթական աջակցութենէն։

Երկու խօսք մեր մատնանշած աղէտին հետեւանքներուն մասին։ Մէջ կը բերենք այն ինչ որ գրած ենք «Ռուժանք»ի մէջ.

«Վէներական ախտերէ վարակուած երիտասարդներու հարցիւը չկայ։ Անոնց 100ին 90ը ջերմամիզուկենէ կը տառապի, իսկ 100ին 10-15ը՝ սիֆիլիսէ։ Խոր տգիտութիւն մը եւ թանձրացեալ նախապաշարումները արգելք կ'ըլլան որ անոնք դարմանուին, թէեւ, ինչպէս հոս Ֆրանսայի մէջ, ամէն դիւրութիւն եւ միջոց կայ ձրի դարմանուելու։

«Ալքոլամոլութիւնը, ոչ միայն նուազած չէ մեր մէջ, այլ եւ օղեմոլութեան վայ աւելցաւ, հոս, գինիի եւ ախորժաբերներու (ափերիթիֆ) մոլութիւնը։ Գաղափար մը տալու համար մեջ կը բերենք կոշիկի հայ գործարանատէրի մը սա խօսքը. «Շաբաթէն մինչեւ երեքշաբթի, գործաւորներուն մեծ մասը — մանաւանդ ամուրիները — իրենց շաբաթականին կարեւոր մասը կը վատնեն գինետան մէջ»։

«Թոքախտը, այդ ահաւոր հիւանդութիւնը, լայնօրէն բոյն դրած է մեր մէջ ու կը հնձէ մեր երիտասարդները, այր թէ կին, ամուրի կամ ամուսնացած, ու իր անողորմ դալուկը դրած է մանուկներու, ապագայ սերունդին, մեծ մասին վրայ»։

Մեր մէջ թոքախտի ծաւալման մասին ստոյգ թիւեր չենք կրնար տալ։ Կը կարծենք թէ համեմատութիւնը առնուազն նոյնը պէտք է ըլլայ ինչ որ ֆրանսայի ընդհանուր բնակչութեան մէջ, այսինքն հազար հոգիի վրայ 12-20 (Մարսիլիա, Լիոն, Փարիզ), որոնց մէկ հինգերորդը կը մեռնի։ Եթէ հիմնուինք 1926ի ընթացքին Փարիզի մէջ մեռնող հայ թոքախտաւորներուն եկեղեցիին կողմէ հաղորդուած թիւին վրայ (31), այդ միեւնոյն շրջանին փարիզահայ գաղութին մէջ թոքախտաւորներու թիւը պէտք է հաշուել մօտ 155 (31 անգամ 5), այսինքն հազարին 10, Փարիզահայ գաղութը 15000 հաշուելով։ Այս համեմատութիւնը պէտք է անպատճառ կրկնապատկել, մանաւանդ Փարիզի համար, որովհետեւ եկեղեցին չի կրնար ունենալ թոքախտէ մեռնողներուն իսկական թիւը. եւ երկրորդ՝ Փարիզը թոքախտին ամէնէն մեծ վտանգներէն մէկն է, առանձնապէս գաղթականներուն համար։

Վիժեցումն ալ մեծ չափերով մուտ գործած է մեր ընտանեկան յարկերէն ներս։ Գիտենք շատ մը հայ «օրիորդներ», որոնք այդ նպատակով կը դիմեն բժիշկներու։ Ձենք խօսիր ամուսնացած կիներու մասին։ Որքան ալ սահմանափակումը արդիւնք է, կարեւոր չափով, տնտեսական պայմաններու, վիժեցումը ինքնին չի դադրիր ընկերային չարիք մը ըլլալէ։

Իսկ մանուկներու մահացութիւնը — որու մասին դժբախտաբար ստոյգ եւ որոշ թիւեր չունենք, բայց անպատճառ աւելի է քան ֆրանսական համեմատութիւնը (1-6 տարեկան մանուկներու 100ին 17ը կը մեռնին, իսկ Փարիզի մէջ 100ին 25ը) միացած ծնունդներու սահմանափակումին, կը սպառնայ հետզհետէ տասաներորդել գաղութահայութիւնը։

Ահա չարիքը, վերահաս աղէտը իր զանազան ձեւերուն մէջ։

Այս է կսկծալի իրողութիւնը Ֆրանսայի մէջ։ Կը կարծենք թէ կացութիւնը աւելի մխիթարական չէ միւս գաղութներուն մէջ (Ցունաստան, Սուրիա եւայլն)։

Անհրաժեշտ է որ ժամ առնելով այդ ահաւոր իրողութենէն, գտնենք ամէնէն արագ եւ գործնական միջոցները։ Ամէն ուշացում կրնայ անդարմանելի վիճակներ ստեղծել։

Ինչպէ՞ս։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՁԵՏԵՂՈՒՄԸ ՍՈՒՐԻՈՅ Մ

(Թղթակցութիւն Ժընեւէն)

Ժընեւի կաճառին «Բարոյական եւ քաղաքական Միութեան» անդամներուն նախաձեռնութեամբ կազմակերպուած էր բանախօսութիւն մը իրենց հաւաքատեղիի մէջ, ուր պիտի խօսէին, դէպի իրար ըրած իրենց մատնութիւններ քելութեան մասին, Մինչ կարդ Խաչի պատուիրակ պ. Քլուզը, Աշխ. Միջ. Գրասենեակի քարտուղար՝ պ. Շլէմէր։

Հայերու կոկիկ խումբ մը ժամանակէն շատ առաջ նստած էր։ Միութեան նախագահը պ. Վէնէնէ, երկու բանախօսները, նիւթերը պարզելէ յետոյ, հրաւիրեց պ. Քլուզըն, որ խօսքը նախ հայ ինքնուրոյն գրականութեան եւ ապա արուեստին տալով, դրուատեց այն լծուածը, որ հայ ժողովուրդը երգած է իր զգացումները, մանաւանդ իր ոսկեդարը։ Ցետոյ Զոպանեան «La Roseraie d'Arménie»էն քանի մը հատուածներ։

Մոգական լապտերով ցոյց տուաւ հայ արուեստէն նմոյշներ։ Բուռն կերպով խօսեցաւ հայկական դատի ձգձգումներուն մասին։

«Կովկասէն մինչեւ Փոքր Ասիա, Հայաստան անցեալ փառքին թողները կանգուն էին, դեռ տարիներ առաջ։ Այս ժողովուրդը պահպանման համար ինչ ըրաւ «քաղաքակիրթ» պետութիւնները։ Սեւրի դաշնագիրով Հայաստան կ'ընդունուէր ազատ, անկախ պետութիւն, եւ քանի մը տարի վերջն ալ Ազգերու Դաշնակցութիւնը առաջին նիստով մանդատներ կ'ընէր տառապած, քաջարի ազգ մը երկրին։ Եւ հարիւր գիտուն վայրկեանը սկսած, հանճարները գրաւեցին եւ հայկ. հանրապետութիւնը բռնուեցաւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ, ու Հայաստան այսպէս մաս կազմեց «Խորհրդային Միութեան»։ Գալով դուրսը մնացած ժողովուրդին, հայկական ամերիկեան, անգլիական, ֆրանսական եւ գուիցերական բարեսիրական ընկերութիւններ, ջանացին ամէն կերպով անոր օգնել։ Միթէ կրցա՞ն։ Սակայն հարիւր հազարներով գաղթականներուն, բերուն ի՞նչպէս օգնել...։ Միայն Հելլէն կառավարութիւնը, ազգութեամբ միլիոններ ծախսած արդէն։

«Իր երկրորդ նստաշրջանին Ազգերու Դաշնակցութիւնը հրդեհցաւ Հայ Ազգ. Օրհասական հարցով։ Հայաստանի՝ եւ Սարտարապատի շրջանին մէջ 1925ին արդէն 80ը թրք. պատուիրակութիւնը կը մնայ տեղին վրայ այդ ուղղութեամբ ծրագիրներ մշակելու համար։ Այս ծրագիրը յանձնուեցաւ Ազգերու խատանքի Միջ. Գրասենեակին, որպէսզի կարելի միջոցները ի գործ դնէ, անոր իրականացման համար։ Հետզհետէ յոյսերը կ'ապականան, եւ հետու չէ այն օրը

Ահա չարիքը, վերահաս աղէտը իր զանազան ձեւերուն մէջ։

Այս է կսկծալի իրողութիւնը Ֆրանսայի մէջ։ Կը կարծենք թէ կացութիւնը աւելի մխիթարական չէ միւս գաղութներուն մէջ (Ցունաստան, Սուրիա եւայլն)։

Անհրաժեշտ է որ ժամ առնելով այդ ահաւոր իրողութենէն, գտնենք ամէնէն արագ եւ գործնական միջոցները։ Ամէն ուշացում կրնայ անդարմանելի վիճակներ ստեղծել։

Ինչպէ՞ս։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱՎԱՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊԱՐԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐԸ ԿԱՐՄԻՐ ԱՍՊԱՐԵԶԻՆ

Ինչպես հայտնի է, Կարմիր Բանակի հարձակողական գործողությունների ընթացքում Հունգարիայի տարածքում հայտնվեցին հայկական զորամասեր, որոնք ռազմական գործողություններ են վարում նացիստական Գերմանիայի դեմ։ Հայ զինվորները, որոնք ցուցաբերում են անձնազոհ քաջություն, ամենուր ջերմ ընդունելության են արժանանում հունգարացի ժողովրդի կողմից։

Հունգարիայի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պատվիրակությունը, որը գտնվում է Մոսկվայում, հեռագրով շնորհավորել է հայ զինվորներին։ Հեռագրին պատասխանելով՝ Հայկական ՍՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ի. Հասրաթյանը հեռագրել է հունգարացի ընկերներին։

Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Ա. Ա. Արզումանյանը հեռագրել է Հունգարիայի կառավարության նախագահ ընկ. Ֆերենց Դալնոկիին։

Հունգարիայի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պատվիրակությունը, որը գտնվում է Մոսկվայում, հեռագրով շնորհավորել է հայ զինվորներին։ Հեռագրին պատասխանելով՝ Հայկական ՍՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ի. Հասրաթյանը հեռագրել է հունգարացի ընկերներին։

Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Ա. Ա. Արզումանյանը հեռագրել է Հունգարիայի կառավարության նախագահ ընկ. Ֆերենց Դալնոկիին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊԱՐԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐԸ ԿԱՐՄԻՐ ԱՍՊԱՐԵԶԻՆ

Ինչպես հայտնի է, Կարմիր Բանակի հարձակողական գործողությունների ընթացքում Հունգարիայի տարածքում հայտնվեցին հայկական զորամասեր, որոնք ռազմական գործողություններ են վարում նացիստական Գերմանիայի դեմ։ Հայ զինվորները, որոնք ցուցաբերում են անձնազոհ քաջություն, ամենուր ջերմ ընդունելության են արժանանում հունգարացի ժողովրդի կողմից

«Ճոռնալէ տ'Իթալիա» յիշելէ վերջ թէ Պելճիքայի գործադրանները գնդացիրներ ղրկած են Պելկրատ, կ'եզրակացնէ թէ Իտալիա բնաւ չի վրդովուիր, որովհետեւ զօրաւոր է եւ չի կարծեր թէ ո եւ է կառավարութիւն, մեծ թէ պզտիկ, այնքան անմիտ ըլլայ, որ խաղաղութեան սպառնայ եւ ապստրէզ կարդայ Եւրոպայի։

Մուսոլինիի եղբօր թերթը՝ «Փոփոլօ տ'Իթալիա», խօսելով գաղթային նախարար Ֆէտէրցօնիի ճառին վրայ, կ'ըսէ թէ Իտալիա գաղթավայրի կողմէ շատ աղքատ է, մինչ ուրիշ ժողովուրդներ ճամբան ազատ գտան՝ Ափրիկէի եւ Ասիոյ մէջ գրաւելու համար անհուն կայսրութիւններ, զորս երբեք չպիտի կրնան շահագործել, իրենց բնակիչներուն անբաւականութեան պատճառով։ Վէրսայլի դաշնագիրը ծանրացուց այս անարդարութիւնը։

*** Ալպանիոյ մէջ ընդհանուր զօրաշարժ յայտարարուած է։ Սահմաններուն վրայ, մանաւանդ Եաքովայի մէջ մեծ ուժեր կեդրոնացուած են։ Ռումանիա չէզոքութիւն պիտի պահէ։

Չինաստանի կռիւները

Ազգայնականներու յաղթական բանակը արդէն իսկ Շանկայի դուռներուն առջեւ հասած է—մօտ 15 քիլօմեթր— եւ քաղաքին մօտալուտ անկումը կասկածէ դուրս է։ Հիւսիսայիններու բանակը առանց կռուելու կը քաշուի։ Նոյնիսկ զրոյց կայ թէ Շանկայի զինուորներուն հրամանատարը փի-Հսու-Շէն ազգայնականներուն կողմը անցած է։ Օտար մենաշնորհներու հողամասերուն մէջ զինուորական տենդոտ գործունէութիւն կը տիրէ։ Տրամադրելի բոլոր զինուորները ստիպողաբար զէնքի տակ կանչուեցան։ 1800 անգլիացի զինուորներ եւ կամաւորներ քաղաքին ռազմագիտական բոլոր կէտերը գրաւեցին։ Նաւահանգիստին մէջ գտնուող ամերիկացի նաւապետերն ու զինուորները նոյնպէս ցամաք ելան եւ փողոցներուն մէջ զօրանոց մը կատարեցին։ Ֆրանսական հողամասին մէջ խուճապ տիրեց չինական յուղարկաւորական թափորի մը առթիւ։

Ազգայնականները պատուիրակ մը ղրկած էին Շանկայ՝ առանց կռիւի գրաւելու համար քաղաքը։ Հակառակորդները ծանր պայմաններ դրին, որով բանակցութիւնները խզուեցան։ Քանթօնցիները Սու-Չէուի եւ Չանկ-Շէուի միջեւ Շանկայի երկաթուղին կտրած ըլլալով, օտարականները փախչելու հնարաւորութիւն չունին այլեւս։

*** Վերջին պահուն ստացուած լուրերուն նայելով, ազգայնական զինուորները սկսած են արդէն Շանկայ մտնել։

Ամերիկեան ծովեզ Ափիճի մէջ

Աթէնքէն կը հեռագրեն թէ Կիրակի օր Յունաստանի մայրաքաղաքին մէջ հանդիսաւոր արարողութիւն մը կատարուած է նոր շինուելիք ամերիկեան քօլէճին հիմնարկէքին առթիւ։ Ամերիկեան դեսպան Սքինները առաջին անկիւնաքարը դնելով, յայտնեց թէ վերջին տարիներս Ամերիկայի եւ Յունաստանի միջեւ յարաբերութիւնները աւելի սերտ հանգամանք ստացած են։ Աթէնքի քօլէճը կոչուած է հելլէն նոր սերունդին մտաւորական զարգացման կեդրոնը դառնալ։

«Յունաստանի եւ Ամերիկայի միջեւ առեւտուրը աւելի բարգաւաճ է քան Յունաստանի կարեւորութիւնը ունեցող ուրիշ ոեւէ երկիր,— տարեկան 20 միլիոն տոլար, որուն 10 միլիոնը յունական ծխախոտի Ամերիկա արտածումէն կը գոյանայ»։

Անկել հեռախօսի կայան

Առջի օր Մոսկուայի մէջ պաշտօնապէս բացուեցաւ Գ. Միջազգայինի անթել հեռախօսի կայանը։ Այս առթիւ խօսուած ճառերը վեր հանեցին թէ այս կայանը Եւրոպայի մէջ ամենէն զօրաւորն է եւ կոչուած է արեւմտեան աշխարհը համոզել խորհրդային միութեան ձեռք բերած գիտական յառաջդիմութեանց մասին։

Ֆրանկֆուրտ պարտքի խնդիրը

Ինչպէս գրեցինք, Ֆրանքֆուրտ պարտքի կարգադրութեան համար բանակցութիւնները վերսկսան։ Ըստ առաջնոյն, Ֆրանս, պատուիրակութեան նախագահն է ծերակուտական Պ. տը Մօնզի, իսկ ռուսականինը՝ դեսպան Ռաքովսքի։ Խորհրդային պատուիրակութեան միւս անդամները գրեթէ բոլորն ալ նոր դէմքեր են։

Քաղաքական ներկայ պայմանները աւելի նպաստաւոր կերպով դասաւորուած են և այս անգամ յոյս կայ յաջող եզրակացութեան մը յանգելու։

Ռուսիոյ եւ Անգլիոյ յարաբերութիւնները շատ ձգտուած են։ Ֆրանսա կ'ուզէ այս առթիւն օգտուիլ։ Տեղական թերթերը փոխած են իրենց լեզուն. թերթ մը կ'ըսէ. «Ֆրանսա այսուհետեւ կը փափաքի Ռուսիոյ հետ եւս այնքան բնականոն յարաբերութիւններ ունենալ որքան Անգլիոյ հետ։

Վէճի գլխաւոր առարկան այն է որ պոլշեւիկները չեն ուզեր ճանչնալ Ֆրանսայի պահանջքին կարեւոր մէկ մասը, այսինքն մեծ պատերազմի ընթացքին Ֆրանսական գանձին կողմէ Ռուսիոյ եղած կանխավճարները. նոյնպէս չեն ուզեր հատուցում տալ ժամանակին Ռուսիա հաստատուած ֆրանսական քաղաքացիներու, որոնց ինչքերը գրաւուած են 1917ի յեղափոխութեան ժամանակ։ Ռուս պատուիրակները միայն պատերազմէն առաջ Ռուսիոյ կնքած փոխառութեանց մասին կ'ուզեն բանակցիլ։

1926ին կ'ըսէին թէ տարեկան տոկոս պիտի վճարեն 1914էն առաջ վճարուած գումարին մէկ տասներորդին հաւասար ոսկեդրամ միայն։ Այսօր ալ իրենք պայման կ'առաջարկէին, որ Ֆրանսա կարեւոր վարկ բանայ իրենց գանձին եւ ճարտարարուեստին համար։

Դիտել կը դրուի թէ Պրէսթ Լիթովսքի մէջ Ռուսերը Գերմաններուն աւելի նպաստաւոր առաջարկներ ներկայացուցած էին։

Թուրքիոյ նոր թղթադրամները

Լոնտոնի մէջ մէկ ոսկինոց թղթադրամներու տպագրութիւնը գրեթէ վերջացած է արդէն, և հինգ, տասը եւ յիսուն ոսկինոցներունը սկսած։ Թղթադրամները մէկ անգամէն, ամբողջութեամբ պիտի փոխադրուին Մայիսի վերջերը կամ Յունիսի սկիզբը։ Նոր դրամները Պոլիս բերուելէ վերջ, շրջաբերութեան դրուելու կերպը պիտի որոշուի դրամատուններու յանձնախումբին կողմէ։

Օսար երկրաչափներ Թուրքիոյ մէջ

Նոր երկաթուղագիծերու կառուցման համար, մինչեւ այսօր յիսունէ աւելի օտար երկրաչափներ հասած են Պոլիս ու հետզհետէ Անատոլու կը մեկնին։ Երկրաչափներու մեծամասնութիւնը Շուէյտացի եւ Նորվէկիացիներ են։ Երկրաչափները, որ Տիարպէքիր պիտի մեկնէին, իրենց ճամբորդութիւնը տասը օրի չափ յետաձգած են, այդ քաղաքին մէջ առատ ձիւն նստած ըլլալուն համար։

Սուրիոյ կռիւները

«Թայմզ»ի Հայֆայի թղթակիցը կը հեռագրէ թէ Հոմսի մէջ նոր ընդհարում մը տեղի ունեցած է եւ սպաննուած են երկու ապստամբներ, որոնց մէկը պետին եղբայրը։ Ֆրանսացի սպայ մը մեծ քաջութիւն ցոյց տուած է։ Զինուորները դիրք բռնած են մզկիթներուն վրայ, տիրելով ապստամբներու ապաստանած տանիքներուն եւ խեղդած են ամէն շարժում։ Պաշտօնական զեկոյցին մէջ ապստամբները կ'որակուին իբրեւ սովորական ոճրագործներ, եւ մամուլը կը մեղադրուի զանոնք «ապստամբ» կոչելուն համար։

ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՔԻՆԿԻ ԴԷՄ

Թուրք թերթերը կը շարունակեն գբաղիլ Պ. Պ. Պօղոս Նուպարի եւ Գ. Նորատունկեանի վերագրուած նամակներով։ Ադա Օղլու Ահմէտ պէյ կը գրէ «Միլլիյէթ»ի մէջ.—

«Գաբրիէլ Նորատունկեան եւ Պօղոս Նուպար փաշա երբ տեսած են որ Քինկի նման տգէտ, մոլեռանդ եւ փառամոլ մէկը այս անգամ ալ նոյն «շարլաթան»ութիւնը կ'ընէ Հայ անունը փաթթոց ընելով, չեն կրցած դիմանալ իրենց ներսէն յորդող զգուանքին, և մխիթարութիւն նկատած են ամբողջ Ամերիկայի ներկայութեան իրականութիւնը զարնել այդ կեղծաւոր մարդերու երեսին։

«Բայց տեսէք տարօրինակ հոգեբանութիւնը զոր երեւան կը բերէ Քինկ, յայտարարելով թէ ինք՝ հակառակ ամէն բանի, պիտի աշխատի Հայերը պաշտպանել։ Այս մարդուն համաձայն, Հայերը անգիտակից են եղեր իրենց շահերուն, եւ հետեւաբար ինք պաշտօն ունի անոնց խնամակալութիւնը ստանձնելու։

«Ասոր հաստատամտութի՞ւն կ'ըսենք թէ անամօթութիւն։ Բայց ինչ ալ ըլլայ, այս դէպքը կը ցուցնէ թէ «շարլաթան»ութիւնը չի կրնար երկարատեն դիմադրել իրականութեան։ Ամօթապարտ մեալու դատապարտուած են բոլոր անոնք, որոնք ծերակուտական Քինկի նման կ'աշխատին անուն շահիլ, ուրիշներու ճակատագրին հետ խաղալով։ Եթէ Ամերիկայի այս «մահուտ» ծերակուտականը մազաչափ առաքինութիւն ունենար, պէտք է ամչնար այն հեգնական յօդուածներէն, զոր հրատարակեցին ամերիկեան թերթերը, այս դէպքին առթիւ»։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱՅի Հանրապետութեան նախագահ Պ. Կաստօն Տուվէրկ Անգլիոյ թագաւորին հրաւէրով Լոնտոն պիտի երթայ յառաջիկայ Մայիս 16ին եւ երեք օր պիտի մնայ։

ԺՔՆեւի մէջ երէկ սկսաւ գումարուիլ զինաթափութեան նախապատրաստական յանձնաժողովը։

Հ. Յ Դ. ՓԱՐԻԶԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

վիճաբանական ժողովը 25 Մարտ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին

կը զեկուցանէ ԸՆԿԵՐ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼի

Նիւթ ԶԱՐԵՒԱՆԴի 1.«Կրնա՞նք հաշտուիլ Թուրքին հետ».

2. «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՅԱՐԴԳՈՂի առաջիկայ գրական երեկոն, 24 Մարտ Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա, Նուիրուած է պեթիովէնի, իր հարիւրամեակին առթիւ։ Օր. Նուարդ Գալփաքեան կը ներկայացնէ մեծ երաժիշտին կեանքն ու գործը։ երեկոն ունի նուագի բաժին։ կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

Հ. Յ. Դ. Պուա-Կոլոմպի «Եռագոյն» խումբի ընկերները իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն ընկ. Գառնիկ եւ Արամ Յովհաննէսեաններու իրենց մօրաքրոջ ՕՐ. ԴԱՑԵՒԱՆԻ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆի տխուր մահուան առթիւ։

ԼԻՈՆԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

«բարձր Հայք» ճաշարանը 202, Rue Boileau, Արարատ ճաշարանը 116, Tête d'Or, Թերթին գործակալն է Պ. Խաչիկ Ջօմաքլեան, 202, Rue Boileau.

ՎԻԵՆԻ „ՅԱՌԱՋ"Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է

ՀՄԱՑԵԱԿ ՈՒՅՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՍՓՈ-ՀԱՅ ԴՐԱՏՈՒՆԸ 15 բիւ տէ Ֆօմինիքէն

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Լիոնի կոմիտէն կը ծանուցանէ բոլոր ընկերներու եւ համակիրներու թէ՝ Գրադարան ընթերցարանը փոխադրուած է Rue Paul-Bert, թիւ 75, սրճարանի ներքնասենեակը։

ԿԸ ՓՆՏՌՒԻ

— կը փնտռուի Անտիոքցի Աբրահամ Միքայէլեան 19 տարեկան։ Գրել՝ Սամուէլ Միքայէլեանի, Chez Mr. Maisson Bois Neuvy le Roi (Indre et Loire) France. կը խնդրուի սուրիական թերթերէն արտատպել։

— Պրուսայի կէմլէյիկի պէյնի գիւղացի պետրոս Հայրապետեան կը փնտռէ իր գիւղացիները, ու, յանուն մարդասիրութեան, կը խնդրէ որ Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Եգիպտոս կամ այլուր գտնուող պէյնիցիները իրենց հասցէն երկտողով մը ծանուցանել իրենց հասցէն, գրելով՝ Bédros Hairabedianի՝ au Couvent Arménien St. Jacques. Jérusalem, Palestine.

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներու վարսագէտ եւ պատուաւոր խոհարար մը ճաշարանի կամ տունի մէջ։ Դիմել՝ մեկնիք տէր Սարգիսեանի 5, Rue Ribouttè, (Face le square Montholon). Paris 9.

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE.
տէր եւ տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առտնին բոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ
ԾԻՐԱԿ ՆՈՒԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
Փարիզի եւ գաւառներու հայութեան համար կը պատրաստէ
ՀԱՄՈՎ, ՀՈՏՈՎ, ԱՆԽԱՐԴԱԽ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ
Մեծաքանակ եւ փոքրաքանակ Անմրցելի գիներով
Մէկ փորձ բաւ է համոզուելու, հեռախօսով ապսպրանքները անմիջապէս կը ղրկուին։ Թէլէֆոն։ Provence 38-63, Métro Cadet
26, Rue de Trévise Paris (9)

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—Կիրակի եւ տօն օրեր 1-12

ՁԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,
փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ
Համեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԵԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ծանօթ Արեւելեան վաճառքներ ալ կը ծախուին

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԸՆՀՐԱԾԵՑՏ ԲՈԼՈՐ ԳՐԱՆՑԱՀԱՑԵՐՈՒՆ
Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ։ Թարգմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով։ Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ։
ԱՐԱԴ ՋԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
VAHAN YARJANIAN
CONTENTIEUX
5 Rue Cardinal Mercier Paris, (9e)
Tél. CENTRAL 96-70 կամ 97-39 Métro: CLICHY
» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ
Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9-12 և 2-7 բացի կիրակի

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ
Ծախքիր թուրքա պէյ 5, Բժիշկին գիրքէն փրցուած էջեր 12.50, Յուհաչայ տարեգիրք 25, Ռասթութին 15, Նամուս 10, Զար ոգի 10, Պատուի համար 10, Լուսթիւնը 8, Երազուհան 6, Կոյսի մը Օրագիրը 5, Անձկութեան ժամեր 2, Ծապլվար 12,50, Բարիզէթ 7.50, Տօքթ. Մօրի վրէժը 5, Մացառներու մէջ (2 հատ.) 25, Ոսկի Աքաղաղ 10, Թուղթի փառք 5, Վերջալոյսին տակ 5, Ճամբուն վրայ 10, Պէպէքթ 10. Հայրենի Քնար 12.50, Հայորդիները 7, Սամսայ Մշեր 5, Հացին երգը 25, Հայաստանի Նկարիչները Ալպոմաթը 40, Նարեկ աշխարհաբար 40, «ՆՈՐ ՕՐ»ի դրական տեսարաններ, թիւը 2, ինչպէս նաեւ վիպական, թատերական բառատեղծական եւ ազգային գիրքեր, բառարաններ, խօսակցութիւններ հատածոներ եւայլն։
ԳՐԱՏՈՒԻՑԱԿԸ ՁՐԻ
Ծրանողի եւ գաղութներուն համար, փոխի ծախք չկայ։
Ստանալու համար՝ դիմել նամակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ԼԱՒ ԼՈՒՐ ՄԸ
ՔԱՇ ՓՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒԻՆ
Ձեր մետաքսները մի գնէք օրուան գինով։ Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն հրապարակի գինէն 5 ֆրանք աւելի աժան կը ծախէ։
Բաց է ամէն օր, նոյնիսկ Շբ. մինչեւ իրիկուան ժամը 7ը։
Կը խօսուի թուրքերէն։

կահագործ աժան գինով կը շինուին եւ կը նորոգուին անակնկալ կառոյցներ, գրասենեակի սեղաններ եւայլն, ծախու են թրքական թավուններ։ Դիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

Կ'ՈՒԶՈՒՄ
Գործաւորներ եւ գործաւորուհիներ գործի խաւը կարել գիտցող։ Դիմել Պ. Իսկէճեանի 12, Rue de la Pyramide, Boulogne s/Seine, (փորթ Սէն-Քլու)։

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՋԷՋԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մանուածոտ լուսաթղթէ լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մատենադարանի գիրքերու։
Դիմել, — Librairie Haigachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ՍԱԿԱՐԱՆ
21 Մարտ 1927
ԴՐԱՄՆԵՐ
Սթերլին, L. St.
Տոլար, Dollar
Մարք (ոսկի) 100 Mark
Թրքական Թղթ. L. Trq.
Թրք. ոսկի » or
Մէճիտիէ Médjidié
Լէվա 100 հատ Léva
Տրախմի » Drachme
Լիր » » Lire
Պելճ. ֆրանք » Frc. Belge
Ջուից. » Frc. Suisse
Լէյ 100 հատ Ley
Չերվոնց (10 Roubles or)
ԱՐԺԵԹՈՒՊԹ
Եգ. Ֆր. Ֆոնսիէ I Cr. Fonc. Eg.
» II »
» III »
Թումուի երկթղ. Lots turcs
Comptoir Parisien de change et de C
80, Rue Lafay
IMPRIMERIE - MASSIS - EDIT
208bis, Rue Lafayette Paris(
Le Gérant : H. TEURNI

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԻՔ

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն — 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
23
ՄԱՐՏ
1927

23 MARS 1927

Գ. ՏԱՐԻ թիւ 292

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԲՈՒԵՐ ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ինչպէս գրած էինք երէկ, էնկիւրի ծրագիրը մը պատրաստած է, արտասահմանէն մօտ հարիւր հազար գաղթականներ տեղաւորելու համար Թուրքիոյ մէջ։

Այս խնդիրը շատոնց կ'արծարծուէր Թուրք թերթերուն մէջ, եւ պատասխանատու անձերու կողմէ, որոնք յայտնապէս մտահոգ են, արդի Թուրքիոյ ամայութենէն։

Ամէնէն լաւատես հաշիւներն ալ, 12 միլիոնէն աւելիչեն հաշուեր քէմալական արքայութեան բնակչութիւնը։ 1925ի ամար, Թուրք Թերթերը կ'արտատպէին վիճակագրութիւն մը, որուն համաձայն Թուրքիա ունի 727,520 քառ. քիլոմեդր տարածութիւն եւ 12,815,274 բնակիչ, որով քառ. քիլոմեդրին կ'իյնայ 17 մարդ։ Դարձեալ, այդ հաշիւներուն համաձայն, ամէնէն խիտ բնակչութիւն ունի Պոլիսը։ Ուրիշներ կը հաշուեն զայն առաւելն 7 միլիոն։ Անցեալ Ապրիլին, Աղա Օղլու Ահմէտ, նշակաւոր Թուրանականը, դառն հառաչանքներ կ'արձակէր, Անատոլու կատարած պտոյտի մը առթիւ։ Կ'ողբար Թուրք բանականերու անճիտութիւնը, «իբրեւ հետեւանք տգիտութեան եւ ջրուառութեան»։ Ու կ'աղաղակէր.

— «Մինչեւ ե՞րբ պիտի տեւէ այս ողբալի կացութիւնը։ Շարունակ բնակչութեան նուազումէն կը գանգատինք...։ Եթէ միայն Անատոլուն կարենար երեսուն միլիոն բնակիչ ունենալ, ո՛վ պիտի համարձակէր չափուիլ մեզի հետ»։

Այդ պակասը լեցնելու համար է որ, ծրագիրները կը մշակուին։ Յունաստանի հետ փոխանակութեան օրէնքը հազիւ օգնեց 5–600,000 հոգի փոխադրելու. բայց անոնք ալ նախընտրեցին սողոսկիլ քիչ-շատ բազմամարդ շրջաններու մէջ, փոխանակ դէպի ներսերը, իրական անապատները երթալու։ Հին բնակութեան շրջանակներ սահմանուած են գալիքներուն համար։ Գաղթականներու գետեղման վարիչ Մարուֆ պէյի յայտարարութեան համաձայն, Ռուսիայէն գալիք 50,000 գաղթականները պիտի տեղաւորուին Խարբերդի, Մուշի եւ Տիգրանակերտի մէջ, Կիպրոսի գաղթականները՝ (6000) հարաւային նահանգները. իսկ միւսները՝ զանազան շրջաններ (Սուրիայէն 15,000, Պուլկարիայէն՝ 8000, Եւկոսլաւիայէն՝ 9000 եւլն.) «Գաղթարութիւնը մեծ կարեւորութիւն կ'ընծայէ գետեղման քաղաքականութեան», կ'աւելցնէ Թուրք վարիչը։

Տարակոյս չկայ։ Եւ եթէ Հայաստանի վարիչները քիչ մը արձնուն եւ գործնական ըլլային,—գոնէ այնքան որքան վրացի եւ ազրի կոմունիստները — Հայաստանը իր բնակչութեամբ ալ զանցառելի քանակութիւն մը չէր դառնար այսօր։ Ոչ ալ երկու հերթաղթի փոխարէն տասը-քսան արտագաղթ կ'արձանագրուէր։

Բայց, էնկիւրի ունի՞ անհրաժեշտ միջոցները, իր ծրագիրը գործադրելու համար։

Անցեալ Յունուարին, Թուրք Թերթերը կը գրէին թէ Վերպիայէն եկած մաս մը գաղթականներ հիւպատոսարան դիմեր են, իրենց տեղերը վերադառնալու համար. բայց անցագիր չէ տրուած։ Իսկ Թրքական իշխանութիւնը որոշեր է անպատճառ իրենց համար նշանակուած գաւառները ղրկել զանոնք։ Այդպէս եւ Պուլկարիա կամ Յունաստան հաստատուած Թուրքեր եթէ տեղական կառավարութիւնը չհարկադրէ, կամ բռնի փոխանակութիւն չհաստատուի, անոնք իրենց տեղէն չեն շարժիր։ Մինչեւ անգամ այդ է կացութիւնը խեղճուկ Հայաստանի մէջ, ուրկէ ոչ միայն Թուրքերու արտագաղթ չկայ, այլ ընդհակառակն կը շեշտուի ներգաղթը։ Ինչ որ կը գրենք այս մասին, տեղեկութեամբ եւ Թուանշաններով, բացայայտ իրականութիւն է, եւ մեր երիցս երանելի ռամկավարները եթէ քիչ մը խելք ու խիղճ ունէին, եթէ իսկապէս կը սիրէն հայրենիքը, միայն այս կէտին մէջ պէտք է պինդ բռնեն երեւանի մարզպաններուն ծոքքէն։

Ննջադրելով որ արդէն կազմ եւ պատրաստ են այս տարի ապաստած հարիւր հազարը, նորէն հարցը չի լուծուիր։ Էնկիւրի ո՛րքան ալ զօրաւոր ըլլայ, չի կրնար բռնի լեցնել անապատները, մանաւանդ «արեւելեան նահանգները»։ Այդ աւերակ տարածութիւններուն վրայ սակաւաթիւ Թուրքեր կան, տակաւին։ Բայց անոնք անգամ հանգիստ չեն իրենց տեղը, եւ կը սարսափին վաղուան հեռանկարէն։ Անոնք շատ լաւ գիտեն թէ այդ հողերը օրինաւոր տէրեր ունին, որոնք պիտի գան ուշ կամ կանուխ։

Անվրիպելի է, ձակատագրական է այդ «վաղը»։ Այնտեղ քշուած Թուրք բնակչութիւնը պարզապէս անկոչ հիւր մը պիտի դառնայ, միշտ ահու դողի մէջ, եւ հետեւաբար անընդունակ երկարելու։ Թուրքիա չխուսէն տարիէն ալ չի կրնար ընդունել 750,000 քառ. քիլոմեդրը, որ Թանկագին որս մըն է, միջազգային աւարի համար։ Այսօրուան Թուրքիոյ Թրքութիւնը, եւ նոյնքան ալ արտասահմանէն եթէ փոխադրուի տարիներու ընթացքին, կրնայ հանգիստ լողալ բուն Թրքական տարրերուն մէջ։ Մնացածը՝ տէր ունի, այսօր տարագիր, բայց միշտ անհաշտ դատախազ։

Ըլլն ճանչնար այդ իրաւունքը։ Կրնան փորձել ինչ որ կ'ուզեն։ Գաւառի մը յետաձգումը կորուստ չի նշանակեր։ Ջկայ օրաթուղթի դէմ ըմբոստացած ժողովուրդ մը որ վերջ ի վերջ չյաղթած չըլլայ։ Իսկ երբ դառը Թուրքիոյ դէմ է, հալածականներուն հետ «Ատուած անգամ պլուխ չի կրնար ելլել»։

Բուերը չեն որ պիտի ծաղկեցնեն արիւնով Թրծուած այդ հողերը։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԾԱՄԾԱՄԵՆ

Հայաստանի բնակչութեան նուազման առթիւ, որ այլեւս անվիճելի է, ռամկավար Թերթերն ալ սկսան արտայայտուիլ։ Եւ, ինչպէս իրենց անբուժելի ախտն է, փոխանակ բուն հարցը շօշափելու, նորէն քարեր կը նետեն «դաշնակ»ներուն դէմ, որոնք մարդահամարի Թուանշաններուն վրայ հիմնուելով, աճազանգ ինչեցուցեր էին։ Բայց ի՞նչ կ'ըսեն անոնք։ Կամկար կամկար, ծամծմելով, ձիշտ այն ի՞նչ որ մենք ու մեր պաշտօնակիցները գրեցին եւ ըսին աւելի քացորոշ եւ յայնօրէն պատճառաբանուած։ կարդանք «Ալիք»ը, եգիպտոսի ռամկավարներուն պաշտօնաԹերթը (12 մարտ).

— «Բայց փաստը կը մնայ թէ Հայաստան բաւականաչափ հող ու ապրուստ չունի իր աճող բընակչութեան համար, Հայաստանէն արտագաղթ մը կայ այսօր, ինչպէս եղած է միշտ ալ։ Անցեալին, ձարերու իշխանութեան օրով, Վրաստանի, Ազըրպէյճանի եւ Հիւսիսային Կովկասի հայ գաղութները կազմուած են գլխաւորաբար Արեւմտեան Դաշտէն հնուացած Հայերով։ Այսօր նոյնքան Հայեր կը բնակին Անդրկովկասի եւ Հիւսիսային Կովկասի մէջ, որքան Հայաստանի մէջ, եւ անժխտելի է թէ անոնց մեծագոյն մասը վերջին չիսնամեակի ընթացքին մեկնած են մայր երկրէն, գացած են յօժարութեամբ ապրուստ վաստկելու եւ հարստութիւն դիզելու յոյսերով ու յաջողած ալ են։

«Այսօր ալ կը գաղթեն մեր երկրէն, որովհետեւ Հայաստան տակաւին չունի տնտեսական այն զօրաւոր կառուցուածքը, որպէսզի կարենայ տոկալ իր բնակչութեան աճումի ծանրութեան։»

Ահա նաեւ «Պայքար»ը, Ամերիկայի ռամկավարներուն մունետիկը. (22 փետր.)

— «Երկրին բնակչութեան աւելի քան չորս հինգերորդը գիւղացի է, երկրագործութեամբ կը պարապի, իսկ Հայաստանի հողը լաւագոյն պայմաններու տակ, անբաւական է արտադրելու այնքան, որքան պէտք է բնակչութիւնը ապրեցնելու համար, եւ ասոր հետեւանքով, բնականաբար, ամէն տարի աճող ժողովուրդին մէկ մասը կը ստիպուի դրացի երկիրները դիմել ապրուստ ճարելու համար։ Հայաստան աշխարհագրական այնպիսի դիրքի ու պարագաներու մէջ կը գտնուի, որ եթէ ազատութիւն ըլլայ իսկ, մեծ վաճառականութեան վրայ յոյս չի կրնար դնել. փոքր առեւտուրն ալ, պարզ ներքին սպասարկութիւն մըն է, եւ գործէն հարստութիւն չի ներմուծեր երկիր։ Հայաստան որպէսզի կարենայ մնուցանել իր բնակչութիւնը, եւ ոչ միայն արտադրթի տեղի չդառնալ, այլ նաեւ ներգաղթի համար հնարաւորութիւն ստեղծել, պէտք ունի անտեսական նոր ու շահաւէտ միջոցներու եւ ձեռնարկներու։»

Ի՞նչ է այս երկչոտ, սմսեղուկ բացատրութիւններուն իմաստը,— Հայաստանի մէջ տընտեսութիւն չկայ, ոյզ չկայ, տեղ չկայ,— *երկիրը չի բաւեր, ժողովուրդը կը ստիպուի գաղթել*, հետեւաբար Հայաստանը *կը տկարանայ*, կը դառնայ ուժասպառ, եւ ատով իսկ՝ *խախտուած*։

Ամէն ինչ ծամծմելով - ծամծմելով, ռամկավարները այնքան են բթացեր, որ առտու մը վէճի պիտի ելլեն մեզի հետ, եթէ ըսենք թէ անձրեւը ամպէն կը ծագի, իսկ ամպը...

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԸ

ԱՌԺԱՄԱՊԷՍ ՅԵՏԱՁԳՈՒԱԾ

Սէն Նահանգի Ոստիկանական Տեսչութիւնը առժամաբար դադրեցուց օտարականներու ինքնութեան Թուղթերու յանձնումը։ Ներկայիս պէտք է դիմեն միայն անոնք, որոնք տակաւին չեն վճարած 1925 Յուլիս 13ի օրէնքին համաձայն 68 ֆրանք, կամ զեղչեալ սակով 10 ֆրանքը։

Կը տեղեկանանք թէ արուարձաններու մէջ եւս առ այժմ դադրած է ինքնութեան Թուղթերու յանձնումը։

Ինչպէս մանրամասնօրէն գրած ենք մեր այսօրուան թիւին մէջ, Վերակոյսը 100 ֆրանքի զեղչեց 375 ֆրանքը եւ 20 ֆր.ի զեղչեալ սակը։ Ներքին նախարարութիւնը կը յուսայ որ երեսփ. ժողովը եւս չպիտի ուշանայ վաւերացնել այս օրէնքը, որ մօտ օրէն կարելի պիտի ըլլայ գործադրութեան դնել։

Երեսփ. ժող.ի ելմտ. Յանձնաժողովը արդէն իր երկուշաբթի օրուան նիստին մէջ ընդունեց Վերակոյսի քուէարկած օրինագիծը, 100 եւ 20 ֆրանք։ Այս կերպով քայլ մը եւս առնուած է եւ կասկած չկայ որ երեսփ. ժողովը առանց դժուարութեան պիտի վաւերացնէ այս որոշումը։

Գաւառի մեր թղթակիցները կը տեղեկացնեն թէ ինքնութեան Թուղթերու յանձնումը առժամապէս յետաձգուած է այնտեղ ալ։

Արտէշի Նահանգապետը իր շրջանի բոլոր Քաղաքապետներուն եւ Ոստիկանապետներուն ղրկած է Մարտ 19 Թուակիր հետեւեալ շրջաբերականը.—

«Համաձայն ներքին նախարարէն ստացուած հեռագրական հրահանգներուն, պատիւ ունիմ խնդրելու ձեզմէ, որ խոլիրդարանին առաջարկուած փոփոխութիւններուն պատճառով, անմիջապէս եւ ցնոր տնօրինութիւն դադրեցնէք օտարականներու ինքնութեան Թուղթերու ստացման կամ նորոգութեան համար կատարուելու վրայ եղող ամէն գործողութիւն։

«Արդէն իսկ կազմուած Թղթածրարները, որոնց համար տուրքը գանձած էք, անմիջապէս ինծի պէտք է ղրկուին, եթէ չեն լրացուած։

«Ամսոյս 26էն վերջ ղրկուելիքները չպիտի կրնան ընդունուիլ»։

Նահանգապետ՝ Հ. ՐԻՇՕ

ԻՏԱԼԻԱՍԵՐՊ ՎԻՃԸ

ԿԸ ՊԱՀԷ ԻՐ ՍՈՒՐ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Փարիզ, Լոնտոն եւ Պերլին կը շարունակեն իրենց դիմումները, արգիլելու համար որ իտալեւսերպ միջադէպը պատեհ առիթ ըլլայ Մուսսոլինիի համար՝ Ազգերու Դաշնակցութեան դէմ յարձակելու։ Արտաքին նախարար Պռիան երէկ ընդունեց իտալական դեսպան պարոն Ռոմանօ Ավեցցանան եւ սերպ դեսպան Սփալայքովիչը։ Նախարարը կրկնեց չափաւորութեան եւ խոհեմութեան խորհուրդները սերպ ներկայացուցիչին։

Պուլկար դեսպան Մօրքօֆ եւս ներկայացաւ արտաքին նախարարին եւ հաւաստիքներ տուաւ Պուլկարիոյ խաղաղասէր քաղաքականութեան մասին, միանգամ ընդ միշտ հերքելով Իտալիոյ եւ Պուլկարիոյ միջեւ գաղտնի դաշինք մը կնքելու մասին տարածուած լուրերը։

Ֆրանսական շրջանակներու մէջ լաւատես են եւ կը յուսան թէ առանց Ազգերու Դաշնակցութեան դիմելու ստիպուելու, կարելի պիտի ըլլայ խնդիրը կարգադրել ուղղակի բանակցութիւններով։ Հաւանաբար Պելկրատի օտար գինուորական կցորդները ալպանական սահմանագլուխը երթալով, քննութիւն մը պիտի կատարեն։

Լոնտոնէն կը հեռագրեն թէ գերման դեսպան Շթամմէր սըր Ջէմպրլէյնի մօտ երթալով երկարօրէն տեսակցեցաւ իտալեւսերպ խնդրին մասին։ Անգլիա ուժ կուտայ Իտալիոյ՝ ալպանական ներկայ կառավարութիւնը պաշտպանելու համար խռովարար եւ սերպասէր տարրերու դէմ։ Ֆրանսա ուժ կուտայ Սերպերուն։ Իտալիոյ եւ Ֆրանսայի հակամարտութեան խնդիր է ասիկա։

Ժընեւի զինաթափութեան նախապատրաստական յանձնաժողովի եուկոսլաւ ներկայացուցիչ Եովանովիչ հետեւեալ յայտարարութիւնները ըրաւ.—

«Մենք խաղաղութեան կը ձգտինք։ Զինուորական պատրաստութեանց եւ նոյնիսկ զօրաշարժի սկզբնաւորութեան մը մասին տարածուած լուրերը բոլորովին անհիմն են։ Իր դէմ ուղղուած այս ամբաստանութիւններուն ստութիւնը ապացուցանելու համար, կառավարութիւնս իրաւունք է արդէն պելկրատի զինուորական կցորդներէն, որ տեղւոյն վրայ երթալով քննեն կացութիւնը։ Պատրաստ ենք դոհացնելու ամէն քննութիւն։ Եթէ Ալպանիոյ մէջ Թիրանայի կառավարութեան դէմ ժողովրդական դժգոհութիւն կայ, յանցանքը մերը չէ։ Թո՛ղ Ազգերու Դաշնակցութիւնը զբաղի կարգը պահպանելու այդ երկրին մէջ։ Կրնաք վստահ ըլլալ, որ ո՛չ մէկ նպատակ եւ փափաք ունինք Ալպանիոյ վրայ յարձակելու, եթէ ուրիշ մը չկանխէ մեզ։ Իմ կառավարութիւնս տակաւին չէ դիմած Ազգերու Դաշնակցութեան եւ պիտի շարժի դէպքերու ընթացքին համաձայն։

(Լուրերու չարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԿԱՏՈՒՆԵՐԸ ԵՒ ՊՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

Ռուսիա Թերեւս համայնավարներուն համար դրախտ մըն է, բայց ապահովաբար ո՛չ կատուներուն համար, Լէնինկրատի սովիէդը հրամայած է անխնայ ջարդել բոլոր այն կատուները որ անտէր կը Թափառին փողոցէ փողոց, իսկ կերպասեղէնի վաճառականներու Թրբսեր՝ մորԹ գլուխ երկու շիլին խոստացած է։ Անասուններու պաշտպան ընկերութեան բողոքին պատասխանելով, սովիէդները կը յայտարարեն Թէ՝ կատաղութեան տարածման կը նպաստեն անոնք, իսկ վաճառականները կ'աւելցնեն իրենց կարգին. «կատուն գարշելի արարած մըն է, միւս կողմէ անոր մորԹին անհրաժեշտ պէտք ունինք մուշտակաւոր վերարկուներու շինութեան համար։»

Թուղթէլեուներկինք-քերողներ.

— Ամերիկայի մէջ հսկայ տուներ կան, որոնց կ'ըսուի «երկինք—քերող» կամ երկնակարկառ։

Խորհրդ. դրախտին մէջ ալ կան Թուղթէ տուներ, նոյնքան հսկայ, որոնց «Իզվէսթիա» (4 Փետր.) կուտայ «երկինք-քերող» անունը։ Իսկապէս պոլշեւիկ դիւանները Թուղթէ դէզերը երկինք կը քերեն։ Օրինակ, միացեալ ճամբաներու եւ հաղորդակցութեանց գործավարը, մէկ տարուան մէջ, գործածած է ամբողջ Ռուսիոյ Թուղթի մէներքին քառորդը, այսինքն 6,720,000 քիլօ։ Թող սխալ չհասկցուի, գործավարութիւնը այդ հսկայ քանակութեամբ Թուղթերը կը գործածէ ոչ Թէ վառարան վառելու կամ Թէ Թուղթիկ շինելու համար, այլ պարզապէս հրամանագրերի եւ Թղթակցութեան համար։

Եւ «Իզվէսթիա»յի յօդուածագիրը կ'ըսէ որ, մէկ անգամէն փոխադրելու համար այդ Թուղթերը, անհաժեշտ է 40 վագոնոց 10 շոգեկառք։ Երկաթուղիներու իւրաքանչիւր վարչութիւն ամէն տարի կը ստանայ 1,300,750 էջ տեղեկագիր։

Ամէնը այս չէ։ Դժբախտ պաշտօնեաները ստիպուած են պատասխանել այն բոլոր հարցարաններուն, որոնք կը տեղան խորհրդային բոլոր գրասենեակներէն։ Օրինակ, առեւտրական գործավարութիւնը մէկ տարուան ընթացքին, պիտի պատասխանէ 447,885 հարցումի։

Եւ այսպէս, «Իզվէսթիա» կը հաստատէ որ Թուղթէ լեռները հետզհետէ կը բարձրանան խորհրդային դրախտին մէջ, երկինքն ի վեր։

Շինգ տարի շղթայակապ.— *Խորհրդային դրախտին մէջ, Տամարիք կոչուած դիւզանկիւնը կը բնակէր Մուհամմէդին Թոռներէն՝ Սայիտ Քիւչօք։ Առաու մը Սայիտի կինը առանց չալշաճի փողոց ելաւ։ Կատղեցա՛ւ միւսլիմանը։ Եւ շղթայի զարկաւ կինը։ Ծանր շղթայ մը, զոր փաթթեց կնոջ մարմինին եւ շղթային միւս ծայրը զամեց պատին։ Չինգ տարի շարունակ կինը ինաց այս վիճակին մէջ, երբ ոստիկանները վերջերս առիթով մը ազատեցին խեղճ Թրքուհին։*

Շինարար Մալաթիացիները.— *Մալաթիոյ Հայրենակցական Միութեան Ամերիկայի Կեդր. Վարչութիւնը որոշած է Հայաստանի մէջ հիմնել կօշիկի գործարան մը եւ շինել քանի մը տուներ։ Այս նպատակին յատկացուած է առայժմ 30,000 տոլար։*

ԸՆՏՐԱԿԱՆ ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ծիծաղելի է լրջութիւն փնտռել խորհուրդներու ընտրութեանց մէջ որ կը կատարուին այս պահուս Հայաստան։

Ընթերցողը շատոնց գիտէ, որ խօսքի, մամուլի եւ կարծիքի ամէն ազատութիւնը հալածող կեղծ բանուորա-գիւղացիական տիկտատուրան չի թոյլատրեր ո՛չ մէկ ընտրութիւն, ուրեղ համայնավարական կուսակցութեան թեկնածուները չքուէարկուին, «ընդհանուրին հաւանութեամբ»։ Ուրիշ խօսքով, պոլշեւիկ իշխանութեան տակ, մրցող կամ պայքարող թեկնածուներու գոյութեան մասին ենթագրելն իսկ աւելորդ է։

Բայց պոլշեւիկներու ընդունած ու գործադրած ընտրական գործառնութիւնները անգամ լեցուն են մասնաւոր թերութիւններով եւ յայելեալ շեղումներով ու խարդախութիւններով։

Այսպէս, ըստ «Խորհրդային Հայաստան»ի (18 փետր.) Ախուրեանի եւ Հրազդանի մէջ «չքաւորները» միայն ընտրուած են Խորհուրդներու անդամներ, մինչ գիւղացիութեան մեծամասնութիւնը կազմող «միջակ» տարրը բացարձակապէս դուրս մնացած է թեկնածուներու ցանկէն։ Երեւանի պաշտօնաթերթերը կը բողոքէ այս երեւոյթին դէմ։

Փետրուար 16ին քէշիշքէնդի ընտրութիւնը կատարուած է եւ անցեր է կոմֆրակցիայի «չքաւորական» խմբակի ցուցակը։ «Միջին գիւղացիութիւնը կը բացակայի («Խորհր. Հայաստան» 19 փետրուար)։

Ընտրութեանց կը մասնակցին ժողովուրդի հազիւ կէսը, իսկ այս մասն ալ խճողուած է կիներով։

Պոլշեւիկ հրապարակագրի արտայայտութեամբ իսկ, ո՛չ միայն միջակ գիւղացիները կը քուէազրկուին ու կը թերագնահատուին, այլ եւ «կնոջ ընտրում են ընդհանրապէս եւ չեն զբաղուում այն խնդրով թէ ո՞ր կնոջն ընտրել»։ Եւ կամ, «կոմֆրակցիայի կողմից առաջադրուած ցուցակներում լինում են վարկաբեկուած եւ մասսայի մէջ ոչ մէկ յարգանք չվայելող անձինք, կուլակների ազդեցութեան ներքեւ գտնուող չքաւորներու միջակներ եւ մինչեւ անգամ քրէական յանցագործութեան մէջ մեղադրուողներ»։

Պատահեր է որ Սամաղարի շրջանի (Էջմիածին) Մղանշուղ գիւղին մէջ նախընտրական խորհրդակցութեան են հրաւիրուած 30 միջակ եւ 10 չքաւոր գիւղացիներ։

Օր մը առաջ, միջին գիւղացիութեան ընտրական իրաւազրկութիւնը մասնաւորող մեծամասնական լրագիրը փրփուր է կտրած 20 փետրուարին, տեսնելով որ գիւղացիութեան իրական մեծամասնութիւնը կազմող միջակները գործի են կանչուած։— «Պետական է այդ նպատակով շրջանից ուղարկուած պատասխանատու ընկերը» («Խ. Հ.» 20 փետր.)։

Ինչպէ՞ս բացատրել այս աղաղակող հակասութիւնը։

Արամուս գիւղին մէջ, ընտրուողները, ըստ տնտեսական դրութեան կը կազմեն՝ մէկ բատրակ, 20 չքաւոր եւ 15 միջակ։ Թափգիւղ Ելգովան՝ 3 բատրակ, 20 չքաւոր եւ 12 միջակ։ Պանանդ կանայք, այս տարի չտեսնուած ակտիվութիւն ցուցաբերեցին» («Խ. Հ.»)։

Կեցցէ՛ Ծապլվարը։

Փամբակ-Լոռիի մէջ, խորհուրդներու ընտրութեանց առեն, «ամենամեծ առաւելութիւնը եղել է այն որ այս տարւայ կամպանիայի շրջանում մեծ ուշադրութիւն է դարձել չքաւորական խորհրդակցութիւններին եւ աշխատել են, որքան հնարաւոր էր, քանակով նրանց շատացնել» («Խ. Հ.» 22 փետր.)։

Դժուար չէ պատկերել ու մեկնաբանել կոմունիստներու շռայլած «չքաւորական» դեղահատներու «տօզ»ն ու շարժառիթը։ Այս պատճառով ալ «չքաւորական ժողովներին չի քաշուել տեղերի միջակների ակտիվը»։ Եւ դեռ երես ունին գրելու՝ թէ «Միջակը մեր գիւղի կենտրոնական դէմքն է եւ նրան չէր կարելի երբեք մոռացութեան տալ» («Խ. Հ.» 22 փետր.)։

Լեգէոններով մարդիկ ձայնագրուկ են հոչակուած. սակայն կատարուող ընտրութեանց ցուցակները յայտարարելու համար. միայն Համամլուի շրջանը 11600 գիւղացիներէ 1148ը բողոք են տուած իրենց քուէի իրաւունքները վերահաստատելու, իբրեւ ձայնագուրկներ։ Տեղ-տեղ բնակ. ժամանակ չեն տար, վախնալով հակառակորդներու փրոփականտէն։ «Եթէ ցուցակները նախօրօք յայտնի են լինում» մեր թշնամին կուլակը իր պայքարի մէջ աւելի մեծ յաջողութիւն է ունենում։ Եւ քուէարկելու ձանձրոյթը յանձն առնող հայ գիւղացին կը բաւականանայ, ճաթահատ, բջիջի, կոմսոմոլի եւն. մշակած ցուցակով, որովհետեւ «պոլշեւիկեան կուսակցութիւնը եւ կոմսոմոլը կը մոռնան իրենց իրաւունքները, իրենց ֆունկցիաները շրջանակները եւ կը մտնեն հրամայողական դերի մէջ» (Պեղի շրջան)։

Թէ խորհուրդներու ընտրութիւններով ինչքա՞ն կը հետաքրքրուի Հայաստանի ժողովուրդը, եւ ի՞նչ չափով կը կարենայ յագուրդ տալ իր հետաքրքրութեան,— առանձին նիւթ մըն է։

Վամպուլուի ընտրութիւնները, օրինակի համար, կը մասնակցին ձայնի իրաւունք ունեցողներու Տարիւրին 60ը։ Միջակ գիւղացիներու թիւը, գիւղական խորհուրդներու մէջ, կը կազմէ 40—45 Համեմատութիւն։ Իսկ ամէնէն բնորոշ կողմը՝ Թուրքերու եւ Թրքուհիներու բուռն մասնակցութիւնը, եւ մասնաւորապէս Արտավար, Խուրասան, Դոմկուզ եւն. գիւղերու մէջ Թրքուհիներու Տարիւրին 60ին ընտրութեանց մասնակցիլը...։ Ո՞վ է ըսեր թէ ազգերը Հաւասար չեն խորհրդային իրաւակարգի տակ, եւ թէ Թաթարները Հայերէն աւելի յարգ ու ազատութիւն չունին ներկայ Հայաստանէն ներս։

Ղարդուղուլի մէջ եւս ընտրութեան մասնակցած են 159 Հոգի, ձայն ունեցող բնակչութեան (375) կէսէն ալ պակաս։ Նորընտիր խորհուրդի 18 անդամներէն չքաւոր են 12 եւ միջակ 6 Հոգի։ Հոս ալ կիները աւելի «ակտիվ» են եղած այս տարի...։

Նոր-Բայազիտի չորս թաղամասերուն մէջ ընտրուած են բացառապէս չքաւորներու, միջակներու եւ «կոմֆրակցիա»ի առաջարկած թեկնածուները՝ մեծ մասամբ չքաւորներ, միջակ՝ հողագործներ, բատրակներ, ծառայողներ։ Ձայնագուրկներու կողմէն (որքա՞ն է եղած ասոնց քանակը արդեօք) բազմաթիւ դիմումներ են ստացուած իրենց իրաւունքները վերահաստատելու համար։ Դիմողներու Տարիւրին 12ին իրաւունքները վերահաստատած են («Խ. Հ.» 23 փետր.)։

«Խորհրդ. Հայաստան» իր 24 փետր. տպագրութեամբ կը ծանուցանէ՝ որ Դարալագեազի գաւառին ընտրութիւնները կ'ընթանան «նորմալ» կարգով։ «Խոլոր գիւղերում անցնում են չքաւորական ժողովներում կազմուած ցուցակները»։

Ահա ի՛նչ խեղկատակութիւն է։ Մէկ կողմէն կը գրեն թէ գիւղացիութեան մեծամասնութիւնը միջակները կը կազմեն, իսկ միւս կողմէն «նորմալ» կը կոչեն այն ընտրութիւնները, ուր չքաւորներու ցուցակները կ'անցնին բառացապէս կամ ամբողջութեամբ։

«Դամարլուի Ախգեստան գիւղը ընտրեց 19 Հոգի եւ 6 փոխանդամի, որոնցմէ 14ը չքաւոր 3ը բատրակ եւ 7ը միջակ գիւղացի։

Դարալագեազի փաշալու գիւղը քուէարկեց չքաւորներու համակի ցուցակը, 18 Հոգի։

«Խ. Հ.» (25 Փետր.) կը գտնէ որ «Բաշգեաուղի գիւղացիներու վերաբերմունքը՝ դէպի ընտրութիւնը, միանգամայն գիտակցական է»...։ «Մասնակցում էին ընտրողներու մօտ 40 տոկոսը, որոնցմէ չքաւոր՝ 60 առ Հարիւր, միջակ՝ 40 առ Հարիւր»։

Բաշգեաուղի 9 գիւղերուն մէջ ընտրութիւնները վերջացած են։ Չքաւորները եւ բատրակները շահած են 62 եւ միջակները 38 առ Հարիւր։

Ընդհանուր անգամ մը եւս, որ Բաշգեաուղիի մէջ քուէարկութեանց մասնակցած է ընտրողներու Հարիւրին 40ը, մինչդեռ Էջմիածնի վիդիի հինգ Թրքական գիւղերուն մէջ քուէ տուած է ընտրողներու Հարիւրին 55ը։ Թուրքերը գերակշիռ վիճակ ունին միշտ։

Քիչ անդին ակնարկեցինք ձայնագուրկներու խոշոր համրանքին։

Առանց Հաւատք ընծայելու պոլշեւիկեան աղբիւրէ բխած թիւերուն, կը տեսնենք սակայն, թէ քուէարկութեան իրաւունքէն զրկուողները տարապայմանօրէն շատցած են այս տարի։ Միայն Երեւանի Համար, մեծամասնական Երեւանի համար, մեծամասնականներու յայտարարած ձայնագուրկները 3,000էն աւելի են։ Խօսքը չընենք չյայտարարուած ձայնագուրկներու։

Զանգեզուրի գաւառը յատկապէս... վարձատրուած է ձայնագրկութեան մրցանակով։ Անցեալ տարւան 202ի փոխարէն 1400 են նոր ձայնագուրկները։

Էջմիածնի գաւառին ձայնագուրկներու թիւը 3194 է։

Վերջապէս, խորհուրդներու ընտրութեանց ամբողջական արդիւնքը իմանալէ առաջ իսկ, երեւանի պաշտօնաթերթի մը քերած տեղեկութեանց վրայ հիմնուած, կրնանք եզրակացնել՝ որ Հայաստանի ընտրական գործերը տարուէ տարի թէեւ յստակօրէն նորագոյն փուլերու մէջ կը մտնեն, այլեւ թիւը Հանդէս կը բերեն, բայց իրենց խօսքով ու տարազով կը ներկայացնեն կոմունիստական վարչաձեւի ամէնէն յատկանշական եւ ամէնէն գաւեշտական Համայնապատկերը։

ՆՈՐԲԵՐ

ԴԱՅԼԵՐԸ ԿԸ ՅԱՐՁԱԿԻՆ։— Գայլերու վոհմակ մը յարձակած է ճամբորդներու ինքնաշարժին վրայ, որ Սուրիայէն միջագետք կ'երթար։ Ճամբորդները վիրաւորուած են։

ԼՕՋԱՆԻ
ԴԱՇՆԱԳՐԻՆ ՇՈՒՐՋ ՍԱՐՔՈՒԱԾ ԽԱՂԸ

«Հայրենիք»ի խմբագրութիւնը կարդ մը հարցումներ ուղղած է Պ. Վահան Թարտաշեանի, որ գործօն դեր ունի Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Կոմիտէին մէջ եւ մտերիմն է ներակուտական Քինկի։ Այդ առթիւ ստացած է ընդարձակ պատասխան մը, որուն գլխաւոր մասերը կ'արտատպենք ստորեւ.—

Ներակուտական Քինկ խնդիրը բերանացի չյիշեց. քանի մը ճարիւր նամակներ եւ կտրօններ, որոնք ղրկուած էին Հայերէն, ցոյներէն եւ Ամերիկացիներէն, դիզուած կը մնային սեղանի մը վրայ։ Աւոնցմէ մէկ քանիին պատասխանուած էր, եւ իր խընդրանքովը, դաշնագրին մերժուելէն երեք օր առաջ, կէս ժամ յատկացուցի զանոնք աչքէ անցընելու, որպէսզի ստուգէի թէ անոնց մէջ արժէքաւոր բան մը կա՞ր թէ ոչ. ես չտեսայ Պ. Ջօպանեանի նամակները։ Բացորոշ է թէ երբ անոնք ստացուած են, քարտուղար մը, ըստ կարգի, Յետոյ իմացայ թէ անոնք ֆրանսերէն գրուած են զանոնք ղրկած է Խորհրդարանի Գրադարանը թարգմանել տալու։ Ըստ երեւոյթին անոնք Ներակուտականին սեղանը հասած են դաշնագրին մերժուելէն երկու օր ետքը, կամ յունուար 20ին եւ կամ յունուար 22ին։ Ես Ներակուտականէն ընդունեցի անոնց պատճէնները, իր պատասխանին հետ։ Այս պատասխանը կը գգուշացնէր գրողը եւ կը թելադրէր անոր որ եթէ շարունակէ իր ընթացքը, միաս կը հարցնէ հայկական դատին։ Պ. Քինկ ինծի հարցուց նաեւ թէ ո՞վ էր նամակին հեղինակը։

Այն ատեն ուղիղ կերպով չէի գիտեր թէ ո՞վ է Ջօպանեան. միայն աղօտ գաղափար մը ունէի թէ անիկա եգիպտոսէն կամ Պուլկարիայէն բանաստեղծ մըն է։ Եւ պատահաբար նայեցայ իր նամակներուն, զորս ղրկեցի «Հայրենիք»ին, յայտնելով խմբագրին թէ կրնայ իրեն հաճոյ եղած ձեւով վարուիլ անոնց հետ։ Ամերիկեան կանոնը այս մասին սա էր որ, երբ նամակ մը կը յանձնուի նամակատուփին, եւ եթէ անոր վրայ «մասնաւոր» — private — կամ «գաղտնի» — confidential — գրուած չէ, նամակը ստացողը կրնայ իր ուզած ձեւովը վարուիլ անոնց հետ։

Պ. Ջօպանեանի սխալ խորհուրդ տրուած է նամակ գրելու Ներակուտականին։ Այսպիսի *տաժանելիօրէն երկար*, խեղճ եւ թափառիկ նամակներ եւ մասնաւորաբար իր տխուր ենթադրութեամբ թէ ներակուտական Քինկ հաւասարապէս անգէտ է թէ՛ Թուրքիոյ եւ թէ միացեալ նահանգներու մասին, բնաւ գրելու չէր։

Շատ հազուադէպ է որ ներակուտականները կարդան նամակներ, որոնց հեղինակները չեն ճանչնար, մանաւանդ երբ այդ նամակները երկար են։ Այս կարգի նամակներ կ'անցնին քարտուղարներու եւ գրագիրներու ձեռքը ու կը մոռցուին։

Անցեալ Շաբաթ, փետր. 26ին, տեսայ ներակուտական Քինկը, որ մէկ ժամէ պակաս ժամանակի մէջ 500էն աւելի նամակներ եւ հեռագիրներ աչքէ անցուց եւ անմիջապէս իր երկու քարտուղարներուն տուն տուաւ։

Պ. Ջօպանեանի նամակները կրնային գրուիլ երեք պարբերութեան մէջ. ասոնք են. «Ինք «նպաստաւոր չէ Թրքական Շա«յաստանի ազատագրութեան, եւ «Ներակոյտին կողմէ այդպիսի «ջատագովութիւն մը անօգուտ «կը ճամարի. Թուրքերը հողային «գիշտւմ պիտի չընեն, բացի եթէ «բռնի ուժը գործադուի, եւ «կ'ուզէ որ միացեալ նահանգ«ներու Ներակոյտը, վերապա«հումներու միջոցաւ, պահանջէ «որ Հայերու սեփականութիւն«ները վերադարձուին։

Առաջին եւ երկրորդ պատճառաբանութիւնները ուղիղ կերպով գործածուած են դաշնագրին կողմնակիցներէն. երրորդը ո՛չ մէկ եւ ո՛չ միւս կողմէն թելադրուած է, որովհետեւ քաղաքական ամերիկեան դաշնագրի մը մէջ ուրիշ ազգի մը պատկանող քաղաքացիներու սեփականութեանց իրաւունքները չեն կրնար վիճաբանութեան առարկայ ըլլալ։ Ամերիկան չի կրնար Հայերու դատաւոր դառնալ։ Մենք կը փաստաբանէինք միայն *վերապահումը* Ռիւսընի հողամասին, եւ ասիկա յարմար խընդիր մըն է Ամերիկեան դաշնագրի մը մէջ։

Պ. Ջօպանեանի մտադրութիւնները կրնան լաւ եղած ըլլալ սակայն այն միակ կառուցո որ կրնար ըլլալ իր նամակնե վրայ, սա էր թէ ինք կը հա ռակեր Հայաստանի հողայի բաւունքներու պահպանման, որովհետեւ ատիկա իր դաշնագրի մերժման գլխ գետինը կը կազմէր, *ուստի եզրակացութիւնը կը ներ որ ի՛նք վաւերացման կ կից էր։*

Հանրապետական տական մը ըսաւ ինծի թէ Ֆիլիպ Մարշոլ Պրաուն, Համալսարանէն, Եւրոպացին բերած է թէ Նուպար եւ տունկեան դաշնագրի վաւեր ման նպաստաւոր են։

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ
ԻՆԱՊԷ՞Ս ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ 100 ՖՐԱՆՔԸ

Կիրակի օր գրեցինք թէ ներակոյտը իր Ուրբաթ նիստին մէջ որոշեց ինքնութեան թուղթերու սակը 3էն 40էն 20 ֆրանքի զեղչել ու մէկ տարուան պայմանի երկուքի բարձրացնել։ Ցտոռեւ կուտանք այս առթիւ ներկայացուած տին մէջ տեղի ունեցած վիճաբանութիւնները, քաղելով տօնաթերթէն.—

Ընդհ. տեղեկաբեր Հանրի ներօն .— *1925 Յուլիս 13ի օրէնքով օտարականներու ինքնութեան թուղթին համար սակ որոշուած էր 68 եւ 10 ֆրանք, երկու տարուան համար։ 1926ին երկու անգամ փոփոխութեան ենթարկուեցաւ այս օրէնքը, Օգոստոս 3ին սակերը բարձրացան 375 եւ 40 ֆրանքի, իսկ Դեկտեմբեր 19ին երկու տարուան պայմանաժամը մէկ տարուան զեղչուեցաւ։* Ներակուտական Պ. Ռիպլէյթի առաջարկեց *1925ի դրութեան վերադառնալ, այսինքն 68 եւ 10 ֆրանք՝ երկու տարուան համար։* Ելմտական *յանձնաժողովը թէ՛ այս առաջարկը եւ թէ կառավարութեան Մարտ 9 թուակիր նամակը նկատի առնելով, որոշեց միջին ճամբայ մը ընդունիլ, այն է՝ ամբողջական սակ՝ 150 ֆր. զեղչեալ սակ՝ 20ֆրանք, ամէն տարի նորոգելի եւ երկու ամիսէն աւելի Ֆրանսա բնակողներէն պահանջելիք։ Այս որոշումէն վերջ, կառավարութիւնը նոր առաջարկներ ներկայացուց։*

Վարչապետ Պ. փուանքարէ. — *Այս խնդրին առթիւ տրուած որոշումներուն ամբողջ պատասխանատուութիւնը կ'ուզեմ ես ինքս ստանձնել, թէեւ ելմտ. նախարարը այդ հարցով չի զբաղիր։ Ներքին եւ արտաքին նախարարներուն կը վերաբերի անիկա, ու մենք ստիպուեցանք այս զեղչերը առաջարկել՝ պըլընդումներուն վրայ արտաքին նախարարին, որ դրացի ազգերէն, նոյնիսկ ուրիշ երկիրներէ միաձայն բողոքներ ստացած էր։*

Ընդհ. տեղեկաբեր.— *Այս պայմաններուն մէջ կառավարութեան նոր առաջարկն էր հետեւեալը.— Ամբողջական սակ 100, զեղչեալ սակ 20 ֆրանք. ինքնութեան թուղթերը նորոգել երկու տարին անգամ մը եւ պահանջել մէկ ամիսէ աւելի Ֆրանսա բնակողներէն։* Պ. Ռիպլէյթի պնդեց եւ կառավարութեան *

միջոցն է օտարականներու տուրքը: Այս ծախքերը շատ մեծ են, ըլլայ խնամատարութեան, ըլլայ կրթութեան, եւ նկարելիս ալ գործազրկութեան համար: Առնենք միայն Սէն նահանգին համար ծախքերու գլուխ մը. օրինակ՝ հիւանդասնոցները: Հանրային խնամատարութիւնէն ինծի արուած տեղեկութեան համաձայն, 1925ին գլխուորեալ 10 միլիոն ֆրանք իր կողմէ վճարուած է օտար հիւանդներու համար: Այս 10 միլիոնէն միայն 2 միլիոնը ետ առնուած է, սակայն ո՛չ թէ օտար կառավարութիւններէն կամ օտար հիւանդներէն, այլ ձեր համայնքներէն եւ նահանգներէն, որովհետեւ խնդրոյ առարկայ օտարականներու բուն բնակարանը գաւառի մէջ արձանագրուած էր: Գիտէ՞ք որ փոխադարձութեան պաշնագիրներ ունինք, ասկից անոնք խմբագրուած են այնպէս, որ գրեթէ անգործադրելի են: Այս կարգի դաշնագիրներ ունինք Պելճիքացւոց, Իտալիոյ, Լիւքսէնպուրկի եւ Լեհաստանի հետ:

Պ. Ֆը Պիէր.— Բացատրութիւնը դիւրին է: Արտասահմանի մէջ Ֆրանսացիները չունինք, մինչդեռ մեր երկրին մէջ օտարականներ կան:

Պ. Անտրէ Տոբիզէ.— Մի՛այն ատիկա չէ: Իտալիէն, Լիւքսէնպուրկէն եւ Պելճիքացւէն հիւանդանոցի ծախք կրնանք պահանջել այն ատեն միայն, երբ հիւանդը 45 օր հիւանդանոց կը մնայ, իսկ Լեհաստանէն՝ երբ յաղորդաբար 60 օր կը մնայ: Կը հարցնեմ ձեզ, պարոններ, ո՞րն է այն հիւանդութիւնը — բացի թերեւս ժանտատենդէն— որ կրնայ հիւանդ մը ստիպել յաղորդաբար 60 օր հիւանդանոցի մէջ պահել: 1925ին, ըստ դաշնագրի, միայն մէկ երկրէ՝ Լեհաստանէն՝ դրամ պահանջուած է ու գիտէ՞ք թէ որքան. 774 ֆրանք, որ դեռ վճարուած ալ չէ: Ահաւասիկ, պարոնե՛ր, ինչպէս կը գործեն դաշնագիրները, պահքն թէ՝ Սէնի նահանգի հիւանդանոցներուն ամբողջ ծախքը՝ Փարիզի հարկատուները կը վճարեն:

«Դուք ալ կը խոստովանիք, որ այս կացութիւնը անընդունելի է: Փարիզի Թաղապետական խորհուրդը եւ Սէնի ընդհ. ժողովը քանիցս բողոքեցին այս առթիւ, առանց հետեւանքի:

«Ու հիմա մեզմէ կը պահանջուի զեղչել օտարականներու վրայ դրուած տուրքը այն միակ պճղոցը, որքա՜ն չնչին, զոր ունինք մեր ձեռքը, բան մը վերցնելու կը կարծեմ թէ դիս ծայրեղ մոլեռանդ մը չէք նկատեր, բայց ինծի բացարձակապէս անկարելի կը թուի ընդունիլ, որ Ֆրանսացի հարկատուն, —որ աշխարհի բոլոր հարկատուներէն ամէնէն ծանրաբեռնուածն է, քանի որ տարին 50 միլիառ զանազան տուրքեր կը վճարէ—ստիպուած ըլլայ հատուցանելու նաեւ իրեն չվերաբերող ծախքերը: Ձեմ ընդունիր որ օտարականներու տուրքին վրայ զեղչ մը յանգի աշխատաւորներուն— զորս այստեղ կը ներկայացնեմ— վճարել տալու այնպիսի դումարներ, զորս վճարելու ոչ մէկ պատճառ ունին եւ որոնք, առանց չափազանցութեան, կըրնան վճարուիլ անոնց կողմէ, որոնցմէ պահանջուած է մինչեւ հիմա: Անգլիացի եւ ամերիկացի զբօսաշրջիկներ շատ լաւ կրնան վճարել ներկայ սակերը, իսկ աշխատաւորներուն համար ալ դժուար չէ տարին 20 ֆրանք տալ: Հետեւաբար կը պահանջեմ պահել նախկին սակերը եւ մերժել պ. Ռէպէրթիի առաջարկը:

Վարչապետ պ. փուանքարէ.— Յարգելի պ. Մօրիզ կը տրամադրանք այնպէս, որպէս թէ ինքնուիթեան թուղթը, որուն մասին կը վիճինք, Ֆրանսայի մէջ գոյութիւն ունեցած ըլլար երկար առենէ ի վեր, ներկայ սակով, եւ իբր թէ խնդիր եղած ըլլար զեղչել հինէն ի վեր կիրարկուող սակերը: Ճշմարտութիւնն այն է, որ Խորհրդարանը անցած տարի հաստատեց նոր ինքնութեան թուղթ մը, որ տուրքի թուղթի բնոյթն ունէր: Այս նախաձեռնութիւնը ստանձնեց Երեսփ. ժողովի ելմտական յանձնաժողովը, հակառակ արտաքին նախարարին երկու երեք ստիպողական նամակներուն, որով կը հաղորդուէր թէ ինքնութեան թուղթերու ամէն տարի նորոգութիւը կրնայ բաղդի դուռ բանալ օտար պետութեանց կողմէ: Նախարարին վախը իրականացաւ, եւ ոչ միայն ինք, այլ եւ ինքս ալ քանիցս ընդունեցինք այցելութիւնը դեսպաններու, որոնք եկան բարեկամաբար ըսելու. «Դաշնագիրները կը դրժէք: Ձենք ուզեր Լահէյի ատեանին առջեւ երթալ, որովհետեւ կը յուսանք թէ պիտի սրբագրէք ձեր սխալը: Իսկ եթէ չսրբագրէք, պիտի ստիպուինք պաշտպանել նախ՝ իրաւունքը, յետոյ՝ մեր քաղաքացիները, ու այն ատեն դատը շահելու համար պիտի ստիպուինք միջազգային արդարութեան դիմել»:

«Այս պայմաններուն մէջ, տեղի կո՞յ յամառելու կարգադրութեան մը վրայ, որ այսքան առարկութիւններ եւ դժուարութիւններ յարուցած է: կարծեմ թէ ոչ:

«Ուստի, ուզեցինք միձին ճամբայ մը գտնել: Տուրքին երկամեայ հանգամանք մը տալով, ըրած կ'ըլլանք կարգադրութիւն մը, որ տակաւին կրնայ վէճի դուռ բանալ. սակայն վերջապէս օտարական մը, որ երկու տարի բնակած է Ֆրանսայի մէջ, նորեկի մը պէս կրնայ նկատուիլ: Կը յուսանք թէ օտար երկիրները պիտի ընդունին այս լուծումը: Սակայն բնաւ իրաւունք չունինք ատոր տուրքի մը բնոյթ տալ: Այս կէտը պէտք է լաւ հասկցուի: Այդ անկարելի է. ատոր իրաւունք չունինք: Ատիկա պէտք է ըլլայ պարզապէս ինքնութեան թուղթի վարձքը: Այս մասին իրաւական առարկութիւն կարելի չէ ընել: Այդ վարձքն ալ շատ բարձր պէտք չէ ըլլայ, որ տուրքի նմանի»:

Խօսեցան նաեւ ուրիշ քանի մը ձեռակուտականներ, որմէ վերջ ներկայացուած օրինագիծը ընդունուեցաւ նոյնութեամբ:

Ընդունուեցաւ նաեւ հետեւեալը.— Ինքնութեան թուղթ առնելու պարտաւոր իւրաքանչիւր օտարական, որ օրինական պայմանաժամին մէջ ինքնութեան թուղթ չի խնդրեր կամ չի նորոգեր, պարտաւոր պիտի ըլլայ վճարելու ամիսը 50 ֆր.: Զեղչեալ սակէն օգտուողները պիտի վճարեն 10 ֆրանք տուդանք: Այս տուրքերուն համապատասխան դրոշմաթուղթեր պիտի փակցուին ինքնութեան թուղթին վրայ:»

ԿԵԱՆՔԸ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Շաբաթ գիշեր նորակազմ Ջ. երկս. Որբերու եւ Շ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերը միանալով իրենց բացումը տօնեցին: Ժամանակէն առաջ հայրենակիցներու երկսեռ բազմութիւն մը փութացած էր տեղ գրաւելու: Ընշացողներուն մեծ բազմութիւն մը ոտքի վրայ կը մնար:

«Բամ-փորոտան»ով բացուեցաւ հանդէսը նորակազմ «կոմիտաս» երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ պ. Ղ. փափազեանի. յետոյ սկսան արտասանութիւնները, երգեր, ոտանաւորներ միութիւններուն մասնակցող երկսեռ տղոց կողմէ:

Փարիզի կեդր. վարչութեան կողմէ ղրկուած էին պ. պ. Նարդունի եւ Թանէտեանեան: Պ. Թանէտեանեան ի՛մ անուամբ ներկայացուց Ջափ. երիտ. Որբերու գործունէութիւնը եւ մինչեւ հիմա կազմուած մասնաճիւղերը: իսկ օրուան բանախօս պ. Ե. Նարդունի մանրամասնօրէն պարզեց անոնց օգուտները մեր ազգային ոգին վառ պահելու տեսակէտով: կոչ ըրաւ երկսեռ հանդիսականներուն լայն չափով օգնել ջափահաս Որբերու եւ մարզիկներու նուիրական գործունէութեան մէ՛ բարոյապէս եւ նիւթապէս:Ներկաները ոգեւորութեամբ խոստացան ամէն տեսակ աջակցութիւններ ընծայել: պ. Լ. Ջորմիսեան եւս իր կարգին ծանրացաւ որբերու միութեան օգուտներուն վրայ եւ շեշտեց Շ. Մ. Ը. Մ.ի պարտականութիւնները :

Հանդիսականները շատ գոհ մնացին հանդէսէն, ընտանեկան գեղեցիկ մթնոլորտ մը ստեղծուած էր: Այս առթիւ կաթով թէյ բաժնուեցաւ: Քանի մը արտասանութիւններէ եւ երգերէ վերջ, գեղնաւոր յախճապակիէ աքաղաղ մը աճուրդի դրուեցաւ, բար ձրանալով 410 ֆրանքի: Եւ այս՝ գործազրկութեան ամենագէշ օրերուն: Աքաղաղը ստացաւ Ֆրանսական բանակի սպաներէն պ. Հազարապետեան, որ շնորհակալութեամբ յայտնեց թէ խորապէս զգածուած է ինք տարի բոլորովին ֆեռու ապրած ըլլալով հայկական շրջանակէն: Շօկի վարչութեան կողմէ ալ 25 ֆրանք նուիրուեցաւ, որով 435 ֆրանքի գումար մը գոյացաւ: կոմիտաս երգչախումբի «ցառաջ նահատակ»ով եւ եսայի քահանայի մաղթանքներով փակուեցաւ հանդէսը, գիշերուան ժամը 12,30ին:

Թրամուէյի եւ շոգեկառքի ժամանակը անցած ըլլալով փարիզէն եկող հիւրերը տեղացիներու հետ սինչեւ առտուան 4ը գուարճացան:

Ն. ԱՄԱՍԿ ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ

«Յառաջ»ի Մարտ 12ի թիւին մէջ «Ծաղիկ» ստորագրութեամբ նամակ մը կար, Լիոնի Ազգային Միութեան գործունէութիւնը քննադատելու եւ ճշդելու մտքով գրուած: Դժբախտաբար նամակագիրը խնկած է նշանաւոր սխալներու մէջ.—

Ս. Լիոնի մէջ կանխաւ խոստացուած,բայց իբր թէ չբացուած մանկապարտէզին խօսքը կ'ընէ ճշմարտութեան բոլորովին հակառակ արտայայտութեամբ: Պ. «Ծաղիկ» ապահովաբար, իբրեւ Լիոնցի, ինք ալ գիտէ թէ ծանուցուած մանկապարտէզը բացուեցաւ անցեալ տարի, անոր բացումը ծանուցուեցաւ թերթերու միջոցաւ եւ տեղական ազդարարութիւններով: Մանկապարտիզպանուհին, Օր. Էֆրազ Աշճեան, ամբողջ ամիս մը հայ մատրան կից կահաւորուած խորհրդարանին մէջ իր պաշտօնը շարունակեց, բայց դժբախտաբար ծնողք չգտնուեցին հաստատութիւնը, առարկելով թէ չեն համարձակիր իրենց զաւակները փղոցէ փղոց ղրկել մինչեւ մատուռ, որ սակայն համեմատաբար կեդրոն ալ է: Վարժուհին լման ամիս մը մնաց 4—5 փոքրիկներով, եւ ի զուր տունէ տուն շրջան ըրաւ, յորդորելու ծնողքը որ քաշալերեն Ազգ. Միութեան այս օգտակար ձեռնարկը, որուն յաջողութեան համար ամէն տեսակ զոհողութիւն ըրաւ նաեւ կաթող. պատուիրակը: Յետոյ, արձակուրդի երկու ամիսներուն, դարձեալ ամէն կողմ եղած ազդարարութիւններուն համաձայն, հայերէնի եւ կրօնի դասընթացք մը բացուեցաւ հայ մատրան մէջ և ուսուցիչ կարգուեցաւ պ. Թ. Աբրահամեան: 7—8 աշակերտներով սկսաւ եւ աս ալ... խամրեցաւ մանկապարտէզին պէս:

Բ. Աղքատախնամի եւ ձրի ճաշ ուտողներու մասին ալ իր «ճշտում»ը չի համապատասխաներ իրականութեան: երկու հաբիւրէ աւելի հայ գործազուրկներ որոնք առնուազն վեց ամիս ի վեր Լիոն հաստատուած են կ'օգտուին ձրի ճաշարաններէն: Մասնաւոր թոյլտուութեամբ 6 ամիսէն պակաս Լիոն բնակողներէն 26 ընտանիք կը մասնակցին ճաշերուն:

Գալով Աղքատախնամին, ան կազմուած է զանազան միութիւններէ եւ կուսակցութիւններէ յատուկ հրաւէրով, Ազգային Միութեան կեդր. վարչութեանս նախագահին կողմէ: Ոչ մէկ կուսակցութիւն կամ միութիւն գերակշիռ է հոն: Այդ մարմինը կը գտնուի Ազգ. Միութեան կեդր. վարչութեան հովանաւորութեան տակ, որուն միջոցաւ ալ ճանչցուած է կառավարութենէն:

*** Այս առթիւ ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ կը յայտնենք թէ Բարեգործական Ընկերութեան կեդրոնական վարչութիւնը, Միութեանս դիմումին վրայ, 1500 ֆր.ի նպաստ մը ըրաւ Լիոնի անկար անտէր գործադուրկներուն: Այս գումարը յանձնուած է արդէն Աղքատախնամին, որ բաշխումի իրաւասու մարմինն է: Դոհութեամբ կը ծանուցանենք նաեւ որ Լիոնի Քաղաքապետական Ժողովին կարեւոր անդամներէն մէկը խոստացած է Ազգային Միութեանս՝ խնդրել Ընդհ. Ժողովէն որ Բարեգործականի նպաստին չափով նպաստ մըն ալ կատարուիթիւնը ընէ Աղքատախնամին, և ամէն անգամ որ բարեսէր հայ մը կամ մարմիններ որոշ չափով նպաստեն, Քաղաքապետութիւնն ալ նոյն չափով օգնութեան հասնի:

կնիք Լիոնի Ազգ. Միութեան

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿՆՈՋ ՍԻՐՏԸ.— Կնոջ սիրտը տուփ մըն է, ինչ կայ պահուած՝ ոչ ոք գիտէ: Բայց գիտցէք որ, շատ անգամ պարապ է:

Լեհ աղջիկ մը, Լիոնա, ունէր սիրտ մը, զոց տուփի պէս խորհրդաւոր: Մեղուի պէս վրան թառեցաւ Մաշօվէր անուն երիտասարդ մը: Աղջիկն ու երիտասարդը պզտիկուց, Վարշաւայի մէջ, կը սիրէին դիրար իբրեւ դրացիներ: Աղջիկը Փարիզ եկած էր: Մաշօվէր ալ հասաւ ետեւէն: Ու Փարիզի մէջ Մաշօվէր բացաւ իր սիրտը. լեցո՜ւն էր սիրոյ մեղրով: Սակայն Լիոնա չէր բանար իր սիրտը: Մաշօվէր կը բզզար մեղուի պէս, ու «կը սիրե՛մ« կը մրմնջէր: Ինչո՞ւ, ինչո՞ւ աղջիկը չէր պատասխաներ: Առտու մը Մաշօվէր հարցուց.

— Կը սիրե՞ս զիս, այո՛ կամ ո՛չ:

Լիոնա կը ծիծաղէր: Կ'ուզէր քիչ մըն ալ տանջել տղան: Մաշօվէր կը պնդէր: Լիոնա կը ձգձգէր: Տղան կուլար, աղջիկը կը խնդար: Ի՞նչ կար Լիոնայի սիրտ-տուփին մէջ,— սէ՞ր: Աղջիկը չէր ըսեր:

Յանկարծ ատրճանակը գնաց ճաթեցնել այդ տուփը: Գնդակը մտաւ աջ թոքին մէջ: Աղջիկը՝ հիւանդանոց, տղան՝ բանտ: Սակայն շուտով առողջացաւ աղջիկը, մինչդեռ տղան, խիղճի խայթէն կը հալէր ու կը մաշէր: Բժիշկին հրահանգով առժամապէս ազատ արձակուեցաւ տղան: Ու օր մը, երբ իրարու հանդիպեցան երկու սիրահարները, յանկարծ աղջկան սիրտ-տուփը բացուեցաւ հրաշքի պէս: Ու «կը սիրե՛մ քեզ» ըսաւ:

Անմիջապէս ամուսնացան: Դատարանին մէջ երբ ամէն մարդ կը զարմանար ատրճանակով կնքուած այս ամուսնութեան վրայ, աղջիկը կը բացատրէր.

— Մաշօվէր ուզեց սպաննել զիս, որովհետեւ շատ կը սիրէր: Ո՛վ սիրտ, որ գնդակով բացուեցար:

ԳԱՐՈՒՆԸ ԵՒ ԶՄԵՌԸ

(ՀՆԴԿԱԿԱՆ ՀԷՔԵԱԹ)

Թարգմանեց Շ. Ն.

Ընդ այս անտառին մէջ կար փոքրիկ հիւղ մը, ուր կը բնակէր ճգնաւոր մը: Աւշալոյսին, երբ առջի մարդը չուր բերելու գնաց անտառ Գարունը, որ քնացած էր ծառի մը տակ: Նոտաւ քովը, եւ ծունկերուն վրայ առաւ զայն, երկար դիտեց անոր քաղցրիկ դէմքը, որ դեռ թաց էր արցունքէն եւ կը նմանէր ծաղիկի մը, որուն վրայ արշալոյսը թափած է իր ցողերը:

Ցետոյ գրկեց ու տարաւ իր հիւղիկը, ուր տերեւներէ շինուած անկողինի մը վրայ դրաւ զայն: Այսպէս բաժնուեցան իրարմէ երկու եղբայրները:

Զմեռ կը թագաւորէր հսկայ երկրի մը վրայ, որսի կ'երթար եւ կ'ապրէր պալատի մէջ, շրջապատուած՝ բազմաթիւ պալատականներէ եւ ծառաներէ:

Գարուն կ'ապրէր թանձր անտառին մեներառ հիւղակին մէջ: Ան ջուր կը տանէր ծերուկի ճգնաւորին եւ չոր փայտ կը հաւաքէր հիւղակին համար: Կը տնաներ պտուղով եւ մեղրով ու կը քնանար անշուք խրճիթի մը մէջ:

*
**

Գարուն եւ Զմեռ մեռած կը կարծուէին եւ երկար ար անցած էր արդէն, երբ զօրաւոր **եւ** ոգեմաղեր իշխան մը յարձակեցաւ թագաւորին երկրին վրայ: Թագաւորը յաղթուեցաւ եւ փախաւ անտառ: Երբ մինակ մնաց, մխքը ինկան այն գեղ բաները, զորս կատարած էր իր սիրական թագուհիին սիրոյն համար: Ու խղճահար երդում ըրաւ այլեւս անգամ մըն ալ չտեսնել դրուժան թագուհիին երեսը:

Լքուած ու մինակ, սկսաւ թափառիլ ազգին անդին, եւ մուրաց դուռնէ դուռ:

Պատժուեցաւ նաեւ անգութ եւ չար թագուհին:

Օր մը, երբ տղոցը հետ լոգնալու գացած էր ծովը, բարձրացաւ ալիք մը, եօթը յարկէ աշտարակի մը նման, եւ քշեց տարաւ ճգճմի տղաքը: Անոնք խեղդուեցան:

Թագուհին կոկորդը կը պատռէր լալով ու աղաղակելով, սակայն ծովեզերքին վրայ մինակ էր եւ ոչ ոք լսեց զինք: Վիշտէն խենթեցաւ եւ մոլեգնօրէն գլուխը զարկաւ ժայռերուն ու անձնասպան եղաւ:

Այսպէս մեռաւ այս թշուառական կինը, մինակ եւ լքուած ամէնքէն:

Ոչ ոք լացաւ իր վրայ:

*
**

Իսկ ի՞նչ եղան կանանչ Թուխթաչն ու իշխանուհին:

Իշխանուհին հասունցած էր, եւ պէտք էր ամուսնացնել: Թագաւորը պալատ կանչեց բոլոր իշխանները, որպէս զի իր աղջիկը անոնց մէջէն ընտրէ իր ապագայ ամուսինը:

Իշխանները եկան բոլոր գաւառներէն, հնդկական մրեանները կղզիէն (Հնդկաստանի գաստական անունը) եւ ամէն կողմէ, որովհետեւ իշխանուհին նշանաւոր էր գեղեցկութեամբ:

Անոնք հաւաքուեցան եւ նստան պալատին մեծ դարպասին մէջ, ոսկեպատ ամպհովանիի մը տակ, անհամբեր սպասելով իշխանուհիին գալստեան:

Սակայն իշխանուհին չէր երեւար: Իր սենեակը քաշուած, գանգատօրէն կը հագուէր: Կը փայլեցնէր իր մազերը, աչքերուն մէջ կը թափէր քանի մը կաթիլ՝ ազնիւ հեղուկներէ: Մերթ ընդ մերթ կը դառնար իր թութակին կարծես խորհուրդ հարցնելու համար:

Վերջապէս ըսաւ.

կանանչ Թուխթակս իմ, ըսէ՛, Ես գեղեցիկ է՞մ միթէ:

Թուխթակը պատասխանեց.

Շա՛տ գեղեցիկ՝ կ'ըսեմ ես, Ոսկի մանեակ մ'երբ կախես:

Ան օրերուն, գեռ կենդանիները եւ մարդիկ կրնային խօսիլ իրարու հետ ու հասկնալ:

Իշխանուհին կախեց իր ոսկի մանեակը եւ կրկնեց.

կանանչ Թուխթակս իմ, ըսէ, Շրաշալի է՞մ միթէ:

Թուխթակը պատասխանեց.

Պատմուճանիդ մէջ քնքուշ, կ'ըլլաս փետուր կապտանուշ:

Իշխանուհին բացաւ իր օժիտի սնտուկը, որ լեցուն էր գոյն գոյն շղարշներով եւ նափորտներով:Ցարդին իւրաքանչիւր օրը կը հագնէր անոնցմէ հատ մը:

Ընտրեց շղարշ մը, սիրամարգի կապոյտներով ալեվէտուն եւ փաթթեց իր քնքուշ մարմնին: Ու այնքան գեղեցիկ էր, որ սենեակը լեցուեցաւ ճառագայթով:

Իշխանուհին ուրախացաւ եւ գարձաւ Թռչունին.

կանանչ Թուխթակս իմ, ըսէ՛, Շրեշտակ մը չե՞մ միթէ:

Սակայն Թուխթակը գեռ գոհ չէր.

Ադամանդո՛վ շար ի շա՛ր, Ծոծրակդ կ'ըլլայ լուս-մարմար:

Իշխանուհին բացաւ ուրիշ արկղ մը, ուր լեցուն էին միայն գոհարեղէններ: Ըռաւ մանեակ մը որ կը պսպղար հարիւր շարք ադամանդով:

Գնիւ քարերը կը գոլացնէին սենեակին լոյսերը: կարծես երկինքի բոլոր աստղերը թափած էին սիրաշնորհ իշխանուհիին ծոծրակին վրայ:

կանանչ Թուխթակս իմ, ըսէ՛, Աստուածուհի չե՞մ միթէ:

(Շար.)

ՊԵԼԿՐԱՏԻ ԻՏԱԼ. ԴԵՍՊԱՆԸ ԿԸ ՎՌՆՏՈՒԻ

Պելկրատէն «Լբսչէնճ Թելէկրաֆ»ի կը հեռագրեն մարտ 21 Թուականով.—

Աքուփչինայի այսօրուան նիստին մէջ ծանր միջադէպ մը պատահեցաւ։ Նախկին նախարար Թրումպիչ ամբաստանեց նախկին արտաքին նախարար Ննիչիչը, որ իտալասէր քաղաքականութիւն մը հետապնդած է։

Այդ պահուն վիլլեր անուն երեսփոխան մը խօսք առաւ եւ ձեռքը երկարելով դէպի դիւանագէտներուն յատկացուած օթեակը, ուր կը գտնուէր նաեւ Իտալիոյ դեսպան զօր. Պոտրէրօ, պոռաց.

— Դո՛ւրս, Պոտրէրօ, եւ իր լրտեսները։ Ինչո՞ւ համար Պոտրէրօն դեռ հոս է, մինչ Հռոմի մեր դեսպանը ստիպուած է մեկնիլ Հռոմէն։

Այս խօսքերը ողջունուեցան ընդդիմադիր երեսփոխաններու կողմէ երկար ծափերով։ Նիստը ընդհատուեցաւ ընդհանուր դերագրգռութեան մէջ, որմէ անմիջապէս վերջ ժողով դումարեց գահլիճը։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԵՒԿՕՍԼԱՒԻԱ

Էնկիւրիի կառավարութեան որոշումով եւկօսլաւիոյ քաղաքացիները մէկ ամիսէն աւելի չեն կրնար մնալ Թուրքիոյ մէջ։ Պոլսոյ եւկօսլաւ գործակատար Նիլովիչ այս մասին բողոքեց Պոլսոյ դիւանագիտական պատուիրակ Նուսրէթ պէյի, պահանջելով չնչել այս որոշումը, քանի որ Եւկօսլաւիոյ մէջ Թրքական հպատակներու բնակութեան մասին այդպիսի սեղմումներ չկան։ Գործակատարը շուտով էնկիւրի պիտի մեկնի, ուղղակի արտաքին նախարարութեան հետ կարգադրելու համար այս խնդիրը։

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ԳՐԱՒԵՆ ՇԱՆԿԱՅԸ

Վերջին պահուն հասած հեռագրի մը վրայ երէկ հաղորդած էինք թէ ազգայնականները Շանկայ մտած են։ Նոր հեռագիրներու համաձայն, Զինաստանի միջազգային առեւտուրի այս ամէնէն մեծ կեդրոնը գրաւուած է՝ առանց կռիւի։ Սակայն Քանթոնցիներու բանակին քաղաք մտնելէն վերջ լուրջ դէպքեր պատահած են եւ բոլոր օտարականներուն հրամայուած է չհեռանալ առանձնաշնորհեալ հողամասերէն։ Աշխատաւորները իրենց համակրութիւնը յայտնելու համար ազգայնականներուն, ընդհանուր գործադուլ յայտարարեցին եւ սկսան ցոյցեր ընել։

Աշխատաւորական Միութիւնը ատրճանակ եւ փամփուշտ բաժնեց 500 բանւորներու, որոնք սկսան կրակել անգլիացի զինուորներու, ոստիկաններու եւ հիւսիսային Զինացիներու վրայ։ Երբ ոստիկանները կրակ բացին, ամբոխը եւս իր կարգին քարկոծեց ոստիկանները։ 40 հիւսիսային զինուորներ, որոնք քաղաքը կը պաշտպանէին և սակայն զինաթափ եղան երբ կարմիրները հասան, ամբոխին կողմէ սպաննուեցան պահականոցի մը մէջ։ Ամբոխը կը բաղկանար պահակի տարազով քանթոնցիներէ, որոնց մէջ կիներ ալ կան։

Անգլիական զինուորներուն եւ ազգայնականներուն միջեւ առաջին ընդհարումը տեղի ունեցաւ Մարտ 20ի գիշերը ժամը 8ին, երբ ազգայնականները յարձակեցան հնդիկ փունճապ զինուորներուն վրայ Տարբիշի ճամբուն վրայ։ Տեղական Նիւմէն հրասայլով օգնութեան գնաց, սակայն ազգայնականները շրջակայ տուներէն կրակ բանալով քանդեցին զայն։ Երկրորդ հրասայլ մը դրկուեցաւ դէպքին վայրը։ Նիւմէն եւ երեք զինուորներ վիրաւորուեցան։ Շանկայի մէջ սպաննուեցաւ մէկ անգլիացի զինուոր, վիրաւորուեցան 13 Անգլիացիներ եւ չորս Հնդիկներ, Զինացիներու կորուստն է 200 հոգի, մեծ մասամբ աշխատաւորներ եւ ուսանողներ, նոյնքան ալ վիրաւորներ կան։

Ազգայնական բանակին առջեւէն կը քալէին բանւորներ եւ ուսանողներ, ահռելաբոսափ սփռելով ամէն կողմ։

Միջազգային առանձնաշնորհեալ հողամասին մէջ հանդարտութիւն կը տիրէ, շնորհիւ ձեռք առնուած խիստ միջոցներուն, 1400 ամերիկեան զինուորներ ցամաք եջան եւ Եանկցէուի շրջանին մէջ դիրք բռնեցին։ Օտար զինուորներու ընդհանուր թիւն է 15,000, որոնց վրայ Հոնկքոնկէն պիտի աւելնան 1000 անգլիական զինուորներ եւս։ Առանձնաշնորհեալ հողամասը ռազմաճակատի երեւոյթն առած է։

Շանկայի գրաւումը դիւրացաւ շնորհիւ ազգայնական բանակի մարդոց, որոնք նախապէս ծպտեալ վիճակի մէջ Շանկայ մտած էին։ Երբ հիւսիսային զինուորները Սունկքիանկի ճակատէն անկարգօրէն սկսան քաղաք հասնիլ, ծպտեալ զինուորները դիրք բռնեցին Շանկայի գլխաւոր կէտերուն վրայ։

Շանկայի մէջ թրամուէյներու եւ ինքնաշարժերու երթեւեկը դադրած է։ Ըմբոստ բանւորները գրաւեցին բոլոր կառավարական շէնքերը եւ նամակատունը։ Ազգայնականներու դրօշը կը ծածանի ամէն կողմ։

Ռումբի մը պայթումին հետեւանքով հրդեհ ծագեցաւ եւ բազմաթիւ տուներ այրեցան Շանկայի մէջ։ Փողոցներուն մէջ կռիւները կը շարունակուին. կացութիւնը ծանր է։

Բանթոցներն ու Շանթունկի բանակին 150,000 զինուորները կը թալանեն Շանկայը, ուր ահ ու սարսափ կը տիրէ։

Մոսկուայէն կը հեռագրեն թէ թերթերը Շանկայի անկումը ծանուցին մանաւոր տպագրութիւններով եւ անմիջապէս բոլոր գործարաններուն մէջ միթինկներ գումարուեցան, որմէ վերջ բանւորները թափորներ կազմելով քաղաքին կեդրոնը ուղղուեցան։ Նոյն ցոյցերը տեղի ունեցան Խարքովի, Քիէվի եւ Լէնինկրատի մէջ։

ՔԱՐԱԽԱՆ ԳՈՐԾԻ ԿԸ ՍԿՍԻ

«Թայմզ»ի Թոթակիցը կը հեռագրէ.—

Փեքինի նախկին խորհրդային դեսպան Քարախան վերանանձնած է իր պաշտօնը Մոսկուա՝ արտաքին գործավարութեան մէջ։ Ուրիշ պաշտօնեաներու հետ ներկայ գտնուեցաւ Մոսկուայի լաւվիական դեսպանատան մէջ նախագահ Ռաքովսկիի յիշատակին կատարուած արարողութեան։ Նոյնպէս քանի մը օր առաջ, իբրեւ արտաքին փոխ-գործավար, հեռագիր մը ուղղեց Էնկիւրի արտաքին գործավար Թեվֆիք Րիւշտի պէյի, շնորհաւորելով զայն Թուրքեւխորհրդային առեւտրական պայնագրի ստորագրութեան առթիւ։

ՖՐԱՆՍԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐ

Երէկի պաշտօնաթերթը կը հրատարակէ ֆրանսական քաղաքացի ընդունուած օտարականներու ընդարձակ ցանկ մը, որու կարգին հետեւեալ Հայերը.—

Տօքթ. Պետրոս Մախոխեան, *ծնած 1868 Օգոստոս 15ին, Տրապիզոն. այժմ կը բնակի Անթիպ, եւ իր կինը Մել Եսայեան, ծնած 1881 Յունուար 27ին Մանչէսթըր։*

Օր· Ատել Ամատունի, *երաժշտութեան ուսուցչուհի, ծնած 1870 Յունիս 7ին Թիֆլիս։ կը բնակի Անվէր-սիւր-Ուազ (Սէն-է-Ուազ)։*

Պաճիսճ փաշայեան, *Գրասենեակի պաշտօնեայ, ծն. 1873 Յունուար 27ին Կ· Պոլիս։ կը բնակի Վալանթինէ (Տու)։*

Գրիգոր կակայեան, *նախկին զինուոր Օտար Լէգէոնի, ծնած 1885 Մայիս 16ին Քուրթպէլէն (Թուրքիա) կը բնակի Վառնա, եւ իր կինը Մաքրուհի Արիստակէս Քրիսթեան, ծնած 1889 Սեպտ. 18ին Քուրթպէլէն (Թուրքիա)։*

Ալպէր Ղուկասեան, *աշխատաւոր, ծնած 1894 Յուլիս 6ին Էրզրում։ կը բնակի Տէսին (Իզէռ)։*

Հ. Յ Դ. ՓԱՐԻԶԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

Վիճաբանական ժողովը 25 մարտ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին փլաս տ'Իթալի, քաֆէ ֆլէռ-տը-լիւնի վերնայարկը, մէթրօ՝ Իթալի

կը զեկուցանէ ԸՆԿԵՐ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

ՋԱՐԵԻԱՆԻ «կրնա՞նք հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերուն մասին։

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

Շ· Յ· Դ· Մարսէյլի Շրջ· կոմիտէն ժողովի կը հրաւիրէ «Թոստոմ, Ջաւարեան, Իշխան ֆրիստափոր, վարուժան, վարդգէս, վահագ եւնթակոմիտէները, եւ Շ. Յ. Դ. Պատ. միութիւնը, յառաջիկայ կիրակի ամսոյս 27ին Ռիւ Սէն ժաք, սալօն Սէն ժաքի սրահը։ կը խնդրուի անդամատետրով ներկայանալ։

ԼՕՅՍ ՏԵՍԱՒ
"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՑԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ ֆրանսայի համար 5 ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։

Դիմել *Յառաջի* խմբագրատունը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Լիոնի կուկունեան խումբի ընդհ. ընկերական ժողովը, վաղը Հինգշաբթի երեկոեան ժամը ճիշտ 8,30ին, Նոր Գրադարանի սրահը։ Ներկայանալ հին եւ նոր անդամատետրներով։

Հ. Յ. Դ. Մարսէյլի «Վարուժան» ենթակոմիտէին ժողովը՝ այսօր Շաբաթ երեկոյեան ժամը ճիշտ 7ին, ծանօթ հաւաքատեղին։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Լիոնի ԽԱՐԲԵՐԴի եւ շրջակայ գաւառներու Հայրենակցական միութեան դասախօսական ժողովը՝ 27 Մարտ, Կիրակի առաւօտեան ժամը ճիշտ 9ին, 127-129 Rue Boileau Էմիլ Զօլայի վերնայարկը, դասախօս Ս. Փոզճարեան։

Հ. Մ. Ը. Մ.ի Ալֆոռվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր անդամները եւ համակիրները ընդհանուր ժողովի 26 մարտ Շաբաթ երեկոյ ժամը 8ին, 108 Rue Etienne Dolet, ծանօթ սրահին մէջ. Օրակարգ՝ վարչութեան ընտրութիւն։

ՅԱՐԴՈՂԻ առաջիկայ գրական երեկոն, վաղը Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա, նուիրուած է պեթհովէնի, իր հարիւրամեակին առթիւ։ Օր. Նուարդ Գալփաքեան կը ներկայացնէ մեծ երաժիշտին կեանքն ու գործը։ երեկոն ունի նուագի բաժին։ կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

Այրի տիկին Արաէմ Սիմոնեան եւ զաւակները եւ պարագաները իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն անոնց որոնք անձամբ կամ գրաւոր իրենց ցաւակցութիւնը յայտնեցին ողբացեալ Պ. ԳՐԻԳՈՐ ՍԻՄՈՆԵԱՆի մահուան առթիւ։

ԼԻՈՆԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

«Բարձր Հայք» ճաշարանը 202, Rue Boileau, Արարատ ճաշարանը 116, Tête d'Or։ Թերթին գործակալն է պ. Խաչիկ Ջօմաքլեան, 202, Rue Boileau.

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՓՈ-ՀԱՅ ԴՐԱՏՈՒՆԸ 15 րիւ տէ Տօմինիքէն

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Շ· Յ· Դ· Լիոնի կոմիտէն կը ծանուցանէ բոլոր ընկերներու եւ համակիրներու թէ՝ Գրադարան ընթերցարանը փոխադրուած է Rue Paul-Bert, թիւ 75, սրճարանի ներքնասենեակը։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— կը փնտռուի Անտիոքցի Աբրահամ Միքայէլեան 19 տարեկան։ Գրել՝ Սամուէլ Միքայէլեանի, Chez Mr. Maisson Bois Neuvy le Roi (Indre et Loire) France. կը խնդրուի սուրիական թերթերէն արտատպել։

— Փրուսայի կէմլէյիկի պէյնի գիւղացի Պետրոս Հայրապետեան կը փնտռէ իր գիւղացիները, ու, յանուն մարդասիրութեան, կը խնդրէ որ Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Եգիպտոս կամ այլուր գտնուող պէյնիցիները իրենց հասցէն երկտողով մը ծանուցանել իրենց հասցէին, գրելով՝ Bédros Hairabedianի՝ au Couvent Arménien St. Jacques. Jérusalem, Palestine.

— *Սեբաստիոյ որբերէն Տրապիզոնցի Գասպար Մարեան որ Յունաստանէն Ծրանսա եկած էր եւ մէկ ամիս առաջ Փարիզ կը գտնուէր։ Գրել՝ իր ընկերոջ Յարութիւն Շիրուանեանի* Cité Bois II, No. 30, Nyoseau, par Segre (M. et L.):

ԿԸ ՇԻՆՈՒԻՆ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻՆ

նպաստաւոր պայմաններով կապարէ, թիթեղէ, զինկէ եւ ապակիէ ամէն տեսակ գործեր (ջուրի, ելեքտրական, կազի խողովակներ եւայլն), փարիզ եւ արուարձանները։

Դիմել կամ գրել՝ LOUDER FÉNERDJIANի, 83, Rue de la Bienfaisance, Blanc-Mesnil (S.-et-Oise).

ՊԱՔԻՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ԴԱՀԵՆԱԿԻ ԵՒ ՕԹԿԻ

Ազգոտ եւ նորոգութիւն Դաշնակահարուհի ՕՐ. Ն. ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր։ Դիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Marcadet:

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ
ԶՈՒԼԱՐԱՆ «ԾԵՐՈՒՆԵԱՆ»

ՀԻՄՆՈՒԱԾ 1887ԻՆ —ο— Téléphone: Gobelins 37-41

Զուլարանս օժտուած ամենավերջին սիսթէմ մեքենաներով կը ձուլէ հայերէն եւ Թուրքերէն ամէն տեսակ տառեր լատինգոյն եւ տոկուն մետաղի գործածութեամբ։

Ամերիկեան չափերով տառեր եւս կը ձուլուին մասնաւոր խնդրանքի վրայ միայն։

Զուլարանս կ'ընդունի նաեւ ապսպրանքներ՝ տպագրական, կազմարարական մեքենաներու, գործիքներու եւ ամէն տեսակ պիտոյքներու. տպագր. թուղթ, մելան, pâte à rouleau, պղինձ գիծ եւայլն, զորս կը հայթայթէ ֆրանսական ծանօթ տուներէ։

Դրամ եւ ամէն ապսպրանք ուղղել հետեւեալ հասցէով
V. VARTANOFF, 24 rue Campo-Formio, Paris (13e)

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 86-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւնեաթժիկը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ
ԾԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Փարիզի եւ գաւառներու Հայութեան Համար կը պատրաստէ
ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԱՆԹԱՐԴԱԼ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ

Մեծաքանակ եւ փոքրաքանակ *Ամէրիկեան Գիներով*

Մէկ փորձ բաւ է համոզուելու, հետաքրքրով ապսպրանքները անմ. յանպէս կը դրկուին։ Թէլէֆոն։ Provence 38.63, Métro Cadet
26, Rue de Trévise Paris (9)

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ
Համեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՃՕԼՕԼԵԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**
9 RUE PAPILLON, PARIS IX
Square Montholon դիմաց Rue Lafayetteի կից
Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ժամը 9էն 6։ Գեղարուեստական ճաշակով պատրաստուած անթերի աշխատութիւններ։ Ինքնութեան խնամուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ։

ԴԻՒՐԱՄԱՏԱՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի օր ա.ՌԱՋ դրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել համապատասխան օրուան։

Կ'ՈՒԶՈՒԻՆ

Գործաւորներ՝ եւ գործաւորուհիներ գործի խաւը կորզել գիտցող։ Դիմել պ. Իսնէճեանի 12, Rue de la Pyramide, Boulogne s/Seine, (օրթ Սէն-Քլու)։

ԼԱԻ ԼՈՒՐ ՄԸ
ՔԱՇ ՔՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒԻՆ

Ձեր մետաքսները մի գնէք օրուան գինով։ Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն հրապարակի գինէն 5 ֆրանք աւելի ածան կը ծախէ։

Բաց է ամէն օր, նոյնիսկ շաբ. մինչեւ իրիկուան ժամը 7ը։

կը խօսուի Թուրքերէն։

կանագործ *աժան գիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կառոսիներ, զրասենեակի սեղաններ եւայլն, ծախու են թրքական թաւվուներ։ Դիմել՝* 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներու մասնագէտ եւ պատուաւոր խոհարար մը ճաշարանի կամ տունի մէջ։ Դիմել՝ մելիք տէր սարգիսեանի 5, Rue Riboutté, (Face le square Montholon). Paris 9.

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԷ ԿԸ ՀԱՅՑԱՅԱՅԷ ՋԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մեթոդ մը ունի մատենաղարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Hagachène, 9 Agopian Hantchakmakdjilar, Constantinople.

ՄԱԿԱՐԱՆ

23 Մարտ 1927

ԳՐԱՄՆԵՐ		
Սթերլին,	L. St.	124
Տոլար,	Dollar	25
Մարք (ոսկի)	100 Mark	600
Թրքական Թղթ.	L. Trq.	120
Թրք. ոսկի	» or	115
Մէճիտիէ	Médjidié	18
Լէվա 100 հատ	Léva	32
Տրախմի	» Drachme	11
Լիր	» » Lire	7
Պելժ. Ֆրանք	» Frc. Belge	8
Ֆրանց.	» Frc. Suisse	8
Լէյ 100 հատ	Ley	90
Ջերվոնեց	(10 Roubles or)	
ԱՐԺԵԹՈՒՂԹ		
Եգ. Քր. Ֆոնտիէ	I Cr. Fonc. Eg.	3000
»	II »	1940
»	III »	1550
Թումեի երկթղ.	Lots turcs	102

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

ՀԱՐԱՉ

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 Ֆ.	70 Ֆ.	140 Ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ալ.	10 ալ.	
ԵՒՐՈՊԱ	100 Ֆ.	200 Ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ 24 ՄԱՐՏ 1927

24 MARS 1927

Գ. ՏԱՐԻ թիւ 293

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿԱՐ ԽՕՍՔ

ՔՈՒԼԷՆԵՐԸ ԹՈՂ ՎՃՌԵՆ

Քիչ անդին կը հրատարակենք կաթող. պատուիրակին հեռագրական հրաժարականը եւ Էջմիածնէն հասած պատասխանը։

Ըսենք, անմիջապէս, որ երկուքն ալ շատ ուշ են ծնացած։ Պալաքեան եպսկ. հրաժարելու շատ պատեհութիւններ ունէր, եթէ լրջօրէն ըմբռնած ըլլար կացութիւնը։ Ան կարծեց թէ բաւական է «պատուիրակ»ի տիտղոսը, հրաշքներ գործելու համար։ Ան աստիճան որ. պատգ. ժողովէն առաջնորդ ընտրուած ըլլալով հանդերձ, շարունակեց պահել հին տիտղոսը։ Իր ուռեցիկ եսը չի գոհանար սովորական մակդիրներով։ Եթէ առաջնորդ ընտրուած չըլլար, նորէն պիտի պահէր «կաթող. պատուիրակ»ի պատուանունը, իբրեւ «Էջմիածնի աչքը»։ Կ'ուզէր մշակնեանաւորել կղերապետական դրութիւնը, հետեւելով կաթոլիկական հռոմէական հովուապետներու։

Միւս կողմէ, Էջմիածինը, որ նենգ խաղերու վառարան մըն է, կը շարունակէ հակասութենէ հակասութիւն գլորիլ։ Իր եկեղեցական քաղաքականութեան շնորհիւ էր որ խափեցաւ իր պատուիրակին դիրքը, եւ ուրիշ եպիսկոպոս մը զարձաւ իր պատուիրակը՝ նուիրական պատերազմի մը։ Պաշտօնագիրներնեն շատ մը, մասնաւոր նամագրութիւններու պէտ մըն ալ, կ'երեւայ թէ Էջմիածնի վճռական դեր կը կատարէ այս կարգի գործերու մէջ։ Եպիսկոպոս եպիսկոպոս, վարդապետ վարդապետ նամակներ կը փոխանակուին, որոնք աւելի շատ բան կ'ըսեն, քան անպատասխանատու կաթողիկոսի մը կոնդակները, կամ Գերագոյն Խորհուրդին վճիռները։

Այս իրականութեան ապացոյցները տեսանք ուրիշ գաղթներու մէջ ալ։ Էջմիածինը կաթող. քննիչ կը նշանակէ եպիսկոպոս մը, Պուլկարիոյ համար, եւ կը յանձնարարէ անմիջապէս ճամբայ ելլել ու վերջ տալ տիրող «անկերպարան վիճակին»։ եպիսկոպոսը անցագիր կը պատրաստէ, եւ ահա նոր լուր,— Էջմիածինը վաւերացուցեր է Ստեփաննոս եպիսկոպոսի պաշտօնը, իբրեւ առաջնորդ Պուլկարիոյ։ Խարդախութեամբ սարքուած եւ նշանակովի կարգադրութիւն մըն էր այս, ինչպէս եւ Թեմ. Խորհուրդին պարագան, եւ ճիշտ ատկէ ետք խնդիրները քննելու պիտի երթար պատուիրակը...

Նոյն Էջմիածինը, որ մասնաւոր եռանդ կը ցուցնէ այս միջոցին, գաղութները «հովուելու» համար, որոշեր է Սելանիկ դրկել Ռուիս բազմած երկրորդ եպիսկոպոս մը, «առաջնորդական ընտրութիւն կատարելու պաշտօնով»։ Մինչդեռ, չի կրնար տեղէն խախտել Աթէնքի դաւադիր եւ բրածոյ հոգեւորականը, որ իր եկեղեցին պատակտողներու գլուխը անցած է, իբրեւ գործակալ «Ազատ Յեկեղեցի» եղբայրութեան։

Կսկիծ կ'ուզենք թէ՝ Էջմիածնի վարդապետներն ու եպիսկոպոսները իրենց թաթը երկարելով մինչեւ արտասահման, ոչ միայն չեն կրնար արդարացնել իրենց յաւակնութիւնները, այլ եւ վրայ կուգան իրենց կասկածելի հեղինակութիւնը։ Անոնք ուղղակի կամ անուղղակի կը քաջալերեն կղերապետական շարքերը, կարծելով թէ անտէր «հօտ»ի մը հետ է իրենց գործը, եւ կը նպաստեն խառնակիչներու եւ ապիկարներու տիրապետութեան։ Չկրկնենք փարիզի պատմութիւնը, այնքան պերճախօս՝ իր մանրամասնութիւններով։

Եւրոպայի մասին խօսելով, ի՞նչ պիտի փրկէ այն նամակը որ ճամբայ հանուեր է Էջմիածնէն։ Եթէ Գերագոյն Խորհուրդը տէր պիտի ըլլար իր պատուիրակին, պէտք էր առաջին օրէն պատարէր այդ պարտականութիւնը, իւրաքանչիւրին իր տեղը ցուցնելով։ Եպիսկոպոսական աքլորամարտ մը սարքելէ, զայն էշերէն շփացնելէ յետոյ, ի՞նչ բարոյական արժէք պիտի ունենայ իր նոր նամակը կամ կոնդակը, երբ յետին բարեպաշտն ալ հասկցած է որ, եւրոպայի ազգային կազմակերպութիւնը կրնայ իրականանալ միայն իրեն՝ ժողովուրդին ձեռքով, առանց վեղարի եւ ասայի։

Մարսէյլ ընտրութեան ձեռնարկած է արդէն։ Թող նոյն ձեւով շարժին միւս գաղութներն ալ, Ֆրանսայի մէջ թէ այլուր։ Նոյն պարտքը կ'իյնայ, մանաւանդ, փարիզի վրայ, որ աղբիւրն է բոլոր չարիքներուն։ Մեր խորին համոզումով, Ֆրանսական կառավարութիւնը հաճութեամբ պիտի վաւերացնէր նոյն աշխարհական եւ իրապէս ազգային,—ոչ թէ յարանուանական— վարչութիւն մը, Ազգ. միութիւն կամ խորհուրդ, ինչպէս ատեաներ ալ կան։ Ո՛չ մէկ երկրի մէջ թոյլատրելի չէ որ անդրապան վիճակ ունենայ ո՛ր եւ է հասարակութիւն։

Այդպիսի կազմակերպութեան մը մէջ, եկեղեցականներն ալ իրենց տեղը կրնան ունենալ, իբրեւ հոգեւոր հովիւ, այլ ո՛չ մէկ պարագայի մէջ, իբրեւ տէրն ու տիրականը ժողովուրդի ճակատագրին։

Երկրի մը մէջ, ուր եկեղեցին եւ պետութիւնը բաժնուած են, բաւական միամիտ պէտք է ըլլալ, կղերապետական իրավարդի մը կառչելու համար։ Էջմիածինը եթէ «աչք» մը պահել ուզէ, թող պահէ իր հաշուին, ու իր փոքրին համար։ Մեզի չի հետաքրքրեր այս կամ այն եպիսկոպոսը։ Մեզի համար կարեւորը՝ կազմակերպութիւնն է, որ պիտի նպաստէ այլասերած չարիքները սահմանափակելու, ազգային դիմագիծն ու հոգեկերպը փրկելու, բազմազան հանրային հոգեր ստանձնելու, եկեղեցական բաղձանքներն ու պահանջները գոհացնելու։ Ունինք մարմիններ ունինք, բայց ո՞ւր է կեդրոնական օրգանը, որ վարէ բոլորը եւ լրացնէ բացերը։

Երկու տարուան փորձը աւելորդ անգամ մըն ալ հաստատեց, որ քուէները միայն կրնան վճռել այս խնդիրը։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՎԱԽԷՆ ՅԵՏՈՑ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Ինչպէս յայտնի է, Թուրքերը շատ մտահոգ են, իտալական արշաւանքի մը հեռանկարէն։ Բայց ահա լոյսի շող մը։ Իտալ. «ֆորրիէրէս տէլլա Սէրա» Թերթը վերջերս գնահատական մը գրած էր Թուրքիոյ մասին, որուն մէջ փառաբանելով Մ. Քէմալը, կը շեշտէր. «Ան վտարեց աշխարհակալները եւ Թուրքիան փրկեց եղերական վախճանէ մը զոր ամէն մարդ ճակատագրական եւ անխուսափելի կը նկատէր»։

Ետնուս նայի պէս, նոր Թուրքիոյ խուժանավարը, ոտքը գետին կտրած, հետեւեալ խմբագրականը կը գրէ «ձիւմհուրիյէթ»ի մէջ (18 Մարտ).

— «Շատ շնորհակալ ենք «Քորրիէրէ տէլլա Սէրա»ի, եւ իրեն կը հաւաստենք թէ Թուրք յեղափոխութիւնը իր կարծածէն աւելի ամուր է։ Իտալիա, իր կատարած յեղաշրջումով, ամէնէն աւելի լաւ կ'ըմբռնէ այս ճշմարտութիւնը։ Բայց ինչ օգուտ որ մեզի չվճակուեցաւ այս պարագան ըսել։ Որովհետեւ, երկար ատենէ ի վեր զրոյց կը շրջի այն իմաստով թէ Իտալիա առնելիք-տալիք ունի Թուրքիոյ հետ։ Այս զրոյցներուն յառաջ բերած թիւրիմացութիւնն է որ կղզանք զարկաւ մեր բերաններուն։

«Ընդհակառակն, ամէն առթիւ ղէմ խօսեցանք Իտալիոյ։ Սակայն իրաւացի էինք։ Երբ մեր կանքին ղէմ զաւող թշնամի տեսնենք, բնականաբար չենք կրնար լաւ խօսիլ անոր մասին։ Միեւնոյն ատեն կը խորհէինք թէ Թուրքիա եւ Իտալիա կրնային լաւ բարեկամներ ըլլալ։ Եւ եթէ մինչեւ հիմա բարեկամ չեղանք, յանցանքը մերը չէ անտարակոյս։

«Եթէ այսպէս առիթներ տրուին մեզի, անշուշտ մենք ալ գիտենք ֆաշիսմին լաւ կողմերը հրապարակելու պարտականութիւնը։ Մենք ըսելիքներ ունէինք, եւ ատոնք մեծ մասով նպաստաւոր էին Իտալիոյ համար. սակայն չըսինք, որովհետեւ ամբողջ աշխարհի համոզումը այն էր թէ Իտալիա կը խորհի Թշնամութիւն ընել Թուրքիոյ։ «Քորրիէրէ տէլլա Սէրա»ի յօդուածը կուգայ նոր հորիզոն մը բանալու մեր առջեւ։ Եթէ Իտալացիները շարունակեն իրենց այս ընթացքին մէջ, մենք ալ համարձակութիւն առնելով պիտի արտայայտենք մեր ըսելիքները։ Այն ատեն Իտալիա պիտի տեսնէ թէ արտասահմանի մէջ կան ազգեր, որ կրնան համակրանքով եւ նոյնիսկ յարգանքով դիմաւորել ֆաշիստ վարչաձեւը։»

ԴՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ.— Շարանթոնի մէջ, գետեզերքին մօտ, առջի օր կէս գիշերին, մայր մը եւ տղայ մը կը լուծեն գործազրկութեան տագնապը։

Որոշած էին պարպել մթերանոց մը։ Տղան կրնար միայնակը վերջացնել գործը, սակայն մայրն ալ կը նեղուէր անգործութենէ։ Զեռքերը ժանգոտած էին, գործ կը փնտռէր։ Ու միասին գացին մթերանոցին առջեւ։ Մայրը սպասեց փողոցին անկիւնը եւ կատուի աչքերով մուտքին մէջ կը լրտեսէր ոստիկաններն ու անցորդները։ Իսկ տղան կը բանէր ներսը։ Յանկարծ ոստիկանները երեւցան։ Մայրը վերցուց տոպրակը, որ լեցուն էր շաքարեղէնով եւ դինիի շիշերով, եւ նետեց դեպի մէջ։ Ոստիկանները, սակայն, ծանօթ անցած զայնածին, մայր ու տղայ բշեցին դէպի բանտ, ուր ժամանակ մը զարձեալ գործազրկութեան պիտի դատապարտուին։

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՏԱԼԵԻՍԵՐՊ ՎԷՃԸ ԿԸ ՄԵՂՄԱՆԱՅ

Օրուան քաղաքական կարեւոր խնդիրներն են իտալեսերպ ծանօթ վէճը եւ Շանկայի չին ազգայնական բանակին կողմէ դրաւումը։ Արտաքին նախարար Պռիան նախարարական խորհուրդին մէջ երկար զեկոյց տուաւ այս խնդիրներուն մասին։ Վերջին լուրերու համաձայն, իտալեսերպ յարաբերութիւնները աւելի լաւ ճամբու մէջ մտած են եւ դիւանագիտական կնճռոտութիւններու կամ պատերազմի վախ չկայ։

Սքուփչինայի մէջ պատահած միջադէպը զոցուած կարելի է նկատել, քանի որ սերպ արտաքին նախարար Նիքո Փէրիչ, ժողովի ընդհատումէն անմիջապէս առաջ ներողութիւն խնդրեց իտալական դեսպան Զօր. Պոտրէրօէն. ասկէ զատ երեսփ. ժողովը պատժեց դեսպանին դէմ անվայել արտայայտութիւն ընող երեսփոխան Թրումիչը, զայն դուրս վտարելով։

Նախարարը բացի ժողովի պահուն հրապարակաւ ներողութիւն խնդրելէ, անձամբ այցելեց նաեւ դեսպանատունը եւ ներողութիւն խնդրեց յանուն կառավարութեան։ Դեսպան Զօր. Պոտրէրօ փոխադարձ այցելութեան եկաւ Նիքո Փէրիչի, որուն յայտնեց թէ միջադէպը փակուած կը նկատէ։

Հռոմի ալպանական դեսպան Ճէմիլ Տինօ Մուսոլինիի ներկայանալով իր կառավարութեան կողմէ շնորհակալութիւն յայտնեց՝ իտալական կառավարութեան Ալպանիոյ ընձեռած քաղաքական աջակցութեան համար։

Փարիզի իտալական դեսպանն ալ Մուսոլինիի շնորհակալութիւնները յայտնեց Պռիանի՝ Սերպիոյ տրուած չափաւորութեան խորհուրդներուն համար, հաւաստելով թէ կացութիւնը կնճռոտելիք ոեւէ ձեռնարկ չպիտի ընէ։

Պելկրատէն կը հեռագրեն թէ Ահմէտ Զօկու Թիրանայի մէջ սպաննել տուած է ալպանական անկախ կուսակցութեան պետը Եուսուֆ Սալիհ պէյ, որ մտերիմ բարեկամն էր Էսատ փաշայի եւ հակառակ էր ներկայ կառավարութեան խտալասէր քաղաքականութեան։

Երեսփ. ժողովին մէջ ընկերվարական երեսփոխանները Լէոն Պլում եւ Ֆոնթանիէ հարցապնդումի առաջարկ բերած էին Պալքաններու կացութեան մասին։

Արտաքին նախարար Պռիան պահանջեց որ հարցապնդումը յետաձգուի, ու յայտարարեց թէ իտալեսերպ վէճը խաղաղ կերպով լուծուելու վրայ է, եւ աւելցուց. — Ֆրանսական կառավարութիւնը վճռապէս միջամտեց այս վէճին մէջ՝ պաղբիւնութեան եւ չափաւորութեան խորհուրդներ տալու համար, համաձայնութեամբ Գերմանիոյ եւ Անգլիոյ։ Իր կարգին սերպ արտ. նախարարն ալ խորհրդարանին մէջ անկեղծ յայտարարութիւններ ըրաւ։ Միւս կողմէ իտալ. կառավարութիւնը չափաւորութիւն եւ պաղարիւնութիւն ցոյց տուաւ ու կը յուսացուի թէ ամէն անհամաձայնութիւն հարթուած է։ Մնաց որ Եւրոպայի կացութիւնը կրնայ նոր անհանգստութիւններ պատճառել, սակայն խաղաղութիւնը զօրացած է եւ դիւանագիտական միջադէպ մը բաւական չէ դէպի արիւն առաջնորդելու զայն»։

Պլում պահանջեց որ հրապարակաւ պատասխանուի իտալ. մամուլին զրպարտութեանց։ «Կը խօսուի Ֆրանսայի եւ Եուկոսլաւիոյ միջեւ գաղտնի զինուորական դաշնագրի մը մասին։ Ատոր չեմ հաւատար. սակայն պէտք է որ պաշտօնապէս եւ հրապարակաւ հերքուի այս զրոյցը։ Սերպիա պահանջեց որ ալպանական խնդրին առթիւ քննութիւն մը բացուի։ Ատիկա պէտք է կատարել, որպէս զի Եւրոպա գիտնայ թէ ո՞ր կառավարութիւնն էր որ քիչ մնաց նոր պատերազմի մը պատճառ պիտի դառնար»։

Ընկերվարական երեսփոխանը կ'ուզէր մատնանիշ ընել թէ ի՞նչպէս ֆաշիստ կառավարութիւնները կը սպառնան վտանգել խաղաղութիւնը, սակայն Պռիան միջամտեց.

— կ'ապացուցանէք որ, ըսաւ, իրաւունք ունէի ըսելու ձեզի թէ այսպիսի վիճաբանութիւն մը չի կրնար նպաստել խաղաղութեան։ Արտաքին քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներու մէջ այս կամ այն վարչաձեւի մասին նախասիրութիւններ ցոյց տալով կարելի չէ խաղաղութեան ծառայել։ Իրաւ է թէ Եւրոպայի մէջ անհանդարտութեան սերմեր կան, սակայն հարցապնդում մը եւ քուէարկութիւն մը ամէն բան չեն կարգադրեր։ Ազգերու Դաշնակցութիւնը ինչո՞ւ պիտի միջամտէ։ Եթէ Ալպանիա վտանգի ենթարկուի, կը միջամտէ։

Գերմանիոյ արտաքին նախարար Շթրեզեմանն եւս նոյն օրը եւ նոյն ժամուն յայտարարութիւններ ըրաւ Ռայխսթակի մէջ, արտաքին քաղաքականութեան մասին։ Ըսաւ թէ իտալասերպ ձգտումին մասին սկիզբը հաղորդուած լուրերը շատ չափազանցուցած էին։ «Բոլոր երկիրներու մէջ ուժեղ կերպով արմատացած է Եւրոպան պատերազմի ամէն վտանգ պահպանելու կամքը, այնպէս որ պատերազմի պատճառ եղողը համաշխարհային դատապարտութեան պիտի ենթարկուի։ Սակայն ամէնէն լաւատեսն անգամ չի կրնար չխոստովանիլ թէ դեռ շատ հեռու ենք միջազգային ընդհանուր կացութեան վերջնական ամրապնդումէն։ Միջազգային այս մեծ խնդիրներուն մէջ Գերմանիոյ դիրքը կանխաւ որոշուած է։ Մենք բան չենք շահիր երկու պետութեանց միջեւ առաջ եկած բարդութիւններէ,

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Էջ)

ԿԱԹՈՂ. ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ՀՐԱԺԱՐԱՒԵ

Կաթող. Պատուիրակութեան դիւանէն կը հաղորդեն մեզի.—

«Կաթող. պատուիրակ Սրբազանը Մարտ 17ին Նորին Ս. Օծութեան Կաթողիկոսին յղած էր հետեւեալ հրաժարականը. — «Խնդրեմ հաճեցէք ընդունիլ պաշտօնէս հրաժարականս»։

Մարտ 21ին ստացուեցաւ Ն. Ս. Օծութեան ստորագրութեամբ հետեւեալ հեռագիրը.— «Շարունակեցէք ձեր պաշտօնը անվիճայ։ կը ստանաք նամակ»։

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅԵՐՈՒՆ ՏԵՂԱՒՈՐՈՒՄԸ

Ազգակ, պէյրութի մեր նոր պաշտօնակիցը, կը գրէ.—

Մասնաւորաբար Հալէպի, Պէյրութի եւ Ալէքսանտրէթի մէջ, վրաններու եւ թիթեղէ տուներու մէջ բնակող հայ գաղթականները տեղաւորելու եւ զանոնք հոգալու նպատակով։ մարզպանին հովանաւորութեան տակ եւ մասնակցութեամբ Միջազգային կարմիր Խաչի Սուրիոյ ներկայացուցչին, կազմուած է կեդրոնական յանձնաժողով մը։ Սոյն յանձնաժողովը Պէյրութի, Հալէպի եւ Ալէքսանտրէթի մէջ նշանակած է առանձին յանձնախումբեր, որոնցմէ իւրաքանչիւրը իր շրջանի գաղթական Հայերու տեղաւորման գործով պիտի զբաղի։ Պէյրութի յանձնախումբը ցարդ Էշրէֆիէ թաղին մէջ գտնուող ընդարձակ հողը գնած եւ 300 տուներու շինութեան որոշումը տուած է, առանձին հայկական թաղամաս մը շինելու համար հոն։

Կ'ըսուի թէ սոյն մարմինները իրաւասութիւն եւ պաշտօն ունին նաեւ տեղաւորելու Հայերը գիւղերու եւ ազարակներու մէջ եւ մշակելի հողեր տալու իրենց։

ՀԱՐԻՒՐԻՆ ՔԱՆԻ՞Ն

Էնկիւրիէն կը հեռագրեն թէ՝ վիճակագրութեան ընդհ. տնօրէն Պ. Ժաքար, Մէրսինի մէջ կատարուած մարդահամարի փորձի միջոցին տղոց մահերուն մասին ձեռք ձգուած տեղեկութեանց վրայ յօդուած մը գրելով, մանրամասն տեղեկութիւններ հաղորդած է մամուլին։ Այս տեղեկութեանց համաձայն՝ Մէրսինի մէջ, վերջին 16 տարուան ընթացքին ամուսնացած 855 մայրեր կան որ 4904 զաւակ ծնած են։ Այս տղոցմէն 1719 հոգին մեռած են 10 տարուչեղած, որով մօտաւորապէս 100ին 20 է մահացութեան համեմատութիւնը։ Իսկ 8480 մանուկներէ 1578ը մէկ տարուչեղած եւ 2085ն ալ երկու տարեկանին մեռած են։ Հետեւաբար տղոց մահերու համեմատութիւնը մինչեւ մէկ տարեկանը՝ 100ին 18 եւ 10ին 7, իսկ մինչեւ երկու տարեկանը՝ 100ին 24 եւ 10ին 6։ Այս վիճակագրութիւնը բարեխառն կլիմայ ունեցող ծովեզերեայ քաղաքի մը բնակչութեան վրայ կատարուած ըլլալով, Թուրքիոյ բոլոր քաղաքներուն չի պատշաճիր։

Յողովածու հայ ժողովրդական երգերու.— Նիւ-Եօրքի Հայ Կրթ. Հիմնարկութիւնը խոստացած է իր միջոցներով հրատարակել հայ ժողովրդական երգերու ժողովածու մը։ Միեւնոյն ատեն յանձն առած է, իր միջոցներով, արտասահմանեան համալսարաններու մէջ տեղաւորել այն ուսանողները, որոնք Հայաստանէն պիտի ընտրուին եւ ղրկուին իրեն։

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ

Այս էջերուն մէջ յաճախ առիթ ունեցած ենք խօսելու Ֆրանսայի արտաքին եւ ներքին պարտքերուն, վճարուած եւ վճարուելիք տոկոսներուն եւ այդ պարտքերու կարգադրութեանց համար եղած բանակցութեանց ու կնքուած աւժամեայ դաշնագրերու մասին։

Կ'արժէ որոշ գաղափար մը տալ ընթերցողներուն թէ որչափ է այդ պարտքերու գումարը, եւ ինչ կը վճարուի տարեկան, իբրեւ տոկոս կամ դլխավճար։

Արտաքին պարտքը կը բաժնուի երկու որոշ դասի. քաղաքական պարտք, որ կնքուած է միայն պատերազմական պէտքերու համար ու պատերազմի ընթացքին, եւ առեւտրական պարտք, որ կնքուած է պատերազմէն յետոյ երկրուն պարտքեր վճարելու, ապրանքներ գնելու եւն. համար։

Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏՔ.— (Ըստ 1927 յունուար 1ի հաշուեկշիռին.) Քայէօ-Չըրչիլ համաձայնութեամբ (1926 Յուլիս 12) Անգլիոյ պահանջի ընդհ. գումարն էր 653 միլիոն անգլիական ոսկի։ Թէեւ այդ պայմանադիրը վաւերացուած չէ տակաւին, բայց Փուանքարէ արդէն սկսած է գործադրել անոր պայմանները, ինչպէս բացատրեցինք նախորդ յօդուածով մը, որով կարելի է գայն ընդունիլ իբր վերջնական։ Ան հաշիւ այդ պայմանագրութեան, արդէն երկու միլիոն վճարուած է 1926ին եւ երկու միլիոն ալ վճարուելու վրայ։ Ամերիկա պարտքերու փոխարէն կնքուած 407 միլիոն տոլարի պարտքը հաշուեցինք քաղաքական պարտքին մէջ, որովհետեւ անհնար է խորհիլ թէ կրնայ մերժուիլ Մելլըն-Պերանժէ համաձայնագրութիւնը, որու համաձայն այդ գումարը կը մտնէ քաղաքական պարտքին մէջ։ Ոչ մէկ կառավարութիւն կրնայ համարձակիլ 1929 Օգոստոս մէկին այդ գումարը վճարելու յանձնաժողովեան տակ մտնել։ Երկու տարիէն միանուագ տասը միլիառ ֆրանք վճարելու վրայ խորհիլ կը նշանակէ ուեւէ գաղափար չունենալ կացութեան վրայ։ Փուանքարէ շատ լաւ գիտէր թէ անհնար էր ուրիշ կերպ վարուիլ եւ այդ պատճառով է որ արդէն գործադրութեան դրաւ Մելլըն-Պէրանժէ համաձայնագրութիւնը։ Խորհրդարանի իր հակառակորդները համոզելէ յետոյ, ան ուզեց հաւաստիք տալ Ֆրանսայի պահանջատէրերուն թէ՝ վաւերացման ուշացումը պատրուակ չէ կառավարութեան համար, իր պարտքերէն խուսափելու կամ իր յանձնառութիւններն ուրանալու համար։— Ի՞նչ բանի պիտի ծառայեն այն ահագին գոհողութիւնները որոնց համակերպած է Ֆրանսայի ժողովուրդը 1926—1928 տարիներուն համար, եթէ 1929ին ինքզինքը պիտի գտնէ անել կացութեան մը առջեւ եւ չպիտի կրնայ վճարել պահանջուած տասը միլիառը։

Բ. ԱՒԵԼԻՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ.— Այս դասին կը պատկանին.

1.— Անգլիոյ դրամատան պահանջը՝ 37 միլիոն ոսկի։ Այս պարտքին համար Ֆրանսա պիտի վճարէ տարեկան իբր երկու միլիոն ոսկի տոկոս եւ 10 միլիոն ոսկի ալ դլխավճար, մինչեւ 1930ի վերջը։

2.— Անգլիական ապրանքներու փոխարէնը 3,250,000 ոսկի, վճարելի մինչեւ 1929ի վերջը առանց տոկոսի։

3.— 1924էն ի վեր Անգլիոյ մէջ հանուած դանձատոմսերու փոխարէնը, իբր 6 միլիոն ոսկի, հարիւրին 6 տոկոսով։

4.— 1915, 1917, 1920, 1921 եւ 1924 թուականներուն ի հաշիւ ֆրանսական պետութեան Լիոնի, Պոռսօի եւ Մարսէյլի քաղաքապետութեանց կողմէ Ամերիկայի մէջ հրապարակ հանուած պարտամուրհակներու փոխարէնը, 208 միլիոն տոլար կամ 42 միլիոն անգլիական ոսկի, որուն համար կը վճարուի տարեկան մօտ հինգ միլիոն ոսկի տոկոս։

5.— 1918ին Արժանթինի պետութենէն գնուած ցորենի փոխարէնը 3,660,000 ոսկի, վճարելի 1927ի վերջը, հարիւրին 5 տոկոսով։

6.— 1918ին Ուրուկուէյի պետութենէն առնուած ապրանքներու փոխարէնը, մօտ 1 միլիոն 275,000 ոսկի, վճարելի 1928ի վերջը, հարիւրին 5 տոկոսով։

7.— 1919ին Հոլանտայի մէջ կնքուած 25 միլիոն ֆլօրէնի փոխառութիւնը, վճարուած անցեալ ամիս, մօտ 2 միլիոն ոսկի։

Համախմբելով այս ամէն պարտքերը, կ'ունենանք.

1.— Քաղաքական պարտք	
Անգլիոյ 651 միլիոն ոսկի	
Ամերիկայի 862 » »	
1,513 միլիոն ոսկի	
2.— Առեւտրական պարտք	
Անգլիոյ դրամատան	37 միլիոն ոսկի
Անգլիական ապրանքները	3,200,000 ոսկի
Անգլիոյ մէջ հանուած գանձատոմսեր	6 միլիոն ոսկի
Ամերիկայի մէջ հանուած պարտաւորթեր	42 միլիոն ոսկի
Արժանթինի	3,700,000 ոսկի
Ուրուկուէյ	1,300,000 ոսկի
Հոլանտա	2,100,000 ոսկի
	95,300,000 ոսկի

Ընդհ. գումար մօտ 1600 միլիոն անգլիական ոսկի, այսինքն 40 միլիառ ոսկի ֆրանք, որ այսօրուան արժէքով կ'ընէ 200 միլիառ (երկու հարիւր հազար միլիոն) ֆրանք։ Եթէ ոսկիով վճարելու կարելիութիւն ըլլար, պէտք էր 13 միլիոն քիլօ ոսկի...

Այս ահագին գումարին իբր տոկոս, Ֆրանսական պետութիւնը տարին կը վճարէ իբր հինգ միլիառ ֆրանք։ Եւ պէտք չէ մոռնալ թէ այս թիւը կը ներկայացնէ միայն արտաքին պարտքը։ Ներքին փոխառութեանց գումարը շատ աւելի մեծ է, եթէ հաշուի առնենք նաեւ գանազան գանձատոմսերն ու պետութեան հաշուոյն տպուած դրամատոմսերը։ Այդ մասին ուրիշ անգամ։

Անկարելի է, անշուշտ, այս ահագին ծանրութիւնը բեռնաւորել մէկ սերունդի վրայ։ Ներկայ սերունդն իր արիւնը տուաւ։ Արդար է որ յառաջիկայ սերունդներն ալ իրենց գոհողութեան բաժինը բերեն այս պարտքերու վճարման համար, պայմանաւ որ նոր նախճիրներ չդան արիւնոտել անոնց ալ պատմութեան էջերը։ Քայէօ-Պերանժէ համաձայնութիւնները 60էն 70 տարիներու վրայ բաժնած են Ամերիկայի եւ Անգլիոյ պահանջները, այնպէս որ մեր թոռները Շնորհակ 2000 տարեթիւին հաղիւ ազատած պիտի ըլլան պարտքերու այս անտանելի մղձաւանջէն։

Մինչեւ այդ օրը, ամէն տարի պետական պիւտճէն պատրաստելու ժամանակ քաղցրութեամբ չէ որ անոնք պիտի յիշեն մեր այս երանելի ժամանակները... եւ իրենց կռնատան պապերը։

Մ. Տ.

ՊԷԹՀՈՎԷՆ

ՏԱՌԱՊԱՏ ՄԱՐԴԸ

ԻՐ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

1827 — 1927

Հոչակաւոր երաժիշտին հարիւրամեակը փարիզի մէջ ալ տօնուեցաւ երէկչաբթի օր։

Սակաւաթիւ են բարձրագոյն հանճարի տէր այն մարդերը՝ որոնց կեանքը այնքան տառապագին անցած ըլլայ որքան պէթհովէնինը։ Ընդատ ծնողքի զաւակ՝ ցաւերու մէջ ծնած, իր գաւատանջ գոյութիւնը ամբողջ 57 տարի քարշ տուած է յուսախաբութիւններու մէջ։ Իր եղերական հոգեվարքը որ տեղի ունեցաւ Վիէննա համեստ բնակավայրի մը մէջ, եկաւ ի վերջոյ յոգնած ու քայքայուած մարմինէ մը խլել հոգի մը՝ որուն մէջ ցառապանքն ու հանճարը ձեռք ձեռքի տուած՝ ձայնի ու գոյփի միջոցաւ ծնունդ տուին անբաղդատելի հրաշակերտներու։

1802ին, երբ գեռ հազիւ եւրեսուն տարեկան կար, այնքան խոցոտած էր իր սիրտը, որ ստիպուեցաւ գրելու «Հայկընշտաթ» անունով ծանօթ կտակը։ Ի՜նչ սրտաճմլիկ շեշտերով պարզած է հոն իր սրտին դառնութիւնը.—

«... ցոյսը անգամ զոր միասին քերի հոս, լքեց գիս բոլորովին, այնպէս ինչպէս աշնան տերեւները կը թափին, կը թարշամին... այնպէս մեռած է ան ինծի համար նաեւ...։ Քաջութիւնն անգամ որ ամրան աղուոր օրերուն գիս կ'ոգեւորէր, անհետացած է...։ Ո՛վ նախախնամութիւն, թոյլ տուր ինծի որ գէթ անգամ մը անխառն ուրախութեան օր մը անցընեմ...։ե՞րբ, ո՛վ Աստուած, ե՞րբ արդեօք պիտի կարենամ բնութեան ցաւարին ու մարդոց հոգիներուն մէջ զգալ զայն նորէն։ երբե՞ք։ Ո՛չ, շատ դառն պիտի ըլլար այդ...»։

Տարօրինակ բա՜ն. հոգիի այս տրամադրութեան տակ է որ գրած է իր նշանաւոր 2րդ Սէնֆոնին, որուն մէջ իր փոթորկալից հանճարը եւ գօրեղ երեւակայութիւնը հանդարտ ու խաղաղ մթնոլորտի մը մէջ երեւան եկած են կարծես։ Արդեօք արուեստագէտին հոգին ստեղծագործութեան պահուն կրնա՞ր թօթուել ներքին եւ արտաքին տառապանքները եւ որո՞նց դէմ, ո՛վ գիտէ, թերեւս գայն իբրեւ դարման կը գործածէր։

Ոչ մէկ գաւ այնքան խորապէս ազդած է իր վրայ, որքան իր սիրական մօր անակնկալ մահը, երբ գեռ պատանի էր ինք, եւ վարժունքը իր հարազատ եղբայրներուն՝ որոնք չեն դադրած չարչարելէ զինքը, նիւթական գեւռէ հաշիւներու համար, օգտուելով իր վեհանձնութենէն ու ծայրայեղօրէն բարի տրամադրութիւններէն։

«Հայկընշտաթ»ի շրջանով իր գոգոհման վերջ գտած չէր սակայն։ Իրեն վերապահուած էր երաժիշտի մը համար հարուածներուն էն անգութը։ քանի մը տարիէ ի վեր սկսած խլութիւնը հետզհետէ զգալի կ'ըլլար։ 1810ին այնքան սաստկացած էր արդէն որ, հարկ կ'ըլլար յաճախ գրելով խօսիլ իրեն հետ։ Ամբողջական խլութենէ մը վախնալով էր, կարծես, որ իր գործունէութիւնը կրկնապտկած էր իր հոգիին մէջ կուտակուած երաժշտական բոլոր գաղափարներուն մարմին տալու համար բաղդատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ։ Ընդարեւ պէթհովէնի աշխատութեանց ամէնէն բեղմնաւոր շրջանը 1800—1810ն է, որու մէջ ինք լոյս տեսած են իր գլխաւոր եւ առաջնակարգ գործերը։ Դաշնակի համար 5 «քոնչէրթո»ները, ջութակի «քոնչէրթո»ն, վեց առաջին «սէնֆոնի»ները, «քուարթոռ»ները, 15 «սօնատ»ները դաշնակի համար, 5 «սօնատ»ները ջութակի համար, «Էկմօնտ»ը, «Լէոնոռ» օփէրան եւ «Ճիսուս Ձիթհնեաց Լերան վրայ» «օռատորիօ»ն եւ ուրիշ շատեր այս շրջանին լոյս տեսած են։

Ի՜նչ հեզահամբոյր եղած է ան իր մտերմական կեանքին մէջ։ Ամէն բանէ աւելի սիրած է բնութիւնը իր ամէն երեւոյթներուն մէջ, բնութիւնը՝ զոր չէ կրցած սակայն վայելել իր փափաքած չափով եւ ուժգնութեամբ։ «Ծառ մը կը նախընտրեմ մարդէ մը...» ըսած է օր մը։ Մարդերէն յուսախաբ եղած էր միայն, չարիք տեսած յաճախ իր սէրերուն մէջ անգամ գրեթէ միշտ անբախտ եղած էր։

Իրեն ծանօթ եւ ժամանակից մեծ հանճարներ չեն կրցած գոհացում տալ իր գերազանցապէս ամբիծ եւ այլասէր հոգիին։ Կէօթէսէգ եւ արհամարհոտ եղած, իսկ Նափոլէոն յուսախաբ ըրած էր գինքը։ Ա՛յս վերջինին հերոսութիւններէն կարթուած եւ խանդավառուած՝ անոր ձօնած էր իր 3րդ Սէնֆոնին՝ «Էռօիքա»ն եւ աստուածացուցած զա՛յն։ Սակայն 1804ին, իմանալով որ կայսր անուանած է ինքզինքը՝ չափազանց սրտնեղած ու «Ընչ ալ ուրեմն հասարակ մարդ մըն է եղեր միայն...» գոչելով, ընդած է իր ձօնը՝ աւրելով պօնափարթ անունը եւ Սէնֆոնիին ճակատը գրելով «Per festeggiare il sovenire d'un grand nomo» (Մեծ մարդու մը յիշատակը տօնելու համար)։

Ամէն ինչ վեհ էր պէթհովէնի մէջ, բարձր՝ իր հոգիին մէջ, վեմ՝ իր գործերուն մէջ։ Աստուածայինին ձգտումը ունէր միշտ։ Իր «սէնֆոնի»ներէն եւ «սօնատ»ներէն իւրաքանչիւրը աշխարհ մը կը կազմեն ինքնին։ «Ոչինչ աւելի գեղեցիկ է, գրած է անգամ մը, քան աստուածութեան մօտենալ եւ անոր շողերը տարածել մարդկային ցեղին վրայ։»

Թող հանգիստ ըլլան տառապանքով շաղախուած իր ոսկորները իր բաղձանքը իրագործուած է։ Հարիւր տարիէ ի վեր արդարեւ իր եղանակները աստուածային շողեր է որ կաթեցուցած են ու պիտի կաթեցնեն միշտ ամէն դասակարգի մարդոց հոգիներուն մէջ։ Որքան ատեն որ բնութիւնը պիտի դիւթէ մեզ, սէրը պիտի յուզէ կամ տառապեցնէ, մորմոքը մեր սիրտը պիտի կրծէ ու մահը մեր մղձաւանջը պիտի ըլլայ, որքան ատեն որ, վերջապէս, մարդոց հոգիները գեղեցիկ ու վսեմ զգացումներու եւ գաղափարներու համար պիտի թրթռան, պէթհովէնի երկերը մեզ՝ տկար եւ խեղճ մահկանացուներուս համար պիտի կազմեն գերագոյն մխիթարութիւններ։

ՀՐ. Ն. ԹՈՐՈՍԵԱՆ

ԾԱՆՕԹ.— յաւելի 18 Մարտ թիւ «Նախահայկական պատմութիւնը եւ Տքթ. վ. Պէլք յօդուածին առաջին սիւնակին 76րդ տողին «Հայաստանցիները» բառը՝ Ուրարտացիները, եւ 107րդ տողին «Արարատ» բառը՝ Սարարատ, իսկ երկրորդ սիւնակին 5րդ տողին «Արարատա»ն պէտք է կարդալ Սարարատայ։

Հ. Ն. Թ.

Մոսկուայի մօտ, Օկուլով գիւղին մէջ գաղանաբար սպանուած է գիւղական թղթակից Արմենակինովը, որ կը մերկացնէր ունեւոր գիւղացիներու արարքները։

ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Պոլշեւիկներու համար օրուան խնդիր է դարձած գործարանային ապրանքներու սղութեան ծանրակշիռ հարցը։

Յատեղծուած է կացութիւն մը, ուր կատարեալապէս անհնար է շրջունակել ներկայ ուղղութիւնը։ Սկիզբները, երբ գիւղացին աստիճանաբար կը հեռանար պետական մենաշնորհի շուկայէն իբրեւ գնող, այնքան ալ սարսափելի չէր երեւար պոլշեւիկ տնտեսագէտներուն, սակայն ներկայիս կ'ահաբեկին, երբ գիւղացին կը հեռանայ նաեւ իբրեւ առաջարկող։ Ապրանքի փոխանակութեան սկզբունքը խախտուած է ի վնաս գիւղացիին։

Գիւղացին այլեւս ի վիճակի չէ վճարելու ծայր աստիճան ծանր տուրքերը եւ շուկայ հանելու իր անարժէք մթերքները։ Գիւղացին չուզեր երկ ամիս աշխատիլ հագուստի մը համար, կամ ամիս մը աշխատիլ գոյգ մը հագուստ ձեռք բերելու համար։ Թէ ինչ յատկութիւն ունին այդ ապրանքները։ Պարենաւորման գործավարը ըսած է բառացի՝ «ապրանքներուն տեսակին վատթարացման վրայ կ'ապդէ արդիւնաբերութեան ձգտումը՝ առաւելագոյն շահ ստանալու»։

Սակայն միայն արդիւնաբերութիւնը չէ որ կ'ուզէ ունենալ առաւելագոյն շահը։ «Էկօնօմիչեսկայա Ժիզն» թերթը (Տնտեսական կեանք) 9ուն. 2ի թիւին մէջ խօսելով գիւղերու ողութեան մասին, կ'ըսէ— «Պատերազմէն առաջ փոքրաքանակ վաճառականը կը շահէր 100էն 20, իսկ ներկայիս 100էն 64։ Այս թիւերը ինքնին աղաղակող են եւ հասկանալի՝ թէ գիւղացին պիտի խուսափի 100էն 64 շահող շուկայէն»։

Ինչպէս միշտ, այս անգամ ալ պոլշեւիկները, կ'աշխատին կացութիւնը փրկել, միայն կիսամիջոցներով։ Ընդ.ք յատուկ «դեկրեդ»ով մը գործարանային մեծաքանակ ապրանքներու գիները իջեցուցին 100էն 10, անկասկած հնարաւորութիւն չունենալով գործադրելդայն։

Երէկ Հայաստանի լուռնային գաւառներէն մէկէն նամակ մը ստացայ, գիներու մանրամասն դուգակով մը։ կ'արժէ արտատպել՝ ըսածներս աւելի հաստատելու համար։ Թղթակիցս գանգատելով յարաճուն սղութենէն, եւ շեշտելով թէ միայն պոլշեւիկներն են որ լաւ կ'ապրին, կուտայ հետեւեալ թիւերը զորս ես եւրոպական չափերու եւ ֆրի վերածած եմ.—

1.— 1 քիլօ հաց 2 ֆր. 20 ս., 2.— 1 քիլօ իւղ 32 ֆր. 75 ս., 3.— 1 քիլօ ոչխարի միս 7 ֆր. 80 ս., 4.— 1 ք. ոչխարի միս 8 ֆր. 50ս. 5.— 1. ք. շաքար 11 ֆր. 70 ս., 6.— 1 ք. փոշի շաքար 8 ֆր. 45ս. 7.— 1 սայլ փայտ 400 ֆր., 8.— մէկ գործածուած վերարկու 350 ֆր., 9.— մէկ գործածուած հագուստ 400 ֆր., 10.— մէկ միջակ կօշիկ 280—320 ֆր., 11.— մէկ հաւը 26 ֆր.. 12.— մէկ հաւկիթը 40 սանտիմ։

Եթէ գիւղատնտեսական բերքերու գիները մօտաւորապէս հաւասար են փարիզի գիներուն, հաւկիթ, հաւ, հաց եւայլն, ընդհակառակն հագուստի, կօշիկի եւ գործարանային մթերքներուն գիները կրկնակի կամ եռակի սուղ են։

Ի՞նչ պիտի ըլլայ վախճանը։ Ահա այս մասին է, որ կը խորհին պոլշեւիկ «տնտեսագէտները»։ Գէթ խաւօրաբար այս ինդրով պիտի զբաղի խորհուրդներու ապրիլեան համագումարը։

ԱՐԱ ԱՐՏՕՒԻԿ

ՊՈՒՏ ՄԸ ԺՊԻՏ

ՊԱՏԵՐԱԶՄ, ՊԱՏԵՐԱԶՄ

Շուտով կը սկսի պատերազմը, եւ դուք, տիկի՛ն, պիտի գրուիք։

Նկատի առէք թէ, տիկի՛ն, պատերազմին, որուն պիտի նակցիք առաջին անգամ, շացնեն ձեզ արդեօք։

Նախ, իտալացիները, որ խարհիս ամէնէն քաղաքմարդիկն են, սպասելին որ աղմուկը բարձրացնելու համ դարունը գայ։ Ձմեռուան պատերազմը տխուր բան է, տուտ եւ ապառողջ։ Մինչդարնան, հրաշալի՛ է. կապերկինքին մէջ ճերմակ ամպներ, անբիծ հորիզոնին վրայ տումներ, սաւառնականները պրդրու պէս, պարոյրներ պիտի անհունին մէջ։

Յետոյ թատրո՛ն, զինուորկան շարժունինե՛ր, կարելի՛ էր իրականը եւ աւելի գեղեցիկ տեսնել։ Աղքատիկ աղջիկը չնորհիւ Մուսոլինիի, պիտի թան տեսնելու Ռիվիէրան։

Իրենց բանակախումբը տի լարեն Մօն-Պոլոնի պարահին վրայ, մրտենիներու պատկառուկներու թուփերու տակ, անոնք պիտի բացատթէ ինչո՛ւ համար այրերը, ուելի եսասիրներ, զինուորները առանձնաշնորհները վերագած են իրենց։

Կարուհինե՛ր, ձեզի համարդէն պատրաստուած են մազգեստներ,— սկովտիական կարճ շրջազգեստներ, որոնց կան թիկնոցներ խոշոր ճակներով, թաղիքէ գդակներ աստիճանաւորիչներով։ Հագդո՛ւք ալ պիտի ունենաք աստիճաններդ, չքաղաքշնները կարգը ձերն է, ժապաւէնի պիտի շահիք ռազմանաւերուն վրայ, եւ այլեւս ճակատը չպիտի կարմրի։

Ակռ գատ, ուրիշ վեհանձն թիւն մըն ալ ցոյց պիտի տայ ձեզի։ Այս պատերազմը կուսանք ձեզի։ Ամբողջ փառքը ձեզինք ձեզի, վտանգներն որոնք անհնչան են։ Թո՛ղ հինուրնէ Ֆրանսական պատմական նախարարութիւնը ցնէ Հռոմի արքունիքին, եթէ Իտալիա զօրաշարժի թարկած է իր լեգէոնները Ֆրանսա կը բաւականանայ նոնց դէմ ղրկելով միա՛յն կիները։

Փ.

ՆՈՐ ԲԱՐՔԵՐ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԵՒ ՍԿԻԶ

Փրավտա պոլշեւիկեան պատմաճեռնթը (6 մարտ) կը պատմէ.—

Համայնավար երիտասարդ մը, Միշկէ Կրիշկին, անցեալ Հոկտեմբերին, Մոսկուայի նէմանեներէն մէկուն մէջ նստած թացաւ մանկամարդ աղջիկ մը հետ։ Շատ սիրեց այդ վերնի փխրիկը։ Եւ անոր յայտնեց թէ «մեծ»երու հետ յարաբերութիւններ ունէր, եւ կրնար պաշտօն մը գտնել իրեն։ Յետոյ աւելցուց թէ ինք մարքսիստ եւ պիտի սորվեցնէր քաղաքական օրինագիրքը, (առանց բուն անկարելի է դիրք ուզածդ գտնել)։ Ու աղջիկը ընդունեժամադրութիւն մը։

Եւ աղջիկը գնաց տղուն կրիշկին պայման դրաւ իրմէ նարարական նամակին փոխրէն համբոյր մը, միա՛յն համբոյր մը։ Արդ, համբոյրը տացաւ։ Կրիշկին գրեց նամակը, դրաւ դարակը, ըսելով թէ յանձնէ այն ատեն միայն, աղջիկը ընդունի գիշերը նել միասին։

Կատղեցա՛ւ աղջիկը։ Պատխանեց որ երբեք այդքան լկտի խօսքեր չէր լսած։ Յետոյ ատցուց որ կո՛յս էր ինք։

— Գրա՛ւ գնենք, պուռաց շին։ Մեր օրերո՞ւն, կո՛յս օրերո՛ւն, խնդալէն պիտի նեմ հիմա։ Կո՛յս, երանա՛յ կոյս ձեցիր պիս։

Վերջապէս կրիշկին առաջ

…ից ամերիկեան ձեւով դրաւ մը։ …ել աղջիկը փաստօրէն հաս…ատէր որ կոյս էր, պիտի առա…ար ինչ որ ուզէր։ Աղջիկը ըն…ունց գրաւը, որովհետեւ …ոխպուած էր ամէն գինով պաշ…տօն մը գտնել։

Ու գնաց Մասկուայի Բժշկ. կայանը, առաւ պաշտօնական քուղթը։ Ու գարձաւ Կրիշինի։ Համակնաւար երիտասարդ մըն էր։ Ամէն խնդրեց, որ, …ը այն ատեն խնդրեց, որ, ա…ը այն ատեն խոստումով, միա…անութեան խոստումով, միա…անութեան խոստումով, միա…ին պահակին։

— Եթէ ձեւականութիւն կը …փնտռես, վաղն իսկ կը կատա…րեմ։ Իսկ մինչեւ այդ կը սուր…րգրես։ Եւ առարաղրեց Թուղթ …ը, ուր գրած էր թէ այդ օր…, ուր գրած էր թէ այդ օր…ուրնէ սկսեալ Օր Շ.ն կ'ընդունէր …իքեւ իր կինը։

Աղջիկը նոյն գիշերը յանձ…նեց ինքզինքը։

Առաւօտ։

Կրիշին կ'առաջարկէ աղջկան որ մնայ։

— Ընչի՞նչ կ'ընդունիմ։ Խոս…տումս տուի կիրքի աղդեցու…թեան տակ։ Եթէ ամուսնանալ …պէտք ըլլայ նման պարագաներով, անհրաժեշտ է բռնել վեց …յարկէն տուն մը իբրեւ հարէ…մանոց։

Թժրա՛խտ աղջիկը վազեց դարակին մօտ, ուր կը կարձէր իր կուսութեան վկայա…կանը ու խոստմնագիրը։ Վեր…ցուած էին։

Իսկաւ գետին եւ լացա՛ւ, լա…ցա՛ւ երկա՛ր լացաւ։

Յետոյ յայտնեց որ դուրս չպիտի ելլէր. ո՞ւր երթար։ Մայրը չպիտի ընդունէր զինք։

—Ոստիկանն ու զոհասպանը քեզ …ամ գիւրին կը հանեն դուրս։

Ու երբ Կրիշին դուրը կը բա…նար, աղջիկը ծունկի եկաւ, քա…շեց թեւէն, կախուեցաւ ու քաշ…կռտուեցաւ, լացակոծ՝ աղաղա…կից որ չանպատուէ իր ա…նունը։

Կրիշին հրեց զայն ու դուրս կաւ։

Աղջիկը առաւ դանակը և մխեց իր կուրծքը։ Կրիշին դարձաւ ա…ջոց կանչել բժիշկ մը։ Վէրքը վտանգաւոր չէր. փաթ…թեցին վէրքը։ Աղջիկը կ'ապա…շէր որ իրեն թոյլ տրուի գոնէ որ մը միայն մնալ այդ սենեա…կին մէջ։ Կրիշին անդրդուելի էր, կանչեց ոստիկանը եւ ար…տաքսեց աղջիկը։

Դատարանին մէջ Կրիշին յայտնեց թէ չէր սիրեր այդ աղջիկը, նախ որ, որ եւ է քաղաքական զարգացում չունի, եւ իր խոստումը կատակ մըն էր միայն։ Համակնաւար երիտասարդը ըսաւ թէ, «համոզուած մարքսիստ» մըն է, եւ ինք, իբրեւ ոյզպիսին, զերծ է նախապաշարմունքէ եւ սիրային սկարուքիւններէ։

Կը հաւնորիի ձեռագիրները պրեղ մէկ էջի վրայ և մելանով։

ԱՆԲԱԽՏ ՄԸ ԵՒՍ

Մարսիլիայէն կը գրեն մեզի. — փետրուարի 23ին իր մահիկանացուն կնքեց կարապետ Թիւլպէնտեան կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ, հիւանդանոցին մէջ, 33 տարեկան հասակին մէջ։

Ծնած էր բաբերդի մէջ։ փոքր հասակին կորսնցուցած էր իր ծնողքը եւ պատանեկան տարիքի մէջ փոխադրուած պոլիս։ Էսայեան վարժարանը ձգելէ յետոյ կը մտնէ դեղագործական ասպարէզը, ուր կը մնայ մինչեւ պատերազմի մէջ։ Այնուհետեւ կը մտնէ որբահաւաք գործին մէջ եւ շնորհիւ իր յանդուգն եւ անվախ բնաւորութեան, բարեկեցիկը կը կատարէ իր պարտականութիւնը, կեանքը միշտ վտանգի ենթակայ։ Կ'ազատէ շատ մը որբեր եւ որբուհիներ, ենթակայ ոստիկանական հալածանքի, եւ յաձախ թուրքերու ատրճանակի հարուածներուն տակ։ 1922ի Փետրուար ամսոյ ծանօթ խուճապին ատեն կ'անցնի փարիզ, ուր կը զբաղի դարձեալ դեղագործութեամբ. հիւանդութիւնը կը ստիպէ զինքը անցնիլ Պիարրոս, ուր քանի մը ամիս մնալէ յետոյ, կը դառնայ Մարսիլիա՝ գրկելու համար սեւ հողը, այս օտար մայրենիին մէջ։ Ամուրի էր։ Դաշնակցական էր մինչեւ իր մահը։ Ուշիմ, գործնական, եռանդուն, եւ միանգամայն հաճելի բնկեր մըն էր։

Յարգանք իր յիշատակին։

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՔ

Հ. Մ. Ը. Մ. ի ՅԱՂԹԱՆԱԿԸ. — կիրակի օր Շ. Մ. Ը. Մ.ի (Ա.) խումբը գաւառի մէջ՝ Gournay-en Bray, շատ կարեւոր մրցում մը կատարեց եւ 6-0 յաղթական եղաւ։ Հայ խումբի հակառակորդն էր F. C. Gournay, որ նորմանտիի Ա. դասակարգի խումբերէն է (Gournay փարիզէն մօտաւորապէս 100 քիլօմէթր է, շատ գեղեցիկ քաղաք մը)։

Հայ խումբը դաշտ ելաւ շատ զօրաւոր կազմով մը։

Խաղի քսաներորդ վայրկեանին, հայ խաղացողները խաղին տիրապետեցին, որմէ քիչ վերջը շահեցան Ա. նշանակէտը՝ յետոյ երկրորդը եւ երրորդը։ Ֆրանսացիները որ երբեք յուսահատիլ չեն գիտեր, սկսան կատաղի խաղարկութեան մը, բայց անօգուտ։ Ա. խաղամասը լմնցնելու տասը վայրկեան կար, երբ հայ յարձակապահները ըրին չորրորդ նշանակէտը։

Երկրորդ խաղամասին, հայ յարձակապահները շնորհիւ միջնապահներու փաստերուն նշանակեցինհրդ.եւ 6րդ.նշանակէտերը։

Իսկապէս գնահատելի է Շ. Մ. Ը. Մ.ի այս յաղթանակը։

Այս առթիւ դարձեալ կը թելադրենք որ մեր խաղացողները միանգամընդմիշտ հրաժարին խաղի ընթացքին իրար քննադատելէ։

Մեր այս յաջողութիւնը բոլորովին անակնկալ մը եղաւ հանդիսատեսներուն, որոնք քնաւ չէին յուսար հայ խումբի մը կողմէ կանոնաւոր եւ նուրբ խաղարկութիւն։ Ֆրանսական միութեան նախագահը իր շնորհակալութիւնը յայտնեց հետեւեալ խօսքերով.— *«Զափազանց գոհ մնացած ենք հայ խումբին դեղեցիկ խաղարկութենէն, իրենց ներքաշնակ փաստերն ու նպատակաւոր հարուածները շատ քան սորվեցուցին մերիններուն»*. եւ փափաք յայտնեց միւս եղանակին հրաւիրել կրկին Շ. Մ. Ը. Մ.ի խումբը։

*** Շ. Մ. Ը. Մ.ի Ալֆոռվիլի մասնաճիւղի (Ա.) խումբը կիրակի օր Ալֆոռվիլի S. C. A. մասնաճիւղի (Ա.) խումբին հետ մրցում մը ունենալով, յաղթակոն ելաւ 0 ի դէմ 5 նշանակէտով։

Գ. Կ.

ՅՈՒԹՊՕԼ.— Անցեալ կիրակի, Սհատ Փօլճպի երկու մրցումներուն ալ, փարիզի Ա. եւ Բ. խումբերը պարտուեցան։ Սպանիական Guipuzcoaն շահեցաւ 3 նշանակէտ, 1 կորուստի փոխարէն, իսկ Ալգասը նոյնպէս 3 նշանակէտ։ Guipuzcoaն հինգերորդ անգամն է որ կը յաղթէ փարիզցիներուն, մինչ ասոնք միայն երկու անգամ պարտութեան ենթարկած են հիւսիսային Սպանիացիները։ Ալգասը մինչեւ հիմա չէր կրցած յաղթական ելլել։

*** Չեխերու եւ Աւստրիացիներու Ազգ. խումբերը իրենց տարեկան մրցումը կատարեցին Վիէննայի մէջ։ Աւստրիան յաղթեց 1-2 նշանակէտով։

*** Մարտ 24ին (այսօր) Միջինքի Շինգշաբթին, Սհատ փէրշինկի մէջ տեղի պիտի ունենայ Ֆրանսական եւ պելժ բանակներու տարեկան մրցումը, որուն պիտի յաջորդէ Ֆրանսայի Ազգ. խումբին խաղը՝ անգլիական Isthmian Leagueին դէմ։ Իտալիոյ հետ Ապրիլ 24ին կատարուելիք լուրջ հանդիպումէն առաջ, մարզանքի եւ փորձի գեղեցիկ առիթ մը պիտի ունենան Ֆրանսայի ազգային Ֆութպոլիստները։

ՋՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ. — Ջմեռնային 2րդ ոդիմպիական խաղերը տեղի պիտի ունենան Սէն-Մօրիցի մէջ։ Զուիցերիական Մասնախումբը մասնակցութեան հրաւէր ուղղած է 54 ազգերու, որոնք են հարաւային Ափրիկէ, Գերմանիա, կեդրոնական Ամերիկա, Արժանթին, Աւստրալիա, Աւստրիա, Պելճիգա, Պոլիվիա, Պրազիլիա, Պուլկարիա, Քանատա, Շիլի, Չինաստան, Քոլոմպիա, Քուպա, Ֆանիմարքա, Էքուաթէօր, Եգիպտոս, Սպանիա, Էսթոնիա, Միացեալ-Նահանգներ, Ֆինլանտիա, Ֆրանսա, Յունաստան, Մեծն-Բրիտանիա, Կուաթէմալա, Հայիթի, Հունգարիա, Հնդկաստան, Իրլանտա, Իտալիա, Ճաբոն, Եուկոսլավիա, Լեթթօնիա, Լիւքսէնպուրկ, Մեքսիկա, Մօնաքօ, Նիքարակուա, Նորվեկիա, Նոր-Զելանտա, Փարակուէ, Շոլանտա, Փերու, Պարսկաստան, Լեհաստան, Փորթուկալ, Ռումանիա, Ռուսիա, Սան-Սալվատօր, Շուէտ, Չեխոսլովաքիա, Թուրքիա, Ուրուկուէյ եւ Վէնեցուէլա։

Շ. Գնդ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀՐԻՇԻ ՄԸ ԳՈՐԾԸ.— Օպատիա բանուոր է եւ հայրիկ չորս զաւակներու։ Փրէսսուար փողոցի պանդոկին մէջ ունի փոքրիկ սենեակ մը, ուր կարելի չըլլալով բնակիլ իր ամբողջ ընտանիքով, զաւակներէն երկու մեծերուն համար վարձած էր դիմացի պանդոկին մէջ սենեակ մը։

Առջի օր, ճաշի պահուն, Օպատիայի առջինեկ տղան կը խնդրէ իր փոքրիկ քոյրէն, Հէրմանէն, որ երթայ բերէ վզնոցը իր սենեակէն։ Աղջնակը կը բարձրանայ սենեակ, սակայն չի վերադառնար։ Առջինեկ տղան կը վազէ հասկնալու համար պատահածը։ Մարդ մը արագօրէն կը հեռանար նոյն յարկէն։ Տղան ներս կը մտնէ եւ կը տեսնէ որ քոյրը ինկած է անկողինին վրայ, քունքին՝ վէրք մը, եւ արիւն ցաւկած է երեսին։ Անմիջապէս կը կանչէ անծանօթ մարդէն։ Ու սանդուղներն ի վար կը պոռայ.

— *Բռնեցէ՛ք։*

Երկու վարձակալներ կը հասնին ժարդուն եռեւէն։ Սակայն անծանօթը կը սպառնայ, վարձակալ մը գլխարկը կը թոցնէ, ու մարդը կը փախչի։ Որոշ կը թուի որ պակասաւոր մըն է։

Աղջնակը, քիչ յետոյ կը սթափի եւ կը պատմէ թէ ինչպէս անծանօթը իր եռեւէն ներս մտած եւ կոկորդէն սեղմելով, ուզած էր բռնաբարել։

ԲԱՐԻԼՕՅՄ.— Երկուշաբթի բարիլուսուն, Պ. Լանսատ քունէն ընդոստ արթնցաւ. դուրը ուժգնօրէն կը գարնէին։ Լանսատ աչքերը չփեց, ճակտունները թափեց, ու մտածեց։ Ո՞վ է ան, ու յանկարծ խորհեցաւ որ ցրուիչը կ'ըլլայ։ Է՛հ, ուսանողները շատ կը սիրեն ցրուիչին ձայնը, որ առտուն կանուխ կուգայ։ Քանի՛ քանի՛ ուսանողներ անհամբեր կը սպասեն որ դրացի դուռին գարնող ցրուիչը գարնէ իրենց դրան ալ։ Ցրուի՛չը, «փող է բերում»։

Լանսատ հագաւ հողաթափները եւ շփշփացնելով զնաց բանալ դուռը։

Զորցած կնիկ մը։

— *Բարիլո՛յ, ըսաւ։ Յետոյ լեզուն դուրս թափեց, պէշ օրհնութիւն մը կարդաց, դունդ մըն ալ թուք նետեց։ Եւ ատրճանակն ալ հանեց ու պարպեց։ Դնդակը խածաւ երիտասարդին երեսէն ու գնաց պատը մտաւ։*

Կինը խենթ մըն էր։

ԱՐՀԵՍՏՈՎ ՈՃԻԱԳՈՐԾ.— Պէկէն կը կոչուէր վարպետ մարդ մը, որ անցեալ օր, Ռըտօնի մէջ արճարան մը կը մտնէ եւ ախորժարեր մը կուլ տուած պահուն, կը հանէ ատրճանակը եւ գետին կը դամէ յաճախորդ մը։ Ոստիկանները կը հասնին եռեւէն, եւ կը ձերբակալեն տանը մէջ, ուր անակնկալ կերպով կը գտնեն ոճրագործին կնոջ դիակը անկողինի մը վրայ։ Ոճրագործը քանի մը օր առաջ, կը բարկանայ կնոջ վրայ, որովհետեւ իր տօնին օրը գաւաթ մը գինի չէր խմած, եւ կը սպաննէ անկողինի մէջ։ Դիակն անգամ չի վերցներ։ Ու արիւնի մէջ ձգած էր զայն։

ԲԻՐՕՎ ԿԸ ՍՊԱՆՆԵՆ.— Էփէրնէյի մէջ հողագործ Քարփէլ դաշտէն տուն կը դառնար, երբ հանդիպեցաւ իր երկու դրացիներուն որոնց հետ վէճ մը ունէր։ Ծանր խօսքեր ըրին իրարու, երբ բարի դրացիները վերցուցին իրենց բիրերը եւ քանի մը հարուածով սպաննեցին հողագործը։

ԲԱԶ ԱՂՋԻԿԸ.— Երկու գողեր Նանթէրի մէջ, աղջի գիշեր կը մտնեն տան մը մէջ, որ կը պատկանէր օրիորդի մը։ Գողերը ժողվրուած կ'ընեն, սակայն առարկայ մը կ'ինայ գետին։ Աղմուկէն կ'արթննայ աղջիկը և արճանակը առած՝ կը նետուի գողերուն վրայ։ Գողերը կը փախչին պատուհանէն, բայց աղջիկը կը հասնի եւ կը կրակէ։ Գնդակը կը պատժէ գողը։ Առտուն վիրաւոր գողը դարմանուելու կ'երթայ հիւանդանոց, ուր կը ձերբակալուի, եւ կը մատնէ ընկերն ալ։

ԳԻՆԻ ԼՈԳԱՆԻ.— Նիւ-եորքի մէջ մեծ գայթակղութիւն պատճառեց Պ. Քարոլի գինարբուքը, որուն հրաւիրուած էին իր բանակիները եւ գեղուհիներու խումբ մը։ Այս գինարբուքի գուարճութիւններուն ամէնէն հետաքրքրական թիւն էր դերասանուհի մը, որ շամփանեայով լեցուած աւազանի մը մէջ լոգանք ըրաւ գինով հարուստներու աչքին առջեւ։ Դատարան ինկած ըլլալով այս լուրը, Քարոլ դատապարտուեցաւ մէկ տարուան բանտարկութեան։

12 ՄԻԼԻՈՆԻ ՉԵՂՇՈՒՄ.— Չեղծումի գործ մը երեւան հանուեցաւ Փարիզի մէջ։ Արդէն իսկ ձերբակալուած են երկու հոգի, գլխաւորը՝ Մարսէլ Լըվէվրը 31 տարեկան։ Այս մարդը ամբաստանուած է թէ վատահութեան դեղծում գործելով եւ զանազան խաբէութիւններով կորդած է 12 միլիոն ֆրանք։ Մարսէլ գործի սկսած էր իբրեւ պարզ պաշտօնեայ սեղանաւոր Օպրիի քով։ Շուտով երեւան հանեց իր յատկութիւնները եւ շատ կարեւոր պաշտօնի մը դրաւեցաւ, լիակատար վստահութիւն շահելով։ Աւելի քան մէկ տարիէ ի վեր, առանձին կը գործէր իբրեւ յանձնառու, եւ մասնաւորապէս կ'աշխատէր իր վարպետին հաշուին։ Միեւնոյն ատեն, վարիչը կը դառնար շարժանկարի կարեւոր հաստատութեան մը։ Հաստատուած է որ թուղթերը կը կեղծէր եւ ուրիշ կարգի խարդախութիւններ կը կատարէր։

ՊԵՐԼԻՆի մէջ, տասնըչորս տարեկան պղրոցական մը սպաննեց իր ընկերը, ատրճանակը գանկին պայթեցնելով։ Յետոյ հայրիկին տունը գնաց անխոով, բայց ոստիկանները շուտով հասան...։

ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հոկտեմբերեան յեղափոխութենանտասնամեակին առթիւ հանմառուսական «Պրօլէտար» գրողներու ընկերութիւնը կը պատրաստէ ժողովածու մը, «պրոլետարական գրականութիւնը տասը տարուայ ընթացքին» ժողովածուն։ Ժողովածուն պիտի պարունակէ, 1.— «Պրոլետգրող»ներու լիակատար գրախօսութիւնը հիմնական ծանօթութիւններով։ 2.— Նոյնը այն մարքսիստ քննադատներու աշխատանքներու մասին, որոնք կանգնած են պրօլետարական իրականութեան տեսակէտին վրայ։ 3.— «Պրօլետգրող»ներու քննադատական աշխատութիւններու ցանկը եւ 4.— Պրօլետգրականութեան վերաբերեալ գրականութեան ցանկը։ Ժողովածուն պիտի ունենայ ընդհանուր յօդուած, ամէն մէկ բաժնի վերաբերեալ յատուկ յօդուածներ եւ պրոլետարեան գրականութեան վերաբերեալ կարեւոր փաստաթուղթեր, իբրեւ յաւելուած։

Կրիփը շոգենաւին մէջ.— *Ամերիկեան շոգենաւ մը, որ Նիւ Եորքէն կը մեկնէր դէպի Սան-Ֆրանչիսկօ, կը փոխադրէր 900 դինուոր, 425 ճամբորդ։ Կրիփը տարածուելով նաւին մէջ, բազմաթիւ անձեր մեռան, եւ հիւանդ պահակներուն թիւը հասաւ 60ի։*

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՅԵՐԵՒԷ ԱՄՍԱԳԻՐ, Դ. տարի թիւ 5 (Մարտ 1927), ճոխ եւ այլազան բովանդակութեամբ։ Տարեկան բաժնեգին 5 տոլար, վեցամսեայ՝ 3 տոլար։ Հասցէ, 13-15 Shawmut St. Boston, Mass. (U. S. A.)

ՀՐԱՉԻՆ, քաղաքական եւ հասարակագիտական ամսաթերթ։ Թիւ 1 (Մարտ) խմբ. Ս. Սարունի։ Պուքրէշ։ Տարեկան բաժնեգին 20 ֆր. Հասցէ, S. Saruni, Str. Smeului 7, Bucarest (Roumanie).

ԳԼՈՒՆ, երդիծաթերթ։ Բաժնեգին՝ 25 թիւի համար 20 ֆր.։ Հասցէ.— 45 Bld. Dondoukoff, Sofia (Bulgarie).

La loi de variation de la valeur et les mouvements généraux des prix, par Mentor Bouniatian, ancien professeur a l'Institut polytechnique de Tiflis. Paris, M. Giard, 1927:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (4)

ԳԱՐՈՒՆԸ ԵՒ ՋՄԵՌԸ

(ՀՆԴԿԱԿԱՆ ՀԷՔԵԹԹ)

Թարգմանեց Շ. Ն.

Սակայն Թուխթակը պատասխանեց.

Ողերդ ալ դիր ցոլազան
Եղի՛ր, եղի՛ր անընդման։
Իշխանուհին հնազանդեցաւ անմիջապէս, սակայն Թռչունը չէր գոհանար։ Ու կ'ազաղակէր.
Սպիտակ փիղին ճակտին վրայ,
Որ կաթ գետին մօտ կը կենայ.
Ողերդ ու մեծ գոհար մը կայ,
Որ՝ որ մէկն բերէ, քեզ տայ։

Իշխաններէն ո՛վ կարենայ,
Իմ գոհարն ճակտիդ վրայ,
Իշխանուհի՛, Թող որ ըլլայ
Որքա՜ղ իշխանն իօրըդ փեսայ։

Երբ իշխանուհին լսեց Թռչունին խօսքերը, անմիջապէս ինկաւ բոլոր գոհարեղէններըգետին նետուեց եւ անհամբեր իշխանը դրկեց հետեւեալ հրամանը.

Սակայն Թուխթակը պատասխանեց.

Ողերդ ալ դիր ցոլազան
Եղի՛ր, եղի՛ր անընդման։
Իշխանուհին հնազանդեցաւ անմիջապէս, սակայն Թռչունը չէր գոհանար։ Ու կ'ազաղակէր.
Սպիտակ փիղին ճակտին վրայ,
Որ կաթ գետին մօտ կը կենայ.
Ողերդ ու մեծ գոհար մը կայ,
Որ՝ որ մէկն բերէ, քեզ տայ։

Իշխաններէն ո՛վ կարենայ,
Իմ գոհարն ճակտիդ վրայ,
Իշխանուհի՛, Թող որ ըլլայ
Որքա՜ղ իշխանն իօրըդ փեսայ։

Երբ իշխանուհին լսեց Թռչունին խօսքերը, անմիջապէս ինկաւ բոլոր գոհարեղէններըգետին նետուեց եւ անհամբեր իշխանը դրկեց հետեւեալ հրամանը.

Բերէ՛ք քարն որ կը պսպղայ,
Սիպտակ փիղին ճակտին վրայ։
Առանց անգին այդ գոհարին,
Ջարդերս տգեղ պիտի Թուին։
Բերէ՛ք քարն որ կը պսպղայ,
Կաթ գետին մօտ՝ փիղին վրայ։

Ով որ բերէ գոհարն անգին,
Որ կը պսպղայ փիղին ճակտին,
Կաթէ գետին ափերուն վրայ,
Ան պիտ' ըլլայ իօրըս փեսայ։
Պիտի սիրեմ ես միայն զայն,
Որ կը բերէ քարն ալազան։

Իշխանները ո՛վ կարենայ,
Իմ գոհարն ճակտիդ վրայ,
Իշխանուհի՛, Թող որ ըլլայ
Որքա՜ղ իշխանն իօրըդ փեսայ։

Երբ իշխանուհին լսեց Թռչունին խօսքերը, անմիջապէս ինկաւ բոլոր գոհարեղէններըգետին նետուեց եւ անհամբեր իշխանը դրկեց հետեւեալ հրամանը.

Բերէ՛ք քարն որ կը պսպղայ,
Սիպտակ փիղին ճակտին վրայ։
Առանց անգին այդ գոհարին,
Ջարդերս տգեղ պիտի Թուին։
Բերէ՛ք քարն որ կը պսպղայ,
Կաթ գետին մօտ՝ փիղին վրայ։

Ով որ բերէ գոհարն անգին,
Որ կը պսպղայ փիղին ճակտին,
Կաթէ գետին ափերուն վրայ,
Ան պիտ' ըլլայ իօրըս փեսայ։
Պիտի սիրեմ ես միայն զայն,
Որ կը բերէ քարն ալազան։

Թոլոր իշխանները անմիջապէս մեկնեցան, փնտռելու համար մոգական ագամանդը։ Սակայն գերբնական ուժով մարդ մը միայն կրնար գրաւել ագամանդը։ Իշխաններէն ոչ ոք պիտի կրնար յաջողիլ։

Շատերը սպաննուեցան, ոմանք յուսահատ, հրաժարեցան։

Շմեռ լսեց այդ փորձութիւնը, զոր իշխանուհին կը հրամայէր կատարել իր հպատակներուն։ Երբ իմացաւ որ բազմաթիւ իշխաններ մեռած են այդ գոհաբախուզութեան ընթացքին, պոռաց.

— Այդ իշխանուհին քիչ մը շատ հպարտ կ'երեւի, պատերա՛զմ կը հռչակեմ իր հօրը դէմ։

Պատերազմը տեղի ունեցաւ։ Շմեռ յաղթեց։ Գերի բռնեց իշխանուհին եւ տարաւ իր պալատը, Թոզլով որ իր հետն առնէ միայն կանանչ Թուխթակը։

*
**

Գարուն, իր հիւղակին մէջ, կ'ապրէր խաղաղ ու պարզուկ։

Գիշեր մը, երբ անքուն մնացած էր, մտիկ ըրաւ շաղփաղփը Թռչուններուն, որոնք, մանգիներուն մէջ, իրարու կը պատմէին իրենց իմացած գաղտնիքները։

Գարուն հետաքրքրուեցաւ երկու Թռչուններու խօսքէն։ Այդ երկու քը Թառած էին իր հիւղակին պատուհանին առջեւի ճիւղերուն մէջ։ Կը խօսէին իշխանուհիի մը եւ ադամանդի մը մասին։

Վերջապէս, լսեց որ Թռչունին մէկը այսպէս վերջացուց իր զրոյցը։

Ով որ յանձնէ գոհարն անգին
Որ կը պսպղայ փիղին ճակտին,
Պիտի առնէ իշխանուհին
Աղուո՛ր, աղուո՛ր, աննըմանկինը։

Եւ գարուն սկսաւ երազել՝ բոլորովին արթուն։ Դ'երեւակայէր այդ իշխանուհին, հրեշտականման ու սքանչելի աղջիկը, եւ անմիջապէս փափաքեցաւ երթալ եւ տիրանալ այդ գեղուհիին։

Հագուեցաւ, դուրս ելաւ հիւղակէն եւ ըսաւ Թռչուններուն.

Կ'երթամ առնել գոհարն անգին,
Որ կը պսպղայ փիղին ճակտին։

Թռչունները պատասխանեցին.

Կրնա՛ս, գարուն, ա՛յ ճգնաւոր,
Դուն ոագմիկ չես, ոչ՝ Թագաւոր։

Երիտասարդը, հաստատակամ, ըսաւ.

Ես կը դառնամ շուտով իշխան,
Կ'առնեմ գոհարն ալ մոգական։

Այն ատեն Թռչունները անոր տուին հետեւեալ խրատները.

— Նախ ա՛ռ ծերունի ճգնաւորէն իր իմաստունի գուպը, յետոյ գնա՛։ Ճամբուդ վրայ գուն պիտի հանդիպիս բամպակենիի մը. ճիւղերէն կախուած են Թագ մը եւ պատմուճան մը։ Ա՛ռ եւ քալէ՛ ուղիղ, մինչեւ որ տեսնես կաթէ գետը։

Առտուն կանուխ, գարուն գնաց ծերունի ճգնաւորին մօտ, ինկաւ ոտքերուն եւ առանց յառաջաբանի ըսաւ.

Շա՛յր, ֆա՛յր, կ'այրի հոգիս սիրով,
Գիշեր ցորեկ երազելով,
Իշխանուհի մ'արեւադէմ,
Ջոր յաւիտեան պիտի սիրեմ։
Շա՛յր, կ'աղաչեմ, օգնէ՛ ինծի,
Տո՛ւր խրատներդ քու խելացի։

Սիրածս կ'ուզէ գոհար մ'անգին,
Որ կը պսպղայ փիղին ճակտին։
Շա՛յր, տուր ինձ ցուպդ իմաստունեան,
Որով առնեմ քարն ալազան,

Ցուրբ մարդը, քիչ մը զարմանահար, նայեցա՛ւ, նայեցա՛ւ իր սիրական աշակերտին։ Ուրախ ծախնդրական ոգին մէկ գիշերուան մէջ փոխակերպած էր զայն։ Ալլեւս անիկա երկչոտ երիտասարդ ճգնաւոր մը չէր, այլ կրակոտ ռազմասէր մը, որ պատրաստ էր նետուելու կեանքին եւ անոր վտանգներուն մէջ։

Ծերունի ճգնաւորը ժպտեցաւ, տուաւ իր ցուպը եւ անոր վրայ Թափեց իր ամբողջ օրհնութիւնը։

Գարուն վազելով հեռացաւ, անհամբերութեամբ եռուն իր ճամբուն վրայ գտաւ քամպակենին, որուն ճիւղերէն կախուած էին Թագն ու պատմուճանը, ինչպէս իրեն նկարագրած էին Թռչունները։ Կեցաւ եւ ըսաւ.

Ճիւղե՛ր, ճիւղե՛ր, եղէք բարի,
Թագն այդ անգին՝ տուէք ինծի։

(Շար.)

ով որ ալ ըլլան անոնք։ Զենք կրնար փափաքիլ որ Եւրոպայի պետութիւնները, պատերազմէն առաջ եղածին պէս, իրարու դէմ յանդիման կենան՝ երկու ճակատ կազմելով։ Գերմանիոյ շահերուն համապատասխան չէ առանձին զինակցութիւն կնքելը։ Ուրախ ենք որ Եւրոպա ալ նոյն նպատակին կը ձգտի»։

Փարիզի սերպ դեսպան Սփալայքովիչ առջի օր կրկին երկար տեսակցութիւն մը ունեցաւ Պոհանի հետ։ Դեսպանը հետեւեալը յայտարարեց մամուլին.—

«Սերպիա իր յոյսը դրած է Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին անդամ մեծ պետութեանց, մանաւանդ Ֆրանսայի արդարամտութեան վրայ։ Սերպիոյ դէմ ուղղուած ամբաստանութիւնները բացարձակապէս անհիմն են։ Եթէ Ալպանիոյ մէջ խռովութիւններ կան, պատճառը մենք չենք, այլ այդ երկրին ներքին քաղաքականութիւնը։ Պէտք չէ որ անվերջ անստգութիւն տիրէ ալպանական խնդրին վրայ, և միանգամ ընդ միշտ հասկցուի թէ Ալպանիա, անդամ Ազգերու Դաշնակցութեան, գերիշխան եւ անկախ պետութի՞ւն մըն է թէ իտալական թեւարկութեան ենթակայ երկիր մը։ Պալքանները Պալքանցի՞նե՞րուն կը պատկանին թէ ոչ։ Ազգերու Դաշնակցութեան կը պատկանի այս խնդիրները լուծել այս կամ այն ձեւով, ապագային ամէն վէճ անկարելի դարձնելու համար։»

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԵՐԸ 100 ԵՒ 20 ՖՐ.

ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎՆ ԱԼ ՎԱՒԵՐԱՑՈՒՑ

Ինչպէս կը նախատեսէինք, երեսփ. ժողովը եւս երեքշաբթի օրուան նիստին մէջ վաւերացուց կառավարութեան առաջարկը՝ ինքնութեան թուղթերը 375 ֆրանքէն 100ի եւ 40 ֆրանքէն 20ի զեղչելու մասին։

Անմիջապէս որ պաշտօնաթերթը հրատարակէ այս մասին Հանրապետութեան նախագահին հրամանագիրը, նոր գիները պիտի սկսին գործադրութեան դրուիլ։

Այս նոր օրէնքով, ինքնութեան թուղթերը երկու տարի արժէք պիտի ունենան, որով անոնք որ 1926ին կամ 1927ին առած կամ նորոգած են իրենց թուղթերը, պէտք չունին նոր դիմում կատարելու։

Ժողովին մէջ երեսփոխան փոլ Լաֆօն առաջարկեց, որ օտարականներու հետ ամուսնացած Ֆրանսուհիները ինքնութեան թուղթի համար կէս գին վճարեն։ Այս խնդրին քննութիւնը դրկուեցաւ ելմտական յանձնաժողովին։

Մարսէլ Հէրօ առաջարկեց, որ նոյնպէս կէս գին վճարեն բոլոր այն օտարականները, որոնք մեծ պատերազմին ծառայած են դաշնակից բանակներուն մէջ։ Կառավարութիւնը հակառակ է այս կարգադրութեան եւ յոյս չկայ, որ ընդունուի։ Այս խնդիրը եւս պիտի քննուի ելմտական յանձնաժողովին կողմէ։

Ինքնութեան թուղթերու որոշումը տրուեցաւ 125ի դէմ 418 ձայնով։

ՍՊԱՆԻԱՑԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՁՐԻ

Սպանիոյ արտաքին նախարարութիւնը հետեւեալ զեկոյցը կը հաղորդէ սպանիական մամուլին.—

«Արտաքին նախարարութիւնը հաճոյքն ունի ծանուցանելու հանրութեան թէ՝ ֆրանս. հանրապետութեան կառավարութեան մօտ կատարուած դիմումներու հետեւանքով եւ հիմնուած 1862 Յունուար 7ի սպանեւֆրանսական դաշնագրին վրայ, ընդունուած է որ մեր հայրենակիցները Ֆրանսայի մէջ գերծ ըլլան ինքնութեան թուղթի համար վճարելէ 1926 Նոյմ. 30ի հրամանագրին տրամադրած գումարները։ Հետեւաբար, այսուհետեւ Ֆրանսայի մէջ ինքնութեան թուղթերը ձրի պիտի տրուին Սպանիացիներուն։»

ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՇԱՆԿԱՅԻ ՄԷՋ

Ազգայնական կանոնաւոր բանակները, որոնք Շանկայէն վտարեցին հիւսիսայինները, քաղաքէն ներս չմտան, գոհանալով գրաւել միայն արուարձանները։ Զինական թաղերը կատարեալ քաոսային վիճակ կը ներկայացնեն։ Ամէն կողմ հրդեհներ կը լափեն քաղաքը։ Շափէյի շրջանին մէջ անընդհատ կրակ կը փոխանակուի հիւսիսային եւ հարաւային զինուորներու միջեւ։ Մէկ կողմէն բանէմոցները, միւս կողմէ դասալիք զինուորները կը կողոպտեն քաղաքը, անլուր խժդժութիւններ կատարելով։ Փողոցներուն մէջ աղիողորմ ճիչեր կ'արձակեն կիներ ու մանուկներ, որոնք բոլորովին կողոպտուած են, խռովարարները նոյն իսկ չեն խնայած անոնց հագուստներուն։ Չոս հոն, կողոպուտի համար կազմուած խմբակներ հրացանով կամ գնդացիրով կը յարձակին ամբոխին վրայ, հարուստ եւ ծաղկեալ Շանկայը դժոխքի մը վերածելով։ Դիակներ փռուած են ամէն կողմ։

Եւրոպական հողամասին վրայ ռումբեր ինկան, նիւթական մեծ վնասներ պատճառելով։ Միջազգ. զինուորներուն եւ Զինացիներուն միջեւ կռիւներ տեղի ունեցան. Զինացիներուն կորուստն է 17 սպանեալ։ Սպիտակ Ռուսերու Ջոկատ մը՝ որ դիրք բռնած էր գրահապատ կառախումբի մը մէջ, բուռն ընդհարում ունեցաւ ազգայնականներուն հետ, որոնք ի վերջոյ գերի բռնեցին գանոնք։

Ազգայնականները կրակ բացին անգլիական «Վինտիքթիվ» յածանաւին վրայ, որ Շանկայէն մէկ մղոն վար գետին մէջ կը կենար։ Յածանաւը փոխադարձեց եւ շարունակեց ռումբ արձակել, մինչեւ որ Զինացիները դադրեցուցին կրակը։ Զինական ռումբեր ինկան նաեւ ամերիկեան առանձնաշնորհեալ հողամասին վրայ։ Ուաշինկթընի մէջ մտահոգութեամբ կը հետեւին կացութեան։ 3000 ամերիկացի ծովային զինուորներ ճամբայ պիտի հանուին դէպի Շանկայ։

Երէկ առաւօտ ստացուած հեռագիրներ կը հաղորդեն նանքինի գրաւումը։ Հիւսիսայինները խուճապահար կը փախչին։ Նանքին գրաւուած է, Շանկայի պէս, առանց կռիւի։ Օտար կիներն ու մանուկները մարտանաւերով կը հեռանան քաղաքէն։ Անգլ. եւ ամերիկեան զինուորական ջոկատներ կը պաշտպանեն գանոնք։

Նանքինի գրաւումէն առաջ հիւսիսային զինուորները կողոպտեցին քաղաքը։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԻՈՅ ապստամբական շարժումին պետ Տօքթ. Շահպէնտէր առեւնէ մը ի վեր կը գտնուի Իրաքի մայրաքաղաքին մէջ։ կառավարութիւնը խիստ հսկողութեան տակ առած է այն տունը ուր լիշեալը ապաստանած է եւ խստիւ արգիլած շփում ունենալ տեղացի ժողովուրդին հետ։ Իրաքի խորհրդարանին մէկ անդամը կառավարութենէն բացատրութիւններ ուզած է այս առթիւ։

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ.— մեծ պահքի միջինքին առթիւ այսօր սովորականէն աւելի ճանդիսաւոր թափոր մը պիտի անցնի փարիզի գլխաւոր փողոցներէն։ Հանդէսներուն կը մասնակցին փարիզի արուարձաններու բոլոր ազատ համայնքները, օտար գաղութները եւ արհեստակցական մարմինները։ ընդամէնը 75 զարդարուն կառքեր եւ վեց նուագախումբեր պիտի ընկերանան թագուհիներուն։ թափորը ժամը 1ին պիտի մեկնի Նասիոնի հրապարակէն, եւ պատ-Թիյլի, Ռէփիւպլիքի, մեծ պուլվառներու ճամբով պիտի անցնի մտալէն, ռիւ Ռուայեալ եւ պիտի ցրուի ֆոնքօրտի հրապարակին վրայ։ ցետոյ թագուհիները րիվոլի փողոցի ճամբով պիտի դառնան վրայ։ ցետոյ թագուհիները պաշտօնական թագադրութիւնը օփերա, ուր գիշերը թագուհիին պատուոյ ճաշկերոյթ պիտի ունենայ։

Հ. Յ Դ. ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

վիճաբանական ժողովը վաղը Ուրբաթ երեկոյ ժամը 8ին

փլաս տ'Իթալի, ֆաքէ ֆլէռ-տը-Լիւնի վերնայարկը, մէթրօ՝ Իթալի

կը զեկուցանէ ԸՆԿԵՐ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

ՋԱՐԵԻԱՆԻ «Կրնա՞նք հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերուն մասին։

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Մարսէյլի շրջ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Ռոստոմ, Ջաւարեան, Իշխան, Քրիստափոր, Վարուժան, Վարդգէս, Վահապ ենթակոմիտէները, եւ Հ. Յ. Դ. Պատ. միութիւնը, յառաջիկայ կիրակի ամսոյս 27ին Ռիւ Սէն ժաք, սալօն Սէն ժաքի սրահը։ կը խնդրուի անդամատետրով ներկայանալ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։

Դիմել *Յառաջի* խմբագրատունը։

Ջ. Ո. ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

փարիզի Ջափհաս երկսեռ Ուրբերու Միութեան Բ. դասախոսական ժողովը՝ 27 մարտ կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ուկէսին Միութեան ընթերցարանը, (61Rue Mr. le Princei Métro: St. Michel կամ Odéon)։ կը դասախոսէ պ. կ. Յ. Բասմաջեան, շահեկան նիւթի մը շուրջ։ պիտի ցուցադրուի նաեւ մոգական լապտերով նիւթին հետ առնչութիւն ունեցող պատկերներ։

կը հրաւիրուին անդամները, համակիրները ու ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին այս դասախօսութիւնով։

*** Ջափ. երկս. Ուրբերու Միութեան երգչախումբի փորձերը այսուհետեւ տեղի կ'ունենան ամէն կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ուկէսին։

*** Ջափ. երկս. Ուրբերու Միութիւնը իր տարեդալձին առթիւ կազմակերպած է հրապարակային երեկոյթ մը 7 մայիս Շաբաթ երեկոյեան համար սալ տը ժէօկրաֆիի մէջ։ կը խնդրուի բոլոր կազմակերպութիւններէն՝նկատի ունենալ այս թուականը։

ՅՕՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Լիոնի գնունի խումբը յետ այսու ամէն երկուշաբթի երեկոյ տեղի կ'ունենայ ընկերական, դասախօսական, վիճաբանական, եւ ասուլիսի ժողովներ։

Հ. Յ. Դ. վիէնի շրջ. կոմիտէի ընդհ. վիճաբանական ժողովը՝ 27 մարտ, կիրակի կէս օրէ վերջ ժամը 2ին հայ ժողովրդային լսարանին մէջ։

ԼԻՈՆԻ ԽԱՐԲԵՐԴԻ եւ շրջակայ գաւառներու Հայրենակցական միութեան դասախօսական ժողովը՝ 27 Մարտ, Կիրակի առաւօտեան ժամը ճիշտ 9ին, 127.129 Rue Boileau Էմիլ Զօլայի վերնայարկը. դասախօս Մ. Փորհարեան։

Հ. Մ. Ը. Մ.ի Ալֆոռվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր անդամները եւ համակիրները ընդհանուր ժողովի 26 մարտ Շաբաթ երեկոյ ժամը 8ին, 108 Rue Etienne Dolet, ծանօթ սրահին մէջ. Օրակարգ՝ վարչութեան ընտրութիւն։

ՅԱՐԴԳՈՒՆԻ գրական երեկոն, այսօր ժամը 9ին, Ֆլօրիա, նուիրուած է պեն-Իովէնի, իր հարիւրամեակին առթիւ։ Օր. Նուարդ Գալփաքեան կը ներկայացնէ մեծ երաժիշտին կեանքն ու գործը։ երեկոն ունի նուագի բաժին։ կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

Հ. Յ. Դ. վիէնի շրջ. կոմիտէն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ընկ. վրթանէս փափազեանի փոքրիկն ցաւութիւնի մահուան առթիւ։ Մխիթարութիւն իր բոլոր պարագաներուն։

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՀԱՄԱՐ

կարդացէք եւ տարածեցէք *Ջարեւանդի* «Կրնա՞նք հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերը։ Ֆրանսայի համար 16 ֆր. արտասահման 18 ֆրանք փոստի ծախք չկայ։

Դիմել՝ Léon Kévonianի 208 bis Rue Lafayette. Paris (10me).

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Լիոնի կոմիտէն կը ծանուցանէ բոլոր ընկերներու եւ համակիրներու թէ՝ Դրադարան ընթերցարանը փոխադրուած է Rue Paul-Bert, թիւ 75, սրճարանի ներքնասենեակը։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի ՕՐ ԱՌԱՋ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել համապատասխան օրուան։

Կ'ՈՒԶՈՒԻ

Գործաւորներ՝ եւ գործաւորուհիներ գորգի խաւը կտրել գիտցող։ Դիմել պ. Իսկեճեանի 12, Rue de la Pyramide, Boulogne s/Seine, (փօրթ սէն-ֆլու)։

ԼԻՈՆԻ ՄԷՋ

"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՏՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ 15 բիւ տէ ֆօմինիքէն

ՎԻԷՆԻ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

Կ'ՈՒԶՈՒԻ

Գործաւորներ՝ եւ գործաւորուհիներ գորգի խաւը կտրել գիտցող։ Դիմել պ. Իսկեճեանի 12, Rue de la Pyramide, Boulogne s/Seine, (փօրթ սէն-ֆլու)։

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Լիոնի կոմիտէն կը ծանուցանէ բոլոր ընկերներու եւ համակիրներու թէ՝ Դրադարան ընթերցարանը փոխադրուած է Rue Paul-Bert, թիւ 75, սրճարանի ներքնասենեակը։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւորապէս գաւառներէն կը խնդրուի ՕՐ ԱՌԱՋ ղրկել ժողովի ազդերը, որպէսզի կարելի ըլլայ հասցնել համապատասխան օրուան։

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առանձնարոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՅՆԱԳԷՏ

ԹԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԸ

Փարիզի եւ գաւառներու հայութեան համար կը պատրաստէ

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԱՆԹԱՐԴԱԽ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ

Մեծաքանակ եւ փոքրաքանակ *Անմրցելի գիներով*

Մէկ փորձ բաւ է համոզուելու, հետաքաշով ապսպրանքները անմ-
ջապէս կը ղրկուին։ Թէլէֆոն։ Provence 38.63, Métro Cadet
26, Rue de Trévise Paris (9)

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 1-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ

Ճամեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Ծանօթագիր Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Պրուսայի կէմլէյիկի պէյնի գիւղացի պետրոս Շայրապետեան կը փնտռէ իր գիւղացիները, ու, յանուն մարդասիրութեան, կը խնդրէ որ Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Եգիպտոս կամ այլուր գտնուող պէյնիցիները ձայն երկտողով մը ծանուցանել իրենց հասցէն, գրելով՝ Bédros Hairabedianի՝ au Couvent Arménien St. Jacques. Jérusalem, Palestine.

— Սեբաստիոյ որբերէն Տրապիզոնցի Գասպար Սարեան որ Յունաստանէն Ֆրանսա եկած էր եւ մէկ ամիս առաջ Փարիզ կը գտնուէր։ Գրել՝ իր ընկերոջ Յարութիւն Շիրուանեանի Cité Bois II, No. 30, Nyoseau, par Segre (M. et L.)։

— Գրիգոր Տիլբիեան կը փընտռէ Սեբաստացի Խաչիկ Մըճճիկեանը, կը կարծուի որ Փարիզ կամ Մարսիլիա կը գտնուի։ Գրել՝ Sarkis Papérianի Chez Mr. Jacquemin, Volfroicourt (Vosges)։

ՓՈՐՁՈՒԱԾ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԻՀԻ

(Ֆրանսախօս եւ ռուսախօս) վկայեալ ֆրանս. վարժարանէ

Ընդունելութիւն Երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ, ժամը 1—4։ 6, Av. Ville d'Avray, Chaville (S. et O.)։

ԼԱԻ ԼՈՒՐ ՄԸ

ՔԱՇ ՓՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒՆ

Ձեր մետաքսները մի գնէք օրուան գինով։ Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն իրապարակի գինէն 5 ֆրանք աւելի աժան կը ծախէ։

Բաց է ամէն օր, նոյնիսկ Շաբ. մինչեւ իրիկուան ժամը 7ը։

կը խօսուի Թուրքերէն։

կահագործ աժան գիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կահոսիներ, գրասենեակի սեղաններ եւ այլն, ծախու են թրքական թուղթեր։ Դիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներու ժամագէտ եւ պատուաւոր խոհարար մը ճաշարանի կամ տունի մէջ։ Դիմել՝ մելիք տէր Յարգիսեանի 5, Rue Riboutté, (Face le square Montholon). Paris 9.

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՔԷ ՋԵԶԻ

ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մանաւանդ Լուսաբեր ընթերցարաններու եւ ձոխ մատենադարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Hagachène, 9 Agopian Han Tchakmakdjilar, Constantinople.

DOCTEUR PROY

Ex - Interne des Hopitaux

Médaille d'argent

Տօքթ. Յ. ԽՈՒՊԷՍԵՐԵԱՆ

Աշխատակցութեամբ

Կը խնամէ ներքին, կանանց, մոլեթարին, վէներական հիւանդութիւնները։ Բ. րակալայնութիւնները (varices) հիմնական դարմանում առանց գործողութեան։

Ամէն օր ժամը 10-12, եւ 2-8, կիրակի եւ տօն օրեր 9—12։

142 R. DU FB. St. DENIS

Կառ տը լ'Էսթի մօտ,

Հեռաձայն՝ Nord 31—49։

ՍԱԿԱՐԱՆ

23 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Սթերլին,	L. St.	124 00
Տոլար,	Dollar	25 54
Մարք (ոսկի) 100 Mark		605 75
Թրքական Թղթ. L. Trq.		112 80
Թրք. ոսկի	» or	115 —
Մէճիտիէ	Médjidié	8 75
Լէվա 100 հատ	Léva	18 50
Տրախմի »	Drachme	33 —
Լիր »	» Lire	117 75
Պելժ. ֆրանք	» Frc. Belge	70 —
Ջուից. »	Frc. Suisse	491 —
Լէյ 100 հատ	Ley	15 50
Ցերվոնեց	(10 Roubles or)	90 —

ԱՐԺԵԹՈՒՊԹ

եգ. ֆր. ֆոնսիէ	I Cr. Fonc. Eg.	3060 —
»	II »	1935 —
»	III »	1550 —
Ռումելի երկթղ.	Lots turcs	160 —

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITION

208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՐԱՉ

ԲԱԺԱՆԵՈՒՄՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շ.	40 շ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration Խմբագրութիւն 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՈՒՐԲԱԹ 25 ՄԱՐՏ 1927

25 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 294

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵԹԷ ՈՒԶԵՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻԼ

Գործազրկութեան տագնապը բաւական մեղմացաւ. բայց հայ աշխատաւորները տակաւին չեն ազատած մտահոգութենէ:

Նոյեմբերէն ի վեր, գործ չկար, եւ շատեր քաղաքէ քաղաք, գործարան կը թափառէին, ապրուստի ճամբայ մը գտնելու համար: Այսօր քիչ-շատ բացուած են գործերը, եւ հեռանկարը յուսալից է. բայց նոր անակնկալ մը կը սպառնայ ամբողջ աշխարհի օտարականներուն միտքը:

Քանի մը օր առաջ, հրատարակեցինք երկու աշխատաւորներու նամակները, որոնք իրապէս դժուար կացութիւն մը կը մատնանշեն: Գործատէրերը վկայական չեն տար, ինքնութեան թուղթերը փոխելու համար, եւ Աշխատանքի նախարարութեան հասցէն կը ցուցնեն: Այս վերջինն ալ վար կը դնէ հին թուղթերը, եւ օտար բանուորը անմիջապէս դուրս կը հանուի գործարանէն: Այնպէս որ, ոչ միայն անգործը գործ չի գտներ, այլ աշխատողն ալ կը կորսնցնէ ապրուստի միջոցը: Բազմաթիւ նամակներու կարգին, յիշենք հատ մը որ լայն գաղափար կուտայ կացութեան վրայ.

— «երեք տարիէ ի վեր Ռընոյի գործարանը կ'աշխատիմ: Փետր. 16ին ինքնութեան թուղթս նորոգելու համար գրասենեակ տարի եւ պաշարթի վկայականով միասին դրկեցին Աշխատանքի նախարարութեան: Գեռ թուղթերս չեմ գտած, մարտ 15ին հանեցին գործէ: Ինքնութեան թուղթս ուզեցի. «գնա՛ Աշխատանքի նախարարութենէն փնտռէ՛», ըսին: Գացի, 2—300 հոգի խռնուած էին դուռին առջեւ. Նոյս մտնելը՝ անկարելի: Ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս: երեք գաւակ ունիմ, 13, 9 տարեկան եւ 4 ամսուան: Հայաստանն ալ դուռնին ամուր փակած է մեր առջեւ:»

Երէկ ճիշտ այս խնդիրը կը յուզէր մերընկերվարական պաշտօնակիցը, Le Populaire. *Կառավարութիւնը հրահանգած է գործադրել 1926 Օգոստոս 11ի օրէնքը, որուն 64րդ յօդուածը կ'ըսէ,*

— «Արգիլուած է ո՛եւէ մէկուն գործածել՝ օտարական մը որ չունի «աշխատաւոր» մակագրութեամբ ինքնութեան թուղթ»:

Այս կարգադրութիւնը եղած է՝ տեղացի աշխատաւորները պաշտպանելու համար: «Ամէն նորեկ պէտք է պարտադրապատշաճ պայմանագիր մը ներկայացնէ, վաւերացուած՝ Տեղաւորման Գրասենեակին կողմէ: Բայց, եթէ այդ օտարականը Ֆրանսա կը գտնուի աւելի քան ութ ամիսէ ի վեր...»:

Եւ մեր պաշտօնակիցը օրինակներ ալ կուտայ: Օտարականներ կան որոնք աշխատանքի պայմանագիր ունէին: Բայց, անկէ ի վեր գործատէր փոխած, եւ իրենց սկզբնական պայմանագիրը կորուսած են: Կարգ մը հողագործներ դաշտերը լքած եւ քաղաքի մէջ գործ գտած են: Երբ գործ կար, մարդիկ բարակը չէին նայեր: Յանցանքը իրե՞նց է, եթէ այդպէս ձգած են: Յետոյ կան քաղաքական փախստականները, որոնք աշխատաւոր դառնալու հարկադրուած են եւ գործ գտած: Եթէ կը պատկանին արհեստագիտութեան մը ուր գործազրկութիւնը կայ, Տեղաւորման Գրասենեակը չի վաւերացներ, հետեւաբար, ինքնութեան թուղթ չեն տար, աշխատաւոր մակագրութեամբ: Անոնք պարտաւոր են վճարել 375 ֆրանք (այժմ 100). բայց երբեք աշխատանք չեն կրնար գտնել, նոյնիսկ եթէ գործազրկութիւնը դադրի: Շատ-շատ, կրնան ներկայացնել իրենց գործատէրին մէկ վկայականը, որ հաստատէ թէ կրնայ նորէն գործ տալ: Այդ պարագային ալ, պայման է որ ֆրանսացին չտուժէ:

Ո՞ւր է այս մանուածապատ կացութեան ելքը:

Մեր պաշտօնակիցը բացարձակապէս մերժելով սահմանէն դուրս հանելու ծրագիրը, կ'առաջարկէ ընդունիլ իրական, փաստական վիճակը, «այսինքն, օրինապէս ընդհ. ներում չնորհել այն օտար աշխատաւորներուն որոնք Ֆրանսա մտած են 1926 Օգոստոս 11էն, նոր օրէնքէն առաջ»: (Կ'ենթադրուի թէ անկէ վերջը եկողները անշուշտ ունին «աշխատաւոր» մակագրութիւնը): Աւելի պարզ խօսելով, «եթէ միայն մէկ տեղ կայ երկու բանուորի համար, մէկը Ֆրանսացի եւ մէկը օտար, թող Ֆրանսացիին տան գործը: Բայց, թող գործէ չհանեն օտարական մը որ կ'աշխատի:»

Ինչպէս կը տեսնէք, բոլորովին անճաար չեն օտարները, եւ անոնց հետ՝ մեր հայրենակիցները: Ցաւը հոն է որ, հայ աշխատաւորը գլուխ չունի: Զանազան մարմիններ պատահական ձեռնարկները կը կատարեն, երբ դիմում ըլլայ: Երբեմն ալ, ապուր կամ դրամ կը բաժնեն, իրրեւ գերագոյն պարտականութիւն: Ըսած ենք եւ կը կրկնենք,—ասոնք դարման չեն չարիքին: Եւ հայ աշխատաւորը գործ կ'ուզէ, ոչ թէ նպաստ: Մեզի ուղղուած բոլոր նամակներն ալ այդ կէտը կը շեշտեն, եւ կը թելադրեն որ հաւաքական ձեռնարկ մը կատարուի, կարգ մը խոշոր գործատէրներ կամ օրինական բծախնդրութիւններ հարթելու համար:

Մի՛ պիտի կատարէ այդ գործը: Հասկնալի է որ իշխանութեանց հետ բանակցելու խնդիր մը կայ այստեղ: Եւ քանի որ արհեստակցութիւն չի պակսիր, եւ նոյն իսկ ընդհանուր ներում առաջարկ մը կը դրուի աշխատաւորական օրկանի մը կողմէ, հարկ է օգտուիլ պատեհութենէն:

Մեր պաշտօնական օրկանները տակաւին ուրիշ ելքեր ալ գտնել, եթէ միայն ուզեն հետաքրքրուիլ, եւ լրջօրէն ուսումնասիրել դատ մը, որ ընդհանուր, ժողովրդական է, ոչ թէ զուտ արհեստակցական:

Չաւատա՞նք թէ լուրջ փորձ մը կատարուի, գոնէ այս ուղղութեամբ:

Շ.

ՄԱՄՈՒԼ

Ո՞ՒՐ ԷԻՆ...

«Մշակ», Քալիֆորնիոյ շրջանի անջատուած ռամկավարներուն օրկանը, խմբագրականի մը մէջ դիտել կուտայ (4 փետր.).—

— «*Տոքթ. Ա. Լ. Պարթըն եւ անոր համախոհները, գաղանի եւ հրապարակաւ, շարունակ «մոլորեցնել» աշխատեցան ամերիկեան առաջնորդները ի նպաստ Լօզանի դաշնագրին:*

«*Հայաստանի սահմաններուն ընդարձակումը*», կ'ըսէ *Տոքթ. Պարթըն*, «*կարելի է իրականացնել միայն ի վնաս Թուրքիոյ, նոյնիսկ ասիկա արդարութիւն պիտի չըլլայ Թուրքիոյ համար*»:

«*Ո՞ւր էր արդարութիւն վնասող Ասուծոյ այդ պաշտօնեան, երբ հարիւր հազարաւոր անմեղ հայ մանուկներ հազարաւոր կանգուն բարձր ժայռերէն վար կը թափուէին եւ ողջ ողջ մեծ փոսերու մէջ կը թաղուէին: Ո՞ւր էր այդ պաշտօնեան, երբ հարիւր հազարաւոր Հայեր աքսորի եւ ցաւի ճամբաներէն կ'անցնէին: Եւ երբ այսօր Ասուծոյ արդար մէկ հատուցումը կը գործադրուի ամերիկեան ժողովուրդէն, գետնէն բողոքող անմեղ զոհերու արեան վրայ միսիոնար մը, եւ այն ալ Ասուծոյ պաշտօնեայ մը ինքզինք կը տրամադրէ Թուրքերու պաշտպանութեան:*»

Շետաքրքիր էր իմանալ թէ հայանուն պարթըններն ալ բաժին ունի՞ն այս խօսքերէն...

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Երուսաղէմէն կը գրեն «Ազդակ»ի.—

Մօտաւորապէս հինգ ամիսէ ի վեր առեւտրական եւ տնտեսական խիստ ծանր կացութեան մը մատնուած է այս երկիրը, որ կարծես լոկ զբօսաշրջիկներու երկիր մը եղած ըլլար, կանայք տոլարներու կարօտը քաշող: Սնանկութիւնները, թէեւ քանի մը շաբաթէ ի վեր թեթեւցած կը թուին, սովորական գործի մը կարգն են անցեր: Պաղեստինի գլխաւոր քաղաքներէն՝ Եաֆայի, Հայֆայի, Երուսաղէմի մէջ ամէն շաբաթ գրեթէ չորս հինգ խանութ կամ առեւտրական հաստատութիւններ մնանկ կը հռչակուին: Գործաւոր դասակարգը օրէ օր իր օրավարձէն զրկուելով, անել եւ ողբալի վիճակի մը կը մատնուի: Մէկ խօսքով՝ անգործութիւնը սպառնական կը դառնայ հետզհետէ: Կառավարութեան կողմէ չանքեր եւ ճիգեր ի գործ կը դրուին, դարման մը տանելու համար այս վիճակին: Սիոնականներու հըրեայ կազմակերպութեան Պաղեստինի գործադիր մարմինը, մանաւոր ծրագիրներ մշակելով զբաղած է այս պահուն, անգործութեան առաջքը առնելու նպատակով:

Այս ցաւալի վիճակը իր դառն անդրադարձումը ունի նաեւ մեր երիցս քաշկռտուած եւ երկիրէ երկիր քշուած գաղթական հայրենակիցներուն վրայ:

Առնէկ մը ի վեր Անդրյորդանանի մէջ «Սեւ Թաթ» անունով կազմակերպութիւն մը երեւան եկած է: Այս գաղտնի կազմակերպութիւնը, կարգ մը բարձրաստիճան պաշտօնատարներու մահուան սպառնագրեր ղրկելով, դրամական պահանջներ ներկայացուցած է: Հակառակ կառավարական հսկողութեան եւ խուզարկութեան, կազմակերպիչները ու հեղինակները ցարդ երեւան չեն հանուած: Կը կարծուի թէ համայնավարական աջակցութիւն վայելող կազմակերպութիւն մըն է: Զանազան սպառնագրերու շարքին, Անդրյորդանանի Էմիրն ալ ստացեր է նմանօրինակ սպառնագիր մը:

ՕՐԸ ՕՐԻՆ

Թուրքեւդուս առեւտրական դաշնագիրը

Սովիէթներու արտաքին առեւտուրի պոլսոյ ներկայացուցիչը պ. Եուբիէֆ, հետեւեալ յայտարարութիւնները կ'ընէ Թուրքեւդուս առեւտրական դաշնագրին մասին.—

«*Դաշնագիրը քաղաքական եւ տնտեսական տեսակէտով մեծ օգուտներ կ'ապահովէ. ասկէ զատ, ան աստիճան մը եւս ամրապնդած է երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող քաղաքական յարաբերութիւնները: Թուրքիոյ հետ կնքած այս դաշնագրով, Ռուսիա իր առաջին արեւելեան դաշնագիրը կնքած եղաւ: Դաշինքը մասնաւոր կարեւորութիւն մը ունի այն տեսակէտով որ, Թուրքիոյ անկախութիւնը ամէնէն առաջ ճանչցուած է Ռուսիոյ կողմէ: Միւս կողմէ այս դաշնագրով լուծուած են երկու երկիրներու միջեւ ցարդ գոյութիւն ունեցող բոլոր վէճերն ու դժուարութիւնները:*

«*Թուրքիա կը ճանչնայ սովիէթական առեւտրական ներկայացուցիչները եւ Թուրքիոյ մէջ անոնց ունեցած կարգ մը մասնաճիւղերը: Ասկէ զատ առեւտրական ներկայացուցիչն ու անոր երկու օգնականները դիւանագիտական անձեռնմխելիութեան իրաւունքները պիտի վայելեն (Ծ. Խ.— Ներկայիս այս իրաւունքը կը վայելեն առեւտրական ներկայացուցիչ պ. Եուբիէֆ եւ իր երկու օգնականները պ. պ. Շահվէրտեան եւ Իպրահիմօֆ): Միւս կողմէ առեւտրական ներկայացուցչութեան էնկիւրիի կեդրոնն ու պոլսոյ մասնաճիւղը եւս անձեռնմխելի պիտի ըլլան:*

«*Սովիէթական եւ թրքական նաւերը փոխադարձաբար եւ ազատօրէն պիտի կարենան ռուսական եւ թրքական նաւահանգիստները հանդիպիլ: Այս առթիւ, երկու պետութիւնները յանձն առած են իրենց նաւահանգիստները հանդիպող շոգենաւերը ենթակայ պահել տեղական շոգենաւերու ենթակայ եղած մաքսային օրէնքներուն:*

«*Դաշնագրի պայմաններուն համաձայն, սովիէթական ազգ. ճարտարարուեստի զանազան ճիւղերը, (քարիւղ, չիմէնթօ, քաուչուկ եւլն.) առանձին առանձին իրրեւ ընկերութիւն պիտի արձանագրուին, եւ իբր անկախ ընկերութիւններ Թուրքիոյ մէջ մասնաճիւղեր բանալով գործունէութեան պիտի լծուին: Դաշնագիրը գործադրութեան պիտի դրուի վաւերացումէն ամիս մը յետոյ: Ցոյս ունիմ որ, Ապրիլի սկիզբը կը վաւերացուի, եւ Մայիսի սկիզբը գործադրութեան կը ձեռնարկուի: Նկատելով որ արտածումի եղանակը գրեթէ անցած է, դաշնագրին օգուտները ամէնէն աւելի առաջիկայ աշնան պիտի զգացուին:*

«*Դաշնագրին ստորագրութեան մեծ կարեւորութիւն կուտամ, նկատելով որ ան անգամ մը եւս պիտի ամրապնդէ երկու երկիրներու միջեւ արդէն գոյութիւն ունեցող ամուր կապերը:*»

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿՆՃԻՌԸ ՀԱՐԹՈՒԵԼՈՒ ՎՐԱՑ

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Փարիզի, Հռոմի, Լոնտոնի եւ Պերլինի մէջեւ խօսակցութիւնները շարունակուեցան առջի օր եւս իտալեւսերպ վէճը խաղաղութեամբ կարգադրելու համար: Պոհան դարձեալ ընդունեց Իտալիոյ, Սերպիոյ եւ Անգլիոյ դեսպանները: Լորտ Քրիւի այցելութիւնը ցոյց կուտայ թէ Անգլիա եւ Ֆրանսա կրցած են կարգադրութեան եղանակ մը գտնել՝ առանց դիմելու Ազգերու Դաշնակցութեան իրաւախոհութեան:

Օրուան կարեւոր խնդիրն է եռակօսալաւ կառավարութեան առաջարկը միջազգային գինուորական քննիչ մարմին մը ղրկելու մասին ալպանական սահմանը՝ տեսնելու համար թէ ճի՞շտ են Իտալիոյ վերագրումները՝ գինուորական պատրաստութիւններու մասին: Անգլիա, Ֆրանսա եւ Գերմանիա համաձայն են այս տեսակէտին՝ եթէ Իտալիա ընդունի:

Պելկրատի մէջ այս առաջարկին մասին տակաւին Իտալիոյ պատասխանին կը սպասեն: Անդրալպեան գործակալութեան մէկ հեռագրին համաձայն, Իտալիա շատ տրամադիր չէ ընդունելու այսպիսի առաջարկ մը, առարկելով որ Սերպիա արդէն ժամանակ ունեցաւ իր զօրքերը սահմանէն ետ քաշելու, այնպէս որ արդէն շատ ուշ է այդպիսի քննութիւն մը կատարելու համար: Ասկէ զատ, կայ նաեւ Գերմանիոյ օրինակը. հակառակ միջազգային գինուորական հակակշռի ժամմիններու ներկայութեան, Գերմանիա կրցաւ ուզածին պէս գինուորական պատրաստութիւններ տեսնել:

Իտալական թերթերը ալպանական այս վէճին առթիւ կարգ մը թշնամական վերագրումներ կ'ընեն Ֆրանսայի: Այսպէս, «Թրիպունա» կը գրէ թէ Մարտ 16ին Ֆրանսացիէ մը ստացած է նամակ մը, որուն մէջ կ'ըսուի թէ տասնըմէկ սերպ եւ չեխոսլովակ կարեւոր անձնաւորութիւններ, բոլորն ալ Ֆրանմասօն, Դեկտեմբերի վերջերը Փարիզի մէջ գաղտնի ժողով մը գումարած են, նախագահութեամբ Նախկ. սերպ նախարարի մը: Ժողովին մէջ որոշուած է ալպանացի կարգ մը կաթոլիկ քահանաներու օժանդակութեամբ ապստամբական շարժում մը կազմակերպել՝ սահմանին վրայ խռովութիւններ յարուցանելու եւ Իտալիոյ միջամտութիւնը առաջ բերելու նպատա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԵԼԻՔԷ ԶԱՐԵՆՑ ԱՐՁԱԿՈՒԱԾ

Ինչպէս կը յիշուի, կոմունիստ բանաստեղծ եղիշէ Չարենց անցեալ տարի սեպտեմբերին, փոդոցին մէջ, անպարկեշտ առաջարկ մը ըրած էր հայ օրիորդի մը եւ մերժումի հանդիպելով, ատրճանակ քաշած:

Երեւանի դատարանը երեք տարի պատիժ սահմանեց այս արարքին համար: Այժմ «Խորհրդային Հայաստան»էն (9 Մարտ) կ'իմանանք թէ՝ դեկտ. 29ին, Չարենցի կնոջ հիւանդութեան եւ մահուան առթիւ, 7 օր արձակուրդ արուած է անոր: Ցետոյ, «Չարենցի հոգեկան առանց այն ալ խանգարուած վիճակին օգնեց անոր կնոջ անակնկալ մահը: Անոր հոգեկան վիճակը այնքան վատթարացաւ, որ անհնար դարձաւ կալանքի տակ պահել: Պրոֆ. Արգումանեանի նախագահութեամբ եւ բժ. Գրոյի եւ բժ. Լուսինեանի անդամակցութեամբ կազմուած բժշկական յանձնաժողովը ցունուար 8ին քննելով Չարենցի հոգեկան վիճակը, գտաւ որ զայն յառաջիկային կալանքի տակ (բանտ) պահելը վերջնականապէս կը քայքայէ անոր առողջութիւնը»:

Այս հիման վրայ, Երեւանի գլխաւոր դատարանը ցունուար 18ին որոշեր է բանտարկութեան փոխարէն հաստատել «հարկադիր բժշկութիւն», բանաստեղծը ուղարկելով սանատորիում մը:

ԱԶՄԻ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Տլսրահուչակ Ազմի պէյ, Թիթիհատին օրով պոլսոյ ոստիկանական սնօրէն եւ պատերազմի ընթացքին Պէյրութի կուսակալ, Թուրքիայէն անցած է Պէյրութ: Սուրիական Թերթ մը՝ «Օրիան» կը գրէ.— Մեծ անակնկալ մը եղաւ Պէյրութի փողոցներուն մէջ վերերեւումը Ազմի պէյի, որուն անձին հետ կապուած են մեծ պատերազմի ընթացքին գործուած բոլոր խժդժութիւնները: Մեզի համար անհասկնալի կը մնայ Թէ ի՞նչպէս արտօնուած է յիշեալը ոտք դնել Ֆրանսական հոգատարութեան ենթակայ այս երկիրը: Պէյրութի գլխուն եկած բոլոր դժբախտութեան հեղինակն ըլլայ այն Թէ ձեմալի ձեռքը պարզ գործիք մը՝ ժողովուրդը կեղեքելու համար, իր ներկայութիւնը անհանդուրժելի է Պէյրութի քրիստոնեայ եւ իսլամ բնակչութեան»:

Ու կը պահանջէ պատկանեալ իշխանութիւններէն որ Ազմի Անատոլու վերադառնայ «ամենակարճ ճամբով»:

Արաբերէն «Հիւար» եւ «Հիվայ» Թերթերն ալ նոյն պահանջը կը դնեն: «Հիւար» իր խմբագրականին մէջ կ'ըսէ.

—«Մենք չենք կրնար մոռնալ պատերազմի ժամանակ Ազմիի մեր վրայ գործ դրած ճնշումները, որոնք աւելի սոսկալի էին քան ձեմալ փաշայի ըրածները: Ան Թուրքիոյ մէջ Թուրանականութեան հիմը դնող չորսերէն մէկն է: Ձեմալ մեր քաղաքին մէջ կախաղաններ Թողուց, իսկ Ազմին՝ սով, աւեր եւ կախաղան: Մարդիկ այնքան կը վախնային Ազմիէն, որ անոր չտեսնուելու համար, իրենք գիրենք տուներու մէջ կը բանտարկէին:»

Պէյրութի իսլամ երեսփոխան հայատեաց ծամը ցաւագ, ինչպէս նաեւ մեծահարուստներ ֆէրճ եւ Թրօա հացկերոյթներ տուած են Ազմիին:

Կը կարծուի Թէ Ազմի քաղաքական որոշ պաշտօնով գացած է Պէյրութ:

Ինչպէս կը յիշուի, անցած տարի Իթթիհատականներու դատին պահուն, Ազմի անպարտ արձակուած էր:

ՌՈՒՍ. ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Մարտ 12ին լրացաւ Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեան տասնամեակը։

Ռուս մամուլը, բնականաբար, լայնօրէն զբաղուեց այդ տարեդարձով։ Անգամ բոլշեւիկները այդ օրը ոչնեցին շքեղ հանդէսներով ու յոբելինական հրատարակութիւններով։ Մարդիկ, որոնք դահիճը դարձան այդ յեղափոխութեան, արեան մէջ խեղդեցին ու սպաննեցին նրա բոլոր նւաճումները, այժմ կուրծք են ծեծում՝ ցոյց տալու համար, թէ իրենք մեծագոյն յարգողն են այդ յեղափոխութեան։ Շնական կարելի է լինել, բայց ա՛յդ աստիճանի...

Ռուսաստանի յեղափոխութիւնը միայն Ռուսներին չէ, նա հետեւանք էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների թափած ճիգերի։ Նրա լուսաւոր ու մութ արդիւնքները սեփականութիւն են նոյն այդ ժողովուրդների։ Եւ հայ աշխատաւորութիւնն եւս իր հողու եւ մտքի, իր աշխատանքի եւ արեան մասնիկը ունի նրա մէջ։

Շատ կիրք է դիզուած դեռ փետրուարեան (*) յեղափոխութեան շուրջ։ Նրա գերակատարներից շատերը տակաւին շարունակում են կենդանի քաղաքական պայքարը եւ, հետեւաբար, հանդիսանում են այս կամ այն կուսակցութեան գործիչը։ Այսպիսի պայմաններում խիստ դժուար է տալ առարկայական գնահատանքը կատարւած դէպքերի եւ նրանց մասնակից դէմքերի։ Եւս առաւել, որ յեղափոխութեան թշնամիները այջից ու ձախից, փրփուրը բերաններին, առանց յոգնելու շարունակում են տարածել ստի ու զրպարտութեան թոյնը, յեղափոխութեան եւ նրա գործիչների մասին։

Հատորներ են գրւել ու տակաւին պիտի գրւեն, բայց փետրուարեան յեղափոխութեան պատմութիւնը մնում է դեռ չգրւած։ Իսկ գաղութահայ ընթերցող զանգւածների մեծ մասի համար նա բոլորովին անծանօթ նիւթ է, թերեւս, աւելի քիչ ծանօթ, քան, օրինակի համար, քաղամարաիկ զօրավարների կռիւները Չինաստանում, որոնցմով լեցուն են թերթերի էջերը։

Ներկայ յօդուածի նպատակն է տալ ամփոփ պատկերը Ռուսաստանի յեղափոխութեան։ Լրագրական նեղ էջերում հնարաւոր չէ պատմութիւնը, այդ իսկ պատճառով մենք պիտի սահմանափակւինք միայն ընդհանուր ակնարկներով։

Փետրուարեան յեղափոխութիւնը կոչւում է նաեւ երկրորդ յեղափոխութիւն։ Առաջինը տեղի ունեցաւ 1905ին, իբրեւ անմիջական հետեւանք պարտութեան ճապոնական պատերազմի մէջ։ Այն ժամանակ, սակայն, ցարիզմին յաջողւեց սանձահարել ժողովրդական տարերքը եւ պոչատ սահմանադրութեամբ՝ պահպանել միապետութեան գահը։

Վերջին յեղափոխութիւնն էլ ծնունդ առաւ պատերազմից։ Երբեք տարւայ պատերազմի արհաւիրքներից ու աղէտաւոր նահանջներից զազրած՝ ռուս ժողովուրդը ըմբոստացաւ անդուլ մոլեգնութեամբ, եւ ցարիզմի գահը ճարճատեց ու խորտակւած ընկաւ։ Արդէն իսկ փտած էին այդ գահի հիմքերը։ Ցարական պալատը դարձել էր անբարոյականութեան օրջ։ Նրա մէջ բոյն էին դրել զանազան բախտախնդիրներ, Ռասպուտինի պէս թշւառականներ, որոնք օգտագործելով թագուհու միամտութիւնն ու թագաւորի կամազրկութիւնը՝ իշխանութիւնը դարձրել էին գործիք մի փոքրիկ ու զազրելի սակաւապետութեան ձեռքին։ Մինչ երկիրն ու բովանդակ ժողովուրդը՝ ուժերի զերազոյն լարումով՝ տանում էին պատերազմը, իշխանութեան գլուխ կանգնած մարդիկ զբաղւած էին ներքին դաւերով, աթոռի կռւով, պետական գանձը թալանելով։ Նախարարները փոխւում էին մէկը միւսի յետեւից. նախարարներ նշանակողը փաստօրէն Ռասպուտինն էր՝ մի տգէտ, հազիւ անունը գրել գիտցող մուժիկ, որ թագուհու սանձը բռնած՝ դարձել էր 150 միլիոն բնակիչ ունեցող եւ աշխարհի մէկ վեցերորդ մասը կազմող կայսրութեան ճակատագրի տնօրինողը։

Պետական Դուման, որ երկրի օրէնսդրական հիմնարկութիւնն էր համարւում եւ բաղկացած էր մեծ մասամբ աջակողմեաններից, միակ վայրն էր, ուր դեռ մերթ ընդ մերթ լսելի էր լինում ազատ խօսքը։ Բայց կայսերական պալատը նրա դէմ էլ միջոցներ ձեռք առաւ, կառավարութիւնը համարեա թէ հաշւի չէր առնում նրան։ Միւս կողմից մամուլը դրւած էր դաժան զրաքննութեան տակ, ժողովներն արգիլւած էին, բանտերն ու աքսորավայրերը լիքն էին քաղաքական բանտարկեալներով։ Երկիրը ապրում էր դերազդիռ մի վիճակ։

Այսպիսի պայմաններում՝ բնական է որ ամէն կողմից գլուխ էր բարձրացնում դժգոհութիւնը, որը աստիճանաբար, մանաւանդ, 1916ի վերջերին, երբ պարտութիւններն իրար յաջորդեցին արեւմտեան ճակատում, ռուս ժողովրդական տնտեսութիւնն սկսեց չղիմանալ պատերազմի քայքայիչ հարւածներին, 15 միլիոնից աւելի զօրաշարժի ենթարկւածների եւ թիկունքի զանգւածների մէջ ծայր տւեց բողոքը, յաճախացան ժողովրդական խմորումները, մանաւանդ, պարենաւորման հողի վրայ, հացի եւ զանազան մթերքների համար խանութների առջեւ կազմւած «պոչ»երը դարձան յեղափոխութիւնը հրահրող օջախներ։ Եւ հացի սակաւութեան պատճառով էլ բռնկւեց յեղափոխութիւնը։

1917ի — հին տոմարով— փետրուար 28ին, երբ ամբողջ Ռուսաստանը ճմլւած ընկած էր ցարիզմի բիրտ կրունկին տակ, Պետրօգրատում, պայթեց յեղափոխութիւնը։ Անսպասելի, ինչպէս կայծակը պայծառ երկնքում։ Պարէնի ու հացի պակասը առաջ բերեց խմորումներ շուկաներում։ Ապա բռնմութիւնը դուրս եկաւ փողոց։ Երեւացին կարմիր դրօշակներ։ Հնչեց յեղափոխական երգը։ Շարժման միացան եւ մայրաքաղաքի զօրքը։ Եւ Ռոմանովների ինքնակալութեան վիթխարի շէնքը փուլ եկաւ՝ խաղաթղթերից շէնւած դղեակի պէս։ Կառավարութեան խեղճուկ ճիգերը փրկելու գահավիժող կայսրութիւնը անցան ապարդիւն։ Ո՛չ մի ձեռք չբարձրացաւ պաշտպանելու համար, երէկւայ հզօր ինքնակալին։ Ցարիզմը զարձել էր զատարկ հսկիթի կճեպ՝ անբովանդակ ու անպէտ։

Երկրի իշխանութիւնը անցաւ պետական Դումայի ստեղծած կոմիտէին ձեռքը։ Մոռյլ, հարատահարւած, տգիտութեան եւ աղքատութեան, կեղտի ու ցեխի մէջ թաւալող Ռուսաստանի զլխին ծագեց ազատութեան արեւը։ Համաժողովրդական ցնծութիւնը անսահման էր։ 150 միլիոնոց երկիրը զարձել էր մի մարդ, մի հոգի և ապրում էր երջանկութեան բացառիկ օրեր։

Յեղափոխութիւնը եղաւ բոլորովին անարիւն։ Բռնապետութիւնը ընկաւ փտած ծառի պէս։ Ցարը ոտորագրեց հրաժարականը։ Նրա յաջորդն եւս, Միխայիլը հրաժարւեց։ Առանց յայտարարելու՝ Ռուսաստանը դարձաւ Հանրապետութիւն։ Պետական Դումայի իշխանութեան գուգընթաց ստեղծւեց մի նոր իշխանութիւն՝ յանձին Պետրոգրադի բանւորական և զինւորական խորհրդի։ Աստիճանաբար յաստեղ փոխադրւեց իշխանութեան ծանրութեան կեդրոնը։ Յեղափոխութիւնից ծնունդ առած առաջին կառավարութիւնը իշխան Լվովի նախագահութեան ակ՝ շատ շուտով զգաց, որ իր ոտքի տակի հողը սահուն է։ Բուրժուազիայի եւ աշխատաւորութեան կօալիցիա էր այդ կառավարութիւնը. սակայն, բուրժուազիան չէր հաւատում աշխատաւորութեան եւ աշխատաւորութիւնը՝ բուրժուազիային։ Եւ որովհետեւ յեղափոխութեան մղիչ ուժը աշխատաւորութիւնն էր, առաջին հերթին զօրքը, ապա՝ բանւորութիւնը եւ արմատական մտաւորականութիւնը, այլեւ յեղափոխութեան նշանաբանները արտայայտում էին աշխատաւորութեան զադափարները։ Այդ պատճառով հակամարտութիւնն այդ երկու հոսանքների միջեւ երթալով սրւեց, լայնացաւ, խորացաւ եւ հասաւ այնտեղ, որ բուրժուազիան քաշւեց մի կողմ եւ բովանդակ իշխանութիւնը անցաւ աշխատաւորութեան ձեռքը։ Այդ իշխանութեան կրողն էր Ա. Քերենսկիի ժամանակաւոր կառավարութիւնը, որ կազմւած էր ղլխաւորապէս ընկերվարականներից եւ գործում էր յեղնւած՝ բանւորական եւ զինւորական խորհրդների վրայ։ Ինքը Քերենսկին ռուսական յեղափոխութեան խորհրդանիշն էր։

Իշխանութիւնը, սակայն, անասելի ծանր ժառանգութիւն էր ստացել հին ռէժիմից, — պատերազմը, եւ քայքայւած ժողովրդական տնտեսութիւնը։ Այս երկու աղդակները եղան ցարիզմի գերեզմանափորներն ու յեղափոխութեան յաղթանակն ապահովողները։ Միաժամանակ նրանք հանդիսացան եւ նոր ռէժիմի վիրաւոր կողմը։ Ցարիզմը տապալող ժողովուրդը տենչում էր ազատւել պատերազմից, որը սկսել էին «ցարը, կալւածատէրերն ու բուրժուաները», սակայն նոր իշխանութիւնն էլ կանգնած էր պատերազմը մինչեւ պատւաւոր վախճանը հասցնելու տեսակէտի վրայ։ Գիւղացութիւնը որ տիրացել էր ազատութեան, ցանկանում էր անմիջապէս ստանալ եւ հողը, այն ինչ կառավարութիւնը հողային հարցի լուծումը կապում էր Սահմանադիր ժողովի հետ։ Միւս կողմից, ծայրայեղ տարրերը խաղում էին տգէտ զանգւածների թերահաւատութեան վրայ, զրգռում էին նրան պատերազմի եւ պատերազմի կողմնակից կառավարութեան դէմ։ Գոհ չէր եւ բուրժուազիան, որ վերադւած նոր իշխանութեան ընկերային ծրագիրներից, դաւեր էր լարում նրա դէմ՝ նորից երկրին դեկը իր ձեռքն առնելու եւ իր տիրապետութիւնն ապահովելու համար։

Հակասութիւնների այս խըճճած ցանցի մէջ վիճակւեց դուրս գալու յեղափոխական իշխանութեան, եւ նա հերոսական ճիգերից եւ զերազոյն պայքարից յետոյ տեղի տւեց՝ անպատկառ խուժանավարութեան եւ ունեւոր դասերի բթամտութեան առջեւ։ Հոկտեմբերը կուլ տւեց փետրուարը։ Գարնան օրերին բացւած յոյսի ծաղիկները արմատախիլ արւեցին ու կոխոտւեցին հոկտեմբերի ցեխերի մէջ։ Անտեմբերին, ժողովրդական յեղափոխութիւնը վերածւեց մեծագոյն ապանդանոցի, ուր միլիոններ մէկ մէկի դէմ ելան ու զազանական ընազդով սկսեցին յօշոտել միմեանց։

Փետրուարեան յեղափոխութիւնը ժողովրդական յեղափոխութիւն էր։ Նա բռնկւեց յանուն ազատութեան եւ ժողովրդապետութեան, եւ նրա պարզած դրօշակը մինչեւ վերջ էլ մնաց անաղարտ։ Նա պարտւեց բիրտ ուժից, տգիտութիւնից, զազրելի խուժանավարութիւնից, միջոցների մէջ խտրութիւն չդնող անխղճարգիր մի սակաւապետութիւնից։ Նա պարտւեց, բայց նրա գաղափարները կենդանի են եւ վաղը նորից պիտի դառնան պայծառ փարոսը ռուս ժողովրդի քաղաքական - ընկերային ճանապարհի վրայ։

Ս. Վ.

(*) Ռուսաստանի յեղափոխութիւնը պայթեց փետր. 28ին, այդ պատճառով նա կոչւած է փետրուարեան եւ հակադրւած է Հոկտեմբերեանին՝ բոլշեւիկների յեղաշրջումին։

Եղա՞ծը կեդրոնացնել թէ նոր ուղի ընտրել

Բ.

Ցաւը պարզելէ ետք, խորհինք դարմանի մասին։

Նախ անհրաժեշտ է կազմել ձեռնհաս անձերէ վարիչ մարմին մը, ընկերային հիւանդութիւններուն դէմ պաշտպանութեան գործը վարելու համար։

Մեր կարծիքով, կարմիր խաչերն են որ պիտի ստանձնեն այդ ծանր հոգը. աջակցութեամբ անհատ բժիշկներու կամ Բժշկ. Միութիւններու հոն ուր կան։ Ներկայիս բոլոր երկիրներու կ. խաչերու գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմեն ընկերային հիւանդութեանց դէմ պայքարը եւ անոնց զոհերուն օգնութիւնը։

Այդ պայքարը պէտք է տարուի երկու ուղղութեամբ — կանխել եւ բուժել։ Իրականին մէջ հիւանդներու դարմանումը կարեւոր օղակը կը կազմէ կանխարգել պայքարին, քանի որ հիւանդութեանց տարածման շատ մը բոյներ կը մարուին, ինչ որ առաջնակարգ կարեւորութիւն ունի մասնաւորաբար թոքախտին դէմ պաշտպանուելու գործին մէջ։

Հետեւաբար ընկերային հիւանդութեանց դէմ պայքարող ընկերակցութեան մը հիմը պիտի կազմէ կանխարգել պայքարը։

Ըսենք թէ մատնանշուած հիւանդութիւնները մեծ ծաւալ կը ստանան, շնորհիւ կարգ մը ընկերային պայմաններու։ Ընդդէմ ծրագրուած ընկերակցութիւնը հաղիւ թէ կարենայ բան մը ընել։ Սակայն չարիքին տարածման հիմնական ազդակ մըն է նաեւ ժողովրդի այն խոր տգիտութիւնն ու անհատական նախապաշարումները որոնք հակայ պատնէշ մը կը կազմեն անոր առողջութիւնը բարելաւելու համար կատարուած ոեւէ աշխատանքի դէմ։ Որոշում, օրէնք եւլն. ոչինչ կրնան ընել, որքան ատեն որ այդ պատնէշը քանդուած եւ ժողովուրդը նախապէս պատրաստուած չէ։ Ցեսէք Միացեալ Նահանգները, կառավարութիւնը միլիառներ կը ծախսէ ալքոլի գործածութիւնը բացարձակապէս արգիլող օրէնքը գործադրելու համար, եւ սակայն անոր գործածութիւնը հազիւ թէ նուազած է։ Մինչդեռ Շուէտ-Նորվեկիոյ մէջ, ուր որոշ չափով թոյլատրուած են ոգելից ըմպելիներու գործածութիւնը, անոնց սպառումը հետզհետէ կը նուազի, որովհետեւ ժողովուրդին մէջ լայն փրօփականտ կը մղուի անոնց վնասները ծանօթացնելու համար։

Ուրեմն, ընկերային հիւանդութիւններուն դէմ արդիւնաւոր պայքար մղելու համար, նախ պէտք է ժողովուրդը լուսաւորել ծանօթացնելով անոնց ծագումը, տարածման պատճառները, հետեւանքներն ու գարմանը, ժողովուրդին բժշկական-առողջապահական դաստիարակութիւնը, ահա մեր միակ բայց ամէնէն օգտակար զէնքը։

Այդ դաստիարակութիւնը կ'ըլլայ բերանացի, գրաւոր եւ գործնական փրօփականտով, այսինքն թռուցիկներով, գրքոյկներով, դասախօսութիւններով եւ կարելիութեան պարագային այցելու հիւանդապահուհիներու միջոցաւ եւն.։

Մամուլը, առանձնապէս, կրնայ մեծ գեր կատարել այդ ուղղութեամբ։ «Բուժանք» այդ նպատակին կը ծառայէ։ Դժբախտաբար ան չի կրնար ընթերցող լայն հասարակութիւն մը ապահովել։ Ուօրեայ մամուլը այդ տեսակէտով լիովին գոհացում կուտայ անոր, օրուան կեանքի նուիրուած գրութեանց եւ լուրերուն կից կը հրատարակուին առողջապահական յօդուածներ։ Հատակագոր, պատահական յօդուածներ մեծ արժէք չեն ներկայացներ։ Պէտք է այդ աշխատանքը վարել այնպէս ինչպէս կ'ըլլայ Հոլանտայի մէջ, այսինքն բժիշկ աշխատակիցներու պատրաստել տալ առողջապահական-բժշկական որոշ ուղղութեամբ յօդուածներ. խորհուրդներ եւլն. եւ զանոնք պարբերաբար եւ սիստէմատիկ կերպով հրատարակել ամբողջ հայ մամուլին մէջ։

*
**

Ընկերային հիւանդութեանց դէմ պայքարի երկրորդ հիմը կը կազմէ հիւանդներու դարմանումը, նախ փրկելու համար եւ երկրորդ մարելով հիւանդութեան վառարանները, վարակումէ զերծ պահելու համար անոնք որոնք ուղղակի կամ անուղղակի կապ ունին կամ կրնան ունենալ մատնանշուած հիւանդութեանց զոհերուն հետ։ Այս ալ արդէն կանխարգել գործունէութեան մաս կը կազմէ։

Ընդհանրապէս խիճակի են աշխատելու, իրենց ապրուստը շահելու եւ անձնական միջոցներով դարմանուելու։ Հիւանդութիւնը ատոր արգելք չըլլար։ Հաւասակ պարագային, կրնան ձրի դարմանուիլ պետական հիւանդանոցներու եւ յատուկ բուժարաններու մէջ։ Այս տեսակէտէն Գրանսայի մէջ ամէն դիւրութիւն կը տրուի։ Օրագրուած ընկերութեան կը մնայ պէտք եղած տեղեկութիւնները տալ այդ հիւանդութեանց զոհերուն եւ շեշտել դարմանուելու անհրաժեշտութիւնը թէ իրենց եւ թէ իրենց շուրջիններուն համար։

Դժբախտաբար այս պատեհութիւնները չկան հայ թոքախտաւորներուն համար։ Ամէն դուռ փակուած է անոնց առջեւ եւ անոնք ձգուած են իրենց կոկծալի բախտին։

Ի՞նչ կարելի է ընել այս զբաղբախտներուն համար։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՅ ՊՈԼՅԵԻԻԿ ՄԸ ՅՈՒՍԱՓԱՔ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Հայաստանէն յուսափաք բազարձած հայ կոմունիստ մեզի դրկած է իր տպաւորութիւնները։ Կը հրատարակենք յապաւելով կարգ մը մանրամասնութիւններ, որոնք աւելի պատկերը, բայց նաեւ գրողը ներկայացնենք, իր բառերով.—

«1919ի վերջերը միացան Ամերիկեան United Communist Partyին, նաեւ առաջին հայկական մասնաճիւղը կազմուեցաւ Ֆիլատէլֆիայի մէջ, միեւնոյն ժամանակ։ Մինչեւ այդ եղած եմ կոմունիստ, վարելով պատասխանատու պաշտօններ հայկական ճիւղին մէջ։

Ի՞նչ ստորագրեցիք հրաժարելու մասին։— Ինձ պարտք կը համարեմ տալ քանի մը տեղեկութիւններ, որոնք խիստ շահեկան եւ օգտակար կրնան ըլլալ սահմանի մէջ ապրող ընկերներուն։

Ես մտածեր էի, որ կը պատկանիմ հայ ազգին այն ժամանակէն ի վեր որ ընկերվարութիւնը իտէալ ըլլի, նպատակ հասնելու համար։ Եւ երբ Հայաստան կ'երթայի ազդեալ իմ լեզուով օգտակար ըլլալու սիրած գաղափարիս համար, էի ոգեւորուած։

Մտայ Հայաստան, յոյսերս խորտակուեցան։ Ցեսայ որ իմ սիրած հայերէնը ծիծաղելի է ղեկավարներուն համար, եւ ես ստիպուեցայ ուսանիլ ռուսերէն։ Ցեսայ որ հայերէն գիտցողներ շատ աւելի կը տեղի մէջ, տաք արեւին տակ խայթուին մժեղներէ, եւ թէ նաեւ ջուրը մալարիայի միքրոբներով կը լեցնէ անոնց տասնեակ իսկ քիչ մը փող ունեցող հայ նակիցներդ քաղաքի մէջ կ'ապրի (Բուտկա) շինած իրենց գեղեցած արհեստով կը զբաղին, եւ երբեմն քանի մը անգամ, իրենց գործարանները կռնակը առած տեղափոխեն ուրիշ տեղ մը, մանաւանդ կառավարութեան յատնաս բանւորա-գիւղացական խանութեան տակ աւելի հանդիպակառավարութիւնը անուանական անոր տիրապետութեան տակ բայց ժողովուրդը ստրուկ եւ գիւղացին գիտներու մէջ չոր հացով կ'ապրի։

Ո՞վ կը համարձակի, խորհրդային աշխարհին մէջ, զբաղիլ

ՅԱՐՈՒՑԱԿ ՎԱ ՅՈՒՐԱՀ

(ՊԱՏՄՎԱԾՔ ԱՌԱՋԻՆ ԷՋԵՐԻՑ)

Թարգմ. Շ. Ս.

Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին Փարիզի մոտակայքում ապրում էր մի ազնվական ընտանիք, որի հետ մենք ծանոթանում ենք վաղուց։ Ընտանիքի հայրը՝ Ժան Ֆրանսուա դը Լա Մարկ, ծառայում էր թագավորական բանակում։ Նրա կինը՝ Ժանետ դը Լա Մարկ, ծնունդով գերմանուհի էր։ Նրանք ունեին երեք զավակ՝ Ժան Ֆրանսուա, Ժանետ և Ֆրանսուազ։

Ընտանիքի ամենամեծ զավակը՝ Ժան Ֆրանսուա, ծառայում էր հոր գնդում, որպես սպա։ Նա ամուսնացած էր Ժանետ դը Վիլֆրանշ անունով մի գեղեցկուհու հետ։ Ժանետը ևս ծնունդով գերմանուհի էր։ Նրա հայրը՝ Ֆրանսուա դը Վիլֆրանշ, ծառայում էր Ավստրիայի բանակում։ Ժանետի մայրը՝ Ֆրանսուազ դը Վիլֆրանշ, ծնունդով ֆրանսուհի էր։

Ժան Ֆրանսուայի և Ժանետի ամուսնությունից ծնվել էր մի աղջիկ, որին անվանել էին Ֆրանսուազ։ Ֆրանսուազը ծնվել էր 1788 թվականին։ Նա ծնվել էր Փարիզում, ուր ծնողները ապրում էին մինչև 1789 թվականի հեղափոխությունը։

Հեղափոխության սկսվելուց հետո Ժան Ֆրանսուան, Ժանետը և Ֆրանսուազը տեղափոխվեցին Ֆրանսուայի հայրենի գյուղը՝ Ֆրանսուայի ամրոցը։ Ժան Ֆրանսուայի հայրը՝ Ժան Ֆրանսուա դը Լա Մարկ, մնաց Փարիզում։

Ֆրանսուազը մեծացավ ամրոցում։ Նա ուներ մի ընկեր, որի անունը Ժան էր։ Ժանը Ֆրանսուայի հարևանն էր։ Նրա հայրը՝ Ժան Ֆրանսուա դը Լա Մարկի ընկերն էր։ Ժանի մայրը՝ Ժանետ դը Լա Մարկ, Ֆրանսուազի մոր ընկերուհին էր։

Ժանը Ֆրանսուազից մեծ էր երեք տարով։ Ժանը Ֆրանսուազին սիրում էր ինչպես քույրիկին։ Ժանը Ֆրանսուազին սովորեցնում էր ձի նստել, ատրճանակից կրակել, սուսերամարտ անել։ Ժանը Ֆրանսուազին սովորեցնում էր նաև ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, լատիներեն, հունարեն, եբրայերեն, արաբերեն, պարսկերեն, հնդկերեն, չինարեն, ճապոներեն, ռուսերեն, լեհերեն, հունգարերեն, թուրքերեն, հոլանդերեն, շվեդերեն, դանիերեն, նորվեգերեն, իսպաներեն, պորտուգալերեն, կատալոներեն, ռումիներեն, սերբերեն, հայերեն, վրացերեն, աբխազերեն, չերքեզերեն, ղրիմեերեն, ղազախերեն, ղրղզերեն, ուզբեկերեն, թուրքմեներեն, թաթար

կով: Զեխոսլովաքիա միացած է Եուկոսլաւիոյ: Յարձակումը, որուն բոլոր մանրամասնութիւնները գծուեցան այդ հաւաքոյթին մէջ, տեղի պիտի ունենար գարնան եւ յանկարծակիի պիտի բերէր Իտալիան: Նախկին դեսպանը Փարիզէն մեկնած ատեն բսած է. «Պելկրատ կ'երթամ՝ Իտալիոյ դէմ պատերազմ պատրաստելու համար:»

Այս լուրը հաստատուած է ուրիշ աղբիւրէ եւս: Իբրեւ թէ սերպ կառավարութիւնը կարելին բրած է պատերազմ պայթեցնելու համար եւ թէ ֆրանմասօնութիւնը մեծ յարձակողական մը կը պատրաստէ ֆաշիսմին դէմ:

«Ճոռնալէ տ'Իթալիա» եւս, որ Ֆրանսայի մասին զգայացունց լուրեր կը հաղորդէ, կը հրատարակէ պատճէնը ֆրանսերէն լեզուով գաղտնի շրջաբերականի մը, զոր Սերպ, Խրուաթ եւ Սլովէններու Մեծ Օթեակը ղրկած է 1926 Դեկտ.ին, եւ որուն մէջ կ'ըսուի թէ իտալեւալպանական դաշնագիրը կրնայ պատերազմի պատճառ դառնալ:

Ալպանիա զօրաշարժի կը պատրաստուի

Կօրիցայէն առնուած հեռագիրներու համաձայն, ալպանական կառավարութիւնը արգիլած է 21էն մինչեւ 35 տարեկան երիտասարդներու երկրէն մեկնումը: Այս որոշումը կը նկատուի իբրեւ նախապատրաստութիւն հաւանական զօրաշարժի մը:

*** Մանասթըրէն կը հեռագրեն թէ Թիրանայի անգլ. հիւպատոսը հասած է յիշեալ քաղաքը, ուր անմիջապէս ընդունուած է քաղաքապետ Մարքովիչի կողմէ: Թիրանայի իտալական հիւպատոսը եւս Մանասթըր կը սպասուի: Զաղրէպի «Նովօսթի» թերթը կը գրէ թէ եուկոսլաւ սահմանի երկայնքը տենդոտ պատրաստութիւնները կը շարունակուին: Իտալական պէրսայլիէրիներու 11րդ գունդը կոստիշքայէն մեկնած է՝ սահմանի դիրքերը հետազօտելու համար: Ֆիումէի 26րդ գունդը ռազմափորձ կը կատարէ Ֆիումէ-Ուչքա գիծին վրայ. իսկ 73րդ վաշտը Քլաքիէի դիմացը կը գտնուի, Իսթրիայէն հասած ճամբորդները կը հաստատեն այս լուրերը:

Չիւսթափուրիւն եւ Ֆրանսա

Ժընեւի դինաթափութեան նախապատրաստական յանձնաժողովը կը շարունակէ իր նիստերը: Ֆրանս. պատուիրակ Փոլ-Պօնքուր պարզեց Ֆրանս. տեսակէտը, որ հիմնուած է Ազգերու Դաշնակցութեան Ուխտին 8րդ յօդուածին վրայ: Ֆրանսա կ'ընդունի, որ առանց Ա. Դ. Խորհուրդի հաւանութեան, սպառազինութիւնները չպիտի աւելնան: «Յանուն իմ երկրիս, ըսաւ Փոլ-Պօնքուր, կը յայտարարեմ թէ ամէն կէտի վրայ կ'ընդունինք ինչ հակակշիռ որ ըլլայ: Ֆրանսա երբեք պզտիկութիւն չպիտի սեպէ այս բանը իրեն համար»:

Իտալական նոր մարտանաւեր մը

Մինչեւ հիմա իտալական մարտանաւերուն համար կը գործածուէին անգլիական շարժիչ մեքենաներ, որոնցմէ լաւագոյնը չէր կարողացած շինել ո և է պետութիւն: Ներկայ ֆաշիստ կառավարութեան մէջ Ազգային տնտեսութեան նախարար Պելլուցցօ հնարած է նոր շարժիչ մեքենաներ, որոնք սկսած են օգտագործուիլ արդէն Նափոլիի նոր գործարաններուն մէջ: Հոմմէն Մարտ 23 թուականով հեռագիր մը կ'ըսէ թէ նոր շինուած «Քրիսփի» մարտանաւը օժտուած է Պելլուցցօի նոր շարժիչ մեքենայով, որուն արագութիւնը կը գէ կ'անցնի մինչեւ այսօր գոյութիւն ունեցող մարտանաւերու եւ շոգենաւերու արագութիւնը:

Պելճիքա եւ Խորհրդային Միութիւնը

Ընկերվարական յայտնի գործիչ եւ Պելճիքայի արտաքին նախարար Էմիլ վանտէրվելտ երեքշաբթի օր Պրիւքսէլի խորհրդարանին մէջ հետեւեալը յայտարարեց.

«Նախապէս այստեղ բրած վերապահումներովս, կողմնակից եմ դիւանագիտական յարաբերութիւններ վերահաստատելու Ռուսիոյ հետ: Այս տարի տասը տարի պիտի ըլլայ որ այդ վարչաձեւը կը տեւէ և այսօր ընդհանրապէս բոլորն ալ այն կարծիքը ունին թէ տակաւին տեւելու հաւանականութիւններ ունի: Միւս կողմէ, հաստատապէս համոզուած եմ թէ աշխարհի խաղաղութեան համար լաւ չէ որ 145 միլիոնոց ժողովուրդ մը ազգերու համախմբումէն դուրս մնայ: կարելի է աւելցնել նաեւ որ, իր տնտեսական շահերու տեսակէտէն փափաքելի չի թուիր որ Պելճիքա Եւրոպայի վերջին տերութիւնը ըլլայ խորհրդային միութիւնը ճանչցող: Սակայն այդ ճանաչումը քաղաքական խնդիր է եւ ներկայ կառավարութիւնը իրաւասութիւն չունի տուով զբաղելու: Միայն թէ կարելի է առեւտրական բանակցութիւնները կատարել եւ կառավարութիւնը որոշած է այդ ուղղութեամբ աշխատելու:

Կացութիւնը Շանկայի մէջ

Շանկայի մէջ կացութիւնը խաղաղած է: Ազգայնական զինուորները յաջողեցան զինաթափ ընել հիւսիսային բանակի մնացեալ դասալիք զինուորներն ալ, որոնք ահ ու սարսափ կը տարածէին ամէն կողմ: Առանձնաշնորհեալ միջազգային հողամասին մէջ պաշտպանողական միջոցները չեն թուլցած, որովհետեւ տակաւին կը վախցուի չինական յարձակումէ մը: Հոլանտացի, փորթուկալցի, ամերիկացի, ճափոնցի, սպանիացի եւ իտալացի զօրամասերը միացան անգլ. ուժերուն, որոնք կարգ մը կէտերու մէջ իրենց գրաւման գօտին երկարաձգեցին միջազգային հողամասէն դուրս: Ասկէ զատ, ճափոնցի եւ անգլիացի հետեւակազօրքեր ցամաք ելան Շանկայ գետին չինական եզերքը: Մարտ 22ին Զինացիները յարձակեցան իտալացիներուն վրայ: Այս վերջինները կրակ բանալով սպաննեցին քանի մը Զինացիներ: Ֆրանսացի մայրապետներու վանքը պարպուեցաւ: Ֆրանս. Ջոկատներ կը պաշտպանեն Ֆրանսական հողամասը:

Ֆրանս. եւ անգլ. ընդհ. հիւպատոսները տեսակցեցան ազգայնական բանակի ընդհ. հրամանատար Զանկ-Քայ-Շէքի հետ, որ յայտնեց թէ կարգը պիտի պահպանէ:

Շանկայի մէջ բանւորական առժամեայ կառավարութիւն մը կազմուած է, ժողովուրդը հրաւիրելով ամէն տեղ պարզել Քուօմինթանգի դրօշակները: Ընդհ. գործադուլին մասնակցող բանւորներուն թիւը 300,000ի հասած է: Զինուած բանւորները կը միանան ազգայնական զինուորներուն: Հին եւ նոր Շանկայը, մինչեւ եւրոպական հողամասը, յեղափոխականներու ձեռքն է: Օտար զինուորներու ընդհ. թիւն է 15,000:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Պէթհովէնի հարիւրամեակին առթիւ վիէննայի մէջ կատարուելիք հանդէսներուն Ֆրանսայի կողմէ ներկայ պիտի ըլլայ կրթական նախարար Լտուար Լրիս:

Պուտափէշթի Ֆրանս. դեսպանատան առջեւ ցոյց մը կատարեցին մաճառ ուսանողներ՝ Ֆրանս. թերթի մը գրած յօդուածին դէմ բողոքելու համար: Ոստիկանները ցրուեցին ցուցարարները:

Հ. Յ Դ. ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

վիճաբանական ժողովը այսօր ուրբաթ երեկոյ ժամը 8ին
փլաս տ'Իթալի, ֆաքէ ֆլէռ-տը-Լիւնի վերնայարկը, մէթրօ՝ Իթալի
կը զեկուցանէ ԸՆԿԵՐ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ
ՉԱՐԵԻԱՆԻ «Կրնա՞նք հաշտուիլ Թուրքին հետ» եւ
«Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերուն մասին:

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Ռոստոմ, Զաւարեան, Իշխան, Քրիստափոր, Վարուժան, Վարդգէս, Վահագ Ենթակոմիտէները, եւ Հ. Յ. Դ. պատ. միութիւնը, յառաջիկայ կիրակի ամսոյս 27ին Ռիւ սէն ժաք, սալօն սէն ժաքի սրահը: կը խնդրուի անդամատետրով ներկայանալ:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ
Գինը՝ Ֆրանսայի համար 5 ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ: Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ:
Դիմել *Յառաջի* խմբագրատունը:

ԳՈՒՍԱՆ ԵՐԳԱԽՈՒՄԲ

Հայկական Սէնթռնիք համերգ, մասնակցութեամբ Օսէօնի օրքեստրին, Կիրակի, 10 Ապրիլ ժամը 8ին. կը կրկնուի Գուսանի Ա. համերգը, Salle des Agriculteurs*ի մէջ,* 8 Rue d'Athènes-Métro St. Lazare:

Ցայտագրին մէջ.— վէպէր, Մուսօրկսկի, Շարփանթիէ, կոմիտաս վարդապետ, Դ. սիւնի: Մուտք.— 30—3 ֆրանք:

Զ. Ո. ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Փարիզի Զափաիաս երկսեռ Որբերու միութեան Բ. դասախօսական ժողովը՝ 27 մարտ կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ուկէսին միութեան ընծեղցարանը, (61 Rue Mr. le Princei Métro: St. Michel կամ Odéon): կը դասախօսէ Պ. Կ. Ց. Բասմաջեան, շահեկան նիւթի մը շուրջ: Պիտի ցուցադրուի նաեւ մոգական լապտերով նիւթին հետ առնչութիւն ունեցող պատկերներ:

կը հրաւիրուին անդամները, համակիրները ու ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին այս դասախօսութիւնով:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. վիէնի Շրջ. կոմիտէի ընդհ. վիճաբանական ժողովը՝ 27 մարտ, կիրակի կէս օրէ վերջ ժամը 2ին հայ ժողովրդային լսարանին մէջ:

Հ. Յ. Դ. Սարսէլի «Հրայր» խումբի ժողովը՝ կիրակի, 27 մարտ ժամը 2ին, ընկեր Ց. Երանեանի սենեակը՝ 11 Rue des Bauvés: կը հրաւիրուին բոլոր ընկերները: Այս առթիւ կ'ուզենք իմացնել նաեւ Աւնօվիլ լէ կոնէսի եւ Լզանվիլի կուսակցական անհատ ընկերներուն, որ արձանագրութեան համար դիմեն 6 Rue Beauséjour Sarcelle: ընկեր Նուպարին:

Հ. Յ. Դ. Լիոնի Գնունի խումբը յետ այսու ամէն երկուշաբթի երեկոյ կ'ունենայ ընկերական, դասախօսական, վիճաբանական, եւ ասուլիսի ժողովները:

ԼԻՈՆԻ ԽԱՐԲԵՐԴԻ եւ շրջակայ գաւառներու Հայրենակցական միութեան դասախօսական ժողովը՝ 27 Մարտ, Կիրակի առաւօտեան ժամը ճիշտ 9ին, 127-129 Rue Boileau Էմիլ Զօլայի վերնայարկը. դասախօս Ս. Փողհարեան:

Հ. Մ. Ը. Մ.ի Ալֆոռվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր անդամները եւ համակիրները ընդհանուր ժողովի վաղը՝ Շաբաթ երեկոյ ժամը 8ին, 108 Rue Etienne Dolet, *ծանօթ սրահին մէջ. Օրակարգ՝ վարչութեան ընտրութիւն:*

Հ. Մ. Ը. Մ.ի Թուանվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ նոժանի, Ֆոնթինէի, սէն մօրի, եւ այդ շրջանի բոլոր Ֆութպոլ խաղալ փափաքող տղաքը, այս կիրակի առաւօտ ժամը 10ին Թուանվիլի 10 Quai Beaubourgի սրճարանը, տեսնել Պ. Գ. Պէյազեանը:

ՎԻԷՆԻ «ՅԱՌԱՋ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆ Է
ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ
Rue Victor Fougier N. 69
Vienne - Isère

ԼԻՈՆԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

«Բարձր Հայք» Ճաշարանը 202, Rue Boileau, Արարատ Ճաշարանը 116, Tête d'Or: Թերթին գործակալն է Պ. Խայիկ Զօմաքլեան, 202, Rue Boileau.

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Դ. Չերիկեանի ՖՐԱՆՔՈ-ՀԱՅ ԴՐԱՏՈՒՆԸ
15 բիւ տէ ֆօմինիքէն

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

կը փնտռուի Դոնիացի ցարութիւն Թէրզեան որ Լիոնի մօտակայ գիւղերը կը գտնուէր ասկէ քանի մը ամիս առաջ: ցեղեկացնել՝ եօզկատցի Haroutune Emirzianի 170, Rue Nationale Paris (13e).

— կը փնտռուի Մարաշցի Աբրահամ Չեղինեան, որ կը կարծուի թէ գաճիրէ կը գտնուի: Գրել՝ Sarkis Paperianի Chez Mr. Jacqueminի RenéVolfroicourt (Vosges) France.

— Պրուսայի կէմլէյիկի Պէյնի գիւղացի Պետրոս Հայրապետեան կը փնտռէ իր գիւղացիները, ու, յանուն մարդասիրութեան, կը խնդրէ որ Ֆրանսա, Ցունաստան, Պուլկարիա, Եգիպտոս կամ այլուր գտնուող Պէյնիցիները ձեռնի երկտողով մը ծանուցանել իրենց ձայցէն, գրելով՝ Bédros Hairabedianի՝ au Couvent Arménien St. Jacques. Jérusalem, Palestine.

— *Գրիգոր Տիլքիեան կը փընտռէ Սեբաստացի Խաչիկ Մըճճիկեանը, կը կարծուի որ Փարիզ կամ Մարսիլիա կը գտնուի: Գրել՝* Sarkis Papérianի Chez Mr. Jacquemin, Volfroicourt (Vosges):

Կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16 - 18 տարեկան: Դիմել՝ Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

5 սենեակ, մէկ խոհանոց, կազ, ջուր, ելեկտրականութիւն, քով, պարտէզ: Տարեկան 4000 ֆր. վարձք: Դիմել՝ երեկոները ժամը 7էն վերջ, տէր ցակոբեանի, 15, Impasse Thiberville, Gentilly (Seine).

ԴՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ
(Underwood, Remington,
Oliver, Smith Premier)
Նուազագոյն գին-ձրի գնահատում (devis)
Դիմել նամակաւ (անձամբ կը պատասխանուի)
V. YÉMÉNIDJIAN
7 Rue Corneille, Montrouge (S.)



ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ – POLYCLINIQUE de BELLEVILLE
Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Գ., Ե. եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Առաւմաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ
ԹԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
Փարիզի եւ գաւառներու Հայութեան համար կը պատրաստէ
ՀԱՄՈՎ, ՀՈՒՏՈՎ, ԱՆԽԱՐԴԱԽ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ
Մեծաքանակ եւ փոքրաքանակ *Անմրցելի գիներով*
Մէկ փորձ բաւ է համոզուելու, հեռախօսով ապսպրանքները անվճար կը ղրկուին: Թէլէֆոն: Provence 38.63, Métro Cadet
26, Rue de Trévise Paris (9)

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԴԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՅԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
126, Rue du Faubourg St. Denis
Metro: Gare de l'Est Téléphone: Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,
փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ
Շամեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԵԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ժօնսկրաֆի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՀԱՄԱՐ

կարդացէք եւ տարածեցէք *Զարեւանդի* «Կրնա՞նք հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերը. Ֆրանսայի համար 16 Ֆր. արտասահման 18 Ֆրանք փոստի ծախք չկայ:

Դիմել՝ Léon Kévonianի 208 bis Rue Lafayette. Paris (10me).

ԼԱՒ ԼՈՒՐ ՄԸ
ՔԱՆ ՔՕԼ ՇԻՆՈՂՆԵՐՈՒՆ

Ձեր մետաքսները մի գնէք օրուան գինով: Դիմեցէք H. Gommel վաճառատունը, 5 Rue Bergère, փարիզ, երրորդ յարկ ձախ կողմ, որ միեւնոյն ապրանքի քիլօն հրապարակի գինէն 5 Ֆրանք աւելի աժան կը ծախէ: Բաց է ամէն օր, նոյնիսկ Երկ. մինչեւ իրիկուան ժամը 7ը:

կը խօսուի Թուրքերէն:

ՊԱՔՒՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ
ԴԱՀՃԱՊԱԿ ԵՒ ՕՐԻՊ
Աքսոռ եւ Նորոգութիւն Դաշնակահարուհի ՕՐ. Ն. ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր:
Դիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Marcadet:

Կահագործ *աժան գիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կահոսիներ, գրասենեակի սեղաններ եւ աթոռներ, ծախու են թրքական թաւվուններ: Դիմել՝* 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՏԷ ՋԷՋԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ձախ մթերք մը ունի մատենադարանի գիրքերու:
Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ

Ծաքիր Թահրա պէյ 5, Բէ[illegible] Գիրքէն փրցուած Էջեր 12.50, Նահայ տարեգիրք 25, Ռուսլան 15, Նամուս 10, Զար ոգի 10, Պատմ. համար 10, Լուսաթիւնը 8, Երազ 6, Կոյսի մը Օրագիրը 5, Աթեան ժամեր 2, Մապուվար 12, Բարիզէթ 7.50, Տօքթ. Մօրի վէպ 5, Մայտոնները մէջ (2 հատ.) Ոսկի Աքաղաղ 10, Թուղթի փող 5, Վերջալոյսին տակ 5, Ճամբու վրայ 10, Պէպէքա 10. Հայրենի Քոյր 12.50, Հայորդիները 7, Սամսար Մհեր 5, Հային երգը 25, Հայ[illegible] տանի Նկարիչները Ալմանախը [illegible] Նարեկ աշխարհաբար 40, «ՆՈՐ ՕՐ» գրական տետրակներ, թիւը 2, [illegible] նաեւ վիպական, թատերական բնա[illegible] տեղական եւ ազգային գիրքեր, [illegible] ռարաններ, խօսակցութիւններ [illegible] քածոներ եւայլն:

ԳՐԱՅՈՒԹԱԿԸ ՁՐԻ
Ֆրանսայի եւ գաղութներուն համ[illegible] փոսթի ծախք չկայ:
Ցտանալու համար՝ դիմել [illegible] մակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ԱԿԱՌԱՆ
24 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		
Ստերլին,	L. St.	[illegible]
Տոլար,	Dollar	605 [illegible]
Մարք (ոսկի) 100 Mark		[illegible]
Թրքական Թղթ.	L. Trq.	[illegible]
Թրք. ոսկի	» or	[illegible]
Մէճիտիէ	Médjidié	[illegible]
Լէվա 100 հատ	Léva	[illegible]
Տրախմի »	Drachme	[illegible]
Լիր »	» Lire	[illegible]
Պելճ. Ֆրանք »	Frc. Belge	[illegible]
Զուից. »	Frc. Suisse	[illegible]
Լէյ 100 հատ	Ley	[illegible]
Ջերմոնեց	(10 Roubles or)	[illegible]

ԱՐԺԵԹՈՒՂԹ	
Եգ. Քր. Ֆոնսիէ 1 Cr. Fonc. Eg.	[illegible]
» II »	[illegible]
» III »	[illegible]
Թումեյի երկաթղ. Lots turcs	[illegible]

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITION
208bis, Rue Lafayette Paris (10e)
Le Gérant : H. TEURNIER

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

Գ. ՏԱՐԻ Թիւ 295

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԲԱԺԱՆԵՒԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 Ֆ.	70 Ֆ.	140 Ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ալ.	10 ալ.	
ԵՒՐՈՊԱ	100 Ֆ.	200 Ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՇԱԲԱԹ 26 ՄԱՐՏ 1927

26 MARS 1927

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մէկ ձակատէն Միւսը

կատարեալ ծաղրանկար մը դարձաւ հռչակաւոր Հօկը՝ արտասահմանի մէջ։

Եւ արտասահմանի մէջ ամէն տեղ։

Կազմուած՝ իբրեւ հայրենիքի օգնութեան կոմիտէ, ան ապարդէգ իջաւ դրամ հաւաքելու համար, բայց եղածը հազիւ բաւեց գրասենեակի ծախքերը հոգալու։ Ֆրանսայի մէջ, անցեալ տարուան իրենց հաշիւը կը ցուցնէր 68,123 ֆրանք մուտք, 14 ամսուան ընթացքին, մէկէն ըլլալով Ֆրանսահայ Տան հանգանակութիւնը, 20,503 ֆրանք, որ անչատ է։ Այս գումարէն երեսուն դրկուած է միայն 20,000 ֆրանք (Ֆրանսահայ Տան գումարը), իսկ բոլոր ծախքերը զեղչելէ յետոյ, կ'ասենայ 12,000 ֆրանքի գումար մը, որուն գաղտնիքը չէ պարզուած մինչեւ այսօր։ Իսկ ինչ որ կրցան արտադրել Շիրակի շարժին առթիւ, աւելի քան «պատկառելի» է...։

Երկրորդ ոստանին, Յունաստանի մէջ, Հօկի գոր ունէութիւնը պէսպիսուն շարժանկար մըն է խաչագողութեան, կողոպուտի, փոխադարձ խաչակրութիւններու եւ ներգաղթ-աւերումի։ Սելանիկի վարիչ անդամներէն մէկը, միեւնոյն ատեն ամկավար գործիչ, գժբախտութիւնն ունեցաւ բանտ իյնալու, 9000 տրախմի կորզած ըլլալով։ Ու թէեւ իր կարգին մերկացաներ կատարեց աւելի իւղոտ պատառներու եւ աւելի ծանր գործակալներու մասին, բայց կէս ճամբան մնաց, իբրեւ բանտարկեալ։ Ու մի զարմանաք որ, վերջերս գումարուած պատգմ. ժողովին մէջ, հաշուեքննիչ են ընտրեր իր իսկ ընտանիքէն վկայեալ խաչագող մը։

Հիմա, ուրի՞շ պատմութիւն։

Յունահատ՝ Հայաստանին նիւթապէս օգնելու յաւակնութենէն, ձեռնարկեր են ընդլայնելու ծրագիրը, եւ դարձնելու այն ինչ որ գիտէինք։ կարդանք իրենց օրկանը, որ «անկուսակցական» է, բայց չի վարանիր յայտարարել թէ Պերլինի, Մարսէյլի եւ Պոլսոյ իր գործակալներն են... Խորհրդային Միութեան առեւտրական պատուիրակութիւնները.

— «կար ժամանակ, երբ Հօկերի անելիքը հիմնարկութիւն էր միայն նիւթական օգնութիւն հասցնել խորհրդային Հայաստանին։ կան եւ այնպիսի Հօկեր, որոնք բաւականանում են ներգաղթի խողովակ լինելու դերով։

«... բայց եւ այնպէս, Հօկի գերագոյն անելիքը գնալով կենտրոնանում է բարոյական կազմակերպական կէտի վրայ։ Այդպէս էլ պիտի լինի։

«... Հօկը այլ եւս ոչ միայն իր անդամներից անդամավճարները գանձող կոմիտէն է, այլ արտասահմանի աշխատաւորութեան հայ կարծիքը դաբրնող եւ պայքարող մի կազմակերպութիւն»։

Արդարեւ։ Անցեալ տարի վերելքն ալ, «օրկան Ֆրանսայի կոմիտասի հայ ենթահատուածներու», կը հաստատէր այս պարագան, աւելի բացորոշ.

— «... Լուսաի աւելի ուժ տանք մեր կազմակերպական աշխատանքին, դուրս վանելու համար բանւորութեան շարքերից հայ ազգայնականներին. լարենք մեր բոլշեւիկեան ուժերը, որպէս զի հայ ազգայնական բուրժուական երրորդութեան (դաշնակ, ինչակ, ռամկավար) անպաշտօն «սրբազան դաշինք»ին՝ մեր դեկավարութեան տակ հակադրենք գաղութահայ աշխատաւորութեան միասնական ճակատը, սէնտիկաներով, *Հօկերով*, լսարաններու միջոցով, մարզական եւ երիտասարդական կազմակերպութիւններով»։ (Թիւ 4-5-6 եւ 7-8)։

Ուրեմն, Հօկերը 1. Դրամ պիտի հաւաքեն, եթէ կարենան. 2. Պիտի գործեն իբրեւ ներգաղթի խողովակ, ինչ որ ամէնէն շահաբեր, բուն մեղրահոս ծորակն է, եւ 3. Պիտի շերտաւորեն գաղութները՝ իբրեւ «հասարակական կարծիքը դարբնող եւ պայքարող կազմակերպութիւն»։ Այս ալ՝ հիմնական կոչումը, ներշնչուած՝ Երեւանի «դեկրէտ»ներէն։

Հաւատարիմ՝ այս հանգանակին, Հօկերը ո՛ւր որ քանի մը համբանք ունին, մէջտեղ կը հանեն, գաղութներու մէջ ո՛ր եւ է ազգային կազմակերպութիւն չլատելու, իրենց եւեւէն քաշելով ամբողջ կազմակերպութիւնը, յոլերը, բոլոր տեսակի յետադիմական եւ կասկածելի տիպարները, մինչեւ անգամ շոյելով եպիսկոպոսներու մօրուքը։

«Սրբազան դաշինք»էն Դաշնակցութեան դիրքը բացորոշ է առաջին օրէն։ Հնչակեանները, որոնք Հօկերու առաջին խմորը թրեցին, հիմա կը հրաժարին խումբ խումբ, կամ «կ'արտաքսուին», երեւանի բացատրութեամբ։ Իսկ ռամկավարները կը շարունակեն շարժիլ համաձայն տեղին, օրսկարգին եւ փշած հովին։ Յունաստանի պատգմ. ժողովին մէջ, կ'առաջարկուի Մելքոնեան նուէրը յատկացնել ներգաղթի։ Ռամկավարներու շրջանային վարչութեան մէկ անդամը կ'ընդդիմանայ. միւս անդամը կը քուէարկէ... Ընդդիմադիրին «կարդ մը անհիմն փաստարկութիւնները օդը ցնդեցան», կը գրէ Հօկի օրկանը։

Աւարը յանձնելու-չյանձնելու մասին համաձայն չեն ռամկավարները, բայց «պէնտէկեան»ի անձնուիրութեամբ պատրաստ են գործակցելու սատանային հետ անգամ, որպէս զի խափանուի ո՛ր եւ է ժողովրդական կազմակերպութիւն, այս կամ այն գաղութին մէջ։ Պատրաստ են եղածն ալ քանդելու։ Այսօր, Ֆրանսայի մէջ, այդ ուղղութեամբ գործեցին ամբողջ երկու տարի։ Եւ հիմա, հազիւ իմացած նոր ընտրութեանց արդիւնքները, *Հարկ դատեր են ազդարարութիւններ ուղղել «առ որ անկ է», միշտ ձեռք ձեռքի Հօկին հետ։*

Սանկուիենէ անանկութիւն պղորելով, Հօկերը դարձեր են խնկական փոկեր (փոխադարձ օգնութեան կոմիտէ, իրենց բառով), փրկելու համար հիներու շուքը եւ նորերու փեսուրն ու կեսուրը։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԵՐՈՒ ՏԵՂԱՒՈՐՈՒՄԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

«Յառաջ»ի մէջ օրը օրին տուած ենք այս ծրագրին վերաբերեալ լուրերը։ «Ագդակ», պէյրութի մեր պաշտօնակիցը, այս հարցին նուիրուած խմբագրականի մը մէջ կը գրէ.

— «Մեր գաղութի աշխատող ձեռքերուն խոշոր մէկ տոկոսը, հողի աշխատանքներու կապուած է, առանց հողի տէր ըլլալու։ Շինութեանց եւ ճամբաներու վրայ բազմաթիւ են հայ աշխատաւորները, որոնք կ'աշխատին չոր հացի մը համար։ Այդ, հնարաւորութիւն չկա՛ արդիւնաւորելու այս բազմութեան աշխատանքները։

«Պետական վիճակագրութիւնները՝ թէ Լիբանանի եւ թէ Սուրիոյ մէջ ցոյց կուտան, որ քիչ չեն պատերազմի ընթացքին լքուած եւ անբնակ դարձած շրջաններ։ Տարիներէ ի վեր, հոգատար իշխանութեան ծրագիրները բնակեցնելու այդ շրջանները Հայերով կը միտին տակաւին ծրագիր։ Նոյնիսկ պետութիւնը տրամադիր է եղած զանազան շրջաններու նիւթական դիւրութիւններ տալ՝ ծրագրի գործադրութեան պարագային։

... «Միակ վիճելի կէտը վարկի եւ ապահովութեան մասին կրնայ դրուիլ, որ դժուար չէ լուծել։ Փորձը ցոյց տուաւ որ լերան մը գաղթին թառած գիւղ մը աւելի ապահով է քան թիթեղներով եւ քուրջերով պարսպուած թաղամաս մը։ Դամասկոսի օրինակը դեռ թարմ է։

«Եթէ կ'ուզենք Սուրիահայութիւնը տնտեսապէս բարգաւաճ դարձնել, տեղացիներու խորունկ դժգոհութիւնը մեղմել, եւ մեր գաղութի տեղաւորման հարցը հիմնովին լուծել, պէտք է օր առաջ մտածենք հողին կապել մեր ժողովուրդին մէկ մասը։»

ՆՈՐԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԴՈՐԾԱՐԱՆԸ

«Յուսարեր»ի մէջ կը կարդանք (18 մարտ).—

Արժանահաւատ աղբիւրէ կը տեղեկանանք, որ Մաթոսեան Տունը հետեւեալ պայմանները առաջարկած է Մելքոնեան գործարանը գնելու համար.

1.— 400,000 ոսկի պահանջուած ըլլալով Մելքոնեան գործարանին կողմէ, Մաթոսեան Տունը յօժարած է, ըստ ներկայացուած նախահաշուի, վճարել այս գումարը՝ անկէ զեղչելով միայն 14,000 ոսկի։

Այս 14,000ը կազմուած է 5 առ հարիւր Մելքոնեանի գանձելիներէն (որոնք նոյնպէս մտած են 400,000ի մէջ) եւ այն կորուստէն, որ գնահատուած մեքենաները եւ այլ էնվանթէրը ունեցած են տարիներու ընթացքին։

Այսպիսով՝ Մելքոնեան գործարանինկողմէ պահանջուած ըլլալով 400,000 ոսկի, Մաթոսեան Տունը սոսկ փոխարէն տուած է 386,000 ոսկի։

2.— Մաքսատունը չին եւ ճափոն մնացքանակ ապրանք ունենալով՝ Մելքոնեան գործարանը այս ապրանքին համար պահանջած է 200,000 ոսկի։

Մաթոսեան Տունը առաջարկած է ընդամէնը 70,000 ոսկի (օխան հաշուելով 32 դրուշէն, որմէ 7 դրուշը՝ ծխախոտի դինը, իսկ 25 դրշ.ը՝ մաքսատուրքը)։

ԿՈԻՊԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ.— Փետրուարի ընթացքին Երեւանի մէջ հաստատուած են 433 հոգի, իսկ քաղաքէն մեկնած են 232 հոգի։

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՀՌԵԼԻ ԿՌԻԻՆԵՐ ՆԱՆՔԻՆԻ ՄԷՋ

• Ազգայնական բանակը Շանկայէն վերջ գրաւեց նաեւ Նանքինը Մարտ 23ին, գրեթէ առանց կռիւի։ Իրենց խուճապահար փախուստի պահուն, Շանթունկի զինուորները ահռելի խժդժութիւններ գործեցին եւ քաղաքը ամբողջովին կողոպտեցին։ Վերջին օրերս այս զինուորներուն թիւը 100,000ի հասած էր։ Քանթոնցիները ոմբակոծեցին բլուր մը, ուր համախմբուած էին օտարականները։ Չոս կը գտնուէր ամերիկեան Սթանտարտ Օյլի կեդրոնը, որ ջնասուեցաւ։ Անգլ. հիւպատոսը վիրաւորուեցաւ եւ ուրիշ անգլիացի մը սպաննուեցաւ։ Նանքինի բացերը խախտած անգլիական եւ ամերիկեան զրահաւորները բլուրին շրջակաները ոմբակոծեցին, հոն գտնուող օտարականներու պարպումը դիւրացնելու համար։ Իրիկուան դէմ անգլիական եւ ամերիկեան կարեւոր ուժեր ցամաք ելլելով ուղղակի օտարականներու ապաստանած բլուրը գացին, զանոնք ազատելու համար։ Ազգայնականներու ոմբակոծումին զոհ գացին քանի մը Ամերիկացիներ։ Մանիլայի առջեւ խարսխած ամերիկեան երեք թորպիլահալածները հրաման ստացան անմիջապէս Շանկայ երթալու։

Ամերիկեան նաւատորմի հրամանատար Ծով. Ուիլկըմս կը պատմէ թէ Նանքինի ճափոնի հիւպատոսը սպաննուեցաւ, անգլիական, ամերիկեան եւ ճափոնական հիւպատոսարանները, ինչպէս նաեւ միսիոնէրական հաստատութիւնները վերէն վար թալլուեցան։ Սպաննուածներուն մէջ է անգլիացի բժիշկ մը։ Նանքինի մէջ դեռ 300 օտարականներ կան, որոնց վիճակէն կը վախցուի։ Անգլ. եւ ամերիկացի նաւային հրամանատարները վերջնագիր տուին ազգայնական բանակի հրամանատարին, պահանջելով որ մինչեւ Ուրբաթ առաւօտ ազատ թողուին Նանքինի բոլոր օտարականները, հակառակ պարագային կրակ պիտի բանան քաղաքին վրայ։

Նանքինի անկումին վրայ, Զանկ-Ցօ-Լին իր բանակատեղին 105 մղոն դէպի հիւսիս՝ Ցու-Շովֆու կը փոխադրէ, միաժամանակ հաշտութիւն առաջարկելով ազգայնական վերին հրամանատար Զանկ-Ֆայ-Շէքի։

Շանկայի մէջ կացութիւնը բաւական հանդարտած է։ Քուօմինթանկի քաղաքական բիւրօն շուտով հոն փոխադրուելով իշխանութիւնը ձեռք պիտի առնէ։ Փարիզի համալսարանէն իրաւաբանութեան տոքթոր Օր. Սումէ Զէնկ, որ առաջին կին փաստաբանն է Չինաստանի մէջ, Շանկայի դատարանին նախագահ նշանակուեցաւ։

Հեռագրի մը համաձայն, Շանկայի եւ Նանքինի դրաւումէն վերջ փեքինի անկումը անխուսափելի կը դառնայ։

Մանչուրիոյ մէջ կացութիւնը հետզհետէ վրդովիչ կը դառնայ ու ժողովուրդը կը սկսի ապստամբիլ Զանկ-Ցօ-Լինի դէմ։

Վերջին պահուն հեռագիր մը կ'ըսէ թէ Նանքինի խռովութեանց պահուն բազմաթիւ Ամերիկացիներ եւ ուրիշ օտարականներ սպաննուած ըլլալով, ազգայնական բանակի պետերը անգլիական «Էմբրըլտ» մարտանաւը տարուած են, ուր իրենց ներկայացուեցաւ խիստ վերջնագիր մը՝ օտարականներու կեանքն ու ինչքը ապահովելու մասին։

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿՆՃԻՌԸ

Պելկրատէն կը հեռագրեն Մարտ 24 Թուականով.—

Ֆրանս., անգլ. եւ իտալական դեսպանները երէկ իրիկուն եւ այսօր երկարօրէն տեսակցեցան արտաքին նախարար Փէրիչի հետ։ Այս տեսակցութենէն վերջ պալկրատի կառավարական շրջանակները կը կարծեն թէ իտալեւսերպ վէճը սկզբունքով կարգադրուած է։ Վերոյիշեալ երեք պետութեանց զինուորական կցորդները քանի մը օրէն եւ գատ գատ սահմանագլուխը պիտի երթան քննութիւն մը կատարելու համար, որուն արդիւնքը պիտի հաղորդեն իրենց կառավարութեանց։ Այս վերջինները զինուորական կցորդներու տեղեկագիրը ստանալէ վերջ պիտի որոշեն թէ Ազգերու Դաշնակցութեան առջեւ պէտք է հանուի խնդիրը, թէ Հռոմ եւ Պելկրատ իրարու մէջ ուղղակի բանակցութեամբ եւ հաշտարար եղանակով պիտի կարգադրեն գայն։

Պելկրատի կառավարութիւնը հաւանած է ասոր, քանի որ ազգային հպարտութիւնը չի վիրաւորեր։ Զինուորական կցորդները ամէն ատեն իրաւունք ունին երկրին ներսը ճամբորդելու, հետեւաբար եւ ալպանական սահմանը այցելելու։ Իտալիա եւս համամիտ է այս կարգադրութեան, քանի որ հնարաւորութիւն պիտի ունենայ ստուգելու Սերպիոյ զինուորական պատրաստութիւնները։

**** Սերպ թերթ մը կը գրէ թէ Անգլիա թելադրած է նուկօսլաւիոյ՝ սերպեւալպանական դաշնագիր մը կնքել՝ Թիրանայի դաշնագրին նման։ Եթէ Սերպիա եւս Իտալիոյ պէս եռաշաւորէ Ալպանիոյ անկախութիւնը, վէճի առարկայ չի մնար։*

*** Սերպիոյ Արտաքին նախարար փէրիչ «Ցեյլի Էքսփրէս»ի պելկրատի թղթակցին յայտարարած է.—

Ալպանիոյ մասին Իտալիոյ հետ մեր վէճը այլեւս վերջացած կարելի է նկատել։ Նուկօսլաւիա ոչ մէկ ծրագիր ունի Ալպանիոյ վրայ եւ մենք զինուորական պատրաստութիւններ չտեսանք։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ՀԱՅ ԵՐԳԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Կոմիտաս վարդապետի սաներէն Պ. Միհրան Թումաճանի ղեկավարութեամբ, 1925ի վերջերը նիւ եորքի մէջ կազմուած է երաժշտական միութիւն մը։ Այս առթիւ մեզի դրկուած նամակէ մը կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները.—

Միութիւնը ունի յատուկ երգչախումբ մը։ Շուրջ 50—60 երկսեռ երիտասարդութիւն հաւաքուած են ամէն շաբաթ եւ տեղի ունեցած են երաժշտական փորձեր, յատկապէս երգերու եւ երեկոյթներու պատրաստութեան համար։ Ամիսը անգամ մը, ընկերական հաւաքոյթներ ունեցած ենք, ուր երգչախումբի ղեկավարը բացատրութիւններ տուած է— օրինակներով — հայ երգերու ստեղծագործութեան, բառերու եւ եղանակներու կազմութեան եւայլնի մասին։ Հայ երգի ծագումին վրայ դասախօսութիւն մը տրուած է, հայ կրթական շիմնարկութեան աջակցութեամբ։ Բացի կոմիտաս վրդ.ի համար տրուած Շամերգէն, ուրիշ մըն ալ կազմակերպուած է Ուէսա-Շօպօքընի մէջ։

Երգած ենք միջազգային ժողովի մը մէջ, ուր յայտնի Ամերիկացիներ ներկայ էին։ Ասոնցմէ ոմանց խանդավառ արտայայտութիւններուն վրայ, հրապիրուած ենք տիկին Րաքֆելլերի կողմէ, երգել փարք Էվընիւ եկեղեցիին մէջ։ Ուրախ ենք ըսելու թէ մեր ցեղի զգացումները գոլացնող այս շատ պարզուկ, սակայն քնքուշ երգերը երգեցինք հպարտութեամբ,—ցուցնելու համար թէ հայը, թէեւ չարչարուած, բայց միայն լացերու մէջ չէ թաղած իր հոգին։

Վաղնային արձակուրդի շրջանին, մեր անդամներու հետաքրքրութիւնը վառ պահելու համար սկսանք փոքրիկ Թերթիկ մը խմբագրել։ Հիմա կը սկսինք նոր շրջանին, անդամներու աւելի ստուար թիւով եւ աւելի եռանդով։

Կոմիտաս վարդապետի օգնութեան համար տրուած համերգին արդիւնքը եղած է 742 տոլար, 76 սէնթ, որ փարիզ փոխադրուած է 10,000 ֆրանքի չէքով մը։

ԹՐՔԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ.— «Իգտամ» կը գրէ թէ Լոզանի դաշնագրին համաձայն, Թուրքերը, մէկ տարուան ընթացքին պարտաւոր են ծախել իրենց կալուածները եւ հեռանալ Սուրիայէն, եթէ կը փափաքին մնալ Թրքահպատակ։ Հակառակ այս տրամադրութեան, Սուրիոյ կառավարութիւնը արգիլած է Թրքական կալուածներու վաճառումը։ Այս պատճառով ալ կալուածներու գիները իննած են։

ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՑՆԱԲՈՒԽՈՒԹԻՒՆԸ.— Լէնինկրատի մէջ ակադեմական բիխտիրիէֆ սկսած է հոգեթելադրութեամբ բժշկել գինով բանւորները։ Այսպէս, հաւաքելով 50 խման բանւորներ, բժշկական դասախոսութիւն մը կը կարդայ անոնց գլխուն, յետոյ բոլորը մէկ կը քնացնէ, ու կը կրկնէ նոյն դասախօսութիւնը։ Արթնցնելէ յետոյ փորձը կը կրկնէ ուրիշ անգամ մըն ալ։ Անկէ վերջ այլեւս բանւորները կը խորշին ըմպելիներէն։

ԿԻՆԵՐԸ ԿԸ ԳՈՐԾ�են.— Հայ կիները հետզհետէ կը ստանձնեն պատասխանատու պաշտօններ Հայաստանի պետական հաստատութիւններուն մէջ։ Մասնաւորապէս կրթական բաժիններու մէջ կիները բաւական մեծ թիւ մը կը կազմեն։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՄԸ ՓԱՍՏԵՐԸ)

5. ՍԱԿԱՒԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Միայն կատարուած անճարակ հողաբաժանութիւն համարել հայ գիւղացիութեան տնտեսութեան անկման պատճառ՝ պիտի ըլլար ե՛ւ սխալ ե՛ւ միակողմանի: Հայ պոլշեւիկները միայն արդէն իսկ գոյութիւն ունեցող վիճակը աւելի կը բարդացնեն, կը ծանրացնեն, Հայաստանի տնտեսութեան անխուսափելի անկումն աւելի կ՚արագացնեն զայն մղելով դէպի անդունդ:

Քանի Հայաստանը կը մնայ ներկայ սահմաններով, հայ գիւղացիէն վրայ ինչ բարիք ալ թափին երկինքէն, ան միշտ պիտի մնայ մնայ կիսագաղց, մերկ տգէտ վատառողջ, ուրեմն եւ դժգոհ՝ սիրող կարգերէն, անբարեացակամ խորհրդային իշխանութեան հանդէպ: Թո՛ղ այս մէկ պարագան հայ կոմունիստները լաւ հասկնան, թո՛ղ այդ օղ ընեն իրենց ականջներուն, երբէք չմոռնալու համար:

Հայաստանի գիւղացիութեան ամենագլխաւոր հիւանդութիւնը որ կը հիւծէ եւ որ մահուան դուռը կը հասցնէ, սակաւահողութիւնն է: Հողի պակասը նոյնն է գիւղացիին համար, ինչ որ անունդի պակասութիւնը՝ կենդանական կազմին համար: Անունդի պարբերական պակասը վերջ ի վերջոյ որ եւ է կազմ կ՚առաջնորդէ դէպի մահ, որքան ալ ան ամուր եւ տոկուն ըլլայ:

Թանկարժէք բոլսերու շրջաններուն մէջ Հայաստանի գիւղացիները մարդ գլուխ ստացած են 1,2էն մինչեւ 3)4 տեսիդին հող, որ առաւելագոյն չափն է. խիստ այդ միայն բախտաւոր ժամկանացուներու բաժին ինկած: Ուրեմն եթէ մինչեւ ընտանիքի անդամներու թիւը ընդունինք հինգ, կը հետեւի որ միջին տնտեսութեան հողի քանակը չանցնի 2 ու կէս տեսիդինը: Պէտք է գիւղացի ըլլալ եւ այն ալ Հայաստանի գիւղացի, հասկնալու համար թէ հողի ինչ ողորմելի քանակութիւն կը նկարկայացնէ այդ: Գիւղացին առհասարակ եւ հայ գիւղացին մասնաւորապէս տնտեսութիւն ըսելով կոմունիստներու նման չի հասկնար միայն այդի, բանջարանոց, կամ արտ, այլ հաստատութիւն մը, որ բաժնուած է բազմաթիւ բազկացուցիչ մասերու, որ իսկապէս տնտեսութիւն է, որ կրնայ գոհացնել դո՛նէ նուազագոյն պահանջները, մէկ խօսքով, ինքնապահ դարձնել:

Արդ՝ երկու քուկէս տեսիդին հողը կրնա՞յ իր մէջ առնել տնտեսութեան քանի մը ճիւղեր, կրնա՞յ տալ գիւղացիին առօրեայ գործածութեան պաշարները: Պատասխանը ժխտական է· որովհետեւ հողի այդ չնչին քանակը չի կրնար վերածուիլ տնտեսութեան շարք մը ճիւղերու, հակառակ պարագայիին ամբողջ տնտեսութիւնը կը տուժէ առանց որ եւ է շօշափելի արդիւնք տալու: Իսկ հայ գիւղացին այժմ աւելի քան երբեք պէտք ունի այդպիսի տնտեսութեան մը. որ գինքը իսկապէս տնտեսութեան տէր դարձնէ, եւ ոչ թէ պարզ մշակ, ռէնտպէր: Հայ գիւղացին բացի մէկ բանէ (նայած թէ ինչով կը զբաղի) դեռ ամէն ինչ շուկայէն կը գնէ: Եւ որովհետեւ այդ մէկ բանն ալ միշտ ենթակայ է երկնքի պատուհասին, միշտ կախուած է բնութեան քմահաճոյքէն, բարեյաջող պարագայէն ալ անհրեւակայելի աժան կը ծախուի: Հայ գիւղացին կը ստիպուի կա՛մ պարտքի ու վաշխի մէջ խրիլ, եւ կամ ծոմապահութեամբ ապրիլ, որ ծանրագոյն կ՚անդրադառնայ իր կեանքի բոլոր կողմերուն վրայ:

Ճիշտ է, լեռնային շրջաններու մէջ քիչ մը աւելի հող ստացած է Հայաստանի գիւղացութիւնը, բայց ի՛նչ օգուտ. այդ քիչ մը աւելին աւելի քիչ է, քան դաշտավայրերու ամենաքիչը: Կոմունիստները, որ «կազմակերպուած պայքար կը մղեն բնութեան դէմ», այդ շրջաններու գիւղացիութիւնը մատնած են բնութեան ձեռքը, դարձուցեր են անոր խաղալիքը: Ժանգ, եղրաշտ, ժանտախտ, մարախ... Իսկ արդի՞նքը—հայ գիւղացիին տնտեսութիւնը կը մնայ անկազմակերպ եւ աննպատակայարմար: Ան դեռ այնպիսի տեղեր կը սերմանէ ոսկի հատիկը ուրկէ միայն փուշ եւ տատասկ պիտի հնձէ, իր «հողը» դեռ մեծ մասով «դէմի» է (անջրդի) եւ վերջապէս, իր տնտեսութիւնը կախուած է բնութեան ամենազօր քմահաճոյքէն:

Լեռնային շրջաններու գիւղացիներու տնտեսութեան մասին խօսք չի կրնար ըլլալ, անոնք տնտեսութիւն չունին բառին տարրական իմաստով իսկ: Անոնք միայն իրենց ընտանիքը եւ իրենց ստամոքսը կը խաբեն, անոնք կառավարութեան համար նշանակութիւն ունին միայն իբրեւ հարկատուներ, որպէս պետութեան դանձը լեցնողներ... յօդուտ կոմունիստական Խնդերնացիոնալի: Հոգ չէ, թէ ինչպէս կը դանձուի այդ հարկը, թէ ան իր ո՛ր լաթի կտորը ծախու կը հանէ եւ թէ որ զօրքա_կոմունիստին ճանկը կ՚իյնայ:

Եթէ սակաւահողութիւնը հասարակ է գիւղացիի անունդի պակասին, զէշ հողն ալ հասարակ է կենսահիւթերի պակասութեան:

*Բաւական է ընդհանուր ակնարկ մը ձգել ներկայ Հայաստանի ֆիզիքական աշխարհագրութեան քարտէսին վրայ

ՅԱՋՈՂ ՎԱ ՅՈՂՈՒՄՈՎ

(ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ)

Ա. Ս. Պուշկին

ԲՐՈՆՅԱՆ ՁԻՆՎՈՐԸ

Ա

Ռուսաստանի ամենահին ազնվական տոհմերից մեկի ներկայացուցիչ, հարուստ ու ազնվական Կիրիլա Պետրովիչ Տրոեկուրովը ապրում էր իր կալվածքում, որտեղ նրան հարգում էին ոչ միայն հարևան հողատերերը, այլև նրանց կառապանները։ Նա հյուրընկալ էր, ուրախ ընկերական խնջույքներ էր սարքում, ծանոթներին ընդունում էր պարզ ու սրտանց, ապրում էր այնպես, ինչպես ապրում են հարուստ մարդիկ, որոնք սովոր են ոչ մեկին չհաշվի առնել։ Կանայք նրան սիրում էին, թեև նա ամուսնացած չէր։ Նրա ուշադրությունը հրապուրում էր նրանց։ Տղամարդիկ նրան հարգում էին, թեև նրան չէին սիրում։ Նրա գործերի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր, բայց բոլորը համոզված էին, որ նրանք լավ են գնում։

Նրա տունը միշտ լիքն էր հյուրերով։ Ամեն օր սեղանը պատրաստում էին հարյուր հոգու համար, բայց ամենաքիչ հիսուն հոգի միշտ նստում էր։ Ամեն ինչ ուրախություն էր պատճառում, ամեն ինչ ժպտում էր։ Ճաշերը, որոնք մատուցվում էին ֆրանսիական ճաշարանից հրավիրված խոհարարի կողմից, շքեղ էին և առատ։ Գինին հոսում էր գետի պես։ Ճաշից հետո միշտ ներկայացումներ էին տրվում կամ ֆրանսիական վոդևիլներ, որոնք հրավիրված էին Մոսկվայի թատրոններից։ Տրոեկուրովի կալվածքում ամեն ինչ ֆրանսիական էր՝ սկսած ճաշերից մինչև դերասանները։

Տրոեկուրովը ամուսնացած չէր, և նրա տնտեսությունը վարում էր նրա քույրը՝ Ելիզավետա Պետրովնան, որը նրանից տասնհինգ տարով մեծ էր։ Ելիզավետա Պետրովնան ամուսնացած էր եղել, բայց արդեն վաղուց էր այրի մնացել։ Նա ունեցել էր մի աղջիկ, որը մանկուց մեծացել էր նրա մոտ։ Ելիզավետա Պետրովնան ամենևին գեղեցիկ չէր, և նրա երիտասարդությունն էլ շատ վաղուց էր անցել։ Նա ամենևին չէր ձգտում հյուրեր ընդունել, բայց ամեն ինչ անում էր, որ հյուրերը հանգիստ զգան։ Նա ամեն ինչ գիտեր, ամեն ինչ հասցնում էր, ամեն ինչ կարգի էր բերում, ամեն ինչ տեսնում էր։ Նա ամենևին չէր նեղանում, երբ իրեն խնդրում էին ինչ-որ բան անել, և ամենևին չէր ամաչում, երբ ինքն էր ինչ-որ բան խնդրում։ Նա ամենևին չէր նայում հյուրերի հագուստին, և ամենևին չէր հետաքրքրվում, թե ինչ են նրանք ասում։ Նա միայն ուշադրություն էր դարձնում, որ ամեն ինչ լավ լինի, և որ ոչ ոք չձանձրանա։

Ելիզավետա Պետրովնան ամենևին չէր սիրում գրքեր կարդալ, բայց ամեն առավոտ նա ստիպված էր լինում կարդալ ռուսական թերթերը, որոնք նա ատում էր։ Նա ատում էր նաև ռուսական գրքերը, որոնք նա կարդում էր միայն այն ժամանակ, երբ ստիպված էր լինում կարդալ։ Նա ատում էր նաև ռուսական թատրոնը, որովհետև ռուսական թատրոնում ներկայացումներ էին տրվում։ Նա ատում էր նաև ռուսական երաժշտությունը, որովհետև ռուսական երաժշտությունը հնչում էր ռուսական թատրոնում։ Նա ատում էր նաև ռուսական ամեն ինչ, որովհետև ռուսական ամեն ինչ հնչում էր ռուսական թատրոնում։

Ելիզավետա Պետրովնան ամենևին չէր սիրում նաև ռուսական ճաշերը, որոնք նա ատում էր, որովհետև ռուսական ճաշերը հնչում էին

*** Պերլինի անգլ. դեսպանը Շթրէզէմանի ներկայանալով պաշտօնապէս հրաւիրեց Գերմանիան, որ Ալպանիոյ սահմանագլուխին վրայ քննութիւն կատարելու համար զերման զինուորական մարմնին անդամները նշանակէ։ Շթրէզէման պատասխանեց որ եթէ նոյն հրաւէրը կատարուի նաեւ Ֆրանսայի եւ Իտալիոյ կողմէ, Գերմանիա պատրաստ է մասնակցելու այդ քննութեան։ Հանրապետական թերթերը յաղթականօրէն վեր կը հանեն այս առթիւ թէ «Գերմանիոյ հմայքը մեծապէս բարձրացած է Եւրոպայի մէջ»։

*** Սքուփչինայի մէջ պատերազմական ելմտացոյցի քուէարկութեան առեն Ռատիչի գիւղացիական կուսակցութեան կողմէ նախկին նախարար Փուցելի յայտարարեց թէ՝ նկատի առնելով արտաքին կացութիւնը եւ Պալքաններու ու Եւրոպայի մէջ խաղաղութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնը, իր կուսակցութիւնը առանց փոփոխութեան կը քուէարկէ կառավարութեան ներկայացուցած պատերազմական ելմտացոյցը։ Այս յայտարարութիւնները բուռն ծափերով ընդունուեցան։

«Տէյլի Թելեկրաֆ»ի դիւանագիտական աշխատակիցը կը գրէ թէ հակառակ ալպանական խնդրին մեղմանալուն, իտալիա դեռ բոլորովին համոզուած չէ թէ Ալպանիայ մէջ՝ եուկոսլաւ ամէն վտանգ անհետացած է։ Իտալական կառավարութիւնը կը պնդէ որ ալպանեւսերպ սահմանին երկայնքը զինուորական պատրաստութիւնները կը շարունակուին։ Աշխատակիցը կ'աւելցնէ թէ մեծ պետութիւնները կը մերժեն Ազգերու Դաշնակցութեան միջամտութիւնը այս խնդրին մէջ։

ՀԱԿԱՍԵՐՊ ՅՈՅԶԵՐ ԻՏԱԼԻՈՅ ՄԷՋ

«Տէյլի Հէրըլտ»ի Լուկանոյի թղթակիցը կը հեռագրէ.— Հռոմէն եւ Թրիէսթէն կը տեղեկացնեն թէ Իտալիոյ զանազան սերպ հիւպատոսարաններուն դէմ շինամական ցոյցեր կատարուած են։ Թրիէսթէի մէջ ցոյցերէն վերջ անկարգութիւն մը առաջ եկած է սլաւական թաղի մը մէջ։ Ոստիկանութիւնը արգիլած է եուկոսլաւ հիւպատոսարանին վրայ յարձակելու ֆաշիստական փորձ մը։

Թուրքիա եւ Պուլկարիա

Սոֆիայէն հեռագիր մը կ'ըսէ թէ Թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները պիտի վերահաստատուին, էնկիւրիի համար պուլկար դեսպանի մը անուանումով։ Թուրք կառավարութիւնը հաւանութիւնը տուած է այս պաշտօնին կոչելու համար Պուքրէշի այժմու պուլկար գործակատար Փավլովը։

"Էթապլի" եւ փոխանակելի ցոյներ

«Էթապլի» բառին մասին, որ այնքան վէճերու պատճառ դարձաւ, համաձայնութիւն գոյացած է Թէվֆիք Րիւշտի պէյի եւ էքսինտարիսի միջեւ։ Արեւմտեան Թրակիոյ եւ Պոլսոյ փախստականները չեն կրնար վերադառնալ, բայց կրնան ծախել իրենց կալուածները։ կալուածներու հաշուեյարդարումին համար երկու կառավարութիւններուն կողմէ նշանակուած են զնահատիչ յանձնաժողովներ։ Այն Թուրքերը եւ Յոյները, որոնք հարստութիւն կամ արհեստ չունին, փոխանակելի են։ 30 Հոկտեմբեր 1918 եւ 30 Յունուար 1922 թուականներուն Պոլիս գտնուած Յոյները, ինչպէս նաեւ Թրակիոյ մէջ բնակող Յոյները «Էթապլի» նշանակուած են։

ՄԱՐՍԻԼԻՈՅ ՀԱՅ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԸ

Համայնավար «իւմանիթէ»ի մասնաւոր թղթակիցը, որ Ֆրանսայի մեծ քաղաքներու գործազրկութեան մասին քննութիւն կը կատարէ, Մարսիլիայէն նոր թղթակցութիւն մը ղրկած է, որուն մէջ կ'ըսէ.—

Բոլոր երկիրներէն Մարսիլիա հաւաքուած հազարաւոր պրոլետարներու մէջ մեծ թիւ մը կը կազմեն հայ աշխատաւորները, որոնք կը բնակին Քան Օտտոյի տխուր տաղաւարներուն եւ Տօմինիքէն փողոցի մութ պանդոկներուն մէջ։ Մարսիլիոյ մէջ բոլորովին գործազուրկ Հայերու թիւը 1000է աւելի է։ Աւոնց մասին գայթակղութիւնը կրկնակ է. աւոնց համար 80,000 ֆրանք քուէարկուած էր ֆրանսական կառավարութեան կողմէ եւ յանձնուած հարուստ Հայու մը։ 10,000 ֆր. բաշխուեցաւ ու միացեալը անհետացա՛ծ է։ Հայը կը յայտարարէ թէ այս գումարով զբաղող Խորհուրդը լուծուած է եւ ինք չի կրնար այդ նպաստին պատասխանատուութիւնը ստանձնել։ Այսպէս առկախ կը մնայ այս խնդիրը եւ հայ բանուորները, որոնք հրապուրուելով շահագործուած էին, հիմա գործէ հանուած են եւ առանց օժանդակութեան կը մնան, մատնուած սեւ թշուառութեան...։

«Մեր միութենական ընկերները զանոնք կը պաշտպանեն ամէն կարգի յարձակումներու դէմ. (անոնցմէ մէկը ապտակուեցաւ ոստիկանի մը կողմէ եւ ձերբակալուեցաւ առանց պատճառի)։ Անգործներուն ինքնութեան թուղթ տալ չեն ուզեր, մինչեւ որ «գործազրկութեան վկայագիր» չներկայացնեն, սակայն գործատէրերը զանոնք գործէ կը հանեն՝ գրելով որ պայմանագրութիւնը լրացած ըլլալով, ազատ է ամէն յանձնառութենէ»։

** *Իւմանիթէ* կը հրատարակէ նաեւ ֆոմինիքէն փողոցի մէկ պանդոկին առջեւ կանգնած Հայերու պատկերը։

40,000 ռակի՝ հիւանդանոցէ մը

Պոլսոյ մէջ ծխախոտի Ռէժիի վարչութեան իրաւագէտ խորհրդական Նաիլ պէյ դատ բացած է Յոյներու հիւանդանոցին դէմ, եւ կը պահանջէ 40 հազար ոսկի, որովհետեւ, կը պնդէ, հոգաբարձութիւնը Լքեալ գոյքերու վարչութեան գրասենեակէն փրկած է մօտ մէկ միլիոն ոսկի արժէքով կալուածներ։ Եւ այս առթիւ կը կրճտի կարգ մը պայմանագրութիւններու, զորս կնքած է հիւանդանոցին հոգաբարձութիւնը։

ՄԱՆՐ ԼՈՒԲԵՐ

Ֆրանցի անմիջական ամրապնդումին մասին շրջած զրոյցները պաշտօնապէս կը հերքուին։

Ֆրանսա Ուաշինկթընի գինաթափութեան համաժողովին պիտի ղրկէ «լուռ դիտող» մը։

Ընկերվարական բանուորական միջազգայինի գործադիր կոմիտէի քարտուղար Ֆր. Ալտլերի, առաջարկելով մօտ օրէն արտակարգ նիստի հրաւիրել գործադիր կոմիտէն։ Այս վերջինը պիտի գումարուի 2ին եւ պիտի զբաղի պալքանեան խնդրով։

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

Շ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ Ռոստոմ, Ջաւարեան, Իշխան, Քրիստափոր, Վարուժան, Վարդգէս, Վահագ եւ Ե. Յ. Դ. Պատ. միութիւնը, վաղը կիրակի ՌիւՍէն փաք, սալօն Սէն փաքի սրահը։

Կը խնդրուի անդամատեորով ներկայանալ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Շ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։

Դիմել Յառաջի խմբագրատունը։

ԳՈՒՍԱՆ ԵՐԳԱԽՈՒՄԲ

Հայկական Սէնթռնիք համերգ, մասնակցութեամբ Օպէօնի օրքեսթրին, Կիրակի, 10 Ապրիլ ժամը 8ին. կը կրկնուի Գուսանի Ա. համերգը. Salle des Agriculteurs *մէջ*, 8 Rue d'Athènes-Métro St. Lazare:

Յայտագրին մէջ.— վէպէր, մուսօրկսկի, Շարփանթիէ, կոմիտաս վարդապետ, Գ. սիւնի։ Մուտք.— 30—3 ֆրանք։

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՏՐԱՄԱ-ՕԲԵՐԵԹԻ ԽՈՒՄԲԸ

Ղեկավարութեամբ Յ. ՂԱԶԱՐԵԱՆի եւ մասնակցութեամբ Տիկին ԲԱԴԱԼի ու տեղական ուժերու.

Կը ներկայացնէ **—ԱՃՈՒՂ ՂԱՐԻՊ—**

ԵՐԳԱՌԱՆ ՏՈՒԱՄ

Լիոնի Emile-Zola սրահին մէջ 127 Rue Boileau, վաղը կիրակի երեկ ժամը ճիշտ 2.30ին։

ԳԻՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Շ. Ո. ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Փարիզի Չափահաս երկսեռ Որբերու միութեան Բ. դասախոսական ժողովը՝ վաղը կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ուկէսին կը հրաւիրէ իր անդամները Մ. Ժողովի սենեակը՝ 11 Rue des Beaux-Arts։ կը հրաւիրուին բոլոր ընկերները։ Այս առթիւ կ'ուզենք իմացնել նաեւ Առնուվիլ լէ կոնէսի եւ էզանվիլի կուսակցական անհատ ընկերներուն, որ արձանագրութեան համար դիմեն 6 Rue Beauséjour, Sarcelle, ընկեր Նուպարին։

Լիոնի Խ. Բ. Ը. եւ շրջակայ գաւառներու Հայրենակցական միութեան դասախոսական ժողովը՝ վաղը կիրակի առաւօտեան ժամը ճիշտ 9ին, 127-129 Rue Boileau Էմիլ Զոլայի վերնասրահը. դասախօս Ս. Փոզհարեան։

Հ. Մ. Ը. Մ.ի Ալֆորվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր անդամները եւ համակիրները ընդհանուր ժողովի այսօր Շաբաթ երեկոյ ժամը 8ին, 108 Rue Etienne Dolet, ծանօթ սրահին մէջ. Օրակարգ՝ վարչութեան ընտրութիւն։

Շ. Մ. Ը. Մ.ի Ժուանվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ Նժդանի, Ֆօնթենէի, սէն մօրի, եւ այդ շրջանի բոլոր Ֆութպոլ խաղալ փափաքող տղաքը, վաղը կիրակի առաւօտ ժամը 10ին Ժուանվիլի 10 Quai Beaubourgի սրճարանը, տեսնել Գ. Դ. Պէյազեանը։

Մարսէյլ, Շ. Ք.— *Ստացանք 35 ֆրանք։*

Սուան, Կ. Շ.— *Ստացանք 15 ֆրանք։*

Մարսէյլ, Ս. Ա.— *Ստացանք 35 ֆրանք։*

Վիլֆռանշ, Ա. Մ.— *Ստացանք 35 ֆրանք։*

Պուքրէշ, Վ. Ջ.— *Ստացանք 20 ֆրանք։*

Վալանս, Ա. Ս.— *Ստացանք 50 ֆրանք։*

Վալանս, Ն. Ս.— *Ստացանք 15 ֆրանք։*

Մարսէյլ, Ե. Մ.— *Ստացանք 76.50 ֆրանք։ Կարգադրեցինք։*

Տրամօն, Մ. Ա.— *Ստացանք 10 ֆրանք։*

Վալտօն, Մ. Ա.— *Ստացանք 35 ֆրանք։*

Մարսէյլ, Գ. Ծ.— *Ստացանք 492 ֆրանք։*

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Լիոնի Քեռի խումբի վիճաբանական ժողովը՝ Մարտ 29 Երեքշաբթի, Գրադարանի մէջ, Րիւ Փօլ Պէռ թիւ 75 երեկոյեան ժամը ճիշտ 8.30ին, ներկայանալ հին անդամատեառով։

Շ. Յ. Դ. Վիէնի Շրջ. կոմիտէի ընդհ. վիճաբանական ժողովը՝ վաղը կիրակի կէս օրէ վերջ ժամը 2ին հայ ժողովրդային լսարանին մէջ։

Շ. Յ. Դ. Սարսէլի «Հրայր» խումբի ժողովը՝ վաղը կիրակի, ժամը 2ին, ընկեր Յ. Երանեանի սենեակը՝ 11 Rue des Beaux-Arts։ կը հրաւիրուին բոլոր ընկերները։ Այս առթիւ կ'ուզենք իմացնել նաեւ Առնուվիլ լէ կոնէսի եւ էզանվիլի կուսակցական անհատ ընկերներուն, որ արձանագրութեան համար դիմեն 6 Rue Beauséjour, Sarcelle, ընկեր Նուպարին։

Լիոնի Խ. Բ. Ը. եւ շրջակայ գաւառներու Հայրենակցական միութեան դասախոսական ժողովը՝ վաղը կիրակի առաւօտեան ժամը ճիշտ 9ին, 127-129 Rue Boileau Էմիլ Զոլայի վերնասրահը. դասախօս Ս. Փոզհարեան։

Հ. Մ. Ը. Մ.ի Ալֆորվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր անդամները եւ համակիրները ընդհանուր ժողովի այսօր Շաբաթ երեկոյ ժամը 8ին, 108 Rue Etienne Dolet, ծանօթ սրահին մէջ. Օրակարգ՝ վարչութեան ընտրութիւն։

"ԴՐՕՇԱԿ,,Ի

Մարսէյլի գործակալն է
ընկ. ԿԱՅԾԱԿ ՃԱՐԱՅԵԱՆ
14 Rue de la Fare

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Կը փնտռուի Գոնիացի ցարութիւն թէրզեան որ Լիոնի մօտակայ գիւղերը կը գտնուէր ասկէ քանի մը ամիս առաջ։ Տեղեկացնել՝ եօզկատցի Haroutune Emirzianի 170, Rue Nationale Paris (13e).

— Կը փնտռուին Գէորգ Բաղդասարեան, Օշականցի, 23 տարեկան, եւ Ա. Խաչատրեան, կ'ենթադրուի ըլլալ Իւզլն Տէրէ, Կրանվիլ։ Տեղեկացնել՝ ցառաջի։

— կը փնտռուի Մարաշցի Աբրահամ Շեղինեան, որ կը կարծուի թէ գահիրէ կը գտնուի։ Գրել՝ Sarkis Paperianի Chez Mr. Jacqueminի René Volfroicourt (Vosges) France.

— Պրուսայի կէմլէյիկի պէյնի գիւղացի Պետրոս Հայրապետեան կը փնտռէ իր գիւղացիները, ու, յանուն մարդասիրութեան, կը խնդրէ որ Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Եգիպտոս կամ այլուր գտնուող պէյնիցիները զինքն իրենց հասցէն, գրելով՝ Bédros Hairabedianի՝ au Couvent Arménien St. Jacques. Jérusalem, Palestine.

— Գրիգոր Տիլբիեան կը փընտռէ Սեբաստացի Խաչիկ Մըճճիկեանը, կը կարծուի որ Փարիզ կամ Մարսիլիա կը գտնուի։ Գրել՝ Sarkis Papérianի Chez Mr. Jacquemin, Volfroicourt (Vosges)։

կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16-18 տարեկան։ Դիմել՝ պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ԽՄԵՑԷՔ ԵՒ ՏԱՐԱՓԵՑԷՔ ԱՄԵՆՈՒՐԵՔ

ՀՈՏԱԻԷՑ ԵՒ Ա.ՆՈՒՇԱՀԱՄ

ԵԱՎՐՈՒԻ ԹԷՅԵՐԸ «THÉ YAVROU»

Շահատարուած 1880ին

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԴՆՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԻՄԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ



ԵԳԻՊՏՈՍ.— Դաւնիկ Պահլավեան 7 Mahmoud Pacha El Falaki Alexandrie

ՅՈՒՆԱՍՏԱՆ.— Միհրան Սարգիսեան 14 Rue Philonos le Pirée

ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Կ. Աֆեեան եւ Ընկ. Վառնա

ԻՏԱԼԻԱ.— Zovighian Setrak, Via Mentana 27 Padova

ՊԼՅՐՈՒԻԹ.— Tamer Frères Boite Postale N° 84

ԹՈՒՆՈՒՀ.— Daniel Cartozo Rue de Tunis Bizerte

ՄԱՐՕԿ.— Elbaz Frères Boite Postale 299 Casablanca

PARIS.— O. Papadopoulo 18 Rue Poulet Paris XVIII

NICE.— J. Ciais 5 Rue Dabray

Գնումներու եւ ամէն տեղեկութեանց համար թղթակցութիւնք ուղղել նաեւ Comptoir des THÉS YAVROU 23 Rue Senac Marseille (B. du R,)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ "ԹԼԿԱՏԷՆ,,

Ղ. ՔԷՆՏԷՐԵԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

6, Traverse du Mont de Pieté: (Ծեծել Տամասի տակը եւ կօշկակարի կրպակին դիմացը)

Ուշադրութիւն նշանատախտակին

Ուրախ եմ աւետելու թէ, փափաքելով կատարեալ գոհացում տալ ազնիւ յաճախորդներուս ճաշակին, յաջողած եմ ապահովել գործակցութիւնը ամէն տեսակ արեւելեան հմտող կօշկակարներու, նուրբ խմորեղէններու եւ հատընտիր անուշեղէններու մասնագէտ ծանօթ խոհարար-վարպետ Պ. Բիւզանդ Քէօթահեալեանի։ Անմրցելի ըլլալու աստիճան ժամանակաւոր, ամէն տեսակ մսեղէն, բանջարեղէն եւ ձկնեղէն։

Ընտանեկան հաւաքոյթներու, ընդունելութեանց, հարսնիքներու համար մասնաւոր ապսպրանք կ'ընդունուին։

ԱՆԹԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԸՆԴՀՐԱԾՔԵՑ ԲՈԼՈՐ ՔՐԵՈՒԱԾՔԱՑԵՐՈՒՆ

Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ։ Քարտմանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուով։ Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի եւ անձնագրի գործողութիւններ։

ԱՐԱԳ ՁԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

VAHAN YARJANIAN

CONTENTIEUX

5 Rue Cardinal Mercier Paris, (9e)

Tél. CENTRAL 96-70 կամ 97.39 Métro: CLICHY

» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ

Խորհրդակցութիւններ ամէն օր ժամը 9.12 եւ 2.7 բացի կիրակի

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Երք. եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առաւաւտեան ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՒՆ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

Փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ

Շամեդ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ԱՍԿԱՐԱՆ

25 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Սթերլին,	L. St.	124	03
Տոլար,	Dollar	25	50
Մարք (ոսկի)	100 Mark	605	—
Թրքական Թղթ.	L. Trq.	12	78
Թրք. ոսկի	» or	114	50
Մէճիտիէ	Médjidié	8	75
Լէվա	100 հատ Léva	18	50
Տրախմի	» Drachme	32	50
Լիր	» Lire	117	—
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	70	80
Ֆրանց.	» Frc. Suisse	491	—
Լէյ	100 հատ Ley	15	22
Ջերվոնեց	(10 Roubles or)	90	—
ԱՐԾԵԹԱԻԼ			
Եգ. Ֆր. Ֆոնսիէ	I Cr. Fonc. Eg.	3050	—
»	II »	1940	—
»	III »	1555	—
Ռումելի երկթղ.	Lots turcs	160	—

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

ՎԱՐԶՈՒ ՏՈՒՆ

5 սենեակ, մէկ խոհանոց, ջուր, ելեկտրականութիւն, պարտէզ։ Ցարեկան 4000 վարձք։ Դիմել երեկոները 7էն վերջ, տէր ցակոբեանի Impasse Thiberville, Genne (Seine)։

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ

ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏ

որ հրատարակիչն է մեր տպարաններէն կը լուսաբերէ ընթերցասէր ազգին ձեռքը։ Ամէն տեսակ գիրքեր, ամէն տեսակ տպագրութիւններ եւ ձոխ մատենադարան մը ունի մատենադարանի գիրքերու։

Դիմել, — Librairie Hagopian Frères, 9 Agopian Hagachène, Constantinople. Tchakmakdjilar.

IMPRIMERIE - MASSIS - Editeur
208bis, Rue Lafayette Paris

Le Gérant : H. TEURN

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration — Խմբագրութիւն — 208bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԿԻՐԱԻ 27 ՄԱՐՏ 1927

27 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 296

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆԵՐԳԱՂԹԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ

Ինչպէս ամէն գարնան, այս տարի ալ վերսկսեր են հնչեցնել ճաթած թմբուկը, ներգաղթի մասին:

Տրուած աւետիսին համաձայն, քանի մը հազար հոգի պիտի առնեն Յունաստանէն: Հարիւր հոգի ալ Ֆրանսայի բաժին հանած են, «որակեալ»ներու համար (մասնագէտ, արհեստաւոր):

Եւ ինչպէս միշտ, նորէն թեւերը սօթթած է թեթեւսօլիկ չօկը, ուր երիտասարդներէ աւելի, մտքով եւ սրտով ծերացածներ կը փայլին:

Ուրեմն, աճուրդ կայ նորէն: Կամ աւելի ճիշտ, նուազուրդ, քանի որ, տեղրակ անցնելու, մուտքի արտօնագիր ստանալու համար, հիմնական պայման է վրայ տալ կարգ մը առաքինութիւններ, —կեղծել, շողոքորթել, ուրանալ զանազան սրբութիւններ, եւ ղրամ ցնծալ: Այս արհեստին կատարելագործումը տեսանք Յունաստանի մէջ: Թերահաւատները կրնան փորձել այստեղ ալ. թէեւ, չգիտենք թէ ո՛ր բախտաւորները պիտի գտնուին այդ մինուճար հարիւրին մէջ:

Հետաքրքիր էինք իմանալու թէ, ուրիշ եզկիւրներու մէջ ալ կա՞յ այսպիսի սովորութիւն,— հայրենիք երթալու համար, փոխանակ համապատասխան իշխանութեան, հիւպատոսարան դիմելու, խաղալիք գառնալ բարեգործական կամ կուսակցական օդանի մը, որպիսին է Չօկը: Եւ խաղալիք գառնալ՝ ամենագեհիկ սակարկութիւններու համար, արհեստով խաչագողներու ձեռքը, ինչպէս եղաւ, նորէն, Յունաստանի մէջ:

Յայտնի է որ մեր «ազատ եւ անկախ» հայրենիքին երթեւեկն անգամ կապուած է Մոսկուայի եւ Թիֆլիսի բարի կամքէն: Եւ յետոյ, Երեւանը չունի, արտասահմանի մէջ, առանձին դեսպանութիւն կամ հիւպատոսութիւն: Խորհրդային Միութիւնն է բոլորին լիազօր ներկայացուցիչը: Պարզ տգիտութիւն կամ կեղծիք է, երբ կարգ մը թերթեր Հայաստանի ներկայացուցիչ կը համարեն խորհրդային այս կամ այն դեսպանատան մէջ գտած հայ պաշտօնեայ մը: Թող Թուենդ չելլեն ձեր «ազգասիրական» ջիղերը. յաճախ Ռուս մը, վրացի մը կամ Թաթար մըն է որ պիտի վաւերացնէ ձեր անցագիրը, Հայաստան երթալու համար, իբրեւ վարիչը դեսպանատան կամ հիւպատոսարանի համապատասխան ճիւղին:

Արդ, եթէ ներգաղթի նոր «իրատէ» ելեր է, ի՞նչ իրաւունքով Չօկը ցանկեր պիտի կազմէ, զտումներ եւ գանձումներ պիտի կատարէ, ամուլ յոյսեր արծարծելով, բայց աւելի շատ ղրկանքներ պատճառելով եւ գայթակղութիւններ յարուցանելով: Թո՛ղ հիւպատոսարանը կատարէ այդ գործողութիւնը, մանաւանդ որ, բաւական ճոխ հարցարան մը ունի, թշուառ գաղթականին եօթը պորտը հասկնալու համար:

Ձի՞ն ուզեր որ ամէն մարդ երթայ, — այն ատեն թող աչքերը գոցելով ժողվեն բոլոր կոմբինիներու, Չօկի եւ ոամկավար ակումբներու անդամները, եւ քշեն շոգենաւ: Ամօր հաւար ոչ գիշերային տքնութեանց պէտք ունին, ոչ ալ հարցարանի կամ ցուցակի: Գործողութիւնը նոյնքան դիւրին է, որքան երախայի մը մկրտութեան ատեն: Հիւպատոսը կը հարցնէ եւ կնքահայրը կը պատասխանէ, ի դիմաց թեկնածու-երախաներուն. «Հաւատք, Յոյս... Երեւան»:

Այս աստուածահաճոյ գործին համար, չեն պակսիր անձնուէր կնքահայրեր, ցարական Դուման անդամ Պապաջանեաններէն մինչեւ ծերակուտական Քինկի ախոյեան Զօպանեանը, կամ Անդրկովկասի առեւտրական ներկայացուցիչ Քաճար Պահմանի Միրզան, որ «Երեւան»ի նոր գործակալն է Մարսէյլի մէջ...:

Իսկ եթէ իրապէս ներգաղթ կ'ուզեն կատարել, ուրիշ խօսքով՝ հայրենիքին դուռները բանալ այս հալածական եւ բազմաչարչար ժողովուրդին առջեւ, պէտք է վերջ տան խեղկատակութեան, եւ գործը կազմակերպեն այնպէս ինչպէս վայել է ո՛ր եւ է իշխանութեան:

Երեւանի մէջ բազմած իշխանութիւնը կառավարութի՞ւն է թէ կայսերական կալուածներու վարչութիւն, կամ տիպար ագարակ: Ո՞րքէ սորվեցան զանազան կտակներու կամ նուէրներու փոխարէն ներգաղթ կատարելու աճպարարութիւնը: Ինչո՞ւ չեն պահանջեր իրենց արդար բաժինը, պետական ընդհանուր ելմտացոյցէն: Ինչո՞ւ թոյլ կուտան որ Հայաստանի ժողովուրդը ճարահատ արտագաղթի դիմէ, տկարացնելով երկիրը, եւ, իրենց իսկ օրէնքին տրամադրութեամբ, պակսեցնելով մեր երկրին ելմտական բաժինը, քանի որ վարկերը կը բաշխուին համաձայն բնակչութեան թիւին: Ինչո՞ւ կ'անճրկին եւ քանի մը խորհրդային շոգենաւ չեն կրնար տրամադրել, ղազիականներու փոխադրութեան համար, երբ Երեւանի մէջ 7000 րուբլի դրամ կը հանգանակեն Պավիէրայի մէկ բանտը ճնացած «կարմիր» ռազմիկներու համար: Ինչո՞ւ չեն գործեր գոնէ այնպէս ինչպէս վրացի եւ թուրքթաթար կոմունիստները, առանց ազգամիջեան կռիւներու, առանց անամէջ յոխորտանքներու, բայց իրենց վարած ժողովուրդի տառապանքին, անոր դէմ գործուած զարհուրելի անարդարութեան եւ իրենց պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ, հետեւաբար եւ արդար դառնութեամբ:

Բոլոր հարցումները ամփոփելով, ինչո՞ւ չեն մշակեր ազգային քաղաքականութիւն, ոչ թէ թթու զգացումներով, այլ առողջ գիտակցութեամբ եւ սրբազան եսասիրութեամբ, որպէս զի վերջ գտնէ ներգաղթի սա զզուելի, ամարդի առեւտուրը:

Չեզնութիւնը՝ ամբողջ ժողովուրդի մը տառապանքին:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ՁԻՇՏ Է, ՁԻՇՏ ՉԷ...

«Պայքար», Ամերիկայի ռամկավարներուն պաշտօնաթերթը, հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ, իբրեւ պատասխան իր մէկ աշխատակցին, որ վնասակար գտած էր արտասահմանի կողմէ ո՛ր եւ է միջամտութիւն՝ Հայաստանի գործերուն: Ինչպէս կը տեսնէք, այս խորհրդածութիւններուն մէջ միտքեր կան որոնց դէմ նոյնքան ուժգնութեամբ կը բողոքեն ուրիշ ռամկավար հրապարակագիրներ եւ «քաղաքագէտ»ներ.

— «Ներելի չէ իբրեւ բացարձակ իրողութիւն ընդունիլ թէ մեր քաղաքական գործունէութիւնն ու ազատագրական շարժումները արտասահմանի մէջ ծրագրուած ու երկրի ժողովուրդին պարտադրուած են, եւ արտասահմանի ղեկավարութեան պատճառաւ յանգած են աղէտներու: Աւիկա յեղյեղուելով, ստուգութեան պէս բան մը դարձած է, բայց հիմնաւոր իրողութիւն մը չէ: Հարստահարութեանց խնդիրը, որ կրնայ սկիզբն համարուիլ Հայկական ներկանց, թուրքիոյ հայազնակ գաւառներէն ծագեցաւ, եւ ամէնէն աւելի յուզուեցաւ Կ. Պոլսոյ առաջին Հայաստանցի Պատրիարքին, Հոգեշոյս Հալրիկի պատրիարքութեան շրջանին: Պերլինի վեհաժողովին պատուիրակութիւն ղրկուեցաւ Պոլսոյ Ազգային իշխանութեանց որոշումով. արտասահմանի Հայերը, որոնք սակաւաթիւ էին, նիւթական ու բարոյական օժանդակութիւն բերին: Նոյն իսկ մեծ Նուպար, որ արտասահմանի Հայ մըն էր, աւելի չափաւոր ու բանաւոր ծրագիր մը Ջատագովեց, որ սակայն ընդունելութիւն չգտաւ: Ազատագրական շարժումներն ալ առաջին անգամ Երկրի մէջ սկսան ու Երկրի ուժերով ղեկավարուեցան: Երբ խոր ուշադրութեամբ դիտենք, պիտի տեսնենք, որ, եթէ թուրքիոյ Հայոց ազատագրական շարժումները նպատակին չհասան, եթէ աղէտներու յանգեցան, հակառակ արեան ու դրամի այնքան մեծ զոհողութիւններու, առոր պատճառը ոչ թէ արտասահմանի ղեկավարութիւնն է, ինչպէս կ'ենթադրուի, այլ այն է թէ այդ շարժումը իրապէս ղեկավար չունեցաւ, ղեկավարներ, որոնք զղացումէ աւելի միտք ունենային, ունենային իրատեսութիւն եւ հեռատեսութիւն, կազմակերպելու ու վարելու կարողութիւն եւ մանաւանդ տեղեակ ըլլային հայ ժողովուրդին ու թշնամիին ուժին, գործին դժուարութեանց եւ տիրող քաղաքական պայմաններու ու հոսանքներու:»

ՍԻՐԱՀԱՐ ԱՂՋԻԿ.— կուբտոնի մէջ մանկամարդ օրիորդ մը, Մարի-Լուիզ Ռօսինեօլ, 16 տարեկան սիրահար սոխակը, կը ծառայէր գինեվաճառի մը մօտ: Խմեց անուշ գինին ու սիրոյ բոցը զարկաւ իր սիրտին: Այնքան բուռն սիրով մը վառուած էր գիւղին երիտասարդներէն մէկուն համար, որ ուզեց ամուսնանալ շուտով: Տղուն ծնողքը չուզեց հարս առնել սիրահար սոխակը: Եւ աղջիկը, այրած սիրտով, գործը ձգեց եւ գնաց գիւղը, իր մօրը քով: Թոստովանեցաւ իր սէրը՝ մօրը գիրկն ինկած: Երգելով լացաւ: Իրիկունը, պտոյտի ելաւ եւ սիրականին անունը շրթներուն, ադօթեց եւ նետեց ինքզինք գետին մէջ:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Էնկիւրիի պաշտօնաթերթ *Հաքիմիյէթը Միլլիյէ*ի մէջ Սդերդի երեսփոխան Մահմուտ պէյ Պուլկարիոյ մասին գրած է ուշագրաւ յօդուած մը, ուր կ'ըսէ.—

«Վերջին ատեններս նշանակալից գործունէութիւն մը կը տեսնենք Պուլկարիոյ մէջ: Պուլկարները, որոնք մինչեւ հիմա ոչ ոքի դէմ անբարեկամական քաղաքականութիւն չէին հետապնդած, հիմա կը թուի թէ կ'ուզեն թողուլ այդ քաղաքականութիւնը: Պուլկարիոյ եւ Թուրքիոյ միջեւ չկան խնդիրներ, որ դիւրաւ չլուծուին: Այսպէս, դեսպան մը ղրկեցինք Սոֆիա եւ սկսանք առեւտրական դաշնագրի մը մասին բանակցիլ:

«Սակայն մեր յարաբերութիւնները կայուն կը թուին: Ո՛չ մէկ պուլկար դեսպան նշանակուեցաւ Էնկիւրիի համար եւ առեւտրական դաշնագիրը ո՛չ մէկ քայլ առաջ գնաց: Չենք գիտեր այս անորոշութեան պատճառները, սակայն կը նկատենք թէ ամէն անգամ որ պուլկար մամուլը «Պալքանեան Համաձայնութեան», մը մասին կը խօսի, Թուրքիոյ անունը դուրս կը ձգուի: Ուշադրութեան արժանի են իտալեւպուլկար յարաբերութեանց մասին շրջած զրոյցները, որոնք ո՛չ Սոֆիայի, ո՛չ ալ Հռոմի կողմէ հերքուեցան: Ասկէ զատ, կը հարցնենք թէ որո՞ւն կ'ակնարկէ պուլկար արտաքին նախարար Պուրոֆ, երբ կ'ըսէ թէ «ոչ-յարձակողական եւ չեզոքութեան դաշնագիրները խաղաղասիրութեան գրաւականներ չեն»: Արդեօք արեւմտեան պետութիւններո՞ւն կ'ակնարկէ, որոնք Լոքառնօի դաշինքը կնքած են, թէ Թուրքիոյ, որ ոչ-յարձակողական դաշնագիրներ կնքած է:

«Այս բոլորը ցոյց կուտան թէ էական փոփոխութիւն կայ պուլկար քաղաքականութեան մէջ, եւ թէ վտանգաւոր խաղ մը սկսած է Պալքաններուն մէջ: Եւ որովհետեւ Պուլկարիա շարժի՛լ է:»

ՍՈՒՐԻՈՅ ԿՌԻՒՆԵՐԸ

Պէյրութէն 25 Մարտ Թուականով կը հեռագրեն.—

Զինուորական Ջոկատ մը հետազօտական պտոյտ մը կատարեց Եփրատի հիւսիսային անապատային շրջանին մէջ, որ աւազակներու եւ գատապարտեալներու որջ մըն է: Ջոկատը բռնեց 61 չարագործներ, գրաւեց 180 հրացան եւ գողցուած հօտերու դրամը ետ առաւ:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ՄԵՂՄԱՑԱԾ

Աշխատանքի նախարարին վերջին պաշտօնական վիճակագրութեան համաձայն, Մարտ 24ին ամբողջ Ֆրանսայի մէջ նպաստընկալ գործազուրկներու թիւն էր 77,933, որոնց 56 հազար 721ը այր, 21,212ը կին: Անցած շաբաթ նպաստընկալներու թիւն էր 80,414, որով մէկ շաբթուան մէջ պակսած է 2481 հոգի: Եթէ 15 օր առաջուան վիճակին հետ բաղդատենք, նպաստընկալներու թիւը այսօր 4000 հոգի պակսած է:

Միայն Փարիզի նպաստընկալներուն թիւն է 32,550 հոգի, անցած շաբթուան վրայ 2089 հոգի պակաս, իսկ ամբողջ Սէն նահանգին մէջ այս շաբաթ նպաստընկալներու թիւը 3,748 հոգի նուազած է: Իսկ գաւառներու մէջ 1267 հոգի աւելցած է:

Վերջացող շաբթուան ընթացքին, Աշխատանքի նախարարութեան կողմէ 580, իսկ Տեղաւորման գրասենեակներու կողմէ 751 օտար բանուորներու գործ հայթայթուած է: Ֆրանսա մտած են 10, իսկ իրենց երկիրը մեկնած են 1885 օտար բանուորներ: Եկող 10 օտարները իտալացի հողագործներ են: Մեկնողներն են՝ 562 Իտալացի, 353 Սպանիացի, 257 Լեհ, 233 Զուիցերիացի, 103 Պելճիքացի, 130 Չեխոսլովաք, եւն.:

Որո՞ւն ապրանքը որուն կը ծախեն

«Վագըթ» կը գրէ թէ եղած առաջարկի մը վրայ Էնկիւրիի կառավարութիւնը հաւանած է որ Հայաստանի կառավարութեան ծախուին Իկտիրի եւ Կարսի մէջ գտնուած երկաթուղիի հին ձողերը, վակոնները եւ երկաթուղիի վերաբերող ուրիշ պիտոյքներ:

ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Չինացիներու եւ օտար պետութեանց միջեւ ընդհարումները կը շարունակուին Չինաստանի զանազան քաղաքներուն մէջ: Շանկայէն եւ Նանքինէն վերջ, Հանքուէյի մէջ եւս կացութիւնը ծանրացած է: Ծայրայեղ եւ չափաւոր ազգայնականներու միջեւ կատաղի կռիւներ տեղի կ'ունենան: Քանթոնէն Հանքէու հասած են 300 յեղափոխական գործիչներ, որոնց մէջ նաեւ ռուս համայնավարներ: Ասոնք Շանկայ պիտի երթան: Նանքինի մէջ գտնուող 150 Ամերիկացիներէ եւ 14 Անգլիացիներէ յետոյ չկայ, կը կարծուի թէ բոլորն ալ խռովարարներու կողմէ սպանուած են: Չհաստատուած զրոյցի մը համաձայն, Նանքինի մէջ ծանր կերպով վիրաւորուած անգլ. հիւպատոսը մեռած է:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՌՈՒՍԵՐԷՆԸ՝ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Վրաստանի կրթական գործակալութիւնը սկսած է վերջին ժամանակներս մեծ ուշադրութիւն դարձնել ռուսերէնի դասաւանդման վրայ: Այդ նպատակով, յատկապէս վերջին օրերս Թիֆլիսի մէջ տեղի ունեցաւ մասնաւոր ժողով մը:

Ռուսերէնի մասին այս հոգածութիւնը առաջ եկած է այն պատճառով, որ յեղափոխութենէն յետոյ առհասարակ դպրոցներու մէջ սկսաւ տկարանալ ռուսերէնի դասաւանդութիւնը: Այն աստիճան որ, Վրաստանի մէջ դպրոցասարտները հազիւ կրնային արտայայտուիլ կամ հասկնալ ռուսերէնը: Ասկէ զատ, Վրաստանի բարձրագոյն դպրոցներուն մէջ դեռ դասաւանդումը կը կատարուի կամ ռուսերէն լեզուով կամ ռուսերէն ձեռնարկներով: Իսկ ռուսերէն չգիտնալը մեծ արգելք կը հանդիսանայ վրաց ուսանողութեան համար: Այդ պատճառով հիմնապէս անհրաժեշտ է դատուած ռուսերէնի դասաւանդման բարելաւումը Վրաստանի աշխատանքի դպրոցներուն մէջ: (Մարտակոչ)

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Թայմզ»ի Պոլսոյ Թղթակիցը կը հետագրէ.—

Բրիտանական Ակադեմիան Թուրք կառավարութենէն մենաշնորհ ստացած էր պեղումներ կատարելու Պոլսոյ բիւզանդական ձիարձակարանին մէջ: Պոլսոյ քաղաքապետութեան հետ բանակցութիւնները գոհացուցիչ արդիւնքի յանգած ըլլալով, անգլ. հնագիտական մարմինը Մարտ 23ին գործի սկսաւ: Պեղումներուն պիտի հսկէ Սիամի փէսան, Օքսֆորտի քոլէճի փրոֆէսէօրներէն, որուն կ'ընկերանան նաեւ ուրիշ երեք Օքսֆորտցիներ: Թուրք ճարտարապետ նեշէթ Քասըմ պէյ պիտի օգնէ Անգլիացիներուն: Մենաշնորհը տրուած է մէկ տարուան համար: Կը կարծուի թէ պեղումները շատ կարեւոր արդիւնքներ պիտի տան: Սխալ տեղեկութիւններու տեղի չտալու համար, ատեն ատեն պաշտօնական զեկոյցներ պիտի հրատարակուին գտնուած առարկաներու մասին, որոնք բոլորն ալ Թրքական Թանգարանին սեփականութիւնը պիտի դառնան:

Բիւզանդական ձիարձակարանը կը գտնուի այսօրուան Սուլթան Ահմէտի հրապարակը, Այա Սոֆիայի մօտ, վիլիելմի աղբիւրին եւ հանրային պարտէզին տեղը:

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵԾԿՈՒՈՒԻՔՆԵՐԷՆ.— Էքս-ան-փրովանսի գիւղերէն մէկուն մէջ Աբբայ Քուք գյուխ բարձրացուցած էր իր մեծաւորին դէմ: Եպիսկոպոսը, այս պատճառով, արգիլած էր Աբբայ Քուքի պատարագելու իրաւասութիւնը: Աբբայ Քուք, չկարենալով եկեղեցի մտնել, եկեղեցիին գաւիթին մէջ կը հրաւիրէր իր հաւատարիմները եւ բացօթեայ պատարագ կը մատուցանէր: Ժողովուրդը երկու մասի բաժնուեցաւ, մէկը կը բանադրէր միւսը եւ փոխադարձաբար: Եւ հաւատացեալները քանի մը անգամ փաթթուեցան իրարու, ոչ թէ ողջագուրուելու, այլ ծեծկուելու համար յանուն Քրիստոսի:

Կը միջամտէ ոստիկանութիւնը, եւ աբբայ Քուք կը ղրկուի դատարան, ամբաստանուած ըլլալով որ եկեղեցական անօթներ գողցած է, թերեւս բացօթեայ պատարագ ժառանգանելու համար: Եկեղեցին կ'ամբաստանէ գայն նաեւ որ ջարդ ու փշուր ըրած է նուիրական աղօթատեղիին զանազան առարկաները եւ մասերը:

Աբբայ Քուք դատապարտուեցաւ:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ
(1770—1827)

Ս.

Երբոյհետև մեր ազգային հոգեւոր կեանքի մէջ մեծ դեր կատարեցին Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերը, ուստի անհրաժեշտ է, որ ընթերցողները ծանօթանան անոր կեանքին եւ գործունէութեան հետ։

Մեսրոպ Մաշտոցի ծնունդի թուականը ստոյգ չէ։ Ոմանք կը դնեն զայն 345 թուականին, ոմանք 354 թուականին։ Ծնած է Հայոց Տարօն գաւառի Հացեկաց գիւղը։ Ծնողքին անունները ալ չեն յայտնի։ Ոմանք կ՚ըսեն, թէ հայրը կոչուած է Վարդան, ուրիշներ կ՚ըսեն, թէ Վահան։ Մեսրոպ իր ուսումը ստացած է Տարօնի գաւառին մէջ։ Ուսումնասիրած է հայերէն, յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուները։ Ուսումնասիրած է նաեւ հայոց հին եւ նոր պատմութիւնները, ինչպէս նաեւ հեթանոսական դիցաբանութիւնը։ Ուսումնասիրած է նաեւ հայոց հին սովորութիւնները։

Մեսրոպ Մաշտոց ծառայած է Հայոց Վռամշապուհ թագաւորին քարտուղարութեան մէջ։ Ան ունեցած է նաեւ ուրիշ պաշտօններ։ Ան եղած է զօրավար եւ դեսպան։ Ան ունեցած է նաեւ եկեղեցական պաշտօններ։ Ան եղած է սարկաւագ եւ քարոզիչ։

Մեսրոպ Մաշտոց ամուսնացած է եւ ունեցած է զաւակներ։ Ան ունեցած է նաեւ աշակերտներ։ Անոնցմէ յայտնի են Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Գողթնացի, Դանիէլ Տարօնացի, Կորիւն, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի եւ ուրիշներ։

Մեսրոպ Մաշտոց ճանչցած է նաեւ Սահակ Պարթեւ կաթողիկոսը։ Ան եղած է նաեւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի թարգմանը։ Ան ճանչցած է նաեւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի որդին՝ Յովսէփ։

Մեսրոպ Մաշտոց ճանչցած է նաեւ Արշակ Բ. թագաւորը։ Ան եղած է նաեւ Արշակ Բ. թագաւորի թարգմանը։ Ան ճանչցած է նաեւ Արշակ Բ. թագաւորի որդին՝ Պապ։

Մեսրոպ Մաշտոց ճանչցած է նաեւ Վռամշապուհ թագաւորը։ Ան եղած է նաեւ Վռամշապուհ թագաւորի թարգմանը։ Ան ճանչցած է նաեւ Վռամշապուհ թագաւորի որդին՝ Խոսրով։

Մեսրոպ Մաշտոց ճանչցած է նաեւ Խոսրով Գ. Կոտակ թագաւորը։ Ան եղած է նաեւ Խոսրով Գ. Կոտակ թագաւորի թարգմանը։ Ան ճանչցած է նաեւ Խոսրով Գ. Կոտակ թագաւորի որդին՝ Տրդատ։

Մեսրոպ Մաշտոց ճանչցած է նաեւ Տրդատ Գ. Մեծ թագաւորը։ Ան եղած է նաեւ Տրդատ Գ. Մեծ թագաւորի թարգմանը։ Ան ճանչցած է նաեւ Տրդատ Գ. Մեծ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Ճաւասչի արտասպած հայ ժողովրդական երգերու էջը Անատոլիոյ տիրապետութեան տուաւ ինծի ազատ վերյիշումներ ընելու հայրենի բնաշխարհէն, ուր հիմա մեռելութեան կը տիրէ երբեմնի փարթամ կեանքին տեղ, աւերակ՝ քանի կեանքին տեղ ու ծաղկած շրջանակ շէն ու ծաղկած շրջանակ շէներու եւ ուր, բուերու անապատ վայրը յաջորդած է մեռելոց վայրերու եւ փնտռտուքի Անատոլիոյ մանկներու արձագանգին:

Թերեւս հայկական գաւառներէն ոչ մին այնքան հարուստ եղած է իւրայատուկ զգայուն Անատոլիացիներով, որքան Ակն, ուր ամէնքը, նոյնիսկ օրօրոցի մանուկը, երգ բանաստեղծ չէ նուկը, երգ է մայրիկին ծնած, տարուած է մայրիկին կարօտակէզ շունչէն եւ միջավայրի անխուսափելի ազդեցութենէն: Ասն զի, մայրիկը իր քնէն: Ասն զի, մայրիկը իր քնէն կը տիրէ երբեմնի փարթամ կեանքին տեղ, աւերակ՝ քանի կեանքին տեղ, աւերակ՝ փոխանակ շէն ու ծաղկած շրջանակ շէն ու ծաղկած շրջանակ շէներու եւ ուր, բուերու անապատ վայրը յաջորդած է մեռելոց վայրերու եւ փնտռտուքի Անատոլիացիներու արձագանգին:

Ամէն ինքնատուկ սովորութիւններով պանծացուցած է, Նշանուքի, հարսնիքի, վերջարձի (հայրենիք) եւ մահուան շատուկ արարողութիւնները, երբ կ'երգուէին կամ կ'եղերերգուէին պատշաճ Անատուներու: Ե՞նչ երկար կ'ըլլայ զանոնք այս տոհմիկ սովորութիւնները մանրամասնութիւնը ալ, սակայն, Առաջին հանդիպումը, անուշ ու մեղոյշ, նոյնքան ալ բաղձալի առաջին համբոյրը կորզել անկէ:

Փակագիծի մէջ ըսենք, թէ այս տեղ, հասարակաց ներկայութեան, փողոցներու մէջ շռայլուած համբոյրը, չէ այն կո՛յս ու եթերային համբոյրը, որուն ի տես լուսինն ու աստղերն իսկ կը շիկնին:

Արդ, հարսնառի եւ պսակի յաջորդ օրը, հարսին ծնողքն ու ազգականները փոխ—այցի կուգային խնամիին տունը: Այն միջոցին, երբ հարսնքաւորը, բարի դալուստի առիթ ձեռք կը համբուրէր կամ ձեռք կը սեղմէր, եւ զբաղած կամ զբաղեցուցուած էր իրեններուն հետ, փեսային քոյրերը կամ ազգականուհիները կերպով մը հարսը կը փախցնէին առանձնասենեակ մը, ուր արդէն կը սպասէր վեհասան, ձեռքին մէջ բռնած խոշոր կարմիր նուռ մը:

Դուռը դուրսէն գոցուած է... եւ հետեւաբար, միայն համբոյր մը, ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

Իսկ դուրսը, քոյրերն ու ազգականուհիները, տափերը ձեռքերնին, զիլ ձայներով կ'երգէին հետեւեալ Քաշ—հարէնը (Անտուն):

— Շա՛ եա՛ր, հա՛ եա՛ր
— ձեպէդ ու ճոցէդ կ'ուզիմ,
ցեսնիմ Թր տօնճ (1) տի (2) տաս Թր
խնճոր:

—կեցի, քեզի նուռ մի տամ,
կոտրէ, տե՛ս, Թր(3) քանի՞ հատ
ունի:

— Ամէն մէկին մէյմէկ պագ,
էւել հարամ Թր պիտի:

— Նուռ կայ, ուր(4) հազար հատ
ունի,
Հազար պագն ինտո՞ր կու լընի(5):

—երկու սէրն ուր մէկ լընի,
Հազար պագը Թեզ(6) կու լընի:
Սէր կայ, ուր մարդն ի քուն
կ'անէ,
Սէր կայ, ուր մարդն արթուն
կու պահէ,
Սէր կայ, ուր մարդն ի ժամ կու
տանի,
'ի անապօթքի տուն կու բերէ:

Վերյիշեց
ԽՈՐԻՆ Հ. ՀԱԼԱՃԵԱՆ

ՊԱՐԵՐԴ ՏԱՐՕՆԷՆ

Էրանիկ բանձրիկ սարուն,
Ցաեսնի գըդարդուկ եարուն,
Բոբիկ ոէջինէմ գացի,
Եարոչ պաղչէն իմ իջի,
Եարուկ բաղչէն խորուն քուն,
Ցրիճ ու ճոց դէմ աստխերուն,
Քաշի սպիտակ կոթ դանակն,
Շանի գէն, կարմիր արիւն,
Թափի սպիտակ ճոցերուն:

Եարնիկ նանիկ ջան անիկ,
Եարնիկ նանիկ ջան անիկ:

Հաւաքեց
Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

---

(1) ցօնճ-տանձ, (2) տի-պիտի, (3) Թր-Թէ, (4) ուր-որ, (5) լընի-լինի, (6) Թեզ-ջուտ:

ՄԵՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՇԱՐԺԷ ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ "ԳԼՈՒԽԸ ԲԵՐՈՂԻՆ,,

ԿԵԱՆՔԸ ՊԵՐԼԻՆԻՄԷՋ

Մարտ 19ի Շաբաթ իրիկունը, Պերլինի հայ կիները իրենց միութեան պաշտօնական բացման հանդէսը սարքած էին, նպատակ ունենալով միանգամայն հասոյթ մը դոյացնել, առնչադրուած ազգային դպրոցին համար:

Հանդէսը սկսաւ Տիկ. Փ. Մովսէսեանի կարճ ճառով, որուն յաջորդեց Պ. Արտ. Աբեղեանի բանախօսութիւնը դպրոցի մասին: Պ. բանախօսը շեշտելէ յետոյ հայ մօր պարտքը, այս օտար երկրին մէջ դպրոցով եւ մանաւանդ ընտանեկան կեանքով հայ մանուկը հայ կրթելու մասին, շեշտեց հայ լեզուին Գերմանիոյ մէջ գտած ընդունելութիւնը, անոր «իբր կենդանի լեզու» ճանչցուիլը, եւլն.: Յետոյ զոհունակութիւն յայտնեց կանանց միութեան, որ գիտակցութեամբ ձեռք առած է դպրոց բանալու հարցը, որուն դժուար՝ բայց անհրաժեշտ լուծման պէտք է ամէն ոք օժանդակէ...:

Օր. Հայրանեան երգեց Օր. Կէնճեանի դաշնակին ընկերակցութեամբ «Միթեռնակ»ը եւ «Սիրեցի ևարս տարան»ը, Օր. Աբեղեան արտասանեց եւ Պ. Պ. Ֆրունճեան երգեց Պ. Մ. Մարանեանի Լուխակին ընկերակցութեամբ գեղօն մը «հովուական կեանքէ»: Կարճ դադարէ ետք տեղի ունեցաւ «Երկու խուլերը» ներկայացումը: Պէտք է ըսել որ այս տարուան յաջող ներկայացումն էր ասիկա: Դերասանները իրենց լաւագոյն դերին մէջ էին եւ Պ. Գ. Կիւլիւտանեան ինչպէս Պ. Վ. Մեւաչունի իսկապէս արժանի էին հանդիսականներու բուռն ծափերուն: Տիկին Ա. Տէր-Յարութիւնեան նոյնպէս շատ յաջող էր:

Անակնկալ մըն էր ներկայութիւնը գաւառ բնակող գերմանահայ հարուստ Պ. Սահակեանի որ երկու գորդ նուիրած էր կանանց միութեան: Գորգերէն մէկը ամերիկեան ճոպրդի դրուելով, ներկաներու մեծամասնութեան մասնակցութեամբ բարձրացաւ 120 մարքի, մնալով նուիրողին Պ. Սահակեանի վրայ, որ անգամ մըն ալ նուիրեց զայն կանանց միութեան:

Եւրոպական եւ կովկասեան պարերէ վերջ հանդէսը փակուեցաւ: Նկատելով որ այս գոյացած դրամը ամբողջութեամբ դպրոցին տրամադրել առաջադրուած է, ինչպէս եւ կան ուրիշ բարեկամեցողութիւններ, կը յուսացուի որ մօտ ատենէն իրականանայ, Պերլինի մէջ հայ դպրոց մը բանալու գաղափարը:

Պերլին ԹՂԹԱԿԻՑ

ՁԱՑՆԵՐ ԳԱՒԱՌՆԵՐԷՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

Մարսիլիոյ վիճակային ընտրութիւնները տեղի պիտի ունենան յառաջիկայ Ապրիլին, ինչպէս գրած էինք: Այս առթիւ ընտրական յանձնախումբը հրատարակած է մանրամասն շրջաբերական մը, որմէ կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները.—

Մինչեւ 14 Ապրիլ, Առաջնորդարանի մէջ բացուած է Ազգային Տուրքի արձանագրութեան յատուկ տոմար մը, որ բաց պիտի ւլնայ շաբթուան մէջ երկուշաբթի, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը, առտուն ժամը 10—12 և կէսօրէ վերջ ժամը 3—6, եւ կիրակի օրերը մինչեւ կէս օր. իսկ 14 Ապրիլի վերջին օրը, առտուան ժամը 9—12 եւ կէսօրէն վերջ 2—6:

14 Ապրիլ Հինգշաբթի օրը, կէսօրէ վերջ ճիշտ ժամը 6էն յետոյ արձանագրութեան համար ըլլալիք դիմումները անհետեւանք պիտի թողուին ընտրական բարդութեանց եւ անկանոնութեանց տեղի չտալու համար:

Հայաստանեայց Եկեղեցւոյ պատկանող բոլոր այն հայրենակիցները, որոնք 20 տարին լրացուցած են ու առնուազն 6 ամիսէ ի վեր բնակութիւն հաստատած Մարսէյլի մէջ, եթէ կ'ուզեն իրենց քուէ տալու իրաւունքին տէր ըլլալ, պէտք է ապահարեն իրենց անունները արձանագրել տալ, վճարելով նուազագոյն 12 1)2 ֆրանք 1927 տարւոյ առաջին վեցամսեակին համար իրենց ազգային տուրքը (տարեկան 25 ֆր.ի հաշուով):

Մարսիլիոյ Վիճակային Ընդհանուր Ժողովի անդամներուն թիւն է 31 հոգի, որոնց 22ը պիտի ընտրուին մարսիլիացնակ հայրենակիցներէ, իսկ մնացեալ 9ը՝ մէյմէկ հոգի պիտի ընտրեն Մարսէյլի թեմին ենթակայ հետեւեալ հայաշատ վիճակներէ: Ընդհանուր Ժողովի անդամներուն պաշտօնավարութեան շրջանը ըլլալով 6 տարի, ամէն երկու տարի իրենց մէկ երրորդը պիտի փոխուի վիճակով.— Նիս, Կարտան, Մարթիք, Լա Սիոթա, Սէն Լու, Թուլօն-Լասէյն, Պոլէն եւ Բօն Սէն-Թ'Էսբրի, Սէն Ժիւլիէն, Սէնթ-Անթուան մէյ մէկ հոգի:

Վերոյիշեալ վիճակները Ընդհանուր Ժողովի իրենց անդամները կրնան ընտրել Մարսէյլ բնակող ծանօթ հայրենակիցներէ:

ԹՈՂ ԱՐԱԳ ՇԱՐԺԻՆ

Քան.— Գրած էի թէ այսուհեղ «պէթօն»ի գործարան մը կայ որ գործաւոր կ'առնէ: Ես խնդրագիր մը ներկայացուցի յիշեալ գործարանի տնօրէնութեան՝ քանի մը հայ բանւորներու համար:

Այսօր մեր հսկայ գործարանն ալ սկսաւ գործաւոր առնել, մանաւանդ արհեստաւոր:

Այն հայրենակիցները որոնք նախապէս նամակ գրած են ինծի (պատասխանը առած կամ չառած) թող աճապարեն մեր գործարանին նամակներ ուղղել եւ յիշել իրենց արհեստը նամակին մէջ: Առաջին յայտարարութեանս վրայ քանի մը հայ երիտասարդներ եւս մեր գործարանը ընդունուեցան: Բայց արհեստաւորներ էին: Այն բանւորները որոնք իրենց հետ Աշխատանքի նախարարութենէն նամակներ կը բերեն, շատ դիւրին կ'ընդունուին: Կը թելադրեմ որ ներկայանան նոյն նախարարութեան եւ խնդրեն «Բալվատօս»ի մետաղագործարանը դրկել զիրենք: Հասարակ բանւոր թէ արհեստաւոր, թող արագ շարժին, եւ աղերսագիր գրեն գործարանին վարչութեան, քանի թիւը չէ լրացած: Առանց նամակ գրելու եւ պատասխանը առնելու թող չգան եւ աւելորդ ծախք չընեն:

Ա. Հայկունի

Գործարանի հասցէն.—Société Métallurgique de Normandie. Mondeville (Calvados).

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԼՈՎԸ ԴՐԱՄ ԿԸ ՎԱՍՏԿԻ. — *Այրի տիկին Վինեը, երբ Տուէէն Փարիզ կը դառնար, կայարանին մէջ գարնուեցաւ ձեռնակառքի մը, որ կը փոխադրէր պայուսակներու երկար դէզ մը: Ծանր պայուսակ մը ինկաւ վար, ուղիղ տիկինին գլխուն վրայ: Տիկինը գլորեցաւ գետին, վիրաւորուեցաւ քիթէն բերնէն: Անմիջապէս դատ բացաւ: Դատարանը տիկնոջ շնորհեց 40,000 ֆր. փնասուց հատուցում:*

ՍԻՐԱՅԻՆ ՎՐԻԺԻՆԴՈՒԹԻՒՆ.— *Բանւոր Հաններ Քլօսէ կը բնակէր, իր կնոջ հետ, Սէն-Մօր փողոցը: Նոյն տան մէջ էր նաեւ բանւորին ազգականներէն երիտասարդ մը, Իմէ: Քլօսէ վերջերս կը կասկածի կնոջ վրայ, ամբաստանելով զայն որ սիրային յարաբերութիւններ ունի իր ազգականին՝ Իմէի հետ:*

Կնոջ քանի մը անգամ ազդարարելէ յետոյ, առջի օր, յանկարծ կը մտնէ ազգականին սենեակը, կը վերադարձնէ ստացած նուէրները, բերան մըն ալ կը հայհոյէ եւ կը դառնայ սենեակ:

— Կապէ բեռներդ, եւ կորսուէ՛, գնա՛ մօրդ տունը, կը պոռայ կնոջ:

Եւ արագ արագ կը ժողվէ, կը կապէ, յետոյ կը կանչէ ինքնաշարժ մը, կը լեցնէ մէջը բեռներն ալ, կինն ալ եւ կը տանի ուղղակի զոքանչին տունը:

Գիշերը չէի քնանար: Վրէժխնդրութիւնը որդի պէս կ'ուտէ իր ուղեղը: Առտուն շրջան մը կ'ընէ վէնսէնի անտառին մէջ, փարատելու համար վրէժխնդրութեան ներքին մղումները: Չի յաջողիր: Կը խմէ: Յետոյ կը դիւրաւ ստացեր էր փարիզ ճամբորդելու արտօնութիւնը:

Իւէն, Ազգերու այս փողոցին մէջ, նախ իր ազգային տարազով եւ բեւեռը էր, բայց շուտով փոխուեր էր վայելուչ փարիզուհիի մը: Երբ Փարիզէն հեռանալու ատենը եկաւ, ստիպեց իր ամուսինը որ նոր արձակուրդ մը եւս խնդրէ, ինչ որ չմերժուեցաւ, պայմանաւ որ Ֆրանսայի մէջ՝ Թուրքիայէն փախստականներուն վրայ գաղտնի հսկողութիւն մը կազմակերպէ: Զոյգը՝ փասիի կողմը վարձած էր փոքր ամառանոց մը, ուր իրենց ծառայութեան մէջ առած էին քիւրտ կին մը՝ Խմի անունով եւ սեւամորթ պառաւ մը: Եօնուս իրեն օգնական մըն ալ գտած էր՝ Ահմէտը՝ իրեն պէս նախկին պաշը պօզուք մը, որ թէեւ իր պետէն աւելի գարգացած, բայց անոր յաջողութիւնը չէր ունեցած. Ահմէտ, խաղամոլ եւ խմող էր. եւ բախտախաղի մը մէջ, իր խաղակիցին հետ արիւնահեղ կռուի մը հետեւանքով, ստիպուած եր Պոլսէն փախիլ:

"ՅԱՌԱՋ,,Ի ԹԵՐԹՕՆԸ (1)

ՄՈՌՑՈՒԱԾ ԴԱՒԵՐ ԵՒ ԴԱՏԵՐ

ԳԼՈՒԽԸ ԲԵՐՈՂԻՆ...

Հեղինակ՝ ԼՈՒԻ ԹԻՆԷ

«Եօնուս պէյ ներս մտաւ, վարկուն հանեց եւ Թրքերէն լեզուով իր քարտուղարին հարցուց.

— Վերջացու՞ց:

— Մօտ է, պատասխանեց Ահմէտ դիւրին չէր այս հետագիրը վերլուծել. բայց վերջապէս յաջողացաւ:

— Որմէ՞ է:

— Ծեծ Եպարքոսէն:

— Կարդա՛ տեսնեմ:

Ահմէտ՝ գրեթէ ամէն մէկ բառը հեգելով, սկսաւ կարդալ:

«Պատուոյ բարձր ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք Զաքարիա Փթոլէմայիսի փախստին Պուլխարիոյ մէջ. Պուլխարին կանոնադրութեան համաձայն, մահուան դատապարտուած է:

«Փախստականը՝ մէկ ամիս Սեմամպոլի մէջ կահուրտնէլէ յետոյ, ֆրանսական «Թայժէտ» շոգենաւով, դէպի Մարսիլիա ճամբայ եղած է, եւ իբր բանւոր, շոգենաւին պաշտօնէութեան մէջ մտած է Իւպլօ, Իւլօ կամ Իւռօ անունով:

«կազմագրութիւն՝

«Հասակ՝ 1 մեդր 60· 21 տարու. քիչ մը գէր, լայնօրէն ճեղքուած, գորշ-կաղնագոյն աչքեր, բաց-շիկահեր, նորաբոյս խարտեաշ պեխեր. բաւական թաւ, բայց շագանակագոյն յօնքեր. երկար Թարթիչ. մեծ բերան, գօրաւոր, շատ ճերմակ ակռաներ:

«Դէմք՝— Բերնին ձախ անկիւնը նոյնքան ալ բաղձալի առաջին համբոյրը կորզել անկէ:

Փակագիծի մէջ ըսենք, թէ այս տեղ, հասարակաց ներկայութեան, փողոցներու մէջ շռայլուած համբոյրը, չէ այն կո՛յս ու եթերային համբոյրը, որուն ի տես լուսինն ու աստղերն իսկ կը շիկնին:

Արդ, հարսնառի եւ պսակի յաջորդ օրը, հարսին ծնողքն ու ազգականները փոխ—այցի կուգային խնամիին տունը: Այն միջոցին, երբ հարսնքաւորը, բարի դալուստի առիթ ձեռք կը համբուրէր կամ ձեռք կը սեղմէր, եւ զբաղած կամ զբաղեցուցուած էր իրեններուն հետ, փեսային քոյրերը կամ ազգականուհիները կերպով մը հարսը կը փախցնէին առանձնասենեակ մը, ուր արդէն կը սպասէր վեհասան, ձեռքին մէջ բռնած խոշոր կարմիր նուռ մը:

Դուռը դուրսէն գոցուած է... եւ հետեւաբար, միայն համբոյր մը, ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

Իսկ դուրսը, քոյրերն ու ազգականուհիները, տափերը ձեռքերնին, զիլ ձայներով կ'երգէին հետեւեալ Քաշ—հարէնը (Անտուն):

— Շա՛ եա՛ր, հա՛ եա՛ր
— ձեպէդ ու ճոցէդ կ'ուզիմ,
ցեսնիմ Թր տօնճ (1) տի (2) տաս Թր
խնճոր:

—կեցի, քեզի նուռ մի տամ,
կոտրէ, տե՛ս, Թր(3) քանի՞ հատ
ունի:

— Ամէն մէկին մէյմէկ պագ,
էւել հարամ Թր պիտի:

— Նուռ կայ, ուր(4) հազար հատ
ունի,
Հազար պագն ինտո՞ր կու լընի(5):

—երկու սէրն ուր մէկ լընի,
Հազար պագը Թեզ(6) կու լընի:
Սէր կայ, ուր մարդն ի քուն
կ'անէ,
Սէր կայ, ուր մարդն արթուն
կու պահէ,
Սէր կայ, ուր մարդն ի ժամ կու
տանի,
'ի անապօթքի տուն կու բերէ:

Վերյիշեց
ԽՈՐԻՆ Հ. ՀԱԼԱՃԵԱՆ

---

(1) ցօնճ-տանձ, (2) տի-պիտի, (3) Թր-Թէ, (4) ուր-որ, (5) լընի-լինի, (6) Թեզ-ջուտ:

— Թէօո սրճարանը, ինչպէս կ'ըսեն հոն:

— Այս իրիկուն իսկ պէտք է մեկնինք, որպէս զի «Թայժէտ»շոգենաւին սպասենք: Միայն թէ՝ պոլսէն մէկը պրկած չըլլան արդէն:

— Ընշուշտ մէկը պրկած են, բայց ան վիճենա պիտի մնայ, մինչեւ որ դրամապանակը պարպուի:

— Պատրաստուէ ուրեմն:

— Ճամպարելու պէտք չկայ. շոգենաւը՝ հինգ վեց օրէն առաջ չի կրնար հասնիլ:

— Աւելի լաւ է հոն գտնուիլ: Ամէնէն ուշը, վաղը կամ միւս օր պէտք է մեկնինք: Եօնուս՝ իր մտանուր քնակարանը ուղղուեցաւ ու գնաց միացաւ իր երիտասարդ, գեղեցիկ կնոջ՝ Իւէնին, զոր Հաւատացեալներու խալիֆայէն՝ չարաշուք Աբտիւլ-Համիտէն նուէր ստացած էր, ի վարձ բացառիկ պարագաներու մէջ իր մատուցած ծառայութիւններուն:

Եօնուս պէյ՝ հին պաշը-պօզուք մըն էր որ Պուլկարիոյ մէջ իբր վայրագ ջարդարար նշանաւոր հանգիսացած էր: Ցետոյ, Սուլթանին ամէնէն վստահելի մարդկերէն մէկը դարձած էր եւ կազմակերպած էր գաղտնի ոստիկանութիւն մը, որուն միակ պաշտօնն էր կարմիր Սուլթանին անձին ապահովութեանը հսկել:

Իւէն, առանց ուզելու ամուսնացած էր անոր հետ, բայց որովհետեւ ընտրութիւնը իրեն չէր տրուած, դարձած էր Տիկին Եօնուս պէյ եւ իր ամուսնին վրայ մեծ ազդեցութիւն ձեռք ձգած էր: Կրօնքով եւ ծագումով Ցոյն, այս երիտասարդ կինը՝ իր կրթութիւնը ստացած էր Աթենքի ֆրանսական դպրոցներուն մէջ. այս պատճառաւ էր թերեւս որ, ուզեր էր 1900ի Մեծ ցուցահանդէսը այցելել եւ այս առթիւ՝ տեսնել այն երկիրը որուն պատմութիւնը սոսկեցուցեր էին իրեն: Եօնուս պէյ որ ինքն ալ կ'ուզէր երկար արձակուրդ մը վայելել, դիւրաւ ստացեր էր փարիզ ճամբորդելու արտօնութիւնը:

Իւէն, Ազգերու այս փողոցին մէջ, նախ իր ազգային տարազով եւ բեւեռը էր, բայց շուտով փոխուեր էր վայելուչ փարիզուհիի մը: Երբ Փարիզէն հեռանալու ատենը եկաւ, ստիպեց իր ամուսինը որ նոր արձակուրդ մը եւս խնդրէ, ինչ որ չմերժուեցաւ, պայմանաւ որ Ֆրանսայի մէջ՝ Թուրքիայէն փախստականներուն վրայ գաղտնի հսկողութիւն մը կազմակերպէ: Զոյգը՝ փասիի կողմը վարձած էր փոքր ամառանոց մը, ուր իրենց ծառայութեան մէջ առած էին քիւրտ կին մը՝ Խմի անունով եւ սեւամորթ պառաւ մը: Եօնուս իրեն օգնական մըն ալ գտած էր՝ Ահմէտը՝ իրեն պէս նախկին պաշը պօզուք մը, որ թէեւ իր պետէն աւելի գարգացած, բայց անոր յաջողութիւնը չէր ունեցած. Ահմէտ, խաղամոլ եւ խմող էր. եւ բախտախաղի մը մէջ, իր խաղակիցին հետ արիւնահեղ կռուի մը հետեւանքով, ստիպուած եր Պոլսէն փախիլ:

Միացեալ Նահանգներու կառավարութիւնը բացարձակ իրաւասութիւն տուաւ չինական ջուրերու ամերիկեան նաւատորմի հրամանատար Ծով. Ուիլկըմսի, իր ուզած ձեւով օգտագործելու ձեռքին տակ գտնուած նաւային եւ զինուորական ուժերը, ամերիկեան քաղաքացիները պաշտպանելու համար:

Փեքինի ամերիկեան դեսպան Մաք Մըրրէյ ամերիկեան բոլոր հիւպատոսներուն հրամայեց անմիջապէս տեղափոխել Շանկայի, Նանքինի, Անքինի, Ֆուչէուի, Հանքէուի, Քանթոնի եւ Քիուքիանկի շրջանին մէջ գտնուող բոլոր Ամերիկացիները:

Նանքինէն Շանկայ հասնող օտար փախստականները մանրամասնութիւնները կուտան Նանքինի մէջ կատարուած խժդժութեանց մասին: Քանթոնի զինուորները կողոպտած են Ամերիկացի կիներն ու մանուկները, նոյնիսկ անոնց հագուստներն ալ առնելով: Ազգայնականներու եւ սպիտակ Ռուսերու միջեւ տեղի ունեցած կռիւներու պահուն մեծ թիւով Ռուսեր սպաննուած եւ քանի մը հարիւր հոգի ալ գերի ինկած են Շանկայի եւ ուրիշ քաղաքներու մէջ:

Ամերիկեան կառավարութիւնը, նկատի առնելով կացութեան ծանրութիւնը, առջի օր մեկնած երեք Թորփիլահալածէն զատ ուրիշ երեք Թորփիլահալածներու մեկնումը եւս հրամայած է դէպի չինական ջուրերը:

Անգլեւամերիկեան վերջնագրին վրայ, Նանքինի ազգայնական իշխանութիւնները խոստացան քաղաքին մէջ գտնուող բոլոր օտարականները ապահով կերպով նաւահանգիստին մէջ խարսխած նաւերը փոխադրել: Քանթոնցիներու վերին հրամանատար Զօր. Զանկ-Քայշէք, որ Քիուքիանկէն ճամբայ ելաւ դէպի Նանքին, ճափոնի հիւպատոսին միջոցաւ հեռագիր մը ուղղեց անգլիական եւ ամերիկեան հիւպատոսներուն՝ որով ցաւ կը յայտնէ Նանքինի մէջ օտարականներուն վրայ կրակ բացուելուն համար եւ կը խնդրէ որ մինչեւ իր հասնիլը խիստ միջոցներու չդիմեն: Ասոր վրայ, անգլիական, ամերիկեան եւ ճափոնական հիւպատոսները ժողով գումարելով որոշեցին ընդհատել Նանքինի ռմբակոծումը:

Անգլիոյ նախարարական խորհուրդը արտակարգ նիստ գումարեց՝ Չինաստանէն հասած ծանրակշիռ լուրերուն շուրջ խորհրդակցելու համար: Պատերազմական նախարարութիւնը թերթերուն մէջ կը հրատարակէ Չինաստանի մէջ սպաննուածներու ցանկը, յիշեցնելով մեծ պատերազմի օրերը:

Նանքինի մէջ անգլիական եւ ամերիկեան մարտանաւերու ռմբակոծումէն սպաննուած կամ վիրաւորուած են 3000 հոգի:

ԻՏԱԼԵԱՍԵՐՊ ՎԷՃԸ

Անգլիոյ դեսպան լորտ Քրիւ առջի օր դարձեալ տեսակցեցաւ արտաքին նախարար Պռիանի հետ: Անգլիական եւ Ֆրանսական կառավարութիւնները վերջնապէս համաձայնած են, որ քննիչ մարմին մը ղրկուի ալպանական սահմանը, պայմանաւ որ ղրկուելիք զինուորական մասնագէտները չպատկանին Պելկրատի դիւանագիտական մարմնին:

Քննիչ յանձնախումբը քննութիւն պիտի կատարէ Ալպանեւսերպ սահմանագլուխին երկու կողմն ալ: Յանձնախումբին մաս պիտի կազմեն Ֆրանսայի, Անգլիոյ, Գերմանիոյ ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Իտալացի եւ Սերպ դիտողներ:

Այս ծրագիրը պիտի հաղորդուի Պելկրատի կառավարութեան, որուն Պռիան հաղորդած է արդէն թէ Ազգերու Դաշնակցութեան կողմէ նշանակուած քննիչ մարմին մը ղրկելը բաւական դժուար խնդիր է, քանի որ անհրաժեշտ պիտի ըլլար Ազգերու Դաշնակցութեան խորհուրդը նիստի հրաւիրել, ինչ որ պիտի ուշացնէ գործը:

Կը կարծուի թէ Իտալիա առարկութիւն չպիտի ընէ այս կարգադրութեան:

**** Կորիցայի անգլիական հիւպատոս Ճօն Փարսըլ «Փոլիթիքա»յի թղթակցին յայտարարած է.*

— Ալպանեւսերպ սահմանին երկայնքը հարիւրաւոր քիլոմեդր ճամբայ կտրեցի եւ մեծապէս ապշեցայ միայն վեց եուկօսլաւ զինուորներ տեսնելով ամբողջ ճամբորդութեանս ընթացքին: Բնակչութիւնը խաղաղօրէն իր գործերով կը զբաղի: Աւելի շատ Ալպանիոյ մէջ բան մը կը պատրաստուի:

Լոնտոնէն կը հեռագրեն «Շիքակօ Թրիպիւն»ի.—

Իտալեւսերպ վէճը կարգադրելու համար Անգլիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի միջեւ գոյացած համաձայնութեան առթիւ այստեղ կը խօսուի թէ յիշեալ երեք պետութիւնները միջազգային օղակ մը կազմած են՝ եւրոպական գործերը վարելու համար: Ալպանական տագնապը իրարու մօտեցուց այս պետութիւնները որոնք այսուհետեւ ամէն խնդրի մասին խորհրդակցաբար եւ կատարեալ համաձայնութեամբ գործելու խոստում տուած են իրարու:

**** Փարիզի ալպանական դեսպանատունը կը հաղորդէ Թիրանայէն ստացուած դեկոյց մը, որուն մէջ կ'ըսուի թէ «Ահմէտ պէյ Զօկուի կառավարութեան դէմ ներքին ո՛չ մէկ սպառնալիք կայ, որովհետեւ ալպանացի ժողովուրդը միշտ իր համակրութիւնն ու վստահութիւնը կը յայտնէ անոր: Ծերակուտականն Եուսուֆ Տիպրայի սպանութիւնը կը վերագրուի իր սպասաւորին անձնական վրէժխնդրութեան: Զեկոյցը կը վերջանայ «կատարեալ անդորրութիւն կը տիրէ Ալպանիոյ մէջ» աւանդական բացատրութեամբ:*

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԱԼՊԱՆԻՈՅ ՄԷՋ ?

Աթէնքէն կը հեռագրեն մարտ 26 Թուականով.—

Աթէնք հասած հեռագիրները կը ծանուցանեն թէ յեղափոխութիւն ծագած է Ալպանիոյ մէջ: Պաշարման վիճակ յայտարարուած է եւ կառավարութիւնը 12 դասակարգերու զօրաշարժ կը կատարէ:

Քորֆուէն կը հեռագրեն թէ Իտալիա զինուոր ցամաք հանած է Վալոնա: «Վրատինեի» կը գրէ թէ իտալական փոխադրանաւեր, թեթեւ մարտանաւի մը ընկերակցութեամբ, զինուոր ցամաք հանած են Սասէնօ կղզին, ալպանական եզերքին դիմաց: Ջարէպի «Նովոսթի» թերթը կը գրէ թէ եուկօսլաւ կառավարութիւնը մեծ պետութեանց ուշադրութիւնը հրաւիրած է սերպ սահմանագլուխին վրայ ալպանական շարժումներուն և Ալպանիոյ մէջ կացութեան ծանրանալուն վրայ:

Այս լուրերը վերապահութեամբ կը հրատարակենք:

Հայդ կ'աժանիայ

ՀԱՅԻՆ ՔԻԼՈՆ 2 ֆր· 10ի պիտի իջնէ մարտ 31էն սկսեալ եւ աւելի ձերմակ պիտի ըլլայ:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 Ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ: Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ: Դիմել *Յառաջի* խմբագրատունը:

Զ. Ո. ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Փարիզի Զավահյան երկսեռ Որբերու միութեան Բ. դասախօսական ժողովը՝ այսօր կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ուկէսին միութեան ընթերցարանը, (61Rue Mr. le Prince, Métro: St. Michel կամ Odéon): կը դասախօսէ պ. կ. ց. Բասմաջեան, շահեկան նիւթի մը շուրջ: Պիտի ցուցադրուի նաեւ մոգական լապտերով նիւթին հետ առնչութիւն ունեցող պատկերներ:

կը հրաւիրուին անդամները, համակիրները ու ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին այս դասախօսութիւնով:

ՅԱՒԻՇԱՏԵՍՏ

Հ. Յ. Դ. Լիոնի Քեռի խումբի վիճաբանական ժողովը՝ Մարտ 29 Երեքշաբթի, Գրադարանի մէջ, Րիւ Փօլ Պէռ թիւ 75 երեկոյեան ժամը ճիշտ 8.30ին, ներկայանալ հին անդամատետրով:

ՅԱՐԴՈՂԻ յառաջիկայ գրական երեկոն, 31 մարտ, Շինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա ձաշարանին մէջ: կը լսուի դերասան Մարուքեան *Հայ թատրոնի պատմութեան շուրջ:* կը հրաւիրուին անդամներն ու համակիրները:

ԼԻՈՆԻ Ֆարոն Ֆուրուքերանի հայրենակցական միութեան ժողովը՝ Շինգշաբթի 31 մարտ երեկոյեան ժամը ճիշտ 8ին Հ. Յ. Դ. նախկին գրադարանին մէջ՝ խիստ կարեւոր օրակարգ:

Հ· Մ· Ը· Մ·ի ժուանվիլի մասնաճիւղը կը հրաւիրէ նօժանի, ֆոնթէնէի, սէն մօրի, եւ այդ շրջանի բոլոր Ֆութպոլ խաղալ փափաքող տղաքը, այսօր կիրակի առաւօտ ժամը 10ին ժուանվիլի 10 Quai Beaubourgի սրճարանը, տեսնել Պ. Գ. Պէյազեանը:

Հ· Մ· Ը· Մ·ի Պելվիլի մասնաճիւղի Ա. խումբը պիտի մրցի, U. S. Villier le Belի Ա. խումբին հետ, այսօր ժամը 3ին Villier le Belի մէջ: ժամադրավայր կառ տիւ նօր ժամը 12ուկէսին: մեկնում՝ 1ին: Պելվիլի Բ. խումբը կը մրցի Villier le Belի Բ. խումբին դէմ ժամը 1ուկէսին նոյն տեղը: ժամադրավայր ժամը 11ուկէսին:

Անցեալ կիրակի Պելվիլի պաշտեստին յաղթեց S. A. Colombesի պաշտեստին, 5—0:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Կը փնտռուին Գէորգ Բաղդասարեան, Օշականցի, 23 տարեկան, եւ Ա. Խաչատրեան, կ'ենթադրուի ըլլալ Իւզին Տիոր, կրանվիլ: Տեղեկացնել՝ ցառաջի:

— Կը փնտռուի Մարաշցի Աբրահամ Շեղինեան, որ կը կարծուի թէ գաճիրէ կը գտնուի: Գրել՝ Sarkis Paperianի Chez Mr. JacqueminRenéVolfroicourt (Vosges) France.

ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿՆԵՐ

Փավիյոնի մը սէջ 2 սենեակ 1 խոհանոց, կազ, ելեքտրականութիւն, ջուր, կայարանէն 5 վայրկեան, 16 Rue des Alouettes à Colombes, Gare: Les Vallées.

Կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշկերտ մը 16 - 18 տարեկան: Դիմել՝ Պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

ՓՈՐՁՈՒԱԾ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

(Ֆրանսախօս եւ ռուսախօս) վկայեալ Ֆրանս. վարժարանէ *Ընդունելութիւն երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ, ժամը 1—4:* 6, Av. Ville d'Avray, Chaville (S. et O.):

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ԶԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԴՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մանանաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենադարանի գիրքերու:

Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԱԼՖՕՌՎԻԼԻ ՄԷՋ

վարձու ևն պարտէզներով շրջ. երկուշէնքերու մէջ, խոհանոցով եւ առանց խոհանոցի սենեակներ, երեւելիկուԹեան մեծ դիւրուԹիւն, կայարանին մօտ, 104 Թուամ. գծին վրայ: Դիմել՝ H. Papazianի՝ 49-51 Rue Raspail, Alfortville (Seine):

ՏՕՔԹ. Տ. ՍՊԱՐԹԱԼԻ

փարիզի բժշկ. Համալսարանէն նախկին գլխաւոր բժիշկ եւ վիրաբոյժ իզմիրի Ազգային Հիւանդանոցին

44, Rue Poissonnière, Paris (2e)

ընդունելութիւն ամէն օր ժամը 14էն 18 եւ ժամադրութեամբ:

ԿՐ ՇԻՆՈՒԻՆ ԵՒ ԿՐ ՆՈՐՈԳՈՒԻՆ

նպաստաւոր պայմաններով կապարէ, ԹիԹեղ, զինկէ եւ ապակիէ ամէն տեսակ գործեր (ջուրի, ելեքտրական, կազի խողովակներ եւայլն), փարիզ եւ արուարձանները:

Դիմել կամ գրել՝ LOUDER FÉNERDJIANի, 83, Rue de la Bienfaisance, Blanc-Mesnil (S.-et-Oise).

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

5 սենեակ, մէկ խոհանոց, կազ, ջուր, ելեկտրականութիւն, քավ, պարտէզ: Տարեկան 4000 ֆր. վարձք: Դիմել՝ երեկոները ժամը 7էն վերջ, ՏԷր Յակոբեանի, 15, Impasse Thiberville, Gentilly (Seine).

ՊԱՔԻՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ԴԱՇՆԱԿԻ ԵՒ ՕՐԿԻ

Ազնուտ եւ նորոգութիւն Դաշնակահարուհի ՕՐ. Ն. ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր:

Դիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Marcadet:

ԱԿԱՆԱՆ

26 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ		Ֆր.	
Սթերլին,	L. St.	124	05
Տոլար,	Dollar	25	54
Մարք (ոսկի) 100 Mark		605	—
Թրքական Ոսկ.	L. Trq.	12	78
Թրք. ոսկի	» or	114	50
Մէճիտիէ	Médjidié	8	75
Լէվա 100 հատ	Léva	18	50
Տրահմի	» Drachme	32	50
Լիր	» » Lire	117	—
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	70	80
Զուից.	» Frc. Suisse	491	—
Լէյ 100 հատ	Ley	15	22
Ջերվոնեց	(10 Roubles or)	90	—

ԱՐԺԵԹՈՒՊԹ

եգ. ֆր. Ֆոնսիէ	I Cr. Fonc. Eg.	3050	—
»	II »	1940	—
»	III »	1535	—
Թումեյի երկաթ.	Lots turcs	160	—

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)

Le Gérant : H. TEURNIER

ԳՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

(Underwood, Remington, Oliver, Smith Premier)

նուազագոյն գին-ձրի գնահատում (devis)

Դիմել նամակաւ (անձամբ կը պատասխանուի)

V. YÉMÉNIDJIAN

7 Rue Corneille, Montrouge (S.)



ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՇԱՐԱՆ "ԹԼԿԱՏԷՆ,,

Ղ. ՔԷՆՏԷՐԵԱՆ

ՄԱՐՍԷՅ

6, Թրավէրս տիւ Մօն տը փիէթէ — 6, Traverse du Mont-Pieté: (Թէթէլ տամասի տակը եւ կօշկակարի կրպակին դիմ.

Ուշադրութիւն նշանատախտակին

Ուրախ եմ աւետելու Թէ, փափաքելով կատարեալ գոհ... տալ ամէնու յաճախորդներուս ձաշակին, յաջողած եմ ... ինովել գործակցութիւնը ամէն տեսակ արեւելեան ... բակուրներու, նուրբ խմորեղէններու եւ հատընտիր ... ղէններու մասնագէտ ծանօթ խոհարար-վարպետ Գ... զանդ Քէօճահէեալեանի: Անմրցելի ըլլալու աստիճան ... ներով, ամէն տեսակ մսեղէն, բանջարեղէն եւ ձկնեղէն:

Ընտանեկան հաւաքոյթներու, ընդունելութեանց, հարսներու համար մասնաւոր ապսպրանք կ'ընդունուի:

ԱՆԹԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՁՈՒԼԱՐԱՆ «ԾԵՐՈՒՆԵԱՆ»

ՀԻՄՆՈՒԱԾ 1887ԻՆ —o— Téléphone: Gobelins 37-31

Ջուլարանս օժտուած ամենավերջին սիստէմ մեքենաներով կը ձուլէ Հայերէն եւ Թուրքերէն ամէն տեսակ տառեր ... գոյն եւ տոկուն մետաղի գործածութեամբ:

Ամերիկեան չափերով տառեր եւս կը ձուլուին մասնաւոր ... վրայ մխայն:

Ջուլարանս կ'ընդունի նաեւ ապսպրանքներ տպագրական, ... բական մեքենաներու, գործիքներու եւ ամէն տեսակ պիտոյք ... տպագր. թուղթ, մելան, pâte à rouleau, պղինձ գիծ եւայլն, ... հայթայթէ ֆրանսական ծանօթ տուներէ:

Դրամ եւ ամէն ապսպրանք ուղղել հետեւեալ հասցէով

V. VARTANOFF, 24 rue Campo-Formio, Paris (13e)

ՍՆՆԴԵԼԷՆԻ ԱՄԷՆԷՆ ԱԺԱՆ ԵՒ ՎՍՏԱՀԵԼԻ ՏՈՒՆ

ՅԱԿՈԲ ՏԱԼԱՔԻՒԲԵԱՆ

A. DALAKUPEIAN

8, Rue Suffren (Place de la Bourse) Marseille Tél.

կը ծախէ Արեւելեան եւ եւրոպական ամէն տեսակ ... բանքներ, ռուսական սեւ խաւեար, յուղ ... Թարամա, ձիԹապտուղ, զուտ ձէԹ, պալքանի գաշէր եւ ... մակ պանիր, շամի պէստիլ, փիսԹաշ, Ա.մասիոյ չոր պ... իզմիրի Թուզ, կուտսուզ չամիչ, կեսարիոյ պաստրմա եւ ... ձուզ, պոլսոյ լաքէրտա, էրմիսի գօնսէլվաներ, հէյվա ... փէքմէզ, լօգում, ձէվիզլի սուճուգ, լէպլէպի, սագրգ, ... քէշկէքցու, պուդդուր, կարմիր ոսպ, իտալական սալց, ... գարնա, գագաւ, Թէյ, չէմէն, քիմիոն, պահարեղէնի, աղ ... կերու, Թուրշուի, նպարեղէնի, պիսքիւի, շօքօլաԹի, ... նիքի շաքարեղէններու, խմիչքի, իքսիրներու ձոխ տեսակ

ԱՊՍՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆ ՌԱՆՁՆԵԼԻ

Կ'ընդունուին Ապսպրանքներ գաւառներէ եւ արտասահմանեան երկիրներէ:

ՀՐԱՉ ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Chirurgien - DENTISTE

ՓԱՐԻԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԷՆ

126 RUE BOLIVAR (Մէթրօ Պոլիվառ կամ Ժօռէս)

Մասնագիտութիւն ատամնաշարերու (քաուչու Թէ ոսկի) ... Բոլոր աշխատանքները ԱՌԱՆՑ ՑԱԻԻ, ԳԻՆԵՐԸ ՁԱՓԱՒ ... Ընդունելութիւն ամէն օր ժամը 1.30էն մինչեւ 8ը ... աւեն՝ ժամադրութեամբ:

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տօքթ. ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-...

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնա... ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մա... դէտը կ'ընդունի Դ.. Երէ. եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քթի, ... կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ... 11—12: Ատամնաբոյժը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30— կիրակի եւ տօն օրեր ...

ՁԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ

Շամեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԵԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—...

Յօնակրաֆի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԿԱՐՈՒՇԻ

12 Rue St. Sulpice Paris (6e) Métro Odéon

Փորձառու եւ մասնագէտ մանիքիւրի, գիշերուան եւ ցերեկուան գուսաններու: Կը պատրաստէ վերջին նորաձեւութեամբ հագուստներ, շապաւար եւ խնամեալ կար:

Իսկ Կիրակի օրերը բացուած է մասնաւոր դասընթացք մը ձեռնարկելու Թեան եւ կարի:

Կիրակի առաւօտ 9—12, եւ 2—5: Անոնք որ կ'աշխատին եւ ժամանակ չունին, կրնան օգտուիլ:

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵՔԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ
29
ՄԱՐՏ
1927

29 MARS 1927

Գ. ՏԱՐԻ թիւ 297

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՒ ՔԱՐԻՆՔ ԱՂԱՂԱԿԵՍՑԵՆ...

Յուսակտուր կանչեր կ'արձակուին ամէն կողմէ։

Մեր սեղանին վրայ ունինք նամակներ որոնք արիւն-արցունքով գրուած են։ «Կենդանիներու պաշտպան ընկերութիւններ կան. քով մենք անոնց չա՞փ ալ չենք արժեր», կ'աղաղակէ մէկը, թշուառութենէն շլմորած եւ աչքին առջեւ տեսնելով երախաներուն օտարացումը։ «Աղի արցունքով գրեցի այս տողերը», կ'ըսէ ուրիշ մը. «Ըսածը տարու տղեկ մը ունիմ որ չուզեր հացէն խօսիլ հետս»։

Միւս կողմէ, քիչ անդին կը հրատարակենք ամփոփումը կոչի մը, զոր ստորագրած է հանրածանօթ արկածախնդիր մը, «զօրավար» Թորգոմ։ Այս այն մարդն է որ տարիներկու ամիս իր վրայ խօսիլ կուտայ, ճակատէ ճակատ ոստոստելով, և որ ամէն անգամ նոր «ելոյթ» մը կը փորձէ, իրեն հետ վարկաբեկելով հասարակութիւնն ալ։ Անուղղայ փառամոլ եւ «գործ-եփող», Թորգոմ խարուիլն չի դներ միլիոններուն մէջ, իր դիրքը, փառքը եւ փորը անուշցնելու համար, ու միեւնոյն ատեն կը ճգնի ծառայել «հայ ազգին»։

Այդ ինքնասպառնութեամբ, այս անգամ ալ ասպարէզ կը վարձայ խորհրդային իշխանութեան, Ա.Թ.Է.Նքի ազգ. վարչութեան եւ իր հակառակորդներուն, եւ կը հրաւիրէ բոլոր գաղութները՝ միանալ... համայնավարական վտանգին դէմ կռուելու համար։ Ճշտենք նորէն որ, «զօրավարը» մինչեւ հիմա խառնակիչներուն հետ էր, դիւանագիտական սուրհանդակը ու մուեթիկը՝ ռամկավար-հօկ-պոլշեւիկ խմբակցութեան եւ տակաւին վերջերս շոգեկինդ Սելանիկ ուղեւորուեցաւ, վտարման դատապարտուած ինը հայ համայնավարները ազատելու համար։ Այս բա՛ծր առաքելութեան ընթացքին, Սելանիկի մէջ կր հանդիպի մեր մէկ ընկերոջ, եւ, ռամկավար կուսակցութեան վկայականով, կ'առաջարկէ անոր՝ համերաշխութեամբ լուծել գաղութին բոլոր վէճերը։ Խորհրդակցութիւններ կր կատարուին, եւ կ'որոշուի բացարձակապէս չեզոք վարչութիւններ ընտրել Սելանիկի եւ Ա.Թ.Է.Նքի մէջ։

Նոր Յունաստանի վարչութիւնը, որ «դաշնակ»ներուն ազդեցութեան տակ էր, ինչպէս կ'ըսէն, կը համաձայնի եւ նոր վարչութիւն կը նշանակուի։ Բայց, երբ խնդիրը Ա.Թ.Է.Նք կուգայ, Թորգոմ կ'անարգուի իր հաւատարիմներուն կողմէ, ռամկավարները ետ կ'առնեն իրենց վկայականը, իր կողքին կանգնած պոլշեւիկ թերթը առաջ մը «իտալական գործակալ» կ'անուանէ զինքը, առաջնորդարանը կ'ընդդիմանայ իր համերաշխութեան ձեռնարկին եւն.։

Եւ ահա նոր ճակատ, — Իզմիրի հերոսը քունէն արթննալով, կը տեսնէ որ գաղութները վտանգուած են, շնորհիւ կուսակցական բուռն պայքարներուն եւ մանաւանդ համայնավարական պրոպագանդին։ Հայաստանի վարչապետին ուղղած բաց նամակին մէջ կ'ազդարարէ.

«... Եթէ խորհրդային Հայաստանի ղեկավարները այս ողբալի կացութեան վերջ չտան (եւ անոնք ունին բոլոր միջոցները), պիտի քանդեն երեւանի եւ ամբողջ աշխարհի Հայերու միջեւ այնքան դժուարութեամբ հաստատուած կապերը»։ Եւ դեռ աւելին։ «Իմ հայրենակիցներս գիտեն պայքարիլ։ կը յուսամ իրենց մէջ բաւական ուժ պիտի գտան Գ. Միջազգայնականի ձեռնարկներուն դէմ մինչեւ վերջ պայքարելու, եւ այս նոր փորձանքներուն ամբողջ պատասխանատուութիւնը կը թողում ձեր եւ ձեր երեւանի պաշտօնակից ընկերներուն վրայ»։

Ինչպէս կը տեսնէք, քարերն ալ աղաղակել սկսած են։ Ոմանք, խելքով բթացածներն՝ ալ կը տեսնեն որ իսկապէս քաոսային է վիճակը։ Եւ մենք Թորգոմի կոչը յիշեցինք պարզապէս ա՛յդ ապացուցանելու համար։ Անոր հաւատացողներուն, անոր կրթնած հաւատարիմներուն կը մնայ կա՛մ դարձի գալ եւ հետեւիլ նոր պատգամներուն, կամ նորէն դարձի բերել զայն, եւ խաղցնել իրենց չուանին վրայ։ Աշխարհի բոլոր Թորգոմներն ու Թորգոմականները մէկ ելք ունին, — կամ անկեղծօրէն, վերջնապէս կը զղջան եւ կը գործեն շիտակ ճամբու վրայ, եւ կամ միանգամ ընդ միշտ կը քաշուին ասպարէզէն, մոռցնելով իրենց տաղտկալի ժխորը։

Մինչ այս մինչ այն, ահա վտանգը իր անխուսափելի հետեւանքներով, —ներքին կռիւ եւ ամլութիւն, ծապլվարական շահատակութիւններ, կազմալուծում, այլասերում։ Կարելի՞ է սանձահարել այս չարիքները, աչքերը փակելով, կամ այդ ուղղութեամբ որ եւ է աշխատանք երեւանի դէմ համարելով։ Թողունք ամէն բան, —կարելի՞ է օգտակար ըլլալ հայրենիքին, գաղութները պատակտելով, կազմալուծումը սաստկացնելով, եղած-չեղած ամէն արժէք չօկի փոկին կապելով։

Անզգաններու եւ արհեստով խառնակիչներու հետ գործ չունինք։ Բայց անոնք որ իրապէս կը տառապին գաղութներու ներկայ վիճակէն, մէկ դաւանանք եւ մէկ սրբազան պարտք պիտի ունենան.

— կազմակերպել գաղութները, Թէ Թափառական ժողովուրդը փրկելու եւ Թէ հայրենիքին ծառայելու համար։

Առանց այս տարրական պահանջին, ոչ միայն ապի արդիւնքներ պիտի Թափեն մեր ցիրուցան հայրենակիցները, այլ եւ Հայաստանը չպիտի կրնայ իրական օգուտ քաղել, իր կոչերուն առջեւ զանելով միայն ափ մը աղա-փաշաներ, քանի մը երկդէմ եկեղեցականներ, եւ խեղճուկրակ «բյիչ»ներ։

Քարերն անգամ լեզու ելած են...

Շ.

ՄԱՄՈՒԼ

«ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»

Այս խորագրով խմբագրականի մը մէջ, պոլսոյ «Իգտամ» Թերթը կը գրէ.

— «Մեր աչքին առջեւ է Պերլինի Թուրք առեւտրական ներկայացուցչութեան մէկ տեղեկագիրը, ուր կ'ըսուի.

«Այսօր կարելի է ըսել Թէ, Համպուրգի մէջ ամէն վաճառական կը գանգատի որ մեր կողիններուը խառնուրդ են։ Կ'ըսուի Թէ, Թուրք վաճառականները յանձն կ'առնեն նոր բերք յանձնել, մինչդեռ ընդհանրապէս հին բերքին հետ խառնելով կուտան։ Կատարուած բազմաթիւ փորձերէն հասկցուած է Թէ, Թուրքիայէն եկած կաղիններըը խառն են, ինչ որ հակառակ է եղած յանձնառութեանց։

«Այս վիճակին կրկնութիւնը ամբողջովին ջնջած ըլլալով վստահութիւնը, որոշուած է նախ իրաւարար մարմնի մը քննել տալ ապրանքը եւ յետոյ ստանալ։ Իրաւարարները մինչեւ 20—30 առհարիւր փոս կը հաշուեն, եւ բնականաբար այդ դումարը տուժել կուտան Թուրք վաճառականներուն։

«Կարգ մը մարդիկ, անձնական շահ ապահովելու տեսնանափակ միտումներէ տարուած, մեր արտածման եւ վաճառականներուն կը հասցնեն այնպիսի փնասներ, զորս շատ դժուար է դարմանել»։

«Այս ինքնասպանութիւնը խենթութիւն չէ՞։ Անցեալներն ալ ասոր նման բան մը կարդացինք։ Գանգատ կար Թէ հող կը խառնեն գարիին։ Այս աչքբացները, իրրեւ խենթեր, բնականաբար ոչ բարոյական ունին, ոչ ալ ազգասիրութիւն։ Այդ խարեբաները որպէս Թէ շահ պիտի ընեն. մինչդեռ ահա այդ դումն ալ կը զոհուի իրենց առջեւ, քանի որ ապրանքները նախ իրաւարարներու կողմէ պիտի քննուին։ Արդիւնքը միայն այն կ'ըլլայ որ, երկրին պատիւին մուր կը քսուի։ Մարդ կրնա՞յ այս աստիճան դաւաճանութիւն ընել իր հայրենիքին դէմ»։

ՊՈԻԼԿԱՐԵՒՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Սօֆիայէն կը հաղորդուի Թէ ներքին նախարարութիւնը վաւերացուցած է արդէն Պուլկարեւհայ Մերձեցման Միութեան ծրագիր-կանոնագիրը։

Միութեան շուրջ մեծ համակրանք սկսած է պուլկար և հայ շրջանակներուն մէջ։

ԱՐԵՒԱԴԱՐՁ ԱՊԱՐԱՆԻՔ

Ինչպէս արեւածագիկը, որ իր ճակատը կը դարձնէ արեւին՝ օրուան բոլոր ժամերուն, միլիոնատէրերն ալ պիտի ունենան իրենց ապարանքը արեւադարձ, որ երեսը պիտի տայ արեւին։

Նիսի մէջ բացուած է տօնավաճառ մը, որուն յարակից՝ ցուցահանդէս մը գարդարուեստի եւ բնակութեան։ Շոն ցուցադրութեան դրուած է ապարանքի նմոյշ մը, գործ՝ փարիզի ճարտարապետներէն Թիւպոյի եւ Լէքիւյեի։

Այս ապարանքը կը կոչուի Արեւադարձ, որովհետեւ շարժամեքենայի մը շնորհիւ ապարանքը, ուզուած երեսովը, կը դառնայ արեւին։ Ապարանքը ունի անիկիւն է, եւ ելեկտրական պարզ կոճակով մը կարելի է արեւին դարձնել ուժգ ճակատներէն որ եւէ մէկը։ Ամբողջ ապարանքը կ'արժէ 1.200,000 ֆր.։

ՕՐԸ ՕՐԻՆ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԽԱՌՆԱԿ ԿԱՑՈՒԹԻԻՆԸ

Շանկայի մէջ որոշ Թիւով ազգայնական զինուորներ, որոնց մէջ 12 սպաներ, յայտնեցան մտնել ֆրանսական առանձնաշնորհեալ հողամասէն ներս, չի գիտցուիր ի՞նչպէս։ կը կարծուի Թէ նախ իրրեւ փախստական ներկայացած են եւ յետոյ ներսը զինուած։ Ատոնք մեծ հրապարակի մը առջեւ սրճարանի մը մէջ տօնեցին Շանկայի գրաւումը։

Ֆրանսական իշխանութիւնները մտահոգութեան մէջ են։ Ծովակալ Պազիր Շանկայի անգլիական ընդհ. հրամանատարին հետ տեսակցեցաւ եւ որոշուեցաւ սերտ գործակցութիւն մը ստեղծել անգլիական եւ ֆրանսական զօրքերուն միջեւ՝ երկու առանձնաշնորհեալ հողամասերը միասին պաշտպանելու համար։ Օտարականներու մէջ ընդհանուր ձգտում կայ բոլոր օտար զինուորները միացնել մէկ վերին հրամանատարութեան տակ։ Այս առթիւ ֆրանսական կառավարութեան հրահանգին կը սպասուի։ Ֆրանսական հողամասը լաւ ամրացուած է, սակայն բաւարար զինուոր չկայ։

Անգլիական եւ ամերիկեան նաւատորմին կողմէ Նանքինի ռմբակոծումը մեծ զայրոյթ առաջ բերած է ազգայնական բանակի շարքերուն մէջ եւ ատոր վրէժը լուծել կ'ուզեն Շանկայի օտարականներէն։ Ամէն կողմ, մանաւանդ ֆրանս. հողամասին մուտքին մօտ օտարատեաց թռուցիկներ փակցուած են։ Շաբաթէյի չինական թաղամասին մէջ ուսանողները միթինգ գումարելով, որոշեցին հռետորներ ղրկել փողոցները՝ ամբոխը հրահրելու եւ Նանքինի ռմբակոծութիւնը դատապարտելու համար։ Աշխատաւորական արհեստակցական միութիւնը որոշած է հիւսիսային կողմէն յարձակում գործել օտար հողամասին վրայ։

ՖՐԱՆՍԱ ԵՒՍ ԿԸ ԳՈՐԾԱԿՑԻ ԱՆԳԼԻՈՅ

Շանկայէն «Տէյլի Էքսփրէս»ի կը հեռագրեն.— Մեծ զղազրդուռիւն կը տիրէ։ Կացութիւնը այնքան ծանրացած է, որ անգլիական, ամերիկեան եւ ֆրանսական իշխանութեանց միջեւ կնքուած համաձայնութիւնով մը, ծովակալ Պասիր ֆրանս. հողամասի զինուորներուն հրամանատարութիւնը փոխանցեց անգլիական զօր. Տունքըրկի, որպէսզի կարելի ըլլայ պաշտպանութեան բոլոր զինուորներու ներդաշնակ գործակցութիւնը ապահովել։ Ֆրանս. զինուորներուն տեղ անմիջապէս ամերիկեան նաւային հետեւակազօրքեր պիտի դրուին։ Բոլոր պահականոցները ամրացուեցան եւ կամաւորներ պահակ կը շրջին գիշեր ցորեկ։ Ո՛չ մէկ զինուած կամ անզէն Չինացի արտօնուած է առանձնաշնորհեալ հողամասը մտնել եւ բոլոր օտարականները գիշերուան ժամը 10ին պէտք է իրենց տուները քաշուին, եթէ մասնաւոր արտօնագիր չունին։

Հոնկքոնկէն Շանկայ հասաւ անգլիական զինուորներու վաշտ մը եւ օդանաւատար «Արգոս» նաւը։

Նանքինի եւ Շանկայի մէջ ստեղծուած ծանր կացութեան առթիւ, ճափոնական կառավարութիւնը որոշեց Շանկայ ղրկել Ցինկ-Յաօի առաջին նաւաբաժինին մէկ մասը եւ ութ թորփիլահալածներ։ Ի հարկին ուրիշ մարտանաւեր ալ պիտի ղրկէ։

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՆԴՐԴՈՒԵԼԻ

Ֆրանսական հողամասին մօտ հաւաքոյթ մը տեղի ունեցաւ, ի ներկայութեան ազգայնական բանակի վերին հրամանատար զօր. Զանկ-Քայ-Շէքի եւ որոշուեցաւ պահանջել առանձնաշնորհեալ հողամասերու չնջումը, եւ յայտարարել նոր ընդհանուր գործադուլ մը։ Զօր. Քայ-Շէք յիշատակագիր մը ղրկեց պետութեանց ներկայացուցիչներուն, պահանջելով մասնաւոր իրաւունքներու եւ անհատապատ դաշնագիրներու չնջումը։

Շանկայի նորվեկեան հիւպատոսը, դիւանագիտական մարմնի երէց անդամը, խորհրդային հիւպատոսը եւ միջազգային ոստիկանութեան բարձր պաշտօնատարները այցելեցին Զօր. Քայ-Շէքի։

∴ Չինացիները երկու տեղ կրակ բացին ամերիկեան եւ անգլ. նաւերուն վրայ, որոնք փախստականներ կը փոխադրէին եւ որոնց կ'ընկերանային մարտանաւեր։

Հանքէուի մէջ օտարատեաց շարժումը սաստկացած է. 100 օտար կիներ ու մանուկներ կը մնային։

∴ Պաշտօնապէս կը հաղորդուի Թէ Նանքինի մէջ ազգայնականներու կողմէ սպաննուած օտարականներու Թիւն է 7, վիրաւորներ՝ 5։ Նանքինի մէջ սպաննուած են նաեւ երկու յիսուսեան հայրեր։ «Իւմանիթէ» կը գրէ Թէ Նանքինի մէջ սպաննուած կամ վիրաւորուած են 7000 Չինացիներ։

Ազգայնականները Վու-Հուի մօտ գրաւեցին անգլ. նաւ մը եւ զինուորներու փոխադրութեան յատկացուցին զայն։ Անգլ. յածանաւ մը, շոգենաւին օգնութեան կոչին վրայ, հասնելով ազատեց զայն։ Չինացի զինուորները զինաթափ եղան եւ ցամաք հանուեցան, բացի երեք սպաներէ, որոնք վար ղրուեցան։

Մոսկուայի Գ. Միջազգայինը աշխարհի պրոլետարներուն ուղղուած կոչով մը մատնանիշ կ'ընէ Թէ «նոր պատերազմ մը սկսած է աշխարհակալ դասիճներու կողմէ»։

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Իտալեսերպ վէճը կարգադրելու համար Անգլիա և Ֆրանսա առաջարկած էին զինուորական միջազգային մարմին մը ղրկել՝

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՋՕՐ. ԹՈՐԳՈՄ
... ԿԱՐՄԻՐՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Հռչակաւոր Թորգոմը, որ վերջին երկու-երեք տարուան ընթացքին Յունաստանի մէջ ռամկավար-Հօկ-պոլշեւիկ «պլօք»ին «պայրաքտար»ն էր, վերջերս բոլորովին անոնց դէմ դարձած է եւ նոր քաղաքականութիւն մը կը մշակէ, նոյն իսկ սպառնալով ...Երեւանի վարիչներուն։

Երկկ ստացանք ընդարձակ կոչ մը «Արտասահմանի գաղութներ, միացէք»։ Կոչին գլխաւոր մասը կը կազմէ Հայաստանի կառավարութեան ուղղուած բաց նամակ մը, որմէ կը քաղենք հետեւեալ հատուածը.

—«Թէպէտեւ Յունաստանի մէջ եղբայրական ասպնջականութիւն գտնող 40—50,000 Հայերու ջախջախիչ մեծամասնութիւնը ո եւ է գործ չեն ուզեր ունենալ համայնավարական պրօպականտին հետ, բայց հայերէն համայնավարական Թերթ մը կը հրատարակուի Ա.Թ.Է.Նքի մէջ, Անդրկովկասի Խ. Հանրապետութիւններու (որոնց մէջ կը գտնուի նաեւ Խ. Հայաստանը) պոլսոյ առեւտր. ներկայացուցիչ Պ. Շահիվէրտեանի ուղղակի աջակցութեան եւ հսկողութեան ներքեւ։

«Ուրիշ հայերէն Թերթ մը կը հրատարակուի Ցպէլանիկ Գ. Միջազգայնականի Ցպէլանիկի կեդր. կոմիտէին ուղղակի աջակցութեամբ եւ հրամանին տակ։

«Այս իրողութիւնները երեւանի վարիչներու կողմէ միայն գործելակերպի ծանր սխալ մը չէ, այլ գայթակղութիւն մը։

«Գ. Միջազգայնականի կողմէ Եւրոպայի եւ այլ վայրերու մէջ կատարուած պրոպականտի ձեռնարկը կը նմանի ձիշտ փողոցի մէջ ձեռք երկարող Թշուառ մուրացիկին եղած անբարոյութեան հրաւէրին։

«Անցեալ տարուան Նոյմ. ամսուան, քանի մը Հայերու կողմէ Ա.Թ.Է.Նքի մէկ Թատրոնին մէջ կատարուած տարաժամ ցոյցերէն յետոյ, պարտք համարեցի, երկար տեսակցութեան մը ընթացքին Խ. Միութեան դեսպան Պ. Ռւստինօֆին ուշադրութիւնը հրաւիրել, Հայերու մէջ կատարուած համայնավարական պրոպականտի բոլոր ձևասակար հետեւանքներու վրայ։

«Պ. Ռւստինօֆ բացորոշ կերպով յայտարարեց Թէ կ'ընդունի իմ տեսակէտը, որ բոլոր ողջամիտ Հայերու տեսակէտն է, եւ ան ինձ խոստացաւ այս մասին տեղեկացնել Պ. Շահիվէրտեանին որ ուղղակի աւելի հետաքրքրուած է եւ տեղեակ է հայկական խնդիրներու։

«Թորպէս կը ցաւիմ յայտնելու որ Պ. Շահիվէրտեանի շրջապատին մէջ ուրիշ տեսակէտներ յաղթող ինդիսացան։

«Ոչ միայն համայնավարական պրոպականտը Հայերու մէջ չտկարացաւ, ընդհակառակը աւելի ուժեղացաւ։

«Այս պայմաններուն տակ եւրոպական երկիրներու եւ այլ վայրերու մէջ գտնուող բոլոր Հայերուն պարտականութիւնն է միանալ այս նոր վտանգին դէմ որ կը սպառնայ նոյնիսկ իրենց գոյութեան»։

Վերջացնելով, Թորգոմ Խորհրդային իշխանութեան երեսին կը զարնէ Հայաստանի հանդէպ կատարուած «դաւաճանութիւնը» եւ «ստորնութիւնը», եւ սպառնալիքներ կ'ընէ։

Ուրիշ երկու բաց նամակներով, կը հրաւիրէ Ա.Թ.Է.Նքի Ազգ. վարչութիւնը որ հրաժարի, իբրեւ ապօրէն։

CCCP.

ՌՈՒՍԵԻԹՈՒՐՔ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Մարտ 11ին Խորհրդային Միութեան եւ Թուրքիոյ միջեւ ստորագրուեցաւ առեւտրական դաշնագիր մը — առաջին առեւտրական դաշնագիրը, զոր պոլշեւիկները կը կնքեն արեւելեան պետութիւններու հետ։

Խորհրդային մամուլը ցնծութեան մէջ է այդ առթիւ։ «Իզվեստիա», «Փրաւտա» եւ այլ թերթեր լեցուն են ողջոյններով ու կնքուած դաշնագրին նուիրուած զանազան նիւթերով։ Բարախան, կանեցքի եւ խորհրդային ուրիշ դիւանագէտներ շնորհաւորական հեռագիրներ ղրկած են Էնկիւրի։ «Փրաւտա», «Իզվեստիա» տաք խմբագրականներ նուիրեցին այդ ուրախալի դէպքին։ Պարզ է որ պոլշեւիկները մեծ կարեւորութիւն կ'ընծայեն կնքուած դաշնագրին եւ, ի հարկէ, ոչ թէ անոր զուտ առեւտրական կողմին, այլ քաղաքական արժէքին։

Արդէն, եթէ կ'ուզէք, դաշնագրի առեւտրական նշանակութիւնը շատ ալ մեծ չէ, որովհետեւ, ինչպէս կը վկայէ «Իզվեստիա»ն, (15 Մարտ), «ապրանքափոխութիւնը այս պահուս թէ խորհրդային եւ թէ թրքական արտաքին առեւտուրի մէջ կը զբաւէ խիստ համեստ տեղ, համեմատած, օրինակի համար, իտալական կամ անգլա-թրքական ապրանքափոխութեան հետ»։ Ս.յապէս, 1924—25ին պոլշեւիկներու ներածումը Թուրքիա եղած է 10,042,000, իսկ արտածումը Թուրքիայէն՝ 3,739,000 րուբլի։ Յաջորդ 1925—26ին արտածումը 17 միլիոն 693,000 էր, իսկ ներածումը 9,835,000 ր.։ Եւ դաշնագրի պայմանն ալ այնպէս է, որ երկու երկիրներու միջեւ կատարուելիք առեւտուրը 7 միլիոն թրքական ոսկին պէտք չէ անցնի — ողորմելի գումար մը, որ, հարկաւ, վճռական դեր չի կրնար խաղալ երկու երկիրներու ապրանքի փոխանակութեան մէջ։

Ինչի՞ մէջ է, հապա, կնքուած դաշնագրին արժէքը։ Ինչն է պոլշեւիկ դիւանագէտներուն անխառն հրճուանք պատճառողը։ Առոր պատասխանը կուտայ, «Իզվեստիա»յի խմբագրականը։ «Դաշնագիրը, կ'ըսէ ան, ունի առաջին քաղաքական նշանակութիւն, որ շատ աւելի լայն է, քան սովորական առեւտրական դաշնագրերու սահմանը»։

Ու կը բացատրէ։

«1921ին, Մոսկուայի դաշնագիր, 1925ին, Փարիզի հաշտաձայնութիւն եւ Մարտի 11ին, Էնկիւրիի մէջ ստորագրուած առեւտրական դաշնագիր,— ահա թուրք-խորհրդային յարաբերութիւններու հիմնական հանգրուանները... Բարեկամութիւնը Խորհրդ. Միութեան եւ նոր Թուրքիոյ միջեւ, որ կը բխի անոնց յանուն անկախութեան, խաղաղ զարգացման մղուած պայքարի շահերու ընդհանրութենէն, նշանաւոր է անով, որ անշեղ կ'ընթանայ լարնացման եւ խորացման ճանապարհով եւ ոչ մէկ կապ ունի միջազգային քաղաքական կացութեան այս կամ այն փոփոխութեան հետ։

«1921ի դաշնագիրը կնքուեցաւ Թուրքիոյ համար առանձնապէս ծանր վայրկեանին, երբ անոր դէմ ընդհանուր յարձակում էին սկսած աշխարհակալները ու վարձկանները։ Խորհրդային Ռուսաստանը առաջին երկիրն էր, որ ճանչցաւ Թուրքիան իր ազգային սահմաններով եւ միակ երկիրն էր, որ անոր կողմն անցաւ անկախութեան համար մղուած պայքարին մէջ։ 1925ի Փարիզի դաշինքը Խորհրդ. Միութեան կնքած առաջին երաշխաւորական համաձայնութիւնն էր, որ կը ստորագրուէր այն վայրկեանին, երբ շատ խիստ սրուած էր Մուսուլի հարցը եւ Խորհրդ. Միութեան համար ստեղծուած էր աննպաստ վիճակ, ատկէ քիչ առաջ, ստորագրուած Լոքառնօի համաձայնութեան հետեւանքով։ Իսկ Թուրք-խորհրդային առեւտրական դաշինքը, որ կը հանդիսանայ Խորհրդ. Միութեան կնքած առաջին դաշնագիրը աբեւելեան երկրի մը հետ, կը ստորագրուի այն պահուն, երբ բոլորովին պարզուած է անգլեւիտալական համաձայնութիւնը, որուն առարկաներէն մէկն ալ Թուրքիան է եւ Առաջաւոր Ասիոյ միւս երկիրները, եւ միւս կողմէն, երբ Անգլիան նոր ճիգեր կը թափէ ստեղծելու համար միացեալ ճակատ մը Խորհրդային Միութեան դէմ։ Խորհրդ. Միութիւնն ու Թուրքիան վստահ կը քալեն իրենց ճամբան եւ այդ ճամբէն չեն կրնար շեղեցնել՝ չէչեպի Անատօլու «ցատկելու» պատրաստուող ֆաշիստներու չղագար կանչուրտուքը, ո՛չ Զէմսըըրլէնի անպատկառօրէն անկար ծանուցագիրը, ոչ ալ Պեսարապիայի «մնծահոգի» նուէրը Մուսօլինիի կողմէն ռումանական ազնուականներուն։ Նոր ստորագրուած առեւտրական դաշնագիրը այս տեսակէտով բաւականաչափ համոզիչ ապացոյց մըն է։

Աւելի պերճախօս ու աւելի լիակատար կերպով կարելի չէ պարզել Մարտ 11ի առեւտրական դաշնագրի իմաստը։ Ի՞նչ առեւտուր, ի՞նչ փոխանակութիւն։ Քաղաքական ժամանակութիւններն են, որ հարկադրեցին փութացնել աւելի քան երկու տարի տեւող բանակցութիւնները, հարթեցին անհարթելի համարուած սկզբունքի հակամարտութիւնները եւ ճեպընթաց ստորագրել տուին դաշնագիրը մը, որ, անկասկած, խորհրդային դիւանագիտութեան մէկ յաղթանակը պէտք է համարել։

Թուրք-խորհրդային առեւտրական բանակցութիւններու ձգձգման գլխաւոր պատճառը պոլշեւիկներու պետական առեւտուրի եւ Թուրքերու առեւտրական սկզբունքներու անհաշտելիութիւնն էր։ Պոլշեւիկները կը պահանջէին, որ առեւտուրը Խորհրդային Միութեան հետ կատարուի բացառապէս արտաքին առեւտուրի գործակալութեան՝ վնիշթորկի միջոցով, որ այս վերջինի ներկայացուցիչները Թուրքիոյ մէջ նկատուին իբրեւ դիւանագիտական իրաւունքներով օժտուած անձեր եւ վայելեն դիւանագիտական անձեռնմխելիութիւն, ինչպէս նաեւ վնիշթորկի հիմնարկութիւնները ունենան արտահողային առանձնաշնորհներ, եւ Թուրք իշխանութիւնը իրաւունք չունենայ անոնց մէջ խուզարկութիւններ կատարելու, եւ առհասարակ, անոնց գործերուն մէջամտելու ըլլալու։

Թուրքերը չէին ուզեր այս հիմերով առեւտուր ընել, նախ՝ որովհետեւ Թուրք վաճառականները, իրապէս զրուած պիտի ըլլային անհանդուրժելի կապանքներու մէջ, երբորդ՝ որովհետեւ անոնք շատ լաւ գիտէին, որ վնիշթորկի հիմնարկութիւնները միաժամանակ կոմունիստական քարոզութեան վայրեր են, իսկ պաշտօնեաները՝ երբորդ Միջազգայինի գործակալներ։ Հակառակ իր պոլշեւիկասիրութեան՝ Թուրքիան այն ակաւաթիւ երկիրներէն է, ուր համայնավարները կը հալածուին երկաթով ու կրակով։ Մ. Բէմալ շատ կը սիրէ Մոսկուայի բարեկամութիւնը, բայց անխնայ կը հալածէ ու կը պատժէ իր երկրին համայնավար տարրերը։ Այդ պատճառով Էնկիւրին յամառ կերպով կը մերժէր ընդունիլ պոլշեւիկեան պայմանները առեւտրական դաշնագրի համար։

Ու... յանկարծ, Թուրքիան դարձաւ զիջող ու հաշտարար։ Ան ընդունեց Մոսկուայի գրեթէ բոլոր գլխաւոր պայմանները։ Մարտ 11ի դաշնագիրը հիմնուած է պետական մենաշնորհի սկզբունքին վրայ, վնիշթորկը կը մնայ միջնորդ մարմինը երկու երկիրներու միջեւ կատարուելիք առեւտուրի համար, անոր ներկայացուցիչն ու վերջնինս պաշտօնատունը պիտի վայելէ դեսպանական իւաւունքներ, վնիշթորկը Թուրքիոյ մէջ պիտի ունենայ մասնաճիւղեր ու գործակալներ։ Այսինքն՝ բոլոր այն կէտերը, որ Թուրքիան մերժելով կը մերժէր՝ մտած են ստորագրուած դաշնագրին մէջ — դաշնագիր մը, որու տեսական տարողութիւնը, վերջ ի վերջոյ, 7 միլիոն լիրայէն անդին չանցնիր։ Մեծ իմաստութիւն ունենալու պէտք չկայ, հասկնալու համար որ այդ դաշնագրի իսկական բովանդակութիւնը ոչ թէ անոր առեւտրական կէտերուն մէջ է, այլ քաղաքական։

« Յաւակրտան » ֆաշի՞սմն է պատճառը Թուրք-պոլշեւիկեան այս նոր մերձեցման, Զէմսըըրլէնի «անպատկառ տկարութի՞ւնը», թէ ուրիշ ո՛եւ է բան, կ'անցնի այն է, որ աւելի եւ աւելի շերտաւորուող ու բիւրեղացող միջազգային ուժերու դասաւորութեան մէջ, Թուրքիան ո՛չ թէ կը հեռանայ պոլշեւիկներէն, այլ ա՛լ աւելի կը մօտենայ անոնց, ա՛լ աւելի կը խրուի անոնց քաղաքական ֆրապտոյտին մէջ։ Զարդարացան յոյսերը այն քաղաքագէտներուն, որոնք կը կարծէին, թէ Թուրքիան՝ պոլշեւիկներու բարիքը վայելելէ եւ անոնց օժանդակութիւնը օգտագործելէ ետք, կ'անցնի հակառուս բանակը եւ նեցուկ ունենալով Անգլիան՝ ժանիքներ ցոյց կուտայ «Մոսկոֆին»։ Ընդհակառակը, ան կը շարունակէ «Մոսկոֆի» հետ ընկերաբար՝ ժանիքներ ցոյց տալ Անգլիայինն։

Քաղաքական ուժերու այս ձեւի դասաւորութիւնը առանձնապէս կարեւոր է մեզ համար։ Խորհրդային Միութիւն և Թուրքիա՝ մէկ բանակ, Անգլիա, Իտալիա եւ արբանեակները՝ հակառակ բանակ։ Կը պատերազմի՞ն այս բանակները իրարու հետ, թէ՝ «խաղաղ» միջոցներով կը տանին պայքարը— երկու պարագային ալ անոնց փոխյարաբերութիւնը չի կրնար չազդել հայ ժողովրդի ճակատագրին վրայ։

Այդ իսկ պատճառով, պէտք է մօտէն հետեւիլ անոնց յարաբերութիւններու զարգացման եւ ջանալ, որ հայ ժողովուրդը ոտքի տակ չկոխուի։

Ս. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԱՆՄԱՀՆԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

ՊԷԹՀՈՎԷՆ
(1770—1827)

(Բ. եւ վերջին մաս)

Տասնըիններորդ դարու ռոմանթիսմի բազմաթիւ ու զանազան արտայայտութիւնները խիստ կանուխէն իրենց աւելի կամ նուազ որոշ դրոշմը ձգած են 18րդ դարավերջի գերման դասական գրականութեան ու երաժշտութեան վրայ։ Կէօթէ եւ Շիլլէր, հակառակ դասական նեկլադալի ու Հոմի հանդէպ իրենց ունեցած զմայլանքին, չեն կրցած զերծ մնալ գիրենք շրջապատող ազդակներու ազդեցութենէն։

Նմանապէս Պէթհովէն, զոր դասական երաժշտութեան ամենանշոյր արտայայտութիւնը նկատելու չենք վարանիր, իր վերջին շրջանի ամենակատարեալ հեղինակութեանց մէջ վիպականութեան որոշ ազդեցութեան ենթարկուած ըլլալ կը զգացնէ։ Պէթհովէնեան արուեստը իր զարգացման ընթացքին կը ձգտի հետզհետէ ենթակայական ու անձնական զգացումներու արտայայտութիւն դառնալ։ Դասական խիստ ու ատարկայական ոգին հետզհետէ տեղի կուտայ արուեստագէտի ներքին հոգեկան աշխարհէն ծնունդ առած զգացումներու առջեւ։

Այս պատճառաւ իսկ, անհրաժեշտ է Պէթհովէնի կեանքի գլխաւոր պարագաներն աչքի առջեւ ունենալ, ըմբռնելու համար իր արուեստի զարգացումն ու շարունակ դէպի նոր ու խիզախ ձեւերու ձգտումը։ Իր կեանքի յարատեւ փոփոխականութիւնները առիթ տուած են իր հանճարի բազմազան արտայայտութիւններուն։

Պէթհովէնի արուեստը իր ենթակայական հանգամանքէն զատելով, իր կեանքն ալ հարկ է որոշ շրջաններու բաժնել։

Նախապատրաստական շրջան (1770—1792)։ — Պէթհովէնի մանկութիւնն ու պատանեկութիւնը դառնութիւններով լեցուն եղած է։ Անխիղճ հօր մը շահախնդիր պահանջքներուն ենթարկուած պատանին ընտանեկան կեանքի անախորժ մթնոլորտէն խոյս տալով, իր ճնշուած հոգիին սփոփանքը յաճախ ստիպուած էր փնտռել Պոնի ծառուղիներու շուքին տակ կամ վանս Հռենոսի դալարագեղ ափերուն վրայ։

Տասնըհինգ տարեկանին առաջին անգամ վիէննա կ'երթայ, ուր կը տեսնէ Մօցարտը, սակայն իր մօրը մահը շուտով զինքը կը ստիպէ իր ծննդավայրը դառնալ։ Պատանեկութեան իր այս տարիները ամբողջութեամբ կը նուիրէ իր երաժշտական դիտութիւնը զարգացնելու, մինչեւ որ 1792ին կայսրընտիր իշխանը զինքը վիէննա կը ղրկէ, իր երաժշտական ուսումը կատարելագործելու համար։ Հոն իբր վարպետ կ'ունենայ Հայտընը, Ալպրէխցպէրկըրը եւ Սոզիէրին։

Վիէննայի մէջ իր գործունէութեան այս նախապատրաստական շրջանին Պէթհովէն կը յօրինէ դաշնակի, ջութակի եւ թաւ-ջութակի յատուկ իր հատանուագները։ Նոյն ատեն իր նորաբողբոջ հանճարը շուտով կը սկսի ճանչցուիլ վիէննացի երաժշտասէր ազնուականներու կողմէ եւ սիրով ու յարգանքով կ'ընդունուի բարձր դասու պատկանող շրջանակներու մէջ։ Պէթհովէն վիէննական ազնուապետութեան հետ հաստատած իր յարաբերութիւններն հետզհետէ ընդարձակելով, մինչեւ իր կեանքին վերջը բարձրադիր խաւերու մէջ տիրող բարքերու զմայլող մը կը մնայ։ Իր սիրային կեանքն ալ մեծ մասով կոմսուհիներու եւ արուեստագիտուհիներու շուրջ կը դառնայ։ Կը բաւէ միայն իր հեղինակութիւններու ձօները կարդալ, աչքի առջեւ ունենալու համար ազնուականութեան ամէնէն փայլուն անուննները։

Ուրեմն սխալ է շատերու այն կարծիքը թէ իր ժամանակակիցներուն կողմէ չէ գնահատուած։ Այս առասպելը մեծ հանճարներու ժամանակակից աննշան երգահաններու կողմէ յօրինուած է որոնք իրենց հեղինակութեանց անյաջողութիւնը տեսնելով ուզած են այսպէսով ապագայ սերունդներու գնահատութեան կոչում ընել։ Իրականին մէջ Հայտընն, Մօցարտ եւ Պէթհովէն իրենց ողջութեան շատ ժողովրդական եղած են։ Աւելի վերջ Շուման, Մէնտէլսօն ու նոյն իսկ Վակներ ալ իրենց ժամանակին աւելի շատ համակիր քան հակառակորդ ունեցած են։ Իր ժամանակակիցներուն կողմէ արժանաւորապէս չգնահատուած միակ իսկական հանճարը Շուպէրտն է։ Առոր պատճառը իր շատ կանուխ մեռնիլն է։

Պէթհովէնի ժամանակակից Շուպէրտ, իր հեզ, խոնարհ ու անշուք նկարագրով հակապատկեր մը կը ներկայացնէ բարկացոտ խիստ ու դժուարամատչելի Հսկայէն։ Այս պատճառաւ ալ իրարու հետ քիչ շփում ունեցած են։ Շուպէրտ կը պատկանի բոլորովին խոնարհ խաւերու, որով իր երգն ալ աւելի սիրտերու մօտիկ, աւելի յուզիչ, աւելի բանաստեղծական է։ Պէթհովէնի ներշնչման աղբիւրը իր հոգիի յուզերն են միայն։

Միւս կողմէ, Պէթհովէնի հեղինակութիւնները դէպի կատարելութիւն զարգացում մը ցոյց կուտան։ Շուպէրտ քնածին հանճար մըն է որ սկիզբէն մինչեւ վերջ անփոփոխ մնացած է ու առաջին օրէն իսկ իր կարողութեան չափը տուած։

Ստեղծագործութեան առաջին շրջան (1800—1804)։ — Այս շրջանին Պէթհովէն որոշապէս կը հետեւի Հայտընի եւ Մօցարտի աւանդութեան, փայլուն եւ հաճոյալի երաժշտութիւն մը ստեղծելով։ Մանաւանդ կը յարգէ դասական ձեւերը, թէեւ դաշնակի իր առաջին հատանուագներուն մէջ արդէն իսկ տեղ տեղ երեւան կուգայ Մեծ Պէթհովէնը խորախորհուրդ, արտաքին աշխարհի հանդէպ արհամարհոտ ու յանձնուած իր վառ երեւակայութեան։

Իր չափահասութեան այս տարիքներուն, Պէթհովէնն կը սկսի կորանցնել իր լսողութիւնը խոր տխրութեան մէջ ու կեանքի հանդէպ զգացած դառնութեան տակ հեղինակած է իր ամենայուզիչ adagioներուն մէկ մասը։ Այս շրջանի իր կարեւոր գործերն են առաջին եւ երկրորդ համերգները, դաշնակի յատուկ ծանօթ հատանուագները (Mondschein, Quasi Una Fantasia եւլլն.) Բրոյցէրեան հատանուագը (դաշնակի եւ ջութակի համար), առաջին վեց քառեակները եւլն։ Այս տարիներուն կը զուգադիպի նաեւ իր առաջին բուռն ու դժբախտ սէրը հանդէպ Ճուլիէթթա Ճիուզարտիի։

Երկրորդ շրջան (1804—1815)։ — Պէթհովէնն հետզհետէ կ'ինքնամփոփուի, այլեւս իր հոգւոյն յոյզերն են որ իրենց ամբողջ ուժգնութեամբ կ'արտայայտէ, թէեւ կտորներու արտաքին ձեւն ու ներքին հաւասարակշռութիւնը կը չաչողի անեղծ պահել։ Այս երաժշտութիւնը իր սկզբնական թեթեւ ու աշխարհիկ բնոյթը կը կորանցնէ։ Արտայայտութեան շեշտը թէ՛ ուրախութեան եւ թէ տխրութեան մէջ խորունկ ու անկեղծ է։ Երրորդ համերգը այս ներշնչման առաջին արտայայտութիւնն է։

1806ին անգամ մը եւս սէրը կուգայ իր տառապող հոգին պահ մը սփոփելի։ Կը նշանուի Թէրէզէ ֆօն Պրունսվիքի հետ։ Ամուսնութիւնը չիրականանար, սակայն սիրոյ այս ներշնչումէն կը ծնի չորրորդ համերգը՝ ուրախութեան, գուրգուրանքի ու յոյսի լիասիրտ պոռթկում մը։ Սիրոյ երջանկութեան այս տարիներուն կը պարտինք, նաեւ Appassionata (հատանուագ դաշնակի համար), հինգերորդ եւ վեցերորդ համերգները։

Հինգերորդ համերգը, որուն վերջաբանը յաղթութեան հսկայ երգի մը համեմատութիւնները կ'առնէ, նպատակ ունի արտայայտելու մարդուն յաղթանակը ճակատագրին վրայ։ Բարոյական բարձր ոգիով մը լեցուն այս համերգին ներշնչման աղբիւրն է որ տարիներ վերջ իր վսեմագոյն ձեւին մէջ ծնունդ կուտայ նաեւ երաժշտութեան անմահ գլուխ գործոցին՝ իններորդ հաւերգին։

Վեցերորդ համերգը Պէթհովէնն կը նուիրէ բնութեան, որուն աքանչացող մը եղած է իր մանկութենէն ի վեր։ Միայն թէ իր երաժշտութիւնը նկարագրական ըլլալէ աւելի —որպիսին է Հայտընինը— հոգեբանական է։ Ան ինքն իր մէջ կ'ամփոփուի ու բնութեան հրաշալիքներու առջեւ իր հոգիին զգացած տպաւորութիւնները երաժշտութեամբ կը յայտնէ։

Եօթերորդ համերգը նուիրած է պարի գաղափարին։ Ութերորդն ալ ֆեգնանքի ու քմահաճոյքի երաժշտական արտայայտութիւնն է։

Այս շրջանին ծնունդ առած է նաեւ Պէթհովէնի միակ օփերան «Ֆիտէլիօն»։

Երրորդ ջրջան (1815—27) Պէթհովէնն իր կեանքի վերջին տարիներուն մէջ ստեղծած է մարդկային հանճարի կարգ մը ամենավսեմ գլուխ գործոցները։ 1815—22 դաշնակի յատուկ վերջին հինգ հատանուագները, 1822ին «Հանդիսաւոր պատարագը», 1823—4ին իններորդ համերգը ու 1824—26 ալ վերջին վեց քառեակները։

Պէթհովէն, այս գլուխ գործոցները յօրինած է հոգեկան խեղճութեան վիճակի մը մէջ, երբ ողջոյնը ամբողջովին կորսուցուցած, առողջութիւնը խարուած, իր բարեկամները շատերը կորսնցուցած ու ընկճուած հոգւով բնակուելու ստիպուած։

Այս շրջանի իր բոլոր գործերն ալ աւանդական ձեւերը կը հեռանան, ինչպէս հատանուագի կարգ մը բաղկացուցիչ մասերը խուսանաւուզներով փոխարինուին։ Այս կերպով Պէթհովէն Պախի աւանդութիւնը դիմած կ'ըլլայ։

«Հանդիսաւոր պատարագ»ի մէջ ան կը յայտնէ իր հոգեկան յուզումները կրօնական գործի մը առթիւ։

Իններորդ համերգը, որուն վերջը մարդկային ձայնն ալ կը մասնակցի շիլլէրեան տողը հնչեցնելու համար, հանդիսացաւ երաժշտութեան բարձրագոյն գագաթն է։ Հոս, քրիստոնեական ոգիով ներշնչուած Պէթհովէն կը փառաբանէ Ուրախութիւնը՝ —հոգիին այն երանութիւնը որ կը ծնի վիշտի ու դժբախտութեան վրայ մարդու տարած յաղթանակէն։

Ոչ մի անգամ մը լսած երաժշտութիւնը, զգացած ըլլալու է Ուրախութեան ու վշտի միջեւ մղուած պայքարը։

Այն երկնային հրճուանքը որ յաւերժականութեան ծով կ'իջնէ ու մեղմիւ կը սրբէ մարդկային հոգին, յաղթական կ'արտայայտուի պատրաստութիւն ու փոթորկոտ բնութիւններով, մինչեւ որ կրնան սքանչացումով ու վերանութեամբ արբշիռ մարդկութիւնը աստուածային այդ պահերը իր կուրծքին վրայ ջնջել։

Կ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԹՈՒՐՔԻԱ, ԼԵՀԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ

«Թան»ի պոլսոյ թղթակիցը գրէ.—

Դարերու ընթացքին շատ ազգեր այնքան եղբայրական կապակցութիւն ունեցած են իրար հետ, որքան Թուրքիա եւ Լեհաստան։ Նախ աշխարհագրական դիրքի էին։ Սուլթանի գերիշխանութեան տակ գրուած Մոլդաւիան հողերը սահմանակից կէտ մըն էին Լիհիոյ գաշտերուն։ Ջեռոյ, նաեւնդ Մոսկովի ցարը երբեմն ալ թշնամին ըլլալով, Թուրքիա եւ Լեհաստանի շահերը կը դիպչէին համաձայնիլ մինչեւ փոխադարձաբար իրար պաշտպանել։ Իրաւ ալ այս երկու երկիրները գրեթէ շարունակ հակառակ տարիմ գինակիցներ եղած են։ Այն աստիճան որ, Լիհիոյ առաջին բաժանման ատեն, երբ Եւրոպայի բոլոր պետութիւնները, միջազգայնութեամբ իրար պաշտպանելով աչք կը գոցէին Փրուսիոյ, Ռուսիոյ, մինչեւ Թուրքիան իր զէնք բարձրացուց՝ զայն պատժելու համար։ Պարտադրեց բնաւ չփոխհրին այս բարեկամութիւնը։ Թուրքիա հպարտութեան փախստականներու ապաստան եղաւ։ Մինքիեվիչ, Օսմոլովսքի, Ցարթորինսքի եւն. օսմանեան վրայ ոչ մէկ անգամ տան գտան, այլ մեծ պատիւներ։ Ջուտ Լեհերէն կազմեցին հեծելազօրքի գունդեր կռուելու համար Սուլթանի բանակին մէջ։ Իրենց յատուկ դրօշակներն ունէին, ուր խաչն ու Մարիմը քովի դրած էին։ Իրենց երկիրը կորսնցուցած, որոնք պահուած են, կը ապրանէին Թուրքիոյ եւ Լեհաստանի մէջեւ յատուկ գիւղեր։ Ամենէն ականաւոր մարդիկ Թուրքիոյ մէջ Լեհեր եղած են։ Ամենէն ականաւոր մարդիկ Լեհաստանի մէջ Թուրքիոյ բարեկամներ եղած են։ Ամենէն ականաւոր մարդիկ Թուրքիոյ եւ Լեհաստանի մէջ միասին ապրած են։ Ամենէն ականաւոր մարդիկ Թուրքիոյ եւ Լեհաստանի մէջ միասին մեռած են։ Ամենէն ականաւոր մարդիկ Թուրքիոյ եւ Լեհաստանի մէջ միասին թաղուած են։ Ամենէն ականաւոր մարդիկ Թուրքիոյ եւ Լեհաստանի մէջ միասին յիշուած են։ Ամենէն ականաւոր մարդիկ Թուրքիոյ եւ Լեհաստանի մէջ միասին մոռցուած են։

ՎԱՆԱՁՈՐԻ ԵՐԿՈՒՂԻՆ...

ՀԱՅՈՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ղարսի փակվելուց հետո Հայաստանի Կառավարությունը ամեն ինչ արեց, որպեսզի Վանաձորի երկուղին ևս չկորցնենք։ Ինչպես հայտնի է, Վանաձորի երկուղի հարցը Ղարսի պայմանագրի ամենաբարդ հարցերից մեկն էր։ Ղարսի պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ Վանաձորի երկուղը պետք է անցներ Թուրքիային։ Հայաստանի Կառավարությունը, սակայն, ամեն ինչ արեց, որպեսզի Վանաձորի երկուղը մնա Հայաստանին։ Հայ-թուրքական բանակցությունների ընթացքում Հայաստանի Կառավարությունը ցույց տվեց, որ Վանաձորի երկուղը Հայաստանի համար ունի ռազմական մեծ նշանակություն։ Հայ-թուրքական բանակցությունների ընթացքում Հայաստանի Կառավարությունը ցույց տվեց, որ Վանաձորի երկուղը Հայաստանի համար ունի ռազմական մեծ նշանակություն։

տեղւոյն վրայ քննելու համար կացութիւնը: Իտալական կառավարութիւնը չընդունեց այս առաջարկը՝ պնդելով որ Սերպիա արդէն ժամանակ ունեցաւ իր զինուորները սահմանէն ետ քաշելու, որով եւ շատ ուշ է հիմա, քննութիւն կատարելու համար: Միւս կողմէ Գերմանիա եւս կը վարանի միանալ Անգլիոյ եւ Ֆրանսայի այս առաջարկին, վախնալով որ Իտալիա իրեն հանդէպ թշնամական արարք մը կը նկատէ այսպիսի քայլ մը:

Կը կարծուի թէ՝ մեծ պետութիւնները հիմա կ'աշխատին վէճը կարգադրել Հռոմի, Պելկրատի եւ Թիրանայի միջեւ ուղղակի բանակցութիւններով:

*** Թայմզի Թղթակիցը Թիրանայէն կը հեռագրէ.—

Մանրամասն տեղեկութիւններ կը հասնին հոս Եուկօսլաւիոյ մէջ սահմանի երկայնքին կատարուած զին. պատրաստութեանց մասին: Կ'ըսուի թէ Իպէքի, Միթրովիցայի եւ Փրիշթինայի մէջ զէնք բռնելու կարող բոլոր այրերը կը զինուրագրուին, ամսաթոշակի խոստումով, թէ գիշերները բեռնաբարձ ինքնաշարժներ կը հասնին Եաքովայի լեռները, եւ թէ զինուորները տենդոտ գործունէութեան մէջ են՝ Տէպրէի շրջանի ճամբաները նորոգելու համար:

Կ'ըսուի թէ նախկին ալպանական վարչապետ Ֆան Նոլիի դահլիճին նախարարներէն Րէճէպ Շալա Փէյորիցա հասած է եւ զինուորներ կը պատրաստէ, իրեն հետ ունենալով վերջերս հանգստեան կոչուած 40 կանոնաւոր սպաներ: 1500 զինուորներ կը պատրաստուին Գարատաղի մէջ՝ Սթէֆան Լազովիչի հրամանին տակ, քոմիթէճիներէն անկախաբար: Գարատաղցիները կաշառուած են՝ իշխան Ցանիլօի վերադարձին խոստումով: Ալպանիոյ մէջ ալ զօրաւոր պրոպագանդ կը կատարուի, Շքոտրայի շրջանը եւ արեւելեան ցեղախումբերը կասկածելի են: Ընդհանուր ծրագիրն է՝ յարձակում հիւսիսէն եւ յառաջխաղացում Քօսովօէն եւ Տէպրէէն դէպի Թիրանա:

*** «Փբթի Փարիզիէն»ի մանաւոր Թղթակիցը Պելկրատէն կը հեռագրէ թէ Սերպիա ոչ մէկ զինուորական պատրաստութիւն տեսած է ալպանական սահմանին վրայ և թէ եղածը ֆաշիստական յերիւրանք մըն է:

*** Գերման թերթերը կը գրեն թէ Ալպանիոյ մէջ ապստամբութիւն ծագած է: Ապստամբները յաջողած են Թիրանա մտնել եւ ձերբակալել վարչապետ Ահմէտ Զօկուն: Աթէնքի թերթերուն համաձայն, ալպանական հետեւակազօրաց վաշտ մը ապստամբած է Էլպասանի մէջ:

Պելկրատի մէջ տեղեկութիւն չունին այս լուրերէն:

ՖԱՇԻՍՄԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ
ԵՒ ՄՈՒՍՈԼԻՆԻԻ ՊԱՏԳԱՄԸ

Ֆաշիսմի հիմնարկութեան ութերորդ տարեդարձը հանդիսաւորապէս տօնուեցաւ ամբողջ Իտալիոյ մէջ: Հանդէսներուն զինուորական բնոյթ տրուեցաւ եւ կուսակցութիւնը մէջտեղ դրաւ իր մարտական բոլոր ուժերը, որոնց վրայ աւելցաւ, այս առթիւ, 80,000 երիտասարդ «ֆաշիստ յառաջամարտիկներ»ու նոր բանակ մը եւս:

Կուսակցութեան ընդհանուր քարտուղար Աւկուսթօ Թուրաթի, շրջապատուած իտալական քաղաքական եւ զինուորական իշխանութեան ներկայացուցիչներէն՝ խոնուած բազմութեան առջեւ կարդաց Մուսոլինիի պատգամը, որմէ վերջ երեսփոխան Ռիչչի անոր ներկայացուց նոր յառաջապահները: Այս արարողութենէն վերջ, ֆաշիստ նորագիր զինուորները թափօր կազմելով գացին քաղաքապահներու նոր զօրանոցը: Հոն՝ իւրաքանչիւրին տրուեցաւ կուսակցութեան անդամատետրը եւ հրացան մը, խորհրդանշան՝ հաւատքի եւ ուժի:

Ահա այն պատգամը, զոր Մուսոլինի ուղղեց սեւ շապիկաւորներուն այս առթիւ.—

«Ութ տարի անցաւ այն օրէն ի վեր, ուր իտալական ռազմական խուրձերը (ֆաշիօ) կազմուեցան՝ իրենց խորհրդանշական անուան տակ: 1919ին անոնք փոքրիկ խմբակ մըն էին, որ ծառացան կառավարութեանց թշնամութեան ու խաբուած եւ դաւաճանուած զանգուածներու դէմ: 1922 Հոկտեմբերին՝ յաղթական բազմութիւն մըն էր, արիւնի զոհողութեանց մէջէն. այսօր, անհուն բանակ մըն է, որ ամբողջ ազգին հետ կը շփոթուի: Գաղափարը գտաւ անհրաժեշտ սուիններն եւ զարձաւ ամբողջ իտալացի ժողովուրդին կողմէ ընդունուած եւ պաշտպանուած վարչաձեւը:

«Յառաջապահներ,

«Այս փառաւոր տարեդարձին, այս հանդիսաւոր եւ տպաւորիչ տօնախմբութեան առթիւ ձեզի կուտամ անդամատետր մը և հրացան մը: Առաջինը խորհրդանշանն է մեր հաւատքին, երկրորդը՝ գործիքն է մեր ուժին: Ամենամեծ պատիւը համարեցէք սեւ շապիկ հագնիլը եւ ամենաբարձր առանձնաշնորհը՝ քաղաքապահներու շարքերուն մէջ մտնելը:

«Սեւ շապիկաւորներ,

«Օ'ն, դրօշ պարզած երթանք ընդ առաջ այն սերունդներուն, որոնք ապագայի ստուգութիւնը կուտան մեզի. հին մարտական երգերով ողջունեցէք այն յառաջամարտիկները, որ մեզի կուգան՝ մաքուր ու թարմ ինչպէս արշալոյսը: Փորձերուն դէմ հին աշխարհին, զոր քանդեցինք ու լուծեցինք, կայ ու կը մնայ Լիթթօրիօ (կապարճակիր) երիտասարդութիւնը, եռանդուն ու կարգապահ, ֆաշիստ Իտալիոյ մեծութեան համար աշխատելու ու կռուելու ծարաւի:

«Սեւ շապիկաւորնե'ր, մերն է ապագան:»

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԻԱԲԱԺԻՆԸ ՎՈՍՓՈՐԻ ՄԷՋ

Մերձաւոր Արեւելքի ջուրերուն մէջ պտոյտ կատարող ֆրանսական նաւաբաժինը Յունաստանէն վերջ այցելեց Ռումանիա, անցնելով Տարտանէլէն եւ Վոսփորէն: Քոսթանցայի և Պուքրէշի մէջ ռումէն իշխանութիւնները խանդավառ ընդունելութիւն կատարեցին ֆրանսական ծովակալին եւ սպաներուն: Նաւաբաժինը Սեւ Ծովէն վերադառնալով Շաբաթ օր Պոլիս հասաւ, եւ ընդունուեցաւ սովորական ողջոյնի թնդանօթներով: Պոլսոյ ծովային հրամանատարութեան կողմէ թուրք սպայ մը բարիգալուստ մաղթեց Ծով. Պուիի: Առաւօտուն ծովակալը ֆրանսական դեսպանատունը գնաց եւ այցելեց թուրք ծովային հրամանատարութեան, Պոլսոյ կուսակալին եւ Գ. Զօրաբանակի հրամանատար Շիւքրի Նայիլի փաշային:

Կէս օրէ վերջ թուրք պաշտօնական մարմինները փոխադարձ այցելութիւն տուին ծովակալին «Տիւկէ - Թրուէն»ի մէջ: Թուրք ծովակալութիւնը Շաբաթ գիշեր հացկերոյթ մը տուաւ ի պատիւ ֆրանսական նաւաբաժնին, որ Պոլիս պիտի մնայ մինչեւ Ապրիլ 3: Զանազան հանդէսներ նախատեսուած են: Բոլոր թուրք նաւային եւ ցամաքային սպաներն ու ենթասպաները, ինչպէս նաեւ Պոլսոյ լիսէներուն աշակերտները պիտի այցելեն ֆրանսական մարտանաւերը: Ուրբաթ օր ժողովուրդն ալ պիտի արտօնուի այցելել՝ կարգ մը պայմաններով: Ընդունելութիւններ եւ հացկերոյթներ տեղի պիտի ունենան: Ֆրանսական ծովակալը յայտարարած է թէ շատ յուզուած է թուրք իշխանութեանց ընդունելութենէն:

Պէթհովէնի հարիւրամեակը

Վիէննայի մէջ հանդիսաւորապէս տօնուեցաւ Պէթհովէնի մահուան հարիւրամեակը: Ներկայ էին Աւստրիոյ հանրապետութեան նախագահը Հայնիշ, վարչապետ Զայպէլ եւ նախարարներ, ինչպէս նաեւ օտար երկիրներէ հասած բազմաթիւ ներկայացուցիչներ, որոնց մէջ նաեւ Իտուար Էրիօ և Վանտէրվէլտ: Նուագախումբը, երգչախումբի ընկերակցութեամբ նուագեց Զողէֆ Բ. կայսեր նուիրուած մահերգը, որմէ վերջ Հանր. նախագահը վեր հանեց երաժշտական արուեստի միջազգային բնոյթը եւ մաղթեց որ այս հարիւրամեակը առիթ ըլլայ ազգերու մտաւորական գործակցութեան: Զանազան հռետորներ խօսեցան, շեշտելով Պէթհովէնի գործին անմահութիւնը եւ մանաւանդ ցոյց տալով որ անիկա կ'արտայայտէ ներկայ դարու հիմնական ձգտումը դէպի խաղաղութեան տիրապետումը եւ ժողովուրդներու լաւագոյն համաձայնութիւնը:

Ցանուն Ֆրանսայի խօսեցաւ Էրիօ, որ ըսաւ.— Այնքան մեծ անուններ կան, որ զանոնք տօնելու լաւագոյն միջոցն է խոնարհիլ ու լռել: Մենք հոս եկած ենք մտիկ ընելու եւ ոչ խօսելու համար:» Ու փառաբանեց Պէթհովէնի հանճարը:

Կիրակի օր Էրիօ պսակ մը դրաւ Պէթհովէնի գերեզմանին վրայ, յանուն Ֆրանս. կառավարութեան: Նոյն օրը անհամար բազմութիւն այցելեց մեծ երաժիշտին գերեզմանը, որ աշխարհի բոլոր կողմերէն դրկուած պսակներով ծածկուած էր:

Կառավարութիւնը հացկերոյթ տուաւ օտար հիւրերուն:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
"ՓԵՏՐՈՒԱՐ 18,,
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ
Գինը՝ Ֆրանսայի համար 5 ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ: Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ: Դիմել Յառաջի խմբագրատունը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Լիոնի «կայծակ» խումբի ընդհ. ժողովը՝ վաղը Շորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին, նոր Գրադարանի սրահը, 75, Rue Paul Bert.

ՅԱՐԴՈՂԻ յառաջիկայ գրական երեկոն, 31 Մարտ, Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա Ցաշարանին մէջ: կը խօսի դերասան Մարութեան Հայ թատրոնի պատմութեան շուրջ: կը հրաւիրուին անդամներն ու համակիրները:

Լիոնի Տարոն Տուրուբերանի հայրենակցական միութեան ժողովը՝ Հինգշաբթի 31 Մարտ երեկոյեան ժամը 8ին 9ին Հ. Յ. Դ. նախկին գրադարանին մէջ: Խիստ կարեւոր օրակարգ:

Կը խնդրուի Թահրա պէյէ խմբագրատունն հանդիպիլ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՀԱՄԱՐ
կարդացէք եւ տարածեցէք
Զարեւանդի «կրնա՞նք Հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերը. Ֆրանսայի համար 16 Ֆր. արտասահման՝ 18 Ֆրանք, փոստի ծախք չկայ:
Գիմել՝ Léon Kévonianի 208 bis Rue Lafayette. Paris (10me).

ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

Կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Մարսէյլի մասնաճիւղին փարամազ թատերախումբը՝ Զատկի Տօնին առաջին օրը բացառիկ հանդամանքով պիտի ներկայացնէ Ս. Շահէնի՝ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ:

Բոլոր Ազգ. կազմակերպութիւններէն եւ միութիւններէն կը խնդրուի նկատի ունենալ այդ օրը: Մանրամասնութիւնները առանձին:

ԿԸ ՓՆՏՌԻԻ

— Կը փնտռուի Օշական գիւղացի Գէորգ Բաղդասարեան, հօր անունը Արտաշէս 23 տարեկան որ Փետրուարի յեղաշրջումէն յետոյ Պարսկաստան անցած է: Կը կարծուի թէ այժմ Եւրոպա կը գտնուի: Իմացնել՝ յառաջի վարչութեան:

— Պօղոս Տէր Ղազարեան կը փնտռէ իր հայրը Էրզրումցի Բարսեղ Տէր Ղազարեան, մայրը Մարիամ, եղբայրները Պետրոս եւ Աւետիս, որոնք 1914ին Սամսոն կը գտնուէին: Լուր տուողին 100 ֆր. նուէր: Գրել՝ Hanna Der Ghazarian, Légionnaire No 9700 1er Compagnie 3e Étrangère à Imozer par Fez (Maroc):

— Կը փնտռուի Պարտիզակցի Օննիկ Պօղոսեան որ 4 տարիէ ի վեր կը գտնուէր Դամասկոս (Սուրիա) եւ արկածի մը հետեւանքով բանտարկուած էր: Վեց ամիս առաջ բանտէն արձակուած էր: Իմացնել՝ Sarkis Ghazarianի Cité du Midi, Allé No 2, Décines (Isère): Կը խնդրուի սուրիահայ թերթերէն արտատպել:

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ
Ֆաքիր թահրա պէյ 5, Բժիշկին գիրքէն վրցուած էջեր 12.50, Յունահայ տարեգիրք 25, Ռուսքութին 15, Նամուս 10, Զար ոգի 10, Պատուի համար 10, Լռութիւնը 8, Երազահան 6, Կոյսի մը Օրագիրը 5, Անձկութեան ժամեր 2, Մազլվար 12,50, Բարիզէթ 7.50, Տօքթ. Մօրի Վրէժը 5, Մացառներու մէջ (2 հատ.) 25, Ոսկի Աքաղաղ 10, Թուղթի փառք 5, Վերջալոյսին տակ 5, Ճամբուն վրայ 10, Պէպէքթ 10. Հայրենի Քնար 12.50, Հայորդիները 7, Սամսոյ Մշեր 5, Հացին երգը 25, Հայաստանի Նկարիչները Ալմանախը 40, Նարեկ աշխարհաբար 40, «ՆՈՐ ՕՐ»ի գրական տետրակներ, թիւը 2, ինչպէս նաեւ վիպական, թատերական բանաստեղծական եւ ազգային գիրքեր, բառարաններ, խոսակցութիւններ հատ-քածոներ եւայլն:
ԴՐԱՅՈՒՅԱԿԸ ՁՐԻ
Ֆրանսայի եւ գաղութներուն համար, փոստի ծախք չկայ:
Յետանալու համար՝ դիմել նամակով՝ Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé.

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ
ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ
ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մատչելագոյն Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մթերք մը ունի մատենադարանի գիրքերու:
Դիմել, — Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ
ԲԱՑՈՒԱԾ Է ՄԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՃՕԼՕԼԵԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆԸ PHOTO ARAX
9 RUE PAPILLON, PARIS IX
Square Montholonի դիմաց Rue Lafayetteի կից
Métro : Cadet կամ Poissonnière
Բաց է ամէն օր ամբողջ օրը: Գեղարուեստական Ցաշ... պատրաստուած անթերի աշխատութիւններ: Ինքնուերեան ի... ուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ:
ԳԻՒՂԱՄԱՏՅԱԶԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹԱՑԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
Տէր եւ Տիկնոջ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-...
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը բժշկուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի ... գէտը կ'ընդունի Գ-... Ե-. եւ Շաբաթ օրերը ժամը 3—5: Քիթ, ... կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12: Առաւօտեան ժամը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18:

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՓՐԱՆՍԱՀԱՅԵՐՈՒՆ
Ամէն տեսակ դատեր, ամէն դատարաններու առջեւ: ... մանութիւններ եւ պայմանագրութիւններ ամէն լեզուի Ամուսնութեան, ամուսնալուծումի, վիզայի, անցագրի, եւ անձնագրի գործողութիւններ:
ԱՐԱՔ ՉԵԻԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
VAHAN YARJANIAN
CONTENTIEUX
5 Rue Cardinal Mercier Paris, (9e)
Tél. CENTRAL 96-70 կամ 97-39 Métro: CLICHY
» GUTEMBERG 46-65 կամ 71-29 Nord-Sud: TRINITÉ
Յորդրդակցութիւններ ամէն օր ժամը 9-12 և 2-7 բացի կիրակի

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,
փարիզի հայկ. ժամադրավայրը: Արեւելեան կերակուրներ
Շամեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՅՆԱԳԷՏ
ԾԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
Փարիզի եւ գաւառներու Հայութեան Հարմար կը պատրաստէ
ՀԱՄՈՎ, ՀՈՏՈՎ, ԱՆԹԱՐԱԼԻ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ
Մեծաքանակ եւ փոքրաքանակ Անմրցելի գիներով
Մէկ փորձ բաւ է համոզուելու, հետաքրքրուելու ապսպրանքները անմիջապէս կը ղրկուին: Թէլէֆոն: Provence 38-63, Métro Cadet
26, Rue de Trévise Paris (9)

ՊԷԼՎԻԼԻ ՇԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ցանկրածի Արեւելեան վաճառներ ալ կը ծախուին

DOCTEUR PROY
Ex - Interne des Hopitaux
Médaille d'argent
Տօքթ. Յ. ԽՈՒՄՊԷՍԷՐԵԱՆԻ
Աշխատակցութեամբ
Կը խնամէ ներքին, կանանց, մորթային, վէներական հիւանդութիւնները: Երակալայնութիւններու (varices) հիմնական դարմանում առանց գործողութեան:
Ամէն օր ժամը 10-12, եւ 2-8, կիրակի եւ տօն օրեր 9—12:
142 R. DU FB. St. DENIS
Կատ տը Լ'Էսթի մօտ,
Հեռաձայն՝ Nord 31—49:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
5 սենեակ, մէկ խոհանոց, ... ջուր, ելեկտրականութիւն ... պարտէզ: Տարեկան 4000 ... վարձք: Դիմել՝ երեկոները 7էն վերջ, տէր ցակոբեան Impasse Thiberville, ... (Seine).

ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿՆԵՐ
Փավիյոնի մը սէջ 2 սենեակ 1 խոհանոց, կազ, ելեքտրականութիւն, ջուր, կայարանէն 5 վայրկեան, 16 Rue des Alouettes à Colombes, Gare: Les Vallées.

Կ'ուզուի ժամագործութիւն սորվիլ ուզող աշակերտ մը 16 - 18 տարեկան: Դիմել՝ պէօճէնեանի 49 Rue Fondary, Paris (15e).

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris(10e)
Le Gérant : H. TEURNIER

ԱԿԱՕՐԱՆ
28 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Սթերլին,	L. St.	120
Տոլար,	Dollar	600
Մարք (ոսկի) 100 Mark		1...
Թրքական Թղթ. L. Trq.		11...
Թրք. ոսկի	» or	...
Մէճիտիէ	Médjidié	1...
Լէվա 100 հատ	Léva	3...
Տրախմի	» Drachme	1...
Լիր	» » Lire	...
Պելճ. Ֆրանք	» Frc. Belge	4...
Ջուից.	» Frc. Suisse	1...
Լէյ 100 հատ	Ley	9...
Ջերվոնեց	(10 Roubles or)	

ԱՐԺԵՒՈՒԴ

Եգ. Ֆր. Ֆոնտի	1 Cr. Fonc. Ég.	300
»	II »	1915
»	III »	1575
Ռուսի երկթղ.	Lots turcs	150

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafay...

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՐԱՋ

Գ. ՏԱՐԻ Թիւ 298

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԶՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 ալ.	10 ալ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration
Խմբագրութիւն
208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
30
ՄԱՐՏ
1927

30 MARS 1927

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՈՐՈ՞Ւ ԱՆՈՒՆՈՎ

Որո՞ւ անունով կը բարբառին այն պարոնները, որոնք Ղազար կիներու պէս դող կ'ելլեն, երբ կծու խօսք մը լսեն երեւանի այսօրուան վարիչներուն դէմ, կամ բողոք մը, դժգոհութեան ձայն մը՝ արդի Հայաստանի խեղճութեան, անբաւականութեան մասին:

Այս հարցումը՝ անոր համար որ, այդ մարդիկը, փոխանակ ծանր նստելու իրենց տեղը, երեւանի չեղածն ալ եղած կը ներկայացնեն արտասահմանէն, առանց հիմնապէս ծանօթ ըլլալու երկրի անցուդարձերուն, մանաւանդ այնտեղ կծկուած ժողովուրդի տագնապներուն: Եթէ իրենք նոր սորվեցան թէ այսօրուան Հայաստանը կորիզն է ազատ հայրենիքին, մենք 1918էն ի վեր կը յիշեցնենք այդ իրողութիւնը: Ու գիտենք թէ ինչ անձնի խօսքեր լսեցինք, ամբողջ երկու տարի, այդ պարզ իրականութիւնը բացատրած առեն. մինչեւ որ, փլուզումէ փլուզում իյնալով, մեր անարժան հակառակորդներն ալ խելքի եկան եւ ընդունեցան խոստովանիլ ճշմարտութիւնը:

Այն առենուան եղածը՝ պիտի բաւէր մեր անմիջական պահանջներուն, եթէ կարենայինք զսպել ծովերէ ծով մեր թոիչքը, եւ ամուր կոխել շահուած գետնին վրայ: Իսկ հիմա որ նախորդին ծաղրանկարը միայն ունինք, իբրեւ տարածութիւն եւ իբրեւ բնակչութիւն, եւ, միւս կողմէ, գետին կը կորսնցնենք ամէն օր, դաս մը մարդիկ «հաւատքիս հայհոյեց» կը պոռան, երբ դիմողութիւն կ'ընես կամ պահանջներ կը դնես:

Անվիճաբանելի փաստ է որ, ներկայ Հայաստանը կը կորսնցնէ իր հայկական դիմագիծը: Վերջին երկու տարուան ընթացքին, արագօրէն փոխուած է մեր հայրենիքին ազգագրական պատկերը: Այն կենսական կէտերը, որ մաքրուած էին ասկէ առաջ, պետութեան հիմքերը ապահովելու համար, նորէն լեցուեր են կասկածելի, թշնամի տարրերով: Խախտած է հաւասարակշռութիւնը՝ թէ քաղաքական եւ թէ աշխարհագրական տեսակէտով: Հայ դաղթականը հազար դուռ կը զարնէ, հայրենիք գտնելու համար՝ Թուրք-Թաթար փախստականը, որ քանի մը հայրենիք ունի անսահման տարածութիւններով, կուգայ երեւանի քթին տակ բոյն կը հաստատէ, առանց դժուարութեան: Երեւանի կամ Նախիջեւանի հայ բնակիչը Թիֆլիս, Բագու, Հիւսիսային Կովկաս կամ Ռուսաստան գաղթելու կը ստիպուի. Ջուլֆայի կամ Զանգիբասարի Թուրք-Թաթար եկուորը ոչ միայն տեղէն չի շարժիր, այլ եւ մեղր ու կարագով կ'օրհնէ անտէր Հայաստանը: Հայ մանուկը կ'օտարանայ արտասահմանի պողոտաներուն վրայ. Թուրք մանուկը դասագիրք եւ դպրոց կը ստանայ Հայաստանի մարզպաններէն...

Ո՞ւտ են այս փաստերը: «Հակահայաստանեան» գրպարտութիւննե՞ր են, աֆոռամոլ մարդոց չերիւրանքնե՞րն են, թէ անաւոր ողբերգութեան մը աղօտ արձագանգները:

Փա՛ռք Ալլահին, մեր հակառակորդները ամէն միջոց ունին, երթալ տեղին վրայ ստուգելու ամբողջ իրականութիւնը, զանելու սուտն ու իրաւը, դատելու արդարն ու մեղաւորը: Որքան առեն որ այսպիսի փորձ մը չեն կատարեր, հանրութեան աչքին առջեւ պիտի մնան պարզ կեղծարարներ եւ շարլաթաններ, անարժան՝ ո՛ր եւ է յարգանքի:

Բայց, միայն Հայաստանի մէջ հաստատուած ժողովուրդին վիճակը չէ որ մտահոգութիւն կը պատճառէ մեզի, դառնացնելով բոլոր անկեղծ հայրենասէրներու սիրտը:

Այս ժողովուրդին հազիւ մէկ երրորդը կը զանուի հայրենիքին մէջ: Ութ հարիւր հազար հոգի միայն կը համբեն այնտեղ: Իսկ մնացա՞ծը, — այն որ կը թափառի աշխարհ, Խորհրդային Միութեան անծայրածիր սահմաններէն մինչեւ հարաւային Ամերիկա եւ մինչեւ Միջերկրականի ափերը, արեւելքէն արեւմուտք: Ան նուազն Հայաստանի բնակչութեան չափ ժողովուրդ կը հառաչէ, կը ծիւրի արտասահմանի մէջ, անտէր եւ յուսակտուր:

Ո՛վ կը պաշտպանէ այս ժողովուրդին իրաւունքները: Ո՞վ կը հետաքրքրուի անոր ճակատագրով: Որո՞ւ անունով կը բողոքին ծանօթ մարդիկը, երբ կ'արծարծուի անոր դատը, որ կը մնայ միշտ առկախ: Երեւան պարտականութիւններ չունի՞ այս մասին: Եւ եթէ անոր համար փակուած է այս էջը, թրքահայ ժողովուրդին դատը, այդ ո՞ր ուժն է որ պիտի հարկադրէ մեզ լսել, աչքերը փակել եւ սաղմոս երգել:

Մենք այն միամիտներէն չենք որ հրաշքի կը սպասեն, ո՛ր եւ է բարելաւում ստանալու համար: Եւ գիտենք որ քաղաքական պայմանները աննպաստ են տակաւին, մեր դատին անմիջական լուծման համար: Բայց ստրկամտութիւն կամ լրբութիւն է հեգնելու զուարճանալ, «ո՞ր ուժերով պիտի գրաւէք Տաճկահայաստանը» եւ նման խօսքեր արտասանել:

Քաղաքական դատերը, ամբողջ ժողովուրդի մը ճակատագիրը «արշընի» վրայ չեն չափուիր, ոչ ալ օրուան հաց-պանիին հետ կը բաղդատուին: Այդպիսի հոգեբանութիւն մը՝ պիտի անբարոյացնէր ո՛ր եւ է ժողովուրդ: Ֆրանսա քառասուն տարի սպասեց, արծարծեց ու երազեց Ալզաս-Լոռէնը: Փոքրիկ Պելճիան ամէն ինչ «մեռաւ-կորաւ» չաղաղակեց, երբ գերմանական բանակները կը ճեղքէին երկիրը, երկաթէ կրունկներու տակ առնելով ժողովուրդը:

Որո՞ւ անունով ալելուիա կ'երգեն մեր տնաբոյս քաղաքականները, մեր պատմութեան այս ճակատագրական շրջանին...:

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԱՊՏԱԿ ԱՊՏԱԿԻ ՎՐԱՅ

«Նոր Աշխարհ», Ամերիկայի հայ պոլշեւիկներուն օրկանը, նորէն բռնած է «խորհրդային Հայաստանի «անկաշառ քարեկամ» ռամկավարներու» օձիքէն, եւ կը թօթուէ անխնայ (19 Մարտ).

— «Եթէ ռամկավար խմբակիցները ուշադրութեամբ հետեւին Խ. Հայաստանի մամուլին եւ գրականութեան, պիտի տեսնեն, թէ արտասահմանի մէջ «Հնչակեան — Դաշնակցական թափթփուքներէ կազմուած փոքր խմբակներու» գործերուն շատ աւելի արժէք կը տրուի, քան Հայաստանի բարեկամութեան կեղծ դիմակը հագած ազգայինճիական «մեծ» կազմակերպութիւններու մեծամեծ խօսքերուն, որոնց տեսէ թաքնուած կեղծիքը եւ եւ դաւադրութիւնը լաւ ծանօթ է թէ մեզի եւ թէ Հայաստանի մեր ընկերներուն:

«Կեղծիք, այո՛, որովհետեւ ռամկավարները սկզբունքով չէ որ հաշտուեր են խորհրդային իշխանութեան հետ, այլ հետեւելով իրենց «ռուսական օրիէնտացիային», ընդուներ են կատարուած իրողութիւնը:

«Զօրաւորին եւ տիրողին հնազանդելու սկզբունքն է, որ տուն կուտայ ռամկավարներու քաղաքականութեան: Եթէ քաղաքական պայմանները այնպէս դասաւորուին, որ հակայեղափոխութիւնը զլուխ բարձրացնէ խորհրդային իշխանութեան դէմ եւ ստեղծուի այնպիսի վիճակ մը, որ հայ ազգայնական կուսակցութիւններու մասնակցութիւնը որոշող դեր կատարէ, վստահաբար անոնք պիտի միանան հակայեղափոխութեան, ձգտելու եւ առապելու յեղափոխական իշխանութիւնը:

«Ձեզ մոռցած այն մօտիկ անցեալը, որ երբ Հայաստանի մէջ կը տիրէր դաշնակցական ֆաշիզմը, բոլշեւիզմը տիրապետող ուժ չէր, ռամկավար դործիչները եւ խմբագիրները բոլշեւիկ կը կոչէին դաշնակցականները՝ զանոնք հասարակութեան առջեւ «վարկաբեկած» ըլլալու համար:

...«Աւելին: Ինչո՞ւ պէտք է խաիր դնէինք երկու ազգայնական կուսակցութիւններու միջեւ, երբ մէկուն «բարեկամութիւնը» Խ. Հայաստանի հանդէպ, միւսին թշնամութենէն աւելի բան մը չարժեր իր գործնական արդիւնքով: Եթէ ռամկավարները քանի մը հազար տոլար հաւաքեցին Լենինականի աղէտեալներուն համար, նոյն բանը աւելիով ըրին դաշնակցականները: Եթէ այս քանի մը տոլարը պիտի ըլլայ չափանիշը երկու կուսակցութիւններու հայրենասիրութեան, ապա ուրեմն ռամկավարները աւելի վար կը մնան դաշնակցականներէն:»

ՎՐԱՍՏԱՆԻ ԴՐՕՂՆԵՐՈՒ Միութիւնը այս գարնան պատուիրակութիւն մը պիտի ղրկէ Հայաստան, երկու գրական միութիւններու սերտ համագործակցութեան ուժ տալու համար: Վրաց գրողներու միութիւնը այս միջոցին ձեռնարկած է Թարգմանելու հայկական բանաստեղծութեան նշանաւոր երկերը, միեւնոյն ատեն կազմակերպելով երեկոյթներ եւ ասուլիսներ՝ հայկական գրականութեան մասին: Միութեան կից պիտի կազմուի հայ-վրացական գրական ընկերութիւն մը, երկու գրականութիւնները կանոնաւորապէս ուսումնասիրելու համար:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Չինաստանի զանազան գրաւեալ նաւահանգիստներէն օտար փախստականներ կը շարունակեն հասնիլ Շանկայ: Այս քաղաքը համեմատաբար խաղաղած է, շնորհիւ վերին հրամանատար Չանկ-Քայ-Շէքի, որ ազդարարեց ծայրայեղեան տարրերուն՝ դադրեցնել օտարատեաց գրգռութիւնները: Չանքէուէն և վերին Եանկցէէն առնուած լուրերու համաձայն, այդ շրջանին մէջ օտարականներու դէմ շարժումը հետզհետէ կը սաստկանայ:

Անգլիական չորս մարտանաւեր, քանի մը օդանաւեր եւ 300 զինուորներ Հոնկքոնկի մօտ Պիասպէյի ծովահէններու որջը քարուքանդ ըրին, կործանելով 150 տուներ եւ ընկղմելով աւելի քան 50 չինական նաւակներ: Չինացիները շրջակայ բլուրները քաշուեցան եւ այս տեսարանը դիտեցին առանց դիմադրութիւն փորձելու:

Ճափոնական 800 նաւային զինուորներ եւս ցամաք հանուեցան Շանկայ, ընդհանուր թիւը բարձրացնելով 2400ի: Ճափոնցիները ունին 19 Թորփիլահալածներ, խարսխած զանազան ազգայնական նաւահանգիստներու մէջ, ութը Շանկայի առջեւ: Եզերքին մօտ ունին նաեւ երեք ամբողջական տորմիղներ:

Լենինկրատի գործարաններուն մէջ միթինկներ տեղի ունեցան աւելի քան 50,000 բանուորներու ներկայութեամբ, բողոքելու համար Նանքինի ռմբակոծութեան դէմ:

Զօրավար Չանկ-Քայ-Շէք յայտարարեց թէ «ինչ ալ ըլլայ Չինաստան ղրկուած օտար զինուորներու թիւը, պետութիւնները չպիտի յայողին աշխարհի քարտէսէն ջնջել Չինաստանի անունը»: Զօրավարը աւելցուց թէ Ազգայնականները մինչեւ յառաջիկայ Ծնունդ պիտի գրաւեն ամբողջ Չինաստանը: Երեք կողմէն յարձակողական պիտի սկսի դէպի Փեքին: Զօրավար Ֆէնկ Եուշիանկ Փեքին պիտի իջնէ արեւմուտքէն՝ 100,000 մարզուած զինուորներով, մինչ Քանթոնցիներու երկու բանակներ դէպի հիւսիս պիտի ուղղուին Քիանկսու եւ Հոնան նահանգներէն:

Լոնտոնէն կը հեռագրեն թէ դահլիճը արտակարգ նիստ գումարեց՝ Չինաստանէն հասած ծանրակշիռ լուրերուն վրայ: Որոշուեցաւ նոր ուժեր ղրկել: Սըր Զէմպրլէյն երեսփ. ժողովին առջեւ երկար մանրամասնութիւններ տուաւ չինական դէպքերուն մասին եւ յայտնեց որ եթէ անգլիական եւ ամերիկեան մարտանաւերը չբլլային, Նանքինի մէջ բոլոր օտարականները պիտի ջարդուէին: Հիմա կացութիւնը այնպէս է որ, անհրաժեշտ պիտի բլլայ պարպել ամբողջ Եանկցէի հովիտը:

Ուաշինկթընի կառավարական շրջանակներուն մէջ վախ կը յայտնեն թէ Զօր. Չանկ-Քայ-Շէք չպիտի յաջողի զսպել համայնավարները եւ իր չափաւորութեան խորհուրդները արդիւնք չպիտի տան: Ամերիկայի մէջ Չինաստանի կացութիւնը շատ ծանր կը նկատուի եւ որոշուած է Փիլիպեան կղզիներէն նոր ուժեր ղրկել Շանկայ:

Ֆրանսական առանձնաշնորհեալ հողամասի Թաղապետական խորհուրդը առջի օր գումարուեցաւ նախագահութեամբ ընդհ. հիւպատոս Նաճարի, որ յայտնեց թէ համաձայն ծով. Պալիրի, ֆրանսական ուժերը բաւարար են՝ ամէն պատահականութեան դէմ դնելու համար եւ թէ միջազգային ուժերուն հետ կատարեալ գործակցութիւն կը տիրէ:

Թուրքիա, Անգլիա եւ Ռուսիա

Պերլինէն կը հեռագրեն Մարտ 27 Թուականով.—

Պերլինի դիւանագիտական շրջանակներուն մէջ մեծ տպաւորութիւն առաջ բերաւ Թուրք արտաքին նախարար Թեվֆիք Րիւշտի պէյի «Փուռնալ տը Ժընեւ»ի ըրած յայտարարութիւնները, որով կը չատագովէ հականգլիական խմբակի մը ստեղծումը Խորհրդային Միութեան հետ գործակցաբար: Հիմա աւելի լաւ կը հասկցուի Անգլիոյ խաղը Իտալեսերպ վէճին մէջ: Լատատեղեակ շրջանակներու մէջ կ'ըսուի թէ Եուկոսլաւիա մօտ օրէն մտադիր է իրաւապէս ճանչնալ Խորհրդային միութիւնը, ու Անգլիա կ'ուզէ արգիլել զայն ամէն գինով: Պերլինի դիւանագիտական շրջանակներուն մէջ կը հարցնեն թէ ի՞նչ պիտի բլլայ Գերմանիոյ դիրքը այս զանազան խնդիրներուն հանդէպ: Ընդհանուր կարծիքն այն է թէ Գերմանիա Ազգերու Դաշնակցութեան անդամակցելէ առաջ աւելի լաւ և անկախ վիճակ ունէր քան հիմա:

ԻՏԱԼԵԻՍԵՐՊ ՎԷՃԸ

Պելկրատէն կը հեռագրեն Մարտ 28 Թուականով.—

Ալպանեւսերպ սահմանագլուխի քննութեան եղանակին մասին հակասական լուրեր կը շրջին քաղաքական շրջանակներու եւ մամուլին մէջ: Իրականութեան մէջ, եուկոսլաւ կառավարութիւնը ընդունած է այս առիթիւ մեծ պետութեանց կողմէ կատարուած բոլոր թելադրութիւնները: Կառավարութիւնը այս կերպով ուզած է ապացուցանել իտալական ամբաստանութեանց անճշտութիւնը: Սակայն եւ այնպէս քննութեան խնդիրը անորոշ կը մնայ, որովհետեւ մեծ պետութիւնները, որոնք Հռոմի եւ Պելկրատի միջեւ ուղղակի խօսակցու-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՋԱՐԴԱՐԱՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ինչպէս գրեցինք, Թուրքիոյ ոստիկանական նախկին տնօրէն եւ յայտնի Ջարդարար Ազմի Պէյրութ գացած է վերջերս: Տնղական թերթերը կը շարունակեն քրքրել այս խնդիրը: Արաբերէն «Էլ Ճէվաիպ» այս առթիւ քար մը կը նետէ ... Հայերու հասցէին, որոնք շատ լաւ կը ճանչնան Ազմիները.—

«Կ'ըսեն թէ Ազմիի պէյրութ գալը ո եւ է քաղաքական նպատակի մը հետ կապ չունի, ան վաճառականական եւ առեւտրական գործերով Յուրիա եկած է. Ալնատոլուի պահուած գանձերէն եւ նոր ճամբաներէն այս նոր վաճառականին շահու դուներ կան եղեր: Այս մասին ով ինչ ուզէ թող ըսէ, մեր աղբատ երկրի դուները միշտ փակ պիտի մնան Ազմիի առջեւ:

«Եթէ Ազմիի հետ վաճառականութիւն ընողները եւ գործի գործ ընողները Հայեր են, այն Հայերը որոնց ընտանիքները Անատոլուի մէջ տասն անգամ ջարդուած են անոնց կողմէ, եթէ Հայերը բերին մեզի այս նուէրը եւ հոս մեր երկրին մէջ անոր հետ միատեղ գործագործութիւն պիտի ընեն, թող այս իրենց սիրելին (?) իրենց հետ առնելով ուրիշ երկիր մը երթան. այն տեսակ երկիր մը, որու արեան հետ անոր ձեռքերը ներկուած չբլլան: Մեր երկիրը այնպէս ձեռքը արիւնով ներկուած մարդիկը չի կրնար ընդունիլ:»

Իսկ ֆրանսերէն «Ռէվէյլ», որ դարձեալ Պէյրութ կը հրատարակուի, դիտել կուտայ.

— «Ազդեօք Ազմին Պէյրութ եկած է այցելելու աւազուտքի գերեզմանատո՞ւնը ուր կը քնանան Լիբանանի նահատակները:

«Այս մարդը որ կախաղանները բարձրացուցած է, կը սիրէ՞ զուարճանալ արիւնոտ յիշատակներով:

«Այն դարձուածքը զոր կ'առնէ իր Պէյրութ բնակութիւնը եւ տեսակցութիւնները զոր ան Թերթերուն կուտայ, հանրային կարգը խանգարելու քնոյթ ունին: Իր բնակութեան պէտք է վերջ մը տալ, ասպնջականութիւնը ազատամտութիւնը պէտք է վերապահուին միայն անոնց որոնք արժանի են:»

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ» տարեգիրքին 1927ի հրատարակութիւնը լոյս տեսաւ Թիֆլիսի մէջ, ռուսերէն լեզուով: Կը պարունակէ լայն տեղեկութիւններ եւ նիւթեր Անդրկովկասի պետական-վարչական կազմակերպութեան եւ երեք հանրապետութիւններու կեանքին մասին: Այս գրքով կարելի է ամփոփ գաղափար կազմել իւրաքանչիւր հանրապետութեան մնտեսական, արդիւնաբերական, գիւղատնտեսական, գիտական, հանրային եւ այլ բազմաթիւ խնդիրներու մասին: կը բաղկանայ 380 էջէ եւ կը պարունակէ 400 նկար եւ քարտէսներ: Գինը՝ 10 րուբլի:

ԻՋԵՒԱՆի (Հայաստան) ջողազ գիւղին եկեղեցին փետր. 22ին վերածուեր է դպրոցի: «Խ. Հ.» կը գրէ թէ ժողովուրդէն միայն երեք հոգի դէմ էին այս առաջարկին:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍի խորհուրդներու 4րդ համագումարը տեղի պիտի ունենայ Ապրիլ 6ին, Թիֆլիսի մէջ: Հայաստանը պիտի ունենայ 80 պատգամաւոր, որոնց 72ը վճռական եւ 8ը խորհրդակցական ձայնի իրաւունքով:

ԹԻՖԼԻՍԻ մէջ, Ապրիլին սկիզբները պիտի տօնուի դերասան վ. փափազեանի բեմական գործունէութեան 25 ամեակը:

ԲՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱԿԵԼ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՑՔ

(Ի. ԵՐ ՎԵՐՋԻՆ ՀԱՍՆ)

Մասնավոր սեփականության հիմունքով գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ձևերի մասին ելույթ ունեցողները ցույց տվեցին, որ այդ ձևերը ոչ միայն չեն կարող ապահովել գյուղատնտեսության հետագա զարգացումը, այլև ընդհակառակը, խոչընդոտում են դրան։ Ընկ. Ստալինը իր ելույթում ցույց տվեց, որ մասնավոր սեփականության հիմունքով գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ձևերը, որոնք հիմնված են անհատական տնտեսության վրա, ունեն իրենց սահմանները, որոնք չեն կարող անցնել։ Այդ սահմանները հասել են իրենց վերջնական կետին։ Ընկ. Ստալինը ցույց տվեց, որ մասնավոր սեփականության հիմունքով գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ձևերը, որոնք հիմնված են անհատական տնտեսության վրա, ունեն իրենց սահմանները, որոնք չեն կարող անցնել։ Այդ սահմանները հասել են իրենց վերջնական կետին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՒԱՌ ԵՒ ԳԱՒԱՌԱՑԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

ՎԱՂՆԱՑԵԱՆ ՅՈՒՇԱԿ...

ՎԱՂՆԱՑԵԱՆ ՅՈՒՇԱԿԸ

Ծնած է 1880 թուին Վաղնացեան Գիւղը, Ալաշկերտի գաւառը։ Ուսանած է Գէորգեան Ճեմարանը։ Ապրած է Պոլիս, Կ. Պոլսոյ մէջ հրատարակած է «Ազգ» օրաթերթը։ Ապա տեղափոխուած է Պուլկարիա, ուր հրատարակած է «Ազգ» եւ «Ժամանակ» օրաթերթերը։ Ապա տեղափոխուած է Ամերիկա, ուր հրատարակած է «Ազգ» եւ «Ազդակ» օրաթերթերը։ Ամերիկայէն վերադարձած է Պոլիս, ուր հրատարակած է «Ազգ» օրաթերթը։ Ապա տեղափոխուած է Կ. Պոլսոյ մերձակայ Պէշիկթաշ, ուր հրատարակած է «Ազգ» օրաթերթը։ Ապա տեղափոխուած է Պոլսոյ մերձակայ Սան Սթեֆանոյ, ուր հրատարակած է «Ազգ» օրաթերթը։ Ապա տեղափոխուած է Պոլսոյ մերձակայ Սան Սթեֆանոյ, ուր հրատարակած է «Ազգ» օրաթերթը։ Ապա տեղափոխուած է Պոլսոյ մերձակայ Սան Սթեֆանոյ, ուր հրատարակած է «Ազգ» օրաթերթը։

— Ես դէմ չեմ, ինչո՞ւ չէ, ամուսնանալ, միայն թէ ինձ համար յարմար կին մը գտնուի։ Ես ինքս ալ ունիմ որոշ պայմաններ։ Ես կ'ուզեմ, որ կինս ինձ պէս ազգասէր ըլլայ, ինձ պէս ազգին համար աշխատի, ինձ պէս ազգին համար տառապի։ Ես կ'ուզեմ, որ կինս ինձ պէս ազգին համար ապրի, ինձ պէս ազգին համար մեռնի։ Ես կ'ուզեմ, որ կինս ինձ պէս ազգին համար ապրի, ինձ պէս ազգին համար մեռնի։ Ես կ'ուզեմ, որ կինս ինձ պէս ազգին համար ապրի, ինձ պէս ազգին համար մեռնի։

— Ուրեմն ձեր կարծիքով ամուսնութիւնը ազգին համար ծառայելու արգելք մը կրնա՞յ ըլլալ։

— Ո՛չ, ամենեւին։ Ես կարծիք չունիմ, որ ամուսնութիւնը ազգին համար ծառայելու արգելք մը կրնայ ըլլալ։ Ես կարծիք չունիմ, որ ամուսնութիւնը ազգին համար ծառայելու արգելք մը կրնայ ըլլալ։ Ես կարծիք չունիմ, որ ամուսնութիւնը ազգին համար ծառայելու արգելք մը կրնայ ըլլալ։

— Ձեր կարծիքով ի՞նչ պէտք է ընէ ազգը, որ իր զաւակները ազգին համար ապրելու եւ մեռնելու սորվեցնէ։

— Ազգը պէտք է ընէ այն, ինչ որ ես կ'ընեմ։ Ազգը պէտք է ընէ այն, ինչ որ ես կ'ընեմ։ Ազգը պէտք է ընէ այն, ինչ որ ես կ'ընեմ։ Ազգը պէտք է ընէ այն, ինչ որ ես կ'ընեմ

Թեանց կողմնակից են, կը կարծեն թէ այսպիսի քննութիւն մը պիտի խանգարէ ուղղակի բանակցութիւնները։

Քաղաքական շրջանակներու մէջ կ'ըսուի թէ Սերպիա պատրաստ է դիւանագիտական բանակցութիւններ կատարել Հռոմի հետ՝ արտաքին նախարար Փէրիչի Սքուփչինայի մէջ ըրած յայտարարութեանց հիման վրայ։

ԱԼՊԱՆԱՑԻ ՋԻՆՈՒՈՐՆԵՐ ՍԵՐՊ ՍԱՀՄԱՆԸ ?

Պելկրատէն Մարտ 28 Թուականով ուրիշ հեռագիր մը կ'ըսէ.—

Ալպանացի պահեստիներու մանակի զօրաշարժին հետեւանքով, ընդ ամէնը 2000 զինուորէ բաղկացած չորս դասակարգեր դրօշի տակ կանչուեցան եւ եուկոսլաւ սահմանագլուխը ղրկուեցան։ Զինուորական բեռնատարձ ինքնաշարժեր ամէն օր Թիրանայէն զէնք եւ ռազմանիւթ կը փոխադրեն զօրաշարժի կեդրոնները, մանաւանդ դէպի հիւսիսային սահմանը։

Շքոտրայի շրջակայ դիրքերը արագօրէն կ'ամրացուին։ Վերջերս Վալոնա ցամաք հանուած բազմաթիւ լեռնային թնդանօթներու մարտկոցներ Շքոտրա փոխադրուած եւ Թարաբոշի վրայ տեղաւորուած են։ Կորիցայի փողոցներուն մէջ փակցուած թռուցիկներ կ'ըսեն թէ իտալական դիւանագիտութիւնը Ալպանիան պիտի փրկէ եուկոսլաւ վտանգէն։

*** Աթէնքի «Էլէֆթէրոս Վիմա» Թերթին Թիրանայի Թղթակիցը կը հեռագրէ.—

Արտաքին նախարարը հաղորդեց ինծի թէ Ալպանիա շարժման մէջ դրած է պահեստիներու տարիքակու դասակարգեր՝ խնայողական պատճառներով չկնչուած ոստիկան-զօրքին տեղը դրուելու համար։ Դրամի եւ ռազմանիւթի պակասը լուրջ պատճառներ են՝ ցոյց տալու համար թէ Ալպանիա չէր կրնար միաքէն անցընել եուկոսլաւիոյ դէմ յարձակում մը կազմակերպել։ Ալպանիոյ պաշտօնական շրջանակները կը հերքեն թէ իտալացի սպաներ կը հրամայեն ալպանեւսերպ սահմանին վրայ տեղաւորուած թնդանօթներուն։

3 ԱՄՍՈՒԱՆ ՄԷՋ 22,500 ՕՏԱՐ ՄԵԿՆԱԾ

Գործազրկութեան տագնապը մեղմացնելու համար կառավարութեան ձեռք առած միջոցները այն արդիւնքն ունեցան, որ օտար երկիրներէ նոր բանուորներ գրեթէ չեն գար այլեւս։

Մինչեւ 1926ի վերջը Ֆրանսա մտնող օտար բանուորներու թիւը աւելի բարձր էր, քան մեկնողներունը։ Օրինակ, Դեկտեմբեր 25էն Յունուար 1, մէկ շաբթուան մէջ Ֆրանսա հասած էին 989 օտար բանուորներ, իսկ մեկնած՝ 739։ Սակայն, 1927ի սկիզբէն ի վեր համեմատութիւնը կը փոխուի եւ մեկնողներու թիւը կ'աւելնայ։ Յունուար 1էն 8 Ֆրանսա մտան 687 օտար բանուոր, իսկ իրենց տեղերը մեկնեցան 1,028 հոգի. 10էն մինչեւ 15՝ 559 հոգի մտան, 2035 մեկնեցան, Յունուար 22ին՝ այս թիւերն էին 339 եւ 2136։ Յունուարի վերջը եկողներու թիւն է 146, մեկնողներունը՝ 2293։ Փետրուարէն սկսեալ շաբաթական ահաւելագոյն 20 հոգի Ֆրանսա մտած են եւ միջին հաշուով 2000 հոգի մեկնած. Մարտ 19ին մուտք կը հաշուուէր միայն 10 հոգի, իսկ մեկնում՝ 1885։

1927ի սկիզբէն մինչեւ Մարտ 20 Ֆրանսայէն մեկնող օտար բանուորներու ընդհանուր թիւն է 22,500 հոգի. մինչ նոյն ժամանակամիջոցին մէջ Ֆրանսա մտած են միայն 3000 հոգի։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Սօֆիայի Ֆրանս. նոր դեսպան Չանրի Քանալօն Պորիս Թագաւորին ներկայացուց իր հաւատարմագրերը։ Այս առթիւ դեսպանը վեր հանեց Պուլկարիոյ եւ Ֆրանսայի միջեւ յարաբերութեանց անկեղծութիւնը եւ շեշտեց թէ պուլկար ժողովուրդը ո՛րքան բարեացակամ է եւ կը յարգէ իր միջազգային յանձնառութիւնները։

Թագաւորը իր պատասխանին մէջ ըսաւ թէ պուլկար ժողովուրդը երբեք չէ դադրած ճշմարիտ հիացում եւ բարեկամութիւն զգալէ հանդէպ Ֆրանս. ազգին։ Պուլկարիա իր հաստատ միջոցներով կ'աշխատի Ֆրանսայի եւ միւս քաղաքակիրթ ազգերուն պէս՝ տեւական խաղաղութեան մը հաստատումին համար։

Բոլոր պուլկար թերթերը այս առթիւ վեր կը հանեն Ֆրանքեւպուլկար բարեկամութիւնը եւ յոյս կը յայտնեն թէ Ֆրանս. դիւանագիտութիւնը իր ազդեցութիւնն ու հմայքը գործ պիտի դնէ՝ խաղաղութիւնը ամրապնդելու համար Պալքաններու մէջ։

Ի՞ՆՉ Կ'ԸՍԷ ՋՕՐ. ՊՈՏՐԷՐՕ

«Փթի Փարիզիէն»ի Թղթակիցը տեսակցած է Պելկրատի իտալական դեսպան զօր. Պոտրէրօի հետ։ Թղթակիցը հարցուցած է թէ ո՞րոնք են այն պատճառները, որ ղրդեցին Մուսօլինին ահազանգ հնչեցնելու Սերպիոյ զինուորական պատրաստութեան մասին։

Դեսպանը պատասխանած է թէ ալպանեւսերպ սահմանի բնակչութեան մէջ կը վխտան քոմիթէճիները, որոնք սովորաբար խաղաղ գիւղացիներ են, սակայն շահէ եւ ռազմասիրութենէ ղրդուած՝ ի հարկին վտանգաւոր տարրեր կը դառնան։ Այս տարրերուն շնորհիւ է որ երկու տարի առաջ սերպ կառավարութիւնը իշխանութեան գլուխ բերաւ ալպանական ներկայ կառավարութեան վարչապետ Ահմէտ Զօկուն։ Այս գարնան սկիզբը այն տպաւորութիւնը ունեցանք, որ նման շարժում մը պատրաստուելու վրայ է։ Իտալական կառավարութիւնը, որ պետութեանց հաւանութեամբ քաղաքակրթիչ մեծ գործի մը ձեռնարկած է Ալպանիոյ մէջ, չուզեր, որ իր ջանքերը խանգարուին մշտակայ խռովութիւններով։ Եթէ Մուսօլինի ահազանգը հնչեցուց, ոչ թէ աղէտ առաջ բերելու, այլ զայն արգիլելու համար էր։

Ռուս սպաներու դպրոց Սերպիոյ մէջ

«Շիքակօ Թրիպիւն»ի Պելկրատի Թղթակիցը կը հեռագրէ թէ ցարական բանակի հին աւանդութիւնները կենդանի կը պահուին տարագրութեան մէջ եւս, ու շարունակ նոր սպաներ կը պատրաստուին։ Ո՛չ միայն Վրանկէլի նախկին բանակին սպաներուն մեծ մասը չեն ցրուուած, այլ շատ մը զինուորներ կը շարունակեն իրենց ծառայութիւնը եուկոսլաւիոյ եւ Պուլկարիոյ բանակներուն մէջ։

Ենթասպայից երկու վարժարաններ, որոնք պոլշեւիկեան յեղափոխութենէն անմիջապէս յետոյ հիմնուած էին, տակաւին կը շարունակուին եւ դեռ նոր շրջանաւարտ ելան հարիւր երիտասարդ սպաներ, որոնք եուկոսլաւ բանակին մէջ առնուեցան, պահելով հանդերձ իրենց ռուսական հպատակութիւնը։

Այս ենթասպայից դպրոցները, որոնց ուսուցիչներէն շատեր փեթրոկրատի նախկին վարժարանէն են, գործակցութեան տիպար մըն են։ Ուսանողները երկու խմբակներու բաժնուած են, կէսը կ'աշխատին վեց ամիս, մինչ միւս կէսը կ'ուսանին, աշխատողներու վաստակած դրամով։ Վեց ամիսը լրանալէ վերջ, ուսանողները գործաւոր, իսկ գործաւորները ուսանող կը դառնան։ Դասընթացքը կ'տեւարտի չորս վեցամսեայէն։ Ուսանողները հիմա աւելի մեծ խանդավառութիւն եւ աշխատասիրութիւն ցոյց կուտան, քան երբ իրենց ծնողները կ'օգնէին։ Այս կարգի երկու դպրոցներ կան, որոնց անուններն են «Տօն» և «Խրիմ»։

Գալով զինուորներուն, բազմաթիւ զօրագունդեր կարելի եղած է պահել։ Ասոնք գումարտակներով կ'աշխատին Պուլկարիոյ եւ եուկոսլաւիոյ ածխահանքերուն, ջաղացքներուն եւ արտերուն մէջ։ Տարին քանի մը անգամ համազգեստ կը հագնին եւ մարզանքի կ'երթան, պատրաստուելով այն օրուան, ուր պոլշեւիկեան վարչաձեւը տապալելու պիտի կանչուին։

Յեղափոխութենէն ազատուած ցարական զօրագունդերու 72 դրօշակներ Պելկրատի ռուս եկեղեցիին մէջ պահուած են եւ գիշեր ցորեկ մարդ կը հսկէ անոնց վրայ, կը վերջացնէ «Շ. Թրիպիւն»ի Թղթակիցը։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԾՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

Վիճաբանական ժողովը Թուրանականութեան մասին 1 Ապրիլ Ուրբաթ երեկոյ ժամը 8ին, փլաս տ'Իթալի, ֆաֆէ-տը-լա-Լիւնի վերնայարկը, մէթրօ Իթալի։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԷՍԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՂՄԷ

3 ԱՊՐԻԼ 927 ԿԻՐԱԿԻ ԿԷՍ ՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 2.30ԻՆ

Նուվէլթի ֆանսինկ սինեմայի մէջ, Av. Jean Jeurès (կայարանին մօտ)

կը ներկայացուի՝ ԽԱՂԱՄՈՂԸ *եւ* ԹԻՔ-ԹԱՔ *գաւեշտը*

Ներկայացումէն վերջ մինչեւ կէս գիշեր պար եւ ճազ-պանտ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ "ՓԵՏՐՈՒԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 Ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։ Դիմել *Յառաջի* խմբագրատունը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Շ. Յ. Դ. Պուա-ֆոլոմպի «Դեագոյն» խումբը ընդհ. ժողովի կը հրաւիրէ շրջանի բոլոր ընկերները, արձանագրուած կամ ոչ, իրենց անդամատետրերով միասին, Ուրբաթ երեկոյ ժամը 8ին՝ 80 Rue Charles-Chefson։

Հ. Յ. Դ. Ազբիւր Սերոբ խումբը ժողովի կը հրաւիրէ Իթալի Թաղամասին արձանագրուած եւ չարձանագրուած Դաշնակցականները 3 Ապրիլ կիրակի կէս օրէ վերջ ժամը 2ին 26 Rue Blanqui, K. Bicêtre (Seine)։

Շ. Յ. Դ. Ալֆորվիլի ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր ընկերները եւ համակիրները շաբաթ երեկոյ ժամը ճիշտ 7ին, երիտ. միութեան ակումբը, 132 Rue Etienne Dolet. կարեւոր օրակարգ։

Շ. Յ. Դ. Լիոնի կոմիտէն ստիպողաբար ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր Դաշնակցական ընկերները, յառաջիկայ 3 Ապրիլ կիրակի առաւօտ ժամը ճիշտ 8.30ին, Rue Boileau էմիլ Զօլայի վերնայարկը։ Լիոնի բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Շ. Յ. Դ. Մարսիլիոյ Պատանեկան միութեան վիճաբանական ժողովը վաղը Հինգշաբթի Rue Republique 63, սրահին մէջ։ Մուտքը ազատ է։

Շ. Յ. Դ. Մարսիլիոյ Պատ. միութեան ընդհ. ընկերական ժողովը՝ կիրակի կէս օրէ վերջ ժամը 1ին 63 Rue République սրահին մէջ։

ՓՕՆ ՏՐ ՇԷՐԻՒ եւ շրջակայ գիւղերու սերաստիոյ նահանգին պատկանող բոլոր հայրենակիցները կը հրաւիրուին Ա. խորհրդարանական ժողովի, կազմելու համար «սերաստիոյ նահանգի հայրենակցական միութեան մասնաճիւղ մը», 2 Ապրիլ Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 2ուկէսին, «Պիւռօ տրթապա»յի կից սրահը։

ՅԱՐԴԻՆՈՒԻ գրական երեկոն, վաղը Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա։ Կը լսուի դերասան Մարուքեան *Հայ Թատրոնի պատմութեան շուրջ*։ Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

ԼԻՈՆԻ Ֆարոն Ֆուրուբերանի հայրենակցական միութեան ժողովը՝ վաղը Հինգշաբթի երեկոյեան ժամը ճիշտ 8ին Հ. Յ. Դ. նախկին գրադարանին մէջ։ Խիստ կարեւոր օրակարգ։

"ԴՐՕՇԱԿ,,Ի

Մարսէյլի գործակալն է

ՀՆԿ. ԿԱՅԾԱԿ ՃԱՐԱՅԵԱՆ

14 Rue de la Fare

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՏՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ 15 Բիւ տէ Ֆոմինիքէն

ՎԻԷՆԻ "ԴՐՕՇԱԿ,,Ի ԵՒ "ՅԱՌԱՋ"Ի ԴԱՐՁԱԿԱԼՆ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՋՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

Մարսէյլ, Ս. Պ.— *Մտացանք 35 ֆրանք։*

Թաւրիզ, Տքթ. Ա. Գ.— *Մտացանք 4 տոլար։*

Իւսէլ, Ղ. Ֆ.— *Մտացանք 35 ֆրանք։*

Վ.-ան-Վօլէն, Օ. Չ.— *Մտացանք 42 ֆրանք։*

Տէսին, Գործ.— *Մտացանք 315 ֆրանք։*

Սէն Շամօն, Վ. Ս.— *Մտացանք 35 ֆրանք։*

Նէօվի-լը-Ռուա, Ս. Մ.— *Մտացանք 10 ֆրանք։*

Սէն Շամօն, Ս. Ա.— *Կը խնդրուի 10 ֆրանք ղրկել։*

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
Ցեր եւ Ցնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ ամէն տեսակ նեղքին եւ վիներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Երկ. եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշաբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առտնին բաժինը ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱԾԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ
126, Rue du Faubourg St. Denis
Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,
փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրներ
Շամեղ, մաքուր, խնայողական
10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԷԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ
28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85
Ծանօթագրաֆի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ԼԻՈՆԻ ՄԷՋ
"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ
«Բարձր Հայք» ճաշարանը 202, Rue Boileau, Արարատ ճաշարանը 116, Tête d'Or։ Թերթին գործակալն է Պ. Խաչիկ Զօմաքլեան, 202, Rue Boileau.

ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՀԱՄԱՐ
կարդացէք եւ տարածեցէք *Զարեւանդի* «Կրնա՞նք Հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերը. Ֆրանսայի համար 16 Ֆր. արտասահման՝ 18 Ֆրանք, փոստի ծախք չկայ։
Գիմել՝ Léon Kévonianի 208 bis Rue Lafayette. Paris (10me).

ԿԸ ՓՆՏՌԻԻ
— Էսկիշէհիրցի Աբթին Հաճի Աբթինեան որ իզմիրի ադէտէն յետոյ փարիզ մեկնած է։ Գրել՝ Stephan Artiniանի 10 Rue des Trois Frères St-Chamond (Loire)։
— Բնիկ մարզուանցի փայլաճու Գրըմեան, քոյրը Թագուհի Գալբաքեան եւ որդիները Սերովբէ, Միհրան, Գրիգոր, Ասատուր, եւ Մարիամ ամուսնացած։ 1923ին մարսէյլէն գանատա մեկնած են։
Գրել՝ Légionnaire Krémian Agob 2e Etr. 1e Bat. 1e Compen subsistance à la 32 Section de C. O. A. Méknès Maroc։
— Կը փնտռուի Օշական գիւղացի Դէկորդ Բաղդասարեան, հօր անունը Արտաշէս 23 տարեկան որ Փետրուարի յեղաշրջումէն յետոյ Պարսկաստան անցած է։ Կը կարծուի թէ այժմ Եւրոպա կը գտնուի։ Իմացնել՝ Յառաջի Վարչութեան։
— Պօղոս Տէր Ղազարեան կը փնտռէ իր հայրը Էրզրումցի Բարսեղ Տէր Ղազարեան, մայրը Մարիամ, եղբայրները Պետրոս եւ Ասատուր, որոնք 1914ին Սամսոն կը գտնուէին։ Լուր տուողին 100 ֆր. նուէր։ Գրել՝ Hanna Der Ghazarian, Légionnaire No 9700 1er Compagnie 3e Étrangère à Imozer par Fez (Maroc)։
— Կը փնտռուի Պարտիզակցի Օննիկ Պօղոսեան որ 4 տարիէ ի վեր կը գտնուէր Դամասկոս (Սուրիա) եւ արկածի մը հետեւանքով բանտարկուած էր։ Վեց ամիս առաջ բանտէն արձակուած էր։ Իմացնել՝ Sarkis Ghazarianի Cité du Midi, Allé No 2, Décines (Isère)։ *Կը խնդրուի սուրիահայ թերթերէն արտատպել։*

Կ'ուզուի Արեւելեան կերակուրներու մասնագէտ խոհարար մը։ Դիմել՝ խմբագրատուն։

ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿՆԵՐ
Փավիյոնի մը մէջ 2 սենեակ 1 խոհանոց, կազ, ելեքտրականութիւն, ջուր, կայարանէն 5 վայրկեան, 16 Rue des Alouettes à Colombes, Gare: Les Vallées.

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՁԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ
որ հրատարակիչն է մանուրատպէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մատենադարանի դիրքերու։
Գիմել, Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ԿԸ ՇԻՆՈՒԻԻ ԵՒ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻ
նպաստաւոր պայմաններով կ'ապարէ, թիթեղէ, զինկէ եւ ապակիէ ամէն տեսակ գործեր (բրի, ելեքտրական, կազի խողովակներ եւայլն), փարիզ եւ ուրիշ արուարձանները։
Գիմել կամ գրել՝ LOUIS FÉNERDJIANի, 83, Rue de Bienfaisance, Blanc-Mesnil (Seine-et-Oise).

Կառավարժ ժամն գիտուկը չինուի եւ կը նորոգուին անոնց կոճակները, գրասեղնակի սեղմները հեւալը, ծախու են թրջոցներ եւ ճոխ մեծութիւններ։ Գիմել՝ 208 Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

ՊԱՔԻՍՔ ՅԱԿՈԲԵԱՆ
ԴԱՇՆԱԿԻ ԵՒ ՕՐԿ
Աքոռս եւ նորոգութիւն Դաշնակահարուհի ՕՐ. Ն. ՅԱԿՈԲԵԱՆ կուտայ դաշնակի դասեր։
Գիմել՝ նոր հասցէին, 17 Rue de la Jonquière Paris, Métro Malesherbes cadet։

ՍԱԿԱՐԱՆ
29 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Ստեռլին,	L. St.	124 62
Տոլար,	Dollar	25 53
Մարք (ոսկի) 100 Mark		605 —
Թրքական Թղթ. L. Trq.		12 90
Թրք. ոսկի	» or	115 —
Մէճիտիէ	Médjidié	8 —
Լեվա 100 հատ	Léva	18 —
Տրախմի	» Drachme	39 —
Լիր	» » Lire	117 —
Պելճ. ֆրանք	» Frc. Belge	70 —
Ֆրանց.	» Frc. Suisse	490 —
Լէյ 100 հատ	Ley	17 —
Չերվոնեց	(10 Roubles or)	90 —

ԱՐԺԵԹՈՒԴՔ

Եգ. Քր. Ֆոնսիէ I	Cr. Fonc. Eg.	305 —
» II	»	190 —
» III	»	160 —
Թումանի երկթղ.	Lots turcs	155 —

Comptoir Parisien de change et de Crédit
80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITEUR
208bis, Rue Lafayette Paris (10e)

Le Gérant : H. TEURNIER

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՀԱՐԱՉ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ՋՈՒԻՑԵՐԻԱ	»	»	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200 ֆ.	

"HARATCH"

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN

Rédaction & Administration / Խմբագրութիւն : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)

TÉLÉPHONE : NORD 57-82

MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ 31 ՄԱՐՏ 1927

31 MARS 1927

Գ. ՏԱՐԻ Թիւ 299

ՕՐԱԹԵՐԹ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՅԴ ՉԷ

Երեւանի կոչնակը փրփրեր է մեր կիրակի օրուան խմբագրականէն, ուր պարզելով «Ներգաղթի առեւտուր»ին խեղկատակութիւնները, կը պահանջէինք այդ գործը «կազմակերպել այնպէս ինչպէս վայել է ո՛ր եւ է իշխանութեան»։

Այս առթիւ, միեւնոյն գծին վրայ կը գնէ նաեւ ռամկավարները, որոնք այս օրերս տարօրինակ համարձակութեամբ մը կը պահանջեն այն ինչ որ «Դաշնակ»ները,— բանալ դուռները։ Եւ այս՝ իբրեւ պարտքը խորհրդային իշխանութեան, «որ յաջորդն ըլլալով ցարական կառավարութեան, պատասխանատու է 1914—1917ի Տաճկահայաստանի դատարկման»։

Մէկդի դնելով ռամկավարներուն նոր «Լոյթ»ը, որ կրնայ պարզ արկածի մը արդիւնք ըլլալ եւ ոչ թէ կանխորոշ եւ հաստատ ծրագրի մը, քննենք մեր մասը։

Առաջին անգամ չէ որ մենք որոշ հարցեր կը դնենք Ներգաղթի առթիւ, եւ պատասխանի կը սպասենք։ Ինչ է մեր ըսածը.—

1. Ո՛ր եւ է իշխանութիւն իրաւունք չունի դուռները փակելու հարազատ ժողովուրդի զաւակներուն առջեւ։

2. Իրաւունք չունի սակարկութիւն կատարելու այդ ժողովուրդին հետ։

3. Իրաւունք չունի խտրութիւն հաստատելու, զանազան չափերու կամ փոկերու քմահաճոյքին կապելով ներգաղթը։ Ո՛վ երբ ուզէ, պէտք է կարենայ հայրենիք երթալ։

4. Իրաւունք չունի, դուռները բանալէ առաջ, կամ բանալու համար, պայման դնել որ զանազան կտակներ եւ նուէրներ իրեն յանձնուին, կամ գաղութները նախ փող ճարեն, որպէսզի ափ մը հող ստանան։

Ասոնք տարրական սկզբունքներ են։ Եւ եթէ խորհրդային իշխանութիւնը տարբերութիւն ունի քաղքենի-ղրամատիրական իշխանութիւններէն, ինչպէս կը պնդէ, պէտք չէ անընդհատ կրկնել տայ սովորական ճշմարտութիւններ։

Ինչ կը պատասխանեն մեզի.— Տեղ չկայ, ղրամ չկայ. զումարներ տուէք որ ճահիճները չորցնենք, վճարեցէք փոխադրութեան ծախքերը, ապահովեցէք վեց ամսուան ապրուստը։

Կարճ խօսք,— ցուէք որ տանք։

Եւ այս՝ 1921էն ի վեր։

Արդ, կարելի՞ է կառավարութիւն կոչել օրկան մը, որ այս պայմանները կը դնէ իր վարած ժողովուրդին թափառական զաւակներուն առջեւ, այն ալ ճակատագրական պահու մը։ Մեր Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցն անգամ, որ տասնոցներով կը պահուի, այդպիսի տրակոնեան եւ շուկայիկ պայմաններ չէ առաջարկած, ամէնէն դժնդակ օրերուն։ Հարցուցեր ենք եւ միշտ պիտի հարցնենք. — Երեւանի մէջ բազմած իշխանութիւնը Սիթրօէնի գործարանի վարչութի՞ւն է, թէ կայսերական կալուածներու մատակարարութիւն։ Հայաստանը տիպար ագարա՞կ է, թէ այս ժողովուրդին հայրենիքը։

Տե՞ղ չկայ, — սուտ են։ Թող պրպտեն իրենց վիճակագրութիւնները եւ պիտի գտնեն բազմաթիւ ամայի գիւղեր, կամ ի վնաս հայ գիւղացիներուն սարքուած գետեղումներ։ Ենթադրելով որ ատոնք ալ վիճելի են, ինչո՞ւ չեն մշակեր ազգային քաղաքականութիւն, գոնէ այնքան որքան վրացի կամ թաթար պոլշեւիկները։

Եթէ գաղութները պատակելու, կամ Անգլիոյ հանքագործները եւ Ձինաստանի յեղափոխականները խրախուսելու համար սպառած եռանդին մէկ տասներորդը յատկացնեն հայ ժողովուրդի վիճակին բարւոքման, ապահովաբար ոչ Նախիջեւանը կը թրքանայ, ոչ ալ Հայաստանի ժողովուրդը գաղթելու կը հարկադրուի։ Եթէ իսկապէս աշխատաւորական քաղաքականութեան հետեւին, ոչ տասնեակ հազարաւոր հայ աշխատաւորներ գործարաններու մէջ կը մաշին, ոչ ալ անոնց զաւակները օտարութեան մէջ կը հալին։

Ցանցանքը մերը չէ, եթէ մենք որոշ դեր կուտանք Երեւանի վարիչներուն, իսկ անոնք ոչ տէր կ'ըլլան, ոչ իսկ լսել կ'ուզեն։

Եւ աւելին,— փոխանակ բուն հարցը շօշափելու, կը ճգնին միաքերը պղտորել փողոցային զրպարտութիւններով։

Այդ կարգէն է Նանսէնի ծրագրին ձախողման խնդիրը։ Մէկ տարիէ ի վեր, կը յամառին Դաշնակցութեան վերագրել այդ ձախողման մեղքը, եւ երբ չենք զիջանիր պատասխանել այդքան գռեհիկ սուտի մը, կը կարծեն թէ յաղթանակը տարած են։ Ա՛նքան կարճ է իրենց յիշողութիւնը որ, կը մոռնան թէ տակաւին քանի մը շաբաթ առաջ, Մարտ 2ին, իրենց հաւատարիմներէն մէկը, իրենց իսկ թերթին մէջ երկարօրէն կը պարզէր Նանսէնեան փոխառութեան ձախողման պատմութիւնը, ապացուցանելով թէ տրուած երաշխաւորութիւնները «անբաւական» էին, թէ Հայաստանը «դուրս կը մնար ամէն օրէնքէ, ամէն դաշնակից պետութեանց եւ Ազգերու Ընկերութեան»։

Իրենք՝ հինգ տարիէ ի վեր հանդիսաւորապէս մեռցուցած մեռել մը կը յաջողի վիժեցնել միջազգային փոխառութիւն մը, ժրնեւի մէջ. Ազգերու Դաշնակցութեան ժողովին առջեւ, այնքան զօրաւոր պաշտպաններ եւ անձնուէ՛ր փոխառուներ ունենալով հանդերձ...

Դեռ չվերջացուցինք։

Շ.

ՄԱՄՈՒԼ

ԱՐԴԵՕՔ ԱՌԱՋԻ՞ՆՆ Է...

Արտակ Դարբինեան, անդամ ռամկավար կեդր. վարչութեան, յանկարծակիի եկեր է, իմանալով թէ իրենց նախկին ընկերը, պելժիոյ «փառ քեւ պարծանքը», որ Հայաստան ղրկուած էր բարեգործականի կոդմէ, *հարիւր հազար ֆր.ի* ապրանք եղեր է։ կարդանք իր իսկ շարադրութիւնը.

— *«Անցեալ Սեպտեմբերին ճարտարագէտ Մ. Միհրդատեանց Բարեգործականի կողմէ երկու ամսով Հայաստան կը ղրկուի շինարարական խնդիրներով։ Մօտ վեց ամիս անցնելէ յետոյ իմացանք թէ Պ. Միհրդատեանց Հայաստանի կառավարութեան հետ բանակցելով որոշած է Նուռլարեան քլինիքի եւ Մարկոսեան արհեստագիտական վարժարանի շէնքերուն տեղը, պատրաստած է անոնց յատակագիծերը. ապա կրթական գործավարութեան հետ խօսելով կարգադրած է նաեւ Դպրոցասէր Տիկնանց կողմէ Երեւանի մէջ հիմնուելիք դպրոցին խնդիրը։*

«Ուրեմն երկու շէնքերու տեղը որոշելու, անոնց յատակագիծերը պատրաստելու, եւ Դպրոցասէրի դպրոցին մասին խօսելու համար պէտք է եղեր մասնաւոր պատուիրակ մը ղրկել Փարիզէն Երեւան։

«Եթէ սխալ չեն մեզ հասած տեղեկութիւնները, Պ. Մ. Միհրդատեանց իր ճամբորդական ծախքերէն զատ ստացած է ամսական 100 ոսկերին, եւ յետոյ՝ ան երկուքի փոխարէն հինգ ամսուայ ընթացքին հազիւ կրցած է վերջացնել իր ընելիքը։

«Ըսել է հիւանդանոցի մը եւ դպրոցի մը տեղը որոշելու եւ անոնց յատակագիծեր պատրաստելու համար ծախսուած է մօտ 100,000 ֆրանք։

«Ահա թէ ինչու ըսինք մշուշի մէջ կը մնայ Բարեգործականի շինարարական գործունէութիւնը Հայաստանի մէջ։ Լրագրական այս հատուկտոր տեղեկութիւնները իրական գործ մը արձանագրելէ աւելի կը մատնանշեն երթեւեկներ, ձեւականութիւններ եւ շռայլ ու անհարկի ծախքեր. իրողութիւն մը որ չի համապատասխաներ Աղաթոն պէյի տասնաբանեայի պահանջած խնայասիրութեան։

«Արդեօք անհրաժե՞շտ էր երկու պարզ շէնքերու յատակագիծը պատրաստելու համար Փարիզէն Երեւան ղրկել ճարտարագէտ մը։

«Արդեօք Երեւանի ճարտարապետները այդ մասին պիտի չկրնայի՞ն գոհացում տալ Բարեգործականին։»

Արդեօք առաջին մասնաւոր առաքելութի՞ւնն է այս, եւ առաջին հարիւր հազա՞րը։ Որքան գիտենք, երկու տարի առաջ ալ նման «միսիա» մը ճամբայ հանուեցաւ, պայմանագիր մը կնքելու համար, եւ պատկառելի գումար մըն ալ այդպէս հալեցաւ։

Նո՞ր արձնցան մեր «ոլչամիա» բարեկամները...

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ ԴՊՐՈՑ ԿԸ ՇԻՆԵՆ.— Իջեւանի շրջանին մէջ գիւղին մէջ ժողովուրդին նախաձեռնութեամբ եւ միջոցներով պիտի շինուի դպրոց մը։ Անոնք քաղաքէն կանչած են ճարտարապետ մը։

ՕՐԸ ՕՐԻՆ

Սուրիոյ կացութիւնը բարւոքած

«Թան» կը գրէ.— Սուրիայէն հասած լուրերը գոհացուցիչ են։ Հանդարտութիւն եւ խաղաղութիւն կը տիրէ կեդրոնին մէջ, Հալէպ, Դամասկոս, ինչպէս նաեւ Ճէպէլը Տրիւզի մէջ։ Սուլթան Ալթրաշի կողմնակիցները Ազրաք ապաստանած են եւ չեն համարձակիր այլեւս գրաւուած հողամասին մէջ երեւալ եւ անգործութեան մատնուած են։ Ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացած է այն խաղաղասիրական պահանջներուն վրայ, որոնք ներկայացուած են մարզպան Պ. Փոնսօի։ Մարզպանը այս առաջարկները յիշած է կառավարութեան տալիք իր տեղեկագրին մէջ։

Բացի Սուրիոյ ներքին անդորրութենէն, արտասահմանի մէջ գործող ընդդիմադիր կուսակցութիւնները եւս իրենց գործունէութիւնը մեղմացուցած են։ Սուրիա-Պաղեստինեան կոմիտէի ներկայացուցիչները, որ Ժընեւի մէջ առիթ չէին փախցներ յարձակելու համար Ֆրանսայի եւ անոր սուրիական քաղաքականութեան վրայ, Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդի վերջին նստաշրջանին հրատարակեցին յայտարարութիւն մը, որ, եթէ անկեղծ է, ցոյց կուտայ թէ մեծ փոփոխութիւն կատարուած է իրենց քաղաքականութեան մէջ։

Գահիրէ հաստատուած այս կոմիտէն միշտ իր բարոյական օժանդակութիւնը տուած էր ապստամբութեան։ Իր Տեղեկատու Դիւանը թերթերն ու արտաքին նախարարութիւնները բառին իսկական առումով կ'ողողէր արտառոց զրպարտութեամբ մը։ Իր թռուցիկները կը շրջէին ամէն կողմ՝ Արեւելքի մէջ, Եւրոպա, նոյն իսկ մինչեւ երկու Ամերիկաներու խորերը, իր յերիւրանքներով փորձելով գրգռել սուրիական եւ հանրային կարծիքը։ Երբ նկատի ունենանք այս կոմիտէի անցեալին մէջ կատարած թշնամական դերը, եւ իր վերջին յայտարարութիւնը, կը սպասենք որ գործերը յաջորդեն խօսքերուն։ Անհրաժեշտ է քաջալերել զիրենք՝ իրենց խաղաղասիրական քաղաքականութեան մէջ, որովհետեւ այդ կը պահանջէ թէ՛ Ֆրանսայի եւ թէ Սուրիոյ շահը։

Իր յայտարարութեան մէջ Սուրիա-Պաղեստինեան կոմիտէն կ'ըսէ թէ պատրաստ է ընդունելու ամէն լուծում որ Ֆրանսան պիտի առաջարկէ, պայմանաւ որ սուրիական բողոքներուն համապատասխանէ։ Ֆրանսա ուրիշ նպատակ չէ ունեցած եւ այդ է պատճառը որ պաշտօն տուած է մարզպան Պ. Փոնսօի լայն քննութիւն մը կատարել՝ հասկնալու համար Ֆրանս. հոգատարութեան ենթակայ այս ժողովուրդին իսկական բողոքները, վերջնական ծրագիրը ներկայացնելէ առաջ։

Սահմանադրութեան նոր ծրագիրը պիտի ենթարկուի Ազգերու Դաշնակցութեան վաւերացման։ Ի՞նչ պիտի ըլլայ նոր Սահմանադրութեան ոգին։ Անցեալի փորձէն օգուտ պիտի քաղուի՞ նոյն սխալները չկրկնելու համար։ Իսկապէս պատասխանատու գործ է առիկա, քանի որ կոչուած է Արեւելքի մէջ Ֆրանսայի հմայքին պահպանումը երաշխաւորել։ Նոր սխալներ գործելէ պէտք է զգուշանանք, ապա թէ ոչ Ֆրանսան Սուրիոյ հետ գժտեցնելու մէջ շահ ունեցողները կրկին պիտի քաջալերուին եւ պիտի վերսկսին իրենց դաւերը։ Ֆրանսա պէտք է գծէ սահման մը, որուն մէջ Սուրիացիները ազատ ըլլան գործելու, առանց մեր միջամտութեան՝ մանրամասնութեանց մէջ։

Բացի քաղաքական խնդիրներէ, անհրաժեշտ է լուծել նաեւ դատական հարցը։

ԻՏԱԼԵԱՍԵՐՊ ՎԷՋԸ

Անգլիական դեսպան Լորտ Քրիու արտաքին նախարարութեան ընդհանուր քարտուղար Ֆիլիփ Պէրթլօի հետ տեսակցեցաւ իտալեւսերպ վէճին մասին։ Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները այսօր համաձայն են թեթեւօրէն փոխելու համար ալպանեւսերպ սահմանին վրայ քննութիւն կատարելիք մարմնի պաշտօնի բնոյթը։ Նոր կարգադրութեան համաձայն, զինուորական մասնագէտներէ բաղկացած ատուգիչ մարմինը պաշտօնի վրայ պիտի մնայ, մինչեւ որ շահակից երկիրներու յարաբերութիւնները բոլորովին բարւոքին։

Ասկէ զատ, Ֆրանսա եւ Անգլիա որոշած են նպաստաւորել Հռոմի եւ Պելկրատի միջեւ ուղղակի բանակցութիւնները։ Այս ձեւով ընդ առաջ գացած կ'ըլլան նաեւ այդ երկու երկիրներու բաղձանքին, քանի որ Իտալիա կը փափաքի կարգ մը դիւրութիւններ ստանալ Սլովենիոյ իր քաղաքացիներուն համար, փոխարէնն Սերպիոյ պահանջած կարգ մը մեղմացումները մտցնելով Թիրանայի դաշնագրին մէջ։

**** «Տէյլի Նիուզ»ի Լուկանօի թղթակիցը կը հեռագրէ թէ տագնապը չէ հանդարտած, ընդհակառակը երթալով աւելի կը սաստկանայ։ Իտալական կառավարութիւնը ոչ միայն կարելի, այլ հաւանական կը նկատէ խիստ մօտ ապագային զինուորական միջամտութիւն կատարել։ Թղթակիցը կը շեշտէ որ պատերազմական նախարարութիւնը մտադիր է շարժման մէջ դնել հինգ դասակարգեր։ 20էն 27 տարեկան բոլոր իտալացիները արտօնուած չեն երկրէն մեկնելու։*

Պելկրատէն հեռագիր մը կ'ըսէ թէ սերպ կառավարութիւնը իր կարգին մեծ պետութեանց ուշադրութիւնը հրաւիրած է Ալպանիոյ զօրաշարժին վրայ, իտալացի սպաներու հրամանին տակ։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՄԱՀ ԼՈՒԻՃԻ ԼՈՒՅՑԱԹԻԻ

Հռոմէն Մարտ 29 թուակիր հեռագիր մը կը հաղորդէ որ Իտալիոյ նախկին վարչապետ և ծերակուտական յայտնի հայասէր Լուիճի Լուցցաթի յանկարծամահ եղած է։

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ պետական ծախքով։

Հանգուցեալը ծնած էր 1841 Մարտ 1ին վենետիկ, որով 86 տարեկան էր։

Աւարտած է փատուայի համալսարանը։ 1862ին աւստրիական կառավարութիւնը վտարեց զինք վենետիկէն՝ կոնտոլավարներու արիեստակցական միութիւն մը կազմած ըլլալուն համար։ Միլանոի մէջ քաղաքական տնտեսագիտութեան ուսուցիչ կարգուեցաւ։ Համալսարանի փրօֆէսէօրութենէն վերջ երեսփոխան ընտրուեցաւ։ 1921ին երբ ծերակուտական ընտրուեցաւ, արդէն 52 տարիէ ի վեր երեսփոխան էր։

Շատ գործօն դեր կատարած է իտալիոյ հանրային կեանքին մէջ։ հիմնած է ժողովրդական դրամատուներ, գործակցական ընկերութիւններ ու ելմտական ճիւղին մէջ իբր անվիճելի հեղինակութիւն մը, վճռական ազդեցութիւն գործած է իտալիոյ տնտեսական կեանքին վրայ։

1910 Մարտին վարչապետ եղաւ եւ տարի մը ետք այդ պաշտօնին վրայ։ Հինգ անգամ ելմտական նախարար եղաւ։ Դեռ 1926ին իտալական պարտաթուղթերուն մասին իր ըրած կարգադրութեան շնորհիւ էր որ լիրէթը աննախընթաց բարձրացում ունեցաւ։ Իտալիա մեծ կորուստ կ'ունենայ իր մահով։

Լուցցաթիի մահով հայ ազգն ալ կը կորսնցնէ իր վաղեմի եւ ազնիւ բարեկամներէն մէկը, որ ամէն առթիւ պաշտպանած է հայկական դատը՝ ըլլայ խորհրդարաններու բեմէն, մամուլի կամ միջազգային հաւաքոյթներու մէջ։

ՁԵՂՄԱՐԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ.— «Խորհրդ. Հայաստան»ի մէջ (16 Մարտ) յօդուածագիր մը կ'առաջարկէ պայքարիլ գիներու յաւելման եւ գեղծումներու դէմ եւ կը յայտնէ.— Իմանշալուի Համագործակցականին հաշուեքննութեան ընթացքին, երեւան եղաւ 1400 րուբլիի գեղծում մը։ քննութենէն յետոյ վարչութիւնը նախանձագին կը խնդրէր քննիչէն, որ «ամբաստանեալն ալ բաշխէ եւ լմնայ»։ Անշուշտ, վարչութիւնը այս խնդրանքը կ'ընէր, նկատի առնելով որ քննիչը այս անգամ կին մըն էր, եւ կարելի էր ազդել անոր «թոյլ լարերուն»։

Համաձայն քննութեան, 1926ի յուլիսին, նոյն գեղծարարին կողմէ իբրացուած էր 300 րուբլի։ երկու ամիս յետոյ, նոյն մարդը իբրացուցած էր 875 րուբլի։ վերջին անգամ նոյն հերոսը աւելի մեծցուցած է քսակը, 1105 րբլ., իսկ նոր ընկեր մը միեւնոյն ժամանակ կ'առնէ 280 րուբլի։

Եւ այսպէս, միշտ համաձայն կատարուած քննութեան, 1925—1926 առեւտրական տարուան ընթացքին, Համագործակցականը ունի իբրեւ շահ 177 րուբլի։

Ինչո՞ւ. որովհետեւ վարչութիւնը չէ պատժած գեղծարարները, այլ քաջալերած է։

«Շո՛ւտ է թաղուած շան գլուխը», կը պոռայ յօդուածագիրը, որ տխուր գոյներով եւ սրտի ցաւով կը նկարագրէ գեղծումները։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՄԸ ՓԱՍՏԵՐԸ)

6. «ԿԱՊՈՅՏ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ»

Հայաստանի ժողովուրդները սովի, մերկութեան, տգիտութեան եւ զարհուրելի ախտերու ճիրաններէն ազատելու համար, ճիշտ է որ արմատական միջոցները պէտք են։ Առանց շնորհիւ պիտի ապահովուի անոր ֆիզիքական գոյութիւնը, եւ գոնէ ժամանակաւորապէսապահպանուի անոր քանակական մեծութիւնը։ Այս տարրական ճշմարտութեան մասին երկու խօսք չի կրնար ըլլալ։

Ամբողջ խնդիրը այն է թէ՝ Հայաստանի ժողովուրդին վիճակը ներկայ պայմաններուն մէջ, գոնէ մասամբ թեթեւցնելու համար ի՛նչ միջոցներու պէտք է դիմել, ի՛նչ կորով պէտք է ապառնել։ Բանի Հայաստանի մէջ կը ւնան խորհրդային կարգերը, քանի մը երկիրը մէկ միջոց է միայն Ռուսերու եւ անոնց այսօրուայ բարեկամներուն համար՝ այդ խնդիրն է կարեւորագոյնը, ուստի եւ այդ ալ պէտք է ըլլայ խորհրդային Հայաստանի վարիչներուն հոգն ու ուշադրութեան կեդրոնը։

Հայաստանը կ'քած է հողի սակաւութենէն, անոր ժողովուրդը կը ձգտի, եւ պատրաստ է ամենաթեթեւ հարուածէն իսկ պայթելու։ Իսկ միեւնոյն ժամանակ Հայաստանի մէջ դեռ եւս կան հարիւր հազարաւոր տեսիդին անմշակ հողեր եւ անապատներ։ Զարմանալի չէ՞, ընդամէնը 30,000 քառ. վերստ տարածութեամբ երկիր մը, համեմատաբար պատկառելի ազգաբնակչութեամբ, դեռեւս խոշոր տարածութիւններ ունի անմշակ։

Թերեւս, առարկեն Հայաստանի պայմաններուն անծանօթները, այդ ձեր ըսած անմշակ հողերը անկարելի է օգտագործել, թերեւս կան խոչընդոտներ — լեռներու ժերպեր կամ անդնդախոր ձորեր եւն. Թերեւս Հայաստանի Ջուրի պակասութեան պատճառով հնարաւոր չէ ոռոգել զանոնք եւ օգտուիլ։

Բարեբախտաբար այդ խոչընդոտներէն եւ ոչ մէկը կ'ունի Հայաստանը։ Աւելին, Հայաստանի հետ իր Ջրառատութեամբ կարելի է համեմատել միայն Զուիցերիան — այնքան շատ է իր Ջուրը եւ մանաւանդ այնքան խոշոր ուժ կը պարունակեն Հայաստանի գետերը։ Իսկ Սեւանի լիճը, — որ առաջինն է իր ջրերով ամբողջ աշխարհի մէջ, — անսահման գանձ մըն է, երկնային բարիք, որմէ պէտք է օգտուիլ նուազագոյն ծախքերով, առաւելագոյն հաւոյքներն առանալով։

Անջրդի հողերը Ջրարբի դարձնելու անկարելիութիւններ չկան, ընդհակառակն, շատ վայրեր խորշակահար եղած են, չնայած որ Ջուրը իրենց գլխուն վերեւ կը հոսի, կամ քովէն կ'անցնի։ Սարգարապատի առնապատը, Արագածի սառոռանները, Եղւարդի դաշտը, Քանաքեռի, Աղհամդալուի եւ Աղբաշի դրուները, Վէդի Բասարի քանի մը տասնեակ հազար տեսիդին ոսկեհնման հողերը, Արազդայանի արդէն իսկ պատրաստի կալուածը Ջրով ոռոգելու համար ամենասովորական արհեստագիտութիւնն ու չնչին դրամական միջոցներն իսկ բաւական են։ Զմոռնանք, որ այդ հողային տարածութիւնները դրեթէ ամբողջութեամբ ոռոգուած են Հայաստանի խանական տիրապետութեան շրջանին, աւատական կարգերու մէջ ապրող եւ բռնակալ սարտարներու միջոցով։

Եթէ հայ կոմունիստներն այդ մասին կը կասկածին, թող բարի ըլլան քրքրելու մեր ԺԲ. եւ ԺԲ. դարերու գրաւոր յիշատակարանները։ Իսկ եթէ Լէնինին, Մարքսի եւն. երկերուն առնասպառութեամբ տարուած են, եթէ համաշխարհային յեղափոխութեամբ են յափշտակուած եւ ժամանակ չունին հայ մօտիկ անցեալի պատմութեամբ զբաղելու՝ թող յոդնութիւն կրեն եւ պատին Հայաստանը, ծանօթանան գէթ մասամբ իրենց թագաւորութեան սահմաններուն եւ տեսնեն թէ այնտեղ տակաւին 2—3 դար առաջ ոռոգման ի՛նչ հրաշալի եւ հաղուագիւտ սիստեմ, ցանց է գոյութիւն ունեցեր։

Պարապ տեղը չէ որ ըսած են թէ ինքնահաւանութիւնը տգիտութեան ծնունդ է։ Հայ կոմունիստները եւ անոնց արտասահմանեան աչ ու ձախ համակրողները, չգիտնալով մեր երկրի պատմութիւնը, ծանօթ չըլլալով Հայաստանի տեղագրական պայմաններուն՝ հարայ - հրոց կը բարձրացնեն «խորհրդային անհնախընթաց շինարարութեան, Ջրաշինարարութեան» մասին։ Իսկ արդի՞ւնքը։ կը տեսնենք իր վիճակէն, իր ըրածէն գոհ մարդ մը, որ այդ իսկ պատճառով հեռանկարներէ, առաջդիմելու ընդունակութենէ զուրկ է։

Հայաստանի ամբողջ Ջրաշինարարութիւնը, որու մասին ամէն օր կը գրեն խորհրդային թերթերը եւ կը ճառեն կոմունիստ դործիչները, որու մասին իրենց հետ «ընկեր» խաղացողները անկոչ վկայութիւնկուտան, այդ ամբողջ Ջրաշինարարութիւնը կաթիլ մը Ջուր է հսկայական անապատի մէջ։ Պէտք է Հայաստան գտնուիլ, մտնել ժողովուրդի զանազան խաւերուն մէջ, այլեւայլ գաւառներու մէջ, անցնիլ այն շրջանները, ուր իրը թէ «կանաչում եւ աճում է կոմունիզմի ծառը», հաւտոզուելուհամար թէ որքա՜ն չնչին բան են ըրած խորհրդային վարիչները այդ եօթը տարուայ ընթացքին։ Գանէ ժողովուրդը դեռ չի վայելեր Ջրաշինարարութեան բարիքները։ Ոչ ոք չի կրնար ցոյց տալ Ջրանցք մը, որու Ջուրը բաւէր գոնէ 5000 մարդու դիւղատնտեսական պահանջներուն։ Էջմիածնի Ջրանցքը որ կիսատ գործ էր, մասամբ միայն թեթեւցուցած է Էջմիածնի գաւառի քանի մը գիւղերու Ջրային տագնապը։ Գաւառի մնացած ամբողջ շրջանները այսօր նոյնքան կը տառապին Ջուրի չգոյութենէն, որքան ցարական կառավարութեան ժամանակ։

«Կապոյտ Ջրանցքների երկրի» Ջրանցքները դեռ հազիւ երկու տասնեակ հազար տեսակադին հող կ'ոռոգեն, այն ալ ոչ ամբողջութեամբ եւ ոչ ալ առաջին անգամ։ Աւարտած, ինչպէս ըսինք, միայն Էջմիածնի Ջրանցքն է։ Մնացած բոլոր Ջրանցքները կիսատ են եւ իրենց նպատակին չեն ծառայեր տակաւին։ Ինչպէս ուրիշ բաներ, Ջրանցքներու մեծ մասն ալ կը մնայ թղթի վրայ, «հնգամեայ ծրագրերի» ձեւով։

Մէկ կողմէ, բնական ճանապարհով ոռոգուած շրջաններու Ջրային սիստէմն ալ խանգարուած է։ Ազատ-Դաշտի, Էջմիածնի, Աշտարակի եւ ուրիշ շրջաններու մէջ Ջուրի սուր պահանջ կայ։ Այդ գետնին վրայ, գլխաւորապէս ամառները ծանր կռիւներ կը ծագին։ Գիւղացիները կը բաժնուին «թայֆա»ներու եւ կը սկսին տուր ու տմփոցը։ Պատահեր է, որ կռիւներուն անմասն չէ մնացած նոյնիսկ շրջանային գործադիր կոմիտէի նախագահը (Աշտարակ) եւ իր թիկունքին վրայ զգացած է գիւղացիներու բռունցքին զօրութիւնը։ Այդ գործութիւնը եւ բամպակաբուծութիւնը ամենածանր հարուածը կրած են Ջուրի պակասէն։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՐԲԵՐԸ. — Ալեքսանդրապոլի մէջ կառավարութիւնը բացած է խոզանակի արհեստանոց մը, ուր կ'աշխատին 10 կոյր որբեր, որոնք եւ խումբ մը ուրիշներ կառավարութեան յանձնուած էին Նպաստամատոյցին կողմէ։ Նպաստամատոյցը կառավարութեան պիտի յանձնէ նաեւ 109 որբեր, որոնք նոյնպէս ունին ֆիզիքական պակասութիւններ։

ԲԱՑ ԽՕՍԻՆՔ

Ա.

Շաբաթներէ ի վեր ցառաջ խմբագրականներով, յօդուածներով կը պարզէ արտասահմանի գաղութներու անկեղպարան վիճակը, եւ ներքին կազմակերպութեան անհրաժեշտութիւնը։ Ու այս՝ ոչ այնքան իբրեւ միակ անմիջական դարման, օրուան բազմապիսի պահանջներուն, այլ իբրեւ հիմնական միջոց արտասահմանի հայ հաւաքականութիւնը պահելու։

Մատնանշուած անհրաժեշտութիւնը կը մնայ լոկ թեւադրանք, որքան ատեն որ հայ կեանքին մէջ ապրած կազմակերպութիւնները դուրս չեն գար իրենց մինչ այժմեայ կրաւորական դիրքերէն։ Ճիշտ է, որ «ելք չկայ», ինչպէս կ'ըսէ ցառաջ, քանի ժողովուրդը անկիւն քաշուած, յոյս եւ լոյս կը սպասէ զանազան երեւելիներէ եւ փիլոնաւորներէ։

Իմ կարծիքով, ելք չկայ, քանի ժողովուրդին մէջ դիրք եւ կշիռ ունեցողները, գործնականապէս չառաջնորդեն զայն դէպի կազմակերպական աշխատանքը։

Գաղութներու կազմակերպութեան շուրջ կան ու կը մնան երկու հիմնական իրերամերժ սկզբունքներ, ուժգնօրէն պաշտպանուած՝ երկու հոսանքներու կողմէն։ Դաշնակցական եւ պոլշեւիկեան տեսակէտներն են, որ կը փոթորկեն մեր իրականութիւնը ուժեղ պայքարներով, առանց վերջնական յաղթանակի։

Գաղտնիք չէ աւելեւս, որ պոլշեւիկները, ռամկավարները, եւ հանրային հակակշռէն խուսափող զանազան կազմակերպութիւնները, ամէն գնով կը պայքարին, ո՛չ միայն Դաշնակցութեան կողմէն առաջարկուած այս կամ այն ծրագրին դէմ, այլ եւ այն բոլոր ձեռնարկներուն դէմ, որոնց նպատակն է, ո եւ է աշխատանք կատարել արտասահմանի մէջ։

Դաշնակցութիւնը, եւ արտասահմանի հայութեան խոշոր մեծամասնութիւնը կանգնած ըլլալով իրական գործ կատարելու տեսակէտին վրայ, իրենց դէմը կը գտնեն ծանօթ հոսանքը, անշուշտ միշտ դեհիկ պայքարի մէջ։ Եւ մինչ խառնակիչները միջոցի մէջ խորութիւն չղնելով նիգակներ կը ճօճեն անվերջ, յանուն զանազան արժէքներու, Դաշնակցութիւնը կը նախընտրէ մնալ կրաւորական դիրքի մէջ, որպէսզի բարդութիւններ չծագին։

Արդիւնքը շատ պարզ է, յաղթանակը կը մնայ միշտ անոնց որոնք վճռականօրէն կը ձգտին քայքայելու ազգային կեանքը, որովհետեւ պայքարի սաստկութեան պատասխանատուութիւնը շատ շուտ կը զգաստացնէ որքան Դաշնակցութիւնը, նոյնքան եւ հայ ժողովրդի այն մասը, որ դուրս չուզեր գալ իր «չէզոք» դիրքէն։

Այս դասաւորման մէջ, դրական գործ վերապահուած պիտի ըլլար միշտ երրորդ հոսանքի մը, եթէ ան կարենար իր շուրջը հաւաքել աւելի կենսունակ տարրերը, նպատակ ունենալով գաղաւորել մեր ազգային ներքին պահանջները։ Թերեւս նման տարրի մը ազդեցութիւնը ըլլար բարերար նաեւ միւս հոսանքներու համար։

Դժբախտաբար հայկական կեանքը, այս տեսակէտէն ալ անմխիթար է։

Առնենք, օրինակ, Փարիզի հոգեբարձուները։ Այս մարմնի անդամները, ինչպէս նաեւ իրենց շրջապատը, այն համոզումը ունին թէ՝ եկեղեցիի ժառանգորդութիւնը իրենց նուիրական ժառանգութիւնն է, եւ եթէ իրենց մէ զատ ուրիշներ անցնին այդ դիրքին, անպայման եւ եկեղեցին պիտի փակուի եւ հայ ժողովուրդը հոս առանց հոգեկան անունի պիտի մնայ։ Ու ինչ որ ամէնէն բնորոշն է, այս մարդոց ունենալ միօրինակ ըմբռնումն է իրենց աշխատանքներու մասին։ Այս հոգեբանութիւնը չէ՞ պատճառը թեմականի դէմ ցուցադրուած դժուարութիւններու։ Այս միեւնոյն հոգեբանութիւնը չէ՞ անոնց ըմբռստութիւնը ամէն տեսակի ժողովրդասէր սկզբունքի դէմ։

Սերունդներ դաստիարակուած են այս հոգեբանութեամբ եւ ստեղծուած է մեր մէջ արհեստով թաղական եւ հոգաբարձուներու բազմութիւն մը։

Այս տարրը հայ պահպանողական եւ հոգեւորական դասի խառնուրդն է։ Ազգային կրօնակրթական իրենց պատուակալ դիրքերուն մէջ պէտք է փնտռել ազդեցութիւնը առանց ընկերային դիրքին։

Ունեւոր հարուստն ու հոգեւորականը, բուն հայրենիքի թէ գաղութներու մէջ իր ուշադրութեան ծանրութիւնը կեդրոնացուցած է առաւելապէս եկեղեցիի վրայ։ Դպրոցը եթէ ոչ աւելորդ, գոնէ երկրորդական, երրորդական արժէք ունի անոնց համար։ Հայութիւնը իր եկեղեցիով ապրեցնելը, արմատացած գաղափար է դարձեր ժամանակի ընթացքին, եւ այսօր այդ գաղափարը կ'ապրի, և մեր չար բախտէն, կը ծաւալի նաեւ տարուբեր հայ նոր սերունդին մէջ եւս, շնորհիւ մեր թափառական վիճակին։

Մի՛ւս կողմէ, Դաշնակցութեան ու իր շեշտուած հակառակորդներուն մէջ կանգած այս հոսանքը, իր անկախութիւնը պահելու չափ ուժեղ չէ։ Ուժեղ եւ աղմկող են խոնարհութիւն ընելու իրենց սովորութեան մէջ աւելի հաւատարիմ քան իրենց նախնիքները, անոնք չեն մոռնար շոյել ու սիրաշահիլ օրուայ ընթացիկ ուժը, հոգ չէ թէ ան՝ ըլլայ տրամաբանօրէն հակառակ իրենց ըմբռնումներուն։ Իրողութիւն է որ այսօր Փարիզի մեր հոգաբարձուներն ու իրենց շուքին տակ առած մարմինները շատ աւելի մօտ են կեցած Հոկեբուն ու անոց հովանաւորներուն, քան Դաշնակցութեան եւ ժողովուրդին։

Այս իրողութիւնը որքան արդիւնք ըլլայ, իշխանաւորին ծունկի գալու ժառանգական սարկամտութեան, հետեւանք է նաեւ իրենց շահերը պաշտպանելու ճիգին։ Անոնք լաւ գիտեն թէ Հոկերը և անոնց հովանաւորները դէմ են Դաշնակցութեան, գիտնալով նաեւ որ Դաշնակցութիւնը աւելի հետաքրքրութիւն ցոյց կուտայ ազգային զանազան հաստատութիւններուն մասին քան առաջինները, որով այն բոլոր ուժերը որոնք դէմ են Դաշնակցութեան, բարեկամ են իրենց։ Այսօրուայ համար, ի հարկէ կարեւոր պարագայ է ասիկա, եւ անպայման խելօք ռազմավարութիւն հայ պահպանողականներու կողմէն։

Ս. ՏԻՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՀԱՅԿ. ԶԱՐԴԱՆԿԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ.— Երեւանի Պետական Թանգարանին մէջ ցուցադրուած է հայկական գարդանկարչութեան ժողովածուն, զոր պատրաստած է Ե. Լալայեան, տասնեակ մը տարիներու ճամբորդութեանց ընթացքին։ Ժողովածուն կը պարունակէ լուսամուտային, դուռներու, սիւներու, կամարալին գարդաձեւեր։ Այս աշխատութեան մէջ կը գտնուին վերջապէս հայկ. ճարտարապետութեան գրեթէ բոլոր օրինակները։

ՏՆԿԱՐԱՆ.— Շահումեան լիճին եզերքը պիտի հաստատուի տնկարան մը, խաղողի եւ պտղատու ծառերու մշակութեան համար։ Ռոստովէն, Ղրիմէն եւ Ուկրայնայէն պիտի բերուին զանազան պտղատու ծառերու տեսակներ։ Նոյն տնկարանը պիտի փոխադրուին «ալեան» խաղողի 15,000 որթեր։

ՆԵՂ. ԵՐԿԱԹՈՒՂԱԳԻԾ.— Ալեքսանդրապոլի Շինարարական կոմիտէն սկսած է շինել նեղ երկաթուղագիծ մը քաղաքին եւ աւազի հանքերուն միջեւ, դիւրացնելու համար հայթայթումը։

ՅԱՐԴԳՈՂԻ «ՀԻՆԳՇԱԲԹԻ,,ՆԵՐԸ

Ամէն անոնք որ քայլ առ քայլ հետեւեր են «Ցարդգող»ի շարժումին, համակրած են, անոր մէկ յատկութեան համար։ Լուռ աշխատելու իր ձիրն է այդ։ Ցետոյ կրկնապատկուած է այդ համակրանքը՝ իր երկրորդ լաւագոյն մէկ նկարագրին համար, այդ ալ մրուելեան անդամներուն միջեւ տիրող ներդաշնակութիւնն է։

Ցարդգող, երիտասարդ Արուեստասէրներու Միութիւնը, մօտաւորապէս հինգ ամիսներ առաջ կը հիմնուէր շատ համեստ բայց գիտակից նպատակներով։ Այդ օրէն ասդին շարունակաբար «Հինգշաբթի երեկոներ» ուշադրաւ երեւան կը բերէ միութեան անդամներուն աշխատանքը, աշխատելու ձեւը, մտածումը եւ իր միտքը բացատրելու կամ պաշտպանելու կրկնակի արտայայտութիւնները։

Միութիւնը կրցած է քով քովի բերել գրողը եւ նկարիչը եւ դաշնակահարուհին եւ ջութակահարը։ Ան իր շարքերուն մէջ մէկ գիծի վրայ կապած է միխտիք բանաստեղծը ապագայապաշտ նկարիչին հետ, իրապաշտ վիպագիրը չօփէնիէն դաշնակահարուհիին մօտ, կամ իմպռսիոնիստ արձակագիրը խորհրդայնացած գրագէտին քով։

Թայց ինչ որ աւելի եւս հետաքրքրական կը դարձնէ այդ երեկոները, այն տաք վիճաբանութիւնն է որ տեղի կ'ունենայ, արծարծելով նոր հարցեր։

* * * *Այսպէս է որ Ցարդգողի ասոնցմէ Հինգշաբթի երեկոներէն, նուիրուած Զօհրապին (պ. Մկրտիչ Պարսամեանի դասախօսութեամբ), հինի եւ նորի խնդիր մը կը ծագէր։*

Առաջին ակնարկով երիտասարդ գրողներու արտայայտութենէն կարծողներ եղան թէ «նոր»ները «հին»երուն վրայ խաչ մը քաշելու մտասեւեռումը ունին։ Բայց աւելի յետոյ սթափումմ մը տեղի ունեցաւ ամէն անոց կողմէ որոնք այդ սխալ գաղափարը իւրացուցած էին։

Երկրորդ եւ երրորդ իրիկունները անմիջապէս նորի մը կողմէ, (պ. Հրանտ Բալուեան), մեզի կը ներկայացուէր Ռուբէն Զարդարեանի գրականութիւնը ցոյց տալով այն փաստը թէ նորերը կը մնան կապուած մեր երէկներուն գրականութեան։ Այս երեկոյին մէջ յարուցուեցաւ հին վէճ մը թէ ի՛նչ ապագայ ունի գաղութահայ գրականութիւնը։

Չորրորդ երեկոն նուիրուած էր նախորդ երեկոյի վիճաբանութեան շարունակութեան, «Գաղութահայ Գրականութեան ապագան»։

Հինգերորդ երեկոյին օհան կարօ այնքան կատարեալ եւ հետաքրքիր ձեւով մը մեր մէջ կը բերէր «հին» մը, Մկրտիչ Պէշիկթաշլեան։

Շրջը նուիրուած էր կարօ Մեհեանի թատերակին, «Վերջալոյսին տակ», զոր ներկայացուց Շ. Նարդունի։

«Ջուխտակին Ցաղթանակը»ն երորդ երեկոյին նիւթն էր, զոր գրած էր Հրաչ Զարդարեան եւ հրատարակուեցաւ, իբր թերթօն, «Ցառաջ»ի մէջ։

Երկու շարունակական երեկոներ (8—9) գրաւած էր նոր մը որ կը կոչուի Վ. Կաքաւեան։ Ընոր վէպը ինքնին գրականութիւն է, տեղաւորուած պատկերներու գիւտերու եւ ոճի մէջ։

Երեկոյ մըն ալ (11) կը նուիրուէր Ֆրանսական թատրոնի այս օրերու մեծագոյն դէմքերէն Ժերալտիի Aimeրին, զոր բերէր Ցար. Փրէնկեան, վերծանելով անդամահատի մը խորհրդաւորութիւնը։

(12)րդ երեկոն նկարիչ Ֆշեանի մէկ ուսումնասիրութեամբ, նուիրուած էր «Հայ ուեստին» շուրջ։ Երիտասարդ նկարիչ եւ գրող, որ բոլորը կապած իր խօսքերուն, գրականորէն ճշակը կուտար մեր հին նկարչական, թատերական եւ այլ սեռերուն։

Պ. Մկրտիչ պարսամեան 13րդ. երեկոյի դասախօսութեան նիւթը կ'ընտրէր Թլկատնցին եւ կ'արտայայտէր Ցարդգողի հանդէպ ունեցած իր համակրանքը։ Երկրորդ անգամ ըլլալով ան պէտք եղաւ անգամ մը եւս անդրադառնալու հաւատալով թէ միայն «Նոր»ները «հինի»ներուն վրայ խաչ մը քաշելու մտասեւեռումը ունին, այլ հինները նոր ուղի մը գտնելու համար Fixeուն են մղուած։

Ցարդգող իր 14րդ երեկոյին լաւագոյն գործ մը կը կատարէր երեկ մը, քիչ մը շատ համեստ երկչոտ նոյնիսկ իր ընթերցումը պահուն, կուգար յայտնութիւն մը ըլլալ մեր մէջ։ Այդ նորը կը կոչուէր Եեավուրեան։

Պէտք էր տեսնել տղոց՝ իրենց կերներուն՝ տուած խորհուրդները, աշխատելու ձեւը, պայքարը, որպէսզի մարդիկ հասկնային թէ ինչ է ներդաշնակութիւնը։

Օրերէ ի վեր շրթներու վրայ քեւ հալող խօսք մը վերջապէս պիտի գար սեղանին վրայ։

Այդ «իրապաշտութիւնը թո՛ղ դէմ՛»ն էր։

Մեր մէջ «նոր»ները չեն պիտի գրաւին այս ծանր հարցը։ Այս անգամ կուգար խօսիլ պրն. «իրապաշտութեան դէմ», Պաշտպանողականին աթոռը կը մնար թափուր եւ ատոր համար է որ վերերեւումը խնայուելի կ'երեւի ինձ։

Հ. Բալուեան օգտուելով բանաստեղծի մը ներկայութենէն 15րդ. երեկոն կը տանձնէր խօսիլ Վ. Թէքէեանի բանաստեղծութեան շուրջ։ Ընձեռուած ներկայութիւնը չէր կարող պատճառ դառնալ որ երիտասարդ արուեստասէրները չըսեն իրենց խօսքը։

16րդ. երեկոն Վ. Կաքաւեան աղուոր գաղափարը կ'ունենար մեմուած պատկերներով եւ իր յատուկ ձեւով մը մեզի պատրաստել նոր գրողի մը առաջին ճաշակը Զ. Սիւրմէլեանի «Զուարթ»ը։

Վերջապէս պիտի գար խոշոր օրը, որ մասնաւորապէս այս նիւթին, որ մասնաւորապէս այս օրերուն նոր սերունդը հետաքրքրող երեւոյթ մըն է։

Վահրամ Սեւունի խոշոր թարգմանչական գրականութեան մասին ու ամփոփ իր գաղափարը եւ այդ ուղղութեամբ իր աշխատելու ձեւը յայտնելէ յետոյ, ճաշակը տուաւ մեզ թարգմանութիւններուն՝ առնուազն գրականութիւններուն։

Հետաքրքիր էր 17րդ երեկոյին նիւթն ալ, զոր մանաւանդ անոր համար որ տեղ երիտասարդներ իրենց պատկերացումը կը բերէին թարգմանչական գրականութեան մասին։

Ամփոփ պատմականը ընծայուեցաւ Վ. Թէքէեանի, եւ այդ ուղղութեամբ կարծես արուած առիթը կարենալ հետեւանքներուն շարքը կապելու եւ պարզելու աշխատանք մը եւ բոլորը՝ անզգալաբար, բայց քանի որ Ցարդգողի ներքին կեանքը այս ուղղութեամբ երկար ատեն

ԴԱՆԱԶԱՓ ՅԱՂԹԱՆԱԿ...

ՀԱՅՏՈՒ ԿԱ ՀԱՎՈՒ ԶՈՀԱՍՑՈՒՑԻՉ

ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա

— Ես ինչ գիտեմ, ասում է Ավետը, ինչ որ ինձ պատմել են, ես էլ ձեզ եմ պատմում։ Ես ինքս չեմ տեսել։ Ես ինքս չեմ տեսել, որ Դանազապը ձի է հեծել, ես ինքս չեմ տեսել, որ Դանազապը ձիուց ընկել է։ Ես ինքս չեմ տեսել, որ Դանազապը ձիուց ընկել է,

ԱԼՊԱՆԻԱ ՋՕՐԱՇԱՐԺ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Պերլինէն լրատու 30 Թուականով կը հեռագրեն.—

Այս օրերս մեծ թիւով դասալիք ալպանացի սպաներ Սերպիա ապաստանած են եւ կը յայտարարեն թէ Ալպանիոյ մէջ բուռն կերպով զօրաշարժ կը կատարուի։ Զինուորներու մեծամասնութիւնը մայրաքաղաքին շուրջ կեդրոնացած է մնացեալները հիւսիսային սահմանը ղրկուած են։ Թիրանա կրնան երթալ ժամնաւոր արտօնագիր ունեցողները միայն։

«Պրիթիշ Եունայթըտ Փրէս»ի հասած հեռագիր մը եւս կը հաստատէ Ալպանիոյ ընդհ. զօրաշարժը։ Սերպ կառավարութիւնը մատնանշելով այս զօրաշարժին վտանգները մտադիր է պետութիւններուն հաղորդել թէ ստիպուած է պաշտպանողական միջոցներ ձեռք առնել։

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Շանկայի մէջ քաղաքացիական կռիւները կը շարունակուին ազգայնականներու եւ հիւսիսեաններու միջեւ։ Զօր. Զանկ-Քայ-Շէք պաշարման վիճակ հրատարակեց քաղաքին չինական մասին մէջ։ Միջազգային առանձնաշնորհեալ հողամասին մէջ կացութիւնը հանդարտած է եւ չինական յարձակումէ մը չի վախցուիր առ այժմ։ 800 անգլիացի նոր զինուորներ հասան Շանկայ։

Զօր. Զանկ-Քայ-Շէք ամերիկեան «Փիթսպուրկ» մարտանաւը երթալով տեսակցեցաւ Ծովակալ Ուիլերմի հետ։ Պետութեանց հետ բանակցելու համար կը սպասուի Քանթոնի արտաքին նախարար Լօժէն Շէնի։

Անգլիական եւ ամերիկեան կառավարութիւնները որոշեցին պարպել Եանկցէի հովիտին մէջ եւ առ հասարակ Չինաստանի ներսերը գտնուող բոլոր անգլ. եւ ամերիկեան հպատակները ու միսիոնարները, զօրացնել Շանկայի ու Քանթոնի եւրոպական թաղին՝ Շամէնի պաշտպանութեան միջոցները։

Օտարատեաց շարժումը սաստկացած է Եանկցէի հովիտին մէջ։

25,000 osmanlılıklar ârî ihlâl olunmuş

Երեկ առտուան Ֆրանսերէն Թերթերը կը գրեն.—

1926ին Փարիզի հիւանդանոցներուն մէջ խնամուած են 25.000 օտարականներ, որոնք դրամ չեն վճարած։ Այս ձեւով Փարիզի Քաղաքապետութեան ծախքերուն վրայ 12 միլիոն Ֆրանք աւելցած է։

Թաղապետական խորհուրդին մէջ այս տեղեկութիւնները հաղորդելով, Պ. Ամպրուազ Ռանտիւ յայտնեց թէ Հանրային խնամատարութիւնը, յանուն մարդասիրութեան, չի կրնար մերժել օտար հիւանդները, որոնք կ'աւելնան մեծ թիւով Ֆրանսացի հիւանդներուն վրայ, որոնց ծախքերը կը հոգայ արդէն, սակայն շեշտեց թէ չափազանցութիւն պիտի ըլլար օտար չքաւոր հիւանդներուն ծախքերը բեռցնել Փարիզի հարկատուներուն վրայ։ Պ. Ամպրուազ Ռանտիւ ընդունել տուաւ բաղձանք մը, որ Ֆրանս. հիւանդանոցներուն մէջ խնամուած օտարականներուն ծախքերը վճարուին իրենց պատկանած պետութեանց կողմէ։

ՅԱՌԱՋ.— երկու տարիէ ի վեր թէ՛ Ֆրանսական մամուլի որոշ մէկ մասին եւ թէ թաղապետական ժողովներու մէջ կը յուզուի այս խնդիրը։ Դեռ տասը օր առաջ ինքնութեան Թուղթերու խնդրին առիթ տերակոյտին մէջ համայնավար-ընկերվարական Ընտէ-Մօրիզ նոյն հարցը արծարծելով կը պահանջէր որ այս կարգի ծախքերը գոցելու համար անհրաժեշտ է պահել 375 եւ 40 Ֆրանքի սակերը։

Չենք գիտեր թէ ո՛րքան հայ հիւանդներ ձրի կը դարմանուին փարիզի հիւանդանոցներուն մէջ։ Գիտենք սակայն թէ փարիզ բնակող Հայերը՝ բացի ինքնութեան Թուղթի վարձքէն, կը վճարենաեւ Ֆրանսացիին հաւասար ամէն կարգի տուրքեր։ Ասկէ զատ, հայկական իւրաքանչիւր հաւաքոյթի եւ ներկայացումի ընդհանուր հասոյթին 100ին 16ը կը վճարուի Հանրային Խնամատարութեան (Assistance publique) եւ այս գումարը կը տրուի՝ յաճախ չհասկնալով թէ կազմակերպողները չեն կրցած գոցել նոյնիսկ իրենց ծախքերը։ Վիճակագրութիւն մը կազմելու համար, կը հրաւիրենք 1926ի ընթացքին հանդէս կամ ներկայացում սարքած բոլոր հայ կազմակերպութիւնները, մեզի տեղեկացնել Հանրային Խնամատարութեան վճարուած գումարները։

ՖՐԱՆՍ. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

Երեսփոխանական ժողովը այսօր պիտի զբաղի ստացական քաղաքացիութեան (naturalisation) նոր օրինագիծով, որ արդէն 1925 Դեկտ. 3ին ընդունուած էր Ծերակոյտին կողմէ։ Ըստ այս ծրագրին, այսուհետեւ Ֆրանսաբնակ օտարականի մը հետ ամուսնացող Ֆրանսուհին պիտի պահպանէ իր հպատակութիւնը եւ իր զաւակները Ֆրանսացի պիտի ըլլան առանց ընտրութեան իրաւունքի։ Սակայն օտարականներու Ֆրանսա ծնած զաւակները ընտրութեան իրաւունք պիտի ունենան։

Նախապէս օտարականի մը հետ ամուսնացած Ֆրանսուհին կրնայ կրկին Ֆրանս. քաղաքացի դառնալ՝ իր ամուսինին արտօնութեամբ, ու պայմանաւ որ երկու տարիէ ի վեր իր ամուսինին հետ Ֆրանսա հաստատուած է։ Ասոր համար օրէնքի հրատարակութենէն մինչեւ մէկ տարի վերջ յայտարարութիւն պէտք է ընէ իր բնակավայրի հաշտարարատեանին առջեւ։

Այս օրինագիծով ուրիշ շատ մը դիւրութիւններ կը տրուին՝ Ֆրանս. քաղաքացիութիւնը ստանալու համար։ Օրինակ տասը տարի բնակութեան պարտաւորութիւնը պիտի զեղչուի երեք տարուան. ձեւակերպութիւններն ու ծախքերը պիտի կրճատուին ևն։

Աղբի օրուան պաշտօնաթերթէն կը տեղեկանանք թէ Ֆրանսական քաղաքացի ընդունուած են հետեւեալ Հայերը.—

Հրանտ Չէվահիրեան, *ակնատաշ, ծնած կ. Պոլիս 1880 Մարտ 25ին, եւ կինը Վերժինիա Սագայեան, ծնած կ. Պոլիս 1886 Դեկտ. 20ին. կը բնակին Փարիզ։*

Գէման Վիչէն, *շօֆէօր, ծնած Էնկիւրի, 1892 Յունուար 15ին, կը բնակի Փարիզ։*

Աբամ Փէլինեան, *ծովասոյզ, ծնած Սեբաստիա 1894 Յունիս 14ին, կը բնակի Սֆաքս (Թունուզ)։*

ՄԱԹՈՍԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՅՐԱԾ

Պրիւսէլէն վերջին պահուն հասած նամակէ մը կը տեղեկանանք թէ հրոյ ճարակ եղած է Ա.Մատոսեանի սիկարէթի գործարանը, որ Պելճիքայի մէջ ծանօթ է իր «Marouf» սիկարէթով։ Պ. Գաւիթ Մսրեան յանձն առած է իր սիկարէթի գործարանին մէկ մասը տրամադրել իր արկածեալ հայրենակիցին։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

Վիճաբանական ժողովը Թուրանականութեան մասին վաղը Ուրբաթ երեկոյ ժամը 8ին, փլաս տ'Իթալի, Քաֆէ-սը-լա-Լիւնի վերնայարկը, մէթրօ Իթալի։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԷՍԻՆԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՂՄԷ

3 ԱՊՐԻԼ 927 ԿԻՐԱԿԻ ԿԷՍ ՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 2.30ԻՆ

Նուվէլթի ֆանսինկ սինեմայի մէջ, Av. Jean Jeurès (կայարանին մօտ)

կը ներկայացուի՝ ԽԱՂԱՄՈՒԼԸ *եւ* ԹԻՔ-ԹԱՔ *գաւեշտը*

Ներկայացումէն վերջ մինչեւ կէս գիշեր պար եւ ճազ-պանտ

ԼՕՅՍ ՏԵՍԱԻ "ՓԵՏՐԻԱՐ 18,,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գինը՝ Ֆրանսայի համար 5 Ֆրանք, Արտասահման՝ 25 սէնթ։ Մեծաքանակ գնողներուն՝ զեղչ։ Դիմել *Յառաջի* խմբագրատունը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. Պուա-Ֆոլոմպի «Եւագոյն» խումբը ընդհ. ժողովի կը հրաւիրէ շրջանի բոլոր ընկերները, արձանագրուած կամ ոչ, իրենց անդամատետրերով միասին, վաղը՝ երեկոյ ժամը 8ին՝ 80 Rue Charles-Chefson։

Հ. Յ. Դ. Աղբիւր Սերոբ խումբը ժողովի կը հրաւիրէ Իթալի թաղամասին արձանագրուած եւ չարձանագրուած Դաշնակցականները 3 Ապրիլ կիրակի կէս օրէ վերջ ժամը 2ին 26 Rue Blanqui, K. Bicêtre (Seine)։

Հ. Յ. Դ. Ալֆօրվիլի ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր ընկերները եւ համակիրները շաբաթ երեկոյ ժամը 8ին, երիտ. միութեան ակումբը, 132 Rue Etienne Dolet. կարեւոր օրակարգ։

Հ. Յ. Դ. Լիոնի կոմիտէն ստիպողաբար ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր Դաշնակցական ընկերները, յառաջիկայ 3 Ապրիլ կիրակի առաւօտ ժամը 8.30ին, Rue Boileau Էմիլ Զոլայի վերնայարկը։ Լիոնի բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է։

Հ. Յ. Դ. Մարսիլիոյ Պատ. միութեան ընդհ. ընկերական ժողովը՝ կիրակի կէս օրէ վերջ ժամը 1ին 63 Rue République սրահին մէջ։

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻՒ եւ շրջակայ գիւղերու սեբաստիոյ նահանգին պատկանող բոլոր հայրենակիցները կը հրաւիրուին Ա. խորհրդակցական ժողովի, կազմելու համար «Սեբաստիոյ նահանգի հայրենակցական միութեան մասնաճիւղ մը», 2 Ապրիլ շաբաթ կէս օրէ վերջ ժամը 2ուկէսին, «Պիւռօ տը Թապա»յի կից սրահը։

ՅԱՐԴՈՂԻ գրական երեկոն, այսօր Հինգշաբթի, ժամը 9ին, Ֆլօրիա։ Կը խօսի դերասան Մարութեան *Հայ թատրոնի պատմութեան շուրջ*։ Կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։

Հ. Մ. Ը. Մ.ի Թուանվիլի մասնաճիւղը իր մէկ տարուան գործունէութեան առիթ, իր բոլոր անդամները իրենց ծնողքներով Թէյասեղանի կը հրաւիրէ շաբաթ երեկոյ 2 Ապրիլ, ժամը 3ին 9ին թէյ Նուառի մէջ (24 Quai Beaubourg)։ Մուտքը եւ թէյասեղանը ազատ է։

*** Հ. Մ. Ը. Մ.ի Թուանվիլի Ֆութպոլի խումբը եւ Ֆութպոլ խաղալ փափաքողները կը հրաւիրուին այս կիրակի ժամը 10ին ջրվէժէն անդին նոր կամուրջին քովի դաշտը, փորձեր կատարելու համար։

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիւլիպէ, կ. Ղ.— Ստացած ենք։— Կը խնդրուի շարունակել։

ՊՕԼԷՆ, Յակինթ.— Թղթակցութեան երկրորդ մասը անհասկնալի էր։

ԼԻՈՆԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ՆԱԽՈՒԻ

«Բարձր Հայք» Ճաշարանը 202, Rue Boileau, Աբարատ Ճաշարանը 116, Tête d'Or։ Թերթին գործակալն է Պ. Խաչիկ Ջօմաքեան, 202, Rue Boileau.

"ԴՐՕՇԱԿ,,Ի

Մարսէյլի գործակալն է

ԸՆԿ. ԿԱՅՏԱԿ ՃԱՐԱՅԵԱՆ

14 Rue de la Fare

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ "ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Թերթիս գործակալ Գ. Թերիկեանի ՖՐԱՆՓՈ-ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆԸ

15 Rue de la Fare

ՎԻԷՆԻ "ԴՐՕՇԱԿ,,Ի ԵՒ "ՅԱՌԱՋ"Ի ԴԱՐՁԱԿԱԼՆ Է

ՀՄԱՅԵԱԿ ՈՒՂՈՒՆԵԱՆ

Rue Victor Fougier N. 69

Vienne - Isère

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Թրիստաքի Թանաշ Մարան (Յոյն) որ 1910ին Ռուսիայէն միացեալ Նահանգները մեկնած է։ Քոյրը Անաստասիա Պոլիս կը գտնուի։ Գրել՝ Bedros Tomassianի Maison Cabrol, Combes, par Aubin (Aveyron). կը խնդրուի ասերիկահայ Թերթերէն արտատպել։

— Կը փնտռուի Մարաշցի Աբրահամ Հեղինեան որ կը կարծուի թէ Դահիրէ կը գտնուի։ Գրել՝ Papérianի Chez M. Jacquemin René, Volfroicourt (Vosges) France. *Կը խնդրուի Եգիպտահայ Թերթերէն արտատպել։*

— Էսկիշէհիրցի Արթին Հաճի Արթինեան որ իզմիրի աղէտէն յետոյ փարիզ մեկնած է։ Գրել՝ Stephan Artinianի 10 Rue des Trois Frères St-Chamond (Loire)։

— Բնիկ մարզուանցի փայտածու Գրիմեան, քոյրը Թագուհի Գալբաքճեան եւ որդիները Գերովբէ, Միհրան, Գրիգոր, Ասատուր, եւ Մարիամ ամուսնացած։ 1923ին մարսէյլէն գանատա մեկնած են։

Գրել՝ Légionnaire Krémian Agob 2e Etr. 1e Bat. 1e Compen subsistance à la 32 Section de C. O. A. Méknès Maroc։

— Կը փնտռուի Օշական գիւղացի Գէորգ Բաղդասարեան, հօր անունը Արտաշէս 23 տարեկան որ Փետրուարի յեղաշրջումէն յետոյ Պարսկաստան անցած է։ Կը կարծուի թէ այժմ Եւրոպա կը գտնուի։ Իմացնել՝ ցառաջի վարչութեան։

— Պօղոս Տէր Ղազարեան կը փնտռէ իր հայրը Էրզրումցի Բարսեղ Տէր Ղազարեան, մայրը Մարիամ, եղբայրները Պետրոս եւ Ասատուր, որոնք 1914ին Սամսոն կը գտնուէին։ Լուր տուողին 100 ֆր. նուէր։ Գրել՝ Hanna Der Ghazarian, Légionnaire No 9700 1er Compagnie 3e Etrangère à Imozer par Fez (Maroc)։

— Կը փնտռուի Պարտիզակցի Օննիկ Պօղոսեան որ 4 տարիէ ի վեր կը գտնուէր Դամասկոս (Սուրիա) եւ արկածի մը հետեւանքով բանտարկուած էր։ Վեց ամիս առաջ բանտէն արձակուած էր։ Իմացնել՝ Sarkis Ghazarianի Cité du Midi, Allé No 2, Décines (Isère)։ *Կը խնդրուի սուրիահայ Թերթերէն արտատպել։*

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տիկնէն ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris. XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Եշ. եւ Շաբաթ օրերը ժամը 3—5։ Քթի, կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երկուշբ. եւ Ուրբ. օրերը ժամը 11—12։ Առտնին օգնութիւն ամէն օր ժամը 9էն մինչեւ 18։

ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՄՈՐԹՈՒԱՑԻՆ ԵՒ ՎԷՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

126, Rue du Faubourg St. Denis

Metro : Gare de l'Est Téléphone : Nord 84-04

Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30-7.30—կիրակի եւ տօն օրեր 9-12

ՃԱՇԱՐԱՆ "ԱՐԱՔՍ,,

փարիզի հայկ. ժամադրավայրը։ Արեւելեան կերակուրները Շամեղ, մաքուր, խնայողական

10 Rue Rampal - Belleville: Métro Belleville

ՊԻԼՎԻԼԻ ԾԱՆՕԹ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Արեւելեան ամէն կարգի նպարեղէններ եւ անուշեղէններ

28 Rue Lesage, Métro Belleville. Tél. Ménil. 61—85

Յանձնարարի Արեւելեան փլաքներ ալ կը ծախուին

ՍՈՒՐՃԻ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԷՏ

ԾԻՐԱԿ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Փարիզի եւ գաւառներու Հայրենեաց Հայր համար կը պատրաստէ

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԱՆԹԱՐԴԱԼԻ ԹԱՐՄ ՍՈՒՐՃ

Մեծաքանակ եւ փոքրաքանակ Անմրցելի գիներով

Մէկ փորձ բաւ է համոզուելու, հեռախօսով ապսպրանքները անձամբ կը ղրկուին։ Թէլէֆոն՝ Provence 38.63, Métro Cadet

26, Rue de Trévise Paris (9)

ԱՄԷՆՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՐ. ՃՕԼՕԼԵԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ **PHOTO ARAX**

9 RUE PAPILLON, PARIS IX

Square Montholon դիմաց Rue Lafayetteի կից

Métro : Cadet կամ Poissonnière

Բաց է ամէն օր ամբողջ օրը։ Գեղարուեստական ճաշակով պատրաստուած անձերի աշխատութիւններ։ Ինքնուիեան ինչուած լուսանկարներ յանձնելի ամենակարճ ժամանակի մէջ։

ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՀԱՄԱՐ

կարդացէք եւ տարածեցէք *Զարեւանդի* «Կընա՞նք Հաշտուիլ Թուրքին հետ» եւ «Միացեալ անկախ Թուրանիա» գիրքերը. Ֆրանսայի համար 16 Ֆր. արտասահման՝ 18 Ֆրանք, փոստի ծախք չկայ։

Գիմել՝ Léon Kévonianի 208 bis Rue Lafayette. Paris (10me).

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔԵՐ ԿԸ ՀԱՅՑԱՅՔԷ ՋԵԶԻ ՀԱՅԿԱՇԷՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ հրատարակիչն է մասնաւորապէս Լուսաբեր ընթերցարաններու եւ ճոխ մատենադարանի մը ունի մատենադարանի գիրքերու։

Գիմել, Librairie Haïgachène, 9 Agopian Han, Tchakmakdjilar, Constantinople.

ՓՈՐՁՈՒԱԾ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

(Ֆրանսախօս եւ ռուսախօս)

վկայեալ Ֆրանս. վարժարանէ

Ընդունելութիւն երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ, ժամը 1—4։ 6, Av. Ville d'Avray, Chaville (S. et O.)։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ժամագործ Յ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ նոր հասցէն է՝ 75 Av. Berthelot, Lyon (7e)։

կանագործ աժան գիներով կը շինուին եւ կը նորոգուին տնական կառոսէներ, զրասենեակի սեղաններ եւ այլն, ծախու են թրքական թաւուններ։ Գիմել՝ 208bis Rue Lafayette, Paris. Métro Louis Blanc.

Կ'ուզուի Արեւելեան կերակուրներու մասնագէտ խոհարար մը։ Գիմել՝ խմբագրատուն։

DOCTEUR PROY

Ex - Interne des Hopitaux

Médaille d'argent

Տօքթ. Յ. ԽՈՒՄԷՍԵՐԵԱՆ

Աշխատակցութեամբ

Կը խնամէ ներքին, կանանց, մանրէային, վէներական հիւանդութիւնները։ Դարակայնութիւններու (Voies rices) հիմնական դարմանում առանց գործողութեան։

Ամէն օր ժամը 10-12, 2-8, կիրակի եւ տօն օրեր 9—12։

142 R. DU FB. St. DENIS

Կառ որ լ'Էսթի մօտ

Հեռաձայն՝ Nord 31—49

ԱԿԱԿԱՐԱՆ

30 Մարտ 1927

ԴՐԱՄՆԵՐ

Ստերլին,	L. St.	125
Տոլար,	Dollar	605
Մարք (ոսկի) 100 Mark		12
Թուրքական Ոսկի.	L. Trq.	11
Թուրք. ոսկի	» or	8
Մէճիտիէ	Médjidié	10
Լէվա 100 հատ	Léva	32
Տրախմի	» Drachme	4
Լիր	» » Lire	20
Պելճ. Ֆրանք	» Frc. Belge	49
Զուից.	» Frc. Suisse	1
Լէյ 100 հատ	Ley	92
Ջերվոնեց	(10 Roubles or)	

ԱՐԺԵՒՈՐԻԼ

Եգ. Ֆր. Ֆոնսիէ	I Cr. Fonc. Eg.	3
»	II »	1
»	III »	1
Իռանեան երկիդ.	Lots turcs	1

Comptoir Parisien de change et de Crédit

80, Rue Lafayette

IMPRIMERIE - MASSIS - ÉDITEUR

208bis, Rue Lafayette Paris (10e)

Le Gérant : H. TEURNIER